Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

№ 86

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՔՆՆԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական եւ քանասիրական տեղեկութեանց

ՄԱՍՆ Գ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ,
ՄԻՆՉԵՒ Ի ԲԱՐՁՈՒՄՆ ՆՈՑԱ։

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Դ. Ռօտինեանցի

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.

1895

Ընկերութեան հետեւեալ հրատարակութիւնները վաճառւում են Ընկերութեան գրասենեակում եւ կենտրոնական գրավաճառանոցում։

		Ր.	Կ.
1	Թւամազ մեղու (սպառ.) } թարգմ. օր. Ն.	—	40
2	Կարմիր լապտեր } Տէր-Մարկոսեան	—	30
3	Մանկական երգեր, Գամառ-Քաթիպայի	—	15
4	Թովմաս եղբօր տնակը, } թարգմ. օր. Ն.	—	45
	Նոյնը կազմած . } Տէր-Մարկոսեանի	—	60
5	Մորեխ և նրա ջնջելու հնարները, աշխ. Հ. Տ.-Բարսեղեանի	—	10
6	Նեղ և խոնաւ բնակարանների մասին, Հ. Առաքելեանի	—	10
7	Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց	—	80
8	Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսութեան, Մորիս Բլոքի	—	50
9	Գամառ-Քաթիպայի բանաստեղծութիւններ, (սպառ.)	—	50
10	Ռօբինզօնի պատմութիւն, թարգմ. Գիւտ ք. Աղանեանի	—	60
11	Ուխտաւորք, գործ Վիլհէլմ Հաուֆի, աշ. Ռ. Պատկանեանի	—	75
12	Գառնուկ և Լուսատտնիկ, Շմիդտի, թարգմ. Նուարդի	—	25
13	Սայեաթ-Նովա, ազգային երգիչ	—	5
14	Ծննդեան պատմութիւնը	—	10
15	Ագաթանգեղեայ պատմութիւն	1	—
16	Գիւղական խալիֆայ, Ա. Արարատեան	—	50
17	Վանայ սազ, Դ. Շերենցի	—	75
18	Փնջիկ, գրեց Աղէքս. Արարատեան	—	20
19	Նամուս, վէպ, գրեց Շիրվանզադէ	1	—
20	Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմ. տիեզերական	2	—
21	Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը } Տէր-Աղէք-	1	50
	Նոյնը ընտիր թղթի վերայ } սանդրեանի	2	—
22	Ղևոնդ պատմագիր	2	—
23	Սրբազան պատմութիւն (սպառ.) } Ս. քահ. Սա-	—	30
24	Նոյնը ուսուցիչների համար } հակեանի	1	75
25	Սոկրատէս, թարգմ. օր. Թ. Ստեփոյեան	—	10
26	Պատմութիւն Հայոց, Պալասանեանի (սպառ.)	1	50
27	Ուղեցոյց գործնական շերամապահութեան, Կ. Մել.-Շահն.	—	40
28	Ժամանակագրութիւն Հայոց Յ. Դարդելի	1	25
29	Վարդ-Ռէսլին Սպիրի, թարգմ. Ի. Յ.	—	10
30	Նալ և Դամայեանթի, Ֆ. Շմիդտի	—	20
31	Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը, Կոմս Լ. Տոլստոյի	—	7

ՄԱՍՆ Գ.

ԳԼՈՒԽ Ա.

ՀԱՅՔ ԸՆԴ ՀՌՈՄԱՅԵՑԻՈՎՔ:

Ա. ՏՐԴԱՏ ՄԵԾ. ՔԱՌԱՄՆԱՄԵԱՑ ԴԱՇԻՆՔ:

1. Հայք ընդ Հռոմայեցւովք. Տրդատ մեծ: 2. Վկայութիւն Բուզանդայ, Ագաթանգեղոսի, Խորենացւոյն: 3. Ժամանակագրութիւն ի Տրդատայ մինչեւ ի վախճան Արշակունեաց: 4. Թէ ի՞նչ կրնայ համարուիլ ստոյգ յազգային աւանդութեան: 5. Մուտն քրիստոնէութեան ի Հայս: 6. Թուական մահուան Տրդատայ:

1. Ոչ Սեքստոս Ռուփոս և ոչ Եւտրոպիոս կը յիշեն, սակայն յայտնի է պատմութենէ, թէ Միջագետաց հետ Հայաստան ևս տրուեցաւ Հռոմայեցւոց և մտաւ միւսանգամ ընդ վերին իշխանութեամբ նոցա: Առ այս ունիմք անուղղակի վկայութիւն Ամմիանոսէ, որոյ պատմութեան նայելով՝ Շապուհ Բ. երկայնակեաց (309—381), իբր 60 տարի յետոյ (358) զկնի դաշանց Դիոկղետիանոսի՝ կը պահանջէ ի Կոստանդայ (337—361) յաջորդէն Կոստանդիանոսի՝ Միջագետաց հետ նաև զՀայս իբրև վաղեմի ստացուած, զոր նենգութեամբ կորզեցին, ասէ, Հռոմայեցիք ի հաւէն իւրմէ Ներսեհէ.—«Պարտ իմն են ինձ առնուլ այսրէն զՀայս, որպէս և զՄիջագետս, որ դաւով իմն հանան ի հաւէն իմմէ» (Ամմ. ԺԷ. 5). և Կոստանդ իւր պատասխանին մէջ կը համարի զՀայաստան իբրև հռոմէական մարմնոյն մասերէն մին, զոր տալ ոչ այլ ինչ էր՝ եթէ ոչ խեղել այն մարմինը.—«Պիտոյ են ինձ, ասեն, Հայք, որպէս և Միջագետք. և խրատ տաս ինձ յապաւել մարմին մի ողջ, զի մնասցէ առողջ» (Անդ): Այլ թէ զինչ արարին յայնժամ Հռոմայեցիք զՀայս՝ կը լռէ ժամանակակից պատմութիւնն: Սակայն հարկ է դնել նախ՝ թէ թողաւ Հայաստան, որպէս և էրն յառաջ քան զյարձակումն Ներսեհի՝ ուրոյն թագաւորութիւն ընդ

հսկողութեամբ Հռոմայեցւոց, իբրև հարկատու կամ դաշնակից տէրութիւն, հզօր պատուար ընդդէմ Սասանեան զօրութեան։ Այս ոչ միայն համաձայն էր սկզբան Դիոկղետիանոսի, որ օգտակար կը համարէր հռոմէական զինուք նուաճեալ հեռաւոր երկիրներ թողուլ ինքնօրէն, այլ և առանց այսր անմեկնելի կը մնայ Արշակունեաց գոյութեան պատճառը Դիոկղետիանոսէ և այսր մինչև ի վախճան թագաւորութեանն։ *Երկրորդ*՝ թէ թագաւորն որ դրուեցաւ կամ հաստատուեցաւ Դիոկղետիանոսէ՝ էր Տրդատ մեծ։ Եւ այս ևս չէ առանց վկայութեան։ Սոզոմենոս, եկեղեցական պատմիչ Ե. դարու՝ ի վերջ կոյս Գ. դարու կամ ի սկզբան Դ-ին կը յիշէ Տրդատ ոմն թագաւոր Հայոց, առ որով եղած կը պատմէ երկրին մեծ և ընդհանուր դարձն ի քրիստոնէութիւն։ Սոզոմենոսի վկայութիւնն, նայելով այս եկեղեցական պատմչին թերութեանն ի մասին առողջ դատողութեան՝ կրնար թերևս համարուիլ հիմնեալ վկայաբանական աղբիւրներու վրայ ուստի և կասկածելի՝ եթէ չունենայինք քան զայս հզօրագոյն վկայութիւն, այն է ազգային աւանդութիւնն, և հնագոյն, գրեթէ ժամանակակից։

2. Բուզանդ (որ ծաղկեցաւ առ անմիջական յաջորդօք Տրդատայ, այն է ի Խոսրովէ Կոտակայ մինչև ի բաժանումն թագաւորութեանն, կամ մինչև ի դժբախտն Արշակ վերջին, և որ կը գրէ այն ժամանակին պատմութիւնը, որոյ մեծագոյն մասին էր ականատես և կամ ի մօտոյ տեղեակ)՝ գիտէ զՏրդատ որդի Խոսրովու (այս Խոսրով է Տրդատ Բ. ըստ արտաքին պատմութեան), զհայր և նախորդ Խոսրովու Կոտակայ, թագաւոր Հայոց անդէն իսկ ի սկզբան Դ. դարու. «Ի թագաւորութեանն Տրդատայ (այսինքն Տրդատայ մեծի, որ է Տրդատ Գ.), որդւոյն Խոսրովու (Տրդատայ Բ.), լուսաւորութեամբ հաճոյական սիրով և աստուածպաշտութեամբն հաւատոյ, ծանօթութեամբ ի ձեռն Գրիգորի մեծի քահանայի, և որոյ ընդ նմին կրտսեր որդին Արիստակէս հօրն էր գործակից եպիսկոպոսակից յամենայն ընթացս վարդապետութեանն զամենայն աւուրս կենաց իւրոց, մինչև յօրն քրիստոսակոչ հանգստեան իրոյ» (Բուզ. Գ. Բ)։ Կամի ասել. ի թագաւորութեանն Տրդատայ, Խոսրովու որդւոյն, որ եղև անուանի առաքինութեամբն և աստուածպաշտութեամբ յետ ընդունելոյ զծանօթութիւն քրիստոնէական հաւատոյ ի ձեռն Գրիգորի՝ քահանայապետ էր ինքն Գրիգոր, որոյ էր գործակից և եպիսկոպոսակից կրտսեր որդին Արիստակէս, —այլովքն հանդերձ։ Ապա յետ յիշելոյ զմահ և զհանգիստ նոցա, որպէս և զտեղիս հանգստեան նոցա, յաւելեայն նաև զՏրդատայ (Բուզ. Գ. ԺԳ)՝ կը յաւելու. «Ապա յետ այսորիկ թագաւորեա

Խոսրով Կոտակ, Թոռն Խոսրովու, որդի քաջի և առաքինւոյն Տըրդատայ արքայի» (Բուզ. Գ. Գ)։ Պատմութիւնն Ագաթանգեղոսի, թէ Դիոկղետիանոս թագաւորեցուց Հայոց զՏրդատ (իբրև ի վարձ մենամարտութեան նորա և յաղթութեան ընդդէմ Գոթաց թագաւորին. թողլով իբրև անտեղի՝ զայս և Տրդատայ անձին և գործերուն վերաբերեալ ուրիշ անհեթեթ պարագաներ)—ըստ էութեան կրնայ ընդունուիլ իբրև ճշմարիտ։ Այս կրնանք, առ ի չգոյէ ժամանակակից յայտնի և ստուգագոյն վկայութեան՝ գէթ իբրև հաւանական ընդունել, թէ իսկ և իսկ զկնի դաշանց Դիոկղետիանոսի (297) թագաւորեց կամ հաստատուեցաւ Տրդատ մեծ ի կողմանէ և զօրութեամբ Հռոմայեցւոց։ Ոչ փոքր նպաստ կը մատուցանէ այս կարծեաց և վկայութիւն Խորենացւոյն, որ Դիոկղետիանոսի երրորդ տարին կը դնէ թագաւորեալ զՏրդատ.—«Քանզի ոչ է պատմութիւնն ճշմարիտ առանց ժամանակագրութեան՝ վասնորոյ մանրախուզիւ քննեալ գտաք զթագաւորելն Տրդատայ յերրորդ ամի Դիոկղետիանոսի» (Խոր. Բ. ՁԲ)։ Ապաքէն ճշդագոյն լինէր ժամանակագրութիւն Խորենացւոյն, եթէ փոխանակ «յերրորդ» ամին՝ դնէր յերկոտասաներորդ ամին, իբրև տասն ամօք յետոյ, այսինքն՝ փոխանակ 287, որ է երրորդ ամ Դիոկղետիանոսի՝ 297, այն է նշանաւոր դաշնագրութեան տարին. բայց կրնայ նաև իբրև ճշմարիտ ընդունուիլ հաշիւ Խորենացւոյն՝ եթէ դնենք զՏրդատ թագաւորեալ տասն ամօք յառաջ քան զդաշնագրութեան տարին, այն է 287-ին, և այս յետ պատերազմին և յաղթութեան Գաղերիոսի՝ յամին դաշնագրութեան, 297, հաստատուած ի թագաւորութեանն ի կողմանէ Հռոմայեցւոց։ Թէ ով էր արդեօք հայր Տրդատայ, Արտաւազդն որ յիշուեցաւ ի վերոյ, թէ Տրդատն Բ. արտաքին պատմութեան, ազգային անուամբ Խոսրով՝ չունիմք ասել ինչ ստուգիւ, թէպէտ վերջինն թուի հաւանականագոյն։

3. Յառաջ քան զմխել մեր յայս վերջին մասն պատմութեան Արշակունեաց, այն է ի թագաւորութենէն մեծին Տրդատայ մինչև ի բարձումն թագաւորութեանն՝ կարևոր է դնել ի Տրդատայ մինչև Արտաշիր տասն թագաւորաց—Տրդատայ, Խոսրովու, Տիրանայ, Արշակայ, Պապայ, Վարազդատայ, Արշակայ վերջնոյ, Խոսրովու, Վռամշապհոյ և Արտաշրի (վերջին արշակունի թագաւորին), եթէ ոչ բոլորովին ստոյգ՝ գէթ կարի հաւանական ժամանակագրութիւնք, որչափ հնար է զգուշութեամբ քաղելով արտաքին և տոհմային աղբիւրներէ, ի համեմատութենէ դիպաց պատահելոց իւրաքանչիւր թագաւորի իշխանութեան ժամանակ, և կշռելով իւրաքանչիւրին ժամանակն Հռոմայեցի և պարսիկ թագաւորաց ժամա-

նակներուն հետ։ Հոս գնենք մեր ընդհանուր հաշւին հանդերձ պատճառներով՝ որչափ մարթ է համառօտիւ։

Տրդատայ թագաւորութեան սկզբան, ինչպէս նաև Արշակունի հարստութեան բարձման թուականներն բարեբախտութեամբ ծանօթ են մեզ, այն է՝ առաջնոյն համար՝ Դիոկղետիանոսի գաշանց տարին, 297, յորում թագաւորեց կամ հաստատուեցաւ Տրդատ, և երկրորդին համար՝ Վռամայ Ե-ի (421—442) 7-երորդ տարին, որ է 428 յետ Քսի։ Արդ Տրդատայ մահը չկրնար դրուիլ ոչ յառաջ և ոչ յետոյ քան զամն 336, ինչպէս պիտի տեսնենք ի ստորև։ Եւ որովհետև յայտնի է նաև, ըստ պատմութեան Ամմիանու, Պապայ սպանման տարին, որ է 374՝ եթէ համարինք զնա թագաւորեալ 7 տարի ըստ Խորենացւոյն՝ Պապայ թագաւորութեան սկիզբը կը հանդիպի 368-ին։ Ապա ի մէջ ամացն 336 (վերջին ամ Տըրդատայ) և 368 (առաջին ամ Պապայ), այն է 32 տարի՝ կը մնայ զետեղել երից թագաւորաց, Խոսրովու, Տիրանայ և Արշակայ թագաւորութեան ժամանակներն։ Տալով Խոսրովու թագաւորել ամս ութ, ըստ Խորենացւոյն, այն է 336—343, և Տիրանայ՝ մետասան ամ, այն է 343—353, նոյնպէս ըստ Խորենացւոյն՝ Արշակայ կը մնայ 15 տարի, այն է 353-էն, որ է Տիրանայ գերութեան տարին՝ մինչև Պապայ թագաւորութեան տարին, որ է 368, այսինքն Կոստանդայ 16-երորդ տարիէն մինչև Վաղէսի 5-դ տարին, և Պարսից՝ Շապհոյ Բ-ի 43-դ տարիէն մինչև 58-դ տարին. ուստի և թագաւորութիւնն Արշակայ կը հանդիպի Կոստանդայ, Յուլիանոսի, Յովիանու և Վաղեսի կայսրութեան ժամանակներուն, և Պարսից՝ Շապհոյ Բ-ի, համաձայն պատմութեան պարագաներուն ըստ Ամմիանու և Բուզանդայ։ Կը մնայ Պապայ մահուանէն մինչև ի փոխման թագաւորութեանն Արշակունեաց, կամ 374—428,—54 տարուան միջոցը, յորում պարտ է զետեղել Պապայ յաջորդէն Վարազդատէ մինչև Արտաշիր տիրող թագաւորաց և գլխոց ժամանակը։ Վարազդատայ ըստ Խորենացւոյն չորս տարին կ՚ըլլայ 374—377։ Որովհետև գիտենք այլուստ Հայաստանի բաժանման տարին, որ է 384, և որովհետև թագաւորութեանն Արշակայ վերջնոյ, որդւոյն Պապայ, կը տրուի (ըստ Խորենացւոյն) 5 տարի կամ սակաւ ինչ աւելի յառաջ քան զբաժանումն՝ ապա Արշակ վերջին, յաջորդն Վարազդատայ լինի թագաւորեալ յամին 379։ Կը մնայ նախընթաց երկու տարին, 377—379, և այս է Սուրենայ մարզպանութեան ժամանակն, կամ ժամանակ յանձանձչութեան Մանուէլի։ Ապա Արշակ վերջին թագաւորեց 379—383 կամ 384-ին կէսը։ Յետ իբր միոյ ամի կամ երկուց՝ Շապուհ Գ. (385—389) կը թա

գաւորեցունէ իւր բաժնին վրայ զԽոսրով, որ կը թագաւորէ 5 կամ 6 տարի, այն է 386—391 կամ 392։ Եթէ Վռամշապհոյ, Խոսրովու յաջորդին տանք, ինչպէս կու տան Կորիւն և Խորենացի, 22 տարի՝ Վռամշապուհ լինի թագաւորեալ 392—413։ Յաջորդ տարին 414՝ է Խոսրովու երկրորդ անգամ թագաւորելուն տարին։ 414—418 է Շապհոյ չորեքամեայ իշխանութեան ժամանակն։ Յաջորդ չորս տարին, այն է 418—422՝ է ապստամբութեան ժամանակն, որում կը յաջորդէ վերջին Արշակունի թագաւորին Արտաշրի վեցամեայ թագաւորութիւնն, 422—428,—ամ բարձման թագաւորութեանն Արշակունեաց։ Այսպէս Վարազդատայ թագաւորութենէն մինչև թագաւորութեան բարձման միջոցը կը հանդիպի Վաղեսի 5-դ տարիէն մինչև փոքուն Թէոդոսի (408—450) 20-դ տարին, և Պարսից՝ Շապհոյ Բ-ի, Արտաշրի Բ-ի, Շապհոյ Գ-ի, Վռամայ Գ-ի, Յազկերտի Բ-ի և Վռամայ Դ-ի ժամանակներուն։ Յետ դնելոյ զայս հաշիւ, որ կը թուի մեզ հաւանականագոյն և մերձաւոր հաշուին Գաթըրճեանի՝ յառաջ տանինք մեր պատմութիւնն ի Տրդատայ մեծէ մինչև ի բարձումն թագաւորութեանն Արշակունեաց։

4. Արտաքին ժամանակակից պատմութենէ գիտենք ստուգիւ, թէ յետ պատերազմին և դաշանցն Գաղերիոսի՝ Միջագետաց հետ նաև Հայաստան անցաւ ի Հռոմայեցիս, և Պարսք հրաժարեցան վերին իշխանութենէ այն երկիրներուն վրայ։ Աւելի քան զայսչափ միայն գիտենք, իրաց վիճակէն գուշակելով՝ թէ յետ այն պատերազմին Հայաստան չեղաւ նահանգ հռոմէական, այլ թագաւորութիւն որպէս յառաջն, առանձին թագաւորաւ։ Նայելով հանգամանաց ժամանակին և ազգային գրեթէ ժամանակակից աւանդութեան (Բուզանդ)՝ այս թագաւորն ոչ այլ ոք կարէ լինել, եթէ ոչ Տրդատ մեծ. այլ թէ ինչպէս և ինչ պայմանաւ եղաւ այս՝ որպէս ասացաք, չէ յայտ արտաքին պատմութենէ. երկու տէրութեանց յարաբերութենէն անտի և առյապա՝ կը տեսնուի միայն ըստ բաւականին, թէ Հայաստան ճանչցուեցաւ յայնժամ երկուստեք իբրև դաստակերտ կամ աւատ հռոմէական պետութեան։ Զայս կը թուի ակնարկել «դաշն» կամ «ուխտ» բառն, որ սաէպ կը յիշուի մեր պատմիչներէն (Բուզանդ, Եղիշէ) ի մէջ Հռոմայեցւոց և Հայոց, առանձինն՝ ի մէջ Կոստանդիանոսի և Տրդատայ, ոչ առանց քրիստոնէական ինչ նշանակութեան։ Արտաքին պատմութեան ևս չէ անծանօթ այսպիսի դաշնագրութիւն (Եւսեբիոս, Ամմիանոս)։

Գալով պատմելոյն զՏրդատայ յԱգաթանգեղոսէ, որմէ կ'առնու Խորենացին յաւելլով ինչ ինչ որ չկան յԱգաթանգեղոսի՝ մեք այս երկու ազգային աղբերաց վաւերականութեան վրայ պիտի խօ-

սինք յետոյ։ Այն պատմուածներէն իբրեւ ստոյգ եւ վաւերական հոս կ'առնունք միայն սա ազգային աւանդութիւնը, թէ Տրդատ էր արդարեւ «ուժով պնդութեան հաստատութեամբ, բուռն ոսկերօք եւ յաղթ մարմնով», թերեւս նաեւ «բարձր եւ լայն հասակաւ», ուստի եւ «քաջ եւ պատերազմող անհնարին»։ Եւ զայս կ'ընդունինք իբրեւ պատմական՝ յենլով յազգային երգն, զոր կը բերէ Ագաթանգեղոս իբրեւ զրոյց ի բերանս հասարակաց, կամ որպէս նոյն ասէ՝ «պատշաճեալ ի բանս կարգի առակաց»—«իբրեւ զսէգն Տրդատ, որ սիգալովն աւերեաց զթումբս գետոց եւ ցամաքեցոյց ի սիգալ իւրում զյորձանս ծովուց» (Ագաթ. ԺԱ.)։

5. Կը մնայ միւս եւս զարմանալի ինչ, որ արդարեւ կը թուի եղած առ Տրդատաւ, այն է քրիստոնէութեան հանդիսաւոր մուտն ի Հայաստան։ Այս դիպուածին նախընթաց եւ յաջորդ պարագաներուն վրայ, որ վիպասանական են մանաւանդ քան պատմական՝ պիտի խօսինք յետոյ. Հոս կը յիշենք միայն երկու ժամանակից կամ իբր ժամանակից վկայութիւն, որոց մին, որ է յԵւսեբիոսէ՝ կը ցուցնէ զՀայաստան արդէն ազգովին քրիստոնեայ ի սկզբան Դ. դարուն, եւ միւսն ի Սոզոմենոսէ, կարճ եւ մթոտ յոյժ՝ զդարձէն Հայոց ի քրիստոնէութիւն։ Ըստ Եւսեբեայ՝ Հայք, ջերմագոյնք յաստուածպաշտութեան՝ կու տան պատերազմ ընդ Մաքսիմինոսի Դայայ (307—313, տէր Ասիոյ եւ Եգիպտոսի), որ կ'ուխտէր զնոսա ի կռապաշտութիւն, եւ խորտակեցին զնա չարաչար.—«Դրդուցաւ, ասէ, պատերազմ ի բռնաւորէ անտի ընդ Հայոց, որ ի սկըզբանէ բարեկամք եւ նիզակակիցք էին հռոմէական ժողովրդեան։ Եւ զի նոքին եւս քրիստոնեայք էին եւ ջերմագոյնք ի բարեպաշտութեան որ առ աստուածութիւնն՝ ջանացաւ աստուածատեացն բռնաւոր բռնութեամբ ածել զնոսա ի պաշտօն կռոց եւ դիւաց, եւ յայն սակս զբարեկամսն յատելիս, զզաշնաւորսն ի թշնամիս դարձոյց... այլ ինքն ի պատերազմի անդ հանդերձ զօրու իւրով զունակ զունակ նեղեալ վտանգեցաւ չարաչար» (Եւս. Եկ. պատմ. Թ, Գլ. Ը)։ Իսկ Սոզոմենոս, մերձաւոր ժամանակաւ, սաչափ միայն ասէ, թէ սքանչելիք «աստուածանշանք» եղան ի տան թագաւորին, որ դարձաւ եւ դարձոյց եւս զազգն ի քրիստոնէութիւն։ Սոզոմենոս կու տայ արդարեւ զանուն թագաւորին—Տրդատ, բայց ոչ կը յայտնէ, թէ ինչ էին այն նշանք, եւ ոչ կը յիշէ զԳրիգոր եւ զՀռիփսիմեանս, որ ըստ ազգային աւանդութեան էին գլխաւոր գործիք այն դարձին։ Զարմանալի է սակայն խոյսառ լռելն Եւսեբեայ զդարձէն Հայոց, բաց ի յիշատակութենէ պատերազմին, ուր զՀայս կը դնէ վաղուց քրիստոնեայս։

Զ. Տրդատայ մահուան թուականն չէ ստուգիւ յայտնի։ Սակայն հաւանական կը թուի, թէ այս չեղաւ ոչ շատ յառաջ և ոչ շատ յետոյ քան զմահն Կոստանդիանոսի (337)։ Եւ առ այս ունիմք բաւական ապացոյց։ Ըստ արտաքին վկայութեան՝ իսկ և իսկ զկնի մահուն Կոստանդիանոսի, ի փոխճանի քառասնամեայ խաղաղութեան (297—337), այն է Գաղերեան դաշանց թուականէն մինչև ի մահն Կոստանդիանոսի՝ կ'սկսին յուզմունք ի Հայս։ Եւ յազգային պատմութենէ (Բուզ.) գիտենք, թէ այն յուզմունք սկսան անմիջապէս յետ մահուն Տրդատայ։ Արդարև զօրութիւն և համբաւ երկու մեծ և հզօր թագաւորաց դաշնակցաց, Կոստանդիանոսի և Տրդատայ էր, որ կը բռնէր և՛ զներքին խռովիչս, և՛ զարտաքին թշնամին Շապուհ Բ. (309—381)։ Զիարդ և իցէ՝ մահն Կոստանդիանոսի և Տրդատայ առաւ վերջ, ինչպէս ընդհանուր խաղաղութեանն արևելից՝ նոյնպէս հանդարտութեանն զոր վայելեցին Հայք ի բովանդակ ժամանակս թագաւորութեանն Տրդատայ։

Բ. Ի ՄԱՀՈՒԱՆԷՆ ՏՐԴԱՏԱՅ ՄԻՆՉԵՒ ՑԱՐՇԱԿ։

1. Առաջին երկու յաջորդք Տրդատայ: 2. Համեմատութիւն Բուզանդայ ընդ Խորենացւոյն: 3. Անթիանոս, Յուլիանոս, Բուզանդ: 4. Երկու ցեղք: 5. Յարձակումն Մազքթաց: 6. Պատճառ այս յարձակման. Գրիգորիս: 7. Պարթեւք եւ շինութիւնք Խոսրովու: 8. Թշնամութիւն ի Տաճկոյ. Դատաբէ. Մատնութիւն. Վաչէ սպարապետ. Ջնջումն ցեղին Բզնունեաց: 9. Ապստամբութիւն բդեշխին Աղձնեաց: 10. Պատերազմ ընդ Պարսս. Սպանումն Վաչէի. 11. Արտաւազդ որդի եւ յաջորդ Վաչէի ի սպարապետութեան: 12. Մահ Խոսրովու եւ Վրթանայ: 13. Միջոց հռոմէական ազդեցութեան: 14. Վարչութիւն Տիրանայ: 15. Յուսիկ կաթողիկոս. Խնդիր ձեռնադրութեան: 16. Նկարագիր Յուսկան. Սպանումն նորա. բուն պատճառ այս սպանման: 17. Որդիք Յուսկան: 18. Ծերունին Դանիէլ: 19. Մեղադրութիւն Բուզանդայ զազէն: 20. Պատմութիւն Դանիէլի ծերոյ: 21. Խորհրդածութիւն զմարգարէութենէ ծերունւոյն Դանիէլի: 22. Ներքինիք: 23. Անմիտ քաղաքականութիւն Տիրանայ. Դաւաճանութիւն. Փիսակ: 24. Հայք զկնի ձերբակալութեանն Տիրանայ:

Ա. Զերկուց առաջին յաջորդացն Տրդատայ, զԽոսրովայ կոչեցելոյ Կոտակ, այն է փոքր (336—343), և զՏիրանայ, զորդւոյն և յաջորդէ այս վերջնոյն (343—353)՝ չիք յիշատակութիւն յարտաքին պատմութեան, բայց բարեբախտութեամբ պատմութիւնն, որ-

պէս ասացաւ ի վերոյ՝ մնդամին ի Խոսրովայ կ'սկսի լինել ազգային և ժամանակակից։ Բուզանդ և Խորենացին կու տան մեզ առատ նիւթ այն ժամանակին վրայ, բայց մեք կ'ընտրենք զԲուզանդ քան զԽորենացին, որ ոչ միայն չէ ժամանակակից, ժամանակագրութեան կողմանէ ևս շփոթ է և հակասական և գիւղաց կարգին և ընծայութեան կողմանէ այնպէս խառնակ և կրճատ, որ պատճառի և գործոյ կապակցութիւնն կը խանգարի, և քննողն անկանի յանել լաբիւրինթոս՝ այլ և է անմիաբան ընդ արտաքին ժամանակակից պատմութեան։ Այս կը տեսնուի յայտ յանդիման ի համեմատութենէ Խորենացւոյն ընդ Բուզանդայ ի սկզբանէ պատմութեան սորա մինչև ի կատարածն, այն է ի Խոսրովայ մինչև ի բաժանումն թագաւորութեանն Արշակունեաց։

2. Բուզանդ, իբրև արխառնեան թէ երթալով յառաջոյ քըննողին, աջակցութեամբ արտաքին ժամանակակից պատմութեան, ուր այս վերջինն ունի աղերս ընդ ազգայնոյն՝ կը հանէ զնա (զքըննողն) նեղ և դժուարին կիրճերէ, ընդ որս ելանել ի գլուխ անհնար է Խորենացւով։ Բուզանդայ մի միայն յանցուածն է սիրելն զՀրաշալիս և լինելն կարի իմն յարեալ յազգային եկեղեցական մարմինն, որ մեծ թեր ունի մեր պատմութեան այս մասին մէջ. բայց և ոչ Խորենացին ազատ է յայսցանէ։ Սակայն նախամեծարութիւնն զոր կու տանք Բուզանդայ՝ չէ այնպիսի որ չկացուցանէ զմեզ ազատ անաչառ քննելէ այնչափ զնա, որչափ միւսը, մանաւանդ ուր միամիտ պատմիչն մեր կը թողու զինքն տանել յորձանաց իւրոյ միտմանն ի Հրաշալիս և ի կուսակցութիւն եկեղեցական խմբի, յորմէ և ինքն է։

3. Ասացաք թէ չունիմք յիշատակութիւն արտաքին պատմութենէ զերկուց յաջորդացն Տրդատայ, զԽոսրովէ և զՏիրանայ. զԱրշակ միայն կը յիշէ յանուանէ Ամմիանոս 360-ին իբր արդէն թագաւորեալ. դժբախտութեամբ կորուսեալ են Ամմիանու առաջին երեքտասան գիրք, յորս կը գտնէինք անտարակոյս ինչ ինչ յիշուած զնախորդացն Արշակայ։ Ունիմք սակայն բարեբախտութեամբ վաւերական ինչ յիշատակութիւն ժամանակակից, թէպէտ կարճառօտ յոյժ և աղօտ, այն է առաջին ճառն, զոր խօսեցաւ Յուլիանոս առաջի Կոստանդեայ յետ դարձին նորա յաղթութեամբ ի Պաննոնիոյ (353), այն է յետ նուաճելոյ արևմտից ապստամբութիւնը և միացունելոյ ամբողջ հռոմէական կայսրութիւնն ընդ իւր ձեռամբ։ Ճառն Յուլիանոսի կը բովանդակէ արդարև համառօտիւ զանցս Հայոց ի մահուանէ Տրդատայ, կամ ի թագաւորութենէն Խոսրովու Կոտակայ մինչև ցԱրշակ (336—353), առանց ո՛չ սորա և ոչ նոցա

անունն լինելու։ Ըստ բանից Յուլիանու՝ ի սկզբան կայսերութեանն Կոստանդեայ պատերազմ ի վերայ կայր յարևելս Պարսից դէմ, (քանզի Շապուհ Բ. գրժած էր դաշանց որ կնքեան առ Ներսեհիւ հաւուն նորա), դժուարին կ'երևէր սակայն յաջողութիւնն։ Թող ուրիշ դժուարութիւններ և վիշտեր, որ կը ծագէին ամէն կողմանէ՝ Հայոց մէջ ևս կային յուզմունք։ Մի մասն ապստամբեալ և յարած էր ի Պարսիկս, այլք խոյս տուած էին հանդերձ թագաւորաւն. կային նաև որ գիմած էին ի Յոյնս։ Բայց երբ Կոստանդ վճարելով արևմտից պատերազմը միացուց կայսրութիւնը՝ ամենայն ինչ յարգարեցաւ։ Հայք շահուեցան, քանզի· թէ նոքա, որ յարած էին ի Պարսիկս և որոց երկիւղէն խոյս տուած էր «երկրին իշխանը», և թէ նոքա, որ ի Յոյնս ապաւինած էին՝ դարձան իրենց երկիրը. առաջինքն կը զղջային ամօթով իրենց ստահակութեան համար, վերջինքն ուրախ էին որ մնացին հաւատարիմ. և թէ նոքա և թէ սոքա գոհ էին, քանզի գտան սպասիւ և խաղաղութիւն միանգամայն։ Ահա ճառին այս մասը. «Ի փոխճանել Կոստանդիանու (այլ) բիւր անհարթութիւնք և վիշտք որ յամենայն կողմանց բուսանէին՝ դժուարագոյն զլոյս պատերազմին (արևելից) գործէին. մանաւանդ Հայք, հին նիզակակիցք, որ անդէն յիւրեանս յուզեալք ապստամբութեամբ և ոչ փոքր ինչ մասամբ յետս ի Պարսիկսն կացեալ էին և յարուարձանեալ սահմանս ասպատակէին հինիւ»։ Բայց յետ դարձին կայսեր ի Պաննոնիոյ՝ իբր Հայոց յարգարեցան. — «Այնք ի Հայոց որ ի թշնամիս անդր յարեալ էին՝ ի բաց կացին, յորժամ և՛ գնոսա, յորոց իշխան աշխարհին—(Յուլիանոս չէր համարէր արժանի Հայոց թագաւորներուն տալ թագաւոր տիտղոսը)—ստիպեցաւ փախչել՝ ածեր առ մեզ, և՛ այնոցիկ որ փախեանն այսր՝ ապահով և աննենգ դարձ ի բուն աշխարհն յարգարեցեր։ Եւ այնպէս իսկ մարդասիրութիւն առ այնոսիկ ցուցեր, որք յառաջ քան զսակաւ մի առ մեզ եկեալ էին, և քաղցրութեամբ գնացեր ընդ այնոցիկ, որք ընդ իշխանին իւրեանց դարձան յետս՝ զի սմանք մեծապէս ընդ այն սորջացան, զի յառաջագոյնն յետս կացին, այլք զմօտաւորն նախամեծար քան զառաջին իշխանութիւնն համարէին։ Իսկ որ յառաջագոյն այսր ապաստանեալ եկեալ էին՝ աւէին թէ յարգեանց և ի գործոց ուսաք վարել չափաւորութեամբ. իսկ դարձեալ այլք խոստովան լինէին, թէ գչապստամբելոյն ըստ արժանաւորութեան ընկալաք հատուցումն վարձուց։ Այնչափ պարգևս և պատիւս յաճախեցեր այնոցիկ որ դարձանն այսրէն՝ զի չգչարէին և չնախանձէին ինչ ընդ թշնամիսն իւրեանց, որք և բախտաւորքն էին և յիրաւի ի պատուի։ Զայս ամենայն ի սակաւ ժամանակի

կարգեալ հաստատեցեր» (Գաթըրճ. Տիեզ. պատմ. հտ. Բ. 463, ծան 1)։ Բուզանդ երկար կը նկարագրէ Յուլիանոսի այս ծրագիրն Հայոց վրայ, ինչպէս պիտի տեսնենք արդ։ Սաչափ միայն ըսենք կանխաւ համառօտիւ, թէ Յուլիանոսի ճառն է համառօտութիւն Բուզանդայ Գ. դպրութեան ԺԵ, ԺԸ, Ի, ԻԱ և Դ. դպրութեան Ա. գլուխներուն։

Բուզանդ յետ յիշելոյ համառօտիւ (Գ. Բ.) երկու առաջին քահանայապետներն «ի թագաւորութեանն Տրդատայ», զԳրիգոր և զԱրիստակէս, որոց հանգստեան տեղերը կ'անուանէ—մեկն Թորդան ի Դարանաղեաց գաւառին, միւսոյն Թիլն ի գաւառին Եկեղեաց՝—կ'սկսի (Գ. Գ.) իւր պատմութիւնն ի թագաւորութենէն Խոսրովու փառաւոր գովեստիւ. «Յետ այսորիկ թագաւորեաց Խոսրով Կոտակ, որդի քաջի և առաքինւոյն Տրդատայ արքային։ Յաւուրս սորա եկաց և եղև քահանայապետ յաթոռն հօրն, փոխանակ հօրն իւրոյ և եղբօրն իւրոյ՝ երէց որդին Գրիգորի Վրթանէս։ Խաղաղութիւն և շինութիւն, մարդաշատութիւն և առողջութիւն, պտղաբերութիւն և ստացուածաշատութիւն և շահեկանութիւն, և մեծն աստուածասէր պաշտօն ի հաճոյակատարն բարութիւն յամս յաւուրս սորա աճել բազմացաւ։ Լուսաւորէր և առաջնորդէր նոցա սուրբն Վրթանէս իբրև զհայրն, իբրև զեղբայր իւր. իրաւունք և արդարութիւն ծաղկեալ էին ի դարուն յայնմ»։ Բայց արագ կը հասնին յուզմունք։ Վրթանէս կը կրէ զառաջին յարձակումն քըրմական կուսակցութենէ մը.—«Սա (Վրթանէս) երթեալ, ասէ, կատարէր զպատարագն գոհութեան ի մայրն եկեղեցեացն Հայոց յերկրին Տարօնոյ։... Որք միանգամ զհնութիւն կռապաշտութեան հեթանոսութեան մինչև ցայնժամ ունէին զաղտնի՝ ժողովեալք հասանէին իբրև երկու հազարք, խորհուրդ եդեալ ընդ միմեանս՝ սպանանել զքահանայապետն Աստուծոյ զՎրթանէս... հրամանաւ մեծին Հայոց տիկնոջն... վասն զի յանդիմանէր զնա սուրբն վասն զաղտնի շնութեան կծծութեան բարոյից պոռնկութեան»։ Սակայն չյաջողեցաւ խորհուրդն, թերևս ակնածութենէ քահանայապետին կամ առ երկիւղի թագաւորին։ Սակայն Բուզանդ իսկ և իսկ կը հասցունէ սքանչելիս.—«Որոց առ հասարակ որք ի գնդին էին՝ բազուկք իւրաքանչիւր յետս դարձեալ ի վերայ իւրաքանչիւր թիկանց, առանց իրիք կապելոյ սքանչելապէս կապեալ լինէին։ Այսպէս պաշարեալք ընկապճեալք գելեալք վանեալք կծկեալք, ամենեքեան առհասարակ յերկիր անկեալք անբարբառ կային, անխաղացք ի տեղւոջէն, որք էին տոհմք և ազգք աշխարհակերք աշխարհաւերք ժանդագործ քրմացն։... Իսկ Վրթանէս մատուցեալ հարցա-

ւէր զնոսա, եթէ դուք ո՞յք էք, կամ ուստի՞ գայք, կամ զո՞ խըն-
դրէք: Իսկ նոցա զարդարն սկսեալ խօսել՝ խոստովան լինէին, եթէ
եկաք զի ուներեսցուք զտեղիս և զքեզ սպանցուք, հրամանաւ հա-
մարձակեալ ակնարկելով մեծին Հայոց տիկնոջն»: Որպէս զի թերի
մնայ հրաշագործութիւնն՝ Բուզանդ կը յաւելու. «Իսկ երանելին
Արթանէս... աղօթս մատուցանէր և խնդրէր յԱստուծոյ. բժշկէր
և արձակէր զնոսա յաներևոյթ կապանացն և յանհնարին կծկու-
թենէն տանջանացն»:

4. Բան զայս աւելի ծանր էր երկու մեծ նախարարութեանց,
Մանաւազեանց և Որդունեաց կռիւն, որոյ վախճանն եղաւ երկու
ցեղերուն միանգամայն կորուստը.—«Զայն ժամանակաւ յարեաւ
խռովութիւն մեծ յաշխարհին Հայոց, զի մեծ նախարարք և իշ-
խանք երկու, գաւառակալք աշխարհատեարք անկանէին ընդ մի-
մեանս և տային մարտ պատերազմի առանց իրաւանց... իշխանն
Մանաւազեան տոհմին և միւս ևս նահապետն Որդունեաց տոհմին:
Կռուեցան ընդ միմեանս մեծաւ պատերազմաւ, և բազում մարդ-
կան լինէր ծախումն կոտորածոյ: Ապա առաքեցին թագաւորն
Խոսրով և մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս զպատուական զմեծ
եպիսկոպոսն Աղբիանոս ի մէջ նոցա խօսել ի հաշտութիւն խաղա-
ղութեան:... Անարգեցին զնա և ոչ լուան բարեխօսութեանն եկե-
ղոյն:... Ապա մեծ ցասմամբ և բազում սրտմտութեամբ արձակեաց
թագաւորն ի վերայ նոցա զՎաչէ որդի Արտաւազդայ, զնահապետ
Մամիկոնեան տոհմին, յազգէ սպարապետութեան Հայոց, զմեծ
զօրավար զօրաց իւրոց՝ սատակել կորուսանել զազգսն զերկոսեան:
Երթեալ հասանէր զօրավարն Վաչէ, հարկանէր վանէր զնոսա և
ոչ թողոյր զերկոցունց տոհմացն զորձ կորիւն և ոչ զմի. և ինքն
զաւանայր առ արքայն Խոսրով և առ եպիսկոպոսապետն Վրթանէս»
(Բուզ. Գ. Դ.):

5. Երրորդ մեծագոյն վտանգն եղաւ Մազքթաց թագաւորին
Սանեսանայ յարձակումն ի Հայս մանր մանր հիւսիսային (Սկիւ-
թացի) ցեղերու բազմութեամբ.—«Յայնմ ժամանակի թագաւորն
Մազքթաց Սանեսան անհնարին նիւթեաց զսրտմտութիւն ոխու-
թեան ընդ իւրում ազգակցին Խոսրովու արքային Հայոց, և զու-
մարեաց ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և Փոխաց, Թաւասպա-
րաց, Հեճմատակաց, Իժմախաց, Գաթաց և Գղուարաց, Գուգարաց,
Շչբաց և Ճղբաց և Բաղասճաց և Եգերսուանացն և այլոց, խառ-
նաղանճ բազմութեամբ անթիւ անբնակն վաչկատուն զօրութեանց,
րում միանգամ ինքն իշխէր զօրացն բազմաց: Եկն անց ընդ իւր
տոհմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից

զերկիրն Հայոց աշխարհին։ Եւ չգոյր թիւ բազմութեան հեծել
զօր գնդացն, և ոչ համար չերտաւոր հետևակ զօրուն։ Եւ եկ
լցին ծածկեցին զամենայն երկիրն Հայոց. քանդեցին, գերեցի
առհասարակ աւերեցին. սփռեցան տարածեցան զսահմանօքն,
և լի ծաւալեցան մինչև ի փոքր քաղաքին Սատաղու և մինչև
Գանձակ, սահմանս Ատրպատականի. խաղացուցին, ի մի վայր ժ
ղովեցին, ի ժամադիր կողմանս յԱյրարատեան գաւառին բան
մեծ լինէր։ Եւ խոյս ետ թագաւորն Հայոց Խոսրով յերմէ
բարցն, ի Սանեսանայ յարքայէն Մազքթաց, և անկաւ յամ
բերդն Դարեւնից յերկիրն Կոգոյ, և ընդ նմա ծերունին Վրթ
նէս եպիսկոպոսապետն Հայոց։ Ապա առնուին պահս պահել
խնդրել յԱստուծոյ, զի փրկեսցէ զնոսա յայնմ ի դառն դահճ
Եւ նա ծածկեալ բռնացեալ ունէր զերկիրն առհասարակ իբ
տարի մի։ Ապա եկն եհաս Վաչէ որդի Արտաւազդայ ի Մամիկ
նեան տոհմէն, զօրավար ամենայն Հայոց Մեծաց, զի երթեալ
նա ի ժամանակին յայնմիկ զերկայն ճանապարհս ի կողմանս Յ
նաց։ Ապա ժողովեաց նա զամենայն քաջս նախարարաց
և գունդ կազմէր բազում յոյժ և հասանէր անկանէր ի վեր
բանակին յառաւօտուն ժամուն այգենալոյն պաշտամանն, զի բ
նակեալ էին նոքա ի լերինն որ կոչի Ցլու գլուխ, և առ հա
րակ ընդ սուր հանին զամենեսեան, և ոչ մի ոչ ապրեցուցանէ
և դարձուցանէր զբազմութիւն գերեացն։ Եւ յետ այնորիկ առն
զաւարսն, խաղայր գնայր ի դաշտն Այրարատեան գաւառին,
տանէր զՍանեսան բուն գնդաւն ի Վաղարշապատ քաղաքի։
ռեալ զգունդն Վաչէ յարձակեցաւ ի վերայ քաղաքին։ Եւ իբր
տեսին զնա յարձակեալ ի վերայ իւրեանց՝ փախեան ելին ի ք
ղաքէ անտի յառաջարն ի կողմն Օշական բերդին, և զանապա
և զքարուտ տեղիսն ապաւէն իւրեանց համարեցան. և լին
սաստիկ պատերազմ յոյժ յոյժ։ Եւ նիզակակիցք զօրավարին Հայ
էին Բագարատ Բագրատունի, Մեհունդակ և Գարեգին Ռշտունի
և Վահան Նահապետն Ամատունեաց տոհմին և Վարազ Կամսա
կան։ Հասանէին հարկանէին սատակէին զզօրսն Ալանացն և Մա
քթացն և Հոնացն և զայլոց ազգացն, և լնուին զդաշտն առապ
րացն առհասարակ դիակամբք մեռելոց։... Ապա եկեալ արքային
տեղի ճակատուն, և ընդ նմա մեծ եպիսկոպոսապետն Հայոց՝
սին զկոտորածն հարելոց, զի նեխէր երկիրն ի հոտոյ մեռելոց
և ետուն հրաման զուգազ հանել յաշխարհէ և անդէն ծածկ
քարակարկառ վիմօք, զի մի ի շարաւոյ հոտոյն մեռելոտի ոս
րացն երկիրն պղծեսցի» (Բուզ. Գ. Ե.)։

Ճ. Բուզանդ կու տայ այս յարձակման պատճառը։ Գրիգորիս,
րէց որդին Վրթանայ, որ կարգեալ էր եպիսկոպոս կողմանցն Ա-
ուանից, թերևս Տրդատայ ժամանակէն, որպէս ասէ Խորենացին՝
արի իմն կրօնական նախանձու կ'երթայ քարոզել ուրիշ Աղուան
եղերու, որ չէին ընդ իշխանութեամբ Հայոց։ Գրիգորիսի քարո-
ութիւնն ի սկզբան կը գործէ բաւական ազդեցութիւն. յետոյ այն
արբարոսք, որոց գլխաւոր գործն էր աւարառութիւն, յափշտա-
ութիւն, սպանութիւն, այլովքն հանդերձ՝ կարծեցին թէ Գրիգո-
իսի գալուստն էր դաւ Հայոց թագաւորին կողմանէ՝ կասեցուն-
ու համար զնոսա իւրեանց սովորական զբաղմանէն, ուստի թըշ-
ամացան, և սպաննելով զԳրիգորիս՝ յարձակեցան ի Հայս։ Թերևս
րգռողներ ևս գտնուեցան.—«Իբրև ուղղեաց (Գրիգորիս) սեղան և
որոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն Աղուանից՝ եհաս նա մին-
և ի ճամբար բանակին Արշակունեաց արքային Մազքթաց, որոյ ա-
ուն իւր Սանեսան կոչէր, քանզի և՛ նոցա և՛ Հայոց թագաւորացն
ի ազգաւորութիւն էր տոհմին բնութեան։ Եւ երթեալ յանդիման
ինէր թագաւորին Մազքթաց... սկսաւ քարոզել և աւետարանել
ոցա զՔրիստոս։ Սկսան քննել զօրէնսն Քրիստոսի, և ուսան ի
մանէ, թէ ատելի է Աստուծոյ աւարառութիւն և յափշտակութիւն,
պանութիւն, ագահութիւն, այլազրկութիւն, զայլոցկերութիւն,
անկութիւն այլոց ստացուածոց. զայրացան ընդ բանս նորա և
ասեն. Զի ոչ յափշտակեսցուք, զի ոչ աւարեսցուք, զի ոչ առցուք
այլոց, բու կեցցուք այսչափ անչափ զօրաց բազմութիւնք։... Եկեալ,
սեն, սա այսպիսի բանիւք կամի ի քաջութենէ որսոյն կենաց մե-
ոց խափանել զմեզ. եթէ սմա լուիցուք և դարձցուք յօրէնս քրիս-
ոնէութեան՝ բու կեցցուք։ Այս խորհուրդ, ասէին, Հայոց թագա-
որին է. զսա յղել առ մեզ, զի այսու ուսմամբ խափանեսցէ զմեր
րշաւանս ասպատակութեան հինի յաշխարհէն իւրմէ. այլ եկայք
սա սպանցուսցուք ի միջոյ, և մեք ի Հայս արշաւեսցուք, աւա-
ու զմեր աշխարհս լցցուք»։

7. Ի վարձ այս յաղթութեան Խոսրով կու տայ մեծամեծ պար-
ևներ նախարարաց.—«Այս ետ հրաման թագաւորն Հայոց Խոս-
ով տալ պարգևս արանցն քաջացն, որ վաստակեցին նմա և փո-
անակեցին զանձինս իւրեանց փոխանակ աշխարհին Հայոց Մեծաց
ամենայն ի մարտս ճակատուցն պատերազմաց։ Եւ ետ Վաչէի զօ-
ավարին զականս Ջանջանակին և զՋրաբաշխիս և զՑլու գլուխ ա-
մենայն գաւառակօքն հանդերձ. նոյնպէս և այլոց նախարարացն
եծամեծ պարգևս» (Բուզ. Գ. Ը)։ Այս պատերազմէն անմիջապէս
տքը կը գնէ Բուզանդ զշինութիւնսն Խոսրովու, զԴուին և զեր-

կոսին անտառսն, զՏաճար մայրին առ Ազատ գետով ի Գառն
մինչև ի Դուլին ուր էին ապարանքն Տիկնունի, թերևս ամարան
տիկնանց, և անտի ի խոնարհ դէպ ի հարաւ զԽոսրովակերտ
միւս ևս անտառ իբրև «տեղիք որսոց զբօսանաց ուրախութեա
թագաւորութեան նորա, հանդերձ արքունի ապարանօք.—«Եւ
հրաման թագաւորն զօրավարին իւրոյ հանել խաշար յաշխարհ
բազում, և բերել զվայրենի կաղին մայրեաց, և տնկել զայն յԱյր
րատեան գաւառին, և առեալ (սկսեալ) յամուր բերդէն արքու
որում կոչեն Գառնի, մինչև ի դաշտն Մեծամօրի ի բլուրն որ
նուանեալ կոչի Դուին, որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մե
Արտաշատու, զգետն խոնարհ մինչև յապարանսն Տիկնունի՝ տնկ
ցին զկաղինն, և կոչեաց զանուն նորա Տաճար մայրի։ Եւ միւս
մայրեացն յեղեգնաբերանին ի նմանէ ի հարաւակոյս լցին զդաշ
կաղնատուն տնկով, և կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ,
անդ շինեցին զապարանսն արքունականս, և զերկոսեան տեղի
(անտառսն) պարսպեալ փակեցին, և ոչ կցեցին ի միմեանս վա
պողոտայի ճանապարհին։ Եւ աճեաց բարձրացաւ. և ապա զամ
նայն երէս և զգազանս հրամայեաց ժողովել թագաւորն և լնո
զքաղաքորմսն (զանտառսն փակեալս իբրև զքաղաք որմովք),
լցին նոցա տեղիք որսոց զբօսանաց ուրախութեան թագաւոր
թեան նորա։ Եւ զօրավարն Վաչէ կատարէր վաղվաղակի զամ
ցեալսն արքայի» (Բուզ. Անդ)։ Գոյին ուրեմն և առ Հայովք պ
տէզք հաւաքակաց կամ արգելոցք գազանաց և էրէոց (ménagerie

Ը. Այն ինչ ազատած էին Հայք յարշաւանէն Մազքթաց՝ Շ
պուհ տեսնելով զթուլութիւն, թերևս և զտկարութիւն Հռոմայ
ցւոց, որ 338-էն հետէ, այն ի մահուանէն Կոստանդիանոսի և յե
ծանելոյ դաշանցն կ'սպառնային Պարսից, բայց չկրցան վճարել իւ
և զհայաստան թողեալ գրեթէ անօգնական՝ սկսաւ յայտնի թշն
մութիւն Հայոց դէմ։– Մինչ Խոսրով կ'զբաղէր անտառներով՝ Շա
հոյ զօրքը կը մտնեն ի Հեր և ի Զարևանդ գաւառ։ Իսկոյն Դ
տաբէ նահապետ Բզնունեաց կը ղրկուի զօրօք. կը մտանէ զօր
Պարսից. Խոսրով և Վրթանէս կը դիմեն յաղօթս. Վաչէ նոր գլ
դաւ, իբր 30 հազարաւ, կը զարնէ թշնամին առ ծովուն Բզնու
նեաց. մատնիչն Դատաբէ կը բռնուի և կը պատժուի ազգովին.
«Մինչդեռ նա (Խոսրով) զմայրեօքն տնկելովք էր՝ յանկարծակի զ
շակ հասանէր առ Խոսրով ի Հեր և ի Զարևանդ գաւառէ, թ
պատրաստեալ են զօրքն Պարսից գալ հասանել ի գործ պատերա
մի ի վերայ քո։ Ապա հրաման ետ արքայ Խոսրով Դատաբայ ն
հապետի Բզնունեաց գուգագ (անկանոն զօրք) հանել յաշխար

աւելի քան զչափն, և զհամար (կանոնաւոր) զօրսն մատենիկ զընդաւն ընդ առաջ նոցա խաղալ հասանել ի դիմի հարկանել, արգելուլ զթշնամիսն։ Իբրև հասանէր Դատաբէն՝ խորհուրդ միաբանութեան դնէր ընդ իշխանս զօրացն Պարսից, կամեցաւ մատնել ի ձեռս նոցա զարքայն Հայոց զտէրն իւր։ Դարան հրամայեաց գործել թշնամեացն ի վերայ իւրոց զօրացն. յանկարծ յեղակարծումն տարակարծի զքառասուն հազար զօրսն Հայոց զկէսս կոտորէին, և այլքն փախստական լինէին։ Եւ Դատաբէն չարագործ առեալ զզօրսըն Պարսից՝ և կամէր անկանել ի վերայ թագաւորին Հայոց։ Ապա փախստականք զօրացն վաղ հասանէին ի բանակ արքային Հայոց, գոյժ առնել զանհնարին կործանումն իւրացն եղելոց, զչարագործութիւն մատնութեանն անօրէն Դատաբենայ։

Ապա անկանէր թաւալէր խնդրէր յԱստուծոյ բազում պաղատանօք և ուժգին արտասուօք թագաւորն Հայոց Խոսրով հանդերձ Վրթանաւ քահանայապետիւն։ Եւ յետ այսորիկ աճապարէր կուտէր զօրս առ ինքն իբրև երեսուն հազար հանդերձ զօրավարաւն Վաչէիւ, գայր հասանէր ընդ առաջ նոցա ամենայն աւագախումբ մեծամեծ նախարարօք իւրովք։ Եւ դիպեցան միմեանց առ ափն ծովուն Բզնունեաց, յԱռեստն աւանի, ի ձկնատեսանսն արքունի ի վերայ գետակի. տեսին զզօրսն Պարսից զի եկեալ էին անթիւ փղօք և անչափ զօրօք. և սոքա հասին անկան ի վերայ բանակին Պարսից. հարին սատակեցին, և թափէին աւար բազում, և զփիղսն և զամենայն ույժ զօրութեան նոցա։ Ձերբակալ արարեալ զԴատաբէն Վաչէ սպարապետն և քաջն Վահան Ամատունի՝ ածէին զնա առաջի մեծի թագաւորին Խոսրովու, և քարկոծ առնէին զնա քարամբք իբրև զայր՝ որ աշխարհի և գնդի և զօրաց տեառն իւրոյ դաւաճան լեալ իցէ։ Եւ զազգ նորա և զկին և զորդիս գտանէր յամրոցի անդ իշխանին Ռշտունեաց յանուանեալն յԱղթամար կըղզւոջ Վաչէ սպարապետն, և ի նաւ ելեալ, անցեալ ի կղզին՝ առ հասարակ ոչ զէգ թողոյր և ոչ զարու։ Եւ այսպէս բարձաւ ազգատոհմ նախարարութեանն այնորիկ, և զտուն նոցա յարքունիս կալան» (Բուզ. Գ. Ը)։ Բուզանդ կը յաւելու, թէ Պարսք չդադարեցին յարուցանելէ պատերազմ Խոսրովու դէմ, և Խոսրով չէր վըստահ նախարարաց, և չէր հեռացունէր զնոսա յիւրմէ, բաց ի սպարապետէն Վաչէէ և ի Վահանայ Ամատունւոյ, յորս վստահ էր բոլորովին և յորոց ձեռս էր բոլոր զինուորական զօրութիւն երկրին.—«Բայց յետ այսորիկ ոչ դադարէին Պարսք ի տալ պատերազմ ընդ Խոսրովու արքային. և նա դնէր օրէնս՝ զի մեծամեծ աւագանին, նախարարքն աշխարհակալքն աշխարհատեարքն որ էին բն-

րաւորք և հազարաւորք՝ կայցեն առ արքային և ընդ նմա շրջեսցին, և մի ոք ի նոցանէ երթիցէ ընդ զօրս արքունի։ Զի երկնչէր նա յերկմտութենէ նոցա, թէ գուցէ զնոյն գործ Դատաբենայն գործիցեն և ապստամբ լինիցին ի նմանէ։ Բայց վստահ լինէր ի ծերունին Վաչէ, ի բուն սպարապետն ի զօրավարն Հայոց Մեծաց, և ի քաջն Վահան յԱմատունի։ Գումարէր զզօրսն ամենայն տանցն աւագանւոյն ընդ զօրսն արքունի, և տայր զգումարտակն ամենայն ի ձեռս նոցա. և հանապազ կային նոքա ի քաջութեան ի մարտ պատերազմի ի սահմանս Պարսից, և ոչ տային անխտիր արշաւել աւերել զերկիրն Հայոց. և կայր արքայ ի հանգստի, և աշխարհ ի շինութեան և ի խաղաղութեան զամենայն աւուրս կենաց նոցա» (Բուզ. Անդ)։

Գ. Նապաւհ յարոյց Խոսրովու դէմ ուրիշ թշնամի բուն իսկ նախարարներէն, այն է զբդեշխն Աղձնեաց, որուն և օգնական էր զօրօք. բայց այս ապստամբութիւնն ևս զսպուեցաւ կորստեամբ ցեղին բաց ի մանուկ ժառանգէ մը, զոր ազատեցին Մամիկոնեանք.— «Զայնու ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց մի ի ծառայից նորա, մեծ իշխանն Աղձնեաց որ անուանեալ կոչէր բդեաշխն, որ էր մի ի չորից, գահերէց բարձերէց տաճարին արքունի։ Նա ձեռս յարքայն Պարսից և մատնեաց զարքունի տունն (կալուած) որ յեց յինքն էր։ Եւ եած զօրս արքային Պարսից ի թիկունս իւր, և հատաւ յերկրէն յիշխանութենէն Հայոց և տայր պատերազմ ընդ արքային Հայոց ուժով Պարսից թագաւորութեանն, և սաստկանայր մարտ պատերազմին։ Ապա առաքէր թագաւորն Հայոց զբարեկիր զծառայս իւր, զիշխանն Կորդուացն զՋոնն, և զիշխանն մեծի Ծոփաց զՄար, և զիշխանն Ծոփաց Շահէի Ներսեհ, և զիշխանն Սիւնեաց զՎաղինակ, և զիշխանն Հաշտենից զԴատ, և զիշխանն Բասենոյ զՄանակ, հանդերձ բազում զօրօք։ Ապա չոգան յաղթեցին զօրացն Պարսից, և սպանին զբդեաշխն եղբարբք և որդւովք իւրովք հանդերձ։ Բայց զաղջիկ մի զդուստր, և զգլուխ Բակուր բդեշխին բերին առ արքայ. և ետ արքայ զաղջիկն կնութիւն սիրելւոյն արքային Վաղինակայ Սիւնւոյ և զտունն Աղձնեաց, և արար զնա բդեաշխ և պայազատ տան նորուն։ Ժառանգն բազմացաւ, և հանդերձ աշխարհաւ և ամենայն ուժովն կայր բդեաշխն Վաղինակ ի ծառայութեան արքային հանապազ։ Բայց յորդւոցն Բակուր բդեշխի պատանեակ մի փախեաւ անկաւ առ զօրավարն Հայոց Վաչէ, և անդ ապրեցաւ թագուցեալ ի տան նորա, որ առ յապա ժառանգ տան նորա լինէր, և յայլում ժամանակի դարձաւ կալաւ զտունն իւր, որոյ անուն Խեշա կոչէր» (Բուզ. Գ. Թ)։

10. Աւելի սաստիկ եղաւ Պարսից դէմ Խոսրովու վերջին պատերազմն, յորում մեռաւ սպարապետն Վաչէ և այլք ի նախարարաց.—«Յետ այսորիկ յաւել լինել մարտ խստութեան պատերազմի ի մէջ Պարսից և Հայոց. զի ժողովեցան հասին կուտեցան առնուլ զպատախումբ բանակ նախարարակոյտ զօրացն. և ելանէր տայր ընդ զօրսն Պարսից պատերազմ, և լինէր անհնարին կոտորուած յերկոցունց կողմանցն, և բազում ծախ մեծամեծ աւագանւոյն կոտորելոցն: Անկանէր ի պատերազմին յայնմիկ մեծ սպարապետն Հայոց Վաչէ, և լինէր ամենայն աշխարհին սուգ անհնարին, զի բազում անգամ էր Տեառն փրկութիւն տուեալ Հայոց ի ձեռն նորա» (Բուզ. Գ. ԺԱ): Թէպէտ չթուիր թէ շահեցան ինչ Պարսիկք այս պատերազմաւ՝ սակայն վախճանն ոչ սակաւ աղետալի եղաւ Հայոց համար.—«Բազում անձկայրեաց տրտմութեամբք և արտասուակաթ ողբովք և ծանրաթախիծ հոգով, մեծաւ կծով և անհնարին աշխատանօք պաշարեալք՝ զգնացելոցն կարիս մնացելոցն համարեալ սգային» (Բուզ. Անդ): Ուստի, որպէս ասէ Բուզանդ՝ ի մխիթարութիւն և ի քաջալերութիւն ազգին որոշեց Վրթանէս ամի ամի կատարել անկելոց տօնն իբրև վկայից, և ոչ նոցա միայն, այլև այնուհետև հայրենեաց համար բոլոր անկելոց ի պատերազմին.—«Զորս մատուցեալ սփոփէր մեծն Վրթանէս և ասէր. Մխիթարեցարուք ի Քրիստոս, վասն զի որք մեռանն՝ մեռան յաղագս աշխարհի և եկեղեցեաց և աստուածագործ օրինացն ուխտութեան, զի մի գերեալ քանդեսցի աշխարհս:... Որք այսմ ամենայնի փոխանակ զանձինս իւրեանց ոչ խնայեցին՝ ընդ վկայս Քրիստոսի է նոցա համար պատուոյ: Արդ մի լացցուք զնոսա, այլ պատուեսցուք ընդ նահատակսն, դիցուք ընդ աշխարհ օրէնս, զի ամենայն ոք զսոցա յիշատակ քաջութեանն իբրև Քրիստոսի նահատակաց անխափան կատարեսցէ:... Եւ եդ օրէնս ընդ աշխարհ մեծ քահանայապետն Վրթանէս՝ զնոցա առնել զյիշատակն ամ յամէ, և որք փոխանակ աշխարհին փրկութեան մեռանիցին ի նմանութիւն նոցա՝ եդ կանոն յիշել զնոսա առ սուրբ սեղանն Աստուծոյ ի ժամ պատարագին, յորժամ զանուանս սրբոցն կարգիցեն, և ապա զկնի նոցա զնոցայն, և մնացելոցն յանցելոցն զութ և խնամ կալցին» (Անդ):

11. Սակայն մահուամբն Վաչէի չառնուեցաւ սպարապետութիւնն ի Մամիկոնեանց, այլ անցաւ ի մանուկն Արտաւազդ որդի Վաչէի, զոր իբրև խնամակալ սնուցին Արշաւիր Արշարունի և Անդովկ իշխան Սիւնեաց, որ էին փեսայք Մամիկոնեանց.—«Սակայն զՎաչէի զօրավարի փոքրիկ մանկիկ մի... ի հայրենի բարձ գահուն մատուցանէին, որում անուն էր... Արտաւազդ: Առաջի թագաւո-

րին զՀօրն պատիւն ի գլուխն դնէին, և զսպարապետութեանն նո-
րա տեղի. զի կարի որդի վաստակաւորի էր և վաստակաւոր ազգէ,
զի այլ յազգին ոչ գտաւ Հուժկու, զի ի մեծ պատերազմին մեռան։
Եւ զզօրավարութեանն զգործ յանձն առնէին Արշաւրայ Կամսարա-
կանի իշխանին Շիրակայ և Արշարունեաց, և Անդովկայ իշխանին
Սիւնեաց, զի նոքա փեսայք էին տանն Մամիկոնեան տոհմին։ Եւ
Հրաման ետուն մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս Հանդերձ թա-
գաւորաւն Արշաւրայ և Անդովկայ՝ սնուցանել զպատանեակն զԱր-
տաւազդ, զի կացցէ ի տեղի նախնեացն իւրոց և Հօր իւրոյ, և
գործ քաջութեան գործեսցէ ամենատեառն Քրիստոսի և առաջի
իւրոց մարմնաւոր բնակ տերանց Արշակունեաց քաջ արանց, և
տան և կենաց, և խնամակալ լիցի այրեաց և որբոց» (Անդ)։

12. Յետ սակաւուց (343) մեռան Խոսրով և Վրթանէս.—
«Ապա յետ այսորիկ փոխեալ լինէր քաջ արանցն աշխարհաշէնն
Խոսրով, թագաւորն Հայոց Մեծաց։ Ժողովեալ, աշխարհ եղեալ՝ լա-
ցին ամենայն սահմանք աշխարհաց գաւառաց Հայոց Մեծաց, և
տարան առ իւր նախնիսն յԱնին, յԵկեղեցագաւառն Դարանաղեաց։
Եւ յետ սորա փոխեցաւ եւս յաշխարհէ մեծ քահանայապետն Վրր-
թանէս. և ժողովեցան ամենայն աշխարհն Հայոց, և մեծաւ պաշ-
տամամբ, սաղմոսիւք և երգովք Հոգևորօք, կանթեղօք և մոմեղէ-
նօք և խնկածու Հոտովք, արքունական կառօք զսուրբն Վրթա-
նէս, անհնարին բեկմամբ վասն իւրեանց յայնմ ի Հոգևոր վարդա-
պետութենէն որբ մնալոյ՝ մեծաւ լալեաց տրտմութեամբ մինչև ի
գեւղն Թորդան ի Դարանաղեաց գաւառն յուղարկէին։ Եւ անդ առ
մեծի Հայրապետին Գրիգորի զսորա սուրբ ոսկերսն Հանգուցանէին,
և զմշտակատար զսորա կենդանի յիշատակն ի վերայ կատարեալ
դառնային» (Բուզ. Գ. ԺԱ)։

13. Ինչպէս կը տեսնուի ցարդ պատմուածներէն՝ ի մահուա-
նէն Տրդատայ և այսր Հայք մնացին առանձինն, և իւրեանց զօ-
րութեամբ միայն դէմ դրին այնչափ դժուարութեանց։ Զմիջամտու-
թենէ Հռոմայեցւոց յետ Հայոց Տրդատայ յաջորդաց Խոսրովու և
Տիրանայ ժամանակ՝ չիք յիշատակութիւն ո՛չ յարտաքին ժամանա-
կակից պատմութեան և ոչ ի մերումն։ Թէպէտ պատերազմն ընդ
Շապհոյ Հրատարակուեցաւ Կոստանդեայ կայսրութեան յաջորդ տա-
րին (338)—քանզի այն տարին էր որ Շապուհ, Հակառակ Գաղե-
րեան դաշանց մտնելով ի Միջագետս պաշարեց զՄծբին, բայց չկա-
րելով վճարել ինչ՝ դարձաւ յետս,—սակայն կռիւն յառաջ կը տա-
րուէր երկուստեք թուլութեամբ, քանզի Շապուհ էր ի կռուի ընդ
Հոնաց և Մազքթաց, և Կոստանդ յարև-
արևելեան

մուտս ընդդէմ ապստամբաց, Մաղնենտիոսի և այլոց: Արդարև Շապուհ, կամ մանաւանդ գործակալք նորա կը նեղէին և զՀայս ուղղակի կամ անուղղակի, բայց սոքա չէր մարթ յուսալ օգնութիւն ի Հռոմայեցւոց՝ իրաց այն վիճակին մէջ: Բուզանդ որ այնպէս նախանձաւոր է ի պատմել որ և լցէ օգնութիւն Հռոմայեցիներէն եղած առ Հայս՝ չյիշեր ամենևին այսպիսի ինչ առ Խոսրովաւ և առ Տիրանաւ, այլ ցուցանէ զՀայս, ինչպէս տեսանք՝ թողեալ լքեալս. մինչ Խորենացին կու տայ թագաւորել հաւանութեամբ և՛ Խոսրովու և՛ Տիրանայ, հակառակ ակնարկութեան ճառին Յուլիանոսի, որ Կոստանդեայ դարձէն ետքը միայն ի Պաննոնիոյ, այն է 353-ին, որ է հաւանական թուական Արշակայ թագաւորելուն՝ կը դնէ յարդարեալ զիրս Հայոց միջնորդութեամբ Հռոմայեցւոց, ճիշդ համաձայն Բուզանդայ, որ ի սկզբան թագաւորութեանն Արշակայ միայն կու տայ միջամտել Հռոմայեցւոց զինու զօրութեամբ յիրս Հայոց: Այսպէս Հայք, թէպէտ առանձինն առանց նիւթապէս օգնական ունենալու զՀռոմայեցիս, բաւական զօրացեալք քառասնամեայ խաղաղութեամբն առ Տրդատաւ՝ կարող եղան առ Խոսրովաւ ութ տարի զդէմ ունել ներքին և արտաքին թշնամիներու, մանաւանդ զի Խոսրով էր սիրով ոչ ընդ Վրթանայ միայն, որոյ խորհրդով, ինչպէս տեսանք, կը շարժէր միշտ՝ այլև ընդ հաւատարիմ և քաջ ազգին Մամիկոնէից, որ ըստ Բուզանդայ (Գ. Բ) ի բնէ, «ի նախնեաց կարգաց», ունէին ժառանգութեամբ զսպարապետութիւնն—(զՄամիկոնեանց իբրև զսպարապետաց տես և Բուզ. Գ. Դ, Է, ԺԱ, ԺԸ, և այլ բազում ուրեք)—և ընդ այլ նշանաւոր նախարարս, որպիսի էին Արշաւիր Կամսարական և Անդովկ Սիւնի, խնամիք Մամիկոնեանց, և Ամատունին Վահան: (Զարմանալի է, որ Խորենացին չտար զսպարապետութիւնն Մամիկոնեանց, և ոչ կը յիշէ իբրև սպարապետ՝ Խոսրովու Կոտակայ, Տիրանայ, Արշակայ և Պապայ քաջ զօրավարներն Մամիկոնեան ցեղէն, որպիսի էին Վաչէ, Արտաւազդ, Վասակ, Մուշեղ. զՎասակ հաւատարիմ և անուանի զօրավարն Արշակայ կը կոչէ «զինակիր արքայի» (Խոր. Գ. ԻԵ), նոյնպէս զերեց եղբայր նորա զՎարդան երկիցս (Խոր. Գ. ԻԲ. և ԻԵ), թէպէտ չէր սա զօրավար. և ոչ Մուշեղայ կու տայ զօրավար անունը (Խոր. Գ. ԼԵ):

14. Առ Տիրանաւ յաջորդաւ Խոսրովու կը քայքայի այս ներքին զօրութիւնը: Նիւթական զօրութիւնն սկսած էր տկարանալ, և Տիրան, որպէս ասէ Բուզանդ՝ իւր «խօլութեամբն», այն է անմիտ գնացիւք՝ խրտեցոյց ոչ միայն եկեղեցական դասն, այլև նախարարներն, զՄամիկոնեանս իսկ որ էին գլխաւոր նեցուկ սէրու-

թեանն։ Բուզանդ, որ այնպէս առատ է գովեստիւք երբ կը խօսի
գխոսրովայ, գալով առ Տիրան՝ բոլորովին կը փոխէ լեզուն.—«Յայնմ
անմխտ թագաւորութեանն ժամանակի ոչ միայն թշնամիք թըշ-
նամեաց, այլև բարեկամք բարեկամաց և ընկերք ընկերաց դաւա-
ճանութիւնս, մատնութիւնս սկսան յարուցանել ի մէջ Հայաստան
երկրին, և բիւր և ազգի ազգի թշնամութիւնս գործէին». (Բուզ.
Գ. ԺԸ). և այլուր (Գ. ԺԳ)—«Յայնմ ժամանակի զթագաւորն իւ-
րեանց օրինակ չարի առնէին և նովին օրինակաւ ձևել սկսան և
նոյնպէս գործել։... Սիրելիք սիրելեաց, և մերձաւորք մերձաւո-
րաց, և ընտանիք ընտանեաց, ազգականք ազգականաց, խնամիք
խնամեաց գնէին գայթակղութիւն։ Անդ էր տեսանել այր ընկերի
արեամբք ծարաւեալք, ոգւովք չափ գայլին վնասուցն, անխրատ
վարս և անհանճար միտս ունելով»։ Եւ ի խօսելն զթագաւորու-
թենէն Արշակայ ասէ. «Ի խնդիր ելանէր արքայն Արշակ առհմին
զօրավարաց ազգին քաջացն Մամիկոնենից, մանաւանդ զի իւր
դայեակ և սնուցիչք էին. և երթեալ գտանէր զնոսա յամուրս աշ-
խարհին Տայոց յերեանց աշխարհին, և դարձուցանէր զնոսա յըն-
դանութիւնն, զի պառակտեալք և քակտեալք էին յընդանութե-
նէն և յամենայն գործոց Հայոց ի ժամանակս խռովութեանն Տիրա-
նայ» (Բուզ. Դ. Բ)։ Այսպէս առանց օգնութեան Հռոմայեցւոց և
իրեններէն լքեալ՝ մատնեցաւ Տիրան ի ձեռս Պարսից, ինչպէ
պիտի տեսնենք յետոյ։

15. Խոսրովու յաջորդեց որդին Տիրան (343—349), և Յու
սիկ երէց որդին Վրթանայ փոխանակ հօրն կարգէր քահանայա
պետ.—«Եւ յանցանելն յաշխարհէ թագաւորին Խոսրովու՝ Տիրա
որդի Խոսրովու առ զթագաւորութիւն աշխարհացն Հայոց Մեծաց
և ընդ նմին սուրբն երանելի մանուկն Յուսիկ յաջորդեաց զտեղ
հայրապետացն Հայոց» (Բուզ. Գ. ԺԲ)։

Հոս հարկ է մեզ սակաւիկ մի զարտուղել մեր պատմութեա
կարգէն։ Գիտենք Ագաթանգեղոսէ, թէ յաւուրց անտի Լուսաւոր
չին, որ առաւ եպիսկոպոսութեան ձեռնադրութիւնը Կեսարիո
մետրապոլտէն (որոյ թեմ կը թուի թէ էր Հայաստան յառաջա
գոյն իսկ քան զԼուսաւորիչն)՝ հաստատուեցաւ երկու եկեղեցեա
մէջ պայման, որոյ զօրութեամբ յաջորդք Լուսաւորչին պիտի առ
նուին ձեռնադրութիւնը Կեսարիոյ մետրապոլտէն իբրև թեմակա
եպիսկոպոսէ, և փոխանակ այսր՝ յաջորդք Լուսաւորչին պիտի ա
ճենայն իշխանութիւն ձեռնադրել եպիսկոպոս և վարել մետր
պոլտական իրաւասութիւն փոխանակ եպիսկոպոսին Կեսարու։ Ա
եղև իսկ այնպէս. առաջին յաջորդք Լուսաւորչին մինչև Պապ

ժամանակ՝ առին ձեռնադրութիւնն ի Կեսարիոյ, ինքեանք կը ձեռնադրէին եպիսկոպոս իբր եպիսկոպոսապետ կամ մետրապոլիտ բոլոր Հայոց, ուստի և կոչուեցան կաթողիկոս, այսինքն ընդհանուր եպիսկոպոս կամ գլխաւոր եպիսկոպոսաց։ Թէպէտ ձեռնադրութիւնն ի Կեսարիոյ առնլոյ սովորութիւնն դադրեցաւ ի վաղուց, ինչպէս պիտի տեսնենք՝ իշխանութիւնն ձեռնադրելոյ եպիսկոպոս և անունն եպիսկոպոսապետ—«Կաթողիկոս»՝ կը մնայ մինչև ցորդ յանձին կաթողիկոսաց Հայոց։ Գալով վերոյիշեալ պայմանին պատմութեան, ի նամակին զոր Ղևոնդիոս եպիսկոպոսն Կեսարուցոց ընդ Գրիգորի առ Հայս յետ ձեռնադրութեան նորա՝ կը կարդանք այսպէս ըստ Ագաթանգեղոսի. «Եւ հաստատեալ կայցէ վըկայութիւն ի մէջ երկուց կողմանցս, զի պարգևաբաշխութիւն նորոգեալ քահանայապետութեանդ ձեռոյդ նահանգիդ առ ի մէնջ կայցէ անշարժ յեկեղեցւոջս Կեսարու, ուստի և հանդերձեցաւ ձեզ պատրաստութիւն շինութեան ձեռնադրութիւն» (Ագաթ. ՃԺԶ)։ Թերևս չհաւատայինք Ագաթանգեղոսի, համարելով աւելաբանութիւն ի շնորհուկս մետրապոլտին Կեսարու՝ եթէ և Բուզանդ ևս չիրկնէր զնոյն։ Երբ Թագաւորն Պապ որ հակառակ էր Յունաց, յետ մահուն Ներսեսի դրաւ կաթողիկոս Հայոց զՅուսիկ ոմն առանց ղրկելոյ զնա ի Կեսարիա առնուլ ձեռնադրութիւն՝ բարկացաւ, ասէ Բուզանդ, եպիսկոպոսն Կեսարու, վասն զի առանց հըրամանաց նորա եղաւ այն, և առաւ յետս զիրաւասութիւնն կաթողիկոսին, և եպիսկոպոսունք Հայոց սկսան երթալ Կեսարիա առնուլ ձեռնադրութիւն, և Յուսիկ (ոչ որդին Վրթանայ), իբրև եպիսկոպոս արքունի դրան՝ պալատան մէջ միայն ունէր իշխանութիւն հաց օրհնելոյ, այսինքն կատարելոյ պատարագին խորհուրդը.—«Յետ մահուանն հայրապետին Ներսեսի կացոյց թագաւորն Պապ զՅուսիկ եպիսկոպոս, որ էր ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսին Մանազկերտոյ... առանց հրամանի եպիսկոպոսապետին Կեսարու, և ոչ որպէս սովոր էին տանել ի Կեսարիա ի ձեռնադրութիւն։... Եւ ի ցասման եղեալ հայրապետին Կեսարու վասն բանիս այսորիկ՝ արար ժողով եպիսկոպոսաց սինհոդոսին նահանգին Կեսարու, և գրեցին թուղթ ցասմամբ մեծապէս։ Նոյնպէս և գրեցին թուղթ առ թագաւորն Պապ և լուծին զիշխանութիւն կաթողիկոսութեանն, զի նա (Յուսիկ) դրանն արքունի իշխեսցէ զհացն օրհնել, և մի իշխեսցէ ձեռնադրել, և որ միանգամ լինէին եպիսկոպոսք սահմանացն Հայոց՝ երթային ի քաղաքն Կեսարացւոց և անդ լինէին եպիսկոպոսք. բայց որ լինէր ուստ եպիսկոպոսացն՝ ի վերոյ միայն նստէր և հաց օրհնէր թագաւորացն» (Բուզ. Ե. ԻԹ)։

Զայս կը հաստատէ նաև Խորենացին համառօտիւ ըստ իւրում ոճոյ. «Պապ կացոյց զոմն յազգէ Աղբիանոսի, որում անուն Շահակ կոչիւր, զոր կացոյց փոխանակ Ներսիսի՝ առանց մեծի արքեպիսկոպոսին Կեսարու» (Խոր. Գ. ԼԹ). ուստի յայտնի է, թէ «առանց մեծի արքեպիսկոպոսին Կեսարու» գնել կաթողիկոս մինչև ցայնժամ չէր օրէն կամ գէթ սովորութիւն։ Պապայ այս նշանաւոր գործը, որով ազատեց Հայոց եկեղեցին կախմանէն զոր ունէր առ ի Կեսարիոյ և արար անկախ եկեղեցի՝ կ'երևի թէ թուեցաւ հաճոյ Հայոց, քանզի նորընտիր կաթողիկոսաց ձեռնադրութեան համար Կեսարիա երթալու սովորութիւնն կը թուի դադրած այնուհետև, թէպէտ ոչ նոյնպէս պահանջումն եպիսկոպոսին Կեսարու, ինչպէս պիտի տեսնենք։ Եւ թէպէտ հաւանական է, թէ, որպէս ասէ Բուզանդ, ի սկզբան եպիսկոպոսացուք Հայոց, կամ գէթ նոցա մեծ մասն հնազանդելով Կեսարիոյ եպիսկոպոսին հրամանին իբրև թեմական եպիսկոպոսի, ի Կեսարիոյ սկսան առնուլ ձեռնադրութիւն՝ սակայն չիք տարակոյս, թէ այս ևս դադրեցաւ յետոյ ժամանակաւ, մանաւանդ յետ քաղաքական բաժանման երկրին, երբ Յունաց հետ հաղորդակցութիւնն արգելուեցաւ Պարսից բաժնին Հայոց։ Իրաւասութեան այս խնդիրն, ինչպէս նաև հակառակութիւնն որ ծագեցաւ այս պատճառաւ ի մէջ Հայոց և Կեսարիոյ՝ կը հաստատուի մանաւանդ ի Խորենացւոյն, որ ի պատմելն զթշնամութիւնն Կեսարիոյ եպիսկոպոսին, որ արգելեց Սահակայ և Մեսրոպայ վարել իրաւասութիւն Յունաց բաժնին Հայոց վրայ՝ այս հակառակութեան պատճառը կ'ընծայէ ձեռնադրութեան բարձման.—«Ընդ այն ժամանակս եկեալ Մեսրոպայ և բերեալ զնշանագիրս մերոյ լեզուիս... ուստի զընակողմանս բաժնոյն Պարսից, բայց ի Յունաց մասնէն, որք ընդ ձեռնադրութեամբն տուգանեցան, վիճակեալ յաթոռն Կեսարու» (Խոր. Գ. ԾԳ)։ Նոյն զՍահակայ ասէ, թէ չընդունուեցաւ ի բաժնին Յունաց իբրև կաթողիկոս այն բաժնին Հայոց.—«Իբրև ետես մեծն Սահակ զայս ամենայն չարիս ի մասինն Պարսից՝ գնաց նա զկողմամբք արևմտից մերոյ աշխարհիս ի բաժնին մասինն Յունաց, և ոչ ըստ արժանեաց իւրոց եղև ընկալեալ» (Խոր. Գ. ԾԷ). և ինքն Սահակ ասէ ի թղթին առ Թէոդոս ըստ Խորենացւոյն. «Ոչ հանդիպեցայ ընդունելութեան յիմում վիճակիս ի հրամանէ վերակացուացս սոցա. այնչափ առեցեալ զմեզ՝ մինչև զնշանագիրս անգամ ոչ ընկալան զորս երեր նոյն այր (Մեսրոպ), զոր առաքեցի առ ձեր բարերարութիւնդ, բազում անգամ ճգնեալ դորա յԱսորւոց աշխարհին։ Արդ հաճոյ թուեսցի տէրութեանդ ձերում ոչ անիշխան առնել զմեզ ի մերում վիճակիս, և հրամայել ընդունել զմեզ և զվար-

դապետութիւնս (զուսումն) մեր» (Խոր. Անդ)։ Այս ընդդիմութենէն առ Սահակ կը տեսնուի, թէ նա ևս առած չէր ձեռնադրութիւնն ի Կեսարիոյ։ Սահակ խորագիտութեամբ գտաւ հնարս բերել ի ձեռս զիրաւասութիւնն ի վերայ Հայոց որ ի բաժնին Յունաց, բողոքելով առ կայսր և առ պատրիարքն Կոստանդնուպոլսի Ատտիկոս, որ մտադիւր ընկալաւ Սահակայ բողոքն զմետրապոլտէն, ի մէջ որոյ և պատրիարքին կար իրաւասութեան վէճ։ Ի թղթին կայսեր կը տեսնենք արդարև, թէ կայսրն իշխանաբար կու տայ հրաման ընդունել զՍահակ ի բաժնին Յունաց իբրև թեմական եպիսկոպոս հաւասար մետրապոլտին Կեսարու.—«Գրեցաք զի զքեզ պատուով ընկալցին որպէս զարդարև վարդապետ իւրեանց, հանգոյն արքեպիսկոպոսին Կեսարու» (Խոր. Անդ)։

Ոչ փոքր ապացոյց է այս նախկին յարաբերութեան Հայոց ընդ Կեսարիոյ՝ վկայութիւնն Գեղասիոսի Կիզիկենացւոյ (մատենագրի Ե. դարու, պատմչի գործոց ժողովոյն Նիկիոյ), որ զՂեոնդիոսէ Կեսարիոյ եպիսկոպոսէն, զոր կը կոչէ զարդ եկեղեցւոյ Աստուծոյ՝ ասէ, թէ ունէր իշխանութիւն ինչպէս ի վերայ եկեղեցեաց արևելեան մասին Փոքուն Ասիոյ, որպէս Կապադովկիոյ, Գաղատիոյ, Պոնտոսի՝ նոյնպէս Մեծին և Փոքուն Հայոց (առ Գաթըրճ. Տիեզեր. պատմ. Հտ. Բ. 479, ծան. 1), և ի կարգս անուանց եպիսկոպոսաց ժողովոյն կայ՝ և «Արիստակէս Հայոց Մեծաց», զկնի անուան եպիսկոպոսին Կեսարու, իբրև ընդ նորա իշխանութեամբ (Անդ, էջ 480)։

Թէ ի սկզբան, ի ձեռնադրութեան Լուսաւորչին այնպիսի ինչ պայման հաստատուեցաւ ի մէջ Հայոց և Կեսարիոյ վիճակին՝ յայտնի է նաև պատմութենէ։ Առնուլն Լուսաւորչին զձեռնադրութիւնն ի Կեսարեայ՝ է առանց ուրանալոյ։ ԶԱրիստակեայ և զՎրթանայ չկայ յիշուած թէ գնացին ի Կեսարիա։ Զայսանէ համառօտիւ միայն կ'անցնի Բուզանդ. զԱրիստակեայ ասէ, թէ «Հօրն էր գործակից և եպիսկոպոսակից» (Բուզ. Գ. Բ), և զՎրթանայ ասէ միայն. «Յաւուրս նորա (Խոսրովու) եկաց և եղև քահանայապետ յաթոռ հօրն, փոխանակ հօրն իւրոյ և եղբօրն իւրոյ երէց որդին Գրիգորի Վրթանէս» (Բուզ. Գ. Գ)։ Ագաթանգեղոս ասէ զԱրիստակեայ, թէ Լուսաւորիչ ձեռնադրեց զնա եպիսկոպոս փոխանակ իւր ի հրամանէն Տրդատայ.—Ապա աղաչեաց երանելի թագաւորն Տրդատ զսուրբն Գրիգորիոս, զի փոխանակ այնր զի ոչ հաւանեցաւ գալ և շրջել ընդ նմա և սիրեաց զմենաւորութեան կեանս՝ ձեռնադրեսցէ տացէ նմա եպիսկոպոս զսուրբ որդին իւր զոր ետ ածել ինքն, զԱրիստակէս. զոր ձեռնադրեաց յեպիսկոպոսութիւն փոխանակ իւր... և յետ նորա կալաւ զտեղի հայրենեացն, անդէն նստաւ յաթոռ կաթողի-

կոսութեան Հայոց» (Ագաթ. ՃԻԴ)։ Եթէ չգնաց Արիստակէս ի Կեսարիա՝ թերևս պատճառ՝այն էր, զի արդէն ձեռնադրեալ էր նա եպիսկոպոս հօրմէն, ուստի և չունէր պէտս երթալ ի Կեսարիա ձեռնադրութեան համար։ Իսկ զՎրթանայ ասէ Ագաթանգեղոս, թէ էր երէց. «Վրթանէս որ յաշխարհակեաց կեանս էր, որ այս և նա յաշտիճան պաշտաման եկաց յերիցութեան» (Ագ. ՃԻԳ), և թէ գնաց եպիսկոպոսութեան համար ի Կեսարիա, թէ և սա առ կենդանութեամբ հօրն ձեռնադրեալ էր եպիսկոպոս՝ չէ յայտ։ ԶՅուսկանէ, զորդւոյն և զյաջորդէն Վրթանայ ասէ Բուզանդ, թէ գըրկուեցաւ ի Կեսարիա յարքայէն Տիրանայ, և կը յաւելու՝ «ըստ սովորութեան օրինակին».—«Գումարեաց (թագաւորն Տիրան) ընդ նմա զմեծամեծ նախարարսն, ըստ սովորութեան օրինակին,... զի նըստուսցեն զերանելին Յուսիկ յարքունական կառսն, խաղասցեն գնասցեն ի սահմանակիցս իւրեանց ի մայր քաղաքացն Գամրաց ի Կեսարիա...։ Գնացին ի քաղաքն Կեսարացւոց, եառուն ի կաթողիկոսութիւն զՅուսիկն ձեռնադրել» (Բուզ. Գ. ԺԲ)։ Նոյնպէս կը պատմէ նոյն պատմագիր զՓառէնայ որ յաջորդեց Յուսկան. «Յայնմ ժամանակի արժանի համարեցան զՓառէն ումն երէց... և առաքեաց զնա թագաւորն պատարագօք և հրովարտակօք և ճոխ իշխանօքն... ի մայրաքաղաքն Գամրաց ի Կեսարիա, և անդ ձեռնադրեցին զնա ի կաթողիկոսութիւն Հայոց Մեծաց» (Գ. ԺԶ)։ Յետ նորա զյաջորդէն նորա զՇահակայ ասէ նոյնպէս. «Ապա միաբան խորհեցան աշխարհօրէն խորհուրդ, եթէ ում պարտ իցէ զհայրապետութեանն զկաթողիկոսութիւնն ունել. ապա հաւանեցուցին զՇահակ ումն անուն ի տոհմէ զաւակին Աղբիանոսի եպիսկոպոսին, և առնեն ընդ նմա տասն նախարարս, և յուղարկեցին զնա մեծամեծ պատուով յերկիրն Գամրաց ի մեծ քաղաքն Կեսարիա, և անդ ձեռնադրեն զՇահակն ի կաթողիկոսութիւն Հայոց Մեծաց» (Գ. ԺԷ)։ Նոյն Բուզանդ զՆերսիսէ ասէ. «Ապա գումարեցին զիշխանսն մեծամեծս, զի առցեն զցանկալին Ներսէս և գնասցեն ուր սովոր էին զհայրապետսն օծանել... զնոսա զամենեսին կազմեցին և արձակեցին բազում ընծայիւք և մեծամեծ պատարագօք և հաւատարիմ հրովարտակօք առ կաթողիկոսն Եւսեբիոս յերկիրն Գամրաց, ի մայր քաղաքացն նոցա ի Կեսարիա, զի ձեռնադրեսցեն անդ զսուրբն Ներսէս կաթողիկոսութիւն Հայոց Մեծաց» (Բուզ. Դ. Դ)։ Այնչափ մեծ համարուած էր առաքումն ի Կեսարիա ի կաթողիկոսութիւն, որ միշտ երևելի իշխանք կը ղրկուէին ի միասին, կամ ընդ գըլխաւորութեամբ մեծի ուրուք նախարարի։ Այսպէս Յուսկան հետ գացին երկոտասան նախարարք, որոց գլխաւորն էր «մեծ հազարա-

պետն», որ էր հաւանականապէս իշխանն Գնունեաց: Ընդ Փաւստոսի զրկուեցան «մեծ զօրավարն Հայոց Վասակ ի Մամիկոնեան տոհմէն, Անդովկ Սիւնի և Արշաւիր Կամսարական, որ էին արդարև, որպէս ասէ Բուզանդ՝ «մեծ և գլխաւոր նահապետք», հանդերձ այլ ևս տասն նախարարօք ի պատուականաց, որպէս ասէ: Զճահակ տարաւ Հայր իշխանն մարդպետութեան, այն է ներքինապետն Հայոց, հանդերձ իշխանաւ Գարդմանայ ձորոյն, որ յաւագաց կը համարուէր, հանդերձ ուրիշ տասն նախարարօք: Իսկ Ներսիսի հետ գնացողներն էին նոյնպէս «Հայր իշխանն մարդպետութեան և Բագարատ մեծ իշխանն ասպետութեան», հանդերձ այլ ևս վեց իշխանօք, որոց ամենքն էին երևելի, ինչպէս Ծոփաց, Ռշտունեաց, Սիւնեաց, Տիրակայ և Արշարունեաց, միւս Ծոփաց և Ամատունեաց իշխանք: Այսպէս մեծ էր պատիւ կաթողիկոսաց առ Հայս:

Յուսիկ որ այնպէս մեծ պատուով զրկուեցաւ ի Կեսարիա՝ նոյնչափ մեծ պատուով ընդունուեցաւ ի դարձին ի թագաւորէն. —«Ինքն արքայն, ասէ Բուզանդ, ընդ առաջ ելանէր նմա ի դաշտն յայնկոյս գետոյն Տափերն կամրջի (Արտաշատու) ամենայն բանակօքն բազմութեամբք. ապա ողջոյն տուեալք միմեանց, անցեալ ընդ կամուրջն Տափերայ, մտեալ ի քաղաքն մեծ յԱրտաշատ՝ յեկեղեցին դառնային և նստուցանէին զցանկալի մանուկն Յուսիկ յաթոռ հայրապետական» (Բուզ. Գ. ԺԲ):

16. Նկարագիր մանուկ կաթողիկոսին առ Բուզանդայ է արժանի յիշատակութեան. «Աւուրբք, ասէ, մանուկ, տիօք առոյգ և բարձր հասակաւ, գեղով երեսաց սքանչելի և չքնաղ, զի այլ ոչ գտանէր նման նմա. սուրբ և պայծառ հոգւով. ամենևին ոչինչ զբաղեալ ընդ աստիս, իբրև զքաջ սպառազէն Քրիստոսի, իբրև զախոյեան նահատակ... ակն առնուլ կամ աչառել մարդկան բնաւ ամենևին ոչ գիտէր, այլ զբան Հոգւոյն սրբոյ սուսեր ածեալ ընդ մէջ իւր կրէր:.. Այնչափ էր երկիւղած ի Տեառնէ, զի զսէր և զահ թագաւորին առ ոչինչ համարէր:... Հանապազ ընդդիմացեալ լինէր երանելի հայրապետն Յուսիկ... և այս մարտ պատերազմի էր սորա առ հասարակ ընդ ամենեսեան: Իբրև օր մի յաւուրց տարեկան դիմեաց գալ թագաւորն Տիրան հանդերձ այլովք աւագանուվն մտանել յեկեղեցին՝ նա ընդդէմ բարբառեալ ասէր. Չես արժանի, հէմ գաս, մի գար ի ներքս: Վասնորոյ անդէն ի ներքս քարշէին զնա յեկեղեցւոջն: Բրածեծ եղեալ ջախջախեալ քահանայապետն Աստուծոյ սուրբ երանելի մանուկն Յուսիկ կիսամահ կոշկոճեալ ընկեցեալ լինէր: Զոր բարձեալ պաշտօնէիցն դրան եկե-

ղեցւոյն ի Բնաբեղ բերդէն արքունի մեծ Ծոփաց գաւառին՝ եկին բերին ի գաւառն Գարանաղեաց ի գեւղն Թորդան, և անդ ոչինչ յետ բազում աւուրց հանգեաւ, և եդաւ մօտ առ Գրիգորի ընդ հարս իւր» (Բուզ. Անդ)։ Այսպէս, ըստ Բուզանդայ՝ առաքելական եռանդն մանուկ կաթողիկոսին եղաւ պատճառ մահուան նորա։ Այս չէ անհաւանական, սակայն կար ուրիշ պատճառ ոխութեան ի մէջ թագաւորին և Յուսկան։ Ի նմին Բուզանդայ գիտենք, թէ Տիրան յառաջ քան զթագաւորութիւնն կը սնուցանէր զՅուսիկ, որում և տուաւ իսկ զդուստր իւր կնութեան, որպէս յայտ է՝ յառաջ քան զկաթողիկոսութիւնն։ Յուսիկ, որոյ ախորժակին համաձայն չէր ամուսնական կեանք, և երեսս առնելոյ վասն յանձն առած էր ամուսնութիւնը՝ զղջացաւ, և յետ մի անգամ մերձենալոյ ի կինն՝ զատուեցաւ անկողնով, բարեպաշտ իմն եռանդով, որ մանաւանդ քրիստոնէութեան այն դարերուն մէջ՝ հրաժարիլ ի մերձաւորութենէ կանանց կու տար համարել առաւել աստուածահաճոյ քան կեալ յամուսնութեան։ Զիարդ և իցէ՝ այս պատճառաւ ծագած կը թուի գժտութիւն մեծ ի մէջ երկուց խնամեաց։ Եթէ զեռանդն Յուսկան համարինք ևս գովելի ըստ մտաց ժամանակին՝ ազգականաց հարսին և նորին իսկ, ի վեր քան զամենայն աղջկան հօր դժկամակութիւնը, որ հաւանական է թէ էր այս պատճառաւ՝ չենք կրնար գտնել անիրաւ։ Վերջապէս կը մեռնի կինն, թերևս առ վշտին և առ սրտցաւութեան, որ չէր անընական այն գրեթէ բռնի զրկման համար ամուսնական յարաբերութենէն։ Ահա բանք Բուզանդայ.—«ԶՅուսիկ սնուցանէր Տիրան որդի թագաւորին Խոսրովու, և ետ արքայորդին Տիրան զդուստր իւր կնութիւն Յուսկանն, որդւոյ Վրթանիսի։ Այլ լոյր նա և աղաչէր զԱստուած և ապաշխարէր մեծաւ տառապանօք, զի յամուսնանալն բռնադատեցաւ ի թագաւորէն իբրև զմանուկ։ Եւ յետ միոյ գիշերոյ ի կինն մերձենալոյ՝ այլ ոչ ևս մերձեցաւ ի նա։ Լաւ համարէր զծառայելն միայն Քրիստոսի. ոչինչ ածէր ընդ միտ զսէր թագաւորին կամ ի նմանէ կուսէ զպատուելն, կամ զմեծութիւն կամ զընտանութիւն փեսայութեան թագաւորին։ Բայց զի թշնամացեալ էր տունն թագաւորին ընդ նմա, և մինչդեռ վասն այնորիկ զգուէին զնա աներք նորա՝ մեռաւ կին նորա» (Բուզ. Գ. Ե)։ «Ազատացեալ լինէր Յուսիկ ի բանդերոյն», ասէ Բուզանդ, բայց ոչ նոյնպէս ի հեռևանաց որ բերաւ նմա այն աղետալի մահը։ Բուզանդ առ արդարացուցանել զՅուսիկ (որ թէպէտ բարեպաշտ, սակայն վարուած էր առանց խորհրդոյ իբրև պատանի խակ)՝ զհրաժարումն նորա յամուսնական պարտուց կ'ընծայէ

աստուածային իմն տեսլեան, որով որպէս թէ յայտնեցաւ նմա, թէ որդիքն երկուորեակք որ պիտի ծնանէին այն առաջին մերձաւորութենէն՝ լինելոց էին չար և անպիտան ի պաշտօն եկեղեցւոյ, և այս եղաւ պատճառ Յուսկան զղջանալոյ ամուսնանալէն. —«Յետ մի անգամ յառաջնում գիշերին մտանելոյ՝ յղացաւ կինն: Եւ իսկ և իսկ ետես (Յուսիկ) ի տեսլեան զի երկու էին մանկունքն, և ոչ հաճոյ ի պաշտօն Տեառն Աստուծոյ, և զղջացաւ զամուսնանալն... իբրև ոչ եթէ զամուսնութիւնն ինչ աղտեղի համարէր, այլ կասկածէր նա ի տեսլենէն զոր ետես, եթէ ընդէր բնաւ ի նմանէ այնպիսի զաւակ ծնանիցի» (Անգ): Բուզանդ որ հրաշալիս կուտել կը սիրէ, յետ պատմելոյ զայս տխուր տեսիլ՝ կը յաւելու պատմել միւս ևս երկրորդ, որ մխիթարական էր Յուսկան, քանզի հրեշտակ երևելով նմա աւետեց, թէ ուրիշ ազնուագոյն որդիք պիտի ծնանէին նորա զաւակէն.—«Եւ մինչ նա վասն այսորիկ հոգալով կայր յաղօթս առ Տէր՝ երևեցաւ նմա հրեշտակ Տեառն ի տեսլեանն և ասէ ցնա. Յուսիկ, որդի Գրիգորի, մի երկնչիր. զի լուաւ Տէր աղօթից քոց, և ահա ծնցի ի քո զաւակացդ այլ զաւակ. զի լիցին նոքա ի լուսաւորութիւն գիտութեան և աղբիւրք իմաստութեան Հայաստան աշխարհիս: Եւ ի նոցանէ բղխեսցեն շնորհք պատուիրանացն Աստուծոյ, և խաղաղութիւն բազում և շինութիւն և հաստատութիւն բազում եկեղեցեաց ի Տեառնէ նոցա տացի, բազում յաղթութեամբ և մեծաւ զօրութեամբ, և բազում մոլորեալք դարձցին ի ճանապարհս ճշմարտութեան, որով և Քրիստոս բազում լեզուօք փառաւորեսցի նոքօք: Որք սիւնք եկեղեցեաց լինիցին, և մատակարարք բանին կենաց, և հիմունք հաւատոց, պաշտօնեայք Քրիստոսի և արբանեակք Հոգւոյն սրբոյ, զի ուստի հիմն իցէ շինուածոյն՝ և կատարն անտի լինիցի: Եւ բազում տունկք պտղաբերք և շահեկանք և օգտակարք ի հոգևոր դրախտին ի նոցա մշակութեանն աջոյն տնկեսցին և ընկալցին զօրհնութիւն յԱստուծոյ: Իսկ որ ոչն կամիցին տնկել նոքօք և ի նոյն հոգևոր ցօղոյն գիտութենէ ըմպել՝ խոտան գտանիցին մերձեալք յանէծս. և վախճան նոցա լիցի այրումն հրոյն: Բազում անգամ վասն Տեառն լինիցին նոքա ի հեռ և ի նախանձ յանարժանացն. այլ կացցեն ի հաւատս անշարժ իբրև զվէմ, և յաղթեսցեն նոցա համբերութեամբ բազմաւ: Եւ յետ նոցա թագաւորեսցէ ստութիւն յապարասան, յանձնասէր, յարծաթասէր, ի մտախաբ, յանպատսպարան, յանպիտան, ի սուտակ և ի բանսարկու մարդկանէ. և ապա եթէ ոք գտցի որ արասցէ ունել զուխտ հաստատութեան հաւատոյ՝ հազիւ հազիւ» (Բուզ. Գ. Ե.): Հրեշտակին յոգնակի խօսելէն,

զգալակից և ոչ զգալակէ, կը տեսնուի թէ այս տեսլեան ստեղ-
ծումը թարգմանչէն է և ոչ ի Բուզանդայ, քանզի կ՚ակնարկէ ո՛չ
զՆերսէս և եթ, զոր միայն կարէր գիտել Բուզանդ, այլ և զՍա-
հակ, նա թերևս և զժամանակն Վարդանանց։

17. Յուսկան ծնան արդարև երկու որդիք, այսինքն երկուո-
րեակք, Պապ և Աթանագինէս, որք փոխանակ նուիրելոյ զանձինս
ի պաշտօն եկեղեցւոյ ըստ նմանութեան հօրն և հաւուն իւրեանց՝
յետ առնլոյ ձեռնադրութիւն սարկաւագութեան՝ հրաժարելով մը-
տան ի զինուորութիւն և առին թագաւորին քոյրերը։ Անուն կը-
նոջն Պապայ էր Վարազդուխտ որ մնաց անորդի, և Աթանագինեայ
կնոջ անունն էր Բամբիշն, որ եղաւ մայր մեծին Ներսեսի։ Եթէ
պարտ է հաւատալ Բուզանդայ՝ այնպէս չար էին Պապն և Աթա-
նագինէս, որ անգամ մը մինչ Աշտիշատու գիւղն էին, ուր էր
մայր եկեղեցին շինեալ ի սրբոյն Գրիգորէ (Ագաթ. ԾԺԵ), կ՚ուտէին
և կ՚ըմպէին մինչև արհամարհել և պղծել այն սուրբ տեղերն
անառակութեամբ՝ եղան կայծակնահար, կամ, բանիւ Բուզանդայ՝
զարնուեցան հրեշտակէ։ Բուզանդ ըստ իւրում զուարթ և միամիտ
ոճոյ՝ մանր կը յօրինէ այն դժբախտ ամուսնութեան պտուղներուն
վարքը և մահը.—«Եւ ծնաւ կինն (Յուսկան) երկուորիս, և կոչե-
ցին զանուն առաջնոյն՝ Պապ, և զերկրորդին՝ Աթանագինէս։...
Սոքա ճանաչէին ստահակք և անխրատք, որք ոչ հօրն իւրեանց
նմանեցին միտ եդեալ, և ոչ մեծին Գրիգորի յառաքինութիւնն
ուշ եդին,... այլ ժամանակի դարուն նմանեալ, ակամայ առեալ
զձեռնադրութիւն սարկաւագութեան՝ հարին զաւանդն հոգևոր,
առին ևս իւրեանց կանայս զքորս թագաւորին, և պանծացեալք
յիւրեանց յանցաւոր սնոտի ի մարմնաւոր տոհմականութիւն ազգա-
կանութեանն՝ զզինուորական զվարսն ընտրեցին։... Բայց անուանք
կանանց նոցա էին—անուն կնոջն Պապայ՝ Վարազդուխտ, նոքա
անզաւակ անորդի ելին յաշխարհէ. անուն կնոջն Աթանագենի՝
Բամբիշն. ի սոցանէ ծնաւ այր սքանչելի և զարմանալի Ներսէս,
որ առ յապայն եկաց քահանայապետ։ Այլ ինքեանք զամենայն
աւուրս կենաց իւրեանց ի մեծի յանդգնութեան էին։ Եւ էին նո-
քա (յաւուր միում) յերկրին Տարօնոյ յաւանին Աշտիշատ, ուր զա-
ռաջինն էր շինեալ եկեղեցին ի հաւուն նոցա Գրիգորէ։ Անդ ի բա-
զում հատեալ յարբշռութիւն՝ զԱստուծոյ տաճարաւն այլոյն առնէին.
մտանէին յեպիսկոպոսանոցն որ էր անդ, և ըմպէին անդ գինի
բոզօք և վարձակօք և գուսանօք և կատակօք, զուրբ և զնուի-
րեալ տեղեօքն քամահեալ։ Եւ մինչ էին յուրախութեան մեծի բազ-
մեալք՝ յանկարծակի հրեշտակ Տեառն երևեցաւ ի նմանութիւն

փայլատական, և հարեալ սատակէր զերկոսեան զեղբարսն միան-
գամայն ի բազմականի անդ։ Եւ այլ մարդիկն որ տաճարակիցք
էին, ուրախակիցք և բազմականակիցք՝ առհասարակ թողին և փա-
խեան։... Եւ Պապն և Աթանագինէս այսպէս սատակեցան, և
դրունք տաճարին ի բաց կային, և ոք հուպ չիշխէր երթալ, մին-
չև նեխեցան մարմինք նոցա և կողոպտեցան, և յաղկեցան քակե-
ցան լուծան ի միմեանց, ցրուեցան ոսկերք նոցա։ Եւ բազում ա-
միսք անցանէին ի վերայ իրացն, ապա իշխեցին մտանել ժողովել
բառնալ հանել անտի զոսկերս նոցա, և տանէին զնոսա լոկ ցա-
մաքեալ զկճղացեալ զոսկերս նոցա և թաղէին յայգւոջն եկեղեցւոյն
որում Ագարակն կոչեն» (Բուզ. Գ. Ե, ԺԷ, ԻԹ.)։ Որչափ և չափա-
զանց համարինք Բուզանդայ պատմութիւնն զՊապայ և զԱթանա-
գինեայ՝ այնչափ գոնէ ճշմարիտ է, թէ վարք և գործք այս երկու
ժառանգորդաց տան Լուսաւորչին չէին կրնար գոհացունել կղերը,
որ յետ փորձելոյ վերջին փորձը, տալով նոցա աստիճան սարկա-
ւագութեան՝ չհամարձակեցան տալ միում ի նոցանէ կաթողիկո-
սութեան մեծ պաշտօնը։ Եւ որովհետև բաց յերկուց անտի չկար
չափահաս ոք ի քահանայապետութիւն՝ ընտրեցաւ յաշակերտաց
անտի Լուսաւորչին ծերունին Դանիէլ, զորոյ զպատմութիւնն կը
համառօտէ Բուզանդ այսպէս.

18. «Ոչ այլ ոք ի նմին տանէ զաւակին Գրիգորի գոյր որ
զառաջնորդութիւն գլխաւորութեան քահանայապետութեանն յա-
ջորդէր։ Բայց դեռ ևս կենդանի էր ծերունի սուրբն, մեծ քորեպիս-
կոպոսն Դանիէլ, այր սքանչելի։ Աշակերտ եղեալ էր սա մեծին
Գրիգորի։ Էր ազգաւ ասորի և ունէր զաստիճան աթոռոյն գլխա-
ւորութեան Տարօնոյ». և կը թուէ կարգաւ նմա յանձնուած տեղե-
րը. «նախ, ասէ, մեծն և առաջին եկեղեցին ի մայր եկեղեցեացն
ամենայն Հայաստանեայց, (զոր ի գլուխն Գ. կ'անուանէ «Եկեղեցի
Աշտիշատու»), նոյնպէս և ի ներքոյ քան զնա մարգարէանոցն Յով-
հաննու, (զոր հօն Գլ. Գ. կը կոչէ «մարգարէարան մատուռն Յով-
հաննու»), նոյնպէս մօտ ի տուն Տեառն (յեկեղեցին)՝ հանգիստ
առաքելոյն», (զոր «Առաքելարան Տեառն աշակերտացն» կ'անուանէ
հօն)։ «Այս տեղիքս, ասէ, սմա (Դանիէլի) էին յանձն հանդերձ գա-
ւառօքն»։ Ըստ Բուզանդայ՝ Դանիէլ էր «վերակացու», այսինքն առաջ-
նորդ ոչ միայն այս ամենայն եկեղեցեաց Տարօնոյ, այլ և «տեսուչ
և հոգաբարձու (այցելու) ամենայն եկեղեցեացն Հայոց Մեծաց»։ Դա-
նիէլ ըստ նոյն պատմագրի կը վարէր անապատական կեանք, բայց
ժամանակ ժամանակ կ'իջնէր յայցելութիւն իւր եկեղեցիներուն.—
«Եւ բնակութիւն կայենից (նորա) յանմարդի լերինս էր. միահան-

գերձ, մաշկանափորտն, սանդաղաւոր, և կերակուր իւր արմատք
բանջարոց, և գաւազան անգամ ընդ ինքեան ոչ ունէր, այլ—կը
յաւելու—զտեսչութիւն մարդկան պիտոյից ոչ երբէք անփոյթ առ-
նէր, և կայեանք տեսչութեան նորա», այսինքն իւր պաշտօնական
տեղն, «յորժամ յանապատաց ի շէնս իջանէր վասն գործոյ Աստու-
ծոյ՝ ի գլխաւոր տեղիս եկեղեցեացն լինէր։ Եւ յաճախ յակն աղբերն
ի ներքոյ սարաբարձր մեհենատեղւոյն Հերակղեայ, որ կայ դէմ
յանդիման լերինն մեծի որում Ցուլն անուանեալ կարդան, ի բազ-
նին տեղւոջէ ի բացագոյն իբրև քարընկէց ի մի ներքոյ կուսէ, ի
գոյգն ծործորակին, ի սակաւ անտառակին, ի հացուտ պուրակին,
որում անուն տեղւոյն իսկ Հացեացն դրախտ կոչեն։ Այս այն ար-
բեւրն է, յորում առնէր յայնժամ ևս վաղ մեծն Գրիգոր զմկրտու-
թիւնսն զօրացն բազմաց (Ագաթ. ՃԺԶ. ՃԺԸ.)։ Յայնմ տեղւոջ էր
սորա կայեանք խցկան սրբոյն Դանիէլի. էր գարափոր արարեալ ի
բնակութիւն, և յայնմ տեղւոջ գդիտաւորութիւն (տեսչութիւն)
այցելութեանն կատարէր»։

Բուզանդ ըստ իւրում սովորութեան ինչպէս ամէն սուրբ ա-
նուանեալ անձն՝ նոյնպէս զԴանիէլ կը փութայ երեւցունել իբրև
մեծ սքանչելագործ։ Դանիէլ կօշկօք կ'երթար ջուրերու վրայ ան-
թաց. երբ կամէր ճանապարհորդել ի ձմերան՝ ձիւները կը հալէին
յանկարծ, և գետինը լինէր ցամաք. եթէ հեռու ուրեք երթալ
կամէր՝ յանկարծ կը գտնէր զանձն հոն՝ ուր դէմ եդեալ էր երթալ.
և ոչ այսչափ միայն. Դանիէլ կը բժշկէր հիւանդներ, կը յարու-
ցանէր մեռելներ և կը գործէր քան զսոսա աւելի մեծ նշաններ։
Կը հարցունենք սակայն, թէ քան զմեռեալս յարուցանել ինչ մեծ
նշան կայ, զորմէ լռութեամբ կ'անցնի Բուզանդ։ Ձիարդ և իցէ
տեսնենք բուն բանս Բուզանդայ. «Սա, ասէ, առնէր նշանս և զօ-
րութիւնս մեծամեծս յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։
Կօշկօք քայլելոյն գնայր ի վերայ ջուրց գետոց, և ոչ թանայլն
(ոտքն)։ Եւ յաւուրս ձմերայնոյն, յորժամ կուտեալ դիզեալ էր
բազմութիւն թանձրութեան ձեանցն ի վերայ ձմերային լերանց,
և նա յայնպիսի ժամանակի կամէր ուրեք երթալ ի պէտս՝ յան-
կարծօրէն ձիւնն ցամաք արջն լինէր առաջի նորա։ Եւ եթէ կա-
մէր ի հեռաստան ուրեք երթալ՝ իբրև զփայլակն սլացեալ լինէր
անաշխատ, իբրև թռուցեալ՝ յոր կամէրն երթալ ի տեղին՝ յան-
կարծօրէն անդ գտանէր։ Յարուցանէր զմեռեալս, առնէր և բը-
ժշկութիւնս հիւանդաց, և այլ և՛ս մեծ նշանս և զօրութիւնս
քան զնոյնս գործէր, զորս ոչ բաւեսցէ ոք ընդ գրով նշմարանաց փա-

կեր» (Բուզ. Գ. ԺԳ.)։ Այս Դանիէլ է որ կոչուեցաւ ի կաթողիկոսութիւն յետ Յուսկան։

19. Բուզանդ յառաջ քան պատմելն զկոչումն Դանիէլի ի կաթողիկոսութիւն՝ կը դնէ զթագաւորէն, զնախարարաց և զազգէն երկայն իմն մեղադրութիւն իբրև նկարագիր բարուց ժամանակին։ Մեր կորովի պատմագիրն համեմատելով երկու առաջին քրիստոնեայ թագաւորաց ժամանակն Տիրանայ թագաւորութեան ժամանակին հետ՝ չվարանիր կոչել այս վերջինն «անմիտ և անպիտան» (Գ. ԺԳ.), և այլուր (Դ. Բ.)՝ «խօլութեան ժամանակ»։ Եթէ չասէր ևս զայս Բուզանդ՝ չէր մեզ դժուարին իմանալ ի գործոց անտի Տիրանայ։ Այս դժբախտ թագաւորն չունէր ոչ հաւուն իւրոյ Տրդատայ ազդեցութիւնն ի սանձել, և ոչ հօր իւրոյ Խոսրովու հլութիւնն ի լինել օրինակ։ Յայս թերութիւն Տիրանայ կը նայի մեղադրութիւնն Բուզանդայ։ Յետ ասելոյ, թէ «Թագաւորն Տիրան և այլ մեծամեծ աւագանին նախարարացն և աշխարհն ամենայն ոչինչ ըստ Աստուծոյ կամացն վարս յանձն առեալ իմաստունս գընացեալ լինէին»՝ կը յաւելու. «Զի զթագաւորն իւրեանց օրինակ չարի արարեալ՝ նորին օրինակաւ ձևել սկսան և նոյնպէս գործել։ Ի հեռ և ի նախանձ ընդ միմեանս, չարակնութեամբ, թշնամութեամբ ոխութեան զմիմեանս խածատել, և նենգել այր զընկեր և զեղբայր։... Անդ էր տեսանել այր ընկերի արեամբ ծարաւեալ»։ Բուզանդ կը յաւելու ևս, թէ շատ ամօթալի գործերու պէս, նաև հին հեթանոսական պաշտամունք կը կատարուէին գաղտ.—«Եւ զդիցն հնութեան պաշտամունս, ի նմանութիւն պոռնկութեան գործոյն, ընդ խաւար կատարէին, և ոմանք զնոյն իսկ զցանկութիւն պոռնկութեան կատարէին յանձինս իւրեանց»։ Այս ամենայն յառաջ քան զմահն Յուսկան. իսկ յետ մահուն նորա, երբ անառաջնորդ մնացին՝ ևս աւելի.—«Մանաւանդ, ասէ, յորժամ զգլխաւոր առաջնորդն թոպամահ սպանին՝ այնուհետև ըստ կամաց գնային, քանզի ոչ ոք այն գոյր յորոյ խիթային յանդիմանութենէն, և որ նոցա արգել արկանէր գնալ յանօրէն ճանապարհն»։

Այն դարուն Հայոց համար, որ այն ինչ դարձած էին հեթանոսութենէ ի քրիստոնէութիւն՝ կայ կարևոր իմն կէտ ի դիտել։ Ժողովուրդ մը որ չունի բարձր դաստիարակութիւն և փիլիսոփայական հանճար կանոնել իւր առտնին և ընկերական կեանքը՝ պարտի ունենալ իւր կրօնական օրինագիրը (code)։ Քրիստոնեան պարտի ունենալ իւր Աստուածաշունչը, ինչպէս մահմետականն իւր Ղուրանը։ Առանց այսպիսի օրինագրի ժողովուրդ մը չկրնար օգուտ քաղել յիւր կրօնէն։ Բուզանդ շատ գեղեցիկ կը լուսաւորէ զայս. «Ի

վաղնջուց, տալ, յորմէ հետէ առին նոքա» (Հայք․ «նոքա» կը ցուց-
նէ թէ օտարազգի է պատմիչն) զանուն քրիստոնէութեանն՝ լոկ
միայն իբրև զկրօնս իմն մարդկութեան, և ոչ ջերմեռանդն ինչ
հաւատով ընկալան։ Ոչ եթէ որպէս պարտն էր գիտութեամբ յու-
սով կամ հաւատով, բայց միայն սակաւք որք զհանգամանս գի-
տէին հելլէն կամ ասորի դպրութեանց՝ էին հասու ինչ այնմ
փոքր ի շատէ․ իսկ որ արտաքոյ քան զգիտութիւն արուեստին էին
այն խառնաղանճ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն
և կամ շինականութիւնն, եթէ զցայգ և զցերեկ նստեալ վարդա-
պետացն և ըստ նմանութեան ամպոյն իբրև զյորդահեղեղ ինչ
անձրևաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին՝ ոչ
ոք ի նոցանէն ոչ մի բան և ոչ կէս բանի, և ոչ դոյզն յիշատակ
ինչ և ոչ նշմարանս ինչ զոր լսէինն՝ կարէին առնուլ ի միտ»։
Կայ թերևս աւելաբանութիւն ի բանս Բուզանդայ, չէ սակայն
օտար ի ճշմարտութենէ․ դիտելու արժանի է մանաւանդ, որ Բու-
զանդ ժողովրդեան անընդելութիւնն քրիստոնէական վարդապետու-
թեանց՝ կ'ընծայէ տգիտութեան նոցա յոյն և ասորի դպրութեանց,
քանզի այն լեզուաց հմուտք միայն կրնային ընթեռնուլ եկեղե-
ցական գրեան, մանաւանդ հին և նոր կտակարաններն, զորս չու-
նէին տակաւին Հայք իւրեանց լեզուաւ առ ի չգոյէ հայերէն
դպրութեան, և այս պակասութիւնն արդարև եղաւ պատճառ,
որ իբր կէս դար յետոյ առաքելաշնորհքն Սահակ և Մեսրոպ այն-
չափ փոյթ տարին լնուլ այս մեծ թերին հայ ժողովրդեան։ Կո-
րիւն ազգին գիտութիւնը քրիստոնէական վարդապետութեանց յա-
ռաջ քան զթարգմանութիւնն Ս. Գրոց կ'ակնարկէ ի պատմութեան
գիւտի նշանագրաց և թարգմանութեան գրոյն յասելն, թէ «Երկիր
որ համբաւուցն անգամ օտար էր (յառաջ քան զթարգմանութիւն
Գրոյն) կողմանցն այնոցիկ, յորում ամենայն աստուածագործ սքան-
չելագործութիւնքն (պատմեալք ի Ս. Գիրս) գործեցան՝ (յետ թարգ-
մանութեան Գրոյն) առ ժամայն վաղվաղակի ամենայն իրացն եղե-
լոց խելամուտ լինէր... և ամենայն աստուածատուր աւանդու-
թեանցն»։

Հայք յետ դարձին իւրեանց չունենալով քրիստոնէական կ-
րօնից վերաբերեալ գրեան՝ հարկաւ կը սիրէին և կ'ուսանէին իւ-
րեանց վիպասանական երգերն. ուստի ըստ մեզ անիրաւ է մեղա-
դրութիւնն Բուզանդայ —«Դեգերեալ մաշէին յանուղղայ կրթու-
թիւն,.. զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրե-
ցեալք և նմին հաւատացեալք և ի նոյն հանապազորդեալք»։ Չիք
տարակոյս, թէ հեռացնելու համար զժողովուրդն այն հին հեթա-

նոսական յիշատակներէ՝ քրիստոնէական նախանձն ամէն ջան ի գործ դրաւ, յառաջ և յետոյ քան զգիւտն գրութեան, խափանել հին ազգային երգերն որ հեթանոսական ժամանակի ծնունդ էին, տալով ազգին քրիստոնէական առատ գրութիւն, այնպէս որ հին վիպասանութենէն հազիւ մնացին գոյզն նշխարք, զորս Խորենացին կ'աւանդէ, և այն՝ առասպել անուամբ։

20. Գանք այժմ ի պատմութիւն Դանիելի։ Դանիէլ ըստ խորհրդոյ մեծամեծաց կը բերուի առաջի Թագաւորին, առ որում ժողովեալ էին նախարարք, և կ'սկսի երկայն յանդիմանութիւն մի, ուր յետ յուշ առնելոյ նոցա Աստուծոյ մեծ շնորհն, որով հրաւիրեց զնոսա ի լոյս ճշմարտութեան, և նոքա մոռանալով զնա դարձան կռապաշտ նախնեաց մոլութիւններուն՝ կը յարէ համառօտ պատմական ակնարկութիւն մի, ուր լռելեայն կը յիշուին Թադէոս, Լուսաւորիչն, Հռիփսիմեանք և յաջորդք Լուսաւորչին, յորոց զոմանս սպանած էին, զայլս չարչարած, և փոխանակ անսալոյ խըրատուց և վարդապետաց իւրեանց և պատուելոյ զնոսա՝ անարգեցին, և ի լրումն չարութեան իւրեանց սպանին չարաչար զմանուկ հայրապետն իւրեանց զՅուսիկ։ Ի վախճանի կ'իմացունէ, թէ չէր կարող ընդունել ազգին հրաւէրն ի կաթողիկոսութիւն՝ եթէ չըդառնային բոլոր սրտիւ առ Աստուած։ Այն ինչ բանքն ի բերան էին ծերունի եպիսկոպոսին՝ հրաման ելաւ Թագաւորէն՝ անդէն ի տեղւոջն խեղդամահ առնել զնա, և իսկոյն կատարեցաւ հրամանն, թէպէտ շատ ջանացին, ասէ Բուզանդ, նախարարքն՝ յետս կացուցանել զԹագաւորն անզգամ խորհուրդէն.—«Այս ժողովեալ մեծամեծք նախարարացն... հաւանեցուցանէին զԹագաւորն ածել զծերունին Դանիէլ, զի կացուսցեն զնա իւրեանց գլուխ առաջնորդ։ Եւ յղեցին առ նա զՈմն, իշխան՝ Սահառունեաց տոհմին և զԱրտաւան զիշխանն Վանանդայ և զԿարէն իշխանն Ամատունեաց տոհմին և զՎարազ իշխանն Դիմաքսենից տոհմին։ Եւ եկին նախարարքն հասին գտին զնա յԵկեղեաց գաւառին, ի գեւղն եկեղեցւոյն ի Թիլն, զի դեռ իւրն զգործ մշակութեանն Աստուծոյ գործէր։ Եւ առին զնա և ածին առ Թագաւորն Տիրան ի գաւառն Աղձնեաց, ի Բառաէջ աւան։ Եւ իբրև մտանէր առաջի Թագաւորին Տիրանայ քորեպիսկոպոսն մեծն Դանիէլ՝ անդէն ի ձեռն առնոյր զկշտամբութիւն յանդիմանութեանն։ Ընդէր մոռացարուք դուք, ասէ, զԱստուած զարարիչն ձեր, և զգութ նշանացն և խըրատուց և զսքանչելեաց զոր արար առ հարսն ձեր և առ ձեզ, և դարձայք ի մոլորութիւն կռապաշտութեան նախնեացն ձերոց, ի յափշտակութիւնս և յագահութիւնս և ի զրկութիւնս և յաղքա-

տակերութիւնս, ի պոռնկութիւնս, ի նենգութիւնս և ի միմեանս-
գրկութիւնս և ի սպանութիւնս: Կործանեցայք լքայք կասեցէք
կողացայք յարդարութեան ճանապարհաց: Մինչ դուք զձեր ան-
ձինս անգիտս թրարեալ էիք ի կորստեանն՝ նա եկն ի խնդրել
զձեզ. դուք փոխանակ երախտեացն ապախտս հատուցէք. նախ
զձեր զքարոզն և զհրաւիրակն զառաքեալ առ ձեզ (զԹադէոս) սպա-
նէք, և զհետ նորա զնորին նմանին (զԳրիգոր) չարչարեցէք. զկնի
սորին եկին բազմութիւնք սրբոց վկայիցն Աստուծոյ (Հռիփսի-
մեանք).. սակայն և առ նոսա լցէք զավորութիւն սպանութեանց
ամբարշտութեան կամացն ձերոց:.. Եւ յետ այսորիկ ետ ձեզ վար-
դապետս զսիրելիս իւր.. որք ուսուցիչքն էին ձեր, որք հանապազ
տքնէին վասն փրկութեան ոգւոց ձերոց, և արժան էր ձեզ ունել
զսէթ ընդ նոսա. դուք զորդիս և զժառանգս և զգործակիցս և
զնմանողս նոցին սպանէք. զսուրբ մանուկն Յուսիկ զհայրապետն
զաթոռակալն զվիճակակալն վիճակին Թադէոսի առաքելոյն և զնո-
րին նմանոյն Գրիգորի:... Արդ զի կոչեցէք զիս ելանել գալ առ
ձեզ, զայս ամենայն կամէիք լսել դուք յինէն: Յղեցէք առ իս
թէ եկ կաց մեզ գլուխ և առաջնորդ: Զիա՞րդ լինիցիմ գլուխ և
առաջնորդ այնոցիկ, որք ոչ դառնայցեն զկնի Տեառն, կամ զիա՞րդ
բառնայցեմ զձեռս իմ աղօթիւք առ Աստուած վասն այնոցիկ, որոց
ձեռք շաղախեալ են արեամբ սրբոց Տեառն: Զայս բանս խօսեցա-
սուրբ ծերունին Դանիէլ քորեպիսկոպոսն առաջի թագաւորին Տի-
րանայ և առաջի իշխանացն, պետացն և ամենայն զօրաց: Եւ մինչ-
դեռ խօսէր նա զայս ամենայն՝ հիացեալ զարմացեալ թագաւորն
միտ դնելով լսէր և եթ կայր: Եւ եղև իբրև զայս ամենայն լսա-
բորբոքեալ ի բռնաւորութիւն դառնութեան ամբարշտութեան ցաս-
ման իւրոյ՝ տայր հրաման անդէն խեղդամահ առնել զնա: Զա-
լսեալ սպասաւորացն կատարեցին զգործ հրամանին վաղվաղակի
Բայց մեծամեծ նախարարացն աւագանին շատ եդին ի մտի ա-
քայլն, զի մի կատարեսցէ զչարութիւն կամացն իւրոց. նա ա-
դառնութեան սրտին ցասման, առ զայրուցս բարկութեանն ոչին-
անսաց նոցա, այլ ճոպան ի փողս եդեալ խեղդամահ արարին զնա
Այսպէս կատարեցաւ սուրբն Դանիէլ» (Բուզ. Գ. ԺԴ.):

21. Դանիէլի յանդիմանութեան մէջ զոր բերինք համառօ-
տիւ, կայ մաս մը, որ գոգցես գուշակութիւն է ազգին ապագա-
պատմութեան.—«Վասն այսչափ ստութեանց ձերոց և պղծու-
թեանց, ասէր Դանիէլ, բարձցէ Տէր զթագաւորութիւնդ ձեր ի
ձէնջ. ցրուեսջիք և բաժանեսջիք, և ցրուեսցին սահմանք ձեր ո-
պէս և Իսրայէլ, և անտերունչք և անխնայ և անխնամք լիջիք,

լիջիք դուք իբրև զխաշինս՝ զի ոչ գուցէ նոցա հովիւ։ Մատնեսջիք իբրև զհօտ ի ձեռս գազանաց, և անկջիք ի փառաց ձերոց, և ի ձեռս օտար թշնամեաց մատնեսջիք դուք ի գերութիւն և ի լուծ ծառայութեան, և ոչ բարձցի երբէք կամ պակասեսցէ լուծ չար ստրկութեան ծառայութեանն ի պարանոցաց ձերոց. Հաշեսջիք և մաշեսջիք ի ցանկութիւնս ձեր։ Որպէս պատառեցաւ Իսրայէլ, և ոչ կարկատեցաւ՝ սոյնպէս և դուք ցրուեսջիք և կործանեսջիք, և այլք վայելեսցեն ի վաստակս ձեր, և այլք կերիցեն զգօրութիւնս ձեր, և ոչ ոք գտանիցի որ փրկեսցէ զձեզ, և ոչ հաճեսցի ընդ ձեզ Տէր, և ոչ նայեսցի և ոչ փրկեսցէ այլ զձեզ»։ Յանդիմանելն Դանիէլի զՏիրան և սպանումն այն պատճառաւ՝ է արդարև ճըշմարիտ, այլ թէ յանդիմանութիւնն, զոր կը դնէ Բուզանդ, մանաւանդ մարգարէութիւնն, են բան առ բան Դանիէլի՝ չէ ամենևին հաւանական։ Չիք տարակոյս սակայն, թէ զարմանալի հանդիպումն կայ ի մէջ այն մարգարէութեան և ճակատագրի ազգին։ Եւ որովհետև այն իբր մարգարէութեան գլխաւոր կէտերն, ինչպէս բարձումն թագաւորութեան, բաժանումն երկրին, գէթ ըստ մասին ցրուումն ազգին և մատնելն ի ծառայութիւն, եղան առ Յազկերտիւ Ա. (400—421), և առ Վռամաւ Ե. (421—442)՝ թարգմանիչն Բուզանդայ, որ էր մին ի թարգմանչաց, ականատես վկայ ժամանակին, տալով պատմութեան մարգարէական ձև՝ դրաւ զայն ի բերան Դանիէլի։ Այս է բնական և բանաւորագոյն մեկնութիւն այս երկրորդ Դանիէլեան մարգարէութեան։ Այսպիսի յանդիմանութիւն մի հանդերձ իբր մարգարէութեամբ ունինք ի Խորենացւոյն ի վերջին գլուխ Բ. դպրութեան, յետ պատմութեան մահուն Տըրդատայ։

22. Բուզանդ կը յիշէ ուրիշ տխուր դէպ, որ ուծացոյց ի Տիրանայ զնախարարս, մանաւանդ զՄամիկոնեանս, որ էին թև և թիկունք տէրութեանն։ Ի հնումն ոչ միայն արևելեան, այլև արևմտեան արքունեաց մէջ ներքինիք, որ մեծ ազդեցութիւն ունէին առ թագաւորին իբրև մարդպետք, այսինքն վերակացուք կանանոցին՝ շատ անգամ կու տային գործել թագաւորաց, մանաւանդ տկարագունից, յորոց մին կը թուի թէ էր Տիրան՝ մեծամեծ անիրաւութիւններ։ Ամմիանոս ի գովելն զԵւթեր ներքինի Կոստանդայ, զայր լաւ և իմաստուն՝ ասէ. «Գովեստ զառնէ ներքինւոյ կասկածելի է ի բերան ուրուք, թէպէտ Սոկրատ ումն իցէ կամ Նումա Պոմպիլիոս որ գովէն, ես և յետ երդման՝ թէ ոչ այլ ինչ խօսելոց է՝ եթէ ոչ զճշմարտութիւն» (Ամմ.)։ Իբրև զաւորական ներքինիս և ոչ իբրև զԵւթեր էր ըստ Բուզանդայ՝ Տիրանայ ներ-

քինապետն, որ հասարակ անուամբ այն պաշտօնին մարդոյ՝ կը
կոչուէր Հայր, և քսութեամբ եղաւ պատճառ նախարարաց շատե-
րուն կորստեան, յանուանէ Ռշտունեաց և Արծրունեաց, զորս ազ-
գովին տուաւ ջնջել.—«Յայնմ յանմիտ թագաւորութեանն ժամա-
նակի—են բանք Բուզանդայ—ոչ միայն թշնամիք թշնամեաց, այլև
բարեկամք բարեկամաց և ընկերք ընկերաց դաւաճանութիւնս
սկսան յարուցանել ի մէջ Հայաստան երկրին։ Բայց քան զամենե-
սին աւելի այր մի անօրէն և այսամոլ, որ աւելի ընդ ազգս նա-
խարարացն գրգռէր զթագաւորն Տիրան։ Այս ինքն որ ունէր զպա-
տիւն մեծի մարդպետութեանն, այր ներքինի, չարասիրտ, չարա-
խորհուրդ, չարագործ, որում Հայր կոչէին։ Զբազումս ի նախա-
րարացն ետ քսութեամբ առանց վնասու կոտորել և խանգարեաց
զմեծ տէրութիւն թագաւորութեանն։ Մանաւանդ աւելի զերկու
տոհմն զաւագս տայր իւրով չարախօսութեամբն հանել ընդ սուր,
և անունդ (անզաւակ) առնել միահաղոյն, զտոհմն Ռշտունեաց և
զտոհմն Արծրունեաց. բառնային ի միջոյ առանց ամենայն վնասու
և յանցման, մինչ անգամ և զէգսն կոտորեցին ազգացն։ Յայնմ
ժամանակի ի գայթակղի՝ գտանէին ի գայեակս մանկունս փախս-
տեայս, զՏաճատ որդի Մեհնդակայ Ռշտունւոյ, և միւս ևս Շա-
ւասպ որդի Վաչէի Արծրունւոյ, զորս ածին առաջի թագաւորին։
Իբրև տեսանէր՝ տայր հրաման հանել փողոտել զմանկունսն, զի
նոքա ևեթ ճետք մնացեալք էին յազգացն։ Եւ անդ դիպեալ Ար-
տաւազդ և Վասակ, որք ի Մամիկոնեան տոհմէն, որք յարա-
ցեալք անկան ի վերայ մանկանցն տղայոց, մէն մի յանթի հա-
րեալք ի դուրս գնացին. զէն ի վեր առեալք կռուոյ պատրա-
տէին ի վերայ այնց մանկանց մեռանել։ Զի թէպէտև սնուցանէին
նոքա զորդին զարքային զԱրշակ՝ սակայն զչարեալք ընդ գործ
ժամանակին՝ թողին զսանն իւրեանց զԱրշակ և գնացին ի բաց ի
բանակէն արքունի։ Եւ չոքան յաշխարհն իւրեանց յամուրս Տայոց
և անդ նստան ամս բազումս ընտանեօք իւրեանց, և թողին զգա-
ւառն (կալուածս) իւրեանց։ Եւ սնուցանէին զայն մանկունսն
զՇաւասպն և զՏաճատ, և ետուն նոցա զդստերս իւրեանց ի կնու-
թեան, ուստի դարձեալ միւսանգամ ազգն այն սերեցան, և ա-
խառնէին նոքա ի խորհուրդս Հայոց մինչև ի բազում ամս» (Բուզ.
Գ. ԺԲ.)։ Թէ այսպէս թողուլ գնալն նախարարաց, մանաւանդ
Մամիկոնեանց, ինչ մեծ աղետից պատճառ եղաւ Տիրանայ՝ պիտի
տեսնենք յետոյ։

23. Մինչև ցարդ խօսեցանք Տիրանայ ներքին գործոց վրայ.
Գանք այժմ արտաքին քաղաքականութեան նորա։ «Բարեկամու-

թիւն էր, ասէ Բուզանդ, ի մէջ թագաւորին Հայոց և Պարսից»։ Այս արդարև կարի հաւանական է, նայելով արտաքին պատմութեան այնր ժամանակի։ Տիրան կը թագաւորէր այնպիսի ժամանակ (343—353), երբ կուսակալք Հռոմայեցւոց յարևելս յանպիտանութիւնս հասեալ՝ երկիրը կեղեքելու և զիրար կործանելու միայն ունէին ուշ (Ամմ.), մինչ Շապուհ, թէպէտև զբաղեալ պատերազմներով, ինչպէս յիշեցինք, արևելեան բարբարոսներու դէմ՝ չէր դադրած դիտելէ Հռոմայեցւոց շարժումներն ի ձեռն զօրավարաց իւրոց. գրեթէ անդադար մարտ էր ի մէջ երկու ոսոխ տէրութեանց։ Պաշարումն Մծբնայ կրկնեցաւ և երեքկնեցաւ, այն է 347-ին և 350-ին։ Քաղաքն ազատեցաւ անտարակոյս տեղւոյն ամրութեան և բնակչաց քաջութեան պատճառաւ, թէպէտ Գաթըրճեան կը համարի եղած «քաջալերութեամբ և աղօթիւք սրբոյ եպիսկոպոսին իւրեանց Յակոբու», և կը կարծէ ևս, առնլով Թէոդորետոսէ եկեղեցական պատմչէ Դ. դարու՝ թէ «Շապուհ զարհուրեալ ազգի ազգի տեսլենէ՝ մեկնեցաւ յետս»։ Իրաց այս վիճակին մէջ չէ անհաւանական, թէ Շապուհ ընտրեց շահել զՏիրան, ցուցնելով նմա բարեկամութիւն, մինչև ըստ աւանդութեան իւիք, ազատել զնա հիւսիսական ազգաց յարձակմանէն (Խոր. Գ. ԺԲ.)։ Տիրան ևս տեսնելով Հռոմայեցւոց ապիկարութիւնը՝ հաւանական է թէ լաւ համարեցաւ մօտենալ ի Պարսիկս։ Վարազ Շապուհ անուն ոմն կը նստէր յայնժամ յԱտրպատականի իբրև սահմանապահ Շապհոյ կողմանէ—թերևս էր սա Դենշապուհն Ամմիանոսի,— և ինչպէս կ'երևի՝ պատգամագնացութիւնք ի ձեռն սորա լինէին ընդ Տիրան և ընդ Շապուհ։ Յայս բարեկամութիւն Շապհոյ թերևս յուսացեալ Տիրանայ՝ նշկահեց նախարարաց, սակայն խաբուեցաւ նենգաւոր Պարսկէն, որ պատճառանս կը խնդրէր նուաճել զՀայս. և այս եղաւ գոյզն ինչ պատճառաւ, «վասն կաշւոյ միոյ», որպէս ասէ Բուզանդ, ոչ առանց քսութեան թշնամեաց Տիրանայ։ Տիրան կը ղրկէ դեսպանութեամբ առ այն Վարազ զիւր սենեկապետն զՓիսակ Սիւնի. և որովհետև Տիրան ունէր ձի մի աննման և՛ գունով, և՛ հասակաւ, և՛ արութեամբ՝ Փիսակ առաւել հաճոյ երևելու համար Վարազայ՝ կը խրատէ զնա խնդրել զձին ի Տիրանայ հանդերձ թղթով, ուր ի մէջ այլոց կար յիշատակութիւն ձիոյն, զոր կը խնդրէր Վարազ ընծայ։ Տիրան որ չկամէր հանել յիւրմէ զձին՝ ուրիշ ձի գտնելով նմին նման գունով այլ ոչ մեծութեամբ՝ կը ղրկէ առ Վարազ ի ձեռն Փիսակայ։ Փիսակ ոչ միայն կը հանէ ի վեր գաղտնութիւնը, այլ և կը յաւելու ամբաստանութիւն զՏիրանայ, որպէս թէ Տիրան ունէր ի մտի օգնութեամբ կայսեր հանել

Պարսից թագաւորութիւնն ի Սասանեանց և դարձուցանել այսրէն յիւր ցեղն Պահլաւեան։ Այս ամբաստանութիւն կ'երթայ յականջս Շապհոյ, որ համարելով զՏիրան մէտ ի Հռոմայեցիս՝ կը հրամայէ Վարազայ դաւով բռնել զՏիրան։ Վարազ ծածկելով իւր ոխը վասն ձիոյն՝ կը պատճառէ անձուկ սիրոյ՝ անձամբ տեսանելոյ զՏիրան, որ կ'ընդունի առաջարկութիւնը։ Ի պատիւ Վարազայ Տիրան կուտայ պատրաստել որսոյ տեղիս զբօսանս հիւրոյն, բայց զգուշանալով տալ առիթ նախանձու նենգաւոր Պարսկին, և խորհելով իւր սպասաւորներուն հետ՝ կ'ընտրէ երկրորդական տեղ որսոյ յերկրին Ապահունեաց ի հիւսիսոյ Բզնունեաց ծովուն։ Եւ որովհետև, որպէս ասէ Բուզանդ, առ Տիրանայ չկային բազական զօրք, և նախարարք հեռացած էին արդէն՝ Վարազ որ երեք հազարաւ եկած էր՝ ժամ պատեհ համարեցաւ տալ ձերբակալել զանօգնականն Տիրան ի հացի, և կուրացուցանելով զնա տարաւ ընտանեօք առ Շապուհ (353)։ Առնլով այս ձախողութեան գոյժն՝ արթնցան նախարարք և եղան հետամուտ Վարազայ, բայց անօգուտ։ Թէ ինչ եղաւ յետոյ՝ պիտի տեսնենք զկնի։ Սակայն հետաքրքրական է լսել վերոյիշեալ պատմութիւնը բուն իսկ ի Բուզանդայ.—«Մինչ դեռևս յոյժ խաղաղութիւն էր ի մէջ թագաւորացն երկոցունց՝ անկաւ ի Տեառնէ խռովութիւն ոչինչ բանիւք, արամբ միով անարգաւ, որ ոչինչ պակաս քան զգև էր մոլութեամբ, որոյ անուն Փիսակ կոչէր, որ սենեկապետն էր արքային Տիրանայ, ազգաւ Սիւնի։ Սա դեսպանագնացեալ էր առ Վարազ Շապուհ, զոր թողեալն էր սահմանապահ արքային Պարսից յԱտրպատական աշխարհին։ Զայնու ժամանակաւ ձի մի էր երիվար արքային Տիրանայ, զորմէ կարի զարմանային։ Եւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն. սա լի էր քաջութեամբ, անուանի և հոյակապ, մեծ և բարձր, երկայն քան զամենայն ձիս, և տեսանելով քան զայլս գեղեցիկ, զանազան՝ որ համեմատ նմա այլ ոչ գտանէր։ Զորմէ յերթալն իւրում ի դեսպանութիւն սենեկապետն արքային Փիսակ մատնեաց զձին Վարազայ, վասն զի բարեկամացեալ էր ընդ նմա, և ի նմանէն ինքն թուղթ առեալ, բերեալ մատուցանէր արքային Հայոց, որ չհաւանեալ՝ տալ ոչ առնոյր յանձն։ Այլ վասն զի կասկածէր յառնէն, զի գուցէ խռովութիւն ինչ ի մէջ թագաւորացն երկոցունց արասցէ՝ ի խնդիր անկանէր գտանել զնոյն գոյն ձի, զնոյն նշան, զնոյն պատկեր, բայց ի մեծութենէ, զի այնչափ մեծ ուրեք ոչ գտանէր։ Արդ՝ զնոյն նման, զնոյն կերպարանս ճարտուկ ճանճկէն գտեալ՝ հանդերձ հրովարտակօք և պատարագօք ի ձեռն մոլեկան Փիսակայն առ իշխանն յԱտրպատական առ Վարազն արձակէր. և միտս դնելով խոր-

հուրդ տայր. Ասացես, ասէ, եթէ այս ինքն է զոր խնդրեցերն,
զի առ սէր քո ոչ խնայեաց ի քէն: Իսկ նա հասեալ առ Վարազն՝
յայտ առնէր զիրս խնայութեանն ասելով, եթէ Այնչափ ի հեռ և
ի նախանձ, ի չարակնութեան և ի թշնամութեան, յատելութեան
և ի չկամութեան, յերկմտութեան և յաներկիւղութեան է առ թա-
գաւորն և առ ամենայն զօրսն Պարսից արքայն Հայոց Տիրան՝ մինչ
անգամ վասն կաշոյ միոյ խնայ արարեալ՝ թագոյց, և զքեզ ծաղր
արարեալ, առ զմիտս քո գողանալ՝ զայս այլ ընդ այլոյ յիմ ձեռն
առ քեզ առաքեաց: Եւ ոչ այդ միայն է, ասէ, այլ ի կայսր և ի
զօրս նորա յուսացեալ խորհի հանել զթագաւորութիւնն Պարսից
յազգէն Սասանայ, զի ասէ, թէ մեր լեալ է և հարցն մերոց այն
տէրութիւնն: Արդ ասէ, թէ չեմ ծուլալոց մինչև դարձցի պատիւ
հարցն նախնեաց, և զնախնի թագաւորութիւնն այսրէն առ որդի
և առ զաւակ նոցա յազգս իմ և ի տունս իմ և յանձն դարձուցա-
նեմ: Եւ այսչափ և այսպիսի բանիւք գրգռէր զնա Փիսակն անօրէն
ի վերայ տեառն իւրոյ բնակի, և նիւթէր զմահ ի վերայ իւրոյ
թագաւորին: Ապա իբրև զայս ամենայն լուաւ Վարազ Շապուհ
Ատրպատական մարզպանն ի կատաղախօս, ի շնաբերանն Փիսակայ՝
փաղփաղակի նամակ ամբաստանութեան գրեալ Վարազայ զարքայէն
Հայոց՝ մատուցանէր արքայէն Պարսից: Եւ այնչափ զայրացոյց գըր-
գռեաց յուզեաց գրգեաց սրտմտեցոյց բարկացոյց զթագաւորն Պար-
սից ի վերայ արքային Հայոց՝ զի ապա առ հրաման ի նմանէ, զի
եթէ է հնար, գտանել մարթասցէ ճանապարհս՝ մեքենայիւք դայ-
թակղութիւնս դնել, որպէս ըմբռնել զարքայն Հայոց: Ապա արձա-
կէր Վարազ դեսպան առ արքայն Հայոց գալով խօսել ընդ նմա,
զանձուկ սիրոյ պատճառեալ՝ համարձակութիւն խնդրէր գալ նմա
առ նա: Իսկ իբրև լուաւ զայն Տիրան արքայն Հայոց՝ փութապէս
փաղփաղակի մեծաւ ուրախութեամբ առ ինքն կոչել հրամայէր: Եւ
մինչչև նա եկեալ էր, խորհէր արքայն ընդ իւր ծառայսն ներքի-
նիսն սպասաւորսն իւրոյ սենեկին, ասէ. Արժան է մեզ զայր որ
գայ առ մեզ՝ զբօսուցանել և ուրախ առնել որսովք և բազմակա-
նօք և ամենայն պէսպէս վայելչութեամբք: Այլ ոչ այնչափ ինչ
արժան է զմեծ ինչ որսոյ տեղիս ի մերում երկրի ասա նմա տե-
սանել, վասն չարակնութեան յաչաղանաց չարաբարութեան նեն-
գութեանն ազգին Պարսկաց. նմա ցուցէք տեղիս գոյգնագիւտ որ-
սոց ինչ, որով լոկ զբօսուսցուք զնա և մի ցուցցուք զառատ ինչ
որսոց տեղիս, և մի մեծ ինչ նախճիրս որսոց կոտորեսցուք առ ի
ցոյցս առնելոյ, այլ փոքկպարագի արասցուք վասն չարութեան դառ-

նացող ազգին. յերկրին Ապահունեաց, յոտին մեծի լերինն Մասեաց
զայն տեղին ցուցցուք որում անուն կոչի Աղխորոք:

Ապա եկն եհաս Շապուհ Վարազն երիւք հազարօքն և յան
դիման եղև թագաւորին յերկրին Ապահունեաց և մեծապէս մեծա
բեցաւ ի նմանէ: Եւ այն բանքն որ վասն որոյն ի թագաւորէն
ասացան՝ վաղվաղակի յունկն զօրավարին Պարսից հասանէին ի բե
րանոյ շրթին շոգմոգն տիրանենգն և տիրադրուժն, տիրասպանուն
տիրամատնիչն Փիսակայ, յաշխարհակործոյս յառնէ անօրի: Աւուր
սակաւս ուրախ լինէին ի միասին. այլ իշխանն Պարսից զթշնամու
թիւնն զոր ունէր ի ներքոյ՝ խորամանգեալ ծածկեալ մեքենայեալ
առագաստեալ բերէր, և առնէր սպաս զգաւն կատարել: Եւ ի ժա
մանակին յայնմիկ այնպէս դիպեցաւ, զի զօրավարքն (Մամիկոնեանք
չէին անդ, այլ սարտուցեալ էին, և այլ մեծամեծք նախարարացն
և աւագ տանուտէրք ազատանին, սոյնպէս և զօրքն յիւրաքան
չիւր կայեանս, յիւրաքանչիւր դադարս դադարեալ էին, և ոչ ոք
էր որ մնացեալ էր առ թագաւորին, և ոչ գունդ և այրուձի, բայց
միայն սակաւ սպասաւորք հանդերձ որսոցն պառականօք և ռա
վերայ մարդկան և խառնաղանջ խորանապահ զօրուն և ռամիկ
սպաս զօրօքն, և տիկնաւն հանդերձ արքայորդւն մանուկն Արշակ
Այսպէս սակաւուք դիպեալ ի ժամանակին յայնմիկ, թէպէտև եա
հարուստ գնդաւ եկեալ զզօրավարն Պարսից—զի էին ընդ նմա
սպառազէն վառեալք արք իբրև երեք հազարք—ոչինչ խիթացեալ
զգուշաւ՝ անկասկած լինէր, քանզի տեսանէր զնա իբրև ի պատ
ճառս խաղաղութեան եկեալ, մեծաւ պատարագօք և պատուակա
ընծայիւք և մեծաշուք մեծարանօք: Եւ իբրև ոչինչ բազում աւուր
ընդ մէջ եղեն՝ յընթրիս կոչնոց ի հաց հրաւիրեալ կոչէր Վարազ
զարքային ի պատիւ մեծարանաց: Ապա իբրև ընդ գինիս մտին և
քաջ արբեալ լինէին թագաւորն և որ ընդ նմայն էին՝ զօրն զա
բանակալ յանպատրաստից յանկարծօրէն յայլակարծուց զնոսա յան
կործուստ յիւրաքանչիւր բազմականի ի վերայ հասեալք ըմբռնէին
և վահանափակ շերտաւորացն պատէին զթագաւորն Տիրան, և կա
լեալ կապէին զոտս և զձեռս նորա ի կապս երկաթիս, և զե
նակն և զոր ինչ գտանէին՝ աւար հարկանէին, և զգանձս և զգա
ցուածս, զկին և զորդիս թագաւորին զորս գտին ի բանակին՝ խա
ղացուցին յերկրէն Ապահունեաց: Իբրև եկին հասին ի գիւղ մի
որում անուն Դալարիս կոչէին, և յորժամ եկն եմուտ զօրավարն
Պարսից ի ներքս ի գիւղն՝ ածէր կապեալ զարքայն Տիրան ընդ
իւր: Եւ ասէ Վարազ. Ադէ, տեսէք ածուղ, որով երկաթ շող
ցուցուք, զի զաչս խարեսցուք զարքային Հայոց: Եւ անդէն բ

րին ածուղ, որով խարէին զաչսն Տիրանայ։ Ապա ինքն խօսել սկըսաւ Տիրան և ասէ. Փոխանակ զի իմ երկու աչքս լուսաւորքս խաւարեցան յայս տեղւոջս՝ արդ փոխանակ Դալարեայս անուան Ածուղ անուն լիցի սմա մինչև ցյաւիտեանս ժամանակաց, և այս երևոյթ նշանակս մնասցէ յիմ յիշատակի։ Այլ ինձ յուշ եղև և գիտեմ, զի խնդրեցաւ յինէն վրէժ չարեաց մեղացն իմոց, փոխանակ զի խաւարեցուցի ես զաշխարհս որում թագաւորեալ էի՝ յերկուց լուսաւոր վարդապետացն, և կարծեցի շիջուցանել զլոյսն ճշմարտութեան քարոզութեան երկուց հաւատարմացն, վասն այսորիկ խաւարեցաւ լոյս տեսանելեաց աչացս իմոց։ Եւ յայնմ ժամանակի վաղվաղակի փութանակի չու առնէր յԱծուղ գեղջէն, խաղայր գնայր ճեպով իշխանն արքային Պարսից հանդերձ Տիրանաւ արքայիւ և ամենայն գերութեամբն յերկիրն Պարսից, և երթայր յԱսորեստան առ տէրն իւր յարքայն Պարսից։ Իբրև լու եղև այս ամենայն կործանումն գուժի չարեացն յանկարծօրէն թշուառութեանն հասելոյ՝ ժողով լինէր նախարարացն և իշխանացն, ընդ որս էին գործակալք և զօրագլուխք, պետք և ամենայն աշխարհաժողովք բազմութեանն եկելոց կուտելոց։ Թէպէտև ժողովեցան կազմեցան գունդ եղեն, պատրաստութեամբ զհետ կրթէին Վարազայ՝ ոչինչ կարացին հասանել։ Սակայն հասանէին առնուին զկողմ մի ի Պարսից աշխարհէն, առհասարակ մարդակոտոր առնէին և զաշխարհն յայրեաց և յաւեր դարձուցանէին։ Եւ ինքեանք դառնային և ի մի վայր ժողովէին, կոծ եդեալ աշխարանօք լային զկուրեանց բնակ տէրն զարքայն Հայոց, այնպէս և զկորուստ աշխարհին, և զանձանց անտէրընչութիւն կործանման. վարանացն աղիողորմ կոծէին» (Բուզ. Գ. Ի.)։

Տիրան, ինչպէս տեսանք, առանց յայտնի ընդդիմանալու Հռոմայեցւոց—և չէր իսկ կարող առնել զայս—յարած էր ի Շապուհ, որ կը փայփայէր զնա առ ժամն՝ բռնելու համար զնա յետս Հռոմայեցիներէն, մինչ ինքն զհետ էր գրաւել զՄիջագետս։

24. Երբ անկաւ Տիրան ի խաբս և երկիրը մնաց անտէր՝ նախարարք, ըստ Բուզանդայ, ի խորհուրդ մտանելով որոշեցին դիմել առ կայսր, և զրկուեցան այս պաշտօնիւ Անդովկ Սիւնի և Արշաւիր Կամսարական.—«Ապա ժողովեցան ի մի ժողով միաբանութեան մարդիկ աշխարհին Հայաստան երկրին, նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք, այլև ի շինականաց անգամ ռամիկ մարդկանն։ Խօսել սկսան այր ընդ ընկերի և ասեն. Զինչ է այս, զի ի սուգ մտեալ եմք. թշնամիք այսու զամագիւտ լինին. այլ քան սակաւ ժամանակք են, այորէն արշաւեցեն թշնամիքն։ Այլ

եկայք զանձինս անձամբ մխիթարեսցուք, անձանց և աշխարհի պահ կալցուք և զտեառն ընակի վրէժ խնդրեսցուք»:

Գ. ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆ ՀՌՈՄԱՅԵՑԻՈՑ:

ՅԱՐՇԱԿԱՅ ՄԻՆՉԵՒ ՊԱՊ:

1. Կոստանդ: 2. Արշակ կը թագաւորէ: 3. Պաշտօնէութիւնք· նախարարք: 4. Կաթողիկոսութիւնն: 5. Ներսէս մեծ: 6. Կարգք հաստատեալք ի նմանէ: 7. Արտաքին քաղաքականութիւն Արշակայ: 8. Արշակ կը հրաւիրուի ի Շապհոյ. Աներկիւղութիւն Վասակայ սպարապետի: 9. Արշակ կ'երդնու. կը դրժէ երդմանն. Հալածումն ընդդէմ քրիստոնէից ի Պարս: 10. Ներքին գործք Արշակայ. շինութիւն Արշակաւանի: 11. Փառանձեմ. Գնէլ եւ սպանումն նորա: 12. Տիրիթ կը խնդրէ զՓառանձեմ յԱրշակայ եւ կ'սպանուի: 13. Արշակ կ'առնու կին զՓառանձեմ: 14. Անլուր դաւաճանութիւն Փառանձեմայ ընդդէմ Ողոմպեայ: 15. Ներսէս կը մեկնի յԱրշակայ. Չոնակ ումն կաթողիկոս հակառակ Ներսէսի: 16. Սպանմունք նախարարաց: 17. Չար խրատտուք Արշակայ: 18. Վարդան Մամիկոնեան կ'սպանուի յեղբօրէն: 19. Փորձ հաշտութեան ի մէջ Հռոմայեցւոց եւ Պարսից չաջողիր: 20. Պատերազմը կ'սկսի: 21. Արշակ օգնական Պարսից ընդդէմ Հռոմայեցւոց: 22. Արշակ կը հեռանայ ի սպառ ի Շապհոյ հնարիւք նախարարաց: 23. Ամիդ կ'առնուի. Արշակ կը մտէ ի Յոյնս: 24. Կոստանդ կը մեռնի. Յուլիանոս կայսր. Ջթղթոյ նորա առ Արշակ: 25. Յաղթութիւն Յուլիանու. Մահ նորա: 26. Յովիանոս եւ դաշինք նորա: 27. Պայման Յովիանեան դաշանց զՀայոց: 28. Ամմիանոս զԱրշակայ: 29. Հայք յետ դաշանցն Յովիանու. Պատգամաւորութիւն առ Վաղէս. զաքսորէն Ներսէսի: 30. Խրատ եւ նշանագործութիւնք նորա ըստ Բուզանդայ: 31. Թշնամութիւնք Շապհոյ. Հնգամեայ վիճակ Հայաստանի: 32. Մերուժան Արծրունի. Յարձակմունք Պարսից թելադրութեամբ նորա: 33. Ասպատակութիւնք Պարսից: 34. Երկպառակութիւն նախարարաց: 35. Միւս եւս ընտանի թշնամի—Վահան Մամիկոնեան: 36. Վատ խորհուրդ նախարարաց. Ներսէսի խրատն: 37. Արշակ կ'ստիպուի երթալ առ Շապուհ: 38. Սնապաշտ փորձ Շապհոյ ըստ Բուզանդայ: 39. Արշակ կը դրուի յԱնյուշ բերդն. Վասակ սպարապետ կ'սպանուի: 40. Աւեր աշխարհին Հայոց: 41. Հայք կը դիմեն առ Յոյնս. Փառանձեմ կը պաշարուի յԱրտագերս: 42. Արտագերից բերդը կ'առնուի Փառանձեմ կ'սպանուի թշնամեօք: 43. Աւելաբանութիւնք ի պատմութեան Բուզանդայ: 44. Հայք կը բռնադատուին յուրացութիւն. Նահատակութիւնք. Վկայական մահ Համազասպուհեայ:

1. «Յայնմ ժամանակի առաքեցին ի մեծ նախարարաց անտի Հայոց հանդերձ պատարագօք առ Թագաւորն Յունաց, զի ի նա ձեռս տուեալ ծառայեսցեն նմա հնազանդութեամբ, և լինիցի նա նոցա թիկունք օգնականութեան՝ խնդրել վրէժս ի թշնամեաց նոցա: Ապա առաքեցին զԱնդովկ նահապետ Սիւնեաց և զԱրշաւիրն Կամսարական նահապետն Արշարունեաց» (Բուզ. Գ. ԻԱ.): Այս կարի համաձայն է պարագայից ժամանակին: Գրեթէ նոյն տարին (353) էր, որ Կոստանդ յետ նուաճելոյ զարեմուտս և միացունելոյ զկայսրութիւնն ընդ իւրով ձեռամբ՝ կը դառնար յարևելս ի գործ պատերազմին Պարսից, ուստի և պատեհ ժամանակ էր Հայոց դիմել յօգնութիւն Հռոմայեցւոց: Համաձայն է նաև Յուլիանոսի ճառին, զոր վերագոյնն յիշեցաք և զոր խօսեցաւ Յուլիանոս ի դարձին Կոստանդայ յաղթութեամբ յարևմտից, և կը խօսի, ինչպէս տեսանք՝ զՀայոց, որ ցրուած էին ժամանակ մի և ապա դարձան առ Հռոմայեցիս: Կայսրն, ասէ Բուզանդ, լսեց աղաչանաց Հայոց.—«Որք (Անդովկ և Արշաւիր) երթեալ հասեալ էին յաշխարհն Յունաց՝... տային զհրովարտակն և մատուցանէին զաշխարհապաղատ պատգամն առաջի թագաւորին: Իբրև լուաւ կայսրն զիրսն զայնոսիկ՝ մեծաւ փութով և բազում պատրաստութեամբ ի խնդիր ելանէր իւրն հասելոյ և օգնական և թիկունք լինէր աշխարհին Հայոց» (Անդ): Հոս կը յիշէ Բուզանդ դաշինս իմն իբրև ի վաղուց եղեալ ի մէջ Կոստանդիանոսի և Տրդատայ. «Մանաւանդ զի, ասէ, զուխտն յիշէր զդաշանցն կռելոց զերդմանցն հաստատութեան, որ միջնորդութեամբ ի մէջ կայսերն Կոստանդիանոսի և ի մէջ Թագաւորին Տրդատայ եղեալ էր»: Թուղթն Վրթանայ ևս առ Կոստանդ, ըստ Խորենացւոյն, կը դնէ դաշն Կոստանդիանոսի ընդ Տրդատայ. «Յուշ լիցի քեզ պայման ուխտի հօրն քո Կոստանդիանոսի որ առ մերում թագաւորին Տրդատայ» (Խոր. Գ. Ե.): Բուզանդ այլուր, այն է յետ թագաւորելոյն Արշակայ, ինչպէս պիտի պատմենք ի ստորև՝ կը յիշէ դաշինս ինչ եղած ի մէջ Հայոց և Հռոմայեցւոց, առանց տալոյ զանուն այս կամ այն թագաւորի կամ կայսեր.—«Ապա վասն խաղաղութեան ուխտին միաբանութեան դաշինն որ էր աշխարհին Հայոց ընդ կայսերն Յունաց՝ դէպ եղև առաքել զմեծն Ներսէս և ի մեծամեծացն Հայոց սատրապս տասն, զի երթիցեն, ի մէջ կայսերն և ի մէջ իւրեանց զուխտն հաւանութեան և խաղաղութեան նորոգեսցեն» (Բուզ. Դ. Ե.): Իսկ Եղիշէ եպիսկոպոսներէն և նախարարներէն առ Թէոդոս գրուած թղթին մէջ (որ կը թուի նմանութիւն վերոյիշեալ թղթոյն Վրթանայ, թէպէտ այն թուղթ ևս, նայելով պարագայից ժամանակին՝ է կասկածելի, ինչպէս պիտի

տեսնենք յետոյ)՝ յառաջագոյն քան զՏրդատ եղած կը թուի համարել այնպիսի սէր ի մէջ Հայոց և Հռոմայեցւոց, քանզի Տրդատայ անգէն իսկ ի մանկութեանն կու տայ յիշել զայն սէր (իմա դաշն կամ ուխտ). «Վասնորոյ և նախնին մեր Տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր՝ ի տղայութեան փախուցեալ սնաւ յերկրին Յունաց» (Եղիշ. տպ. Վենետ. 1828, էջ 123). և ի սորին ասէ, որպէս թէ շատ մատեաններ մէջ բերուեցան, և գտնուեցաւ այն դաշնագրութիւնն. «Բազում մատեանք ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոյն ուխտ հաստատութեան ի ներքս գտանէին»։ Քաղաքական ինչ կապ Հայոց ընդ Հռոմայեցւոց կար արդարև ի վաղուց, անդստին ի մեծէն Տիգրանայ, մանաւանդ յետ որոյ Հայաստան եղաւ «դաստակերտ» (աւատ), նա՝ հարկատու իսկ այս վերջնոյ։ Ապաքէն զայն հին դաշնակցութիւն կ'իմանայ Եւսեբիոս, որ առ Մաքսիմինոսի իսկ, որ է յառաջ քան զԿոստանդիանոս՝ գիտէ զՀայս «ի սկզբանէ» (ἐξ ἀρχαίου) բարեկամ և նիզակակիցս Հռոմէական ժողովրդեան, և Յուլիանոս կը կոչէ զՀայս «հին մարտակիցս» (παλαιοί σύμμαχοι) Հռոմայեցւոց։ Այս դաշնակցութիւն կար միշտ՝ ցորչափ Հայք էին ընդ վերին իշխանութեամբ Հռոմայեցւոց, և հաւանականապէս կը նորոգուէր ամէն անգամ որ Հայք կը մտնէին ընդ իշխանութեամբ նոցա, միով բանիւ՝ էր բնական պայման երկու ազգաց յարաբերութեան, միոյն իբրև պարգևատուի և տեառն (suzeraine), և միւոյն իբրև պարգևառուի և հնազանդելոյ (vassal)։ Այսպիսի դաշնակցութիւն կը դնէր անտարակոյս երկուստեք ընդ պարտականութեամբ զՀռոմայեցիս և զՀայս, մանաւանդ առաջիններն՝ փութալ յօգնութիւն ի ստիպել հարկին։ Զէ սակայն անհաւանական, թէ յետ քրիստոնէութեան ի մէջ Տրդատայ և Կոստանդիանոսի հաստատուեցաւ մասնաւոր դաշն, կամ բանիւ Եղիշէի՝ սէր, զոր քրիստոնեայ մատենագիրք մեր համարելով նուիրական և բուն դաշն կը յիշեն միշտ ուխտ անուամբ, և ազգն յիշեցունելով ի հարկի քրիստոնեայ կայսերաց՝ կ'ստիպէ իմն զնոսա յօգնութիւն։

«Ապա -- ասէ Բուզանդ, յառաջ տանելով զպատմութիւնն — գրէր Հրովարտակ թագաւորն Յունաց առ արքայն Պարսից... Դարձուցես, ասէ, զգերութիւնն առեալ յերկրէն Հայոց և զթագաւորն Տիրան ինքնին զկնովին և զամենայն ինչ զոր առեալ իցէ անտի։... Եւ արքայն Պարսից վաղվաղակի զիրսն կատարէր, հանէր զկապեալն Տիրան ի տանէն բանտի կապանաց, խօսէր ընդ նմա ողոքով, զի թագաւորեցուսցէ զնա անդրէն, յիւր աշխարհն արձակելով, զի երթիցէ նա պատուով։ Ապա առեալ պատասխանի Տիրանայ, եթէ անօգուտ է ինձ և անպատշաճ է կուրութեամբ, անմարթ իսկ է կարի, ունել

զթագաւորութիւն. բայց փոխանակ իմ թագաւորեցո զԱրշակ զորդի իմ։ Յայնժամ թագաւորեցուցանէր (Շապուհ) զԱրշակ որդի նորա ի վերայ աշխարհին Հայոց. և զկանայս թագաւորին և զայլ գերիս ամենայն, զանձիւք, ընծայիւք և ստացուածովք հանդերձ, և միանգամայն դարձ առնէր ամենայն գերութեանն։ Եւ զինքն Տիրան՝ թագաւորն Պարսից հանդերձեաց կազմեաց մեծաւ կազմութեամբ և արձակեաց յիւր աշխարհէն յերկիրն Հայոց, և կատարեալ հաւատարմացոյց զասացեալսն հրամանաց թագաւորին Յունաց։ Եւ իբրև գնաց ի Հայս ուղարկէր՝ ապա և զ'ի թագաւորէն Յունաց զառ ինքն եկեալսն դեսպանս արձակէր յիւրմէ, զի երթիցեն պատմեսցեն թագաւորին Յունաց, թէ որպէս և կամ զիարդ նա զհրամանսն կատարեաց զթագաւորին Յունաց» (Անդ)։ Բուզանդ զթագաւորեցուցանելն Շապհոյ զԱրշակ այնպէս դիւրաւ՝ կը պատմէ եղած իբրև պայման պատերազմէ մը ետքը որ եղաւ ի մէջ Պարսից և Հայոց՝ որոց օգնական էին Յոյնք։ Ըստ Բուզանդայ, այն ինչ պատգամաւորք Հայոց մեկնեալ էին երթալ առ կայսր՝ Ներսեհ արքայ Պարսից (իմա որդի կամ զօրավար Շապհոյ) կը մտնէ մեծ պատրաստութեամբ ի Հայս, բազումք ի նախարարաց առեալ զընտանիս իւրեանց խոյս կու տան ի Յոյնս՝ տալ գոյժ կայսեր, որ իսկոյն կը գումարէ ի Հայս բաւական զօրս, որք միանալով ընդ Հայոց կու տան ճակատ Պարսից զօրուն հետ։ Ըստ Բուզանդայ՝ կայսրն անձամբ կու գայ ի Հայս, և ծպտեալ իբրև ոմն ի չինականաց՝ ի կերպարանս կաղամբավաճառի կ'երթայ դիտել Պարսից զօրութիւնը, որ անհոգութեամբ բանակած էին Ոսխայ անուանեալ տեղն ի Բասեն։ Յոյնք և Հայք միացեալ զօրութեամբ կը զարնեն չարաչար զՊարսիկս, որ կ'աճապարեն ի փախուստ։ Երկիրը կը յանձնուի Անդովկայ և Արշաւրի։ Շապուհ այս պարտութեան վրայ կը մտնէ ի դաշն ընդ կայսեր—արձակել զՏիրան հանդերձ իւրովքն, և փոխանակ այնր առնուլ յետս զիւր գերութիւնն, ընդ որս էին, ըստ Բուզանդայ, բոլոր կանանին հանդերձ տիկնաց տիկնաւն։ Շապուհ տեղեկանալով, թէ այս պատերազմն յառաջ եկաւ չնչին պատճառէ, այն է ձիոյ մը համար՝ կ'ընկենու զՎարազ Շապուհ Ատրպատականի մարզպանն ի պատուոյն և կ'սպանանէ զնա մորթազերծ մահուամբ ըստ Պարսից օրինի։ Լսենք նմին իսկ Բուզանդայ. «Մինչդեռ դեսպանքն երթեալք յերկրէն Հայոց ի կայսերական պաղատն չև էին անդրէն յիւրեանց աշխարհն դարձեալ՝ ի կողմանց արևելից խաղաց գնաց ինքն Ներսեհ արքայն Պարսից, գալ առնուլ այրել և աւերել, կորուսանել և միահաղոյն իսկ յիւր վարել զսահմանս Հայաստան երկրին։ Եւ առեալ զզօրս իւր ընկե-

աղխիւ և ամենայն մեծաւ կարաւանաւ, փղակոյտն բազմութեամբ հանդերձ, անթիւ վաճառօք և ամենայն կանանօքն և հանդերձ տիկնանց տիկնաւն՝ եկն ի սահմանս Հայոց, խճողեաց ելից զերկիրն առ հասարակ։ Յայնմ ժամանակի ազատագօրքն նախարարացն Հայոց առեալք զիւրաքանչիւր ընտանիս՝ լինէին փախստականք, ի կողմանս Յունաց անգանէին, զոյժ տային կայսերն բազմագունդ բանակին նախարարացն։ Ապա իբրև զայս ամենայն լսէր թագաւորն Յունաց՝ նոյն օրինակ և նա զիւր զօրսն գումարէր և չու արարեալ գայր հասանէր յերկիրն Հայոց ընդդէմ թագաւորին Պարսից։ Եւ եթող զիւր զբանակն զՍատաղ քաղաքաւն, և ինքն ընտրեաց իւր արս երկուս գլխաւորս, արս իմաստունս հայաստան բանակէն, այսինքն զԱրշաւիրն և զԱնդովկն, զի այս արք էին որ չոգան առ նա դեսպանութեամբ յառաջնում նուագին։ Եւ այսպէս հանդերձ նոքօք ինքն իսկ կայսրն ի շինականութեան կերպարանս, ի կաղամբավաճառի օրինի, մտանէր ի բանակն Պարսից։ Իբրև նոքա բանակեալ էին ի գաւառին Բասենոյ, ի գիւղն որ անուանեալ կոչի Ոսխայ՝ եկին մտին սոքա ի բանակն արքային Պարսից, գիտեցին քննեցին զչափ առին զնոցա զօրութեան զօրացն։ Եւ անտի դարձեալ յիւրեանց բանակն՝ կազմեցան պատրաստեցան. գային հասանէին, գտանէին զբանակն արքային Պարսից ի նմին տեղւոջ բանակեալ ի պղերգութեան յանհոգութեան յանկասկած խաղաղութեան։ Ապա հասեալ ի տուընջէն ժամուն՝ անկանէին ի վերայ թագաւորին Պարսից, ընդ սուր զբազումս ի զօրացն հանէին։ Եւ առին զկապուտ զաւար բանակին, և զկանայս թագաւորին և զբամբիշն, և զինչս և զստացուածս նոցին ընդ նմին ի գերութիւն վարէին, զկանայս նոցա և զգանձս և զկեանս և զկազմած նոցա։ Բայց միայն թագաւորն պրծեալ մազապուր, մի սուրհանդակ առաջի՝ ելանէր փախստական. հազիւ ուրեմն կարէր անկանել հասանել յաշխարհն իւր։ Իսկ կայսրն մեծաւ շքեղութեամբ անուանի պերճացեալ ի մէջ բանակին երևէր։ Եւ ի վերայ երկրին թողեալ իշխանս վերակացուս՝ մեծապարգև մեծապատիւ մեծարէր, և յանձն արարեալ զնոսա ամենայն իշխանացն և զաշխարհն նոցա ինքն չու արարեալ գնաց յերկիր իւր յերկիրն Յունաց։

Եւ արքայն Պարսից գնացեալ փախստական յերկիր իւր. Իբրև եհաս անդր՝ ի խոյզ և ի խնդիր անկանէր։ Խորհուրդ ի մէջ առնոյր հարց և քնին առնել. Հրամայէր զի տեսցեն և յայտ արասցեն, թէ ուստի եղև սկիզբն պատերազմին։ Ապա ի վեր եկին և յայտնեցան իրքն առաջի նորա, զի յոչինչ իրաց և ի վատթար բանից, վասն ձիոյ միոյ եղև այն ամբոխ խռովութեան ի մոլեկա-

առնէն Շապուհ Վարազայ։ Ապա հրաման ետ հանել զպատիւն ի բաց և մերկանալ ի նմանէ զպատուական պատմուճանն, և մեծաց հարուածոց արժանի առնէր զՎարազն։ Ըստ պարսկի օրինակին հրամայէր զմորթն ի բաց հանել և խոտով լնուլ, և ի հրապարակի խուրում ի տեսիլ ծանականաց կանգնել հրամայէր։ Եւ ինքն ի զղջումն եկեալ վասն իրացն եղելոց՝ արձակէր աղօթկերս՝ ի հաշտութիւն խաղաղութեան խօսել ընդ կայսերն, զի գոնեայ զկանայս իւր արձակեսցէ ի գերութենէն և բարձցէ ի նմանէ զծանակութեանցն զգարովութեանցն նախատինս։ Նախ դու, ասէ թագաւորն Յունաց, դարձուցես զգերութիւն առեալ յերկրէն Հայոց, և զթագաւորն ինքնին զլխովին. ապա յորժամ զայդ արասցես՝ և ես զկինս դարձուցից զոր առեալ եմ, զի եթէ նախ դու զնոցա զաւարն դարձուսցես՝ և ես ապա զքոյդ դարձուցից։ Եւ իբրև լուաւ զայս արքայն Պարսից՝ վաղվաղակի զիրսն կատարէր..։ Եւ եղև իբրև լուաւ թագաւորն Յունաց, եթէ կատարեաց ի գլուխ եհան զայս ամենայն թագաւորն Պարսից, և դարձ արար գերութեանն Հայոց և Տիրանայ արքային՝ հաճեցաւ։ Յայնմ ժամանակի և թագաւորն Յունաց առնէր գերեդարձ գերութեան արքային Պարսից։ Եւ հանդերձեաց կազմեաց թագաւորն Յունաց զկանայս թագաւորին Պարսից մեծաւ պատուով, և զամենայն գերութիւնս նոցա ընդ նոսին յերկրէն Յունաց յերկիրն Պարսից դարձուցանէր, և բարեաւ առ թագաւորն յուղարկէր» (Բուզ. Գ. ԻԱ.)։

Թողլով այս պատմութենէ ինչ ինչ, զորօրինակ զանունն Ներսեհ փոխանակ Շապհոյ, զգնալն կայսեր անձամբ ի Հայս և լրտեսել զբանակն Պարսից երկու մարդով, զանկանելն գերի կանանոյն Պարսից թագաւորին ի ձեռս Յունաց,—պարագայք, որ կը ցուցնեն, թէ Բուզանդ կը շփոթէ այս պատերազմն ընդ պատերազմին Ներսեհի առ Գաղերիոսի—բնական է, և արդիւնք իրացն իսկ կը պահանջեն ընդունել՝ թէ այնպիսի պատերազմն եղաւ արդարև, և թէ վտանգեցան Պարսք այն պատերազմին մէջ, մինչև ստիպել Շապհոյ հաճել՝ միւսանգամ թագաւորեցուցանել զՏիրան, կամ, ի հրաժարել նորա վասն կուրութեանն՝ զորդին Արշակ ի վերայ Հայոց, մանաւանդ որ Շապհոյ համար շահ մեծ էր, Հռոմայեցւոց դէմ պատերազմաց համար որ առաջի կային՝ այն բարերարութեամբ ունել զՀայս յիւր կողմն։ Այն ևս հաւանական է, թէ Կոստանդ ունէր ի նպաստ իւր մեծ պատերազմի մը մէջ յաղթող լինելոյ առաւելութիւնն։ Մեծ իմն պատճառ ընդունելոյ մեզ Բուզանդայ այս պատմութիւնն՝ է նախ լինելն նորա ժամանակակից։ Դժուարին էր Բուզանդայ, որ ըստ ամենայն հաւանականութեան կ'ապ-

րէր առ Արշակաւ իբրև թելակալ Ներսեսի՝ պատմել պատերազմի այնպէս մանր մասամբք իբրև եղած առ կենդանութեամբ Նորա՝ եթէ չունէր այն ամենևին տեղի։ Երկրորդ՝ առանց մեծ պատերազմի և յաղթութեան ի կողմանէ Հայոց և Յունաց՝ անմեկնելի կը մնայ Հայոց, որ ըստ վկայութեան ճառին Յուլիանու պառակտեալ ցրուեալ և անտերունչ մնացած էին՝ վերստին միանալ և նորոգել, դարձեալ, ըստ ճառին Յուլիանու, օգնութեամբ Յունաց։

Չ. Ըստ Բուզանդայ՝ թագաւորելն Արշակայ եղաւ հաճութեամբ երկուց թագաւորաց, Կոստանդայ և Շապհոյ, որ մեծ փառօք արձակեաց զԱրշակ յերկիր իւր հանդերձ հարբն և ամենայն ընտանեօք։ Վստահութիւնն հաստատուեցաւ, փախուցեալ նախարարք դարձան յետս, և Արշակ սկսաւ կարգել և յարդարել զերկիրն.—«Իբրև եղև հաճութիւն և բազում խաղաղութիւն ի մէջ թագաւորին Յունաց և արքային Պարսից՝ ապա և թագաւորն Պարսից Ներսեհ (իմա՝ Շապուհ) թագաւորեցոյց զԱրշակ որդի Տիրանայ, և արձակեաց մեծաւ փառօք։... Եւ եղև խաղաղութիւն մեծ ի ժամանակին յայնմիկ։ Ժողովեցան ամենայն թագուցեալքն, փախուցեալք և կորուսեալք երկրին Հայոց, և էին անկասկածք բնակեալ ի խաղաղութեան մեծի ընդ հովանեաւ արքային Արշակայ։ Կարգեցաւ կազմեցաւ յօրինեցաւ խաղաղացաւ աշխարհն Հայոց ի մէջ երկուց թագաւորացն, և յայնմհետէ բնակեալք խաղաղութեամբ՝ վայելէին յիւրաքանչիւր արարս իւրեանց» (Բուզ. Դ. Ա)։ Ո՞րչափ համաձայն է այս՝ ճառին Յուլիանու։

Առաջին գործ Արշակայ յետ թագաւորելոյն եղաւ ածել զիւրև զՄամիկոնեանս, զիւր դայեակսն, որ ինչպէս տեսանք՝ զզուելով ի գործոյն Տիրանայ՝ առանձնացած էին յիւրեանց ժառանգական երկիրն ի Սպեր, ի Տայս։ Վարդան, երէցն, հաստատուեցաւ ի նահապետութեան տոհմին, երկրորդն, Վասակ, ի սպարապետութեան, նոյնպէս կրտսերն ի զօրավարութիւն, և այլ ևս նախարարք իւրաքանչիւր յիւր գործ, և սահմանք երկրին ամրացան զօրօք որպէս յառաջն էր.—«Յայնմ ժամանակի ի խնդիր եղանէր Արշակ տոհմին զօրավարաց ազգին քաջացն Մամիկոնէից, մանաւանդ զի իւր դայեակքն և սնուցիչք էին։ Երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց աշխարհին, և դարձուցանէր զնոսա յընտանութիւնն, զի պառակտեալք և քակտեալք էին յընտանութենէն և յամենայն գործոց Հայոց ի ժամանակս խռովութեանն Տիրանայ։ Եւ կացոյց արքայն զՎարդան զերէց եղբայրն ի նահապետութեան ազգին իւրեանց, և զՎասակ միջին եղբայրն, զիւր դայեակն՝ ի սպարապետութիւնն զօրավարութեան յիւրս պատերազմացն, սոյն-

պէս և զկրտսերն ի պետս զօրացն կացուցանէր։ Սոյնպէս և զամենայն ազգս մեծամեծաց նախարարացն, որպէս առաջին թագաւորքն՝ նուաճէր իւրաքանչիւր չափու, և զզօրսն բաժանեալ յամենայն կողմանս սահմանացն Հայոց սահմանապահս կացուցանէր» (Բուզ. Դ. Բ)։ «Եւ նորոգեցաւ զուարթացաւ, կը կրկնէ Բուզանդ, տէրութիւն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս և զառաջինսն, մեծամեծքն յիւրաքանչիւր գահու, և գործակալքն յիւրաքանչիւր չափու» (Անդ)։

3. Բուզանդ նոյն Դ. դպրութեան Բ. գլխոյն վերջին մասին մէջ ունի մութ հատուած մի, որ կը թուի ցուցնել թագաւորին տաճարին (սեղանին) փառաւորութիւնը, միանգամայն զճոխութիւն տէրութեանն, և յետ յիշելոյ երկու գլխաւոր գործակալութիւն (պաշտօնէութիւն), այն է զհազարապետութիւնն և զսպարապետութիւն՝ ի սոցանէ «Ի խոնարհ, ասէ, ինն հարիւր բարձ մատնէր ի ժամ տաճարին ուրախութեան բազմականացն կարգելոց, թող զոտնկայս գործակալութեանն սպասու»։ Բուզանդ կոչելով զհազարապետութիւնն «աշխարհատես խնամակալութիւն, աշխարհաշէն աշխարհատած դեհկանութիւն»—(պարսկերէն *տիհգան* բառէն, որ կը նշանակէ գիւղապետ, Հյկ. Բռ.),—և զազգն Գնունեաց, որոց յանձն էր յայնժամ այս պաշտօն, կոչելով «շինականաշէն»՝ կը ցուցնէ թէ հազարապետն էր վերակացու մշակութեան և բերոց, յորոց է բոլոր հարստութիւն երկրին, և խնամակալ շինականաց, որպիսի էին տրիբունք ժողովրդեան առ Հռոմայեցիս։ Գալով սպարապետութեան, որ էր, որպէս ասէ, «ի վերայ ամենայն զօրաց բազմութեան Հայոց մեծաց»՝ Բուզանդ—թող փառաւոր գովեստը զոր կուտայ Մամիկոնեանց, կոչելով զնոսա «աներկիւղք, քաջասիրտք, քաջանունք, բարենշանք, բարեհամբաւք, յաջողակք ի գործ պատերազմաց, հանապազ յամենայն ժամ յաղթող, բարիանուն, իրաքաջ»,—տալով նոցա վերադիր «ադանադրօշ (թերևս ադաւնադրօշ), «արծուէնշան, վարժնականիշ» անուններ՝ կը թուի ակնարկել նոցա դրօշներն՝ ադաւնոյ, վարուժանի և արծուոյ նշաններով։

4. Երկրորդ կարևոր պէտքն էր, զկնի սպարապետութեանն և աշխարհական պաշտօնէութեանց՝ կաթողիկոսութիւնն, որոյ աթոռն էր պարապ մահուամբն Շահակայ։ Յետ եղերական վախճանի սրբոյ Յուսկանն, ինչպէս տեսանք, առ ի չգոյէ յարմարագոյն ուրուք ի զաւակէ Լուսաւորչին՝ աթոռակալութիւնը տրուեցաւ Փառէն անուն երիցու «ի գաւառէն Տարօնոյ, ի մեծէ մարգարէանոցէն Յովհաննու», որ և «նստաւ յաթոռն հայրապետական սակաւ ժամանակս», ասէ Բուզանդ։ Յետ սորա ընտրեցաւ ըստ Բուզան-

դայ՝ Շահակ ոմն «ի տոհմէ զաւակին Աղբիանոսի եպիսկոպոսին»։
Աղբիանոս այս էր մին յեպիսկոպոսաց ձեռնադրելոց ի սրբոյն Գր
իգորէ, որ և ըստ Ագաթանգեղոսի՝ «կողմանցն Եփրատական գե
տոյն լինէր վերակացու»։ Աղբիանոս էր երևելի ի մէջ եպիսկոպոսաց
նաև առ Խոսրովաւ, այնպէս որ Խոսրով և Վրթանէս զսա ընտրե
ցին երթալ համոզել ի մէջ երկուց նախարարութեանց, Մանաւա
զեանց և Որդունեաց, որ էին ի կռուի, և յետ ջնջելոյ սոցա՝ Մա
նաւազկերտ ոստանն Մանաւազեանց տրուեցաւ ի կալուած Աղ
բիանոսի։

5. Զկարգ և կցէ՝ ի թագաւորելն Արշակայ արդէն վախճա
նած էր Շահակ. և որովհետև պատանին Ներսէս, որդին Աթանա
գինեայ որդւոյ Յուսկան հասած էր ի չափ իբրև մի միայն ար
ժանաւոր ժառանգ տան Լուսաւորչին՝ ժողովուրդը խնդրեց զնա
յԱրշակայ ի կաթողիկոսութիւն, ոչ միայն վասն արժանաւորու
թեանն, այլև, «վասն զի, ասէին, նորոգեաց Աստուած զթագաւո
րութիւն ձեր՝ սոյնպէս պարտ է յայնմ զաւակէ (այն է ի զաւակէ
Լուսաւորչին) նորոգել զհոգևոր նահապետութիւնն, զի ընդ նորո
գել այնր աթոռոյ՝ նորոգեսցին պայծառ փառք աշխարհիս Հայոց»։
Զայսմ ընտրութենէ, որպէս և զանձնէ Ներսիսի՝ ժամանակակից և
գործակից նորա Փաւստոս Բուզանդ կը գրէ այսպէս. «Այս յականէ
յանուանէ իսկ խնդրեցին աշխարհաժողով զօրքն բազմութեան զայն
որ անուանեալ կոչէր Ներսէս, զորդի Աթանագինէի, զթոռն քահա
նայապետին Յուսկան, որդւոյ Վրթանայ, որդւոյն Գրիգորի մեծի
առաջնոյ քահանայապետին, և մօր նորա Բամբիշն (էր) անուն
քոյր արքային Տիրանայ։ Սա լեալ էր ամուսնաւոր յաշխարհակեաց
կեանս նախ յաստախ մանկութեան, ի տղայութենէ սնեալ և ուսեալ
ի Կեսարացւոց քաղաքին Գամրաց ընդ հաւատարիմ վարդապետօք
և ցանկալի եղեալ իւրոց համարուեստն զուգակցաց։ Այլ ի ժամա
նակին յայնմիկ էր ի փառս զինուորութեան ի գործակալութեան
սիրելի սենեկապետ արքային Արշակայ, հաւատարիմ ի վերայ ամե
նայն կարգաց կենաց թագաւորութեանն» (Բուզ. Դ. Գ.)։ Այս զա
լով ի նկարագիր անձին նորա՝ ասէ. «Էր սա մեծ և բարձր, ցան
կալի հասակաւ և վայելուչ գեղով, տենչալի ցանկալի և զարմա
նալի և ահագին ամենայն նայեցող տեսողաց, և նախանձելի յարա
թեանն ի զինուորական կրթութեանն։ Երկիւղած ի Տեառնէ Ա
տուծոյ, յոյժ աւանդապահ պատուիրանաց նորա. մարդասէր, սուրբ
զգաստ, սաստիկ իմաստուն և առանց ակնառութեան, իրաւանց
իրաւարար, ցածուն, քաղցր, խոնարհ, ի սրբութիւնս ամուսնու
թեանցն օրինաւոր և կատարեալ սիրովն Աստուծոյ և առ իւր ըն

կերս ըստ պատուիրանին՝ սիրել զամենայն ընկեր իբրև զանձն։..
Եւ զաղքատս և զտառապեալս այնպէս սիրէր և ակն ածէր ի վե
րայ նոցա, զի զիւր ինչ զհանդերձս և զկերակուր հասարակէր ընդ
նոսա. և նեղելոց և տարակուսելոց օգնական և վերակացու, և ջա-
տագով ամենայն զրկելոց լինէր նա։ Մինչ դեռ եւս զինուորական
ձեն յինքեան բերէր և զարդարեալ էր գեղեցիկ պատմուճանաւ ի
զարդ վայելուչ և ցանկալի գեղով իւրով, երկայն հասակաւ և չք-
նաղատես հերօք վարսից իւրոց, կայր ի սպասու Թագաւորին մօտ
ի անարս արքային, զարքունական սուսերն զպողովատիկն զոսկեպա-
տեանն հանդերձ ականակապ մարգարտազարդ կամարաւն ի սպա-
սու նորա բարձեալ ունէր՝ առհասարակ առեանն զբոլոր բարձեալ
աղաղակէին, եթէ Ներսէս լիցի մեր հովիւ։ Զոր իբրև լուեալ, զբո-
լոր բառնալով զանձն անարժան համարեալ՝ չկամէր, չառնոյր
զանձն։ Իսկ յորժամ տեսանէր զամենեսեան ի նոյն յառաջին բանին
վերայ պնդեալ, զի զնոյն աղաղակէին առաջի Թագաւորին, ասէին,
Ոչ ոք լիցի մեր հովիւ բաց ի դմանէ, և ոչ ոք նստցի այլ յայնմ
աթոռ բայց դա. իսկ նա զանձնն չկամէր արժանի իբրև առ յոյժ
խոնարհութեան իւրում. ապա ի մէջ եկաց, սկսաւ խօսել զանձնէ
իւրմէ զանօրէնութիւնս և զբամբասանս մեղաց՝ զոր իւր չէր գոր-
ծեալ։ Զոր իբրև լուան բազմութիւնքն, զխտացեալ զատեյն նորա
ւան անձինն՝ ամենեքեան առհասարակ հանդերձ Թագաւորաւն
ծալացեալ էին ի ծաղուէ. իսկ զօրքն աղաղակէին առհասարակ.
մեզ և ի գլուխ մեր դարձցին այն մեղք զոր գործեցերն, ի վե-
րայ անձանց և ի վերայ որդւոց մերոց լիցին գործքն. բայց դու
զգործս հօրն քո Գրիգորի, զնոյն առաջնորդութիւն նորոգեա մեզ։
սկ նա իբրև այլ ինչ ոչ եգիտ տալ նոցա բանից պատասխանի՝
ասէր. Անօրէնք էք և պիղծք. ես ոչ կարեմ ձեզ հովիւ կալ, և ոչ
ձեր մեղաց ընդ անձամբ առնուլ. ոչ կարեմ աչառել, և ոչ ձե-
ռում չարութեանդ համբերել. այսօր տարապարտուց սիրէք դուք
զիս, և վաղիւ իբրև առելի և Թշնամի՝ Թակն զգլխոյ ձերմէ կոչ-
ճիչ կարծէք զիս։ Այլ զբոլոր բառնայլն բազմութիւնք զօրացն
ասէին, եթէ Այդ մեղաւորդ լիցի մեզ հովիւ։ Այնչափ պնդեալ
ր մարդկանն, զի յԱստուծոյ տեսչութենէն լինէր այնպէս։ Ապա
ագաւորն Արշակ ինքն ձգեալ զսուսերն արքունական կամարաւն,
որ նմա Ներսէսն բարձեալ ունէր ի սպասու ըստ օրինաց սենեկա-
պետութեանն՝ ի բաց հանէր ի նմանէ, և զհերսն գանգրագեղս
վայելուչ Թագագանգուր վարսիցն՝ զայն ի բաց խզեալ հրամայէր,
ընդ նմին զվայելուչ պատմուճանն՝ զայն ի բաց պատառեալ հրա-
մայէր։ Հրաման տայր, և բերին զհանդերձս կղերիկոսաց, և զգե-

ցուցանէին նմա. ետ հրաման, և կոչեցին զծերունի եպիսկոպո
որում անուն էր Փաւստոս, և տայր զնա ձեռնադրել ի սարկաւ
գութիւն։ Բայց յորժամ զհերսն դեռ վերային ի նմանէ՝ առ յո
զեղեցկութեանն բազումք յարտասուս հարան որք տեսին զնա
ի գեղն ունելեալ՝ զկերպարանսն փոխելովն. այլ յորժամ տեսի
զնա քրիստոնեան գեղովն զարդարեալ՝ բազմաց լինէր ուրախու
թիւն» (Անդ)։

Յետ ոչ բազում աւուրց զրկուեցաւ Ներսէս հանդերձ մեծա
մեծ իշխանօք, որպէս վերագոյնն ասացաւ, ի Կեսարիա, առնու
զձեռնադրութիւն կաթողիկոսութեան։ Բուզանդ հոս դարձեալ կ
դիմէ լիւր սովորական արուեստն պատմելոյ սքանչելիս, որպէս թ
ի ժամու ձեռնադրութեանն աղաւնի մի թռուցեալ կու գայ կ
նստի նախ սրբոյն Բարսղի վրայ, և ապա ի կատարել արարողու
թեանն՝ կ'երթայ հանգչել ի վերայ Ներսիսի.— «Ապա գումարեցի
զիշխանսն մեծամեծս, և արձակեցին զՆերսէս բազում ընծայիւք
մեծամեծ պատարագօք և հաւատարիմ հրովարտակօք առ կաթ
ղիկոսն Եւսեբիոս յերկիրն Գամրաց, ի մայր քաղաքացն նոցա ի Կ
սարիա, զի ձեռնադրեսցեն անդ զսուրբն Ներսէս կաթողիկոսութիւ
Հայոց Մեծաց։... Եւ եղեն մեծ սքանչելիք. զի մինչդեռ այն ի
մտեալ էին յեկեղեցին՝ էջ աղաւնի սպիտակ ի վերայ սեղանոյն յա
դիման քահանայութեանն և յանդիման ամենայն ժողովրդեան
Եւ իբրև եմուտ Եւսեբիոս արքեպիսկոպոսապետն և երիցունքն ը
նմա, և երիցապետ մի սուրբ որում անուն Բասիլիոս կոչէր՝ թ
ռեաւ աղաւնին ի սեղանոյն և հանգեաւ ի վերայ նորա և յամեա
բազում ժամս։ Իսկ իբրև եհաս ժամն, կամեցան զՆերսէս ձեռն
դրել՝ վերացաւ աղաւնին ի սրբոյն Բարսղէ և նստաւ ի վերայ գլ
խոյն Ներսիսի» (Բուզ. Դ. Դ.)։

Ներսէս յետ ձեռնադրութեանն կը դառնայ ի Հայս իւր մեծ
շուք ուղեկիցներով, և կ'ընդունուի յԱրշակայ, որ կ'երթայ նմա ը
առաջ մինչև Առիւծ կոչուած լեռը, հաւանականապէս արտաք
Մեծին Հայոց. քանզի ասէ յետոյ. «Եւ անդուստ յաշխարհն դա
ձան».—«Եւ եկին հասին նոքա (Ներսէս և որ ընդ նմայն էին ն
խարարք) մեծապարծ երևելի հոգևորազգեաց փառօք ի Հայաստա
երկիրն. և արքայն Արշակ գնացեալ էր ընդ առաջ նոցա մինչև
լեառն որ անուանեալ կոչի Առիւծ. և անդ պատահեալ միմեա
մեծաւ ուրախութեամբ, լցեալք օրհնութեամբ ողջունիւն՝ անդու
յաշխարհն դարձան»։

Ե. «Եւ նստաւ սուրբն Ներսէս յաթոռ հայրապետութեան
հովուութեանն նորա բազում խաղաղութիւն լինէր աշխարհին.

ի վարս կարգաց գնացից իւրոց նմանեաց իւրոյ հօրն մեծին Գրի-
գորի. արդարև հայրաբարոյ գտանէր» (Անգ)։ Ըստ Բուզանդայ՝ Ներ-
սէս կը գործէր նաև սքանչելիս.—«Մեծամեծ նշանս և բժշկու-
թիւնս առնէր հիւանդաց ուր դէպ լինէր»։ Բայց կարևորագոյն
գործք Ներսիսի և որ կը թուին ճշմարտագոյն՝ էին եկեղեցական
կարգք և կանոնք, որ ըստ հանգամանաց ժամանակին կրնան կո-
չուիլ նաև քաղաքական։ Բուզանդ խօսելով զկարգաց եդելոց ի Ներ-
սիսէ՝ կը պատմէ մանր, թէ ինչպէս Ներսէս գումարելով ժողով
եպիսկոպոսաց յԱշտիշատ, տեղի ժողովոց Հայոց «նախնեացն», իմա
անդստին ի Գրիգորէ՝ դրաւ բոլոր երկրին համար օգտակար հաս-
տատութիւններ, որպիսի տեսած էր անշուշտ ի Յոյնս, զոր օրի-
նակ՝ աղքատանոցս և ուրկանոցս բորոտներուն համար, որ հեթա-
նոսական անգթութեամբ կը թողուէին անդարման և անռոճիկ.
հրամայեց չտալ նոցա թոյլ մուրանալ դրանէ ի դուռն. արգելեց
հեթանոսաբար կոծ դնել մեռելոց. ամուսնացելոց համար ևս դրաւ
կանոն, արգելլով մերձաւորաց հետ ամուսնութիւն. հաստատեց
նաև այլևայլ տեղեր ի գաւառս գաւառս դպրոցներ յոյն և ասորի
դպրութեան, ինչպէս յայտնի է՝ առ ի չգոյէ Հայերէնին։ Լուիցուք
նորին իսկ Բուզանդայ բանիցն որ կարի հետաքրքրական են. «Եւ
ինքն երթեալ հասանէր ի կողմանս Տարօն գաւառին և ժողովէր
առ ինքն զամենայն եպիսկոպոսունս Հայոց աշխարհին։ Ժողովեցան
ի գիւղն Աշտիշատ, ուր զառաջինն զեկեղեցին էր շինեալ, զի նա
էր մայր եկեղեցեացն և տեղի լեալ նախնեացն ժողովոց սինհոդո-
սին։... Յայնմ ժամանակի կարգեցին կազմեցին կանոնեցին յօրինե-
ցին և արարին զամենայն ժողովուրդս երկրին Հայոց իբրև կարգ
միաբանութեան վանականաց համաշխարհի, բայց միայն յամուսնու-
թեան օրինացն։ Հրամայէր յամենայն յաշխարհս և ի գաւառս և
ի կողմանս, ի կոյս կոյս, ի խորշս խորշս սահմանացն Հայոց
զպատեհ տեղիսն զատուցանել, շինել աղքատանոցս և օրկանոցս,
ի ժողովել զախտաժէտս և զօրկունս և զմարմնավարս և զամենայն
ցաւոտս, և նոցին կարգել դարմանս և ռոճիկս և պատանս. և սոյն
կամ եղև ամենայն սուրբ ժողովոյն՝ զի այնպիսիքն միայն նստեալ
լիցին յիւրաքանչիւր կայեանս, և մի ելանել ի մուրոյն տառապանս
և մի բնաւ ելանել ըստ իւրաքանչիւր դուրս, այլ զի ամենայն ոք
պարտական է նոցա։ (Պատուիրէր) զի մի զմահ մարդկանն առանց
դարձի միւսանգամ կենդանանալոյ համարիցին, և անյուսութեամբ
ի վերայ գնացելոցն ոճիրս գործիցեն լալեացն կոծոյն»։ (Էր արգա-
լև ի Հնումն, ինչպէս ուրիշ հեթանոս երկիրներ՝ նոյնպէս ի Հայս,
մեռելոց, փետել զհերս, ցտել
յուսահատաբար դնել կոծ ի վերայ

զմարմինս, մինչև յանձն առնուլ կամաւոր մահունս ի վերայ դիականց: Այսպիսի սպանութիւնք կը պատմուի թէ եղան ի մահուանն Տրդատ-Արտաշիսի այնչափ, մինչև, ըստ վիպասանաց, գանգատել որդւոյն Արտաշիսի, Արտաւազդայ, առ Հայրն, թէ Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս որպէս թագաւորեմ): «Պատուիրէր ևս, զի լինիցին յամուսնութեան օրինաւորք. մի՛ ստել և մի՛ դաւ բերել իւրեանց ամուսնութիւնընկալ կողմանց, և փախչել աւելի ի մերձաւոր և յազգին տոհմակից խառնակութեան ամուսնութենէն, և մանաւանդ ի մերձաւորական ի նուաց, և որ դամ մի այս նման լեալ էր ինչ:... Կարգէր և ի տեղիս տեղիս դպրոցս յունարէն և ասորերէն յամենայն գաւառս Հայոց»: Եւ ոչ այսչափ միայն, այլև «ամենայն աշխարհին պատուիրէր, ասէ Բուզանդ, և գլխովին թագաւորին, առհասարակ ամենայն մեծամեծացն և ամենեցուն, որ ոք ի վերայ ընկերին ունիցի իշխանութիւն՝ գութ ունել ընդ իւրեանց ծառայս և ընդ կրտսերս և ՚ընդ աշակերտս, և սիրել (զնոսա) իբրև զընտանիս, և մի՛ անարժանս և աւելի տարապայմանս հարկօք նեղել քան զչափն, յուշ առնելով՝ զի և նոցա տէր գոյ յերկինս»: Գալով բուն անձին Ներսիսի՝ կը յաւելու Բուզանդ, թէ «այրեաց և որբոց և չքաւորաց հանգիստ և դարման առնէր, և աղքատք զօրհանապազ ընդ նմա ուրախ լինէին, և տաճար իւր և սեղան զօրհանապազ աղքատաց և օտարաց էր և հիւրոց: Եւ այսպէս առ յոյժ աղքատասիրութեանն, զի թէպէտև շինեաց զամենայն աղքատանոցս ընդ ամենայն գաւառս և կարգեաց նոցա անդէն դարմանս, այնպէս զի ըստ իւրեանց անկողինս մահճացն մի ուրեք աշխատ լինիցին ելանել՝ սակայն և զիւր տաճարն առանց նոցա ոչ առնէր, այլ կաղք և կոյրք և մարմնահարք և խուլք և հաշմեալք և ցականեալք և կարօտեալք ընդ նմա և ի նորա ակըմբի դարմանէին բազմեալք: Եւ ինքն իւրովք ձեռօքն լուանայր զամենեսեան, օծանէր, պատէր, և ինքնին իսկ ջամբէր նոցա զիւրաքանչիւր կերակուրս, և զամենայն ինչ ի պէտս նոցա ծախէր, և ամենայն օտարք ընդ նմա, ընդ հովանեաւ նորա հանգուցեալք դադարէին» (Բուզ. Դ. Դ.): Բուզանդ կը վերջացունէ իւր գովեստն զՆերսիսէ ասելով. «Ոչ երբէք ուրեք եղև նման նմա այլ ոք ի Հայաստան երկրին»: Այս բանք Բուզանդայ են ապաքէն ժամանակին համար որ յառաջ քան զնա, և թերևս կայ չափազանցութիւն յայսմ. ընդհանրապէս խօսելով՝ ճշմարիտ կը թուի սակայն, թէ Ներսէս էր արժանի մեծ անուանն, որով յորջորջի նա ի բովանդակ պատմութեան Հայոց:

7. Այսոքիկ են ներքին ուղղութիւնք որ գործեցան ի սկզ-

ցան թագաւորութեանն Արշակայ։ Գանք այժմ արտաքին քաղաքականութեան նորա։ Արդէն ցուցուցաք, և է արդարև հաւանականագոյն, թէ երկու մեծ դրացի տէրութեանց հաճութեամբ առաւ Արշակ զիւր հայրենի թագաւորութիւնն որ արդէն ջնջուած էր, և զայս առնել հաճեցան, ինչպէս հաւանական է՝ Կոստանդ և Շապուհ, որ էին անդուլ ի պատերազմի ընդ միմեանս, յուսով կորզելոյ իւրաքանչիւր յիւր կողմն զՀայս, ուստի և բնական էր որ երկուքին ևս, գէթ առ երեսս, սիրով և բարեկամութեամբ գնային ընդ Արշակայ։ Կոստանդ յայտնեց այս բարեկամութիւնն ոչ միայն արձակելով զպատանդսն զորս տուած էր Տիրան, այն է զերկուսին եղբօրորդիս Արշակայ զԳնէլ և զՏիրիթ, այլ և տալով նմա կին յօրիորդաց անտի կայսերական պալատանն զՈղոմպիա։ Բուզանդ զարձակումն պատանդիցն կ'ընծայէ Վաղեսի, յայտնապէս շփոթելով զՎաղէս ընդ Կոստանդայ, ինչպէս կը շփոթէ զՆերսեհ ընդ Շապհոյ։ Ըստ Բուզանդայ՝ Վաղէս յետ աքսորելոյ զՆերսէս որ ղրկուած էր առ նա հրեշտակութեամբ՝ որպէս թէ ի շնորհուկս Արշակայ կ'արձակէ պատանդներն.—«Այս վասն խաղաղութեան ուխտին միաբանութեան դաշինն որ էր աշխարհին Հայոց ընդ կայսեր Յունաց՝ դէպ եղև առաքել զմեծ կաթողիկոսն Հայոց Ներսէս և ի մեծամեծացն Հայոց սատրապս տասն։... Իսկ թագաւորն Վաղէս արգել աքսորեաց զՆերսէս, և փոխանակ նորա արձակեաց զեղբօրորդիս թագաւորին Արշակայ զԳնէլ և զՏիրիթ» (Բուզ. Դ. Ե.)։ Կարգ պատմութեանն կը պահանջէ սակայն դնել զարձակումն պատանդիցն ի սկզբան թագաւորութեանն Արշակայ, ուստի և ի Կոստանդայ և ոչ ի Վաղեսէ։ Նոյնչափ և աւելի ևս սխալ է դնելն Բուզանդայ զամուսնութիւնն Ողիմպեայ կնոջ Արշակայ յետ առնլոյ զՓառանձեմ։ Ըստ Բուզանդայ՝ Արշակ յետ առնլոյ կին զՓառանձեմ, երբ չսիրուեցաւ ի նմանէ՝ ղրկեց բերել տուաւ կայսերական տոհմէ զՈղիմպիա ի կնութիւն.—«Էառ իւր Արշակ կին զՓառանձեմ. և որչափ սիրէր արքայն Արշակ զկինն՝ նոյնչափ ատեաց կինն զարքայն Արշակ, ասելով թէ թաւ է մարմնով և թուխ է գունով։ Այս իբրև կինն ի նա ոչ յանդոյց զմիտս իւր՝ առաքեաց արքայն Արշակ յերկիրն Յունաց, և խնդրեաց էած անտի կին ի կայսերական տոհմէն, անուն նորա Ողոմպի» (Բուզ. Դ. ԺԳ.)։ Չէ նախ հաւանական, թէ Ողոմպիա կը տրուէր կին Արշակայ, եթէ Արշակ էր արդէն ամուսնացեալ։ Երկրորդ անգամ՝ գիտենք այլուստ, թէ Ամբղաւիոսի ուրումն անձնապահապետի դուստր էր Ողոմպիա, խօսեալ Կոստասայ, և Կոստանդ տուաւ զնա կին Արշակայ։ Աթանաս կը պարսաւէ զԿոստանդ, թէ բարբարոսաց տուաւ

զՈղոմպիա, զոր խօսեալ էր ինքեան Կոստաս և մինչև ի վախճան իւր պահեց զնա և կը սնուցանէր՝ որպէս զի առնէր զնա կին։ (Աթան. Թուղթ առ միայնակ. առ Գոթըրճ. Տիեզ. պատ. Հտ. Բ. էջ 490, ծան. 3)։ Յայտ է ուրեմն, թէ այս ամուսնութիւն ևս եղաւ ի սկզբան թագաւորութեանն Արշակայ, ի կողմանէ Կոստանդայ. թերևս աւելի պնդով կապելու համար ընդ ինքեան զԱրշակ, և ոչ ի խնդրոյ Արշակայ, և որպէս կարգ պատմութեանն կը պահանջէ՝ յառաջ քան զառնուլն Արշակայ զՓառանձեմ։

8. Շապուհ որ կը գիտէր զգործս Կոստանդայ, մանաւանդ զխնամենալն նորա ընդ Արշակայ՝ խորհեցաւ ինքն ևս կապել զնա ընդ իւր այլ իմն օրինակաւ, ուստի հրաւիրելով զնա յարքունիս իւր, ուր մեծ պատուով ընդունեցաւ Արշակ՝ դրաւ ընդ նմա ուխտ, երդմնցունելով զնա յԱւետարանն։ Հոս կը պատմէ Բուզանդ Արշակայ սպարապետին Վասակայ հաւատարմութեան և համարձակութեան գործը, թէ ինչպէս սպանեց նա Շապհոյ ախոռապետն անարգելոյն համար զԱրշակ, և գովուեցաւ այս անվեհերութեանն համար ի Շապհոյ։ Բայց Արշակ յետ դնելոյ զուխտն՝ խոյս կու տայ գաղտ թելադրութեամբ սպարապետին իւրոյ Վասակայ, և Շապուհ վրէժխնդրութեան համար կու տայ սպանանել զՄարի, երէց եկեղեցւոյն Տիզբոնի որ առած էր Արշակայ երդումը, և կը յարուցանէ հալածանս ընդդէմ քրիստոնէից.—«Յայնմ ժամանակի կոչէր առ ինքն Շապուհ արքայն Պարսից զթագաւորն Հայոց զԱրշակ, որ մեծարեցաւ ի նմանէ բազում պատուով և մեծաւ փառօք, բազում գանձու ոսկւով և արծաթով և ամենայն մեծութեամբ թագաւորութեանն, և իբրև զեղբայր, որպէս որդի գրգեալ եղև ի նմանէ, և երկրորդական զմեծ տունն տայր նմա յԱտրպատական աշխարհին, և ի միասին ի միում տախտի գահուն ի ժամ ուրախութեանն բազմէին, զմիագոյն զմիանշան զհամահանդերձ զարդու։ Եւ զմիօրինակ զթագն օրըստօրէ ինքեան և նմա թագաւորն Պարսից զարդ պատրաստէր, զոյգ երկոքին ի միասին որպէս զեղբարս հարազատս անբաժինս յղփացեալք էին ի միում ուրախութեան, և յանպատում ուրախութեան ուրախ լինէին։ Ապա եղև օր մի յաւուրց, եկն եմուտ թագաւորն Հայոց Արշակ շրջել զասպաստանաւ միով զարքային Պարսից. իսկ ախոռապետն արքային Պարսից նստէր ի ներքոյ ի տան ասպաստանին։ Իբրև տեսանէր զթագաւորն՝ ոչինչ առ լուս կալեալ մեծարեաց զնա, և ոչին շուքս դնէր նմա, այլ և անարգանս ևս դնէր թշնամանաց, ասելով ի պարսկերէն լեզու, թէ Այծից Հայոց արքայ, եկ նիստ ի խրձան խոտոյ վերայ։ Զոր բանս իբրև լսէր սպարապետն զօրավարն Հայոց

Մեծաց որում Վասակն կոչէր, ի Մամիկոնեան տոհմէն՝ մեծաւ բարկութեամբ և բազում սրտմտութեամբ բարկանայր. ի վեր առեալ զուսերն զոր ընդ մէջ ունէր՝ հարեալ անդէն ի տեղւոջն զախոռայետն արքային Պարսից գլխատէր ի ներքս յասպաստանի անդ: Զի ոչ կարաց լսել և ժոյժ ունել իւրոյ թագաւորին զանարգանս. զիւր մահն առաջի եդեալ լաւ հաշուէր բազում անգամ՝ քան զտեառն իւրոյ լսել զվատթարութեան թշնամանս: Իբրև ի Պարսից աշխարհին էին, յայլոց ի տեղի և ի նոյուն Հրապարակի՝ աներկիւղ և անկասկած յանկարծօրէն զայսպիսի զգործ կարաց գործել: Իսկ թագաւորն Պարսից յորժամ զայս լսէր՝ բազում շնորհ ունէր զօրավարին Վասակայ, ընդ քաջարտութիւնն զարմացեալ և ընդ բազում աներկիւղութիւնն: Եւ բազում պարգևաց և պատուոյ արժանի առնէր, զքաջութիւնն և զտիրասիրութիւնն գովեալ: Վասն այնր իրաց մեծաւ սիրով սիրէր զնա և ըստ արժանի իւրում պատուէր զնա, մեծարէր զամենայն աւուրս հաշտութեանն և խաղաղութեանն որ ի մէջ նոցա էր:

Թ. Այս մինչդեռ անդէն ևս էր արքայն Հայոց առ արքային Պարսից, և մեծ սէր էր ի մէջ նոցա և մեծ խաղաղութիւն՝ երկընչելով երկեաւ թագաւորն Պարսից Շապուհ, եթէ գուցէ ստեսցէ սիրոյն նորա Արշակ արքայ Հայոց և լիցի միաբան ընդ կայսերն Յունաց և կամ կողաքակ ինչ լինիցի ի նմանէ: Եւ ոչ հաւատայր նմա, թէ պահեսցէ առ նա զմտերմութիւն սիրոյն, և կացցէ յուխտին միաբանութեան ընդ նմա: Վասն այսորիկ երդումն պահանջէր ի նմանէ, մինչև կարի ստիպեալ բռնադատեաց զնա. Հաւանեաց, ասէ, և երդուիր ինձ յօրէնս քո, զի մի ստեսցես ինձ: Եւ իբրև կարի բռնադատեցաւ և ի նեղ անգաւ և շտապեալ տագնապեցաւ՝ ետուն հրաման ածել զերիցունս եկեղեցւոյն Տիսպոնի քաղաքի, որում անուն գլխաւորին Մարի. և բերին զԱւետարանն սուրբ, և տայր երդումն արքայն Պարսից Շապուհ արքային Հայոց Արշակայ՝ երդնուլ յաստուածեան Աւետարանն, զի այլ մի ևս ստեսցէ նմա, այլ կացցէ յուխտի նորա և պահեսցէ զդաշինս նորա: Եւ վասն զի պատգամաւոր իրացս այսոցիկ էր տանուտէրն նահապետ Մամիկոնեան տոհմին, երէց եղբայր Վասակայ սպարապետին, որում անուն Վարդան կոչէր՝ մեծապէս արքայ Շապուհ յակն առեալ սիրէր զնա: Իսկ իւր եղբայրն Վասակ զօրավարն Հայոց նախանձ բերէր ընդ երիցու եղբօրն իւրում ընդ Վարդանայ: Կամեցեալ խանգար առնել ի մէջ նորա (Շապհոյ) և Արշակայ թագաւորին Հայոց՝ ետ նմա (Արշակայ) փախչել: Այլ ասէր Շապուհ (ցերիցունսն): Եթէ ձեր սրտի մտօք էր տուեալ զերդումն՝ զիարդ

կարէր նա ըստ հաւանութիւն ելանել երդմանցն և կամ փախչել։ Այլ, ասէ, գիտեմ զի կախարդութեամբ խաբեցէք զիս, և որ ունի զօրէնսն ձեր՝ զնա սիրեցէք, և նենգութեամբ նմա խորհրդակից եղեալ՝ լինէն փախուցէք։ Եւ կամիք դուք զտէրութիւն Արշակունեաց ի վերայ ձեր և զնոյն խնդրէք։ Եւ երդնու արքայ Շապուհ յարեգակն և ի ջուր և ի կրակ, եթէ ոչ մնում մարդոյ որ յայդմ օրէնս քրիստոնէութեան է՝ ոչ տամ ապրել. և հրաման տայր զամենեսեան տանել սպանանել։ Եւ տանէին զգլխաւորն նոցա զՄարի երէց, և զայլ երիցունսն և սարկաւագունսն, աւելի քան զեւթանասուն այր, ի մի դուբ զամենեսեան զնոսա փողոտէին, և զԱւետարանն սուրբ յոր երդուաւ թագաւորն Արշակ՝ կալէր պատէր երկաթի սարեօք, և իւրով մատանեաւ կնքեալ ի գանձատան հրամայէր, և տայր հրաման պահել զգուշութեամբ։ Եւ յորոց հալածանս մեծ Շապուհ արքայն քրիստոնէութեանն հաւատոց, հարկօք և պէսպէս վշտօք նեղէր զնոսա և հարուածովք բազում։ Եւ յետ այսորիկ հրաման տայր ընդ ամենայն տեղիս իշխանութեան իւրոյ, թէ որ միանգամ զանուն քրիստոնէութեան ունիցի յիշխանութեան իւրում՝ զամենայն մարդ միանգամայն հանցեն ընդ սուր և սատակեսցեն։ Ապա բիւրս բիւրուց կոտորէին և հազարս հազարաց, զի այնպէս տուաւ հրաման ի թագաւորէն, զի ամենեւին քրիստոնեայ անուն ի սահմանս նորա մի գտցի» (Բուզ. Դ. ԺԶ, ԺԷ.)։

Ի պատմութեան աստ Բուզանդայ զհալածանաց Շապհոյ Բ. կայ արդարև աւելաբանութիւն։ Գիտենք սակայն այլուստ, թէ առ Շապհով Բ. գրեթէ անդադար հալածումն էր, և ոչ իսկ Կոստանդիանոսի միջնորդութիւնն (333) եղաւ բաւական՝ մեղմացուցանել Շապհոյ հալածանաց խստութիւնը։ Սելեկիոյ եպիսկոպոսն Շմաւոն սպանուեցաւ ուրիշ հարիւր կղերականօք (343), նոյնպէս երկուքին յաջորդք նորա, և աթոռն մնաց դատարկ մինչև 365։ Սոզոմենոս մինչև վեշտասան հազար կը հանէ ծանօթ սպանելոց թիւը։ Ապաքէն ժամանակ ժամանակ կը մեղմանար հալածումն. թերևս յայնժամ ի շնորհս Արշակայ դադրած էր. բայց երբ փախաւ Արշակ հակառակ երդմանն՝ Շապուհ զայրանալով եկեղեցականաց, թէ նենգութեամբ առին զերդումնն՝ նորոգեց հալածումը։ Երկար և սաստիկ հալածումն առ Շապհով, որ կը թուի լինել Շապուհ Բ՝—կը յիշէ և մոգպետն առ Եղիշէի (էջ 101—105), կամ մանաւանդ Եղիշէ որ կու տայ մոգպետին խօսել քրիստոնէաբար. թէպէտ ի վախճանի, ասէ, ձանձրանալով Շապուհ կամ մանաւանդ յաղթուելով քրիստոնէից հաստատամտութենէն՝ շնորհեց ընդհանուր կրօնական ազատութիւն. այլ այս չէ հաւանական։ Այնպիսի ազատութիւն չլի-

ուիր ի պատմութեան ոչ առ Շապհով և ոչ առ յաջորդօք նորա։
Առ Յազկերտիւ Ա. միայն (400—421) դադարեցաւ հալածումն միջ-
նորդութեամբ Հռոմայեցւոց (Թէոդոսի փոքու). բայց 418-ին նորո-
գուեցաւ միւսանգամ, երբ Աբգիաս եպիսկոպոս կործանեց ատրու-
շան մի ի Տօշ։ Առ Վռամաւ Ե. յաջորդաւ նորա (421—442), առ
որով բարձաւ Արշակունեաց թագաւորութիւնն և որ սաստիկ թըշ-
նամի էր քրիստոնէութեան՝ այն աստիճան սաստկացաւ հալածումը,
մինչև ստիպել զքրիստոնեայս։ Թէոդոս Բ. պատերազմաւ դադարե-
ցուց զայն հալածումն յամին 422։

Թէպէտ, ինչպէս հաւանական է, խստութեամբ վարուեցաւ
Շապուհ իւր քրիստոնեայ հպատակաց հետ ի վրէժ փախստեանն
Արշակայ հակառակ երդմանն, զոր նենգութեամբ և ոչ հաւատաւ-
եղած կը համարէր ի կողմանէ զերդումն ընդունող երկյանց՝ ընդ
Արշակայ կը խօսէր քաղցրութեամբ և ողոքով ի ձեռն հրեշտակաց,
ինչպէս պիտի տեսնենք ի ստորև։

10. Այժմ գանք վերստին ի պատմութիւն Արշակայ ներքին
գործոց, զորս, բմբէ, պիտի գտնենք շատ տխուր։ Արշակ տեսնե-
լով թերևս զանձն այնպէս փայփայեալ երկու դրացի տէրութիւն-
ներէն՝ սկսաւ գնալ ամբարտաւանութեամբ ի հեճուկս ոչ նախա-
րարաց միայն, այլև Ներսիսի.—«Զայնու ժամանակաւ Արշակ ար-
քայ Հայոց ոչինչ կարի ի ճանապարհ Աստուծոյ գնացեալ լինէր.
զի որչափ ի մատաղութեան հասակին ըստ աստուածեղէն իմաս-
տութեանն գնացեալ լինէր՝ նոյնչափ յաւագութեանն ի լկտութիւն
և ի շաղաշատութիւն հատաւ» (Բուզ. Դ. ԺԲ.)։ Արշակ տեսնելով
նախարարաց ցրտանալն յիւրմէ, փոխանակ ջանալու շահել զվստա-
հութիւն նոցա՝ ևս աւելի զայրացոյց զնոսա, շինելով յիւրում գա-
ւառին ի Կոգ նոր քաղաք, ուր հրաւիրեց ամէն կարգէ մարդիկ,
ևս և սրիկայս, ի պաշտպանութիւն իւր։ Տրտունջք կը յաճախեն.
կը խրատէ զնա Ներսէս բառնալ զգայթակղութիւնն, բայց ի զուր.
ի փոխճանի կ'ելնայ տարափոխիկ ախտ քաղաքին բնակչաց մէջ. ի
սակաւ ժամանակի լինի քաղաքն գրեթէ անմարդի, և Արշակ հա-
մարելով զերան իբրև աստուածուստ պատիժ՝ կը հաշտուի ընդ Ներ-
սիսի և կը խոստանայ այնուհետև հնազանդել նմա.—«Զայնու ժա-
մանակաւ շինեաց իւր արքայն դաստակերտ մի ի Հովիտն անուա-
նեալ ի Կոգ գաւառի»։ Բուզանդ շատ տխուր կը նկարագրէ այս
քաղաքը։ Յետ ասելոյ, թէ Արշակ հրաման հանեց բոլոր անզգամ
մարդոց գալ բնակել անդ՝ ասէ. «Եւ ժողովեցան յայն տեղի ամե-
նայն գողք և աւազակք, արիւնահանք, սպանողք, սուտք և մար-
գելոյզք, վնասակարք, գանձահատք, զրկողք, ստոդատք, զրախօսք,

գերփողք, յափշտակողք, ժլատք։… Իսկ տեղին ուանանայր, քաղաքանայր, մեծացաւ, բազմացաւ և ելից զհովիտն ամենայն։ Այսպէս Հրաման արքայն Արշակ դնել անուն գաւառակերտին լիւրակից անունն Արշակաւան, և շինեցին ես անդ ապարանս արքունի։ Ամենայն մարդ զրկեալ էր իրօքն այնոքիւք, և բազմաց հառաչ աղաղակի տրտնջելոյն յաճախեալ բազմանայր։… Այլ Հայրապետն Ներսէս իբրև լսէր զամենայն անօրէնութիւնս չարութեան ծուլ գնացիցն Թագաւորին՝ տրտմէր, լայր, ողբայր և կոծէր մեծամեծ հեծեծանօք, մանաւանդ վասն քաղաքին Արշակաւանին, զի անօրէնութեամբ և չարութեամբ և յափշտակութեամբ շինեցաւ բազում մեղօք։ Այսպէս սուրբ Հայրապետն Ներսէս մտանէր առ Թագաւորն, խօսէր ընդ նմա… իսկ Թագաւորն ծաղր առնէր զբանս կաթողիկոսին, և մկթայր զնորա ասացեալսքն։… Եւ մատնեաց Տէր զգիւղաքաղաքն զԱրշակաւանն ի ձեռս հարուածոց, և սկսաւ հատանել զոր չարակեղն իմն կոչէն, իսկ կէսքն ժանտ անուանեն, ելանէր ի վերայ մարդկանն և անասնոց»։ Բուզանդ որ այս հարուածը կ՚ընծայէ անիծիցն Ներսխի՝ իբր երեք աւուր մէջ անմարդացեալ կը պատմէ բոլոր քաղաքը.—«Ոչ աւելի, ասէ, քան զերիս աւուրս յերկարեցաւ, զի անմարդացաւ. քան զքսան հազարք ստակեցան երդք մարդկան, առհասարակ սատակեցան կոտորեցան յանկարծօրէն քանդեցան, զի միահաղոյն եկն սատակումն ի վերայ նոցա։ Յետ այնորիկ ինքնին Թագաւորն ելանէր ի խնդիր Հայրապետին Ներսխի, և գտեալ՝ խնդրէր ի նմանէ, զի մատուսցէ աղօթս վասն նորա, զի մի գուցէ և նա սատակեսցի, քանզի զարհուրեալ էր։… Ի գունձս հարեալ մեծաւ աղաչանօք և բազում աղօթկերօք աղաչէր Թագաւորն հաշտել ընդ նմա. և եդ ուխտ զի այլ ոչ ևս երբէք անցցէ զբանիւք նորա» (Բուզ. Դ. ԺԳ.)։ ԶԱրշակաւանէն խօսեցանք այլուր։

Բայց այս խոստումն Արշակայ չտևեց երկար։ Արշակ գործեց աւելի մեծ անիրաւութիւն. Թէպէտ յայսմ չունէր Արշակ յանցանս բաց ի դիւրահաւանութենէն՝ սակայն պարտ էր նմա անսալ գէթ խրատուն Ներսխի, ըստ որոյ Հրաման խոստացած էր չելանել։

11. Վերագոյնն յիշեցաք Փառանձեմ զումն, իբրև երկրորդ կին կամ հարճ Արշակայ. տեսցուք այժմ, թէ ո՛վ և ո՛րպիսի կին էր սա։ Փառանձեմ դուստր էր Անդովկայ նահապետին Սիւնեաց, նշանաւոր գեղեցկութեամբն, այլ ոչ նոյնպէս բարուցն լաւութեամբ։ Զսա արարեալ էր կին եղբօրորդին Արշակայ Գնէլ զոր յիշեցաք ի վերոյ. բայց Տիրիթ միւս եղբօրորդին Արշակայ, հարեալ ի սէր կնոջն՝ խորհեցաւ հնարս կորուսանել զԳնէլ, զի թերևս լինէր նմա

Հնար առնուլ զկին նորա յետ մահու առն նորա։ Այս խորհրդով շահեալ զոմանս ի մտերմաց արքայի, յորոց մին կը թուի թէ էր Վարդան Մամիկոնեան՝ սկսաւ ի ձեռն նորա մատուցանել քսիս ամբաստանութեան զԳնելայ առ արքայ, որպէս թէ Գնէլ ի խնդիր էր սպանանել զնա և առնուլ զթագաւորութիւնն, և այսմ պատճառ կը ցուցնէին մեծ սէրը զոր ունէին նախարարք առ Գնէլ։ Չէ բոլորովին անհաւանական, թէ գէթ ոմանք ի նախարարաց կամէին զթագաւորելն Գնելայ, որ ինչպէս կ'երևի, ըստ ներքին և արտաքին հանգամանացն՝ չէր անարժան թագաւորելոյ։ Չերևէր սակայն, թէ կար, գէթ ի կողմանէ Գնելոյ, յայտնի ինչ նշան թեկնածութեան ի թագաւորութիւն, մանաւանդ թէ ըստ աւանդութեան իրիք (Խոր. Գ. ԻԲ.)՝ Գնէլ զգուշացաւ յամենայնէ որ կրնար տալ կասկած Արշակայ։ Արշակ հաւատալով քսութեանց թշնամեացն Գնելոյ, կամ մանաւանդ բարեկամաց Տիրիթայ՝ կը խնդրէր կորուսանել զպատանին.—«Զայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ ուրումն նահապետի Սիւնեաց որում անուն Փառանձեմ կոչէր, կարի անուանեալ գեղեցկութեամբ։ Ապա Գնէլ պատանեակն, եղբօրորդի արքային, էառ զնա կնութիւն իւր։ Եւ համբաւ գեղեցկութեան աղջկանն ընդ վայրսն տարածեցաւ, և համբաւ գեղոյ նորա յաճախեալ բազմանայր և հնչէր։ Ապա առ համբաւ ցանկութեան անուանն տարփեալ լինէր մին ևս հօրեղբօրորդին Գնելոյ որում անուն Տիրիթ կոչէր։ Վասնորոյ անկանէր ի գաղտագողոնս, մինչ զի զնուն իւր տեսանել կարասցէ։ Եւ յորժամ կարացն տեսլեանն որում ցանկայր՝ այնուհետև հնարս խնդրէր առն կնոջն կորստեան. ո՛ գիտէ զկնի նորա նմա հնար լիցի յափշտակել։ Ապա Տիրիթն ի հնարս նենգութեան մտանէր, և բազում վարձէր իւր օգնականս և սատարս, որով զիւր չարախօսութիւնն յառաջ վարել կարասցէ։ Եւ քսիս ստութեան զԳնելոյն նենգութեամբ առ թագաւորն Արշակ մատուցանէր, թէ Գնէլ թագաւորել կամի և զքեզ սպանանել. և ամենայն մեծամեծք և նախարարք և ազատք սիրեն զԳնէլ, և ամենայն աշխարհիս նախարարք կամին զտէրութիւն նորա ի վերայ իւրեանց առնել քան զքո։ Արդ, ասեն, գիտես և տես, արքայ, զինչ գործեսցես, որպէս և կամիս, զի մի՛ մարթասցիս ապրել։ Եւ այսպիսի բանիւք գրգռէին զթագաւորն Արշակ, մինչև հաստատէին ի միտս թագաւորին զիւրեանց ասացեալսն։ Ապա ոխացեալ թագաւորն ընդ պատանեկին Գնելոյ՝ և բազում անգամ հալածական առնէր զնա և նիւթեալ լինէր նենգութիւն բազում ժամանակս» (Բուզ. Դ. ԺԵ.)։

Նաւասարդի ժամանակ կը կատարուէր ի Բագաւան ի յիշա-

տօկ սրբոյն Յովհաննու տօն մեծ որ էր կարգեալ ի սրբոյ Լուսաւորչէն։ Արշակ և Ներսէս էին ի բանակին ի Շահապիվան որ մօտ էր ի Բագարան, և Գնէլ էր ի գեւղն անուանեալ Առաւիւտոյ, որ չէր հեռի ի Շահապիվանէ։ Էր գիշեր, և կը կատարուէր պաշտօն նաւակատեաց տօնին, ուր առաջիկայ էր Ներսէս հանդերձ բազմութեամբ եկեղեցականաց։ Արշակ դիպող համարեցաւ տօնին պատճառաւ հրաւիրել զԳնէլ ընտանեօք ի բանակն, և կատարել սպանման խորհուրդը զոր կ'երկնէր ի վաղուց։ Վարդան կը զրկուի հրաւիրակ, և Գնէլ կու գայ համօրէն տամբն առաւօտուն մօտ, և զօրքն որ յառաջագոյն պատրաստուած էին՝ կը բռնեն զԳնէլ, որ իսկոյն կը տարուի կառափման տեղն, որ մօտ էր ի Շահապիվան, և կ'սպանուի։ Ի զուր կը բողոքէ կինն առ Ներսէս, որ մըտնելով առ Թագաւորն ի վրանն՝ կ'աղաչէ ընդ վայր. հրամանը կը կատարուի իսկոյն։ Այս եղերական գործը կը պատմէ Բուզանդ երկար և արդարև վիպասանական ոճով. — «Զնաւասարդայ ժամանակօքն առնէր խորհուրդ Թագաւորն Արշակ կոչել առ ինքն զպատանեակն Գնէլ և սպանանել։ Առաքէր զՎարդան զեղբայր սպարապետին զնահապետ Մամիկոնեան տոհմին՝ մեծաւ երդմամբ և նենգութեամբ կոչել, զի մի խորհուրդն յայտնեսցի, գուցէ փախիցէ և ապրիցի։ Եւ էր բանակ Թագաւորին ի Շահապիվանի, ի բուն բանակի տեղւոջն Արշակունեաց, ի վերայ ասպարիսացն։ Վարդան եկն եգիտ զպատանեակն Գնէլ ի մօտաւոր տեղւոջն, ի գեւղն Առաւիւտոյ անուանեալ։ Մեծաւ ուխտիւ և բազում պատրանօք զպատանեակն Գնէլ հանդերձ իւրով կնաւն և դրամբն հաւանեցուցանէր երթալ ի բանակն արքունի։ Թագաւորն Արշակ, ասէ, ոչ կամեցաւ զտօնս նաւասարդայ առանց քո անցուցանել, զի հաճեալ և քաղցրացեալ է ընդ քեզ, վասն զի ըստ բանից չարախօսացն ոչ ինչ գտաւ ի քեզ չարութիւն. և եհաս ինքն ի վերայ, զի զուր ցայժմ ատէր զքեզ որ ի նմանէն մեծ սիրոյ արժանի ես։ Ապա չուեալ ամենայն կազմութեամբ իւրով Գնէլ, երթեալ հասանէր ի բանակն արքունի զգիշերն ամենայն բազում փութով տագնապաւ, վասն զի վաղիւն հասելոյ առաւօտուն օրն լուսանայր կիւրակէն, և յայնմ աւուր տօն դիպեցաւ յիշատակի մեծին Յովհաննու, որ ի Գրիգորէ և ի Տրդատայ յաւանին Բագաւանին կարգեալ էր... Եւ յայնմ գիշերի ցայգապաշտօն մեծ եղև ի բանակին առ կաթողիկոսին։ Իբրև առաւօտն ծագեաց՝ հասանէր վաշտն Գնելոյ ի բանակն արքունի. և մինչ Գնէլն արքունական բանակին լինէր միջամուխ՝ ազդ լինէր Թագաւորին եկն նորա։ Ապա ելանէր հրաման յարքունուստ՝ արտաքս ունել զնա և տանել սպանանել։ Եւ մինչդեռ գայր նա

ընդ բանակամէջն, էր հեծեալ յերիվարին իւրում. իբրև մերձ եղև
ի Հրապարակին արքունի՝ և անդ յարքունուստ հասանէին բազում
սպասաւորք վառեալք, սուսերաւորք, նիզակաւորք, վաղրաւորք,
սակրաւորք, ռունաւորք և սպարակիրք հետևակք, որք մատու-
ցեալք բուռն հարեալք ընկենուին յերիվարէ անտի զպատանեակն
Գնէլ, և ձեռն յետս կապէին զնա և առեալ գնային ի տեղի կա-
ռափելոյն։ Եւ քանզի կին նորա եկեալ էր ընդ նմա ժանուաւ՝ ի
նմին ի նորին վաշտու էր ընդ առն իւրում. իբրև տեսանէր թէ
կալան զայր իւր և կապեցին՝ փաղփաղակի ընթացաւ յեկեղեցախո-
րանն ուր պաշտօն մարդկան բանակին առ Աստուած կատարէր,
մինչդեռ առաւօտին աղօթքն մատչէին, և անդ մեծն Ներսէս
եպիսկոպոսապետն։ Իսկ կինն հասեալ առ արքեպիսկոպոսապետն՝
գոյժ արկանէր զիւրոյ առնն տարապարտ կորուստն, ճչեալ մեծա-
ձայն. Վաղ հասիր, ասէ, դեռ զամուսինն իմ զուր առանց վնասու
և յանցանաց խողխողեն։ Իսկ նորա խափանեալ զպաշտօնն՝ ընթա-
նայր ի խորանն արքունի. հասեալ ի դրացն ի ներքս առ թագա-
ւորն անդանէր։ Իսկ թագաւորն իբրև տեսանէր զմեծ քահանայա-
պետն, գիտացեալ զբարեխօսութիւն համոզելոյն վասն առնն մահ-
ուանն զի մի մեռցի՝ զիւր սամոյրսն զգլխովն ածեալ, ի մորթ
կնջանն մտեալ, զիւր դէմս երեսացն ծածկէր, քնոյ պատճառ ե-
ղեալ, զի զնորա բանսն մի լուիցէ։ Սուրբն Ներսէս մատուցեալ բուռն
հարկանէր զթագաւորէն խօսել ընդ նմա։ Իսկ թագաւորն սալա-
ցեալ ոչինչ լսէր. զերեսն փառատօքն ծածկեալ՝ ոչ բանայր և ոչ
կամէր առնել բանիցն պատասխանի, այլ ընկողմնեալ պառեալ
ծածկեալ կայր ի գահոյսն, զի և շարժել անգամ ոչ տայր։ Եւ
մինչդեռ նա բանս ողոքոյ ընդ թագաւորին խօսէր՝ գայր արքու-
նուստ դահճապետն Երազմակ ի խորանն արքունի, սկսանէր պատ-
մել. Ի գլուխ հանի, կատարեցի, ասէ, զամենայն հրամանս ար-
քունի. առի գնացի զԳնէլ, տարայ մինչև յորմ Սիւսին, սպանի և
անդէն թաղեցի։... Արդարև զպատանեակն Գնէլ առնուին գնային
մօտ ի Սիւսն արքունի, և անդէն կառափէին ի սարակ լերինն,
որում տեղւոյն Լսին անուանեալ է, մօտ յորմածս արգելոցացն որ-
սոյն էրէոց, ընդդէմ մուրտաստանին աղբերացն բազմոցացն ար-
քունի, յանդիման բանակետեղ ընին։ Ապա հրաման եղև յարքայէն.
ամենայն մարդիկն որ իցեն ի բանակին, մեծ և փոքր առհասա-
րակ՝ մի ոք իշխեսցէ չերթալ, այլ ամենայն ոք առհասարակ եր-
թիցեն դիցեն աշխար կոծոյ և լացցեն զԳնէլ մեծ սեպուհն Ար-
շակունի զսպանեալն։ Իսկ ինքն թագաւորն գնացեալ ի լալին՝
նստեալ լայր գեղբօրորդին իւր զոր ինքն եսպան։ Երթեալ նստէր

մօտ առ դին, լայր ինքն և տայր հրաման կոծ մեծ և աշխար դընել շուրջ զսպանելով զդիակամբն։ Իսկ կին սպանելոյն, Փառանձեմն, զհանդերձսն պատառեալ, զգէսս արձակեալ, մերկատիտ ի մէջ աշխարանին կոծէր. ձայն արկանելով ճչէր, յորդս արտասուաց աղիողորմ գուժի առհասարակ զամենեսեան լացուցանէր։ Իսկ թագաւորն Արշակ ի լալիսն տեսանէր զկին սպանելոյն, տոփէր և ակն դնէր առնուլ զնա իւր կնութիւն» (Բուզ. ԺԵ.)։ Այսպէս Արշակ ոչ միայն կու տայ սպանանել զանմեղն, այլ և չնական լըրբութեամբ կ'երթայ դնել կոծ առ դիակամբ նորա երբև ընդ հենդն և' ազգին, և' Ներսէսի։ Արշակ նմանեցաւ արդարև Դաւթի, որ սպան զՈւրիա և առ զԲերսաբէէ. այլ իցի՛ւ նմանէր և ապաշխարելոյն. վասնորոյ լսեց վճիռը զոր Բուզանդ կը դնէ ի բերան Ներսէսի. «Այլ դու, Արշակ, փոխանակ զի զգործս Կայենի գործեցեր՝ զանէծսն Կայենի զգեցջիր. անկջիր կենդանւոյն ի թագաւորութենէդ քումմէ, և չարչարեսցիս առաւել քան զՏիրան հայր քո, և զառն մահուամբ զկեանս քո յերկրէս մեծ նեղութեամբ վճարեսջիր». բայց չլսեց ապաշխարելոյն աւետիսը, թէ «Եւ Տէր անցոյց զքև զմեղս քո»։ Եթէ ոչ կանխասացութիւն՝ գէթ զարմանալի նախատեսութիւն է և այն, զոր Բուզանդ կու տայ նոյն առթիւ ասել Ներսէսի բանիւ մարգարէին. «Ըմպել ազգին Արշակունեաց զլեղին բաժակն, ըմպել արբենալ և կործանել, և այլ մի՛ ևս կանգնել։ Ո՜վ, ի՜նչ ահաւոր է իշխանի, իւր և իւր սերնդեան համար, փոխանակ լինելոյ պաշտօնեայ արդարութեան առ որ սահմանեալ է՝ լինել գործի անիրաւութեան։ Բայց մենք մատչինք յառաջ։

12. Մինչ այս կոծը կը կատարուէր՝ Տիրիթ, որ չէր գիտեր թագաւորին խորհուրդը՝ կը ղրկէ պատգամ առ կին սպանելոյն, թէ Մի տրտմիր. ես կ'առնում զքեզ. միթէ չե՞մ լաւ քան զԳնել։ Փառանձեմ կը հռչակէ Տիրիթայ պատգամը, և ձայնարկուք կ'սկըսին երգել։ Արշակ իմանալով Տիրիթայ նենգութիւնը՝ կը զայրանայ յոյժ, բայց կը լռէ առժամն։ Յետ աւուրց ինչ Տիրիթ կը խնդրէ թագաւորէն հրաման առնուլ զՓառանձեմ կնութեան։ Արշակ կը հասկնայ, թէ ինչ որ լսած էր զՏիրիթայ՝ էր ճշմարիտ, ուստի կ'որոշէ սպանանել զնա. Տիրիթ իմանալով կը փախչի, բայց բռնուելով կ'սպանուի.—«Իսկ որ զնենգութիւն քսութեանցն նիւթեաց և դաւով ի վերայ իւրոյ հարազատին սպանութիւնս կատարեաց՝ զՏիրիթն ասեմ, որ յառաջագոյն հարեալ էր ի կնոջն յայնմիկ՝ սկսանէր ժոյժ չունել տռփանայն, և մինչդեռ կոծն սաստկացեալ էր՝ պատգամ յղէր առ կին մեռելոյն, ասէ. Մի կարի զանձն քո աշ-

խատ առնէր այնչափ, զի այր բարի ես եմ քան զնա. ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մատնեցի զնա ի մահ, զի զքեզ առից ինձ կնութեան։ Արդ մինչդեռ կոծ մոլութեան զգլխակամբն ջայլէին՝ զայսպիսի պատգամս առաքէր Տիրիթն առ կինն, որ բողոք բառնայր, թէ Լուարուք ամենեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղև, զի որ ինձ ակն եդ՝ վասն իմ զայրն իմ ետ սպանանել։ Զհերն փետէր, ճչէր ընդ կոծեալն։ Ապա իբրև իրքն համարձակ յայտնեցան ի լսելիս ամենեցուն և ի ձայնարկուսն ամենայն՝ եղև նա մայր ողբոցն, և ձայնարկուքն ամենայն ի ձայն ողբոցն սկսան նուագել զկիս տափանացն Տիրիթայ, զակն դնելն, զքսութիւնն, զհնարս մահու նիւթել, զսպանումն. ձայնիւքն մրմնջոցն ի վերայ սպանելոյն ի մէջ կոծոյն բարբառէին գեղգեղեալ խանդաղատութեամբ։ Այսպէս իրն յայտնեալ հռչակ հարկանէր։ Իբրև լուաւ թագաւորն Արշակ և եհաս ի վերայ իրացն՝ զարմացեալ լինէր, արմանայր ընդարմանայր, տարջացեալ ի միտ առնոյր զիրսն։ Ապա խօսել սկսանէր թագաւորն, ծափ զծափի հարեալ մեծաւ զգչմամբ ընդ իրսն զոր գործեաց, ասէ. Վասն զի ի կնոջն Գնելոյ անարժան սիրով հարաւ Տիրիթն՝ առ այնմ զչարիսն նիւթեաց, զքսութիւնն, զմահուն զոռութիւն զուր և տարապարտ, և զմեզ ևս արդար արեանն չաղախեաց վասն իւրոյ պղծութեանն. զեղբայրն իւր ետ կորուսանել, և զանհնարին չարիսն և զանէծս, որ ոչ անցանեն՝ ետ մեզ ժառանգել։ Իբրև այսպէս հասանէր թագաւորն յիրացն հաստատութեան վերայ և ճշգրտէր զիրսն՝ խլխլեալ անսայր բանին առ ժամանակ մի։

13. Իսկ իբրև զմեռեալն ծածկեցին անդէն ի տեղւոջն յորում սպանաւն, և աւուրք հարուստ անցին ի վերայ իրացն գործելոյ՝ պատգամ յղէր Տիրիթն առ թագաւորն. Կամ լիցի, ասէ, քեզ արքայի, զի հրաման տացես, զՓառանձեմ կին Գնելոյ թող առից ինձ կնութեան։ Զոր իբրև լուեալ արքային՝ ասէ. Արդ հաստատ գիտեմ, թէ զոր լուայն ստոյգ է. վասն կնոջն իւրոյ եղև մահն Գնելոյ։ Եւ անդէն արքայն մահ խորհէր, սպանանել զՏիրիթ ևս փոխանակ ընդ մահուն Գնելոյ։ Զոր իբրև լուաւ Տիրիթ՝ զահի հարեալ յարքայէն, գիշերի փախստական լինէր։ Ապա ազդ լինէր թագաւորին Արշակայ փախուստն Տիրիթայ. տայր հրաման թագաւորն Արշակ ազատագունդ բանակին զհետ լինել Տիրիթայն, զի իբրև հասցեն նմա՝ անդէն ի տեղւոջն սպանցեն։ Բազումք և քաջք զհետ լինէին փախուցելոյն Տիրիթայ. ապա երթեալ հասանէին ի գաւառին Բասենոյ ի մէջ մայրեացն, ի տեղւոջն յորում հասանէին՝ անդէն զՏիրիթն սպանանէին»։

14. Արշակ կ'առնու կին զՓառանձեմ, որ կը ծնանի նմա

զՊապ, և նախանձելով ընդ Ոզոմպի՝ կու տայ սպանանել զնա Մըր-ջիւնիկ անուն չար երիցու, հաղորդութեան հացին հետ խառնել տալով թոյն.—«Եւ յետ այսորիկ էառ իւր Արշակ զկին սպանելոյն զՓառանձեմն: Եւ որչափ սիրէր արքայն Արշակ զկինն՝ նոյնչափ ատեաց կինն զարքայն Արշակ, ասելով, թէ Թաւ է մարմնով և թուխ է գունով:... Բայց ծնաւ ապա Փառանձեմ թագաւորին ուստր մի, և կոչեցին զանուն նորա Պապ, և սնուցին զնա և ի չափ հա-սուցին: Եւ իբրև ջրթափեաց և եղև հուժկու՝ ետուն զնա պա-տանդ ի դուռն կայսերն յերկիրն Յունաց: Իսկ Փառանձեմն մեծ նախանձու և ոխութեամբ գնայր ընդ Ոզոմպինոյն, և խնդրէր սպա-նանել զնա դեղովք: Իբրև ոչինչ հնարս մեքենայից կարէր գտա-նել,—վասն զի անձին իւրում կարի զգոյշ կայր նա, մանաւանդ ի կերակրոց և յըմպելեաց, բայց զիւրոց նաժշտացն կերակուրս արա-րեալ և զնոցին պարգեալ զգինի ճաշակէր,—ապա զդրան երէց ումն արքունի Մրջիւնիկ անուն, յԱրշամունեաց տեղեացն ի նահանգէն Տարօն գաւառէն, զնա ի բանս արկանէր Փառանձեմն անօրէն: Զանարժանս, զանկատար, զանջնջելի չարեաց մեղաց, չմոռացական տանջանաց կատարեաց նա զգործ, զանարժան, զանտես, զանլուր, որ ուրեք երբէք յումեքէ ի վերայ երկրի ոչ գործեցաւ: Ընդ տէրու-նական ընդ սուրբ ընդ աստուածական մարմինն, ընդ հացն օրհ-նաց խառնէր զդեղն սատակման երէցն Մրջիւնիկ, տայր յեկեղե-ցւոյն Ոզոմպիայ տիկնոջն և սպանանէր, և յանօրէնն Փառանձե-մայ պարգև առնոյր զգեւղն որում անուն Գոմկունք կոչի, ուստի իսկ ինքն էր, ի նահանգէն Տարօն գաւառէն» (Բուզ. Անդ):

15. Ներսէս, որոյ միջնորդութիւնն առ Արշակայ վասն Գնելոյ չեղաւ լսելի՝ մեկնեցաւ տրտմութեամբ ի թագաւորէն և այլ ևս չտեսաւ զերեսս նորա, ասէ Բուզանդ. ուստի Արշակ տուաւ փո-խանակ նորա ձեռնադրել կաթողիկոս զԶօնակ ումն, բայց բաց յե-պիսկոպոսաց Աղձնեաց և Կորդուաց՝ ոչ այլ ոք յեպիսկոպոսաց եկաւ ի ձեռնադրութիւնն.—«Այլ սուրբ կաթողիկոսն Ներսէս այլ ոչ ևս յաւել տեսանել զերեսս թագաւորին Արշակայ մինչև յօրն նորին կորստեան. այլ փոխանակ Ներսիսի զԶունակ ումն անուն կացուցին գլուխ քրիստոնէութեանն. և էր ստրուկ ի ստրկաց արքունի: Ապա Հրաման տայր թագաւորն կոչել զամենայն եպիսկոպոսս Հայոց աշ-խարհին, զի եկեսցեն ձեռնադրեսցեն զԶօնակն ի կաթողիկոսութիւն Հայոց: Եւ ոչ մի ոք ոչ հաւանեաց գալ. բայց միայն Աղձնեաց և Կորդուաց եպիսկոպոսք եկին և զԶօնակն ձեռնադրեցին կաթողիկո-սութիւն ըստ Հրամանի թագաւորին: Եւ էր Զօնակն այն զգօն, և

ոչ ինչ ունէր լեզու յանդիմանութեան կամ խրատու, այլ հաւանեալ էր թագաւորին զինչ և նա գործիցէ» (Բուզ. Դ. Անդ)։

16. Յետ գնալոյ սրբոյն Ներսիսի ի բանակէն արքունի, ասէ Բուզանդ, Արշակ սկսաւ ևս խմն աւելի համարձակ գործել։ Նախարարներէն զորս միանգամ կամէր՝ կոտոր սպանանել. զԿամսարականս, որ էին ազգականք թագաւորին՝ գրեթէ ջնջեց ազգովին, գրաւեց զերկիր նոցա յարքունիս և շինեց յերկրին նոցա յԱրշարունիս բերդ ամուր, այն է զբերդն Արտագերից, որ այլ է ի հին բերդէն Արտագերից առ Եփրատաւ, վաղուց կործանեալ ի Հռոմայեցւոց. —«Ի ժամանակին՝ յորժամ մերժեցաւ յարքունական բանակէն սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս՝ ոչ ոք գոյր ընդդիմացեալ թագաւորին որ տայր նմա զյանդիմանութեան զխրատն. այնուհետև ըստ կամաց չարութեան իւրոյ գնացեալ լինէր նա. և զբազումս ի նախարարացն կոտորեաց, և զբազմաց տունս հատանէր յարքունիս։ Բայց զտոհմս Կամսարականացն որ էին գաւառաց տեարք Շիրակայ և Արշարունեաց՝ ազգաւ առնէր, և զգաւառսն ունէր յաստան։ Բայց յազգէն յայնմանէ մանկիկ մի փոքրիկ, անուն Սպանդարատ՝ թագուցեալ ապրեցուցանէր սպարապետն զօրավարն Հայոց Վասակ, և յետոյ լինէր նա ժառանգ աշխարհին։ Թագաւորն Արշակ հրաման տայր յԱրշարունեաց գաւառին շինել իւր բերդ մի ամուր Արտագերս անուն, և զգաւառն յատուկ ի պատրաստութիւն համբարոց թողոյր բերդին, վասն զի կարի ամուր էր բերդն այն» (Բուզ. Դ. ԺԹ.)։

17. Ինչպէս կը տեսնուի յանցից Գնելոյ՝ Արշակ կը գործէր շատ բան թելադրութեամբ ոմանց ի նախարարաց, որ աւելի մտերիմ և մերձաւոր էին նմա։ Այսպիսիք ոմանք էին յանուանէ Հայր մարդպետն և Վարդան նահապետն Մամիկոնեան տոհմին։ Այս այն մարդպետն էր, որ ինչպէս արդէն յիշեցինք՝ առ Տիրանաւ Հայրն Արշակայ տուաւ կոտորել նախարարաց տոհմերէն զոմանս, ինչպէս զՌշտունիս և զԱրծրունիս, նոյնպէս և աւելի ևս չարիս կը գործէր սա իւր ազդեցութեամբն առ Արշակաւ ըստ Բուզանդայ։ Այս մարդպետն անգամ մը, մինչ էր հիւր առ Ներսիսի յԱշտիշատ՝ արբենալով սկսաւ ամբարտաւանութեամբ սպառնալ՝ յարքունիս ունել Աշտիշատու եկեղեցւոյն կալուածներն, որոց գեղեցկութեան զարմացած էր, և համարելով այն տեղերն իբրև արդարև թագաւորավայել՝ ոչ սակաւ թշնամանս կը դնէր Տրդատայ, որ այնչափ և այնպիսի երկիրներ տուած էր պարգև կանանցահանդերձ մարդոց, այն է եկեղեցականաց։ Սուրբն Ներսէս իմացուց նմա մեղմով, թէ չէ բարւոք ցանկալ ուրիշի ստացուածոց. մանաւանդ

այնց որ նուիրեալ են Աստուծոյ, և թէ պիտի չհասնէր կատարել՝ ինչ որ սպառնացաւ։ Եւ արդարև յետ սակաւուց սպանուեցաւ մարդպետն դաւով յորսի ի Տաւրոսպայ ումեմնէ Արծրունւոյ.—«Եւ էր մարդպետն Հայր այր չար և ժանտաբարոյիւք անօրէն և անիրաւ քան զառաջին Հայր անուն մարդպետն։ Սա կոտորեաց զոմանս ի նախարարաց ազգաւ ի ժամանակս թագաւորութեանն Տիրանայ արքայի, և սոյնպէս առ թագաւորութեամբն Արշակայ և՛ս չար քան զառաջինն գործէր չար առ ամենայն մարդ։ Արդ ելանէր սա շրջել ընդ մարդպետութիւնն իւր. ապա եկն էջ ի գաւառն Տարօնոյ ընդ իւր գեւղն տեսանել։ Զայնու ժամանակաւ սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնն. զի հնգետասան գաւառ ձեռական իշխանութեան ունէին իբրև սեպհական ի բնմէ, և գլխաւոր գաւառք էին Այրարատ, Դարանաղէ, Եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Ծոփք և որ ընդ մէջ նոցա և որ շուրջ զնոքօք»։ Այս գաւառներուն մէջ, կամի ասել Բուզանդ, ունէին եկեղեցիք, կամ թերևս, կաթողիկոսունք ի տանէ Լուսաւորչին՝ մեծամեծ կալուածներ։ «Եկն էջ Հայրն մարդպետ զիւրով իշխանութեամբ շրջել. ապա եկն և սուրբ կաթողիկոսն Ներսէս յառաջին տեղին, ուր նախ էր զեկեղեցին շինեալ ի Գրիգորէ և զվկայարանսն սրբոցն վկայիցն, և անդ զյիշատակս սրբոցն կատարէր։ Ապա դէպ եղև անցանել Հայր մարդպետին առ տեղօքն, ցանկացաւ ելանել ի սուրբ տեղին Աշտիշատու կալ յաղօթս և առնուլ ողջոյն ի սուրբ եպիսկոպոսապետէն Ներսիսէ։ Հրաման տայր սուրբ հայրապետն Ներսէս՝ եկեղցն ճաշ պատրաստել։ Եւ մինչդեռ նոքա պատրաստէին ինչ ըստ նմա արժանի աւագօրէն սպաս՝ նա ելանէր յեպիսկոպոսական կայենէն յապարանիցն մինչև ի վկայարանս սրբոցն, ի մեծ և ի գեղեցիկ հրապարակին զերթևեկս առեալ շրջէր, զճեմս առեալ։ Ապա տեսանէր զգեղեցկութիւն վայրացն, զնիստ շքեղութեան ի բարձրաւանդակ տեղեացն և զնայեացն ի խոնարհ, զի կարի վայելուչ էր տեղին, և չարակնեաց։ Ապա եմուտ բազմեցաւ յուտել և յըմպել։ Իսկ յորժամ արբեցաւ՝ սխալակեցաւ, սկսաւ խօսել ներքինին բանս հպարտս և ամբարտաւանս յարբելեաց. զնէր թշնամանս Տրդատայ արքայի, ի մեռեալս և կենդանեացն ի կեանս, ազգի և տակի և տոհմի Արշակունեաց թագաւորացն Հայոց։ Զխորդ, ասէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարդկան տուեալ է և ոչ արանց։ Եւ զսուրբ տեղեօքն քամահեալ արհամարհէր և ասէր, եթէ Զայս տեղիս ի բաց քակեմք, զի աստ պարտ է շինել զապարանս արքունի, և թէ՝ Ես Հայր մարդպետ եթէ կենդանի կացեմ և առ թագաւորն հասից՝ որ ինչ աստ իցէ՝ զայն ի բաց փոխեցից, և որ աստ

իցեն գնոսա Հանից, և զտեղիս արքունի սենեակ կազմեցից: Իսկ սուրբ եպիսկոպոսապետն յորժամ լսէր՝ ասէր. Տէրն մեր Յիսուս Քրիստոս որ ընտրեաց զայս տեղի դնել զանուն իւր աստ՝ պատուիրեաց մի՛ ամենևին յայլոց ինչ ակն դնել կամ ցանկալ, մանաւանդ որ ժլատեալք ի նորա նուէրսն բերեն աչս և այնմ ցանկան. վասն այսորիկ նա մի հասցէ առ այն որով սպառնացաւ, այլ խափան լիցի նմա բազում մակարդ մեղացն իւրոց գործելոց: Ապա գնայր մարդպետն Հայր ի սուրբ տեղեացն, և էջ յափն գետոյն հոսանացն Եփրատու, ի հովիտսն թանձրախուռն անտառին, ի գետախառնունսն երկուց գետոցն, ի թաւուտ խարձիցն մամխեացն, յորում տեղւոջ էր ի հնոցն իմն քաղաք շինեալ Սանատրուկ արքայի (մասն Բ. եր. 262), որում անուն տեղւոյն Մծուրք կոչի: Իբրև եկն եհաս յայն տեղի՝ ապա յուղեցաւ դատաստան բարկութեան ի Տեառնէ ի վերայ անօրէնն Հայրի: Մատնեցաւ նա ի ձեռս առն միոյ որոյ անուն Շաւասպ կոչէր, մնացորդ ազգին Արծրունեաց: Մինչդեռ նստէր նա ի կառս և երթայր զճանապարհն՝ եկն Շաւասպն: Սկսաւ պատմել մարդպետին սուտ ի քմաց իւրոց և ասէ. Արջ մի տեսի սպիտակ իբրև զձիւն: Եւ հրապուրեաց զմարդպետն իջանել ի կառաց անտի և հեծանել ի նժոյգն. և մտեալ պառակէին մայրեացն: Իսկ իբրև ընդ թաւուտսն անկանէին՝ զկնի եղեալ սակաւ մի Շաւասպն, յետոսագոյն մնացեալ՝ յետոյ յառաջ նետիւ հարկանէր զմէջ ներքինւոյն Հայրի, անդէն թափ հանեալ զնետն. և անդ յերկիր անդեալ սատակեցաւ մարդպետն: Եւ առն Աստուծոյ ասացեալն հուպ ընդ հուպ վաղվաղակի կատարեցաւ. զի ամենևին բան ի գետին ոչ անկանէր առն Աստուծոյ» (Բուզ. Դ. ԺԴ.): Շաւասպս այս, ինչպէս յայտնի է ի բանից Բուզանդայ, որ մնացորդ կ'անուանէ զնա ազգին Արծրունեաց՝ էր համանուն պատանին, զերծեալն այն ցեղին կոտորածէն որ եղաւ առ Տիրանաւ: Սպանումն Հայրի ի ձեռն Շաւասպայ կը ցուցնէ, թէ արդարև, ըստ պատմութեանն Բուզանդայ՝ թելադրութեամբ ներքինւոյն եղած էր այն կոտորածն, որոյ վրէժն միայն և ոչ այլ ինչ էր մարդպետին բունի օրհասն, զոր Բուզանդ, ըստ իւրում սովորութեան՝ կ'ընծայէ ի վեր քան զբնութիւն պատճառի, այն է «բանից առնն Աստուծոյ», որոց չար «ամենևին ի գետին անկանէր»:

18. Արդէն յիշուեցաւ, թէ ինչպէս յետ փախստեանն Արշակայ Շապուհ ողոքով կը խօսէր ընդ նմա ի ձեռն պատգամաւորաց: Այս պատգամաւորներէն յակնէ յանուանէ կը յիշէ Բուզանդ զՎարդան Մամիկոնեան, որ եկաւ ի կողմանէ Շապհոյ հրովարտակաւ, ուր կը խոստանար Շապուհ մոռանալ ինչ որ եղաւ, յիշեցունելով նմա նաև երդումը՝ կը յորդորէր զնա կալ ի բանին: Ըստ Բուզան-

գալ՝ Արշակ մխեալ էր անսալ խրատուն Տալհոյ, և սիրով ընդունելով զՎարդան՝ կը ղրկէ զնա ի տուն իւր հանգչել աւուրս ինչ աշխատութենէն։ Բայց Վասակ որ էր թշնամութեամբ և նախանձու ընդ եղբօր իւրում՝ միաբանեալ ընդ կնոջ թագաւորին Փառանձեմայ,—որ ունէր ոխ ընդ Վարդանայ, վասն զի սորա նենգութեամբ բռնուած և սպանուած էր այր նորա Գնէլ՝—հաւանեցոյց զթագաւորն, թէ Վարդան ի խնդիր էր մատնել զնա Տալհոյ, և գրգռեց զԱրշակ այնչափ, մինչև հրաման տուեալ նմա երթալ դաւով սպանանել զեղբայր իւր զերէց ի տան նորա, մինչ էր նա յանզգոյշս, չառնելով երբեսս կնոջ նորա անգամ, որ ի սպանման ժամուն էր յերկունս։ Այս եղերելի տեսարանը կը նկարագրէ Բուզանդ այսպէս. «Իսկ Վարդան, Մամիկոնեան տոհմին տանուտէրն, գայր հասանէր հրեշտակութեամբ յարքայէն Պարսից առ արքայն Հայոց Արշակ և մատուցանէր զհրովարտակն առաջի նորա։ Եւ տայր պատգամ, թէ որ ինչ եղև՝ այն ահա թողեալ լիցի. բայց դու յայսմ հետէ կաց յուխտին բանի և մի անցաներ ըստ բան երդմանցն քոց օրինաց յոր երդուար։ Ապա թէ ոչ՝ դու գիտես և քո օրէնքն որում տեսեն։ Իսկ Արշակ թագաւորն սիրով ունէր և սիրով լսէր պատգամին և հաւանէր զատացելոցն։ Եւ խաղաղութեամբ արձակէր զմեծ նահապետն ի տուն իւր, զի երթիցէ հանգիցէ յաշխատութենէն յերկայն ճանապարհէն, և գնաց։ Եւ յորժամ եկն նահապետն Վարդան առ Արշակ՝ ոչ գիտեցաւ անդ կրտսեր եղբայր նորին Վասակ առ արքայն։ Ապա յետ այսորիկ եկն Վասակն և գրգռէր զթագաւորն ընդ իւրում եղբօրն երիցու, ասելով, թէ Վարդան է որ մատնէ զքեզ թագաւորին Պարսից և կամի կորուսանել զքեզ. եթէ ոչ աճապարեսցես վաղագոյն սպանցես զնա՝ դու կորնչիս և աշխարհս Հայոց։ Ապա և կին թագաւորին ևս գրգռէր զթագաւորն սովին բանիւք, և զբանս զօրավարին Վասակայ հաւատարիմ առնէր նմա։ Վասն զի ունէր նա զոխսն զայն ընդ Վարդանայ, զի նենգութեամբ և դաւով և մեծաւ երդմամբ սա այս Վարդան կոչեաց զԳնէլն զայր նորա, յորժամ սպանանէր զնա թագաւորն Արշակ։ Իսկ կինն զնոյն ոխութիւնս պահէր նմա, վասն այնորիկ աւելի ևս գրգռէր կինն զթագաւորն ի վերայ նորա, մինչ զի և զօր գումարեցին ի վերայ Վարդանայ, զի երթեալք սպանցեն զնա, նա ինքն իսկ իւր եղբայրն Վասակ երթայր ի վերայ նորա։ Ապա երթեալ գտանէին զնա յիւրում գաւառին ի Տայս, յիւր ամուր բերդին, որում անուն Երախանի կոչի։ Իբրև տեսին զգունդն, թէ Վասակ է՝ ոչ ինչ երկեան և ոչ զգուշացան կամ կասկածեցին. Համարեցան զզօրն եղբօրն, թէ խաղաղութիւն է

եկն նորա, մինչ իջին ի խորանին դուրս, զի էր Հարեալ զխորանն ի ձոր յունջ բերդին։ Եւ մարդիկ զօրացն Վասակայ էին ամենեքեան ի ծածուկ փառեալք և ի վերայ ագուցեալք Հանդերձ։ Եւ մինչդեռ նա լուանայր զգլուխ իւր մերկանդամ՝ Հասանէին սուսերօք բազում մարդիկ, և խոցոտէին զնա, մինչդեռ նա կայր խոնարՀեալ՝ զի արկցեն ջուր ի վերայ նորա։ Եւ ոչ ոք տայր ժամանել յառնել, զի անդէն ի կողի սպանանէին զնա։ Եւ կինն նորա յղի էր, և Հասեալ էին աւուրք ծննդեան իւրոյ։ Մինչդեռ ի վեր ի բերդին նստէր ի գաՀոյս իւրում՝ եղև գոյժ սաստիկ. իսկ նա երբև զձայն գուժոյն լսէր՝ վազէր ի գաՀոյից անտի, և ընդ վազելն ծնանէր զմանուկն. և կոչէին զանուն մանկանն յանուն Հօր իւրոյ Վարդան» (Բուզ. Դ. ԺԲ.)։

19. Այս ամենայն գործ Արշակայ, թէ ուղղութիւնք նորա և թէ յոռութիւնք՝ կը թուին գործուած ի միջոցի իբր Հինգ կամ վեց ամաց, այն է 353—359, թուական՝ երբ սկսաւ բուն պատերազմն ի մէջ Հռոմայեցւոց և Պարսից։ Յետ առաջին պատերազմին որ զերծոյց զՀայս և որոյ արդիւնք եղաւ թագաւորելն Արշակայ, թէպէտ յաղթութիւնն մնաց Հռոմայեցւոց կողմը՝ սակայն թշնամութիւնը չվերցաւ։ Ստէպ ստէպ ասպատակութիւնք լինէին (355) մերթ ի Հայս և մերթ ի Միջագետս Պարսից կուսէն, թէպէտ չկար յայտնի պատերազմ 350-էն Հետէ, երբ Շապուհ չյաջողելով ի պաշարման Մծբնայ՝ դարձաւ յետս և կը գտնուէր իւր երկրին արևելեան ծայրն ընդդէմ բարբարոսաց ի պատերազմի.— «Գործակալք արքային Պարսից, ասէ Ամմիանոս, որոց գունդք կային բանակեալք առ եզերբ սաՀմանակից գետոց, մինչ տէրն նոցա կայր արգելեալ ի ծագս սաՀմանաց իւրոց տէրութեանն՝ ոչ դադարէին արձակել Հէնս նեղել զերկիր մեր։ Առաւել իմն յանդգնեալք յանպատիժն մնալոյ՝ առնէին նշաւակ աւարառութեանց իւրեանց մերթ զՀայս և մերթ զՄիջագետս, և զայս յանդիման առաջի աչաց կուսակալաց Հռոմայեցւոց, որ ոչ զայլ ինչ ածէին զմտաւ, բայց միայն զինչս քաղաքացեաց իւրեանց» (Ամմ. ԺԵ. 13). և այլուր (ԺԶ. 9) ասէ. «Սակայն Պարսիկք խլրտէին յարևելս, առանց առնելոյ ասպատակ ի Հեռաւոր տեղիս որպէս յառաջն. բաւական Համարէին վարել զմարդս ի գերութիւն և Հանել Հօտս ինչ խաշանց և արջառոց։ Եր զի յաջողէին, գտանելով զմերսն ի գեղծի, էր եւս զի տեսեալ զմեծ Հզօրագոյնս՝ վրիպէին յորսոյն իւրեանց։ Բազում այն էր, զի յոյս աւարի նոցա ելանէր ի դերև առ զգուշութեան զոր առնէին բնակիչքն՝ չթողուլ ինչ ընդ ձեռամբ նոցա»։ Մուսոնիանոս, Հռոմայեցւոց կողմանէ կուսակալ արևելից, «այլ իմաս-

տուն, քաղցրաբարոյ և բանիբուն», այլ զօշաքաղ, որպէս ասէ Ամմիանոս, տեսնելով զայս ամենայն և համարելով դիպող ժամանակ, քանզի ի նեղ անկեալ կ'երևէր Շապուհ՝ ի ձեռն Դենշապհոյ ուրումն առաջարկեց (356) Շապհոյ առնել հաշտութիւն. բայց ի պատճառս հեռաւորութեան տեղւոյն ուր կը գտնուէր Շապուհ՝ թուղթերը կը հասնէին անագան: Ահա բանք Ամմիանու. «Արդէն եղեն բանք զՄուսոնիանոսէ կուսակալէ (արևելից), զառնէ նշանաւորէ, որ սակայն ագահ էր բարուք և զոր ակնկալութիւն շահու դիւրաւ իմն խոտորեցուցանէր ի պարտուց: Մուսոնիանոս ունէր լրտեսս յաջողակս ի մէջ Պարսից, և ի ձեռն նոցա ջանայր ի վերայ հասանել մտաց թշնամւոյն: Ըստ տեղեկութեանն զոր տային լրտեսքն՝ Շապուհ յանժամ զբաղեալ ի ծագս սահմանաց իւրոյ տէրութեանն՝ հազիւ իմն և ոչ առանց մեծի կորստեան մարթէր ունել ի չափու զազգս պատերազմողս: Իբրև զայս լուաւ Մուսոնիանոս՝ սկսաւ բանագնաց լինել գաղտ ի ձեռն ոմանց աննշան զինուորաց ընդ Դենշապհոյ ումեմն որ էր հրամանատար զօրուն Պարսից որ զմերով կողմամբ, ստիպէր զնա տալ տեառն իւրում թըղթովք խրատ՝ փութալ խօսել ի հաշտութիւն ընդ կայսեր: Այսուաւէր, առնիցէ զկողս և զթիկունս իւր յապահովս, և եղիցի ազատ տանել զբովանդակ զօրութիւն իւր անդր՝ ուր հզօրագոյն է թըշնամին: Հաճեալ Դենշապհոյ ընդ խորհուրդն՝ գրէր առ Շապուհ, եթէ Կոստանդ ըմբռնեալ սաստիկ պատերազմաւ այլուր՝ խնդրէր թախանձանօք խաղաղութիւն: Այլ անցանէր ոչ սակաւ ժամանակ, մինչև հասանէին թուղթքն ի ձեռս Շապհոյ» (Ամմ. ԺԶ. 9): Հազիւ 358-ին եկաւ պատասխան ի Շապհոյ, որ կ'ընդունէր առաջարկութիւնը ծանր պայմանօք, պահանջելով յետս զՄիջագետս և զՀայս, զոր Հռոմայեցիք, ասէ, դաւով հանեցին ի հաւէն իւրմէ Ներսեհէ: Կոստանդ չառաւ յանձն պայմանը: Շապուհ վախճան տալով պատերազմին ընդ բարբարոսս և առնելով իւր դաշնակից զթագաւորն Հոնաց՝ դարձաւ ի Տիզբոն: Հրեշտակք Կոստանդայ եկան ի Տիզբոն հաւանեցուցանել զՇապուհ, բայց չյաջողելով դարձան յետս, և սկսան երկուստեք պատերազմին պատրաստութիւններն (358).—«Թագաւորն Պարսից յետ ընդ երկար կռուելոյ ընդ ազգս արուարձանեայս՝ կռէր դաշինս նիզակակցութեան ընդ երկուս հզօրագոյնս ի ցեղից անտի, այն է ընդ Հոնս և ընդ Գեղս, և մինչ հանդերձէր դառնալ յետս՝ ընկալաւ զթուղթն, որով ազդ առնէր նմա Դենշապուհ զյօժարութիւն կայսերն առնել խաղաղութիւն: Ի միտ առեալ Շապհոյ, եթէ ի նեղ անկեալ էր կայսր՝ առաւել ևս ամբարտաւանէր: Հաճել հաճէր առնել խաղաղութիւն, այլ

կամէր գնել պայմանս խիստս։ Առաքէր առ Կոստանդ Հրեշտակութեամբ զՆերսեհ ոմն Հանդերձ Հրովարտակաւ, որ լի էր ամբարտաւանութեամբ ըստ սովորութեան Պարսից և որոյ պատճէն այսպիսի ինչ էր. «Արքայից արքայ Շապուհ, Հաղորդ աստեղաց, եղբայր արեգական և լուսնի. Կոստանդեայ կայսեր, եղբօր իմում ողջոյն շատ։ Ուրախ եմ յոյժ, զի զգաստացար յակն գնելոյ կարի յինչս այլոց։... Երկիր իշխանութեան իմոց Հարց ձգէր մինչև ի Ստրիմոն գետ և մինչև ի սահմանս Մակեդոնացւոց։ Ձեր իսկ պատմութիւն վկայէ այսմ։ Զայսոսիկ պահանջել իրաւունք են ինձ. այլ ես խնդրեմ զՄիջագետս և զՀայս որ Հանան ի հաւէն իմմէ նենգաւ։... Կամքս զհետ երթալ բարւոյ խրատու.—խոտեա զգոյզն մասն որ պատճառ է քեզ կռուոյ և արիւնհեղութեան, զի զմնացեալսն ունիցիս անկասկած։ Լեր նմանող իմաստութեան բժշկի, որ արկանէ ի կիր դանակ և խարանս ի բառնալ զփուտն, զի զառողջ մասնն պահեսցէ։ Չիք յանասունս անգամ որ չգիտիցէ բնական ազդմամբ, եթէ պարտի Հատանել ընկենուլ յանձնէ՝ որ ինչ տայ որսորդին զՀետ մտանել նմա։ Իսկ որ ինչ վասն իմ է՝ ի դառնալ դեսպանին իմոյ ձեռնունայն՝ յետ անցանելոյ ձմերայնոյն, յարդարութիւն և յիրաւունս իմ ապառատն՝ արարից զոր ինչ ձեռնհաս իցեմ»։ Կոստանդ, ասէ Ամմիանոս, յետ ընթեռնլոյ զթուղթս և խորհելոյ քաջ՝ ետ պատասխանի Հանդարտութեամբ. «Կոստանդ, միշտ աւգոստոս, յաղթող ի ծովու և ի ցամաքի. եղբօր իմում Շապհոյ խնդալ։ Ուրախ եմ ընդ ողջամբ դարձ քո իբրև բարեկամ, եթէ կամիցիս. այլ չեմ Հաճ ընդ անյագն և անչափ ցանկութիւն քո մեծանալոյ։ Ինձ պիտոյ են, ասես, Հայք, որպէս և Միջագետք, և տաս ինձ խրատ՝ յապաւել զառողջ մարմին զի մնասցէ ողջ. խրատ՝ որ արհամարհանաց արժանի է մանաւանդ քան ընդունելութեան։ Ահա ճշմարիտն զոր չէ պարտ ծածկել։ Ոմն ի գործակալաց իմոց կամեցաւ, առանց իմոյ գիտութեան, խօսել զհաշտութենէ ընդ միում ի զօրավարաց քոց ի ձեռն արանց աննշանից։ Ես ոչ անարգեմ զայս և ոչ մերժեմ, եթէ չխնդրիցի յինէն այնպիսի ինչ, որ չէ արժան և վայելուչ և կամ որ բերիցէ արատ իմում պատուոյ։ Արդարև անճահ իմն է և անհեդեդ, մինչ ամենեցուն ականջք հնչեն ի Համբաւոյ իմոց յաջողութեանց, մինչ պարտութիւն բռնաւորաց արկանէ զՀամօրէն Հռոմէական աշխարհն ընդ իմով ձեռամբ՝ առնուլ յանձն մանրել զոր պահեցաքն ցարդ անեղծ ի բազում վիշտս վտանգաց յարևելս։ Ոն անդր ի բաց տար զսպառնալիսդ. չիք ոք անգէտ, եթէ առ իմաստութեան մանաւանդ քան առ վատութեան ինչ ընտրեմք զգուշանալ, քան յախուռն մտանել ի

մարտ պատերազմի. այլ յարձակումն ինչ, եթէ երբէք լինիցի յեր-
կիր մեր՝ գտցէ զմեզ պատրաստ ի վանել զնա յետս: Ի փորձոյ և
ի պատմութենէ գիտեմք, զի եթէ երբէք գեղեցաւ Հռոմ ուրեք
ի կռուի՝ ոչ երբէք վատթարացաւ ի սպառ»: Հրեշտակ արքային
Պարսից ոչինչ վճարեալ մեկնեցաւ, զի չէր իսկ առաւել քան զայս
արժանի մեծարանաց ժլատութիւն Շապհոյ. այլ յետ ոչ բազում
աւուրց Կոստանդ արձակէր դեսպանութեամբ զՊրոսպէր կոմս և
զՍպեկտատոս տրիբուն և Նոտար, յորս յաւելաւ ի խնդրոյ Մուսո-
նիանու Եւստաթիոս փիլիսոփոս, այր բանիբուն և խօսող, հանդերձ
հրովարտակաւ կայսեր և ընծայիւք, հրաման առեալ ջանալ կասե-
ցուցանել զպատրաստութիւնսն Շապհոյ, մինչև փութացեն մերքն
ամրացուցանել զհիւսիսային սահման մեր: Երեցունց դեսպանացն
հասեալ ի Տիզբոն՝ մատուցին զհրովարտակն և զընծայս առաջի
թագաւորին որ այն ինչ դարձեալ էր. ջանային ածել ի հաւան
զթագաւորն առնել հաշտութիւն առանց նոր ինչ պահանջելոյ, ոչ
ինչ թուլացեալք՝ յորոց պահանջէրն օգուտ և պատիւ տէրութեանն,
պնդեալ մանաւանդ չառնել ինչ փոփոխումն վասն Հայոց և Մի-
ջագետաց: Յետ երկար ջանալոյ խախտել զյամառութիւն թագաւո-
րին, իբրև տեսին եթէ պնդեալ յամառեալ էր նա խնդրել յետս
զերկոսին աշխարհսն որ յիշեցան, ոչինչ կարացեալ վճարել՝ դարձան:
Յետ այսորիկ վասն նոյին իրաց առաքեցաւ Ղուկիղիանոս կոմս և
Պրոկոպիոս դպիր, որ յետոյ ի հարկէ իմն բռնադատեալ մտաբերէր
յապստամբութիւն» (Ամմ. Անդ):

20. Յաջորդ տարին (359) Շապուհ մեծ պատրաստութեամբ,
նիզակակցութեամբ թագաւորին Հոնաց, կ'անցնի զՏիգրիս.—«Թա-
գաւորն Պարսից զօրացեալ օգնականութեամբ ազգաց վայրենեաց
ընդ որս լեալ էր դաշնակից, և վառեալ ցանկութեամբ ընդարձա-
կելոյ զտէրութիւն իւր՝ կուտէր յամենայն կողմանց զօր բազում,
զէն և զարդ և պաշարս: Զգիսն կարդայր, զհմայս հարցանէր, և
այսպէս յարդարեալ զամենայն՝ խորհէր յարձակել ի սկզբան գար-
նայնոյն» (Ամմ ԺԸ. 4): Հռոմայեցիք մեծ տագնապի մէջ էին:
Քաջն Ուրսիկինոս, սպարապետ արևելից, որում յաջորդած էր Սա-
բինիանոս անպիտան ծերունի՝ կոչեցաւ յարևմտից ուր զրկուած էր,
և կարգեցաւ զօրավար: Ուրսիկինոս որում ընկեր էր Ամմիանոս՝
եկաւ յարևելս: Զօրավարն քաջ իմանալով Պարսից դիտաւորութիւնը՝
փութաց ամրացունել զՄծբին: Բայց Պարսիկք որ անցած էին զՏիգ-
րիս՝ թողլով ամուր քաղաքներ, ինչպէս նաև զՄծբին՝ կ'երթային
դէպ ուղիղ յԵփրատ, զոր կը դիտէին անցանել: Յայնպիսում վը-
տանգի հարկ իմն էր կոչել զՈւրսիկինոս, որ վասն անհնարին յաջո-

ղեկութեանն և հմտութեան կռուելոյ ընդ Պարսիկս՝ էր կարևոր յոյժ յարևելս:... Այն ինչ հասեալ մեր մօտ յԵրբոս գետ՝.. գտաք զհրովարտակ կայսերն, որ հրամայէր մեզ փութալ գալ ի Միջագետս, թէպէտ և անօգուտ էր պաշտօն մեր, զի յայլոյ ձեռս էր իշխանութիւնն: Իսկ և իսկ յուղի անկեալ եկաք յանդիման լինել Սաբինիանու, որ ընկալաւ զմեզ արհամարհանօք:... Սակայն համբաւն զոր բերէին լրտեսք զպատրաստութենէ զօրութեանն Պարսից՝ էր միաբան բանից փախստէիցն: Ուստի թողեալ մեր զայրն (զՍաբինիանոս)՝ փութացաք երթալ ամրացուցանել զՄծբին, երկուցեալ թէ գուցէ թշնամին որ թուէր զանց առնել զքաղաքաւն՝ գտցէ զնա ի զեղծի: Մինչ մեք զգործով ամրութեանն էաք ի ներքս ի քաղաքի անդ՝ սիւնք ծխոյ և նշոյլք լուսոյ, որ երևեալ յայնկոյս Տիգրիս գետոյ տակաւ մերձենային հուպ ի սահման անդր քաղաքին՝ յայտ առնէին, եթէ յառաջապահք Պարսից անցեալ էին ըստ գետն, և սկսեալ էր աւերն: Փոքր միւս ևս՝ և անկեալ էր իմ ի ձեռս նոցա: Մտրակեալ զերիվարն՝ սիրտ ի բերան եկի առ մերսն: Ուրսիկինոս ևս խոյս ետ:.. Զերծեալ ի վտանգէ աստի՝ եկաք ի տեղի մի անտառախիտ, լի այգեստանօք և պտղատու ծառովք:.. Սակայն տագնապ էր մեզ, և ահն սաստկանայր ևս քան զևս, վասնորոյ աճապարեալ անկաք յԱմիդ, քաղաք՝ որ աղետիւքն եղև այնպէս անուանի առյապայ:.. Այլ զօրն Պարսից եթող զՄըծբին աստի, չհամարեալ արժանի զկայ առնուլ անդէն» (Ամմ. ԺԸ. 6, 7):

21. Չէ անհաւանական, թէ այս միջոցին էր որ Արշակ ի գլուխ տարաւ առ Մծբնաւ Հռոմայեցւոց դէմ այն յաղթութիւնը, զոր այնպէս մանր կը պատմէ Բուզանդ: Անհնար էր Արշակայ, իբրև բարեկամ և դաշնակից երկու տէրութեանց ևս՝ չօգնել միումն կամ միւսում. կը թուի սակայն թէ էր վարանեալ: Յօժարագոյն էր օգնել Յունաց, բայց տեսնելով նոցա տկարութիւնը որում չկարէր լինել անգէտ, թերևս արհամարհանս ևս կրեալ ի նոցանէ, ինչպէս կ'ակնարկէ Բուզանդ—«Ոչ շուք ինչ եդին նմա և ոչ մեծարանս»,—կ'սպասէր, թէ ո՛ր կողմն առաջ պիտի կոչէր զնա յօգնութիւն: Տապուհ որ յետ մահու սիրելւոյն իւրոյ Վարդանայ ևս չէր դադարած ի յորդորելոյ զԱրշակ պահել ընդ նմա զուխտն՝ կը խնդրէր ստիպաւ օգնել նմա առաջիկայ կռուոյն մէջ: Հարկ իմն էր այնուհետև Արշակայ երթալ, և արդարև ըստ Բուզանդայ չոգաւ իւր զօրաց բազմութեամբ իւր տէրութեան հարաւային սահմանը դէպ ի Մծբին, որ էր ճանապարհ արշաւանին Տապհոյ, և առանց սպասելոյ գալստեան Պարսից՝ տարաւ, ըստ Բուզանդայ, նշանաւոր յաղթութիւն ի գլուխ Հռոմայեցի զօրուն դէմ: Տապուհ

հանելով կը տեսնէ կատարուած մեծ յաղթութիւն ի ձեռն Արշակայ, և մեծ շնորհակալութեամբ կը պատուէ զԱրշակ, և ի հատուցումն այն մեծ ծառայութեան նորա՝ կ'առաջարկէ տանել զնա ի Պարս և փառաւորացուցանել զնա ինքեան։ Բայց աներ նորա Անդովկ, որ կը խորհէր թէ դուցէ դուստր իւր Փառանձեմ անորդուէր, եթէ Արշակ առնուր կին զդուստրն Շապհոյ՝ միանալով ընդ Վասակայ սպարապետին, կաշառելով ևս զոմն ի մտերմաց Շապհոյ՝ հաւանեցոյց զԱրշակ, թէ Շապուհ կը խորհէր արկանել զնա յորոգայթ, տանելով զնա ի Պարս, և սպանանել։ Արշակ հաւատալով այսմ՝ ամէն բան կը թողու և կը փախչի գիշերային իւր զօրօքն։ Շապուհ կը գուշակէ, թէ նենգութեամբ իւրոցն եղաւ այս, կը յղէ դեսպան զկնի նորա դալ և յայտնել չարախօսաց նենգութիւնը, բայց ի զուր։

22. Արշակ այնուհետև լսել անգամ չկամէր Շապհոյ անունը, և սկսաւ յայտնի թշնամութիւն ի մէջ Արշակայ և Շապհոյ, մանաւանդ երբ Հռոմայեցիք հրաժարեցան դաշամբ Հայաստանէ, ինչպէս պիտի տեսնենք ի ստորև.—«Երբև փոխեաւ թագաւորն Արշակ յարքայէն Շապհոյ և անարգեաց զնա յետ երդմանց իւրոց՝ զառաջինն Շապուհ արքայն Պարսից ոչ ինչ խստութեամբ ջանացաւ ընդ նմա, վասն զի մարտ դեռ բազում սաստկացեալ էր ի մէջ իւր և ի մէջ թագաւորին Յունաց։ Եւ երբև հաղ քան զհաղ յաւել լինել պատերազմ՝ թագաւորն Հայոց Արշակ զառաջինն ընդ միտս իւր մեծամտեալ էր, և նայէր տեսանել, թէ ով ի նոցանէն կոչեսցէ զնա ի թիկունս օգնականութեան յաղագս գործոյ պատերազմին։ Ակն ունէր երթալ կամելով յօժարութեամբ ի թիկունս կայսերն Յունաց. իսկ նոքա ոչ կոչեցին զնա և ոչ շուք եդին նմա և ոչ մեծարանս։ Իսկ թագաւորն Պարսից Շապուհ յղէր առ նա (առ Արշակ) հրեշտակս խաղաղութեան, յուշ առնէր նմա զառաջին երդումն ասելով, եթէ Կամ լիցի եղբօր, զի եկեսցես օգնեսցես ի գործ պատերազմիս, ի թիկունս հասցես քո գնդաւդ. թէ դու ի մեր կոյս լինիս՝ գիտեմք զի մեր լինելոց է յաղթութիւնն։ Ապա յորժամ զայս լսէր Արշակ արքայ Հայոց՝ մեծաւ ուրախութեամբ կամեցաւ երթալ ի թիկունս օգնականութեան, զօրավիգն լինել Շապհոյ թագաւորին Պարսից։ Տայր հրաման Վասակայ իւրում սպարապետին պատրաստել զօրս կուռ վառեալս, որ ընտիրք և պատերազմողք էին, լի արութեամբ արուեստաց նահատակութեանն, նիզակաւորք, սուսերաւորք, աղեղնաւորք անվրէպք կորովիք, վաղբաւորք, սակրաւորք, որք ոչ գիտէին զերկիւղ զանգիտելոյ յարանց ախոյանաց, համակ հեծելազօր զրահաւորք, պատենազէնք, սաղա-

ւարտաւորք, դրօշաւորք, կազմ նշանաւորք, բազմաձայն փողա-
լօքն. խաղաց գնաց թագաւորն Արշակ բազմակոյտ նախարարօքն,
չուեաց ընդ Աղձնիս ընդ իւր իշխանութիւնն. չոգաւ թափեցաւ
յերկիրն Արուաստանի դէմ յանդիման Մծբնացւոց քաղաքին:
Զօրքն Յունաց մածեալ բանակեալք էին. իսկ զօրքն Պարսից չև
էին հասեալ: Բայց զօրքն արքային Հայոց կանուխ քան զՊարսսն
ի տեղի ճակատուն հասանէին և զտեղի առեալ կային: Ապա տապել
սկսան զօրքն Հայոց ընդ իւրեանց նիստ խափանածոյն, և ոչ առ-
նուլին յանձն մնալ կամ անսալ զօրացն Պարսից, այլ կամեցան
յարձակել դիմել հասանել ի վերայ զօրացն Յունաց, ինքեանք ա-
ռանց Պարսից զօրացն անձամբ վճարել զգործ պատերազմին: Եւ
այլ ամենայն զօրացն Հայոց ինքնակամք իւրաքանչիւր արձակ ար-
ձակ խաղային. ևս առաւել զօրավարն նոցին Վասակ քան զամե-
նայն զօրսն ելևել առնէր, կալակատար լինէր, չմնայր հաւանու-
թեան՝ մինչև զօրքն Պարսից եկեսցեն: Ապա միահամուռ զօրքն
Հայոց անկանէին առաջի և խնդրէին յիւրեանց թագաւորէն Արշա-
կայ, զի մի պահեսցէ զնոսա մինչև եկեսցէ արքայն Պարսից Շա-
պուհ, այլ վաղագոյն նոցա զպատերազմն յանդիման արարեալ հա-
մարձակեսցէ յարձակել: Ապա թոյլ տայր նոցա թագաւորն Արշակ,
և յանդիմանէր նոցա զգործ պատերազմին: Յայնժամ կարգէր կազ-
մէր պատրաստէր զամենայն զօրսն Հայոց Վասակ զօրավարն սպա-
րապետն Հայոց Մեծաց: Վառէր զինէր, ժամակալ լինէր Վասակ,
հանդերձ ամենայն պատերազմօղ զօրօքն Այրարատեան գնդաւն
ելանէր անկանէր ի վերայ բանակին: Ընդ սուր հանեալ կոտո-
րէին, և առնէին զկապուտ զաւար յունական զօրուն: Յետ այսո-
րիկ զտեղի ունէր արքայն Հայոց հանդերձ իւրովք զօրօքն, մինչև
գայր հասանէր Շապուհ արքայն Պարսից: Իբրև եկն ետես զքա-
ջութիւն գործոյն հայաստան զօրացն, զի զճակատ մղեալ, զպա-
տերազմ յարդարեալ, զյաղթութիւն կազմեալ և զգործ վճարեալ էր՝
կայր զարմացեալ մեծապէս, և պատուէր զԱրշակ արքայ Հայոց
մեծապէս և զամենայն մեծամեծս Հայոց, սոյնպէս և զսպարապետն
Հայոց զՎասակ: Ապա խօսել սկսանէր թագաւորն Պարսից Շապուհ
ընդ զօրս իւր, թէ Զի՞նչ պարգևս բարեաց կամ զի՞նչ հատուցումն
կարեմք մեք հատուցանել արքայիս Հայոց Արշակայ, զի զայսպիսի
գործ գործեաց, կամ զայսպիսի քաջութիւն արարեալ, կամ զայս-
պիսի թշնամիս եհար և զայսպիսի պատերազմ մղեաց, կամ այս-
պիսի ճակատու յաղթեաց և զայսպիսի անուն ստացաւ մեզ: Զի
եթէ մեք լեալ էաք, ամենայն Արեաց զօրօք հանդերձ՝ այսպիսի
յաջողութիւն չգայր ի ձեռն. բայց թէ զոյգ հասարակ այսպիսի գործ

ի միասին կարէաք գործել. արդ Հայոց արքայ իւրով զօրութեամբն ընդ մեր նաՀատակեալ զայսպիսի քաջութիւն արար՝ զոր ոչ ոք կարէ առնել ամենեւին։ Արդ զորպիսի Հատուցումն բարեաց կարասցուք մեք առնել նմա։ Ապա տային պատասխանի նախարարքն իւր և ասեն ցնա, թէ Զինչ և կամիս, իւ կամիս՝ կարող ես Հաճել զնա. ոսկի քո շատ և արծաթ, կերպաս և մարգարիտ. զինչ և միանգամ դու կամիս շնորՀել նմա՝ տուր նմա։ Ապա տայր պատասխանի Շապուհ թագաւորն Պարսից իւրոց իշխանացն և ասէ. Ոչ եթէ սէր ինչ է զոր դուքդ ասացէք. այլ եկայք անքակ սէր արասցուք մեք ընդ Արշակայ արքային Հայոց, զի մինչև յաւիտեան անբաժին լիցի նա ի մէնջ։ Տացեմ զդուստր իմ կնութիւն Արշակայ արքայի Հայոց, և տաց նմա տուն մեծ, զի յորժամ գնասցէ ի Հայո՛ց գալ առ մեզ՝ այնպէս տացուք նմա տուն մեծ, զի ի Հայոց մինչև ի Տիզբոն մինչև առ մեզ Համակ յիւրում տան ագցի՝ մինչև առ մեզ եկեսցէ։ Թագաւորին զայս արասցուք. իսկ զօրավարին Վասակայ կամ այլոց մեծամեծացն և զօրավարացն տացուք ոսկի և արծաթ, կերպաս և մարգարիտ։ Եւ Հաճեցան մեծամեծքն և խորՀրդակիցք թագաւորին Պարսից ընդ այս խորՀուրդ, և Հաստատէին զասացեալսն, թէ արժան է զայդ առնել։ Իսկ թագաւորն Պարսից Շապուհ մեծաւ ստիպով ստիպէր զթագաւորն Հայոց զԱրշակ, զի առցէ գնասցէ զնա ընդ ինքեան յԱսորեստան, զի անդ մեծափառ պատուով և փեսայութեամբ մեծարեսցէ զնա։ Իսկ Արշակ և ամենայն զօրք իւր տաղտապէին երթալ զՀեռի ճանապարՀն. զի ամենայն ոք յանձնիւր տուն, յիւրաքանչիւր տեղի զօրէն բարուց Հայաստան մարդկան անձկացեալ էին։ Եւ եղև իբրև ի վերայ Հասանէր իրացն Անդովկ նաՀապետն Սիւնեաց գաւառին, եթէ Շապուհ կամի տալ զդուստր իւր կնութիւն Արշակայ՝ մեծապէս երկեաւ, և բախեցաւ նորա կասկած մտացն։ Զի եդ ի մտի իւրում, թէ յորժամ առցէ Արշակ կին իւր զդուստր թագաւորին Պարսից՝ յայտ է այնուՀետև թէ անարգի դուստր նորա. վասն զի Փառանձեմ դուստր Անդովկայ որ էր կին լեալ Գնելոյ՝ ի ժամանակի անդ էր կին Արշակայ։ Անկանէր այնուՀետև Անդովկ ի Հընարս և ի ծուփս խորՀրդոց, գտանել պատճառ՝ զի ո՛ գիտէ կարասցէ ցրուել զսէրն մեծ որ էր անկեալ ի մէջ թագաւորացն երկոցունց։ Նախ բազում ոսկի զօրավարին Հայոց Վասակայ Անդովկն մատուցանէր. նոյնպէս և զամենայն մեծամեծսն կաշառէր, զի Հընարեսցի քակել զմեծ սէրն որ ի մէջ թագաւորացն երկոցունց՝ Եւ ամենայն մեծամեծքն ձեռն յանձին Հարկանէին, առեալ ակւոյն կաշառօք խաւարեցան։ Ապա զմի ոմն յաւագաց թագաւորին

Պարսից ի ներքին ի բուն խորհրդականացն ի բանի իւրում առնէր
Անդովկ, զի բանս արկցէ ընդ թագաւորն Պարսից ընդ Շապուհ և
ընդ Արշակ։ Եւ տայր նմա Անդովկ ոսկի բազում, և դնէր բանս ի
բերան, զի երթև կերպարանս գուշակի արասցէ ասել ցարքայ Ար-
շակ, թէ Ապրեցո զանձն քո, զի ճշգրիտ խորհեալ է թագաւորին
Պարսից ունել զքեզ և սպանանել։ Եւ յորժամ դու զայս ասասցես՝
ասէ, և զմեզ հրամայեսջիր կոչել ի խորհուրդն, և զքո բանս ա-
ւագանին հաստատեն։ Ապա գայր մտանէր խորհրդակից արքային
Պարսից առ արքայն Հայոց. խօսել սկսանէր ընդ նմա զբանս ի
բերան եդեալ Անդուկայն չարագործի և ասէր, թէ Արքայդ Հայոց
Արշակ, ապրեցո զանձն քո, զի խորհուրդ խորհեալ է թագաւորին
Պարսից Շապհոյ ունել զքեզ և սպանանել։ Կայր հիացեալ և զար-
մացեալ արքայն Արշակ ընդ բանսն ընդ այնոսիկ և ասէ. Ի մեծի
վաստակոցն իմոց ի վերայ ա՞յս հատուցումն ի նոցանէն։ Ապա
հրաման տայր կոչել զառաջեաւ իւրով արքայ Արշակ զամենայն
զմեծամեծս իւր և զամենայն խորհրդակիցս իւր, զՎասակ սպարա-
պետն և զԱնդովկ զաներն իւր, և որ միանգամ էին նախարարքն,
և պատմէր նոցա զոր միանգամ լուաւ ինքն ի պարսկէ անտի։
Ապա և նոքա ընդ մի բերան ասէին նմա, թէ Մեք զայդ վաղ
լուաք, ցքեզ չիշխեցաք ասել. այլ իրքդ այդ հաստատ են։ Բայց
արդ, արքայ, գիտեա, տես, զիա՞րդ ապրեցուսցես զանձն քո և զմեզ։
Ապա արքայ Արշակ բազում պարգևս գանձուց ոսկւոյ և արծաթոյ
տայր պարսկին այնմիկ որ ասաց նմա զբանս զայսոսիկ։ Եւ ին-
քեանք կազմեցան պատրաստեցան. խորհուրդ խորհեցաւ Արշակ
թագաւորն Հայոց, և յառնէին ի գիշերի որ միանգամ մարդ էր
ի բանակին Հայոց, հեծան ի ձիս և փախեան։ Եւ առ ետեղ թո-
ղին զխորանս և զվրանս, զկահ և զկարասի և զկազմած իւ-
րեանց և զբանակն իւրեանց, և գնացին գաղտուկ, և ոչ ոք ի բա-
նակէն Պարսից գիտացին զայն մինչ ցայգ ցառաւօտն։ Եւ իբրև
եղև ժամ այգորելի առ թագաւորն Պարսից, և ամենայն թագա-
ւորք և իշխանք մեծամեծք իւր այգորեալ գային արքային Պար-
սից՝ բայց միայն ոչ ուրեք ի մէջ երևէր թագաւորն Հայոց Արշակ
հանդերձ իւրովք մեծամեծօքն։ Ապա տայր հրաման Շապուհ թա-
գաւորն Պարսից իւրոցն՝ երթալ տեսանել, թէ զինչ իրք իցեն ի բա-
նակին Հայոց թագաւորին Արշակայ, զի այնչափ ժամս յամեաց
գալ յայգորել թագաւորին Պարսից Շապհոյ։ Ապա երթեալ տեսա-
նէին, զի թափուր կայր բանակն առանց մարդոյ. զի թողեալ էր
իւրեանց զխորանս և զվրանս և զհովանոցս և զօրահակս և զգա-
հոյս և զանկողինս և զկահ և զկազմածս և զկարասի իւրեանց, և

զգանձս իւրեանց անգամ. բայց միայն զզէնս իւրեանց զոր բարձեալ էին ընդ ինքեանս և գնացեալք։ Եւ որ չոգան ի բանակն՝ գային զամենայն պատմէին Շապհոյ արքային Պարսից։ Եւ իբրև լուաւ Շապուհ, քանզի այր իմաստուն էր, գիտացեալ ի կարծիս իմաստութեան իւրոյ զիրսն որ ինչ եղեն՝ անդէն ասաց, թէ Այն փախուստ թագաւորին Հայոց յիմոց աստի եղեալ է. զի ի մէնջ, ի դրանէ աստի էին, ասէ, որք փախուցին զայրն զայն զԱրշակ։ Ապա յիւրոց աւագացն ի մեծամեծացն դեսպան ձիով զբազումս յղէր զհետ թագաւորին Հայոց, հանդերձ երդմամբ ի սէր միաբանութեան և յանդիմանութեան, զի դարձցին և զչարախօսութեան զբանս ի մէջ ածեալ կշտամբիցեն։ Եւ ոչ կամեցաւ արքային Հայոց ունկնդիր լինել բանիցն պատգամաւորացն թագաւորին Պարսից Շապհոյ, և ոչ դարձաւ այլ անդէն յերկիրն Պարսից։ Ապա յայնմ օրէ հետէ և անդր յուզեցաւ պատերազմ գրգռութեան մարտից ճակատուց ի մէջ թագաւորին Հայոց Արշակայ և ի մէջ թագաւորին Պարսից Շապհոյ» (Բուզ. Դ. Ի.)։

23. Արդէն տեսանք Ամմիանոսէ, թէ ինչպէս Ուրսիկինոս և ինքն իսկ Ամմիանոս որ գործակից և խորհրդակից էր նմա, տեսնելով Պարսից արագ արշաւանն՝ թողին զՄծբին զոր ամրացունելու մտօք եկած էին, և ապաւինեցան յԱմիդ։ Ուստի չէ ամենևին անհաւանական, թէ Արշակ ստիպեալ ի թախանձանաց Շապհոյ, տեսնելով ևս ցրտութիւն ի կողմանէ Հռոմայեցւոց՝ այս վերջիններուն շփոթ ժամանակը տարաւ այն նշանաւոր յաղթութիւնն հռոմէական անկարգ և անգլուխ զօրաբաժնի մը դէմ առ Մծբնաւ. բայց թելադրութեամբ նախարարաց, որ միշտ տժգոհ էին Արշակայ մօտենալէն առ Շապուհ, ընդ որոյ բարեկամութիւնն չէին վստահ, և մանաւանդ հնարիւք Անդովկայ աներոյն իւրոյ, որ վըտանգ ևս կը տեսնէր վասն դստեր իւրոյ, եթէ խնամենար Արշակ ընդ Շապհոյ՝ կասկածելով հեռացաւ բանի նիզակակցութենէ խորամանկ Պարսկին։ Արշակայ այս կարճ միտումն ի Շապուհ չէ ընդհակառակ պատմութեան Ամմիանու, թէ Արշակ եկաց միշտ հաւատարիմ առ Հռոմայեցիս։ Այս ճշմարիտ է յետ այս առաջին անգամուն ըստ նորին իսկ Բուզանդայ (Դ. ԻԱ.)։

Շապուհ անշուշտ դնելով ի մտի հանել ի դէպ ժամու, ըստ մտաց նորա, Արշակայ այս վտարանջութեան ոխը՝ կը մղէ յառաջ զչուն դէպ յԵփրատ։ Ջճանապարհայն կ'առնուին բերդք ինչ, ինչպէս նաև մեծ և կարևոր քաղաքն Ամիդ յետ եօթանասունևերեքօրեայ պաշարման, զոր մանր կը նկարագրէ Ամմիանոս իբրև ականատես, քանզի էր ի քաղաքին, և հազիւ զերծաւ մեծ դժուարու-

թեամբ և վտանգաւ։ Նոյն տարին ի վերջ Վոյս աշնան կը մեկնի Շապուհ մեծ աւարաւ և բազմութեամբ գերեաց։ Յաջորդ ամին (360) դարձեալ կը յարձակի, և կ'առնուին ուրիշ երևելի քաղաքներ, ինչպէս Սինգարա, Բեծաւդէս և այլք. անհնարին էր աւերն։ Շապհոյ արշաւանաց և Ամդայ առման լուրն առնլով Կոստանդ՝ կու գայ ի Կոստանդնուպոլիս, «զի կացեալ անդ, ասէ Ամմիանոս, իբրև առ սեամս արևելից՝ դիւրին իցէ նմա խորհել դարմանս աղետիցն Ամդայ և լինել զօրաժողով առ ի դիմակալ լինելոյ գնեալ հաւասար զօրութեամբ թագաւորին Պարսից, զի եթէ ոչ երկնից հասեալ էր մեզ յօգնութիւն նոր իմն յաջողութեամբ՝ Շապուհ առանց երկբայութեան մղէր զպատերազմն ի Միջագետս և անդր ևս։ Արդարև նոր արշաւան ի կողմանէ Պարսից էր մօտալուտ»։ «Այս ամենայն անք անցին, ասէ նոյն պատմագիր, ի միում ամի ի մէջ Տիգրիսի և Եփրատայ։ Կոստանդ որ ի Կոստանդնուպոլիս ուր նստէր, տեղեկանայր ամենայնի մանր ի ձեռն սուրհանդակաց որ ստէպ երթային և գային՝ տեսանէր եթէ Պարսիկք արշաւելոց էին ի մօտոյ անդր իսկ քան զԵփրատ, փոյթ յանձին ունէր ամենայն հնարիւք որչափ ի կարի իւրում էր՝ զդէմ ունել նոցա։ Գումարէր զէնս, զօրաժողով լինէր, կոչէր զլեգէոնս իւր յարանց մանկագունից, որ զօրեղքն էին և հմուտք պատերազմաց արևելից։ Ջանայր ևս առնել իւր թիկունս օգնականութեան բարեկամութեամբ կամ շահու զՍկիւթացիս, առ ի լինելոյ անկասկած ի Թրակացւոց անտի, յորժամ թողուցու զնոսա ի գարնան երթալ ի բուն տեղի անդր պատերազմին։.. Զայնու ժամանակաւ Կոստանդ (որ էր ի Կեսարիա Կապադովկացւոց) կոչէր առ ինքն զԱրշակ արքայ Հայոց, և յետ ընդունելոյ զնա մեծաւ պատուով, բազում և ազգի ազգի բանս հաւանութեան ի գործ արկանէր հաճեցուցանել զնա՝ կալ մնալ բարեկամ և հաւատարիմ Հռոմայեցւոց։ Քանզի լսէր, — կը յաւելու Ամմիանոս համաձայն Բուզանդայ — եթէ արքայն Պարսից փորձէր յաճախ զԱրշակ խաբանօք և սպառնալեօք և նենգութեամբ՝ ի բաց կալ ի բարեկամութենէն առ Հռոմայեցիս և կապել պնդով ընդ նմա։ Արշակ ՚երդնոյր ստէպ՝ յանձն առնուլ մեռանել մանաւանդ քան փոխել զմիտսն, և դառնայր մեծապարգև մեծարեալ ինքն և նախարարք զօրս ածեալ էր ընդ իւր, և ոչ համարձակէր առյապա դրժել երդմանցն. էր իսկ գտեալ ի Կոստանդայ բազում բարիս, մեծ քան զամենայն այն իսկ, զի տուեալ էր նմա Կոստանդ կին զՈղիմպիադա զդուստր Աբղաբիոսի անձնապահապետի, զխօսեալն եղբօր նորա Կոստասայ» (Ամմ. Ի. 11)։ Յետ մեկնելոյն Արշակայ, Կոստանդ կ'երթայ յՈւռհա, անցնելով զԵփրատ, և անտի

յԱմիդ, որոյ աւերակները տեսնելով՝ «յարտասուս հարաւ, ասէ Ամմիանոս, զմտաւ ածեալ զաղէտսն զոր կրեալ էր քաղաքն այն արժանի ողբոց»։ Յետոյ գնաց պաշարել զԲեծաւգէս. բայց չկրնալով առնուլ՝ դարձաւ յԱսորիս և եկաւ յԱնտիոք։ Պատրաստութիւնք արտաքին և ներքին պատերազմին յառաջ կը տարուէին ստիպաւ (քանզի Կոստանդ ունէր նաև պատերազմ ընդ Յուլիանու, որ թեկն ածէր կայսրութեան)։ Թագաւորն Պարսից մեկնած էր ակամայ ձմերան սաստկութեան պատճառաւ, և երկիւղ էր, թէ գարնան յարձակէր միւսանգամ աւելի մեծ զօրութեամբ։ Ուստի Կոստանդ ղրկեց պատգամաւորներ այլևայլ քաղաքներու և նախարարներու՝ խնդրել օգնութիւն կամ գէթ յորդորել զնոսա մնալ չէզոք, ջանաց մանաւանդ շահել պարգևօք և մեծագին հանդերձներով զԱրշակ և զՄիհրան, մին Հայոց և միւսն Վրաց թագաւոր, որոց յետս կալն կարէր բերել մահացու հարուած կայսրութեան, և ինքն անցնելով զԵփրատ՝ գնաց միւսանգամ յՈւռհա հանդերձ զօրօք։ Շապուհ անցնելու համար զՏիգրիս ոչ այլ իմիք կ'սպասէր՝ բայց յաջող պատասխանւոյ հմայից, և եթէ տրուէր նմա անցք ընդ Տիգրիս՝ կարող էր յառաջ խաղալ մինչև յԵփրատ։

24. Մինչ Կոստանդ կը պատրաստուէր բոլոր զօրութեամբ բռնելով պաշտպանողական դիրք չտալ թշնամւոյն ազատ մուտ լսեց յանկարծ, թէ Շապուհ հակառակ գտնելով զհմայս՝ դարձած էր զօրօք յետս։ Կոստանդ ազատելով առ ժամն այս երկիւղէն՝ պատահելու համար ամբողջ բանակաւն, բաց ի Միջագետաց զօրուէն, իւր ներքին թշնամւոյն Յուլիանու՝ դարձաւ յԱնտիոք, և մինչ կը փութար անտի խաղալ յառաջ՝ մեռաւ ջերմամբ ի Կիլիկիա մօտ ի Տարսոն (361)։ Յուլիանոս կ'առնու կայսրութիւնը (361—363)։ Ինչպէս ամէն կողմերէ՝ նոյնպէս ի Հայոց կու գան պատգամաւորք յողջոյն նոր կայսեր և կը խնդրեն նորոգել զդաշն նիզակակցութեան։ «Սակայն համբաւն, ասէ Ամմիանոս, հռչակէր առ օտարս զքաջութիւն նորա, զժուժկալութիւնն, զարութիւնսն ի պատերազմի. և առ սակաւ սակաւ անուն նորա որ զարթուցանէր զյիշատակս ամենայն առաքինութեանց՝ ընթանայր ընդ աշխարհ ամենայն։ Եկին ի խօսել հաշտութիւն ընդ նմա ի Հայոց և յայլոց աշխարհաց որ յայնկոյս Տիգրիս գետոյ» (Ամմ. ԻԲ. 7)։ Յուլիանու գլխաւոր խորհուրդն էր յառաջ տանել պարսկական պատերազմն, «յորմէ մարթ էր նմա զերծանել, ասէ Րիդդէր, պատուաւոր իմն դաշամբ զոր առաջի արկանէր նմա Շապուհ. բայց ամբարտաւանութիւն և ունայնութիւն նորա դարձուցին զայն պատեհ առիթ յարշաւանս անմիտ վրէժխնդրութեան։ Որպէս այլ ամենայն սմին

Նման փորձք՝ նոյնպէս և այս յանգէր ի մեծ ակարութիւն Հռոմէական զօրութեան առ Յովլիանու» (Րիտտէր, Երկրագր. Հտ. Ի. էջ 131)։ Զարշաւանն Յուլիանու, որպէս և զողորմ վախճան նորա կը համառօտենք առ այժմ ի Րիտտէրայ։—Յուլիանոս ելանէ ի ճանապարհ յԱնտիոքայ յամին 363, մարտ 3, և անցնելով զԵփրատ կը հասնի ի Խառան, երկու աւուր գնաց յարևելից Ուռհայի։ Անդ ուղին կը բաժնուէր երկու. մին կ'երթար ի ձախմէ առ Տիգրիսի ընդ Ադիաբէն, ընդ որ կ'արձակէ Յուլիանոս զմի մասն զօրուն իբրև օժանդակ գունդ, որում բոլոր զօրութեամբ օգնել կը հրամայէ Արշակայ։ «Յուլիանոս, ասէ Ամմիանոս, առնէր բարւոք ընդունելութիւն դեսպանաց եկելոց, այլ ազնուական իմն վստահութեամբ տայր պատասխանի, եթէ վայել է Հռոմայ փութալ ի թիկունս օգնականութեան իւրոց բարեկամաց և դաշնաւորաց, յոր ժամ և պիտոյ իցէ օգնել, այլ չէ արժան նմա օտար և եկամուտ օգնութեամբ պահանջել զիւրոց զրկանաց վրէժս։ Սակայն յայտ առնէր առ Արշակ արքայ Հայոց՝ լինել պատրաստ, բազմաձեռն գնդաւ հասանել ի թիկունս զիա՛րդ և ո՛ւր պիտոյ իցէ, ըստ հրամանին զոր տալոց էր նմա յետոյ» (Ամմ. ԻԳ. 2)։ Գաթըրճեան կու տայ մեզ պատճէն մի իբրև օրինակ թղթոյ Յուլիանու առ Արշակ, զորոյ զմիտսն ամփոփելով իմն բերէ ի մէջ և Սոզոմենոս (Եկ. պատմ. Գպր. Զ. գլ. Ա.)։ Պատճէն թղթոյն առ Խորենացւոյն (Գիրք Գ. գլ. ԺԵ.) ունի նմանութիւն միայն։ Օրինակ վերագոյն ճառելոյ սպառնալից թղթոյն է այսպիսի ինչ. «Արշակայ Հայոց նախարարի։ Փութա աճապարել իսկ և իսկ, Արշակ. վառեա զաջ քո ընդդէմ պարսկային մոլեգնութեանն։ Քանզի է մեր այնպիսի կազմութիւն պատերազմի և ուժգնութիւն ոգւոյ, զի մին յերկուց առաջի կայ մեզ. եթէ իրք Պարթևաց յաջողեսցին՝ մեք քաջութեամբ զպատերազմն մղեալք և ամենայն զօրութեամբ ընդ թշնամւոյն մաքառեալք՝ մեռանիցիմք և զբնութեանն պարտիս հատուցանիցեմք, և կամ եթէ օգնական մեզ դիքն լինիցին՝ զՊարսիկն վանեալ վկանդեալ՝ դարձցուք այսրէն յաղթութեամբ և նշան յաղթութեան ի վերայ թշնամեացն կանգնեսցուք։ Ապա զամենայն իսկ յուլութիւն ծուլութեան և զխեռութիւն ի բաց թօթափեա, և զմտաւ ած զԿոստանդիանոսն սքանչելի և զզօրութիւն արանցն երևելեաց, որ ի քեզ և յորս նման քեզ բարբարոսքն իցեն՝ ծախեցան ի յոյլն և ի զառամեալն Կոստանդեայ, և զիս ես այժմ ած զմտաւ զՅուլիանոս, զքրմապետ, զկեսար, զաւգոստոս և զպաշտօնատար դիցն և Արեայ, որ Փրանկացն և խժդժից սատակիչն եղև, իսկ Գագղիացւոյն և Իտաղիացւոց ազատիչն։ Ապ'եթէ այլ ինչ ի մտի խորհի-

ցիս, քանզի լսեմ զքէն թէ խորամանգ իմն իցես, և զօրդ չարաբարոյ և ամբարտաւան, որպէս և իրքս որ առաջի կան ցուցանեն (քանզի զթշնամի զումն հասարակաց օգտի առ քեզ թագուցեալ պահես և ի նմին ցայժմ տեւես՝ դէտ ակն կալեալ ելից պատերազմին). մեզ շատ և բաւական է դիցն օգնականութիւն՝ զի զամենեսին առնիցեմք սատակաջինջ։ Այլ եթէ այլ ինչ բաշխք բախտիցն կամիցին, քանզի սոցա զօրութիւն կամք դիցն են՝ համդարտութեամբ և քաջութեամբ տարայց։ Սակայն այնմ իմն գիտակ լեր՝ թէ (յայնժամ) ի հիմանց այրեալ տաչորեցի տուն քո, և քակեալ Հայոցն տէրութեան՝ եղիցես յաւելուած կամ արբանեակ պարսկական իշխանութեանն» (Գաթըրճ. Տիեզ. պատ. Բ. 496. Ծան. 1)։ Այս թղթոյն հարազատութիւնը կասկածելի է։ Արդարև չթուիր հաւանական, թէ Յուլիանոս յԱրշակայ, զոր թագաւոր անգամ կոչել չհամարիր արժանի, այլ զոյգն ոք նախարար՝ կը խնդրէր գունդ մեծ յօգնութիւն, և ոչ կը յանձնէր նմա իւր զօրաց երևելի մասին միոյ առաջնորդութիւնը, եթէ գիտէր զնա ծոյլ, յոյլ, խեռ, բարբարոս և նենգաւոր, և զզօրս նորա չարաբարոյ և ամբարտաւան։ Յուլիանոս, թէպէտ խրոխտ՝ չէր սակայն այնչափ անմիտ, մինչև այնպիսի նախատական նամակաւ և այնպիսի փափուկ ժամանակ խրտուցանէր զԱրշակ, որում այնպէս պէտս ունէր։ Թող որ, ըստ Ամմիանու, Յուլիանոս ոչ թէ գրեց թուղթ, այլ ազդարար (monuere) Արշակայ պատրաստել գունդ ստուար և սպասել հրամանի, զոր ծանուցանելոց էր նմա յետոյ (propere cogniturus)։ Մոլեռանդ քրիստոնեաներէ ստեղծուած են ի նախատինս ուրացեալ կայսեր սմին նման ոչ սակաւ առասպելք, յորոց մին ևս այն է, թէ Յուլիանոս ի վերջին ճակատուն յորում վիրաւորեցաւ ի մահ՝ առնլով արիւնը ցանեց յերկինս ասելով. «Յաղթեցեր, Գալիլեացիդ», կամ՝ «Առ, շիջո զծարաւ քո», կամ թէ կամեցաւ նետուելով ի յորձանս լինել աներևոյթ իբրև զՀռոմուլոս։ Զայսոսիկ կը պատմեն Թէոդորետոսի և Գրիգորի Նազիանզացւոյ պէս մարդիկ։

Միւս ուղին էր յաջմէ առ Եփրատաւ, ընդ որ խաղաց ինքն Յուլիանոս բուն բանակաւ հանդերձ նաւատորմղիւն։ Երկոքին բանակք պիտի միանային առ Տիզբոնի, մայրաքաղաքին Պարսից։

25. Յուլիանոս հասնելով առաջի Տիզբոնի՝ զարկաւ ցրուեց պարսկական բանակը, բայց դժուարութիւնն էր առնուլ մայրաքաղաքն, ամուր դիրին և պատրաստութեամբ։ Շապուհ կ'առաջարկէ հաշտութիւն. Յուլիանոս կը մերժէ, և կարծելով յաղթութիւնն արդէն ստացած՝ կու տայ այրել նաւատորմիղը։ Սակայն նոր պարսկական բանակ կը մօտենար ընդ հրամանատարութեամբ Շապհոյ։

Յուլիանոս կ'ստիպուի բռնել Ադիաբենի ուղին, ընդ որ պիտի գար օժանդակ գունդն, զոր յիշեցինք վերագոյնն՝ առաջնորդութեամբ Արշակայ, բայց յապաղեց, քանզի երկպառակութիւն ինկած էր զօրավարաց մէջ, և չէին գտած օգնութիւն յԱրշակայ։ Յուլիանոս մնալով անօգնական՝ կը կրէր ստէպ ստէպ յարձակումն, մինչև պաշարեալ ամէն կողմանէ հեծելազօրուէն Պարսից՝ վարանեալ և յուսահատ կը մտնէ ի ճակատ անզրահ, և կը զարնուի շուրջ սլացող անթիւ նետերէ։ Ի մահ վիրաւորեալ կայսրը տարուեցաւ յիւր վրանն ուր մեռաւ յետ սակաւուց (363. Յուլ.), հանդարտութեամբ խօսելով զազնուութենէ հոգւոյ։ Մնացորդ բանակին մնաց երեք օր մեծ նեղութեամբ և վտանգաւ ի Տուրա առ Տիգրիսիւ ի հիւսիսոյ Տիզբոնի։

26. Յաջորդն Յուլիանու Յովիանոս բախտաւոր համարեցաւ զանձն՝ երբ Շապուհ շնորհեց նմա խաղաղութեամբ մեկնել մնացորդաւ զօրուն, տալով նմա ընդունել փոխանակ պատուաւորին, զոր մերժած էր նախորդ նորա՝ «զհարկաւորն, այլ զվատանուն դաշն», ըստ Եւտրոպիոսի (Ժ. 17) որ էր առաջիկայ։ Ոչ արևելեան կողմն Տիգրիսի միայն, այլ և հինգ գաւառք յայսկոյս գետոյն յարևմտից նորա, զորս հաւն Շապհոյ Ներսեհ թողած էր Հռոմայեցւոց առ Դիոկղետիանոսիւ՝ տրուեցան յետս։ Արևելեան սահման Հռոմէական պետութեան մինչև ցայնժամ ընդարձակուած էր։ Ադրիանոս անձկացոյց զայն կամաւ. այս անգամ զօրն, կամ մանաւանդ ի նեղ անկեալ կայսրն, ջանաց այնպիսի կորստեամբ ճողոպրել զանձն անհնարին տագնապէն։ Փոխանակ չորս օր անցուցանելու բանագնացութեամբ ի Տուրա, ուր հարկ էր սպառել պաշարին սակաւ մնացորդը, եթէ քաջութեամբ յառաջ մղէր Յովիանոս զզօրն, որ 20 մղոն միայն հեռի էր Կորդուաց պտղաբեր երկրէն՝ մարթ էր նմա, Հռոմէական բերդերուն ապաստան, աւելի պատուաւոր դաշինս առաջարկել։ Բայց Յովիանոս զանց առնելով զայս՝ ստիպեցաւ տալ Պարսից զԱրզն, զՄոկս, զԾոդէս, զՀեր և Զարևանդ, և զԿորդուս (գաւառք Մեծին Հայոց որ կը թուի թէ էին յայնժամ ընդ իշխանութեամբ Հռոմայեցւոց), հանդերձ հնգետասան բերդիւք, թող զՍինգարա և զՄծբին որ կարևորագոյնք էին։ «Գին փրկանաց մերոց, որպէս գրեալ է ի դաշինսն, ասէ Ամմիանոս, լինելոց էր դարձուցանել ի թշնամի անդր զհնգեսին գաւառսն յայնկոյս Տիգրիս գետոյ, այն է՝ զԱրզն, զՄոկս, զԾաւդէս, զՀեր և Զարևանդ և զԿորդուս հանդերձ հնգետասան ամուր քաղաքօք, յորս յաւելան ապա Մծբին և Սինգարա, որ ամուր պատուարքն էին ի

ոտհմանագլուխս մեր: Կռուել տասնապատիկ լաւ էր, քան յանձն առնուլ զմին ի պայմանաց անտի» (Ամմ. ԻԵ. 7):

27. Միւս ևս գլխաւոր պայման Յովիանեան դաշանցն էր թողուլ զՀայաստան իւր բախտին, և չլինել նմա ամենևին օգնական. պայման՝ զոր ի վաղուց կը պահանջէր Շապուհ, և որ ոչ այլ ինչ էր՝ եթէ ոչ խոպառ գրաւումն Մեծին Հայոց.—«Միւս ևս պայման արդարև անիրաւ, կը յարէ Ամմիանոս, յաւելաւ ի դաշինս անդր, զի Արշակայ որ միշտ բարեկամ մեր էր և հաւատարիմ՝ մի տացի այնուհետև ի մէնջ օգնութիւն ընդդէմ Պարսից: Սովին կամէր խմն թշնամին նախ պատուհասել զայրն վասն ասպատակութեանցն, զորս եդ նա ի կողմանս Պարսից հրամանաւ Յուլիանու. երկրորդ անգամ՝ զի դիւրին լիցի Շապհոյ այնուհետև արշաւել ի Հայս, որպէս և եղեն իսկ: Զի յետ դաշանցն եղև կենդանւոյն ձերբակալն լինել Արշակայ, և ի պատճառս երկպառակութեանց որ զայնր զհետ եկին՝ կալան Պարսիկք զԱրտաշատ և գրեթէ զամենայն մասն Հայոց Մեծաց, որ սահմանակից էր Մարաց» (Ամմ. Անդ)—դէպք՝ որ բոլորովին համաձայն են պատմելոցն զՀայոց ի Բուզանդայ յետ յիշեալ դաշանց Յովիանու, ինչպէս պիտի տեսնենք ի ստորև: Հոս կը գտնենք Բուզանդայ Դ. դպրութեան ԻԱ. գլուխը, որ գեղեցիկ համառօտութիւն է մեծանուն հռոմայեցի պատմագրին, ընդ որում, ինչպէս արդէն տեսաւ՝ կարևոր կէտերու մէջ զոյգ կ'ընթանայ Բուզանդ: «Յետ գնալոյն փախչելոյն արքային Հայոց Արշակայ ի թագաւորէն Պարսից Շապհոյ՝ լուռ լինէր թագաւորն Պարսից ի թշնամութենէ, և խօսէր համակ ողոքով և աղաչէր զԱրշակ Հայոց սիրով՝ հաշտ միաբան կալ ընդ նմա յուխտին խաղաղութեան: Վասն զի ի մեծ վտանգ շտապի էր թագաւորն Պարսից ստէպ ստէպ յանդադար պատերազմացն ի թագաւորաց անտի Յունաց (ի Կոստանդայ և Յուլիանոսէ): Իսկ Արշակ արքայ Հայոց ոչինչ կամէր անսալ նմա, և ոչ հուպ ինչ լինել ի նա կամ յղել դեսպանս, և ոչինչ տալ պատարագս ընծայից, և ոչ հուպ ինչ կամ մօտ լինել ի նա բնաւին, և զանունն անդամ նոցա ոչ կամէր լսել: Իսկ թագաւորն Պարսից ստէպ ստէպ յղէր պատարագս առ նա, առաքէր դեսպանս, և ինքն հապճեպ կռուէր ընդ թագաւորսն Յունաց: Այլ իբրև եղև խաղաղութիւն ի մէջ թագաւորացն Յունաց և ի մէջ թագաւորին Պարսից Շապհոյ՝ ուխտից նամակ գրեալ և կնքեալ տայր թագաւորն Յունաց թագաւորին Պարսից: Եւ գրեալ էր յուխտից նամակին այսպէս. Ետու քեզ, ասէ, զՄծբին քաղաք որ է յԱրուեստանի, և զՄիջագետս Ասորւոց, և մէջաշխարհին Հայոց. ձեռնթափ եմ, ասէ. թէ

կարացեալ յաղթել նոցա և արկանել ի ծառայութիւն՝ եւ ի Թիկունս ոչ եկից նոցա։ Արդ ի նեղ ուրեմն անգեալ Թագաւորն Յունաց և ի նեղին վշտի զայս ձև օրինակի բանիցն կնքէր մուրհակ և տայր Թագաւորին Պարսից, և ապա ճողոպրէր ի նմանէ» (Բուզ. Դ. ԻԱ.)։ «Վատթարութիւն Հռոմայեցւոցն՝ էր և պարտութիւն Հայոց Թագաւորին», ասէ Գաթըրճեան։ Սակայն պարտ է գիտել, թէ ինչպէս կը հասկցուի ի բանից Ամմիանոսի՝ Յովիանու դաշանց այն մասին մէջ որ կը վերաբերէր Հայոց՝ կար պայման Թողուլ զՀայս ուրոյն իշխանութիւն կամ թագաւորութիւն, առանց ջանալոյ նուաճել զայն իսպառ ընդ ձեռամբ Պարսից։ «Շապուհ արքայ Պարսից... յետ մահուն Յուլիանու և ամօթալի դաշանցն առ ժամանակ մի պահեալ զմիաբանութիւնն ընդ մեզ՝ ապա յանկարծ, որպէս թէ չէր ամենեւին ընդ պարտուք, առ ոտն հարեալ զուխտն որ առ Յովիանու՝ լինէր ձեռներէց արկանել զՀայս ի սպառ ընդ իւրով իշխանութեամբ» (Ամմ. ԻԷ. 12)։ Ուստի Շապհոյ բռնելով զԱրշակ բանտարկելն առանց տալոյ նմա յաջորդ՝ էր դրժել այն պայմանին, ուստի և բոլոր դաշնադրութեան անուղղակի։ Վաղեսի արձակելն զՊապ յերկիր իւր իբրեւ օրինաւոր ժառանգ, և ի հակառակելն Շապհոյ օգնելն նորա Հայոց զինուք, ինչպէս պիտի տեսնենք՝ չէր ամենեւին եղծումն Յովիանեան դաշանց։

28. Յառաջ քան սկսանելն մեր պատմել զանցս որ անցան ի Հայս յետ դժբախտ դաշանցն Յովիանու՝ բերենք Ամմիանոսի ԻԷ. դպրութեան ամբողջ 12-րդ գլուխն, ուր պատմագիրն քաջ և արդարախօս կը համառօտէ Արշակայ թագաւորութեան վախճանին և Պապայ թագաւորութեան սկզբան պատմութիւնն, որ կարճ յառաջաբան է պատմելոյն ի Բուզանդայ և կ'ամբողջացունէ ինչ ինչ, զոր պակաս թողած է այս վերջինն։ Ահա պատմութիւնն Ամմիանու համառօտիւ։ Յետ Յովիանու դաշանցն, որոյ զօրութեամբ Հռոմայեցիք կը հրաժարէին ի Միջագետաց և յօգնելոյ Հայոց սա պայմանաւ, որ Հայաստան պիտի մնայր ուրոյն իշխանութիւն՝ Շապուհ կը յարձակի հակառակ այս պայմանին ի Հայս. Արշակ կը բռնուի դաւով. Շապուհ երկու որբանեկաց իւրոց, Կիւղակայ և Արտաւանայ (անուանք՝ զորս չենք գտներ առ Բուզանդայ) կը յանձնէ զիսպառ նուաճումն Հայոց. սոքա կը պաշարեն զԱրտագերս, ուր ապաւինած էր կինն Արշակայ հանդերձ որդւովն Պապաւ, բայց երկոքին արքն յանկարծ փոխուելով՝ կը բարեկամանան տիկնոջն և լինին այնուհետև նեցուկ տէրութեանն. զՊապ կը փախցունեն գաղտ առ կայսր, զորոյ օգնութիւնն կը խնդրեն։ Վաղէս առանց զինու զօրութեան կը ղրկէ զՊապ տիրել հայրենի երկրին։ Շապուհ զայ-

բանալով կը դիմէ ի վերայ Պապայ, որ խոյս կու տայ ի լերինս։ Պարսիկք յուսահատելով բռնել զՊապ՝ կ'սկսին աւերել զերկիրն. Արտագերք և ուրիշ ամուր տեղեր կ'առնուին, մինչև ստիպել Վաղեսի զօրօք օգնել Հայոց։ Շապուհ տեսնելով, թէ բռնութեամբ չէ կարող յաջողել՝ կը ջանայ շահել զՊապ խորամանկութեամբ, և կու տայ նմա սպանանել իւր երկու մտերիմ խորհրդատուներն, զԿիւղակ և զԱրտաւան։ Մօտ էր կործանումն Պապայ, մինչ Տերենտ և Արինթէ (ըստ Բուզանդայ՝ Ադէ) հասնելով զօրօք և թագաւորեցուցանելով զՊապ՝ կը մտնեն ի Հայս։ Տեսնենք զբուն բանս Ամմիանու. «Սակայն երկայնակեացն Շապուհ արքայ Պարսից, հանապազ մէտ ի յափշտակութիւն զոր սիրէր ի սկզբանէ անտի թագաւորութեանն, յետ մահուանն Յուլիանու և ամօթալի դաշանցն առ ժամանակ մի պահեալ զմիաբանութիւնն ընդ մեզ՝ ապա յանկարծ առ ոտն հարեալ զուխտն որ առ Յովիանու՝ լինէր ձեռներէց արկանել զՀայս իսպառ ընդ իւրով իշխանութեամբ։ Եւ զի հակառակ էր նմա ազգն այն՝ մերթ դաւով և բռնութեամբ նեղէր զերկիրն, և մերթ զնախարարսն և զմեծամեծս ջանայր արկանել ի հրապոյրս, և զայլս իբրև զհէն յանկարծ ի վերայ հասեալ նուաճէր։ Ապա հնարիւք իմն խաբէութեան և սուտ երդմամբ զինքնին զթագաւորն Արշակ հրապուրեալ ի խնջոյս՝ տալ տանել հեռի ուրեք, հանել զաչս նորա, և կապեալ ոսկի շղթայիւք—պատիւ որ ընծայի մեծամեծաց և համարի առ նոսա իբրև մխիթարութիւն ի վիշտս գերութեան—արգելոյր ի բերդ մի անուանեալ Ագաթանս, ուր չարաչար տանջեալ մեռանէր նա սրով։ Ապա զի մի ինչ պակաս իցէ ի նենգութեանն՝ յաւել երկուց փախստէից՝ Կիւղակայ ումեմն ներքինւոյ, որ մարդպետն լեալ էր, և Արտաւանայ զօրագլխի զօրաց յանձն առնել զՀայս, պատուէր տուեալ նոցա՝ ջանալ առնուլ և կործանել զԱրտագերս քաղաք, ամուր պարսպօքն և պահանորդօք, ուր ապաստանեալ էր կինն Արշակայ հանդերձ որդւովն։ Պաշարումն սկսաւ, այլ անմատոյց բարձրութիւն տեղւոյն և սաստկաշունչ ձմեռն՝ անհնարին զառն գործէին։ Կիւղակ իբրև ներքինի գիտէր վարել ընդ կանայս. յայս իմն ապաստան՝ հանդերձ Արտաւանաւ մատչէր ի պարիսպ անդր, և որպէս թէ պատգամս ինչ առ տիկինն ունիցի՝ անկասկած գտանէր մուտ։ Զառաջինն փորձէին արքն երկոքեան ահ արկանել տիկնոջն և պահանորդաց, յուշ արարեալ նոցա զանագորոյն բարս Շապհոյ՝ խրատ տային փութալ ունել զառաջս չարեացն անձնատուր լինելով արագ։ Այլ յետ բազում բանից, որ այնպէս սաստկութեամբ պնդէին տալ ի ձեռս զբերդն, յանկարծ խանդաղատեալ ընդ ար-

տասուս տիկնոջն վասն աղետից առնն, Թերեւս և բարւոյ իմիք
ակն կալեալ՝ գաղտ ի բանի լինէին ընդ բերդակալսն՝ ի ժամադիր
ժամու ելեալ գիշերայն յամրոցէն անկանել ի վերայ բանակին, և
տուեալ երդումն՝ Թողուլն զԱրտագերս, գային այսրէն ի բանակն
ասել, եթէ ամրականքն խնդրեն ուրուք երկուս խորհել զինչ առ-
նելոց իցեն, և այնպէս վստահացեալ զօրուն անկասկած ի քուն
լինէին։ Այլ զմէջ գիշերաւ, մինչ խոր ի քուն էր բանակն՝ յանկարծ
բանային դրունք քաղաքին, և գունդ մի ընտիր ընտիր զօրաց մեղ-
մով իմն և անբարբառ, սուսեր ի ձեռն, մտեալ ի ղակիշն առնէին
կոտորած մեծ, ոչ գտեալ ընդդիմութիւն ի Պարսից կուսէ անտի։
Այս անակնկալ հարուած և տագնապն որ զհետ այնր եկն՝ զայ-
րացուցին զՇապուհ, որ ընդ այն մանաւանդ բրդէր ի ցասումն, զի
լուաւ զփախուստ արքայորդւոյն Պապայ, որոյ գաղտ Թողեալ զքա-
ղաքն խրատու մօրն՝ եգիտ ընդունելութիւն մեծ ի Վաղեսէ, որ
ցուցանէր նմա տեղի բնակութեան զՆէոկեսարիա քաղաք Պոնտա-
ցւոց, և հրաման տայր կարգել նմա ռոճիկս և ունել զնա մեծաւ
շքով։ Յայնչափ մեծարանաց կայսերն քաջալերեալ Կիւղակն և Ար-
տաւան՝ առաքեցին հրեշտակս առ Վաղէս, խնդրել ի նմանէ զօրս
յօգնականութիւն և Թագաւորեցուցանել Հայոց զՊապ։ Տալ զօրս
չառնոյր յանձն Վաղէս, հայեցեալ ի հանգամանս ժամանակին.
սակայն տայր պատուէր Տերենտեայ զօրավարի՝ մուծանել զՊապ ի
Հայս վարել զիշխանութիւն, առանց առնլոյ զանուն և զպատիւ
Թագաւորի, և զայս առնէր վասն այնորիկ, զի մի ձգիցէ յանձն
մեղադրանս, որպէս Թէ հակառակ ինչ դաշանցն գործիցէ։ Այս ա-
մենայն անցք շարժէին յանհնարին ցասումն զՇապուհ, որ զու-
մարեալ զօր բազում՝ սկիզբն առնէր աւերել քանդել զՀայս։ Ի մեր-
ձենալ նորա զահի հարեալ Պապայ, և զի չունէր նա ուստեք ակն
օգնութեան՝ խոյս տայր հանդերձ Կիւղակաւ և Արտաւանաւ ի գը-
լուխս լերանց որ բաժանեն զՀայս ի Կողքացւոց։ Ամիսս հինգ կա-
ցեալ նոցա անդ յանտառախիտ և ի լեռնային վայրս՝ աշխատ արա-
րին զԹշնամիսն, որոց տեսեալ, եթէ ի զուր ծախեն զժամա-
նակն վասն սաստկութեան ձմերայնոյն՝ այրեցին զամենայն ծառ
պտղատու, եգին զօրս յամենայն բերդս զոր առին զօրութեամբ
զինու և կամ դաւով, և բովանդակ զօրութեամբ իւրեանց անկան
ի վերայ Արտագերից, զոր առին յետ երկուստեք ճակատուց որ
սպառեցին զոյժ պահանորդացն։ Կինն Արշակայ հանդերձ ամենայն
գանձիւքն անկաւ ի ձեռս նոցա։ Այս դէպք ստիպեցին զՎաղէս
առաքել գունդս զօրավարութեամբ Արինթեայ՝ օգնել Հայոց, եթէ
Պարսիկք նորոգեսցեն զԹշնամութիւնն։ Սակայն Շապուհ, որոյ խո-

րամանկութեանն չգոյր չափ, և որ գիտէր, եթէ օգուտ անձինն այնպէս իմն պահանջէր մտանել ի կեղծիս բարեկամութեան՝ ջանայր ի ձեռն որբանեկաց իւրոց ածել զիւրև զՊապ։ Յանդիմանէր զնա պատրուակաւ բարեկամութեան, զի այնչափ ազատութիւն շընորհեաց Կիւղակայ և Արտաւանայ, որոց, ասէր, լեալ էր գերի, անձին պահեալ զատուեր միայն թագաւորի։ Դիւրահաւան թագաւորն անկեալ ի գաղտնի որոգայթն՝ տայր սպանանել զերկոսին արսն և յղէր զգլուխ նոցա առ Տապուհ իբրև ի նշան հպատակութեան իւրոյ։ Այս անագորոյն մահ հռչակ հարաւ վաղվաղակի ընդ ամենայն կողմանս։ Վճարեալ էր վասն Հայոց, եթէ Պարսից երկուցեալ ի զայրանէն Արինթեայ՝ չէր դադարեցուցեալ զգործ դաւաճանութեանն։ Ուստի հաճեցան խնդրել ի ձեռն հրեշտակաց՝ ըստ պայմանի դաշանցն Յովիանու չլինել միջամուխ։ Վաղէս մերժէր զպատգամն, և Տերենտիոս առաքէր երկոտասան լեգէոնօք։ Տապուհ տրտունջ լինէր զիրացն եղելոց, նախ՝ թէ հակառակ դաշանցն Յովիանու ձեռն արկին Հռոմայեցիք օգնական լինել Հայոց, երկրորդ անգամ՝ թէ չարարին երեսս պատգամաւորութեանն զոր առաքեաց կարգել յարգարել զիրսն. այս համարելով զդաշինսն եղծեալ՝ կոչէր զազգս արուարձանեայս յօգնականութիւն, և պատրաստէր մտանել ի ճակատ ի հասանել գարնայնոյն, տապալել զամենայն որ ինչ առանց նորա հաւանութեան գործեալ էր»։

Զայս պատմութիւն Ամմիանոսի եթէ համեմատենք ընդ պատմութեան Բուզանդայ՝ կը գտնենք արդարև տարբերութիւններ, կամ մանաւանդ պակաս, քանզի Պապայ յունական զօրօք թագաւորելուն նախընթաց դէպք, զորս յիշեցինք արդ Ամմիանոսէ՝ մեծաւ մասամբ չկան առ Բուզանդայ. և այսր պատճառ այն է, որ Բուզանդ թողլով Պապայ պատմութեան սկզբան պարագաներն՝ կ'առնու զպատմութիւն իւր Պապայ Հայաստան մտնելէն Հռոմայեցի զօրօք առաջնորդութեամբ Տերենտի և Արինթեայ զօրավարաց Վաղեսի։ Այսպէս Բուզանդայ պատմութիւնն զՊապայ կ'սկսի այս պատմագրին Ե. դպրութեան առաջին գլխէն, ինչպէս պիտի տեսնենք։ Գանք այժմ մեր պատմութեան կարգին, այսինքն առ այնս որ դիպեցան ի Հայս առ Արշակաւ յետ դաշանցն Յովիանու։

29. Յովիանոս մեռաւ դաշնագրութեան յաջորդ տարին (364), և Վաղենտիանոս (364—375) առնլով զկայսրութիւնն՝ իսկ և իսկ ընտրեց իւր օգնական զեղբայր իւր զՎաղէս (364—379), տալով նմա զարևելս, մինչ ինքն առաւ զարևմուտս։ Թէպէտ Հռոմայեցիք (իմա Յովիանոս) ի նեղ անկեալ թողին զՀայս իւրեանց բախտին՝ Հայք չթողին զնոսա։ Ուստի ըստ պատմութեան Բուզանդայ,

և է հաւանական, Հայք պատշաճ դատեցան զրկել պատգամաւորութիւն առ նորապսակ կայսրն։ Թէ Հայք ինչ մտօք զրկեցին զայս պատգամաւորութիւն՝ չէ մեզ ստուգիւ յայտ. սակայն էր այն՝ ազգ ինչ բողոքոյ առ Հռոմէական ազգն, թէ ինչ իրաւամբ թողին Հռոմայեցիք ի վաղուց դաշնակից ազգ մի հաճոյից բարբարոս թշնամւոյն. ուստի և, ասէ պատմութիւնն, պատգամաւորութեան առաջին նպատակն էր յիշեցունել կայսեր զհին դաշնակցութիւն ազգին, և թէ Հռոմէական ժողովրդեան նուիրական պարտքն էր օգնել Հայոց դէմ ի մեծ կարօտութեան։ Պատգամաւորութեան նուիրական բնութիւնն անտի ևս յայտնի է, որ այս անգամ ազգին հոգևոր գլուխն ընտրեցաւ գլուխ և առաջնորդ այն պատգամաւորութեան, այն է մեծն Ներսէս, որ կը թուի դժկամամբ յանձն առած անձամբ երթալ պատգամաւոր հանդերձ երևելի նախարարօք ոմամբք։ Նախարարք զորոց անուանսն կու տայ Բուզանդ՝ դարձան արդարև ոչ անյոյս ի Հայս, բայց առանց Ներսիսի.—«Ապա վասն խաղաղութեան ուխտին միաբանութեան դաշինն որ էր աշխարհին Հայոց ընդ կայսերն Յունաց՝ դէպ եղև առաքել անդր կազմութեամբ մեծաւ արքային Հայոց զինքնին զմեծ կաթողիկոսն Հայոց զՆերսէս, և ի մեծամեծացն Հայոց սատրապս տասն, զի երթիցեն և ի մէջ կայսերն և ի մէջ իւրեանց զուխտն հաւանութեան և խաղաղութեան նորոգեսցեն։ Ապա չոգան գնացին հասին ի կայսերական պաղատն թագաւորացն Յունաց։... Այսոքիկ են իշխանքն որք չոգան ի թագաւորէն մեծէ յԱրշակայ ի Հայոց աշխարհէն առ կայսրն Յունաց առ Վաղէս։ Ինքնին մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս, և մեծ նահապետն Մամիկոնեան տոհմին Վահան, եղբայր մեծի սպարապետին Հայոց, և ընդ նմա Մեկեն նահապետն Ռշտունեաց և Մեհառ նահապետն Անձևացեաց, Գարջոյլ Մաղխազ նահապետն Խորխոռունեաց, և Դեմետ նահապետն Գնթունեաց, և Ալշկէն նահապետն Բագէնից, և Սուրիկ նահապետն Հրսիձորոյ, և Պրկէն նահապետն Հաբուժենից։ Սոքա չոգան ի սէր միաբանութեան առ կայսրն Վաղէս, որ արգել աքսորեաց զմեծ քահանայապետն Ներսէս» (Բուզ. Դ. Ե, ԺԱ.)։

Ասացաք «առանց Ներսիսի»։ Վաղէս էր արիանոս, և կը հալածէր ուղղափառ կոչուած, այն է Նիկիական հաւատոյն կողման եպիսկոպոսներն, նա և աքսորեաց իսկ (366) Կոստանդնուպոլսոյ արիանոս եպիսկոպոսին հետ չմիաբանող եպիսկոպոսներ։ Զէ անհաւանական, թէ և Ներսէս, որ իբրև պատգամաւոր կը գտնուէր յարևմուտս, թերևս ի Կոստանդնուպոլիս՝ աքսորուեցաւ այն եպիսկոպոսաց հետ։ Ըստ Բուզանդայ՝ որպէս թէ կայսեր միամօր որդին,

միայն ժառանգ թագաւորութեանն էր հիւանդ, և կայսրն որ ի սկզբան պատուով ընկալաւ զՆերսէս՝ խնդրեց ի նմանէ բժշկել զորդին աղօթիւք, և Ներսէս իմացունելով նմա, թէ Քրիստոս կարող էր բժշկել զորդին, եթէ կայսրն դառնայր յուղղափառութիւն՝ տուաւ նմա հնգետասան օր ժամանակ։ Կայսրն բարկանալով կը մերժէ զՆերսէս, և պայմանեալ օրը կը մեռնի պատանին։ Ներսէս կու տայ նմա յոյս, թէ պիտի յառնէր որդին, եթէ գայր կայսրն յուղիղ հաւատս։ Վաղէս առաւել ևս զայրանալով՝ կը հրամայէ կորուսանել զՆերսէս, և մեծամեծքն հազիւ կ'ազատեն զնա, որ կ'աքսորուի հանդերձ այլովք ի կղզի մի ամայի, ուր հրաշիւք կը կերակրի Ներսէս իւրովքն, մինչև զկնի մահու կայսերն կ'արձակուի և կը դառնայ ի Հայս.—«Զայնու ժամանակաւ թագաւորն մեծ Յունաց Վաղէս ի խոտորութեան հերետիկոսութեան Արիանոսաց էր։ Իբրև ետես զնոսա (զպատգամաւորսն Հայոց)՝ զառաջինն մեծաւ շքով մեծարեաց զնոսա։ Ապա դէպ եղև, զի որդի միամօր կայսերն, այն իսկ գտանէր նորա զաւակ, անկեալ դնէր յախտ սաստիկ հիւանդութեան։ Թագաւորն վասն աղօթս առնելոյ ի վերայ մանկանն ստիպէր զսուրբ կաթողիկոսն Հայոց զՆերսէս։ Իսկ նա ասէ. Եթէ հաւատասցես թէ տէր մեր Յիսուս Քրիստոս որդի է և ծնունդ Աստուծոյ միածին յէակութենէ Հօր, և ոչ արարած՝... լինիմ երաշխաւոր զի զմանուկն ողջ անարատ առաջի քո կալայց։ Եւ զայն յաւել, եթէ յօրէ յայնմանէ մինչև յաւուրս հնգետասան անսացեալ քեզ. եթէ ոչ եկեսցես յուղիղ հաւատս՝ յետ լնլոյ եդեալ կիտին մեռցի մանուկն։ Իբրև լսէր թագաւորն զայս ամենայն՝ լուռ ևեթ կայր, զոտն զոտամբ արկեալ, արմուկն ի ծունգ, և ձեռն ի ծնօտի։ Ապա մեծապէս ի ցասումն բրդեալ՝ տայ հրաման երկաթի կապանօք կապել զսուրբ եպիսկոպոսապետն և արկանել ի փիզակէ, մինչև տեսեալ ուշ ունիցի մանկանն, եթէ կեցցէ թէ ոչ։ Ի լնուլ աւուրցն հնգետասանից սատակեցաւ որդի կայսերն։ Իբրև ելաց և կոծեցաւ՝ ետ հրաման, և ածին առաջի իւր զսուրբն Ներսէս։ Մօտ առ ինքն կոչեալ հարցանէր, եթէ ի ձէնջ եղև մանկանն մեռանել։ Իսկ նա ետ պատասխանի և ասէ. Հնգետասան օր երկարեաց Քրիստոս, թերևս դարձջիք. և այժմ եթէ հաւատասցես՝ կարող է որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս յարուցանել զնա։ Զայրացեալ ընդ բանսն թագաւորն՝ կամեցաւ զնա չարամահ առնել. ապա մատուցեալ առ թագաւորն աւագք դրանն՝... հազիւ հազիւ կարացին ի հաւան ածել զթագաւորն, և արկին յայն չափ, զի աքսորեսցի միայն։ Զի ասէին. Ոչ երբէք ուրեք եղեալ է, ոչ ի մէջ թշնամեաց և ոչ ի մէջ պատերազմի՝ թարմատար հրեշտա-

կաց ինչ կալ և կալ, թող թէ մահ. և սա այր մեծ է և աւագ, և աշխարհի միոյ գլուխ:.. Անսաց նոցա թագաւորն, և հրաման ետ աքսորել զերանելին Ներսէս ի կղզի մի մեծ ովկիանու ահագին ծովուն, յանապատ յանջուր տեղի մի, ուր ոչ բոյս ինչ գալար և ոչ արմատ ինչ, և ոչ այլ ինչ ամենևին որ ինչ ի պէտս մարդկան լինիցի, բայց միայն քար և աւազ ապառաժ, և ոչ ճանապարհ ուրեք ընդ այն, և ոչ գնացք ինչ նաւաց: Էին ընդ նմա արք եւթանասուն, և յեւրոցն երկու, անուն միոյն Ռստամ սարկաւագ, և երկրորդին՝ Տիրանամ: Որ տկարագոյնքն էին ի նոսա՝ սկսան նքողել ծարաւել նուաղել և ներգևել գորսովել ի քաղցոյ և ի ծարաւոյ:.. Եւ ասէ Ներսէս. Դիք ծունր ամենեքեան: Եւ ի դնել նոցա երից անգամ ծունր և կալ յաղօթս՝ յարեաւ ի ծովու անդ հողմ սաստիկ յոյժ, և սկսաւ ընկենուլ ի կղզի անդր ձուկն սաստիկ, մինչև շեղջս շեղջս կուտէր ի ցամաքի կղզւոյն, և ընդ նմին փայտ սաստիկ յոյժ: Իբրև հանին կուտեցին զփայտն՝ խորհէին թէ հուր պիտոյ է. յանկարծակի ինքնին լուցեալ փայտն հրով վառէր, և յարուցեալք յետ աղօթսն կատարելոյ մատեան արկին ի խորովս և բազմեցան յուտել: Եւ իբրև կերան՝ պէտք եղև ըմպելոյ ջրոյ. և յոտն եկաց սուրբն Ներսէս, և մատուցեալ փորեաց զաւազն ի կղզւոջ, և բղխեաց աղբիւր՝ ջուր քաղցր և անոյշ, և անտի ըմպէին որք հանապազորդ էին ի կղզւոջն: Այսպէս հանապազ հանդերձ եղբարբքն ապրեգական մատանելոյ կային, և ապա տէրունատուր կերակրովն ուրախ լինէին յընդենուլ ալեացն զկերակուր:.. Զայս օրինակ համակ տայր նոցա զքաջալերութիւն սուրբն Ներսէս ամս ինն որ եղեն յայն կղզւոջ:... Իբրև սատակեցաւ կայսրն՝ դարձան ամենայն հովիւքն եպիսկոպոսք որք աքսորեալք էին, յայնժամ դարձաւ և սուրբ կաթողիկոսն Ներսէս» (Բուզ. Դ. Ե, Զ, ԺԲ.):

Այս պատմութեան առաջին մասն, թէ Ներսէս գնաց հրեշտակութեամբ առ Վաղէս, և որևիցէ պատճառաւ աքսորուեցաւ աղանդամոլ կայսերէն, անտարակոյս քիչ ժամանակ և ոչ ինը տարի, և ապա դարձաւ ի Հայս՝ չէ անհաւանական, ոչ այնչափ վասն վկայութեան Խորենացւոյն, որ զնոյն պատմութիւն կը կրկնէ համառօտիւ հանդերձ սքանչելեօք կերակրելոյ ի ձկանց, որչափ վասն զի աքսորել եպիսկոպոսունս հակառակ դաւանութենէ՝ սովոր էր Վաղէս, և որպէս ասացաւ՝ չէ անհաւանական, թէ և Ներսէս հանդիպեցաւ նոյն բախտին: Գալով պատմութեան միւս պարագաներուն, այն է մահուան կայսրորդւոյն գուշակութեամբ Ներսիսի. պահանջելոյ սորա կայսեր դարձն իբրև պայման բժշկութեան, նա և յարութեան իսկ որդւոյն, և մանաւանդ հրաշիւք կերակրելոյն նո-

րա խռովքն ի հրաշալի ձկանց յամալի կղզւոջ ուրեք Ովկիանու (Միջերկրականին)՝ են վէպք, հաւանականապէս առնուած վկայաբանութենէ ուստեք վարուցն Ներսիսի, ուր ինչ ինչ խառն է և ի պատմութենէ վարուց Բարսղի։ Չէ անհաւանական նոյնպէս և այն զոր կը պատմէ Բուզանդ, թէ Արշակ նեղանալով կայսեր վասն աքսորանացն Ներսիսի՝ արար թշնամական ինչ ցոյց, ապստամբ գնելով ի կողմանս ինչ Կեսարիոյ, բայց ոչ «զվեց ամ զմիմեանց զհետ».—«Եկին հասին դեսպանքն երթեալք ի կայսերէն առ թագաւորն Հայոց Արշակ, և մատուցանէին նմա զհրովարտակն կայսերն... և զանթիւ կարասի գանձուց առաջի թագաւորին։ Իսկ թագաւորն Արշակ իբրև լուաւ և ետես զայս ամենայն՝ անշնորհ առնէր զտալիսն և զբերելիսն կարասոյն։ Ի ցասումն մեծապէս բարկութեամբ ընդ կայսերն նիւթեաց, եթէ զիա՞րդ իշխեաց արգելուլ զայնպիսի այր զմեծ և զպատուական, զգլուխ և զվարդապետ զառաջնորդ աշխարհի և զթագաւորութեան միոյ։ Քարինք բազումք, ասէ, ի վերայ կայսերն, և ձեռ ի բերելդ. քարինք և մեր շատ կան ի թափել զատամունս նորա՝ ի տալն, և ձեռ՝ ի բերելդ՝ զմեր վատթարութիւնս յո՜ տարայց. արդ այժմ երախտեացդ ես զարձուցանեմ։ Տայր հրաման Վասակայ իւրում զօրավարին զօր ժողովել, գունդս բովանդակել, ելանել հարկանել և աւար առնուլ զկողմանս Գամրաց։ Իսկ զօրապետն սպարապետն Վասակ փաղփաղակի զտուեալ հրամանս նորա կատարէր. հարկանէր աւար առնոյր զկողմանս Գամրաց մինչև ի քաղաքն Անկիւրացւոց. զվեց ամ միմեանց զհետ աւերէր զաշխարհ սահմանացն Յունաց» (Բուզ. Դ. ԺԱ.)։

30. Բուզանդ Ներսիսի բացակայութեան առթիւ կու տայ մեզ Խադ անուն եպիսկոպոսի ուրուք պատմութիւնը։ Այս Խադ ըստ Բուզանդայ էր ձեռնասուն Ներսիսի, ձեռնադրեալ ի նմանէ եպիսկոպոս Բագրևանդայ և Արշարունեաց։ Սմա յանձնած էր Ներսէս աղքատանոցաց տեսչութիւնը։ Այլուր կը կոչէ զնա Բուզանդ «աթոռակից» Ներսիսի (Դ. ԺԵ.)։ Ներսէս, ըստ Բուզանդայ, ի գնալն ի Յոյնս՝ թողուց զԽադ տեղակալ, որ հաւատարմութեամբ կատարեց զիւր պաշտօն։ Էր աղքատասէր, խնամոտ, անաչառ։ Բուզանդ չհաներ զԽադ ևս անմասն սքանչելագործութեան պարգևէն։ Հիւանդք կը բժշկէին ի ձեռն նորա. շտեմարանք և մառանք զոր կը թափէր (կը պարպէր) Խադ ի պէտս աղքատաց՝ կը լնուին հրաշիւք։ Գողք հարեալք կուրութեամբ կը բերեն յետ զիւրեանց գողօնն, և մեծապարգև լեալ կը մեկնին։ Դևք որ ըստ Բուզանդայ խաղապատէին զՊապ, և զորս յայտ յանդիման կը տեսնէր ամեն մարդ՝ զոռնաձայն միայն առեալ, որպէս զՆերսիսի

նոյնպէս զԽադայ՝ լինէին աներևոյթ.—«Այրս այս Խադ բուն էր ի Կարին գաւառէ, ի գեղջէ Մարագայ. Ձեռնասուն էր առ եպիսկոպոսապետին Ներսիսի, զառաջեաւ իւրով զսա էր սնուցեալ: Այլ եբրև միտս աջողակս եբեր և յառաջադէմ եղև ի հաւատս և հաւատարիմ յամենայն գործս գտաւ, ևս առաւել ի պաշտօնն զոր ունէր և ի սէր ընդ եկեղեցին Աստուծոյ՝ ապա աղքատաց ևս տեսչութիւն ի սրբոյն Ներսիսէ սմա հաւատացաւ, և յայնժամ ևս առաւել զբարեխնամութիւն ցուցանէր: Ապա եպիսկոպոսապետն Ներսէս յորժամ երթայր յուղեգնացութիւնն յերկիրն Յունաց՝ ձեռնադրեաց զայս Խադ յեպիսկոպոսութիւն Բագրևանդայ և Արշարունեաց, և եթող զսա իւր փոխանակ տեղապահ և գնաց: Իսկ աշխարհ ամենայն Հայոց լեզուին, ի գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, տեղեաց տեղեաց, մեծամեծք, աշխարհականք, գաւառատեարք, նահապետք մեծազգեացք և ամենայն ուխտ քահանայութեան, ժողովք միաբանական ժողովրդոցն, ի սուգ տխրութեան ընկղմեալ էին վասն իւրեանց հօտապետ գլխաւորին, զի հեռացաւ ի նոցանէ: Իսկ սուրբն Խադ եպիսկոպոսն առհասարակ աշխարհին տայր հրաման՝ ի պահս և յաղօթս մտանել և ի խնդրուածս, զի դարձ լիցի սրբոյն Ներսիսի: Եւ զամենայն ժամանակս որչափ և արգելեալ նա անդ՝ համակ խնդրէին պահօք ժողովուրդքն, և յամենայնի իսկ Խադն առաջնորդէր նոցա ոչինչ պակաս քան զիւրեանց բուն զհովուապետն Ներսէս մինչև ի գալուստն նորա, մինչև կատարեաց Տէր զաշխարհի խնդրուածս, և դարձաւ սուրբն Ներսէս ի տեղի իւր»: Եւ որովհետև անաչառ էր Խադ՝ «բազում անգամ կշտամբէր, ասէ Բուզանդ, և յանդիմանէր զթագաւորն Արշակ և զամենայն մեծամեծս և զիշխանս, մանաւանդ յորժամ սխալէին զնա, թէ Եկ, ուղղեա սեղան յեկեղեցւոջն յաւանն յԱրշակաւանն (որ էր ի վիճակի նորա յԱրշարունիս): Ես, ասէր նա, տեղապահ եմ, և ոչինչ առանց այնորիկ որ թողն զիս հայրն՝ ունիմ իշխանութիւն գործել ինչ: Ապա կամեցեալ Արշակ թագաւորն պատրուակաւ և ագահութեամբ կարասոյն մեքենայիւ խաբել զսուրբ եպիսկոպոսն Խադ՝ բազում ոսկի և բազում գանձս արծաթոյ և բազում նժոյգս զարքունական ձիոց արքունի օճառովք, ոսկիվարաւանդ ապրդմովն տայր նմա, պատրել հաճել զմիտս նորա, յինքն յանդուցանել: Իսկ նա զկարասին զոր տանոյր յարքայէն՝ յանդիման նորա աղքատաց բաշխէր, և զյանդիմանութիւնն ոչինչ թուլացուցանէր, մինչև հրաման տայր արքայ հալածել զեպիսկոպոսն Խադ ի բանակէ անտի: Իսկ նա ա́ռ շրջել ընդ աշխարհն, կարգել և խրատել, ուսուցանել և զարմանել զաղքատսն, որպէս էր նմա յանձն արա-

րեալ սրբոյն Ներսիսի և՝ իւր գնացեալ: Բազում նշանք և արուեստք
և զօրութիւնք, բժշկութիւնք հիւանդաց լինէին ի ձեռս նորա:
Իբրև պաշտէր զաղքատսն և սպառէր թափէր զամենայն յուրանս
և զնորամանս և զմառանս զինւոյն, և զկարասս ամենայն մառա-
նացն տայր բաշխել աղքատաց՝ երթայր յայլում աւուր տեսանէր
լցեալ լինէին իբրև ի հրամանէ Աստուծոյ, և դարձեալ օր ըստ
օրէ մատակարարէր աղքատացն: Ի ժամանակեան միոջ եկին գողք
և գողացան զեզինս եկեղեցւոյն սրբոյ զԽադայ եպիսկոպոսին, առին
և գնացին: Իսկ ի միւսում աւուր աչք կուրացեալ եղեն գողոցն,
և ինքեանք յանիմաստս առ խարխափս եկին ածին ի դուրս սրբոյն
Խադայ զամենայն եզինսն: Իսկ ինքն սուրբ Խադ ելեալ տեսանէր
զնոսա, և զուհանայր զՏեառնէ, որ այնչափ վերակացու և այցելու
եղև հաւատացելոց իւրոց: Կայր յաղօթս եպիսկոպոսն Խադ և բը-
ժշկէր զաչս գողոցն, և հրաման տայր լուանալ զանձն նոցա, և
դնէր ճաշ առաջի նոցա և քաջ ուրախ առնէր զնոսա մեծապէս:
Ապա օրհնէր զնոսա և տայր զեզինսն, զոր իւրեանց էր գողացեալ,
և արձակէր զնոսա զիւրեանց ճանապարհն, և գնացին: Եւ էին
նորա երկու դստերք. և ետ զմինն Սարկոյ ումեմն կին, և զկնի
աներոյն իւրոյ նա կալաւ զաթոռն Խադայ» (Բուզ. Դ. ԺԲ.): Ըստ
Բուզանդայ՝ Ներսէս գոհ էր մեծապէս զԽադայ, մանաւանդ երբ
յետ դարձին ի Յունաց տեսաւ նորա անարատ վարքը և իմաստուն
գնացքը.—«Իբրև եկն հայրապետն Ներսէս ի Հայս և ի վերայ հա-
սանէր իւրում տեղապահին սրբոյն Խադայ, զի էր կացեալ ի ճշմար-
տութեան և յուղղութեան, և գնացեալ էր զճանապարհս տեառն
Աստուծոյ, զի զԽադ զհօգևոր որդեակն իւր եգիտ ըստ կամացն,
որպէս ինքն կամէր՝ զնա անձկով տեսանէր. այլ յորժամ լսէր ի
Խադայ զամենայն զանօրէնութիւնսն չարութեան ծուռ գնացիցն
թագաւորին՝ տրտմէր լայր ողբայր և կոծէր մեծամեծ հեծեծա-
նօք» (Բուզ. Դ. ԺԳ.):

31. Մինչ այս մինչ այն՝ Շապուհ, ժառանգական թշնամին
Հայոց՝ կ'սպառնար, և մեծագոյն աղէտք այն էին, զի մեծ մասն
նախարարաց Հայոց էին բաժանեալ թագաւորէն, կամ ոչ սերտի-
մի ընդ նմա: Յարձակումն ի կողմանէ Պարսից եկաւ հուպ ընդ
հուպ, ոչ մի անգամ միայն, այլ բազմիցս. և թէպէտ Արշակ իւր
աննման զօրավարովն Վասակաւ քաջութեամբ դէմ դրաւ իբր չորս
կամ հինգ տարի՝ սակայն լքեալ պարտասեալ ի վախճանի, բռն-
դատեալ և իւր նախարարներէն, որ մի ըստ միոջէ լուծան քակե-
ցան, ձեռս տուին ի թշնամին՝ ստիպուեցաւ երթալ անձամբ առ
Շապուհ: Բուզանդ երկար և մանր կը պատմէ Հայաստանի այս

հնգամեայ վիճակն, ինչպէս նաև զանձնատուր լինելն Արշակայ
հանդերձ աղետիւք որ եկան ի վերայ ազգին։ Ահա Բուզանդայ
պատմութիւնն, զոր քաղելով կը գնենք՝ թողլով աւելաբանութիւն-
ներն, մանաւանդ Թուաց մասին։

«Իբրև եղև խաղաղութիւն ի մէջ թագաւորին Յունաց (Յո-
վիանու) և ի մէջ թագաւորին Պարսից՝ այնուհետև կազմէր զզօրս
իւր Շապուհ, և խաղաց ի վերայ Արշակայ մարտի պատերազմաւ։
Իսկ սահմանապահքն թագաւորին Հայոց որ նստէին ի Գանձակ
Ատրպատականի՝ վաղ ազդ առնէին նմա գիրս, մինչչև հասեալ էր
նա ի սահմանս Ատրպատականի։ Իբրև զայն գդայր Արշակ՝ հրա-
ման տայր Վասակայ իւրում սպարապետին կազմել զամենայն զզօրս
իւր և հասանել ի դիմի հարկանել թագաւորին Պարսից Շապհոյ։
Ապա արագ ժողովեալ ի մի վայր՝ հանդէս առնէր Վասակ սպարա-
պետն ամենայն զօրացն Հայոց, և գտան հեծելազօր սպառազէնք
կուռ վառեալք նիզակաւորք համակ վաթսուն բիւր (!), միաւիրտք,
միաբանք, միամիտք։ Հանդերձ նոքօք յառաջ խաղայր Վասակ,
հասանէր, բախեալ ի դիմի հարկանէր թագաւորին Պարսից» (Բուզ.
Գ. ԽԱ..)։ Ըստ Բուզանդայ՝ այս ճակատուն մէջ յաղթող հանդիսա-
ցան Հայք։ Բայց Շապուհ որ դրած էր ի մտի չտալ ոգի առնուլ
Արշակայ՝ աւելի մեծ պատրաստութեամբ յարձակեցաւ, և այս ան-
գամ յերկս առաջս, յորոց միոյն, եթէ պարտ է հաւատալ Բուզան-
դայ՝ կը զօրավարէր Շապուհ անձամբ։ Հայք այս անգամ ևս մղե-
ցին երեք բաժիններն ևս.—«Թագաւորն Պարսից միւսանգամ ժողո-
վէր զզօրս իւր անթիւ և անհամար իբրև զաւազ առ ափն ծովու,
և փիղս բազումս, և ընդ երիս բաժանեալ զզօրսն՝ երկուց գնդացն
զԱնդիկան և զՀազարաւուխտ զօրագլուխս կացուցանէր, և միում
գնդին ինքնին թագաւորն լինէր զօրագլուխ։ Եւ հրաման տայր
զօրացն ընդ երիս տեղիս խաղալ մտանել արշաւել յաշխարհն Հայ-
ոց։ Այս բանք վաղագոյն ազդ լինէին առ թագաւորն Հայոց Ար-
շակ և առ զօրավարն նոցին Վասակ. բազում զօր ժողովեցին, և
թէ բիւր ածապարեցին՝ սակայն զօրքն Պարսից արշաւէին յերկիրն
Հայոց և ընդ երիս ասպատակէին։ Ապա և թագաւորն Արշակ զիւր
զօրսն բաժանէր ընդ երիս, և տայր զմի գունդն Վասակայ սպա-
րապետին, և զերկրորդ գունդն ի ձեռն Բագոսի եղբօր նորին, որ
ի գործ արութեան քաջ էր անհնարին, բայց ի գործ իմաստու-
թեան բախած էր, և զմիւս գունդն իսկ թագաւորն Արշակ առ-
նոյր։ Ապա գայր սպարապետն Վասակ, գտանէր զառաջին առաջն
զօրացն Պարսից զՀազարաւուխտն, զի հասեալ էին ի գաւառն Վա-
նանդայ, ի տեղւոջն որ անուանեալ կոչէր Երևեալ, և բախէր ընդ-

դէմ զօրացն Պարսից մարտիւ պատերազմաւ։ Ի պարտութիւն մատ-
նեցան զօրքն Պարսից, դարձան ի փախուստ, ցրուեցան սփռեցան։
Նոյնպէս և Բագոս հանդերձ զօրօք որ ընդ իւրև էին՝ գտանէր
զառաջ երկրորդ զօրացն Պարսից և զԱնդիկան զօրագլուխ նոցա,
զի հասեալ մածեալ բանակէին ի վերայ ձկնատենիցն Առեստայ։
Վաղ զգացին զօրքն Պարսից զհասանել Բագոսին, և պատրաստե-
ցան ի մարտ պատերազմի ընդդէմ զօրացն Հայոց։ Ապա հասանէր
Բագոսն ամենայն գնդաւն, ընդդէմ յարձակէին ճակատուն Պարսից,
անդէն հարկանէին սատակէին։ Ապա դիմէր Բագոսն գնդին փղացն,
և տեսանէր զմի ի փղաց անտի մեծապէս զարդարեալ, և զարքու-
նական նշանս ի վերայ արձակեալ։ Համարեցաւ զթագաւորն ի փղին
յայնմիկ. իջանէր 'յերիվարէն, հանեալ զսուսերն իւր յարձակէր ի
վերայ փղին. զէն վերացոյց եմուտ ի ներքոյ փղին. հարկանէր
զներքս փղին, և անդէն ընկենոյր զփիղն ի վերայ անձին իւրոյ, և
սատակէին երկոքեան, զի ոչ ժամանէր ելանել ի ներքուստ ի փղէն։
Իսկ թագաւորն Արշակ հանդերձ զօրօքն որ ընդ իւրն էին՝ հաս-
նէր գտանէր զինքնին թագաւորն Շապուհ, զի հասեալ մածեալ
բանակեալ էր ի գաւառին Բասենոյ ի տեղւոջն որ անուանեալ կոչի
Ոսխա։ Ապա անկանէր գիշերի արքայն Արշակ ի վերայ բանակին
Պարսից։ ՅԱստուծոյ եղև մեծ աջողութիւն յաղթութեան։ Ապա ի
կողմանս Պարսից սատակէին, և հարկանէին մինչև ի կողմանս
որ կոչին Խորտիզան» (Բուզ. Դ. ԻԲ.)։

32. Անմիաբանութեան վրայ որ արդէն կը տիրէր ի մէջ
Արշակայ և նախարարաց՝ յաւելաւ ուրիշ վէճ։ Մերուժան ոմն
Արծրունի, թերևս ի վրէժ կոտորածին Արծրունեաց տոհմին առ
Տիրանաւ՝ ապստամբելով յԱրշակայ գնաց առ Շապուհ, և ուրա-
նալով զհաւատն՝ եղաւ այնուհետև առաջնորդ գրեթէ յամենայն
արշաւանս զօրուն Պարսից.—«Յայնմ ժամանակի ապստամբեաց յար-
քայէն Հայոց մի ոմն ի նախարարաց մեծամեծացն, Մերուժան անուն
Արծրունի, և չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից Շապհոյ, և
դնէր ընդ նմա ուխտ երդմամբ, զի յաւիտեան ծառայ լիցի նմա։
Ուրացաւ ի կենացն իւրոց զոր յԱստուածն ունէր, զի եթող զօ-
րէնս քրիստոնէութեան և խոստովան եղև վասն անձին իւրոյ, թէ
չեմ քրիստոնեայ. և կալաւ զօրէնս մազդեզանցն, այսինքն զմո-
գուցն. երկիր եպագ արեգական և կրակի և խոստովան եղև, թէ
աստուածք այն են՝ զոր թագաւորն Պարսից պաշտէ։ Ետ ուխտ
ընդ Շապհոյ յայնմհետէ, թէ իցէ և կարասցէ յաղթել Շապուհ
Հայոց և առնել զաշխարհն և ինձ դարձ լիցի յիմ աշխարհն և յիմ
տունն՝ նախ ես, ասէ, շինեցից ատրուշան յիմում տանն սեպհա-

կանին, այսինքն տուն կրակին պաշտելոյ: Եւ զզօրսն Պարսից պատրաստէին առնել եւս քան զառաջինն, և առաջնորդ ունէին զչարագործն Մերուժան, ասպատակել յաշխարհն Հայոց: Յանկարծօրէն այրեացաւեր զերկիրն Հայոց առնէին առաջնորդ Մերուժանաւ. զարս տային ի կոխումն փղաց, և զկանայս ընդ ցից սայլից հանէին, առնուին կոտորէին զամենայն բնակիչս վերնագաւառացն Հայոց: Մինչդեռ թագաւորն Արշակ ի կողմանս սորին գաւառացն յԱնգեղ տան էր յուռեստ՝ զմիջնաշխարհն քանդեալ բրեալ զօրքն Պարսից ասպատակնէին: Այս զօրաժողով լինէր Վասակ զօրավարն Հայոց, և որ հասին ի ժամանակի անդ ի ձեռս նորա տասն հազար հեծեալ ընտիր ընտիր և քաջ այրուձի, կազմ զինու և բազում պատրաստութեամբ, և հանդերձ նօքօք խաղայր, ի կերթ ձգեալ հասանէր զօրացն Պարսից: Իբրև զգացին զօրավարք զօրաց թագաւորին, եթէ զօրաժողով է ի վերայ նոցա Վասակ՝ զմնացորդս աշխարհին զերփեցին զերեցին առին և փախեան յաշխարհն իւրեանց ճեպով տագնապաւ: Զետ կրթեալ Վասակ՝ երթայր հասանէր նոցա և թափէր զամենայն զառեալ զերութիւնն, և դառնայր խաղաղութեամբ առ թագաւորն Արշակ» (Բուզ. Դ. ԻԴ.):

Այս արշաւանաց յաջորդեց միւս եւս մեծագոյն ի հարաւոյ ընդ Աղձնիս և ընդ Ծոփս, մինչ Արշակ և Վասակ հանդերձ բանակաւն կային ի պահ ի սահմանս Ատրպատականի: Այս արշաւանաց աւերն որ շատ ծանր եղաւ Հայոց՝ մանր կը նկարագրէ Բուզանդ. – «Այս յետ այսորիկ Մերուժանն վատանշան գրգռէր զթագաւորն Պարսից ի վերայ Արշակայ մեծաւ բարկութեամբ: Զօրաժողով լինէր Շապուհ և լրտեսս արձակէր գիտել զարքայն Հայոց զԱրշակ: Եւ մինչդեռ նա զգուշացեալ հանդերձ իւրովք զօրօքն զԱտրպատական սահմանօքն սպասէր զօրացն Պարսից՝ նոցա առաջնորդ կալեալ զՄերուժանն՝ ընդ Աղձնիս և ընդ Ծոփս մեծ, ընդ Անգեղ տունն և ընդ գաւառն Անձաւայ, ընդ Ծոփս Շահունեաց, ընդ Մզուր գաւառն և ընդ Դարանաղէ, ընդ Եկեղեաց, հեղեալ ծաւալէին բազմութեամբ իբրև զջուրս բազումս: Այրեացաւեր առնէին և զանթիւ մարդիկ արկանէին ի սուր սուսերի իւրեանց, զկանայս և զմանկտի հանէին ընդ ցից սայլից, և զկէսս ի ներքոյ կամացն արկեալ կասուցին: Զարանց բազմութիւնս տային ի կոխումն փղաց, և զառանց թուոյ զմատաղ մանկտին ի գերութիւն վարէին, և զբազում ամուրս քանդէին, և զբերդս աւերէին զամուրս: Եւ առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ որ էր ի գաւառին Աղձնեաց յիշխանութեան բդեշխին, քառասուն հազար երդ, զայն նոյնհետայն ի գերութիւն խաղացուցին, և ինքեանք ի Ծոփս

մեծ արշաւեցին, և անդ՝ էին բերդք զոր առին, և էր զոր ոչ կարացին առնուլ։ Եւ գային պահ արկանէին շուրջ զԱնգեղ զամուր բերդաւն որ է յԱնգեղ տանն գաւառին, զի անդ էին բազում Հայոց թագաւորացն գերեզմանք շիրմացն արանցն Արշակունեաց. բազում գանձք մթերեալ մնացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ։ Զուան պահ արկին զբերդաւն. այլա իբրև ոչ կարէին առնուլ վասն ամրութեան տեղւոյն՝ թողուին և գնային։ Բայց միայն մատնեցաւ ի ձեռս նոցա ամուր բերդն Անի ի Դարանաղեաց գաւառի անդ, զի չարագործն Մերուժան հնարաւորութեամբ մեքենայէր ամուր բերդին այնմիկ։ Ելանէին ի վեր և կործանէին զպարիսպ նորա, և իջուցանէին անթիւ գանձս ի բերդէն։ Եւ բանային զգերեզմանս զառաջին թագաւորացն Հայոց զարանց քաջաց զԱրշակունեաց, և խաղացուցանէին ի գերութիւն զոսկերս թագաւորացն, բայց միայն զգերեզման շիրմին Սանատրկոյ արքային ոչ կարացին բանալ վասն անհեդեդ սկայագործ հաստաշինած ճարտարագործ արարածոցն։ Ապա գնացեալք անտի ի բաց մերժէին, ընդ այլ դիմեալ ասպատակս կալէին, և ընդ կողմանս Բասենոյ յառաջ խաղացեալ՝ կամէին ի թիկանց կուսէ անկանել հասանել ի վերայ զօրացն թագաւորին Հայոց։

Մինչդեռ այս ամենայն լինէր՝ դուժկան հասանէր առ թագաւորն Արշակ, և ասեն նմա. Դու աւադիկ առաջոյ սպասես թշնամեացն, նախս յԱտրպատականի. իսկ թշնամիքն զթիկամբք անկեալ կոտորեցին զաշխարհս, և արդ դիմեալ գան ի վերայ քո։ Իբրև զայս լսէին թագաւորն Հայոց Արշակ և զօրավարն նորին Վասակ՝ հանդէս առնէին զօրացն իւրեանց։ Եւ գտան ի ժամանակին անդ ընդ ձեռամբ զօրավարին Վասակայ արք գործոյ իբրև վաթսուն հազար, ընտիրք և պատերազմողք, միամիտք և միասիրտք՝ հասանել մարտնչել ի վերայ որդւոց և կանանց իւրեանց և ի վերայ աշխարհին դնել զանձինս իւրեանց և փոխանակ բնակտերանց իւրեանց Արշակունեաց։ Զի անգամ ոսկերք թագաւորացն մեռելոց և բազում ժողովուրդք խլեալք յիւրաքանչիւր տեղեաց փոխեցան յօտարութիւն։ Ապա Վասակ սպարապետն հանդերձ վաթսուն հազարօք յառաջ խաղայր, դարձեալ ընդ կրունկ՝ թողոյր զթագաւորն Արշակ յամուր տեղւոջ ուրեմն յերկին Մարաց հանդերձ սպասաւորօքն, և ինքն գոյր հասանէր ի միջնաշխարհն Հայոց ի գաւառն Այրարատու. և հասանէր գտանէր զզօրսն Պարսից, զի հասեալ մածեալ էին բազմութեամբ, բանակեալ զգաւառաւն Այրարատեան. հանդերձ գնդաւն որ ընդ իւր էին՝ անկանէր ի վերայ բանակին ի գիշերի յեղակարծումն ժամանակի. զբազումս ընդ սուր

հանէր, և զմնացեալսն հալածէր արտաքոյ սահմանաց աշխարհին։ Առնոյր աւար բազում և թափէր ի նոցանէ զոսկերս թագաւորացն, զոր Պարսիկք խաղացուցեալ տանէին ի գերութիւն յաշխարհն Պարսից, զի ասէին ըստ իւրեանց հեթանոսութեան օրինացն, թէ վասն այսորիկ բարձեալ տանիմք զոսկերս թագաւորացն Հայոց յաշխարհն մեր, զի փառք թագաւորացն և բախտքն և քաջութիւն աշխարհիս աստի գնասցեն ընդ ոսկերս թագաւորացն յաշխարհն մեր եկեսցեն։ Եւ զոսկերս թագաւորացն Հայոց զորս թափեաց Վասակ՝ հանեալ թաղեցին յամուր ի գեղջն որ Աղձքն անուանին, յԱյրարատ գաւառին, որ կոյն ի խինձս ի գոգս ի ծոցս յանձուկս ի դժուարս լերինն մեծի զոր Արագածն կոչեն։ Եւ ինքեանք փոյթ առնէին զաշխարհն նուաճել, յարդարել կարգել յօրինել շինել յաւերածոյն և յայրեցածոյն։ Բայց յայնմ նուագի ևս ապրէր Մերուժանն չարագործ» (Բուզ. Դ. ԻԴ.)։

Արշակ, ինչպէս կ'երևի, Պարսից ստէպ արշաւանացն առաջն առնլոյ համար կամելով երկիւղ տալ նոցա՝ հաճեցոյց զՀոնս և զԱլանս, և նոքօք հանդերձ ինքն սկսաւ դնել ասպատակ յերկիր սահմանացն Պարսից, այն է յԱտրպատական.—«Ապա զօրաժողով լինէր Արշակ արքայ Հայոց, կոչեալ զՀոնսն հանդերձ Ալանօքն յօգնութիւն՝ դիմէր ի վերայ Պարսից. այլ և թագաւորն Պարսից հանդերձ իւրովք զօրօքն ի ժամանակի անդ յայնմիկ խաղացեալ գայր ի վերայ Հայաստան երկրին. բայց սոքա փութացեալք հասանէին յԱտրպատական, և գտանէին զբանակն արքային Պարսից ի Թաւրէշ բանակեալ։ Հասանէր Վասակ սպարապետն, անկանէր ի վերայ բանակին Պարսից. կոտորեցին զբազումս և առին աւար բազում, և ինքեանք զգուշացեալ երկրին իւրեանց՝ պահ արկեալ պահէին մեծաւ զգուշութեամբ» (Բուզ. Դ. ԻԵ.)։ Շապուհ կ'սկսի այնուհետև մանր մանր յարձակումներով ջանալ յոգնեցունել և շփոթել զԱրշակ։ Բուզանդ քսան և երեք այսպիսի մանր արշաւանս կը դնէ այլևայլ նշանաւոր պարսիկ նախարարաց զօրավարութեամբ։ Թերևս այս արշաւանաց շատերը լինէին միևնոյն ժամանակ այլևայլ կողմերէ։ Այսպէս դնել հարկ է, ապա թէ ոչ երբ հնգամեայ ժամանակի մէջ, դնելով Բուզանդայ այս պատմութիւնը ճշմարիտ՝ այնչափ ճակատներ մի զմիոյ կնի տրուած դնել անհնար է, մանաւանդ եթէ առնունք ի հաշիւ ձմեռնային ամիսներն որ չեն նպաստաւոր պատերազմի։ Այսպիսի մեքենաւորութիւն, այն է մանր և խիտ կռիւներով սպառել արդէն տկար հակառակորդի զօրութիւնը, Շապհոյ կողմանէ խորհուած և ի գործ դրուած՝ չէ անհաւանական. միայն Բուզանդ, ըստ իւրում սովորութեան, Պարսից

զօրաց թիւը մանաւանդ կ՚ստուարացունէ, հանելով զայն մինչև չորեքհարիւր հազար, նա մինչև իննսուն, ևս և մինչև չորեքհարիւր բիւր, որ անհնարին է։ Զայս աւելաբանութիւն կը թուի տանել Բուզանդ երևցունելու համար Հայոց յաղթութիւններն աւելի փառաւոր, կամ որոշեալ թիւեր չափազանցութեամբ կ՚առնու փոխանակ անորոշ թուոց, ինչպէս յայտնի է սա ընդհանուր ձևերէն, զորս կը գործածէ երբեմն, «անթիւ զօրօք», «իբրև զաւազ առ ափն ծովու բազմութեամբ», «անչափ բազմութեամբ» և որ սոցին նման են։ Այս արշաւանքներն կը գտնենք հոս կարգաւ համառօտիւ, հանդերձ զօրավարներուն անուամբ։ Թէ այս բոլոր կռիւներուն մէջ միշտ յաղթող կը հանէ Բուզանդ զՀայս՝ և այն չէ զարմանալի։ Հայք ոչ միայն յարուեստի զինուորութեան գեր ի վերոյ էին քան զՊարսիկս, որոց մեծ զօրութիւնն այրուձին էր, և յայսմ նշանաւոր էին նաև Հայք, այլև իբրև բնիկք՝ քան Պարսից զօրավարներն շատ աւելի հմուտ էին երկրին որ էր ի բնէ դժուարին և անմատոյց. գիտէին կարճագոյն ճանապարհօք յանկարծ ի վերայ հասանել և արագ արագ ցրուել զնոսա։

33. Տասն և երեք մանր մանր ապստամբութեանց զօրավարներ էին.—1. Վին ոմն։ 2. Անդիկան զօրագլուխ։ 3. Հազարաւուխտ որ կ՚արշաւէր ընդ Աղձնիս։ 4. Դմաւունդ Վսեմական, Կաւոսական տոհմէ։ 5. Վահրիճ որ եկաւ մինչև Մախազան կոչուած տեղը։ 6. Գումանդ Շապուհ առաջնորդութեամբ Մերուժանայ։ 7. Դարձեալ առաջնորդութեամբ Մերուժանայ Դեհկան Նահապետ, «որ տոհմիկ իսկ էր, ասէ Բուզանդ, ազգաւ տոհմին զօրավարացն Հայոց, այսինքն Մամիկոնենից. գայր հասանէր ի սահմանս երկրին Հայոց, և զՀայացխուն ոչինչ ծուլացեալ ի քուն դտանէր,... և զօրավարն Վասակ... սպանանէր զիւր զոգգայլն զԴեհկան Նահապետն, և զմնացեալսն առաջի իւր տանէր փախստական ձիահալած արարեալ»։ 8. Դարձեալ առաջնորդութեամբ Մերուժանայ Սուրէն պահլաւ, «որ ազգակից էր Արշակայ թագաւորին Հայոց»։ 9. Վսեմական ոմն հանդերձ Մերուժանաւ։ 10. Զիկ նուիրակապետ արքային, առաջնորդութեամբ Մերուժանայ։ 11. Այլ ոմն Սուրէն Պարսիկ, ոչ Պահլաւ։ «Ելանէր, ասէ Բուզանդ, Վասակ սպարապետն Հայոց, գիշերի անկանէր ի ներքս ի զակիշն ի Հետխոտուսեր ի ձեռն, տասն հազարաւ ընտիր ընտիր արամբք. ձերբակալ առնէին զՍուրէն Պարսիկ, և Արշակ հրաման տայր քարկոծ առնել զնա»։ 12. Առաջնորդութեամբ Մերուժանայ Հրեշզում, որ կը թուի լեալ Պահլաւ, քանզի «էր ազգական Արշակայ», ասէ Բուզանդ։ 13. Ալանայոզան նոյնպէս Պահլաւ, «ի տոհմէ Ար-

շակունեաց»։ 14. Բոյեկան, զոր Բուզանդ կը կոչէ «մեծ նախարար Պարսից»։ «Գային հասանէին, ասէ, յԱտրպատական, կամէին ասպատակ առնել յերկիրն Հայոց. ապա զառաջեօք անկանէր Վասակ իւրով հայաստան գնդաւն, հարկանէր զզօրսն Պարսից, և զԲոյեկան սպանանէր ի Թաւրէժ, և այրէր անդ զապարանս թագաւորին Պարսից, և գրեալ անդ զպատկեր թագաւորին Պարսից՝ նետաձիգ եղեալ նետալից առնէր»։ 15. Վաչական ումն «ի նախարարաց Պարսից», հանդերձ Մերուժանաւ։ 16. Մշկան ումն, դարձեալ «ի նախարարաց Պարսից»։ 17. Մարիճ ումն, «մեծ նախարար»։ 18. Զինդկապետ ումն, «զօրագլուխ զօրացն թագաւորին Պարսից», առաջնորդութեամբ Մերուժանայ։ «Հասանէր, ասէ Բուզանդ, ի սահմանս Ատրպատականի։ Կանխէր ելանէր ընդ առաջ նորա Վասակ, անկանէր ի զակիշն Պարսկաց, սպանանէր Զընդկապետն ի մէջ բանակին»։ 19. Սակատան անդերձապետ, դարձեալ Մերուժանաւ։ Այս թուի լինել կանոնաւոր բանակ։ «Եկին ծաւալեցան, ըստ Բուզանդայ, ճակատեցան ընդ թագաւորութեանն Արշակայ։ Ապա ի մի վայր եկեալ ամենայն մեծամեծք նախարարացն Հայոց՝ խորհուրդ խորհէին. ոչ առնուին յանձն երբէք թէ թագաւորն Արշակ մտցէ ընդ նոսա ի պատերազմ։ Զօրավարն Վասակ հանդերձ ամենայն մեծամեծօք և նախարարօքն ամենայն Հայոց Մեծաց հարկանէր զզօրսն Պարսից, և սպանանէր զՍակատան անդերձապետ։ 20. Նապատան տակառապետ Շապհոյ. բայց չկարաց մտանել ի Հայս։ 21. Մոգաց անդերձապետն։ Հայք՝ «եթէ կարի շատ աճապարեալ՝ այնչափ ժամանեցին մինչև ի Մախազան կարացին հասանել. անդ ընդ միմեանս գունդքն երկոքեան բախէին. ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից»։ Այս անգամ ևս առաջնորդ էր Մերուժան, որ որպէս յայլ նուագս՝ նոյնպէս այս անգամ ի «ի տաճիկ ձի նստեալ փախչէր»։ 22. Համբարակապետն թագաւորին Պարսից հանդերձ Մերուժանաւ «հասանէր ի գաւառն Կորճէից ի Սաղամաս... այլ Վասակ զարանամուտ լեալ ընդ կողմանս բանակին՝ ի գիշերին անկանէր ի զակիշն տասն հազարաւ ընտիր զօրու», և Պարսիկք չհասան այս անգամ ևս իւրեանց նպատակին, այն է մտանել ի Հայս։ 23. Մուշկան «մեծ զօրագլուխ Պարսից»։ «Զօրքն Հայոց, ասէ Բուզանդ, խրոխտացեալ հանդերձ իւրեանց զօրավարաւն Վասակաւ՝ զազանաբար առիւծաբար դէմ ընդ դէմ յարձակէին»։

Ինչպէս տեսանք՝ այս ամէն արշաւանաց շատերուն մէջ էր Մերուժան, իբրև առաջնորդ և ոչ իբրև զօրավար։ Հայք բռնեցին պաշտպանողական դիրք, ջանալով չտալ Պարսից մուտ ի ներքս աշխարհն։ Արշակայ գործունէութեան մեծ մասը կեդրոնացած էր արե-

ւելեան սահմանին վրայ, և կռիւք եղան ընդհանրապէս հոն: Պարսից դիտումը կ'երևի թէ էր այն զօրութիւնը ցրուել: Վասակ և զօրավարք նորա սակաւուք և ընտիր զօրօք, որոց թիւը ճշդիւ կուտայ մեզ Բուզանդ, այն է իբր տասն հազարաւ, ընդհանրապէս գիշերային Պարսից բուն զակշին վրայ յարձակելով յանկարծ՝ կը շփոթէին և կը ցրուէին: Այսպէս Հայք, թէպէտ քաջութեամբ պաշտպանեցին իրենց դիրքը, և երկիրը մնաց ազատ յաւերածոյ՝ բայց Շապուհ հաստատ իւր նպատակին, որ էր յոգնեցունել, վհատեցունել և ցրուել Հայոց միութիւնը:

34. «Ձերեսուն և չորս ամս, ասէ Բուզանդ, —ի մահուանէն Տրդատայ եթէ հաշուենք՝ արդարև կը գտնենք այսչափ տարի —եաւուն՝ պատերազմ երկիրս Հայոց ընդ թագաւորին Պարսից՝ և յետ այնորիկ ձանձրացան պարտեցան լքան աշխատեցան, և սկսան սորսորել գնալ ի բանակէն Հայոց թագաւորին. թողին զիւրեանց արքայն Արշակ: Բայց նախ այսմ գնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւագանին: Նախ բդեաշխն Աղձնեաց և Նոշիրական բդեաշխն և Մահկեր տանն, և Նիհորականն և Դասընտրէին. և ամենայն նախարարութիւն Աղձնեաց, և զօրն և տունն տոհմին Աղձնեաց կողմանն ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ, և չոգան կացին առաջի արքային Պարսկաց Շապհոյ, և պարիսպ ածէին ի Հայոց կուսէ որ Զորայն կոչեն, դրունս դնէին. և զատուցին զիւրեանց աշխարհն ի Հայոց: Եւ յետ սորա Գուգարաց բդեաշխն, և յետ սորա Զորայ գաւառին տէրն, և Կողբայ գաւառին տէրն, և ընդ նոսա Գարդմանաձորոյ տէրն: Եւ որք մօտ էին ի նոսա կողմն այնր ձեռին, որ շուրջ էին զնոքօք՝ միահաղոյն ապստամբեցին ի թագաւորէն Հայոց Արշակայ և չոգան գնացին առաջի կացին թագաւորին Պարսից Շապհոյ: Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արձախայ, և ամուր գաւառն Տմորեաց, և ամուր աշխարհն Կորդեաց. ապա և տէր գաւառին Կորդուաց չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից: Յետ այսորիկ ապստամբեաց ի թագաւորէն Հայոց և ձեռին իշխանութեան տունն Հայոց թագաւորին, որ էր զԱտրպայական աշխարհաւն. յետս եկաց ի թագաւորէն Հայոց ամուր աշխարհն Մարաց՝ յետս եկաց յարքայէն Հայոց և աշխարհն Կազբից: Եթող զարքայն Հայոց և գնաց Սաղամուտ տէրն Անձտեայ, և ընդ նմա իշխանն մեծի Ծոփաց, և գնացին առ թագաւորն Յունաց: Միջնաշխարհն մնացեալքն յերկուացան յարքայէն, և ոչ կամէին լսել թագաւորին իւրեանց, ոչ մի ինչ իբս զոր նա կամէր: Եւ դձձեցաւ թագաւորութիւնն մեծապէս» (Բուզ. Դ. Ծ.):

35. Այս ամէն թշուառութեանց վրայ միւս եւս թշնամի ի ներքուստ յաւելաւ Հայոց, այն է Վահան Մամիկոնեան, կրտսեր եղբայր սպարապետին։ Սա ուրանալով զհաւատսն, փեսայանալով եւ Շապհոյ՝ միացաւ ընդ քեռորդւոյն իւրում Մերուժանայ և եղաւ գործակից նմա յանհնարին չարիսն, զորս հասուցին սոքա թշուառ ազգին, ինչպէս պիտի տեսնենք ի ստորև.—«Եւ Վահան եղբայր Վասակայ սպարապետին, ի Մամիկոնեան տոհմէն, անկաւ ի բանս հրապուրանաց Մերուժանայ Արծրունւոյ քեռորդւոյ իւրոյ։ Եւ ապստամբեալ յԱրշակայ արքայէն Հայոց՝ չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից Շապհոյ և հաճեաց զմիտս նորա։ Ուրացաւ ի կենաց իւրոց զոր ի Քրիստոսն ունէր, և յանձն առ պաշտել զօրէնս մոգութեանն, այսինքն երկիր պագանել կրակի և ջրոյ և արեգական, և ուրանալ զօրէնս քրիստոնէութեանն յորում ծնեալն էր։ Եւ եղև նա ըստ մտի թագաւորին Պարսից, և մատուցանէր եւս ամբաստան գրգռութիւն զարքայէն Հայոց Արշակայ և զիւրմէ տանուտեառնէն Վասակայ, և յիշեցուցանէր եւս նմա զմահն Վարդանայ, թէ յաղագս քո մեռաւ։ Եւ եղև նա այնուհետև սիրելի Շապհոյ արքային, և ետ նա կին Վահանայ զՈրմիզդուխտ քոյր իւր, և շնորհեաց նմա բարձ և զպատիւ որ նոցուն լեալ էր նախնեաց, և մտերիմ փեսայ արար զնա իւր թագաւորն, և ի մէջ զօրաց իւրոց շքեղացոյց զնա, և խոստացաւ նմա կեանս մեծամեծս տանել։ Իսկ թիւն Հայոց պակասեաց յայսմհետէ և յապա» (Բուզ. Դ. Ծ.)։

36. Ինչպէս տեսանք՝ գրեթէ բոլոր սահմանակից գաւառք ապստամբած էին յԱրշակայ. մեծ մասն ի նախարարաց, մանաւանդ արևելեան և հարաւային գաւառաց, ինչպէս նաև հիւսիսայինքն՝ տուած էին ձեռս ի Շապուհ, և արևմտեանք որ էր փոքր մասն՝ ի կայսր. իսկ մնացեալքն, որ էին նախարարք միջին նահանգաց՝ բոլորովին յուսահատեալ կու գան առ Ներսէս և կը յայտնեն զխորհուրդ իւրեանց, թէ այլ եւս չէին կարող կռուել վասն երկրին և վասն թագաւորին իւրեանց, ուստի լաւագոյն կը համարէին մատնել զերկիրն Շապհոյ և ծառայել նմա։ Ի զուր կը յորդորէ զնոսա Ներսէս մնալ հաւատարիմ թագաւորին իւրեանց, յիշեցունելով նոցա զայնչափ երախտիս զորս ընդունած էին յԱրշակունեաց, այնչափ պատերազմներն զորս մղած էին իւրեանց անձանց, ընտանեաց, երկրին և եկեղեցեաց համար, և ցուցնելով մեծ վտանգը ծառայելու հեթանոս թագաւորի։ Բանք Ներսէսի մնացին առանց ազդեցութեան. ժողովը ցրուեցաւ մեծ ամբոխիւ և աղաղակաւ, և նախարարք մեկնեցան իւրաքանչիւր ի տուն իւր.—«Ապա ժողովեցան մարդիկ ամենայն աշխարհին իշխանութեան թագաւորութեանն Հայոց, և եկին

առ մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս, մեծամեծք, նախարարք, կուսակալք, կողմնակալք, գաւառատեարք, գործակալք և դասապետք շինականաց. խօսել սկսան ընդ Ներսիսի և ասեն. Դու, տէր, քեզէն գիտես, զի այսչափ ժամանակ է, և ոչ մի ամ մեզ հանգիստ ոչ եղև ի պատերազմէ, և համակ սրով և սուսերօք և ի սլաքս և ի տէգս նիզակաց գքրտունս երեսաց մերոց ջնջեցաք: Եւ արդ ոչ կարեմք այսմ դժոյժ ունել, և ոչ կարեմք տալ ճակատս. զի լաւ է մեզ թէ ծառայեսցուք մեք թագաւորին Պարսից որպէս ընկերքն մեր արարին, զի թողին զնա և գնացին առ թագաւորն Պարսից. և մեք սոյնպէս առնելոց եմք, զի ոչ այլ ևս կարեմք կուել: Թէ պէտ իցէ թագաւորին Արշակայ կուել ընդ Շապհոյ՝ Վասակաւ և Անդուկաւ աներաւ իւրով տացէ պատերազմ. այլ յայսմիկ Հայոց աշխարհէս և ոչ մի այր ոչ ոք է երթալոց ի թիկունս օգնականութեան նորա: Նմա եթէ պէտ իցէ՝ տացէ պատերազմ, թէ պէտ՝ մի. մեր թողեալ զնա, մեզ չէ փոյթ: Իսկ սուրբն Ներսէս խօսէր ընդ նոսա որպէս օրէն էր, եթէ Տեսէք և քաջ զմտաւ ածէք, և յիշեցէք զբանն Տեառն պատուիրանին միաբանութեամբ որպէս պատուիրեացն՝ ծառայից հնազանդ կալ տերանց իւրեանց: Զի ամենեքեան դուք աւագիկ կայք և վկայէք, մանաւանդ զի ամենեքեան դուք կեցեալ էք յազգէդ Արշակունւոյ. ոմանք ի ձէնջ գաւառատեարք լեալք ի նոցանէն, և ոմանք մեծամեծք աշխարհաց, ոմանք աւագ աւագ աւանաց, գեղից և գանձուց տեարք լեալ էք, և պէսպէս դաստակերտացն: Զի թէպէտև առ արարիչն Աստուած յանցաւոր իցեն պիղծ ազգն Արշակունեաց՝ սակայն զձեզ կեցուցեալ զամենեսեան և յաղբոյ թօթափեալ է, զոմն գործով, զոմն պատուով, զոմն իշխանութեամբ, զոմն գործակալութեամբ: Զի թէպէտև առ Աստուած մեղաւոր է Արշակ արքայ, և պարտական է տոկոսեաց արարչին իւրոյ առ ի տալ նմա վրէժս՝ սակայն Աստուած վասն բազում և անչափ մարդասիրութեան իւրոյ խնայեաց ի նա, և վասն նորա ձեզ: Եւ դուք աւագիկ կամիք անկանել հեթանոսաց ի ծառայութիւն, և կորուսանել զկեանս ձեր յԱստուծոյ, և մերժել զընակ տեարսն ձեր զորս տուեալ է ձեզ յԱստուծոյ, և օտար տերանց ծառայեալ, և նոցին անաստուած կրօնիցն ցանկալ: Բայց լաւ լիցի ձեզ զնոյն սիրել և յանձն առնուլ և նմին հաւանել, և մերժել յանձանց ձերոց զաբարչապաշտ թագաւորն: Զի թէ բիւր չար իցէ Արշակ՝ սակայն աստուածապաշտ է, և եթէ մեղաւոր ևս իցէ՝ սակայն թագաւոր ձեր է. որպէս և դուքդ ասացէք առաջի իմ, թէ այսչափ ամք են զի մարտեայք ես ի վերայ անձանց ձերոց և հոգւոց, ի վերայ

աշխարհի, ի վերայ կանանց և որդւոց ձերոց։ Եւ որ մեծն է քան զամենայն՝ ի վերայ եկեղեցեաց ձերոց, ի վերայ ուխտի հաւատոց ձերոց, զոր ունիմք ի տէր մեր Յիսուս Քրիստոս, և համակ Տէր ետ ձեզ յաղթութիւն անուան իւրոյ։ Եւ արդ կամիք փոխանակ Քրիստոսի արարչին ձերոյ ծառայել ձեզ անաստուածն մոգութեան անօրինացն և նոցուն պաշտօնէիցն, ի թողուլ նախ զարարիչն մեր և զնորուն պատուիրանս զոր պատուիրեաց ձեզ՝ միամիտ կալ առ տեարսն մարմնաւորս զորս նորայն արարեալ է. գուցէ բարկացեալ տէր Աստուած ձեր՝ և խլիցէ զձեզ արմատաքի, և մատնեսցէ զձեզ հեթանոսացն ի չար ծառայութիւն սարկութեան մինչև յաւիտեան, և ոչ երբէք բարձցի լուծն ծառայութեան ի ձէնջ։ Եւ բողոքիցէք դուք առ Տէր, և նա ոչ լսիցէ ձեզ. վասն զի անձամբ անկանիք դուք ի ծառայութիւն հեթանոս տերանց և անաստուած անգէտ մարդկան, ի ձեռս հեթանոս արանց տերանց խստասրտաց, և բազում չարի դիպեալ ելանիցէ առաջի ձեր, և ոչ կարիցէք ճողոպրել յայնմանէ։ Իսկ նոքա որ մի անգամ էին ի մի վայր ժողովեալ՝ զաղաղակ հարկանէին. քարոզ կարդացեալ միմեանց ձայն տանէին, շփոթէին ամբոխէին և ասէին. Հա՛պա գնասցուք, ասեն, սփռեցարուք յիւրաքանչիւր տեղիս, զի այժմ բանից մեք ինչ ոչ կարեմք լսել։ Սփռեցան յիւրաքանչիւր տունս իւրեանց» (Բուզ. Դ. ԾԱ.)։

37. Շապուհ որ յայս վիճակ հասուցած էր զՀայս՝ կ'սկսի դարձեալ հրաւիրել զԱրշակ աղաչանօք և ընծայիւք՝ գալ տեսնել խաղաղութիւն ի մէջ իւր և նորա։ Ապաքէն հեգնել էր այս, և Արշակ գիտնալով խորամանկութիւնը՝ կը խորհի ընդդիմանալ նմա մինչև ի փախճան. բայց երբ զօրքն յանձն չառնոյր պատերազմ, և Շապուհ կ'ստիպէր կամ երթալ անձամբ և կամ յանձն առնուլ պատերազմ, կը բռնադատուի ևս ազգէն զիջանել Շապհոյ՝ մտնելով նեղ՝ կը խնդրէ երդումն ի Շապհոյ ըստ Պարսից օրինի, և կ'երթայ ակամայ առ Շապուհ հանդերձ սպարապետաւ իւրով Վասակաւ, և կը գրուի ընդ պահպանութեամբ.—«Ապա Շապուհ արքայ Պարսից մեծ աղաչանօք և պատարագօք և հրովարտակօք և սիրով զԱրշակ առ ինքն կոչէր, զի յայնմհետէ արասցեն ի մէջ իւրեանց սէր և խաղաղութիւն և բարեկամութիւն մեծ։ Իսկ Արշակ արքայ թէպէտ պատերազմ կամէր տալ՝ այլ ոչ կամէին յանձն առնուլ այսմիկ ամենայն զօրքն աշխարհին Հայոց։ Ապա թէ կամաւ կամաւ, թէ ոչ կամաւ՝ սակայն եդ սիրտ՝ խոնարհութեամբ հրովարտակս առ Շապուհ արքայ Պարսից, որպէս վայել է ծառայի առ տէր իւր, տալ։ Եւ առաքէր յիւրմէ նմա պատարագս հաշտութեան։ Յետ այսորիկ դարձեալ առաքեաց առ Արշակ արքայ Հայոց

Շապուհ արքայ Պարսից և ասէ. Եթէ հաճ եմք ես և դու ընդ միմեանս՝ եկ և տեսցուք զմիմեանս, և յայսմհետէ իբրև զհայր և զորդի լիցուք ընդ միմեանս։ Ապա թէ ոչ տեսանես դու զիս, խնդրես զպատերազմ ի մէջ իմ և ի մէջ քո։ Իսկ Արշակ խնդրէր հաւատարիմ երդումն ուխտի ի նմանէն, զի յայսմհետէ անկասկած երթիցէ առ նա։ Եւ նա ետ բերել ըստ օրինացն հաւատարիմ երդմանց թագաւորութեանն Պարսից՝ աղ, կնքել վարազ նկարագիր մատանեաւ, և յղեաց։ Զի թէ իցէ և զայն երդման ևս զհետ ոչ եկեսցէ՝ ապա կազմ լիցի տալ ճակատ պատերազմի ի մէջ իւրեանց։ Իսկ զայն ևս յորժամ տեսին և լուան ամենայն մարդիկն երկրին Հայոց՝ ստիպեցին, բռնազբօսեցին զիւրեանց թագաւորն զԱրշակ և շտապեցին, զի յարիցէ գնասցէ երթիցէ յանդիման լիցի թագաւորին Պարսից Շապհոյ։ Յայնմհետէ թէ կամաւ կամաւ, և թէ ոչ կամաւ՝ յարեաւ թագաւորն Հայոց Արշակ, առ ընդ իւր զզօրավարն սպարապետն Հայոց զդայեակն իւր, խաղաց գնաց յերկրէն Հայոց յերկիրն Պարսից առ Շապուհ, չոգաւ յանդիման եղև թագաւորին։ Իբրև տեսին զնոսա՝ արկին զերկոսեանն, զարքայն Արշակ և զսպարապետն Վասակ, և պահէին զնոսա արձակ ի մէջ ազատագունդ փուշտիպան զօրացն։ Եւ կոչեաց արքայ Շապուհ զարքայ Արշակ. և իբրև զծառայ իւր պատուհասեաց զնա. և նա յանցաւոր և մահապարտ զանձն իւր առ նա համարեցաւ։ Դարձեալ անդրէն ի նոյն գունդ փուշտիպանաց եաուն զԱրշակ արքայ ի պահեստ» (Բուզանդ. Դ. ԾԲ, ԾԳ.)։

38. Բուզանդ, հաւատալո՞վ թէ իբրև զրոյց՝ կը դնէ սա պատմութիւնը։ Շապուհ որպէս թէ ժողովելով իւր կախարդներն, յետ պատմելոյ նոցա զիւր երախտիսն առ Արշակ և զնորա ապերախտութիւնն և ստերդմնութիւն՝ կը հարցունէ նոցա, թէ Արշակ պիտի մնայ հաւատարիմ թէ ոչ, եթէ արձակէ զնա յերկիր իւր։ Եւ նոքա խորհուրդ կու տան նմա տալ բերել Հայաստանէ հող և սափորով ջուր, և վրանին յատակին կէսը ծածկել այն հողով և զջուրն հեղուլ հողին վրայ. ապա տանել զԱրշակ, առանց գիտելոյ նորա, այն հողին վրայ։ Եթէ Արշակ գալով այն հողին վրայ խօսի խրոխտանօք՝ նշան է թէ պիտի ապստամբի, եթէ երթայ յերկիր իւր։ Շապուհ կը կատարէ կախարդներուն խորհուրդը. և տեսնելով թէ Արշակ ամբարտաւանութեամբ կը խրոխտայ Շապհոյ դէմ՝ կը ղրկէ զնա Անյուշ կոչուած բերդն ի Խուժաստան։ Ահա Բուզանդայ պատմութիւնն. «Ապա կոչեաց թագաւորն Պարսից Շապուհ զգիւթսն և զաստեղագէտսն և զքաւդեայսն. խօսէր ընդ նոսա և ասէր, եթէ Ես բազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, և նա

համակ անարգեաց զիս։ Եդի ընդ նմա ուխտ խաղաղութեան, և երդուաւ ինձ յիւրեանց օրէնս քրիստոնէութեանն ի գլխաւորութիւն այնմ զոր Աւետարանն կոչեն. նախ այն երդմանն ստեաց։ Ես բիւր բարիս խորհեցայ որպէս հայր որդւոյ կատարել նմա, և նա չար ընդ բարւոյ հատոյց։ Կոչեցի զերիցունս եկեղեցւոյն Տիզբոն քաղաքի, և կարծեցի, թէ նոքա նենգութեամբ ինչ ետուն նմա զերդումն և ետուն ինձ ստել։ Եւ պատուհասել զնոսա որպէս զմահապարտս՝ ետու հրաման եւթանասուն զնոսա ի մի գուբ փողոտել, և զուսումնականս նոցա հանել ընդ սուր. ԶԱւետարանն յոր երդուաւ Արշակ արքայ, որ է գլխաւորութիւն ուսմանց նոցա քրիստոնէութեանն՝ կապեցի շղթայիւք և կայ ի գանձի իմում։ Բայց բանքն Մարեայ երիցու յուշ եղեն ինձ, զի ասէր. Մեք արդարութեամբ տուաք նմա զերդումն. բայց եթէ նա ստեաց՝ նոյն Աւետարանն ածէ զնա առ ատս ձեր։ Ահա բանքն արդարութեամբ կատարեցան։ Այսչափ ամք են, զի Արեաց տուեալ ընդ Արշակայ ճակատս՝ յաղթել և ոչ մի ամ ոչ կարացաք, և ելեալ եկեալ է նա ոտիւք իւրովք։ Բայց թէ գիտէի, եթէ յայսմհետէ կայցէ յուխտին իմում և ի հնազանդութեան՝ բարեաւ ուխտիւ, մեծապէս մեծարանօք արձակէի զնա խաղաղութեամբ յիւր աշխարհն։ Իսկ քուդեայքն ետուն նմա պատասխանի և ասեն. Թող մեզ այսօր, և վաղիւն պատասխանի արասցուք քեզ։ Իսկ ի վաղիւ անդր ժողովեցան եկին ամենայն քուդեայքն և աստեղագէտքն, և ասեն ցարքայն. Այժմ զի եկեալ է առ քեզ թագաւորն Հայոց Արշակ, զիա՛րդ խօսի ընդ քեզ, կամ զի՞նչ ձայն ածէ, կամ զիա՞րդ ունի զանձն։ Ասէ արքայն. Իբրև զմի ի ծառայից իմոց համարի զինքն, հող ոտից իմոց ջանայ լինել։ Ասեն նոքա. Ա՛ռ արա զոր ասեմքս քեզ. պահեա դու զնոսա աստէն, և առաքեա դու դեսպանս յերկիրն Հայոց, և տուր բերել անտի հող ի սահմանացն Հայոց իբրև բեռինս երկուս, և կահոյր մի ջուր։ Եւ հրաման տացես հարկանել զկէս խորանի յատակ ի բերեալ հողոյն Հայոց. և ածցես քեզէն զձեռանէ արքային Հայոց Արշակայ, և տարցես նախ յայն տեղ որ բնակ իսկ իցէ հողն, և հարցցես ցնա բանս։ Եւ դարձեալ ածցես դու զձեռանէ նորա և տարցես ի հայատակն ի հարեալ հողոյն, և լուիցես դու բանս ի նմանէ, և ապա գիտասցես դու, եթէ կա՞յ յուխտն քո և պահէ՞ զդաշինս քո թէ ոչ, յետ արձակելոյ քո զնա ի Հայս։ Ապա թէ ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի՝ գիտասջիր զի որ օր հասանէ յերկիրն Հայոց՝ զնոյն ձայն ածէ ընդ քեզ, և զնոյն պատերազմ նորոգէ ընդ քեզ, զնոյն ճակատս և զնոյն թշնամութիւն յուզէ։ Թագաւորն Պարսից զայս լուեալ ի

քաղդէիցն՝ տաճիկ ուղտուք արձակէ ի Հայս արս զհողոյ և զջրոյ, զի եկեսցեն բերցեն նմա զհմայսն: Եւ ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ զորմէ՝ յղեացն: Ապա հրաման տայր թագաւորն Շապուհ զկէս յատակին իւրոյ խորանին հարկանել ի բերեալ հողոյն Հայոց, և զջուրն ցանել ի վերայ նորա, և զկէսն ի նոյն հողն զիւրոյ բնակութեան երկրին թողուլ: Եւ ետ ածել զԱրշակ արքայ Հայոց զառաջև իւրով, և զայլ մարդիկն ի բաց հրամայեաց կացուցանել, և զձեռանէ առեալ շրջէր ճեմելով: Եւ երթեալ առեալ ընդ խորանն՝ ասէ ցնա յորժամ ի պարսիկ հողոյն ի վերայ ճեմէին, թէ Ընդէ՞ր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Հայոց. զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ, և կամեցայ տալ քեզ զդուստր իմ ի կնութիւն, և որդի ինձ առնել զքեզ. իսկ դու խոտեցար ընդ իս, և քովք կամօք առանց իմոց կամաց եղեր ընդ իս թշնամի, և պատերազմեցար ընդ իս: Ասէ Արշակ արքայ, թէ Մեղայ քեզ և յանցեայ. զի ես եկի և կոտորեցի յաղթեցի թշնամեաց քոց, և ակն ունէի ի քէն պարգև կենաց, և թշնամիք իմ հրապուրեցին զիս, և արկին երկիւղուկս ի քէն, և փախուցին ի քէն: Եւ երդումն իմ զոր երդուայ քեզ՝ յառաջ ած զիս, և եկի աւասիկ առաջի քո: Եւ աւասիկ ծառայ քո ի ձեռս քո կամ. զինչ և պէտք է քեզ՝ արա զիս, զինչ և կամ իցէ. սպան զիս, զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ: Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա՝ շրջէր ճեմելով. ի չքմեղս առեալ զնա ածէր ի հայակողմն ի հողն հարեալ յատակին: Իսկ իբրև յայն տեղի հասանէր և զհայ հողն կոխէր՝ մեծամեծս ըմբոստացեալ հպարտացեալ՝ այլ ձայն շրջէր. սկսանէր խօսել և ասել. Ի բաց կաց յինէն, ծառայ չարագործ, տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ թողից քեզ և որդւոց քոց զվրէժ նախնեացն իմոց, և զմահն Արտաւանայ արքայի: Զի այժմիկ ձեր, ծառայից՝ զմեր, տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ: Իսկ դարձեալ առնոյր զձեռանէ, դարձեալ տանէր յայն հող Պարսից. ապա աշխարէր Արշակ զասացեալսն, խոնարհէր բուռն հարկանէր զոտից նորա, մեծապէս ապաշխարելով զղջմամբ զասացեալ բանսն: Իսկ յորժամ առեալ զձեռանէ զնա տանէր ի հայ հողն՝ ևս խստագոյն քան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ միւսանգամ հանէր յայնմ հողոյն, բանիւք յապաշխարութիւն դառնայր: Յայգուէ մինչև երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց զնա. զի իբրև ի վերայ հարեալ հողոյն տանէր՝ խստացեալ ամբարտաւանէր. իսկ իբրև ի վերայ բուն զետնոյն յատակին կայր՝ ի զղջումն դառնայր: Իսկ իբրև երեկոյ եղև, ժամ ընթրեաց թագաւորին Պարսից; քանզի սովորու-

թիւն էր Հայոց թագաւորին բազմական անդէն ընդ նմին առ նմա
ի նորին տախտին արկանել բազմական. օրէնք էին զի թագաւորն
Պարսից և թագաւորն Հայոց ի միում տախտի բազմէին ի միում
գահոյս։ Իսկ այն օր նախ զտող բազմականացն որ անդն էին՝ զամե-
նեցունց կարգեցին. հուսկ յետոյ զկնի ամենեցունց ի ներքոյ բո-
լորին զԱրշակայ բազմականն առնէին, ուր զհայ հողն յատակն
հարեալ էր։ Նախ ամենեքեան իբրև բազմեցան յիւրաքանչիւր չա-
փու՝ յետոյ ածէին բազմեցուցանէին զարքայն Արշակ։ Արդ եկաց
բազմեալ ուռուցեալ վայր մի. ապա յոտն եկաց, ասէ ցթագաւորն
Շապուհ. Իմ այդ տեղի, ուր դուդ ես բազմեալ. յոտն կաց այդի,
թող ես այդր բազմեցայց, զի տեղի ազգի մերոյ այդ լեալ է. ապա
եթէ յաշխարհն իմ հասից՝ մեծամեծ վրէժս խնդրեցից ի քէն»
(Բուզ. Դ. ԾԴ.)։

39. Այս պատմութիւն ապաքէն առասպել է. սակայն ճշմա-
րիտ է, թէ Արշակ դրուեցաւ Անյուշ բերդը, և Վասակ սպանուաւ
մորթազերծ.—«Ապա հրաման տայր Շապուհ արքայ Պարսից բե-
րել շղթայս և արկանել ի պարանոցն Արշակայ և յոտս և ի ձեռս
նորա երկաթս, և խաղացուցանել զնա յԱնդմըշն զոր Անուշ բերդն
կոչեն, և պնդեալ զնա մինչև անդէն մեռցի։ Եւ եղև ի վաղիւ
անդր ետ հրաման Շապուհ արքայ ածել դառաջեաւ իւր զՎասակ
Մամիկոնեան զզօրավարն սպարապետն Հայոց Մեծաց. սկսաւ պա-
տուհասել զնա։ Բանզի էր Վասակ անձամբ փոքրիկ՝ ասէ ցնա ար-
քայն Պարսից Շապուհ. Աղուէս, դու էիր խանգարիչ, որ այսչափ
աշխատ արարեր զմեզ. դու ես այն որ կոտորեցեր զԱրիս այսչափ
ամս. և զի՞ գործես, զմահ աղուեսու սպանից զքեզ։ Իսկ Վասակ
տուեալ պատասխանի ասէ. Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոք-
րիկ՝ ոչ առեր զչափ մեծութեան իմոյ. զի ցայժմ ես քեզ առիւծ
էի, և արդ աղուէս։ Բայց մինչ ես Վասակն էի՝ ես սկայ էի. մի
ոտնս ի միոյ լերին կայր, և միւս ոտնս իմ ի միոյ լերին կայր.
յորժամ յաջ ոտնս յենուի՝ զաջ լեառն ընդ գետին տանէի. յորժամ ի
ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի։ Ապա հար-
ցանէր թագաւորն Պարսից Շապուհ և ասէ. Աղէ, տուր ինձ գի-
տել, ով են լերինքն այնոքիկ, զորս դուն ընդ ունջ տանէիր։ Եւ
ասէ Վասակ. լերինքն երկուք՝ մի դու էիր, և մի՝ թագաւորն
Յունաց։ Մինչ տուեալ էր ինձ Աստուծոյ՝ զքեզ ընդ գետին տա-
նէի և զթագաւորն Յունաց, մինչ օրհնութիւն հօրն մերոյ Ներ-
սիսի հագուցեալ էր ի վերայ մեր, և Աստուծոյ զմեզ ի ձեռանէ
չէր թողեալ. մինչ զնորա բանն արարաք և խրատ նորա եկաց
առ մեզ՝ գիտացաք տալ քեզ խրատ, մինչև մեզէն աչօք բացօք

անկաք ի խորխորատ։ Արդ զինչ կամիս՝ արա։ Ապա ետ հրաման թագաւորն Պարսից մորթել զզօրավարն Հայոց Վասակ, և զմորթն հանել և լնուլ խոտով, և տանել ընդ նոյն բերդն յԱնդմըշն, ուր արգելին իսկ զթագաւորն Արշակ (Բուզ. Դ. ԾԴ.)։

40. Բուզանդայ Դ. դպրութեան վերջին չորս գլուխներն կուտան մեզ սոսկալի աղետից և հալածանաց շար մի ի ձեռն Շապհոյ և երկուց ուրացելոց—Մերուժանայ Արծրունւոյ և Վահանայ Մամիկոնենի, աղէտք՝ զորս չէ մարթ առանց արտասուաց ընթեռնուլ։ Շապուհ յետ այնպէս խստիւ պատուհասելոյ զԱրշակ և զքաջ սպարապետն նորա Վասակ, զմին մշտնջենաւոր բանտարկութեամբ և զմիւսն չարաչար մահուամբ՝ կը ղրկէ ի Հայս երկու անուանի զօրավար. զՁիկ և զԿարէն բազմութեամբ զօրաց, քանդել կործանել զերկիրն և գերել բնակիչներն, ինչպէս կ՚երևի՝ ստիպելով զնոսա ընդունել զկրօնս Պարսից։ Յետ երեքտասնամսեայ պաշարման կ՚առնուի Արտագերից բերդն, ուր ապաւինած էր թագուհին Փառանձեմ սպասելով իւր որդւոյն Պապայ, որ էր պատանդ ի Յոյնս և պիտի գայր հռոմայեցի զօրօք ազատել զերկիրն։ Յետ այնորիկ, կամ միևնոյն ժամանակ, կ՚առնուին և կը քանդուին երևելի երևելի քաղաքներ, որպէս Արտաշատ, Վաղարշապատ, Երուանդաշատ, Զարեհաւան, Զարիշատ, Վան, Նախճաւան, և անթիւ մարդիկ կը տարուին գերի։ Իսկ տիկինն Փառանձեմ տարուելով ի Պարսկաստան՝ կը մատնուի անարգ զինուորաց բռնաբարութեան հրամանաւ Շապհոյ ի թշնամանս թագաւորին և ազգին.—«Ապա արձակեաց արքայն Պարսից Շապուհ ի վերայ աշխարհին Հայոց երկուս ոմանս յիշխանաց անտի իւրոց, միումն Զիկ անուն և միւսումն Կարէն, բազմութեամբ զօրաց. զի եկեսցեն բրեսցեն քանդեսցեն զաշխարհն Հայոց։ Իբրև ետես տիկին աշխարհին Հայոց, կինն Արշակայ թագաւորին Փառանձեմ, զզօրս թագաւորին Պարսից, եթէ եկին լցին զաշխարհս Հայոց՝ առեալ ընդ իւր մարդիկ, ազատս, ընտիրս, սպառազէնս պատերազմողս՝ հանդերձ նոքօք դիմեաց եմուտ ի բերդն Արտագերից, որ յերկրին Արշարունեաց, յերեսաց զօրացն Պարսից։ Ապա եկին հասին ամենայն զօրքն Պարսից, շուրջ զբերդաւն նստէին, պահ արկանէին, պատեցին պաշարեցին։ Իսկ նոքա ի ներքս ամրացեալք՝ յուսային ի տեղւոյն ամրութիւնն, և զօրն զակիշ ածեալ նստէին արտաքուստ շուրջ զձորօքն։ Եւ նստան շուրջ զբերդաւն ամիս երեքտասան, և առնուլ զբերդն ոչ կարացին, զի կարի ամուր էր տեղին։ Աւերեցին քանդեցին զերկիրն ամենայն. եղանէին առնուին աւար, շուրջ ի գաւառացն և յաշխարհացն ածէին զգերի մարդկանն և զանասնոց ի զակիշն իւրեանց,

ալլուստ բերէին համբարս և ուտէին, և զբերդն պաշարեալ պահէին։ Իսկ Պապ որդին Արշակայ ոչ դիպեցաւ անդ ի Հայոց աշխարհին, զի առ թագաւորին Յունաց դիպեցաւ։

41. «Իբրև զայս ամենայն տեսին ազատագունդ բանակն Հայոց՝ չոգան խնդրել իւրեանց թիկունս օգնականութեան, և էր նոցա զօրագլուխ Մուշեղ որդին Վասակայ սպարապետին։ Եւ չոգան նոքա առ իւրեանց արքայորդին. ընդ թագաւորին Յունաց խօսէին, հաւանեցուցանէին զնա թիկունք լինել իւրեանց։ Իսկ յերկիրն Հայոց ստէպ առաքէին դեսպանս առ տիկինն աշխարհին առ Փառանձեմ, զի ժուժկալ լինիցի բերդին և մի ձեռս տացէ ի Պարսիկս։ Եւ դեսպանք ստէպ ստէպ յորդւոյ նորա ի Պապայ զմիմեանց կնի ի շաբաթու շաբաթու եկեալ հասանէին և գաղտ ընդ գաղտնի դուռն ուրեմն մեքենաւորութեամբ ի բերդն մտանէին, տային քաջալերս տիկնոջն։ Եւ յերկարեաց ի բերդին ամիսս երեքտասան պաշարումն։ Այլ որք գային և երթային՝ ստէպ ստէպ գային թէ Պինդ կաց, զի հասեալ է Պապ որդի քո և գունդ կայսերական ի թիկունս օգնականութեան։ Եւ յերկարեաց խրախոյսն որ հասանէր, զի ասէին, Վայրիկ մի ևս, սակաւիկ մի ևս կալցիս ժոյժ՝ և ահա հասեալ է օգնականութիւն։ Եւ եղև յետ չորեքտասաներորդ ամսեանն հարուածք յԱստուծոյ հասին ի վերայ գաղթականին բերդնորդեացն, զի մահ անկաւ ի վերայ նոցա որք ի բերդին էին, զի ի Տեառնէ հասին պատուհասք։ Առաջի տիկնոջն Փառանձեմայ ուտէին և ըմպէին և ուրախ լինէին որք էին ի տաճարին. յանկարծակի ի միում ժամու հարիւր այր, և ի միւսում՝ երկերիւր, և էր զի հինգհարիւր այր մեռան ի բազմականին յորժամ բազմեալ կային. և օր ըստ օրէ սատակէին։ Յորժամ սկսան՝ զամիս մի ոչ յերկարեաց, զի սատակեցան առ հասարակ. և էին արք իբրև մետասան հազար, և կանայք իբրև վեց հազար։ Մինչ էր ի բերդին Փառանձեմ տիկին երկու նաժշտօք՝ եկն եմուտ գաղտ ի ներքս ի բերդն Հայր մարդպետ ներքինին, և թշնամանեաց զտիկինն մեծապէս իբրև զբոզ մի, սկսաւ դնել թշնամանս ազգին Արշակունեաց, զի վատախորհուրդք են, վատանշանք, կորուսին զաշխարհս ևս. յիրաւի անց ընդ ձեզ այդ և այլ զի անցցէ. ապա ել գաղտուկ և փախեաւ։

42. «Իսկ տիկինն Փառանձեմ իբրև ետես եթէ միայն մնացի՝ եբաց զդուռն բերդին, և թողացոյց զզօրսն Պարսից մտանել ի բերդն։ Ելանէին ի վեր, գերէին զգանձս թագաւորին Հայոց որ կային ի բերդին, և սկսան կրել իջուցանել զամենայն գանձն որ կային ի բերդին։ Զինն տիւ և զինն գիշեր համակ իջուցին զոր գտին յԱրտագերսն բերդին, և հանդերձ տիկնաւն խաղացուցին։ Եւ յետ այ-

սրբել եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, և առին զնա և կործանեցին զպարիսպ նորա. առին անտի զգանձս մթերեալս որ կային, և գերեցին զամենայն քաղաքն։ Եւ խաղացուցին յԱրտաշատ քաղաքէ ինն հազար տուն երդ հրեայս, զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքայի Արշակունւոյ յերկրէն Պաղեստինացւոց, և քառասուն (հազար) երդ հայ։ Եւ զբազում շինուածս քաղաքին հրձիգ արարին զփայտակերտն, և զքարակերտն քանդեցին, և զպարիսպն ըստ նմին օրինակի։ Եւ եղև իբրև ածին ժողովեցին զամենայն գերին զքաղաքին ի մի վայր և անցուցին ընդ Տափերն կամուրջ, և առնէին համար գերւոյն, ի մէջ չերտափակ զօրացն պատէին՝ ասէին զօրագլուխքն Պարսից ցԶուիթ երէց քաղաքին Արտաշատու. Ելեալ ի միջոյ գերւոյդ՝ երթ գնա դու յո՛ պէտք է քեզ։ Եւ ոչ առնոյր զայս յանձն երէցն Զուիթն, այլ ասէր. Յո 'զխաշնդ տանիք՝ և զհովիւս տարայք. զի ոչ է մարթ հովուի թողուլ զխաշն իւր, այլ պարտ է հովուին դնել զանձն ի վերայ ոչխարին իւրոյ։ Եւ զայս ասացեալ եմուտ ի գերութիւնն, և խաղաց ի գերութիւն ընդ իւրում ժողովրդեանն յերկիրն Պարսից։

Առնուին զՎաղարշապատ քաղաք. քանդէին բրէին զքաղաքն ի հիմանց տապալէին, և խաղացուցանէին յայնմ ևս քաղաքէ իննևտասն երդս հազար։ Ընդ ամենայն քաղաքս ոչ թողին ամենևին շինած, զի զամենայն տապալէին, քակեալ քանդէին. և ընդ ամենայն երկիրն ասպատակ սփռեալ՝ զամենայն այր ի չափ հասեալ կոտորէին, զկանայս և զորդիս ի գերութիւն վարէին. և զբերդս ամենայն թագաւորին Հայոց կալան, և լցեալ բազում ամբարօք բերդակալս թողուին։ Առնուին և զմեծ քաղաքն զԵրուանդաշատ, և խաղացուցանէին անտի երդս քսան հազար հայ, և երդս երեսուն հազար հրեայ, և զքաղաքն ի հիմանց տապալեալ բրեալ յատակէին։ Ապա առնուին և զքաղաքն Բագրևանդայ Զարեհաւան, և խաղացուցանէին անտի հինգ հազար երդ հայ և ութ հազար երդ հրեայ, և զքաղաքն ի հիմանց տապալէին յատակէին։ Առնուին և զքաղաքն մեծ Զարիշատ որ էր ի գաւառին յԱղոյհովտի. խաղացուցանէին չորեքտասան հազար երդ հրեայ, և տասն հազար երդ հայս, և զնա ի հիմանց քանդեալ ապականէին։ Առին և զամուր քաղաքն Վան որ է ի գաւառին Տոսպայ, և հրձիգ արարեալ քանդէին զհիմունս նորա, և խաղացուցանէին անտի երդս հինգ հազար հայ, և ութևտասն հազար երդս հրեայ։ Զայս ամենայն բազմութիւն հրէից զոր գերեցին տարան յերկրէն Հայոց՝ ածեալ էր յերկրէն Պաղեստինացւոց մեծի թագաւորին Հայոց Տիգրանայ ի ժամանակին յորժամ գերեաց նա և ած ի Հայս զքահանայապետն Հրէից զՀիւրկանոս զառաջին

ժամանակաւ։ Եւ էած մեծ արքային Տիգրան զամենայն զհրէութիւնն զայն բնակեցոյց ի քաղաքին Հայոց յիւրում դարուն ի ժամանակին։ Իսկ յայսմ ժամանակի աւերեցին զքաղաքն և գերեցին զբնակեալսն անդ. և զամենայն երկիրն Հայոց և զամենայն գաւառսն ընդ նմին գերեալ, խաղացուցեալ և զայլ գերութիւնս գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, փորի փորի, զաշխարհի աշխարհի՝ ածին ժողովեցին ի քաղաքն Նախճաւան, զի անդ էր զօրաժողով իւրեանց զօրացն։ Ապա առին և զնա քանդեցին. անտի երդս Հայս երկուս հազար, և հրէայս երդս վեշտասան հազարս անտի խաղացուցին գնացուցին ամենայն գերութեամբն հանդերձ։ Եւ անդէն յերկրին Հայոց ոստիկանս թողին և վերակացուս, ի ծառայութիւն մատնել զմնացորդս երկրին, և ինքեանք զտիկինն Փառանձեմ առեալ հանդերձ գանձիւքն և բազմութեամբ գերեօքն յերկիրն Պարսից խաղացուցանէին, և գնացեալք երթային տանէին հասուցանէին յերկիրն Պարսից առ Շապուհ արքային։ Եւ եղև իբրև չոգան տարան զտիկինն Փառանձեմ յերկիրն Պարսից, և զայլ ամենայն գերութիւնն Հայոց և զգանձսն, և կալան առաջի թագաւորին՝ շնորհ մեծ ունէր թագաւորն Պարսից իւրոց զօրավարացն։ Եւ իբրև կամեցաւ թագաւորն Պարսից Շապուհ թշնամանս առնել ազգին աշխարհին Հայոց և թագաւորութեանն՝ ետ հրաման ժողովել զամենայն զզօրս իւր և զմեծամեծս իւր և զփոքունս և զամենայն մարդիկ աշխարհին իւրոյ որ ինքն իշխէր, և ի մէջ ամբոխին ածել զտիկինն Հայոց զՓառանձեմն։ Եւ հրամայեաց ի հրապարակին իմն առնել հրապոյրս մեքենայից, յոր հրամայեաց զկինն արկանել, և արձակել տիկնոջն Փառանձեմայ ի խառնակութիւն պոռնկութեանն անասնական պղծութեանն։ Այսպէս սատակեցին զտիկինն Փառանձեմ։ Իսկ զայլ գերին զամենայն տարան բնակեցուցին, որ յԱսորեստան, որ յերկիրն Խուժաստանի» (Բուզ. Դ. Ծե.)։

43. Ի պատմութեան աստ ևս Բուզանդայ կան ապաքէն աւելորդութիւնք կամ չափազանցութիւնք։ Չափազանց է ասել, թէ Պարսիկք այնչափ քաղաքներն զօրս առին՝ «բրեցին քանդեցին, ի հիմանց տապալեցին», «ընդ ամենայն քաղաքս չթողին ամենևին շինած». «զամենայն այր ի չափ հասեալ կոտորեցին». սակայն մեծ էր աւերումն, և կոտորածն անհնարին։ Չափազանց է նոյնպէս ասել, թէ Շապուհ «ժողովեաց զամենայն զօրս իւր և զամենայն մարդիկ աշխարհին իւրոյ» ի գնին այն լկտի տեսարանին. այլ չիք տարակոյս թէ եթէ Շապուհ արդարև այնպիսի օրինակաւ (որ չէ անհաւատալի, նայելով ի վաւաշոտ բարս Սասանեան ազգին) կամեցաւ խայտառակել զտիկինն՝ հաւանական է թէ ջանայ ըստ կարի բազմա-

ցուցանել հանդիսատեսներն ի թշնամանս Արշակայ և Հայոց։ Գալով ի թիւ հրեայ գերելոց, զորս քան զՀայոցն աւելի կը դնէ Բուզանդ՝ թէպէտ, գիտելով թուոյ մասին Բուզանդայ շաւլութիւնը, հարկ չէ առնուլ ըստ ամենայն ճշմարտութեան՝ չէ սակայն անհաւանական, թէ հրեայ գաղթականք (որ անտարակոյս իբրև արուեստագէտ ժողովուրդ բերուած էին նախ քան զՏիգրան և մանաւանդ առ Տիգրանաւ, որոյ ձեռագէտ գաղթականօք իւր քաղաքներն շէնցուցնելու սովորութիւնը գիտենք Տիգրանակերտի պատմութենէն), չէին սակաւաթիւ ի Հայս, և Պարսիկք այս դիտմամբ մանաւանդ ընտրեցին տանել առաւել հրեայ քան հայ։

Շապուհ յետ տալոյ զինուորաց խայտառակել զՓառանձեմ՝ ինքըն անձամբ կը գործէ զնոյն խայտառակութիւն։ Երթալով ի Հայս, առաջնորդ ունելով զՎահան և զՄերուժան՝ զորս մի անգամ կը գտնէ յարանց, իմա յայնց որ չէին ուրացած քրիստոնէութիւնը՝ կու տայ առնել կոխան ոտից փղաց (այսպէս սովոր էին առնել արեւելեան բռնաւորք, այսինքն կատաղեալ փիղեր արձակել դերեաց վրայ զորս կամէին բազմութեամբ սպանանել. տես Գ. Մակաբ.), իսկ զկանայս և զմանկունս հանել ի սայլացից։ Իսկ զազատ կանանին, այսինքն զկանայս նախարարաց որ փախած էին, ժողովելով ի Զարեհաւան, ուր կը թուի կար ասպարէզ մեծ ձիարշաւի՝ կու տայ շարել զնոսա հոլանի աստի և անտի ասպարիզին. իսկ ինքն ձիով անցնելով արշաւակի՝ զորս և կամի կու տայ մուծանել ի վրան իւր որ կանգնած էր ասպարիզի մօտ։ Օրինակ լկտութեան անարժան այնպիսի թագաւորի որպիսի էր Շապուհ, միանգամայն յաւիտենական նախատինք Սասանեան թագաւորաց մանաւանդ քան Հայոց, յորոց ի թշնամանս կը կարծէր գործել Շապուհ այն պիղծ վրէժխնդրութիւնը.—«Ապա յետ այսորիկ խաղաց գնաց թագաւորն Պարսից Շապուհ ամենայն իշխանութեամբ զօրաց իւրոց և չոգաւ եկ յերկիրն Հայոց. և առաջնորդ ունէր ընդ իւր զՎահան ի Մամիկոնեան տոհմէն և զՄերուժան յԱրծրունեաց տոհմէն։ Հասեալ ասպատակէին յերկիրն Հայոց։ Բազումք ի նախարարացն Հայոց թողեալ զկանայս իւրեանց և զորդիս և զընտանիս փախեան, ընդ այս և ընդ այն գնացին։ Իսկ զամենայն կանայս նախարարացն Հայոց որ թողին և փախեան՝ ասպատակն ժողովէր. և ածին զնոսա առ Շապուհ արքայ Պարսից։ Իբրև էր բանակն Շապհոյ ի գաւառին Բագրեւանդայ յաւերս քաղաքին Զարեհաւանի, զոր յառաջնումն եկեալ զօրքն Պարսից աւերեցին՝ ածին ժողովեցին առաջի թագաւորին Պարսից զամենայն դերին մնացորդաց աշխարհին Հայոց։ Ապա հրաման տայր թագաւորն Պարսից Շապուհ զամե-

նոյն այր ի չափ հասեալ կոխան առնել փղաց, և զամենայն կին և զմանուկ հանել ընդ ցից սայլից: Եւ զկանայս ազատացն և Նախարարացն զփախուցելոցն հրաման տայր ածել յասպարէզն որ էր ի Զարեհվան քաղաքի: Եւ հրաման տայր հոլանել զամենայն ազատ կանանին և նստուցանել աստի անտի ասպարիսին, և ինքն Շապուհ արքայ հեծեալ ի ձի՝ շուակի անցանէր առ կանանովն. և որ յակն գայրն՝ մի մի ի նոցանէ պղծեալ ի խառնակութիւն առնէր առ ինքն: Քանզի մօտ յասպարէզն հարեալ էր խորանն յոր առեալ մտանէր գործել զանօրէնութիւնն. և այնպէս զբազում աւուրս առնէր զայն ընդ կանայսն» (Բուզ. Դ. ԾԲ.): Շապուհ ևս աւելի խստութեամբ գնաց մանաւանդ ընդ ազգին Սիւնեաց ի վրէժ Անդովկայ նահապետին, հօր Փառանձեմայ, քանզի նա էր գլխաւոր պատերազմին, որ եղաւ ի մէջ կայսեր և Շապհոյ ի սկզբան թագաւորութեանն Արշակայ.—«Եւ զազգն Սիւնեաց տոհմին զամենայն զայր ի չափ հասեալ կոտորեցին, և զկանայս սպանին, և զամենայն մանր մանկտին ներքինիս հրամայէր առնել և խաղացուցանել յերկիրն Պարսից: Եւ առնէր զայս ամենայն վասն վրէժուցն Անդովկայ, որ եղև առաջնորդ պատերազմին ընդ Ներսեհ արքայ Պարսից» (Բուզ. Անդ): Շապուհ յետ գործելոյ այսչափ չարիս, Նախարարաց կիները զորս այնպէս թշնամանեց չարաչար՝ գնել տուաւ բերդեր, և պատուիրեց սպանանել զնոսա՝ եթէ արք նոցա չդառնային յետս: Ապա թողլով զՁիկն և զԿարէն զօրօք ի Հայս, և զբանտարկեալսն յանձնելով Մերուժանայ և Վահանայ՝ գնաց յԱտրպատական.—«Եւ տայր հրաման Շապուհ արքայ Պարսից զամուր ամուր տեղիսն Հայոց բերդս շինել, հրամայեաց և բերդակալս կացուցանել: Եւ զազատ կանանին անդէն ի բերդեանն բաշխէր և թողոյր, զի եթէ ոչ արք նոցա եկեսցեն նմա ի ծառայութիւն՝ սպանցեն զկանայս նոցա բերդակալքն առ որս եթող զնոսա: Եւ եթող յաշխարհին զՁիկն և զԿարէնն և զնոցա իշխանս զօրօք բազմօք. և զիշխանութիւն մնացորդացն ետ ի ձեռս Վահանայ և Մերուժանայ, և ինքն գնաց յԱտրպատական» (Բուզ. Անդ):

44. Ինչպէս կը տեսնուի Ներսէսի խրատէն առ Նախարարս՝ մտանել ի ծառայութիւն Շապհոյ կը նշանակէր լաելեայն ուրանալ զքրիստոնէութիւն և ընդունել զկրօնս Պարսից. ուստի չէք տարակոյս, թէ շատք դարձան, թէպէտ ակամայ, ի կրօնս Պարսից, և որք չառին զայս յանձն՝ մեռան վկայական մահուամբ: Իբրև այսպիսիք յանուանէ կը յիշուին Զուիթ երէցն Արտաշատու, և ի կանանց նախարարաց ոչ սակաւք: Նշանաւոր եղաւ ի սոսա մանաւանդ Համազասպուհի, քոյր Վարդանայ Մամիկոնենի (ոչ մեծին

Վարդանայ), կին Գարեգնի Ռշտունւոյ, որ թողլով զՀամազասպուհի փախած էր ի Յոյնս։

Բուզանդայ Դ. դպրութեան ԾԶ. և ԾԷ. գլուխներն ունին Զուիթայ երիցու վկայաբանութիւնն, այսինքն նորա Հարցափորձն առաջի Շապհոյ և մարտիրոսական մահը։ Ըստ Բուզանդայ՝ Շապուհ տեսնելով զԶուիթ սեաւ մօրուօք և սպիտակ հերով՝ համարեցաւ զնա կախարդ։ Երէցն յետ ցուցանելոյ համառօտիւ այն երևութին բնական պատճառն՝ ասէ համարձակ, թէ զի՞ փոյթ էր նմա հերաց և մօրուաց սպիտակութիւնն կամ սեւութիւն. ինչ որ պէտի հրամայէր՝ թող հրամայէ։ Շապուհ տալով հրաման դնել զնա այն օր ի դիպահոջ, յաջորդ օրը կոչելով զնա յատեան՝ կ'առաջարկէ ընդունել զկրօնս Պարսից, և ի չառնուլ նորա յանձն՝ կը զրկուի սպանման տեղին, ուր յետ յաղօթս կալոյ համառօտիւ՝ կը գլխատուի.—«Իբրև չոգան տարան յերկիրն Պարսից զամենայն գերութիւն Հայոց, և զԶուիթ երէց Արտաշատ քաղաքի ունէին կապանօք առաջի թագաւորին Պարսից Շապհոյ. նայէր թագաւորն և տեսանէր զերէցն Զուիթ այր բարձր և անձնեայ, և ի տիոց մանուկ, և հեր գլխոյն ալեօրեալ էին, այլ մօրուքն դեռ տակաւին սեաւ ևս կային։ Յայնժամ զառաջինն խօսել սկսաւ Շապուհ և ասէ. Տեսանէ՞ք զառնդ զայդ զչարութիւն, քանզի յայտ է. ի հերաց այտի երևի թէ կախարդ է. զի հերքն սպիտակ են և մօրուքն սեաւ։ Իսկ երիցուն տուեալ պատասխանի ասէ. Թէ քեզ պէտ իցէ, այլ զինչ կամիս խօսել և առնել՝ խօսեաց. այլ վասն այգորիկ գիտեա զի յիրաւունս սպիտակացեալ են նախ հերքս, զի բազում աւուրբք երէց են, գոնեա հնգետասան ամօք քան զմօրուս նախաբոյսք են։ Իսկ թագաւորն հրաման տայր մինչև ի վաղիւն պահել զնա. իսկ ի վաղիւն հրաման տայր ածել ի հրապարակն շրթայիւք։ Եւ ելին ոստիկանք արքունի հարցանել, եթէ իցէ յանձն առցէ պաշտել զօրէնս մոգութեանն՝ ոչ մեռցի։ Իսկ նա ոչ առնոյր յանձն. այլ կամեցեալ մեռանել խնդութեամբ վասն Աստուծոյ՝ երթայր ի տեղի մահուան, և աղաչեաց զվերակացուս իւրոյ մահուանն, զի թողացուսցեն նմա սակաւ մի կալ յաղօթս։ Եւ մատուցեալ յառաջագոյն՝ եդ ծունր և ասէ»։ Հոս կը դնէ Բուզանդ երիցուն աղօթքը։ «Եւ իբրև զայս ամենայն ասաց՝ բազում մարդիկ ամբոխի ժողովեալ էին (ի քրիստոնէից). ասացին զամէնն։ Ապա զայրացեալ վերակացուք սպանողութեանն, թէ ընդէ՞ր այնչափ երկար թողացուցին նմա խօսել, տագնապաւ ի տեղի մահուն հասուցանէին։ Իսկ նա մեծաւ խնդութեամբ կարկառեալ զպարանոցն, վճարէր ի սուսերէն» (Բուզ. Դ. ԾԶ, ԾԷ.)։

Զօրինակ ողորմ մահուան Համազասպուհեայ, զոր իբրև մար-
տիրոս կը տօնէ Հայաստանեայց եկեղեցին՝ մանր կը պատմէ Բու-
զանդ Դ. դպրութեան ԾԹ. գլխով, որով և կը փակէ իւր պատ-
մութեան Դ. դպրութիւնը։ Շապուհ, ինչպէս տեսանք՝ Մերուժա-
նայ և Վահանայ յանձնած էր Հայոց մնացորդը։ Այս երկու ուրա-
ցեալք մեծ փութով կը ջանային տարածել ի Հայս կրակապաշտու-
թիւնը և կը նեղէին զքրիստոնեայս, մանաւանդ փախուցեալ նա-
խարարաց կանանին որ գրուած էին այլևայլ բերդեր։ Թշուառ կա-
նայք ստիպուեցան հրամանաւ նոցա ուրանալ քրիստոնէութիւնը,
և որք միանգամ չզիջան այս հրամանին՝ սպանուեցան չարաչար,
բայց թէ ո՛րպիսի մահուամբ՝ չէ յայտ։ Համազասպուհու համար
միայն կը պատմէ Բուզանդ, թէ Վանայ բերդին աշտարակէն կա-
խուելով մերկ գլխիվայր՝ մեռաւ, և մնաց այնպէս, մինչև հալե-
ցաւ մարմինն և ոսկրոտին թափեցան, և կին մի որ էր դայեակ
նորա, կենալով ի ներքոյ աշտարակին՝ կը ժողվէր մեռելոյն ոս-
կրներն իւր հանդերձին գոգը, և ի վախճանի տարաւ թաղեց
զնոսա.—«Վահանն Մամիկոնեան և Մերուժանն Արծրունի, սոքա
երկոքեան որք պիղծք անօրէնք էին, ապստամբեալք յուխտէ աս-
տուածպաշտութեանն՝ զանաստուած մազդեզանց աղանդն յանձն
առեալ պաշտէին. սկսան այնուհետև յերկրին Հայոց աւերել զե-
կեղեցիս, զտեղիս աղօթից քրիստոնէից յամենայն կողմանս Հայոց,
գաւառաց գաւառաց և կողմանց կողմանց։ Եւ նեղէին զբազում
մարդիկ զոր ի բուռն արկանէին՝ թողուլ զաստուածպաշտութիւն
և ի պաշտօն դառնալ մազդեզանցն։ Եւ յետ այսորիկ տային հր-
աման Վահանն և Մերուժանն զամենայն կանայս փախուցելոցն
զնախարարացն որ թողլինն և գնացին. տային հրաման ի բերդեանն
զի նեղեսցեն զնոսա՝ դարձուցանել յօրէնս մազդեզանց. եթէ ոչ
առնուցուն յանձն՝ սատակեսցեն զամենեսեան չարաչար։ Եւ բեր-
դակալեանն յորժամ զայն հրաման ընկալան՝ ամենայն ոք ո՛ ոք
առ ումեք էին՝ նեղեցին զնոսա ըստ հրամանին տուելոյ։ Ապա
իբրև ոչ մի ոք յանձն առնուին ուրանալ ի քրիստոնէութենէն՝ չա-
րամահ սպանանէին զամենեսեան յամենայն ի բերդսն յորս տուեալ
էր զնոսա անդ։ Իսկ Վահանայ էր քոյրաթիւ ի Մամիկոնեան տոհ-
մէն, քոյր Վարդանայ, Համազասպուհի. և էր նա կին Գարեգնի
Ռշտունեաց գաւառին։ Զսա եթող և փախեաւ Գարեգին այր իւր
ի ժամանակին յորում եկն Շապուհ արքայ Պարսից յերկիրն Հայոց.
Իսկ զտիկինն Ռշտունեաց ետուն ի միջնաբերդն Վան բերդն, որ էր
քաղաք ի Տոսպ գաւառին։ Իսկ անօրէնն Վահան և Մերուժանն
հրաման տային բերդակալին զի նեղեսցէ զկինն. եթէ ոչ առցէ

յանձն զօրէնս մազդեզանցն՝ տային հրաման կախել զնա զբարձր աշտարակէն և սպանանել։ Իբրև ոչ առնոյր յանձն Համազասպուհի պահել զօրէնս մազդեզանցն՝ հանէին ի բարձր աշտարակն, որ կայր ի վերայ բարձր գահուն քարին, որ հայէր ի կողմն ծովակին ի գետոյ կուսէ. և մերկացուցին զնա իբրև ի մօրէ, և արկեալ կապ զոտիցն՝ գլխիվայր կախեցին զնա զբարձուէն կուսէ, և այնպէս մեռաւ ի կախաղանին։ Եւ էր նա սպիտակ մարմնով և պայծառ տեսանելովն. կայր կախեալ յերևոյթ տեսիլ նշանակի, և փաղփէր մարմինն ի բարձուէն զոր օրինակ ձիւն սպիտակութեամբն, և բազում մարդիկ ժողովէին տեսանել օր ըստ օրէ, զի իբրև սքանչելի ինչ երևէր յաշխարհին։ Յայս տեսիլ տիկնոջն Համազասպուհեայ՝ էառ կին մի դայեակն նորին, ագաւ նա պարեգօտ մի զոր անակնուղս կոչեն, և էած զօտի ընդ մէջ իւր, և կայր առ բարձր գահուն քարին ի ներքոյ աշտարակին՝ զորմէ կախեալ էր զսանն իւր, մինչ կողոպտեցան ամենայն մարմինք դիոյն։ Եւ որչափ ի վայր վայրէին ոսկերքն՝ նա յիւր ծոցն ժողովէր բովանդակ զամենայն զոսկերս սանին, և առեալ գնաց յիւրսն» (Բուզ. Դ. ԾԹ.)։

Ըստ Բուզանդայ՝ Սամուէլ որդի Վահանայ և Որմիզդխտոյ քեռ Շապհոյ, սպանանելով զհայր և զմայր իւր՝ կը փախչի ի Խաղտիս.—«Այնչափ չար էին արքն երկոքին (Մերուժան և Վահան)՝ զի անգամ իւրեանց ումեք ոչ ողորմէին, այլ անխնայութեամբ դատէին զօտարս և զիւրեանց ընդանիս։ Ատրուշանս շինէին ի բազում տեղիս, և զմարդիկ հնազանդէին օրինացն մազդեզանց, և բազում յիւրեանց սեպհականսն շինէին ատրուշանս, և զորդիս և զազգայինս իւրեանց տային յուսումն մազդեզանցն։ Ապա որդի մի էր Վահանայ, անուն Սամուէլ, եհար սատակեաց սա զՎահան զհայր իւր և զՈրմիզդուխտ զմայր իւր, զքոյր Շապհոյ Պարսից թագաւորին, և ինքն փախստական լինէր յերկիրն Խաղտեաց» (Բուզ. Անդ)։

Դ. Ի ՊԱՊԱՅ ՄԻՆՉԵՒ Ի ՎԱԽՃԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ:

1. Նոր պատգամաւորութիւն առ Վաղէս. Թագաւորելն Պապայ: 2. Բուզանդ զՊապայ անէպարանութեամբ: 3. Գործք Պապայ. Մուշեղ սպարապետ եւ գործք նորա: 4. Նշանաւոր ճակատն ի Ձիրաւ: 5. Խորհուրդ մատնութեան: 6. Մահն Արշակայ: 7. Նուաճումն ապստամբութեանց: 8. Դատաստան զԲուզանդայ: 9. Մահ մեծին Ներսիսի: 10. Պատճառք անհաստատութեանց զՊապայ: 11. Վկայութիւն Ամմիանու: 12. Դաւ ընդդէմ Պապայ եւ փախուստ նորա: 13. Ամմիանոս ջատագով Պապայ: 14. Անմիտ զըրպարտութիւն եւ դաւաճանութիւն. Դատաստան Ամմիանու. Գաթըրճեան: 15. Արդիւնք սպանման Պապայ: 16. Անհարկութիւնք ի Բուզանդայ առ այս. Վարազդատ: 17. Հնարք Մուշեղի յապահովութիւն Հայոց: 18. Սպանումն Մուշեղի դաւով: 19. Մանուէլ Մամիկոնեան. Վարազդատ կը մերժուի: 20. Գարեգին Ռշտունի: 21. Գրաւումն միոյ մասին Հայոց. Սուրէն: 22. Սուրէն կը մերժուի քսութեամբ Մերուժանայ. Գործք Մանուէլի. Պատերազմ ընդ Պարսս. Մերուժան կ'սպանուի: 23. Արշակ եւ Վաղարշակ կը թագաւորեն. Մահ Մանուէլի: 24. Բաժանումն Հայաստանի. Խոսրով ի բաժնին Պարսից: 25. Վախճան զրոցն Բուզանդայ: 26. Համառօտ քաղաքական տեսութիւն:

1. Ինչպէս արդէն տեսանք՝ պատգամաւորութիւնն, զոր ըստ Բուզանդայ (Դ. Ե.) յղեցին Հայք առ Վաղէս ի թագաւորել նորա (364)՝ չեղաւ զառաջինն յաջող, եւ չկարէր իսկ լինել, քանզի դաշնադրութիւնն Յովիանու դեռ նոր էր, եւ Վաղէս էր զբաղեալ ի նուաճել զապստամբութիւնն յարեւմուտս: Ուստի եւ Հայք մնալով անօգնական, թէպէտ ընդդիմացան ամս իբրեւ չորս կամ հինգ քաջութեամբ ընդդէմ ահագին զօրութեանն Պարսից՝ ընկճեցան ի վախճանի: Նախարարք որ մնացած էին հաւատարիմ իւրեանց երկրին եւ կրօնից՝ կը ղրկեն առ Վաղէս (368) նոր պատգամաւորութիւն գլխաւորութեամբ Մուշեղի, որդւոյ Վասակայ՝ խնդրել ի կայսերէ թագաւորեցուցանել զորդին Արշակայ զՊապ, որ էր պատանդ առ կայսեր.—«Յետ այսր ամենայնի (այսինքն այնչափ աղետից եւ սպանմանց աշխարհին) Մուշեղ որդի Վասակայ ժողովեաց զամենայն ազատագունդ մարդկանն որ միանգամ մնացեալ էին, եւ չոգան հանդերձ նոքօք առ թագաւորն Յունաց, եւ եցոյց զպաղատանս աշխարհին Հայոց եւ զամենայն անցս տառապանաց որ անցեալ էր ընդ նոսա, եւ խնդրեաց ի կայսերէն զՊապ զորդի Արշակայ թագաւոր ի վերայ Հայոց աշխարհին» (Բուզ. Ե. Ա.): Զպատմութիւն անցից Պապայ յառաջ քան զթագաւորելն, այն է զփա-

խուստն ի բերդէն, զերթն առ կայսր, զընդունելութիւն նորա պատուով, զառաքումն այսրէն և զխուստփումն յերեսաց Շապհոյ՝ յիշեցինք արդէն. զայն ևս ծանուցինք, թէ Բուզանդ թողլով Պապայ թագաւորելոյն սկզբան պարագաներն՝ կը բերէ ի մէջ զարդիւնս պատգամաւորութեանն Հայոց, այն է զգալուստն Տերենտի զօրօք ի Հայս, անձամբ թագաւորեցուցանել զորդին Արշակայ զՊապ.—«Մեծ թագաւորն Յունաց թագաւորեցոյց զՊապ զորդին Արշակայ ի վերայ աշխարհին Հայոց, որպէս և խնդրեցին նա ի նմանէ, և մեծապէս թիկունք լինէր արքային Յունաց, և զՏերենտ անուն սպարապետն և զԱդէ ոմն կոմս արձակէր ընդ արքային Պապայ յերկիրն Հայոց» (Բուզ. Անդ)։ Ապա կը պատմէ մանր և ընդ երկար՝ ինչ որ գիտեցաւ յետ այնորիկ, այն է զհաշտելն Ներսեսի որ հեռացած էր բանակէն առ Արշակաւ, զկարգելն Մուշեղի սպարապետ փոխանակ հօրն, զքաջութիւն նորա Պարսից դէմ պատերազմներուն մէջ, զնուաճելն ապստամբ գաւառաց ձեռամբ նորին Մուշեղի, զմահն Ներսեսի, Պապայ ներքին գործերն, ի վերջոյ զսպանումն Պապայ դաւաճանութեամբ Յունաց, և այլ բազում ինչ զորս պիտի յիշենք կարգաւ. բայց յիշենք նախ՝ ինչ որ կը պատմէ Բուզանդ զանձնէ Պապայ և զառանձինն կենաց նորա։

2. Ըստ Բուզանդայ՝ որպէս թէ Փառանձեմ մայրն Պապայ նուիրած էր զնա ի ծննդեանն դիւաց, որք մարմնաւոր տեսլեամբ իբրև զօձս կը պատէին զնովաւ, և որոց թելադրութեամբ կը գործէր Պապ ամէն տեսակ պղծութիւն։ Դևք էին միշտ զանձամբ և զանկողնով նորա. ի մտանել Ներսեսի և Խադայ միայն՝ առ ահի լինէին աներևոյթք.—«Պապ որդին Արշակայ ծնաւ ի մօրէն Փառանձեմայ Սիւնոյ, որ էր լեալ կին Գնելոյն, զոր եսպան արքայն Արշակ և առ զկին նորա Փառանձեմ իւր կին, և ծնաւ ի նմանէ որդի որ կոչեցաւն Պապ։ Եւ եղև իբրև ծնաւ զնա մայրն իւր, քանզի անօրէն մարդ էր և ամենևին յԱստուծոյ ոչ երկնչէր՝ նուիրեաց զնա դիւաց. և բնակեցին դևք բազումք ի մանուկն և վարէին զնա ըստ կամաց իւրեանց։ Սնաւ և աճեաց և գործէր զմեղս— զպոռնկութիւն, զպղծութիւն արուագիտութեան և զանասնագիտութիւն և զագռալի գարշութիւն, բայց կարի զարուագիտութիւն։ Դարձեալ ինքն իգանայր այլոց, և այսպէս մմկեալ թաւալեալ էր։ Եւ երբեմն իբրև զգաց մայր նորա զարուագիտութիւնն, և ոչ կարացեալ համբերել պարսաւանացն վատանունութեանն՝ ասէ ցսենեկապան որդւոյն իւրոյ, թէ յորժամ նա խնդրեսցէ ի պղծութիւն զարսն ընդ որս սովորն է անկանել՝ դուք զիս ի ներքս կոչեսջիք։ Յորժամ պատանեակն Պապ ինքն ընդ անկողին մտեալ խնդրէր

զորսն ի պղծութիւն՝ եմուտ մայր նորա և նստաւ զառաջեաւ իւր որդւոյն: Ապա սկսաւ ճչել վայել պատանեակն և ասէ ցմայր իւր. Յորլցես գնացես ի բաց, զի մեռանիմ խորովիմ կսկծիմ պայթիմ, թէ ոչ յորլցես գնացես ի տանէս: Իսկ մայրն ասէ, թէ Ոչ գնացեալ ելից ի տանէ աստի: Իսկ նա հաղ քան զհաղ ճչէր, բազմացուցանէր զվայելն: Իսկ մայրն նայեցեալ տեսանէր աչօք իւրովք օձս սպիտակս, զի պատեալք էին զգահոյիցն ոտամբք և ճապատէին ի վերայ պատանեկին Պապայ, մինչդեռ ընդողմնեալ էր նա. կայր ի մահիճսն, վայէր և խնդրէր զպատանեակսն ընդ որս սովորն էր գիտանալ: Իսկ մայրն գիտացեալ յիշեաց զայն, որոց ի ծննդեանն նուիրեաց զորդին իւր. գիտաց, թէ նոքա են որ ի կերպարանս օձիցն ճապատէին զորդւովն իւրով, յարտասուս հարեալ ասաց. Վա՜յ ինձ, որդեակ իմ, զի քեզ տագնապ էր, և ես ոչ գիտէի: Յարուցեալ գնայ եթող զտեղին՝ կատարել զպէտս ցանկութեանն: Եւ այսպէս դիւօք վարեալ, յայսպիսի գործս զամենայն աւուրս կենաց իւրոց ըմբռնեալ Պապն որդին Արշակայ, մինչև եհաս ի թագաւորութիւնն, մինչև ի մահ իւր» (Բուզ. Դ. ԽԴ.): Դարձեալ այլուր (Ե. ԻԲ). «Այլ թագաւորն Պապ, մինչդեռ տղայիկ այն ինչ ծնեալ էր ի մօրէ իւրմէ՝ յայնժամ ձօնեաց զնա դիւաց անօրէն մայրն Փառանձեմ, և վասն այնորիկ լի էր դիւօք ի տղայութենէ իւրմէ: Վասն զի հանապազ զկամս դիւաց առնէր, վասն այսորիկ և բժշկութիւն իսկ ոչ կամէր գտանել, զի հանապազ վարժէր զանձն իւր դիւօք, և կախարդանօք երևէին դևքն ի նմա, և ամենայն մարդ զդևսն ի նմա աչօք բացօք տեսանէին: Զի յորժամ մարդիկ հանապազօր յայգորել ելեալ մտանէին՝ տեսանէին զի յօձից կերպարանս ելանէին ի ծոցոյն Պապայ թագաւորին և պատէին զուսովք նորա, և ամենեքեան ոյք տեսանէին զնա՝ երկնչէին ի նմանէ ի հուպ երթալ: Իսկ նա պատասխանի տայր մարդկանն ասելով, թէ Մի երկնչիք, զի սոքա իմ են: Զի բազում համբարք դիւաց համբարեալ էին ի նմա և յամենայն ժամ ամենայն մարդոյ երևէր այս, որ զամ մի զթագաւորն տեսանէին. բայց յորժամ Հայրապետն Ներսէս մտանէր առաջի նորա կամ սուրբ եպիսկոպոսն Խադ՝ դևքն չերևեալ աներևոյթ լինէին»: Գրեթէ զնոյն կարծիս ունէին Յոյնք, այսինքն թէ Պապ էր անհնարին կախարդ: Վաղեսի անգամ, որ էր սնապաշտ և կը հաւատար, նա կը դողար իսկ յանուանէ կախարդութեան՝ հաւատացուցած էին, թէ Պապ էր դիւթ և կարող իսկ վնասելոյ կենաց կայսեր, այս պատճառաւ կը խնդրէր Վաղէս բառնալ զկեանս նորա: Բուզանդայ այս պատմութիւնն ոչ այլ իմիք կարէ ընծայուիլ՝ եթէ ոչ տղայամիտ դիւրա-

հաւանութեան հեղինակին: Նուիրել ի մանկութենէ դիւաց, երևել նոցա օձակերպ, նա կախարդութեան անունն իսկ բաւական է յանդիմանել առասպելը: Ըստ մեզ ոչինչ ընդհատ առասպել է միալկոտ ամբաստանութիւնն, և այնու մանաւանդ յայտնի է՝ զի դիւաց բռնութեան կ'ընծայուի գործը: Յաւնելն Պապայ ընդդէմ կղերական զեղծմանց ինչ տուած է անտարակոյս ժամանակին մոլեռանդներուն՝ իբրև դիւամոլ և պիղծ վատահամբաւել բարեկարգիչ թագաւորն: Սակաւ մի յետոյ պիտի տեսնենք զՊապ ամբաստանեալ նաև իբրև սպանող Ներսէսի:

3. Գանք այժմ ի բուն պատմութիւն Պապայ: Առաջին գործ Պապայ յետ թագաւորելոյն հռոմէական զօրութեամբ՝ կը թուի լեալ կարգել զՄուշեղ, զիւր բարերար և ազգին՝ ի սպարապետութիւն փոխանակ հօր նորա Վասակայ, և ջանալ հաշտեցուցանել զՆերսէս, որ ի ժամանակէ անտի մահուն Գնելոյ հեռացած էր բանակէն, այսինքն յարքունեաց: Մուշեղ տասն հազար ընտիր սպառազինօք երթալով իբրև յառաջապահ կը վանէ զՊարսիկս որ կային ի գեղծի՝ մինչև յԱտրպատական, կ'առնու Դարօնից բերդն ուր կային գանձք Արշակունեաց, կ'աւերէ տարուշաններ՝ ուր և կը հանդիպի նոցա, և երևելի երևելի մարդիկ ի Պարսից զորս միանգամ կ'ըմբռնէ՝ կու տայ մորթել և լնուլ խոտով, և այնպէս կախել զպարսպաց ի վրէժ նմանօրինակ մահուան հօր իւրոյ ի Տապհոյ. և Ներսէս կ'սկսի միւսանգամ իւր նորոգութիւններն.—«Եկին հասին (Տերենտ և Ադէ հռոմայեցի զօրօք), և Մուշեղ լինէր զօրավար սպարապետ Հայոց փոխանակ Վասակայ հօր իւրոյ: Եւ գային ի մի վայր ժողովէին ամենայն ցրուեալք փախուցեալք թագուցեալք որ էին յերկրին Հայոց. գային և ի մի վայր բովանդակէին, և լինէին ի խնդիր սրբոյ մեծի հայրապետին Ներսէսի, զի գիտէին թէ նա կարող է աղօթս առնել և խնդրել յԱստուծոյ վասն շինութեան ամենայն աշխարհին Հայոց: Ապա մեծաւ ջանիւ հազիւ հաւանեցուցին զնա երթալ ընդ նոսա ի բանակն արքունի. զի յաւուրց ժամանակին ի մահուանէ Գնելոյ մինչև յայն ժամանակն թագաւորութեանն Պապայ ոչ էր երթեալ նա ի բանակն արքունի: Մեծաւ աղաչանօք տարան զնա ընդ ինքեանս, և նա էր նոցա վերակացու և խրատտու: Ապա կարգէր կազմէր յօրինէր Մուշեղ սպարապետ զամենայն զգունդս Հայոց զօրացն, և առնէր հանդէս ամենայն զօրացն զնդին որ հասին ի ձեռս նորա տասն հազար: Եւ ածէր զամենայն հանդէսն կարգեալս և պատրաստեալս վառեալս ի պատերազմ, զդրօշս փողփողեալս և նշանս արձակեալս, և ցուցանէր զհանդէս զօրացն Հայոց սպարապետն Մուշեղ առաջի իւրեանց թագաւորին Պապայ և մեծի

քահանայապետին Ներսէսի, և առաջի Տերենտի և Ադէի զօրագլխացն
Յունաց: Եւ մեծ շնորհակալութիւն առնէր նմա թագաւորն Հայոց
Պապ և մեծամեծ պարգևս շնորհէր զօրավարին Մուշեղի, և սոյնպէս
զօրագլուխքն Հոռոմոց շնորհակալ լինէին նմա. և եպիսկոպոսապետն
Ներսէս օրհնէր զզօրավարն Մուշեղ, որ յառաջեալ հանդերձ Հայոց
գնդաւն առաջապահ անցանէր առաջի թագաւորին Պապայ և զօ-
րացն Յունաց: Ի Դարանաղեաց գաւառին լինեալ յարձակեցաւ. հա-
սանէր ի միջնաշխարհն Հայոց, սպանանէր զզօրագլուխսն Պարսից
զԿարէնն և Զիկն, և մինչև ի բուն ի սահմանսն ի Գանձակ Ատրը-
պատականի զերկիրն յիւր վարեալ բռնացեալ ունէր: Եւ եկն
եմուտ թագաւորն Պապ յերկիրն Հայոց, և թագաւորեաց ի վերայ
նորա, և թափեաց յինքն զամուր ամուր բերդեսն զոր կալեալ էր
Պարսկացն, և բերդն Դարօնից որ է յերկիրն Կոգայ, ուր կային
գանձք Արշակունեացն սաստիկ յոյժ: Քանզի դիպեցան մտերիմք
բերդակալքն, զի թէպէտ ի ժամանակէն իբրև տարան զթագաւորն
Հայոց զԱրշակ ի Պարս, յայնմհետէ ժամանակէ մարտեան ընդ
բերդին ընդ այնմիկ Պարսիկք՝ ոչ կարացին առնուլ, մինչև եկն
Պապ թագաւորն յերկիրն Հայոց, զի պահեցաւ գանձն և եհաս ամ-
բողջ ի Պապ թագաւորն: Եւ զօրքն Յունաց յԵռանդ և ի Բախիշն
էին: Իսկ Մուշեղ զօրավարն Հայաստանեայց շրջէր ընդ երկիրն, և
աւերէր զատրուշանսն մազդեզանցն. իսկ զմազդեզունսն զոր միան-
գամ ի բուն արկին՝ զամենեսեան տայր հրաման սպարապետն
Մուշեղ ունել և հրով խորովել: Եւ զբազում բերդակալս բերդացն
չարամահս առնէին, և զբազում պատուաւոր տեարս որ պատուա-
կանք էին առաջի թագաւորին Պարսից՝ ունէր ձերբակալս Մուշեղ
և տայր մորթել և լնուլ խոտով և կանգնել ի վերայ պարսպացն:
Ընդ բազում տեղիս զայս առնէր ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ:
Եւ շինէին զամենայն աւերեալսն ի թշնամեացն, և զեկեղեցիսն
նորոգեցին. և թագաւորութիւնն հող քան զհող նորոգէր, և երբ
ժամանակին հող քան զհող յառաջագէմ աճողէին: Եւ սուրբն Ներ-
սէս իմաստուն հայրապետն առաջնորդէր և լուսաւորէր, խրատէր
և կարգէր և շինէր աղքատաց հանգիստ, որպէս և ինքն ի բնէ
իսկ սովոր էր. և զվարս թագաւորութեանն իսկ յօրինէր ամենա-
բարի կրօնիւք, որպէս և տեսեալ էր իւր առ հնօքն թագաւորօք:
Եւ առնել զկարգս եկեղեցւոյ պաշտամանն եպիսկոպոսաց, երի-
ցանցն և սարկաւագաց, և զշինուածս եկեղեցւոյ և վկայանոցաց
զամենայն նորոգեաց ուսոյց և յարդարեաց» (Բուզ. Ե. Ա.):

Մուշեղ զօրաց թիւն հանելով մինչև քառասուն հազար, որ
Հայոց սովորական զօրութիւնն էր՝ կ'երթայ պահել արևելեան,

այն է Ատրպատականի սահմանը։ Շապուհ մեծ բազմութեամբ կը խաղայ ի վերայ Հայոց, բուն բանակը թողլով ի Գավրէժ։ Մուշեղ իւր քառասուն հազարաւ կը զարնէ բանակը, Պարսից մեծամեծներէն շատերը կը բռնէ, կ'առնու թագաւորին գանձը. եթէ պարտ է հաւատալ Բուզանդայ՝ Մուշեղ կը բռնէ կանանին հանդերձ տիկնաց տիկնաւ, ի վրէժ մահուան հօր իւրոյ Պարսից երևելիներէն իբր վեց հարիւր մարդոց մորթը հանել տալով՝ կը լնու խոտով և կը բերէ առ Պապ. բայց զկանայս Շապհոյ պատուով կ'արձակէ, և վասն այսր կը բամբասուի, նա մանաւանդ կ'ամբաստանուի իսկ առ Պապայ։ Ոչ միայն Հայոց զօրքը կը լնուն աւարաւ՝ այլ և թագաւորին հետ մնացող զօրաց և Յունաց զօրավարներուն և զօրուն ևս կը հանէ Մուշեղ մասն աւարէն։ Այս յաղթութեան պատմութեան մէջ կայ արդարև աւելաբանութիւն, մանաւանդ տիկնաց տիկնոջ գերութիւնը կրնայ կարծուիլ անհաւանական, թէպէտ չէ անլուր ի պատմութեան՝ Պարսից թագաւորաց շրջեցուցանելն ի միասին զկանանին, որպէս Դարեհի, զօրոյ զմայրն և զկին բռնեց Աղեքսանդր, և Ներսեհին առ Գաղերիոսիւ. զիարդ և իցէ՝ Մուշեղի նոր եռանդեամբ այս կռուին մէջ մեծ յաղթութիւն ի գլուխ տանելն չէ անհաւանական.—«Ապա Մուշեղ սպարապետն Հայոց ընտրեաց իւր արս ընտիրս, միամիտս, ազատս, ազգայինս քառասուն հազար, միաբանս, միակամս, և կազմեաց զնոսա ձիով և թաշակաւ և զինու, և առեալ զնոսա ընդ իւր՝ երթալ նստել ի սահմանս Ատրպաճացն և պահել զաշխարհն Հայոց։ Ապա յայնմ ժամանակի կազմեաց պատրաստեցաւ Շապուհ արքայ Պարսից ամենայն կազմութեամբ զօրօք իւրովք, եկն եհաս յերկիրն Ատրպատականի, և Մերուժանն առաջնորդ գնդին բանակի նորա, և բանակն ուրեմն թագաւորին ի Թաւրէշն բնակեալ էին։ Եւ հասանէր սպարապետն զօրավարն Հայոց Մուշեղ, անկանէր ի վերայ բանակին քառասուն հազարաւ, և անդէն ձեռն ի գործ արարեալ կոտորէր։ Ապա միաձի մազապուր թագաւորն Պարսից Շապուհ ճողոպրեալ փախչէր, և զամենայն կարևան բանակին առհասարակ ընդ սուր հանէր Մուշեղ հանդերձ զօրօքն Հայոց։ Զի զբազումս կոտորէին, և զբազումս յաւազանոյն Պարսից ձերբակալս առնէին, և առնուին զգանձս թագաւորին Պարսից յաւարի, և ըմբռնէին զտիկնաց տիկինն հանդերձ այլովք կանամբքն:... Այլ Մուշեղ և ամենայն զօրքն Հայոց անչափ առին զաւար ի բանակէն Պարսից և անչափ լցան գանձիւք և ստացուածովք, և բազում աւարաման պահէին Պապայ թագաւորին իւրեանց, և զօրացն Հայոց որ անդէն առ թագաւորին Պապայ էին մնացեալ՝ հանին աւարաման, և զօրավարացն

Յունաց որ էին առ Թագաւորին Հայոց. սոյնպէս և ամենայն զօ-
րացն տային բաշխել ի մեծամեծ աւարացն անելոց։ Այլ իբրև դար-
ձան զօրքն Հայոց յաշխարհն իւրեանց՝ բազումք ի զօրացն Հայոց
ամբաստանէին առ Թագաւորին Պապայ զՄուշեղէ զսպարապետէն,
թէ ընդէր արձակեաց զկանայս Թագաւորին Պարսից զթշնամւոյն
մերոյ։ Եւ Թագաւորին Պապայ վասն այսր իրաց ոչինչ սակաւ լի-
նէր թշնամութիւն ընդ Մուշեղի ի բազում ժամանակս» (Բուզ. Ե. Բ.)։

Ըստ Բուզանդայ՝ արձակելն Մուշեղի զկանանին այնպէս հաճոյ
կը թուի Շապհոյ, մինչև տալ նկարել իւր բաժակին վրայ զՄու-
շեղ իւր ճերմակ ձիով, և կը յիշէր զնա ամէն անգամ որ կը խմէր
գինի այն բաժակաւ.—«Բայց զկանայսն Շապհոյ Թագաւորին Պար-
սից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել,
այլ ժանւարս տայր նոցա կազմել ամենեցուն, և հանեալ արձա-
կէր զամենեսեան զհետ առն նոցա Շապհոյ արքայի։ Եւ ի Պարս-
կացն ընդ նոսա արձակէր, զի երթիցեն առ Շապուհ Թագաւորն
Պարսից ողջս և անարատս։ Իսկ Թագաւորն Պարսից զարմացեալ
ընդ բարերարութիւնն Մուշեղի և ընդ քաջութիւնն և ընդ ազա-
տութիւնն, զի ոչ արար ինչ նմա յաղագս կանանցն թշնամանս.
և էր ի ժամանակին յայնմիկ երիվարն Մուշեղի ճերմակ ձի մի.
Իսկ Թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր գինի ի մատունսն
ըմպել, յորժամ ուրախութեանն իւրոյ խրախութիւնս առնէր զօ-
րացն իւրոց՝ ասէր. Ճերմակաձին գինի արբցէ։ Եւ ետ նկարել ի
տաշտի զպատկեր Մուշեղի ճերմակաւն, և ի ժամ ուրախութեանն
իւրոյ դնէր զտաշտն առաջի իւր և յիշէր հանապազ զնոյն բանս
ասելով, թէ Ճերմակաձին գինի արբցէ» (Բուզ. Անդ)։

Ըստ Բուզանդայ՝ Շապուհ դարձեալ կը յարձակի մեծ զօրու-
թեամբ հանդերձ Ուռնայրիւ Թագաւորաւ Աղուանից, որ կը խնդրէ
ի Շապհոյ՝ պատահել Մուշեղի, Շապհոյ թողլով իւր զօրօքն ելա-
նել ախոյեան Հռոմայեցւոց։ Տերենտ զօրավար Հռոմայեցւոց չթո-
ղուր մտանել ի ճակատ Պապայ, որ հանդերձ Ներսիսիւ կ'ելլէ ի
Նպատ՝ լինել հանդիսատես կռուին, մինչ Ներսէս իբրև երկրորդ
Մովսէս՝ կռուին յաջողութեան համար կ'աղօթէր։ Բարեպաշտն Մու-
շեղ կը բերէ զիւր զէն և զզարդ առ Ներսէս օրհնել։ Պապ, առ
որում ամբաստանուած էր Մուշեղ իբրև բարեկամ Պարսից, արձա-
կելուն համար Շապհոյ կանանին՝ կը դժկամակի թողուլ զՄուշեղ
մտանել ի ճակատ, կասկածելով քաջ զօրավարին հաւատարմու-
թենէն. այլ Ներսէս կը փարատէ Թագաւորին կասկածը։ Հայք կը
ղթեն. մեծարանն Ուռնայր կ'իյնայ ի ձեռս Մուշեղայ, որ ի մե-
ծարանս Թագաւորութեան նորա՝ կը խնայէ նմա զկեանսն։ Այս

մեծանձն ներողութեան համար ամբաստանեալն Մուշեղ կ'արդարացունէ զանձն գեղեցիկ ջատագովութեամբ, ուր դիտելու արժանի է տիրասէր զօրավարին առաքինի ոգւոյն հետ Բուզանդայ ոճը՝ որ սքանչելի օրինակ է հին հայ լեզուին բնտանի պարզութեան, և Պապայ խանդաղատական գովեստը.—«Յետ այսորիկ թագաւորն Պարսից կրկնէր լինէր զօրաժողով ամենայն ուժով և ամենայն զօրութեամբն իւրով. խաղայր գնայր ամենայն զօրօքն իւրովք, հասանէր յաշխարհն Ատրպատականի. և ինքն անդէն դադարէր սակաւուք, և զամենայն զօրացն զբազմութիւն առաքէր ի վերայ թագաւորին Պապայ ի պատերազմ: Եւ եկեալ զօրքն Պարսից՝ տապատակ առնէին ի միջնաշխարհն Հայոց. ապա և թագաւորն Պապ զօրաժողով առնել հրամայէր ի Բագաւանն: Եւ զօրքն Յունաց որ էին յԵռանդին ի Բախշանն՝ ի մի վայր ժողովեցան առ թագաւորն Պապ, և ածին փոս զբանակաւն իւրեանց մօտ ի լեառնն ի Նպատ մերձ ի գետն Եփրատ, և կազմեալ պատրաստեալ կային գործոյ ճակատուն: Ապա զօրավարն սպարապետն Հայոց Մուշեղ ժողովէր զամենայն զօրսն Հայոց, և կազմէին պատրաստութեամբ: Իսկ իբրև զօրահաւաքն առնէր Շապուհ Պարսից թագաւորն զզօրսն իւր ի վերայ աշխարհին Հայոց և ի վերայ զօրացն Յունաց՝ Ուռնայր արքայ Աղուանից անդ էր առ թագաւորին Պարսից: Ապա յառաջ կայր և խնդրէր պարգևս Ուռնայր ի Շապհոյ արքայէն Պարսից և ասէր. Կամ լիցի քեզ, արանց քաջ, զի ինձ պարգև հրաման տացես, զի Հայոց գնդին Պապայ արքային ես ինձէն ելից իմով գնդաւս նահատակ: Զի Արեաց գնդին պատեհ է դիպան ելանել զօրացն Յունաց, իսկ ես իմով գնդաւս Հայոց իշխանացն ելից: Եւ Շապուհ թագաւորն հաճեցաւ և շնորհ կալաւ և հրամայեաց: Բայց Մերուժանայ Արծրունւոյ պատասխանի տուեալ Ուռնայրի ասաց. Աստ արկեր զգաղփ գիրկս. բայց թէ ժողովել կարիցես՝ մեծ զարմանք իցեն: Եւ գաղտուկ խորհրդով զայս գուշակութիւն Մերուժանն ի ձեռն հրեշտակի առ Մուշեղ զօրավարն Հայոց հասուցանէր, թէ Գիտեա և պատրաստեաց, Մուշեղ, զի մեծաւ պարծանօք պարգև խնդրեալ է զձեզ Ուռնայրի արքային Աղուանից. արդ դիտես զինչ գործիցես: Բայց մինչդեռ գային զօրքն Պարսից ի վերայ Հայոց, և Ուռնայր արքայ Աղուանից իւրով գնդաւն ընդ նոսա՝ խօսէր թագաւորն Աղուանից ընդ այնոսիկ որ ընդ իւրն էին, ասէր՝ Յանձն լիցի ձեզ յիշել. ի ժամանակի իբրև ձերբակալ արասջիք զզօրսն Յունաց՝ զբազումս ի նոցանէ ապրեցուսջիք, զի կալեալ կապեալս տարցուք յԱղուանս ի գործ կուագործութեան զաղատ որմաշէնս պիտոյից մերոց քաղաքաց, ապարանից և այլոց պիտոյից՝

Այլ իբրև եկին հասին մերձեցան ի միմեանս գունդքն երկոքեան, Յունացն և Պարսիցն, և հանդերձեալք խառնել ընդ միմեանս՝ ինքնին թագաւորն Հայոց Պապ վառեցաւ կազմեցաւ պատրաստեցաւ, և կամեցաւ ի ճակատ ելանել։ Ապա չառնոյր զայն նմա յանձն Տերենտն զօրավարն Յունաց՝ թէ ի ճակատ մտցէ, այլ ասէ. Թագաւորն Յունաց զմեզ վասն քո յղեաց, եթէ Երթայք զնա պահեցէք. արդ իցէ թէ քեզ դէպ ինչ տայցէ, մեք զմեր թագաւորն որով երեսօք տեսանեմք կամ զի՞նչ տայցեմք նմա պատասխանի եթէ իցէ, և մեք աստի առանց քո ապրեցուք և առ մեր թագաւորն հասանեմք, և լինիցիմք այնուհետև գլխապարտք առաջի մերոյ թագաւորին։ Այլ արա դու, արքայ, զոր մեք ասեմք քեզ. ա՛ռ դու զեպիսկոպոսապետդ Հայոց զՆերսէս և ել նիստ ի վերայ Նպատ լերինն յամուր և յանկանած տեղւոջ, և սուրբ արքեպիսկոպոսապետն Ներսէս արասցէ աղօթս և խնդրեսցէ ի Տեառնէ, զի Տէր տացէ մեզ զյաղթութիւն, և ի բարձուէն նայեսցիս, և տեսջիր զջան վաստակոց պատերազմին մերոյ, զքաջութիւն և զվատութիւն՝ զոր առաջի քո գործեսցեն։ Ապա թագաւորն Պապ հաւանեցաւ բանիցս այսոցիկ, առ ընդ իւր զմեծ քահանայապետն Ներսէս, և ելանէր նստէր ի վերայ Նպատական լերինն, և ամենայն զօրքն Յունաց և Հայոց իջանէին ի տեղի պատերազմին։ Ապա եկն և զօրավարն սպարապետն Հայոց Մուշեղ և բերեր զնշանսն իւր և զզէնն առ Ներսէս եպիսկոպոսապետն՝ զի օրհնեսցէ զնա, և իջցէ ի պատերազմ։ Եւ ի ժամանակին յայնմիկ յիշեաց թագաւորն Պապ զհին զրոյցն և ասէ. Յիշեցի ես զայն, զի բարեկամ է Մուշեղն թագաւորին Պարսից Շապհոյ. Ո՞չ այդ այն Մուշեղն է, որ արձակեաց զկանայս թագաւորին Պարսից Շապհոյ հանդերձ ժանուարօք և փաշտիկանօքն. և լուեալ ես է իմ, թէ ի Պարսիկս խօսի. արդ մի մտցէ դա ի ճակատ։ Ապա զօրավարն Հայոց Մուշեղ բարեխօս առնէր առ թագաւորն Պապ զմեծ քահանայապետն Ներսէս։ Իսկ թագաւորն Պապ ասէ ցեպիսկոպոսապետն Ներսէս, թէ Մի լինիր դու բարեխօս, զի իբրև իջանէ նա՝ ի զօրսն Պարսից անկանի։ Իսկ նա ևս քան զևս յաճախէր մատուցանել զբարեխօսութիւնն։ Իսկ թագաւորն, քանզի բանիւ ինչ ոչ անցանէր զնորա ի ժամանակին յայնմիկ՝ ասէ ցՆերսէս. Կամք քո կատարեսցին. բայց նախ երդումն առեր յաջ քո, զի մեզ մի ստեսցէ, և ապա արձակեսջիր ի պատերազմ։ Ապա կոչեն զՄուշեղ զառաջեաւ արքային, և եկն եպագ երկիր արքային, և մատուցեալ բուռն հարկանէր զաջոյ եպիսկոպոսապետին Ներսէսի և երդնոյր։ Սոյնպէս և ի թագաւորին Պապայ ձեռն արկանէր, երդնոյր և ասէր. Կեցից և

մնացից ի վերայ քո, որպէս նախնիքն իմ ի վերայ նախնեացն քոց. որպէս և հայրն իմ ի վերայ հօրն քո Արշակայ, նոյնպէս և ես ի վերայ քո, բայց միայն չարախօսացն ունկն մի դնիցես: Ապա օրհնէր զնա քահանայապետն Հայոց Ներսէս բազում օրհնութեամբ: Ապա թագաւորն Հայոց Պապ զերկվարն զիւր և զիւր նիզակն հրամայեաց մատուցանել առն քաջի զօրավարին Մուշեղի. այլ նա ոչ առ: Իմովն, ասէ, գործեցից. ապա դու, արքայ, զինչ և տացես՝ ի ձեռս քո եմ: Եւ զիւր նշանն և զզէնն մատուցանէր առ Ներսէս՝ զի օրհնեսցէ: Եւ հեծանէր Մուշեղ իւրով գնդաւն հանդերձ, և զամենայն ճակատն Հայոց յարդարեալ յաջմէ զօրացն Յունաց, յաջում թեւի նա խաղայր յառաջ: Իսկ թագաւորն Պապ և եպիսկոպոսապետն Ներսէս կային ի վերայ Նպատ լերինն. և սուրբն Ներսէս զբազուկսն համապատարածս համբարձեալ յերկինս՝ խնդրէր ի Տեառնէ, զի անխայեսցէ Տէր յուխտ իւր և ի սուրբ եկեղեցիս իւր, զոր պատուական արեամբն ստացաւ, և մի տալ զժողովուրդն ի ձեռս անաստուած հեթանոսաց: Եւ մինչդեռ նա զաղօթսն մատուցանէր առ Աստուած՝ խաղացեալ ճակատեալ իբրև զհուր ամենայն զօրքն Հայոց երթային ընդդէմ զօրացն Պարսից. իսկ գունդն Մուշեղեան յառաջեալ քան զայլ գունդսն՝ յառաջամուխ տագնապեալ երթային, մինչ զի նայէր թագաւորն և տեսանէր, զի ըստ ակն անկանէին, և ոչ երեւէին թագաւորին նշանքն Մուշեղի: Իսկ իբրև չերեւել սկսան նշանքն՝ աղաղակել սկսաւ թագաւորն Պապ առ Ներսէս և ասէ. Դու խլեցեր այրեցեր զիս, զի ասացի ես, բամ, մի յղեր զայրն զայն ի գործ պատերազմիս. ահա ի զօրսն Պարսից անկաւ, և արդ մեծամեծ վնասս գործեսցէ: Եւ ասէ եպիսկոպոսապետն Ներսէս. Մի, արքայ, մի կարծեր, զի ոչ ատէ մեզ այրն. այլ տեսցես դու քեզէն զքաջութիւն նորա: Իսկ թագաւորն Պապ կարի ստիպէր առ եպիսկոպոսապետն Ներսէս ասել, թէ Սաէպ կաց յաղօթս և աղաչեա զՏէր մինչդեռ խառնուրդքս են:.. Այլ ի պատերազմին օգնական Աստուծոյ հասանէր ի վերայ Յունացն, և հայաստան գնդին լինէր յաղթութիւն, և ի պարտութիւն մատնեցաւ գունդն Պարսից. դարձան ի փախուստ, ցրուեցան սփռեցան դաշտաց, լերանց բարձանց, խորոց ձորոց: Ապա զհետ նոցա լինէին զօրքն Յունաց և Հայոց. հասանէին, զմեծ և զփոքր առհասարակ սատակէին. բայց սակաւք ի բազմաց քաջաձիք՝ փախստեայք լինէին: Ապա զհետ լինէին փախստէիցն զօրքն Հայոց, և մինչև ի Գանձակ Ատրպատականի սահմանս Հայոց հալածէին զզօրսն Պարսից. ընդ փախուցեալսն զբազումս սատակէին զճանապարհայն: Եւ Մուշեղ սպարապետն հարկանէր զզօրսն Պարսից ի հարուածս ան-

Հնարին։ Ապա տարեալ դիպէր գնդին Ազուանից, և հասանէր Ուռնայրի արքային Ազուանից ի փախստեանն, և նիզակորնաւն ի կառափն մատուցեալ ծեծէր բազում ասելով, թէ Այգ շնորհս կալջի այր թագաւոր ես և թագ ունիս. ես ոչ սպանից զայր թագաւոր, թէ կարի նեղ հասցէ ինձ։ Եւ ութ հեծելով թոյլ ետ նմա փախչել երթալ գնալ յաշխարհն Ազուանից։ Այլ յորժամ դարձան ամենայն զօրքն Հայոց՝ ոչ գոյր չափ գլխանոյն ախոյենիցն, զոր բերեալ էր առաջի թագաւորին Պապայ զօրավարն Հայոց Մուշեղ, նոյնպէս ըստ իւրաքանչիւր չափու ամենայն նախարարքն և մեծամեծքն և բովանդակ ամենայն զօրքն. և եղև մեծ յաղթութիւն յերկրին Հայոց և ի մէջ զօրացն Յունաց։ Նոյնպէս լցան բազում աւարաւ գանձուցն, զինու և զարդու, ոսկւով և արծաթով և բազում կարասեաւ, ձիովք և ջորեօք և ուղտուք զոր ինչ թափեցին, զի ոչ գոյր թիւ կամ չափ, այլ կարի բազում էր յոյժ։ Բայց ապա ամբաստան լինէին քսութեամբ առ մեծ թագաւորին Պապայ զզօրավարէն Մուշեղէ և ասէին, թէ Գիտեա, արքայ, զի մեծաւ նենգութեամբ է ընդ քեզ Մուշեղ, և քեզ մահու սպասէ. զի զքո թշնամին համակ արձակէ. զբազումս բազում անգամ ի բուռն արկեալ՝ սովոր է արձակել զթշնամիսն. զՈւռնայր արքայ արձակեալ թոյլ ետ ապրել, ի բուռն արկեալ զհակառակորդս քո։ Եւ վասն այսր իրաց բազում անգամ լինէր գժտութիւն թագաւորին Պապայ ընդ զօրավարին Մուշեղի, և բազում անգամ յանդիմանէր զնա վասն այս իրաց։ Իսկ զօրավարն Մուշեղ տայր պատասխանի թագաւորին Պապայ և ասէր. Զիմ զընկերսն զամենեսեան ես կոտորեցի. իսկ որ թագս ունէին՝ նոքա իմ ընկերք չէին, այլ քո. եկեսցես, որպէս ես զիմսն սպանի՝ դու զքոյսն. այլ իմ յայր թագաւոր ոչ ձգեալ ձեռն երբէք որ թագ ունի, և ոչ ձգեմ, և մի այլ ձգել լիցի։ Եթէ կամիս սպանանել զիս՝ սպան. այլ ես եթէ գայ ինձ ի ձեռն երբէք այր թագաւոր, որպէս եկն բազում անգամ՝ ես ոչ սպանանեմ զայր թագաւոր որ զամ մի թագ ունի, եթէ ոք իսկ զիս սպանցէ։ Թագաւորն Պապ իբրև լսէր զբանս զայս՝ արտասուս հարեալ և յարուցեալ ի գահոյիցն՝ բուռն հարկանէր զՄուշեղէ. արկանէր զնովաւ զիրկս և լայր ի վերայ պարանոցին Մուշեղի և ասէ. Մահապարտ են այնոքիկ որ իշխեն խօսել չարութիւն զՄուշեղէ, զառնէ քաջէ և զպատուականէ։ Զի այր որ ազգաւ պատուական է իբրև զմեզ, և նախնիքն զորա իբրև զնախնիսն մեր, և թողեալ նախնեացն զորա զթագաւորութիւնն Ճենաց աշխարհին եկեալ առ մեզ, ի նախնեացն մերոց ի վերայ կեցեալք և մեռեալք են. Հայր սորա ի վերայ հօրն իմոյ մեռաւ, և սա

միամտութեամբ մինչև ի մահ վաստակեալ է, և բազում անգամ Աստուած ետ մեզ յաղթութիւն գովու. ի ձեռն գորա շնորհեցաւ բազում խաղաղութիւն. զիա̂րդ ասեն ցիս զայս բանս, եթէ Մուշեղ քեզ մահու սպանէ: Սա աւասիկ այր իրաւախոհ է, զի յօտար տեարսն վասն բարեկամութեան խնայեաց, զիա̂րդ զա ի բնակ տեարս ձեռն ձգէր: Յայնմ ժամանակի բազում պարգևս և պատիւս և բազում գիւղեան զօրավարին Մուշեղի Պապն շնորհէր» (Բուզ. Ե. Դ.): Եթէ գնենք ևս, թէ բանքն զոր Բուզանդ կը դնէ ի բերան Մուշեղի և Պապայ, են նորին իսկ Բուզանդայ և ոչ բուն Մուշեղի և Պապայ՝ կը մնայ գարձեալ ստոյգ, թէ արդարև ազնիւ և պատուական էր Մուշեղ և հաւատարիմ պաշտօնեայ իւր թագաւորին, քանզի Բուզանդ անտարակոյս կը խօսի ըստ բարուց առաքինի զօրավարին և ըստ բարւոք վկայութեան հասարակաց:

4. Պատերազմն այն, որ ինչպէս կը տեսնուի, եղաւ առ ստորոտ Նպատայ՝ էր Ձիրաւի ճակատն, զոր Խորենացին (Գ. Լէ.) կը թուի շփոթել ուրիշ երրորդ կռուոյ մը հետ, որ եղաւ Ատրպատականի սահմանին վրայ և զոր արդ պիտի պատմենք: Անբարտաւանութիւնն Շապհոյ չհամարելով շատ երկու մեծ ճակատներն, յորս չարաչար յաղթուեցան Պարսիկք միացեալ զօրութենէն Յունաց և Հայոց՝ կը պատրաստուէր երրորդ և աւելի մեծ կռուոյ, որ եղաւ Ատրպատականի սահմանին վրայ: Ուռնայր որ Մուշեղի մեծանձնութեան պարտէր զիւր կեանս՝ կ'իմացունէ Մուշեղի գաղտ Շապհոյ խորհուրդը և պատրաստութիւններն: Այս պատերազմին պատմութեան մէջ ունինք ճակատ յարդարելոյ նոր իմն օրինակ, որ ըստ Բուզանդայ, յորմէ կ'առնու և Խորենացին՝ էր այս. — ի թիկանց պատերազմիկ զօրուն Յունաց և Հայոց կացուցան սայլակիրք, այն է վահանաւորք, խիտ առ խիտ, երկայն սայլերով իբրև պարիսպ: Երբ նիզակաւորք Հայոց (քանզի Հայոց գլխաւոր զէնքն էր նիզակ) և կամ Յունաց լեգէոնք խոնջեալ կամ վաստագեալ կը դառնային առ վահանաւորսն՝ սաքա բանալով իւրեանց տապարներն՝ կ'ընդունէին զնոսա ի ներքս իբրև ի քաղաքորմ: Այսպէս դաշնակից զօրքն ատէպ ատէպ ոգի առնլով՝ նոր զօրութեամբ կը յարձակէին ախոյեաններուն դէմ, մինչև ստիպել զնոսա խոնջեալ և պարտասեալ ի փախուստ, առանց պէտս ունելոյ հրաշալի օգնութեան հովանաւոր ամպոյն մերոց վրայ, և ոչ սաստիկ հողմոյն փչելոյ դաշնաւորաց կողմանէ Պարսից դէմ, ինչպէս կը դնէ Խորենացին: Եթէ հաւատանք Բուզանդայ, և չէ անհաւատալի, ոչ սակաւ զարմանալի էր տիրասիրութիւնն հայ զօրաց, որ իւրեանց ախոյեաններն զորս միանգամ կը սպաննէին՝ կը նուիրէին դժբախ

թագաւորին իւրեանց Արշակայ. տիրասիրութիւն՝ ընդ որ այնպէս ապ-
շեալ հիացեալ էր Շապուհ՝ մինչև գրուատեօք յիշել զայն իւր նախա-
րարներուն, ինչպէս նաև բուն իսկ պատերազմին եղանակը.—
«Այս լինէր գուշակ Մուշեղի Ուռնայր արքայ Աղուանից, յղէր
առ նա հրեշտակ և տայր տեղեկութիւն, ասէր. Մեծ շնորհակա-
լութիւն ունիմ փոխանակ զի ոչ սպաներ դու զիս, և Աստուած
էած զիս ի ձեռս քո, և դու անխայեցեր. զայս սէր քո ոչ մոռա-
ցայց մինչև կեցեմ ես։ Բայց գուշակեալ եմ քեզ, զի Շապուհ թա-
գաւորն Պարսից ամենայն զօրօք իւրովք կամի գալ անկանել յան-
պատրաստից ի վերայ քո։ Այս սորատն Յունաց կազմեաց զզօրս
որ ընդ իւրով ձեռամբ էին, և խաղացոյց տանել գնալ ի սահմանս
Հայոց ի Գանձակէ կուսէ յԱտրպայական տանէ։ Սոյնպէս և Մու-
շեղ սպարապետն գումարեաց ի մի վայր զզօրսն ամենայն Հայոց,
և էին կուռ վառեալք իննսուն հազարք ընտիրք, նիզակ ի ձեռն,
թող զսպառակիրս։ Եւ սոքա վաղագոյն ըստ գուշակութեանն տաճա-
պարեցին հասին յիւրեանց սահմանն, բայց միայն թագաւորն մնաց
անդէն ի Հայոց աշխարհին։ Եւ եպիսկոպոսապետն Ներսէս անդէն
մնայր յաշխարհին, և խնդրուածս առնէր ընդ ամենայն աշխարհին
և վասն զօրացն որ էին ի պատերազմին։ Իսկ թագաւորն Պարսից
Շապուհ գայր հասանէր ամենայն զօրօքն իւրովք ի տեղի պատե-
րազմին, և գտանէր զզօրսն Յունաց և զգունդն Հայոց, զի կազմեալ
պատրաստեալ էին ի գործ պատերազմին. և լինէին խառնուրդք
ճակատուն։ Ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից։ Գունդք
նիզակաւորացն Հայոց յորժամ յարձակեալ քաջութեամբ զախոյեանս
իւրեանց ի վերուստ յերիվարացն յերկիր կործանէին՝ յանդիման
թագաւորին Պարսից Շապհոյ ամենայն զօրքն պատերազմիկք Հայոց
ընդ ընկենուլն խրախոյս բարձեալ աղաղակէին համակ զայս բանս
ասելով. Աս Արշակ քաջ։ Իսկ յորժամ զախոյեանսն ի ճակատուն
յոյն սպանանէին՝ նուիրէին նմա իւրեանց առաջի (Նախորդ) թա-
գաւորին Արշակայ, ասելով. Արշակայ թագաւորին մերոյ զոհ լիջէր։
Նոյնպէս առնէին նիզակաւորքն Հայոց ազատանոյն. յորժամ ռազմ
արարեալ յարձակեալ զզօրսն Պարսից առեալ ընկենուլն՝ ասէին ի
խրախուսելն. Աս Արշակ քաջ. իսկ յորժամ զենեալ զգլխատէին զա-
խոյեանն՝ ասէին. Արշակայ զոհ լիջէր։ Եւ լեգէոն զօրուն բազմու-
թիւնն, այսինքն Յունաց զօրացն սպառակիրն, սոյնպէս և Հայոց
սպառակիրն զթիկունս ունէին զօրացն Հայոց և Յունաց, փահանօք
փակեալք զինքեամբք իբրև զամուր քաղաք ինչ ի թիկանց։ Յոր-
ժամ տարածանէին ինչ զօրքն Պարսից զզօրսն Յունաց և կամ
զգունդ նիզակաւորացն Հայոց՝ սոքա ի լեգէոն փահանաւորացն

Յունաց կամ ի սպարակիրն Հայոց իբրև ի բերդ մտեալ հանգչէին: Իսկ յորժամ ոգի առեալ սակաւ մի և անդուստ ելեալ յարձակէին՝ անթիւս ի զօրացն Պարսից ընկեցեալ առաջի իւրեանց ոտից սատակեալս գլխատէին. խրախուսելով ի նոյն բանս, յԱրշակ թագաւորն իւրեանց՝ անչափս և անթիւս ի զօրացն Պարսից կոտորեցին: Եւ յորժամ դարձեալ սակաւիկ մի ինչ յաղթահարէին զնոսա զօրքն Պարսից՝ և նոքա իբրև ի բերդ ամուր դիմէին ի լեգէոն ի զօրսն վահանաւորս, և նոցա բացեալ զվահանսն՝ զնոսա ի մէջ առեալ փակէին: Եւ յայնմ աւուր հարկանէին սատակէին զզօրսն Պարսից զօրքն Յունաց և Տերենտն սպարապետ նոցա, և գունդքն Հայոց և Մուշեղ սպարապետ նոցա: Եւ սակաւուք փախչէր Շապուհ թագաւորն Պարսից ի պատերազմէ անտի. և նոքա սահմանապահս կացուցանէին, և ինքեանք առ իւրեանց թագաւորն Պապ դառնային մեծաւ անուամբ և բարի աւարաւ և հոյակապ շքեղութեամբ» (Բուզ. Ե. Ե.): Բուզանդ ի փոխճանի այս նկարագրին կը յարէ յաւելուած մի, որ Շապհոյ բերնէն, հանդերձ համառօտ նկարագրաւ այն պատերազմին որում ականատես էր նա՝ պանծալի գովեստ է արիասրտութեանն հայ զօրաց.—«Այլ Շապուհ թագաւորն յորժամ յաշխարհն իշխանութեանն իւրոյ հասանէր՝ զարմացեալ ընդ քաջութիւն գնդին կռուոյն որ դիպեցաւ նմա՝ ասէր, եթէ Զարմացեալ եմ ես զօր ինչ տեսի. զի իմ ի մանկութենէ իմմէ համակ ի ճակատու և ի կռիւ մտեալ եմ, և բազում ամք են զի հասի ի թագաւորութիւն, և առանց կռուոյ ամ չեմ լեալ. բայց իմ ջերմ կռիւ զայս էր տեսեալ որ այս անգամս դիպեցաւ ինձ: Զի յորժամ Հայոց նիզակաւորքն առաջի կարգէին՝ այնպէս յարձակէին որպէս զլեառն մի բարձր և կամ որպէս զաշտարակ մի հաստաբեստ հզօր և անշարժ. և յորժամ մեք զնոսա սակաւ մի շարժէաք՝ նոքա ի լեգէոն Հոռոմոց ապաստան լինէին. և նոցա զվահանափակսն բացեալ՝ զնոսա իբրև ի քաղաքորմ պարսպաւոր ամրացեալ ընդունէին: Եւ անտի սակաւիկ մի ոգի առեալ՝ դարձեալ ելեալք մարտնչէին, մինչև անմի զզօրսն Արեաց առնէին: Եւ միւս ևս, որ ընդ այս եմ զարմացեալ ես, ընդ մտերմութիւն միամտութեանն Հայաստան գնդին, ընդ արիասրտութեանն: Զի այնչափ ամք են զի տէրն նոցա Արշակ կորուսեալ է ի նոցանէն, և նոքա ի պատերազմին ի նա խրախուսէին: Եւ յորժամ զախոյեանսն ընկենուին՝ համակ ասէին, թէ Առ Արշակ, և նա չէր ի մէջ նոցա. և նոքա առ գութ արիասրտութեանն զոր առ բնակ տէրն իւրեանց ունէին՝ զամենայն ախոյեանսն զոր սպանանէին՝ ի նա նուիրէին: Եւ կամ մոլեկան գունդն մուշեղեան, զի ինձ այսպէս թուէր, եթէ

հուր բոց ի գնդէն ելանիցէ և ի նշանացն, իբրև ի հուր հրդեհի՝ այնպէս անցանէր ընդ գունդն որպէս ընդ եղէգն: Եւ այսչափ ժամանակք են, զի Արշակ տէրն նոցա ի նոցանէն կորուսեալ է, զի յԱնդմըշն բերդի կայ յերկրին Խուժաստանի, և նոքա առ գութն համարէին, թէ ի գլուխ նոցա նա իբրև թագաւոր կայցէ, և կամ ընդ նոսա արգելք ի մէջ գնդին կայցէ ի գլուխ ճակատուն պատերազմին, և նոքա առ նմա առնիցեն պաշտօն յանդիման նորա: Այլ, ասէր, երանի որ Հայոց գնդին տէր լիցէ, այնպիսի տիրասէր և միաբան և միամիտ զօրացն» (Անդ):

5. Այն ինչ վախճանած էր պատերազմն, և միացեալ բանակն կը դառնայր առ Պապ՝ Հայք զերծան ուրիշ վտանգէ ի նենգութենէն Գղակ անուն մարդպետին, զոր Տերենտ և Մուշեղ կացուցած էին յետ պատերազմին երեսուն հազարաւ սահմանապահ Ատրպատականի: Գղակ, ըստ Բուզանդայ, գաղտ ի բանի լեալ ընդ Շապհոյ՝ կը խոստանայ նմա մատնել զՊապ հանդերձ Տերենտիւ և Մուշեղիւ, թէ ինչպէս՝ չէ յայտ: Բայց դաւաճանութիւնն պատրաստուած, և վարձատրութիւնն արդէն տրուած էր մատնչին, մինչ կ՚իմացուի խորհուրդը և կը պատմուի թագաւորին, որ կոչելով մատնիչը խոստմամբ յետս՝ կու տայ փողոտել խորագէտ հնարիւ.—«Ապա Տերենտ զօրավարն Յունաց և Մուշեղ զօրավարն Հայոց զԳղակ մարդպետ որ անուանեալ կոչէր ըստ գործոյն Հայր թագաւորին՝ թողին սահմանապահ ի Գանձակ, որ էր սահման ընդ Պարսս և ընդ Հայս: Եւ մնացին առ նմա երեսուն հազար ընտիր ընտիրք, նիզակաւորք կուռ վառեալք պատենազէնք և զրահաւորք կազմ ամենայնիւ: Եւ Տերենտոն և Մուշեղ ամենայն զօրօք որ էին ընդ նոսա՝ գնային յաշխարհն առ թագաւորն Պապ: Իսկ մարդպետն Գղակ յղէր հրեշտակս խորհրդով առ Շապուհ արքայն Պարսից և խոստանայր մատնել ի ձեռս նորա զթագաւորն Հայոց Պապ և զզօրավարն Յունաց զՏերենտ և զզօրավարն Հայոց զՄուշեղ, և առնոյր ի նմանէ գանձս պարգևաց սաստիկ յոյժ: Բայց այլ մեծամեծ նախարարք որ էին առ նմա՝ գաղտ ազդ առնէին թագաւորին Պապայ—Գնէլն տէր գաւառին Անձևացեաց և այլք որ էին ընդ մարդպետն մնացեալ: Ապա թագաւորն Պապ յղեաց դեսպանս առ մարդպետն Գղակ, թէ զօրքդ որ են ընդ ձեռամբ քով՝ գումարեա զայդ, Գնելոյ Անձևացւոյ յանձն արասցես և վաղ եկեսցես, զի պիտոյ է ինձ յղել զքեզ առ թագաւորն Պարսից Շապուհ, զի ես մտից նմա ի ծառայութիւն: Ապա յորժամ լսէր մարդպետն Գղակ՝ մեծապէս խնդացեալ ասէր ընդ միտս իւր, թէ Արդ դիւրին է ինձ զկամս իմ կատարել զոր խոստացայն թագաւորին Պարսից Շապհոյ, յոր-

ժամ դուրս գալ իւրացս՝ յապահով յանհոգս առնել բանիւք զՊապ. և յանկարծօրէն յանպատրաստից արկանել զթագաւորն Պարսից զգլխով նորա, և ինքն զաւարճացեալ լինէր խօսնակից ի մէջ թագաւորացն երկոցունց: Դեսպան ձիով վաղ հասուցանէր ի գաւառն Այրարատու ի մեծ գեւղն ընջին արքունի որում Արգեանսն կոչեն, առ թագաւորն Հայոց Պապ, և գայր յանդիման լինէր թագաւորին: Մեծապէս մեծարեցաւ ի նմանէն, և ի ժամ ընթրեացն հրաման ետ արքային Պապ տանել պատմուճան ագուցանել մարդպետին Դրղակայ, և ագուցին նմա դրաստս և վարտիս: Եւ էր հանդերձն անհեդեդ մեծութեամբն. զի խորշ զխորշիւ իջանէր, մինչ զի ոչ կարէր հանդերձել զանձն իւր, զի պատեաց զնա մեծութիւն հանդերձոյն: Եւ ագուցեալ զպատմուճանն մեծ՝ էած զգօտին ընդ մէջ իւր զորմէ թուրն կախէր, և սուսեր ընդ մէջ ածեալ, և խորշ ի գօտւոյ դրատեցն իջեալ՝ զթուրն և զսուսերն ծածկէր: Իսկ զվարտիսն զգեցեալ, և մոյկս ագուցեալ, և զնրանն յագդեր կապեալ, և ի վերայ նրանին խորշն ի վարտեացն իջեալ անկեալ ծածկէր մինչև ի սրունսն. և ոչինչ իմացաւ Դղակ թէ այն մեծութիւն հանդերձոյն՝ չարոյ նորա իցէ այն: Իսկ յինն ժամ աւուրն կոչեցին զԴղակն և ասեն. Կոչեն զեղ յընթրիս ի ներքս յարքունիս: Իսկ յորժամ մուծին ի փող տանն յորում արքային էր, և էր փողն ընդ երկար· բազում երգս լոյսինջոյս էր թողեալ, և տանէին զնա ընդ այն· կայր շուրջ սպարակիրն փակեալ սակրաւորքն, և գերդս ամենայն լուսոյն ծածկէին: Ապա մտեալ շուրջ զնովաւ ի տեղւոջն ձգձգէին զնա սպարակիրքն: Իսկ նա թէպէտ տանէր ձեռն ի զէն, ի խորշխորշան հանդերձիցն պատատելոյն զոր էր զգեցեալ՝ ոչ զմի զէն ոչ կարաց գտանել: Ապա զի էր ինքն Դղակն այր մեծ և անձնեայ, քաջ հարուստ ոսկերօք՝ սակայն սպարակիր մարդկանն պատեցին զնովաւ, և բարձին զնա վերըմբարձ, և տանէին զնա մինչև ի դուրս տաճարին արքունի: Իսկ իբրև ետես թագաւորն թէ անդր տանին՝ ասէ. Մի՛ այդր, մի այդր, այլ մուծէք զդա ի տուն պատմուճակացն: Քանզի ի փողին զօրք սպարակրացն մուծին զնա ի ներքս ի տունն պատմուճակացն կապեալ ձեռս յետս, այսինքն ուր թագ արքունի դնէին: Եւ անդէն խօսել սկսաւ Դղակն և ասէ· Ասացէք ցարքայ, գոչէք. Ես այս մահու արժանի էի, բայց քեզ արժան էր զիս ի հրապարակի սպանանել, և ոչ ի տան թագաց սպանանել, և զքո թագդ արեամբ շաղախել: Եւ զայս միայն ժամանեաց ասել, և անդէն ի վանսն պատմուճակացն փողոտեցին զնա, և հատին զգլուխ նորա, և հանին հարին ի նիզակի, և կանգնեցին ի հրապարակին արքունի» (Բուզ. Ե. Բ.):

Յառաջ քան զայս, թերեւս ի սկզբան իսկ թագաւորութեանն Պապայ, սպանեալ միւս ևս ներքինի զոր Բուզանդ կ'անուանէ Հայր, որ էր հասարակաց անուն մարդպետաց, առանց տալոյ զբուն անուն մարդպետին։ Պատճառ սպանման նորա էր ըստ Բուզանդայ՝ թշնամանելն զտիկինն Փառանձեմ ի բերդին Արտագերից, ուր պաշարուած էր տիկինն, ինչպէս արդէն տեսանք։ Այս մարդպետն կը թուի այլ ի Կիւղակայ ներքինւոյ, որ նոյնպէս, ըստ Ամմիանոսի, մտաւ ի նոյն բերդն Արտագերից ընդ Արտաւանայ ումեմն, ոչ ի թշնամանել սակայն, այլ ի յորդորել զտիկինն լինել անձնատուր.— «Ապա պատմեցաւ Պապայ յաղագս օրերացն զոր եդ Հայր մարդպետն տիկնոջն Փառանձեմայ, մօր թագաւորին Պապայ, թշնամանս ձաղանաց ի բերդարգել պաշարմանն, զի իբրեւ զբոզ մի՝ այնպէս թշնամանեաց զնա ի ժամանակի իբրեւ եմուտ անդր գաղտուկ, և եդ անարգանս տիկնոջն, և եկն ել անտի և փախեաւ. ետուն զայս ամենայն զրոյց թագաւորին։ Ապա մինչդեռ մարդպետն Հայր զիւրով իշխանութեամբ շրջէր յերկրին Տարօնոյ, և Մուշեղ սպարապետն Հայոց էր ի նմին գաւառին յիւրում բերդին որում Ոզական կոչեն, որ կայ ի վերայ գետոյն Եփրատայ՝ եկն եհաս մի դեսպան յարքայէն Պապայ առ զօրավարն Հայոց Մուշեղ, և ունէր առ նա հրովարտակ. և գրեալ էր ի հրովարտակին անդր հրաման առ նա, զի չարամահ սատակեսցէ զՀայր մարդպետն։ Եւ նա իբրեւ զայս հրամանս ընկալեալ ի ձեռն առնոյն՝ յղէր առ մարդպետն Հայր դաւով, և մեծարանաց պատճառանաւ առ ինքն կոչէր յՈզականն. և էին աւուրք ձմերայնոյ, և սաստկացեալ կցեալ էր գետն Եփրատ։ Ապա կոչեալ եղեւ առ նա Հայր մարդպետն իբրեւ ի պատիւ մեծարանաց. եկն եմուտ մարդպետն ի բերդն յՈզական։ Եւ հրաման զօրավարն Մուշեղ զօրականացն ունել զնա և մերկանալ իբրեւ ի մօրէ, և կապել զձեռս նորա ի ներքոյ ծնկաց նորա և իջուցանել զնա ի գետն և դնել ի վերայ սառինն կցելոյ գետոյն, և սատակեցաւ անդէն։ Եւ եղեւ ի վաղիւ անդր չոգան տեսին, զի ուղեղ գլխոյն ի ցրտոյն վայրեալ ի բաց իջեալ թափեալ էր ընդ քիթս նորա։ Եւ փոխանակ ի նորա տեղի Հայրութեան մարդպետութեանն զԳիլգակ ոմն անուն, որ յաւուրս Արշակայ թագաւորին կամ Տիրանայ հօր նորա զամու միոջ լեալ էր ի նոյն գործ մարդպետութեանն» (Բուզ. Ե. Գ.)։

Ե. Արդէն պատմեցինք, թէ ինչպէս Արշակ դաւով բռնուելով ի Շապհոյ, ըստ Ամմիանու, և կամ ի հարկէ բռնադատեալ երթալ առ նա, ըստ Բուզանդայ—(երկոքին ևս ճշմարիտ են)—դըրուեցաւ ի բերդն Անյուշ։ Ամմիանոս դժբախտ թագաւորին մահը

կը պատմէ եղած սրով, «ferro poenali», առանց յայտնելու թէ ինչպէս: Խորենացին ասէ պարզապէս, թէ «սաւուղաբար արար ընդ անձին իւրում», այսինքն եղաւ անձնասպան: Բուզանդայ Ե. դպրութեան Ե. գլուխն նուիրեալ է Արշակայ մահուան պատմութեան, որ է մին յեղերական գլխոց, որովք լի է մանրապատումն Բուզանդ: Ըստ Բուզանդայ՝ Արշակայ ներքինիներէն մին, Դրաստամատ անուն, մեծամեծ քաջութիւններ գործած էր Շապհոյ պատերազմներուն մէջ Քուշանաց դէմ, մինչեւ ազատել զՇապուհ ի մահուանէ: Շապուհ ի վարձ այս մեծ ծառայութեան նորա՝ հրաման կուտայ Դրաստամատայ ի դարձին ի Քուշանաց՝ խնդրել զինչ եւ կամէր: Հաւատարիմ ներքինին կը խնդրէ թագաւորէն թոյլ տալ նմա երթալ տեսնել զիւր տէրն յԱնյուշ բերդին, դարման տանել նմա եւ մխիթարել զնա մի օր: Ըստ Բուզանդայ՝ ծանր էր այս խնդիրն, քանզի չէր օրէն յիշեցունել թագաւորին այն բերդին մէջ բանտարկեալ զոք. բայց եւ այնպէս Շապուհ կը շնորհէ զխնդիր ներքինւոյն, որ երթալով ի բերդն հանդերձ փուշտիպանաւ՝ կը հանէ զԱրշակ, կը լուայ, կը դարմանէ թշուառ բանտարկեալն, կը դնէ առաջի նորա սեղան պէսպէս կերակրովք եւ ըմպելեօք: Արշակ կը յիշէ իւր առաջին փառքը եւ վերջին թշուառութիւնը, եւ յանկարծ եղուկ կարդալով անձին՝ կ'առնու դանակը սեղանէն եւ կը մխէ սիրտը. զայն տեսնելով ներքինին՝ կը հանէ դանակը եւ կը մխէ իւր կողը.—«Յայնմ ժամանակի դեռ տակաւին եւս կայր կենդանի Արշակ արքայ Հայոց յերկրին իշխանութեան թագաւորութեանն Պարսից, ի կողմանս Խուժաստանի, յԱնդմըշն բերդին. այսինքն որում Անյուշն բերդն կոչեն: Իբրեւ խաղաղացաւ պատերազմն Պարսից ընդ Հայս՝ Արշակունի թագաւորն Քուշանաց որ նստէր ի Բաղխ (Բահլ) քաղաքի՝ յարոյց տալ պատերազմ ընդ Սասանականին Շապհոյ թագաւորին Պարսից: Եւ Շապուհ թագաւորն զամենայն զզօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, եւ զօրս միանգամ ածեալ էր գերութիւն յերկրէն Հայոց՝ զամենայն այրեւձի գումարեալ խաղացոյց ընդ ինքեան: Ի պատերազմի անդ չարաչար տարածէին զզօրսն Պարսից զօրքն Քուշանաց. զբազումս կոտորեցին եւ զբազումս ձերբակալ արարին, եւ զկէսս փախստականս առնէին: Ներքինի մի Դրաստամատ անուն, որ յամս Տիրանայ թագաւորին Հայոց եւ Արշակայ որդւոյ նորա լեալ էր իշխան Անգեղ տան գաւառին եւ հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին եւ ամենայն բերդացն արքունի որ ի կողմանս յայնս, սոյնպէս եւ յերկրին Ծոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ, եւ բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն՝ գերեալ տարեալ էր յերկիրն

Պարսից ի ժամանակին յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց։ Այս
Դրաստամատ էր յայնմ ճակատու, յորում վատթարեցին Քուշանքն
զՇապուհ արքայն Պարսից, և գործեաց անհնարին քաջութիւն,
ապրեցոյց զՇապուհ ի մահուանէ, և զբազումս ի Քուշանաց անտի
կոտորեաց, և զբազում գլխոյանից զգլուխս բերէր զառաջեաւ։
Իբրև եղև յորժամ դարձաւ Շապուհ յերկիրն Ասորեստանի՝ մեծ
շնորհակալութիւն առնէր ներքինւոյն Դրաստամատայն վաստա-
կոյն, և ասէր ցնա. Խնդրեա դու ինչ լինէն. զինչ և խնդրեսցես՝
տաց քեզ և ոչ արգելից։ Եւ ասէ Դրաստամատ ցթագաւորն. Ինձ
ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տե-
սից զբնիկ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց. և առ մի օր, իբրև
ես երթայց առ նա՝ հրաման տուր արձակել զնա ի կապանացն, և
ես իշխեցից լուանալ զգլուխ նորա և օծանել, և ագուցանել նմա
պատմուճան, և արկանել նմա բազմականս, և դնել առաջի նորա
խորտիկս, և տալ նմա գինի, և ուրախ առնել զնա արուեստակա-
նօք մի օր ճիշտ։ Եւ ասէ թագաւորն Շապուհ. Խիստ են խնդր-
ուածքդ զոր խնդրեցեր. զի յաւուրց ժամանակաց յորմէ թագաւորու-
թիւնս Պարսից կանգնեալ է, և բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ
է՝ ոչ ոք ի մարդկանէ իշխեցեալ է յիշեցուցանել՝ զոր յայնմ բերդի
եղեալ զոք է թագաւորաց. և դու աւադիկ զանձն ի մահ եդիր և յիշե-
ցուցեր զԱնյուշն. քեզ արժան էր զօգուտ քո անձինդ խնդրել—կամ
աշխարհս, կամ գաւառս, կամ գանձս. բայց զի քո մեծ վաստակք
են առ իս՝ զոր ինչ խնդրեցերն՝ երթ, տուեալ լիցի քեզ։ Եւ ետ
նմա փուշտիպան մի հաւատարիմ, և հրովարտակ արքունի մա-
տանեաւն, զի գնացեալ երթիցէ նա ի բերդն յԱնդմըշն, և զիարդ
և կամք իցէ նորա՝ արասցէ կամելոյն Արշակայ։ Եւ չոգաւ Դրաս-
տամատ հանդերձ փուշտիպանաւն և հրովարտակաւն արքունի յԱ-
նուշ բերդն, և ետես զտէրն բնիկ. արձակեաց զնա ի կապանացն
երկաթեաց, ի ձեռակապացն և յոտիցն երկաթոց և յանրոց պարա-
նոցին շղթայիցն սարեացն, և լուաց զգլուխ նորա և լոգացոյց
զանձն նորա, և ագոյց նմա պատմուճան ազնիւ, և էարկ նմա
բազմականս և բազմեցոյց զնա, և եդ առաջի նորա ընթրիս ըստ
օրինաց թագաւորաց, և եդ առաջի նորա գինի որպէս օրէն էր
թագաւորացն, սթափեաց զնա և մխիթարեաց, և ուրախ առնէր
զնա գուսանօք։ Եւ ի ժամ ագանդեր մատուցանելոյ՝ եդին առաջի
նորա միրգ, խնձոր և վարունգ և ամիճ զի կերիցէ. և եդին դա-
նակ նմա, որպէս զի հատցէ և կերիցէ զիարդ և կամեսցի։ Եւ
Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա, կայր յոտն և մխի-
թարէր զնա։ Իսկ յորժամ արբեցաւ և գինին եկն զակամբ նորա՝

արբեցաւ հպարտացաւ և սաէ․ Վա՜յ ինձ Արշակայ, այսպէս և այս և յայսմ չափու, և այս անցք անցին ընդ իս։ Եւ զայս ասացեալ՝ զդանակն զոր ունէր ի ձեռին, որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել՝ եհար ի սրտի իւրում, և մեռաւ անդէն ի նմին ժամուն մինչդեռ կայր ի բազմականին։ Իսկ յորժամ զայն ետես Դրաստամատն՝ յարձակեցաւ եհան ի նմանէ զնոյն դանակ և եհար յիւրում կշտին, և անդէն մեռաւ և նա ի նմին ժամուն» (Բուզ. Ե. Է)։ Այս է աւասիկ «սրով» մեռանել, կամ «սաւուղաբար անձնելն» Արշակայ։ Թէպէտ այլուր յիշուած է՝ հարկ կը համարինք հոս դնել միասնագամ ի լուսաւորութիւն Բուզանդայ այս պատմութեան։ Քուշանք, Մազքութք, Հոնք՝ էին հիւսիսային Դուրանեան կամ Սկիւթացի ցեղեր, որոց կը թագաւորէին Պարսից Դարեհի վերջնոյ ցեցէն իշխանք, ազգակիցք Պարթևաց, նաև նախնի Հայոց, բայց կը կոչուէին Պահլաւ յանուն Բահլ (Բակտրա) քաղաքին, որ էր մայրաքաղաք նոցա, և իբր Պահլաւ՝ էին նաև ազգակիցք վերջին Արշակունի թագաւորաց Հայոց, Տրդատ-Արտաշիսէ (Արտաշէս Բ. ըստ Խորենացւոյն) հետէ։ Այս ցեղ կը թուի կոչուած Արշակունի, այսինքն արքունի, թագաւորական, վասն զի ժառանգական իրաւունք էր նոցա թագաւորութիւնն։ Այս Պահլաւ թագաւորութիւնն է որ կը կոչուի ըստ արդի գիտնոց Մար—Սկիւթական (Médoscythe), որոց և դահեկանք գտնուած են նման դահեկանաց Պարթևաց։ Սասանեանք երկար կռիւներ ունեցան այս Մար--Սկիւթացի տէրութեան կամ Քուշանաց հետ։ Կոստանդայ ժամանակ, երբ Հըռոմայեցւոց և Սասանեանց մէջ գժտութիւն կար Միջագետաց և Հայոց համար՝ Շապուհ, ինչպէս տեսանք՝ ունէր պատերազմ այն ազգերուն հետ, և հաշտուելով ընդ նոսա՝ սկսաւ զիւր արշաւանն ի Միջագետս առ Կոստանդաւ և Յուլիանոսիւ։ Բուզանդ կ՚ըսէ հոս թէ Հայոց հետ պատերազմելէ դադրելէն ետքը առ Պապաւ՝ Շապուհ ունեցաւ դարձեալ պատերազմ Քուշանաց դէմ, և այս պատերազմին ժամանակ էր որ Դրաստամատ ներքինին գործեց այն արութիւններն, զորս կը յիշէ հոս Բուզանդ։

7. Շապհոյ պատերազմներէն ետքը Մուշեղի գործն եղաւ նուաճել այն սահմանագլուխ գաւառներն, որ առ Արշակաւ ապըստամբած էին և կամ զորս ուրիշ սահմանակից ազգեր հանած էին ի Հայոց։ Այս ապստամբ գաւառք, զորս մի ըստ միոջէ կը թուէ Բուզանդ՝ էին. *յարևելից*՝ Ատրպատականի այն մասն որ կը վերաբերէր Հայոց. *ի հարաւոյ*՝ Նոշիրական (ասորական) աշխարհն, Կորդուաց նահանգը և Մարաց այն մասը որ կը վերաբերէր Հայոց, այն է կողմանք Հեր և Զարևանդ գաւառի. *ի հիւսիսոյ*՝ երկիրն

Արձախայ, Ազուան գաւառք յայսկոյս Կուր գետոյ, ինչպէս Ուտի, Շակաշէն, Գարդմանայ Ձոր, զորս գրաւած էին ազատ Ազուանք որ յայնկոյս Կուր գետոյ. *ի Հիւսիսոյ արեւելից*՝ Կազբք, այսինքն Կազբից երկրին այն մասը որ կը կոչուէր Փայտակարան, պարսիկ բնակչօք. *յարեւմտից Հիւսիսոյ*՝ բուն Վրաց ազգակից նահանգն Գուգարք. *յարեւմտից Հարաւոյ եւ յարեւմտից*՝ Աղձնիք, Ծոփք, Անգեղ տունն և Անձիտ.—«Այս երբև դադարեաց պատերազմն ի կողմանցն Պարսից և յապահովեցան իբր ճակատուն յայնմ կողմանէ՝ այնուհետև սկսանէր սպարապետն Հայոց Մուշեղ հարկանել զայնոսիկ որք ապստամբ եղեն ի թագաւորութենէն Արշակունեաց: Նախ հարկանէր զտուն (կալուած) թագաւորին Հայոց որ յԱտրպատականին էր. Նուաճէր և ի հարկի կացուցանէր և առնոյր բազում պանդանդս ի նոցանէ: Հարկանէր Մուշեղ և զապստամբս Նոշիրական աշխարհին որ ապստամբեցին յարքայէն Հայոց. առնոյր պանդանդս, և զբնակիչս երկրին ի հարկի ծառայութեան կացուցանէր: Հարկանէր և զԿորդուս, զԿորդիս և զՏմորիս ապստամբեալս յարքայէն Հայոց, դնէր հարկ և առնոյր պանդանդս: Եւ զկողմանս Մարաց, քանզի և նոքա ապստամբեցին յարքայէն Հայոց՝ հարկանէր մեծապէս, գերէր զբազումս ի նոցանէ, մնացորդացն դնէր հարկս, և առնոյր պանդանդս: Հարկանէր և զերկիրն Արձախայ մեծաւ պատերազմաւ, գերէր զբազումս ի նոցանէ, ի մնացորդացն առնոյր պանդանդս, և զմնացեալսն ի հարկի կացուցանէր: Առնէր պատերազմ ընդ երկիրն Ազուանից, հարկանէր զնոսա ի հարուածս անհնարինս: Եւ թափէր ի նոցանէ բազում գաւառս զորս հատեալ էր նոցա ի Հայոց, զՈւտի, զՇակաշէն և զՁորն Գարդմանայ, զԿողթ և այլ որ շուրջն էին զնովաւ գաւառք: Եւ զԿուր գետ, որպէս և յառաջն լեալ էր՝ ընդ երկիրն Ազուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին, և ի գլխաւորացն բազումս սպանանէին, և զմնացորդսն ի հարկի կացուցանէին, և պանդանդս ի նոցանէ առնուլ: Այս խնդրէր զվրէժն մեծապէս սպարապետն Մուշեղ յերկրէն Պարսից ի Փայտակարան քաղաքէ, փոխանակ զի և նոքա նշկահեցին ստեցին արքային Հայոց: Հասեալ զբազումս ի նոցանէ գլխով պատուհաս առնէր սպարապետն Մուշեղ, զմնացորդսն ի հարկի կացուցանէր, առնոյր պանդանդս ի նոցանէ, և անդ ոստիկանս վերակացուս թողոյր: Այս խաղայր ի վերայ Վրաց արքային, և նեղէր զնա մեծապէս. և հարկանէր զերկիրն... և զբդեաշխն Գուգարաց որ յառաջն ծառայէր թագաւորին Հայոց և ապստամբեաց՝ կալեալ գլխատէր, և զազգն որձկոտոր առնէր, և զկանայսն և զդստերս ի գերութիւն վարէին: Սոյն օրինակ և որ միանգամ ի

կողմանն յայնմիկ էին նախարարքն և ի թագաւորէն Հայոց եղեն ապստամբք՝ զամենեսեան գլխատէր, և թափէր զամենայն գաւառն, և առնոյր պատանդս և զմնացեալսն ի հարկի կացուցանէր։ Եւ զհին սահմանսն որ յառաջուն էր լեալ ընդ երկիրն Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր, այնուհետև յինքն վարեալ՝ դանայր անդ։ Դառնայր ապա զօրավարն Մուշեղ յերկիրն Աղձնեաց, և հարկանէր զերկիրն ի մեծ հարուածս, զի և նոքա ապստամբեալ էին յարքայէն Հայոց։ Զերբակալ արարեալ զբդեաշխն Աղձնեաց՝ զերկիրն ի հարկի կացուցանէր, և վերակացուս և ոստիկանս յերկրին Աղձնեաց թողուին։ Ապա անդի ի Ծոփս մեծ արշաւեցին, և նոքա էին ապստամբեալ։ Հարկանէր զերկիրն գաւառին Մուշեղ մեծի Ծոփաց, առնոյր պատանդս, և զազգն ի հարկի կացուցանէր։ Հարկանէր և զԱնգեղ տանն զբազումս. բայց աշխարհն զի ոստան արքունի լեալ էր վաղ վաղ՝ բնակիչք գաւառին կային ի հարկի ծառայութեան։ Ապա ի գաւառն Անձտայ արշաւէր, և հարկանէր Մուշեղ զկողմանս գաւառացն այնոցիկ որ շուրջ էին զնովաւ, քանզի և նոքա ապստամբեցին ի թագաւորութենէն Արշակունեաց։ Հանէր ընդ սուր զտեարս գաւառին, առնոյր պատանդս և նուաճէր, ի հարկի ծառայութեան թագաւորին Հայոց Պապայ զամենեսեան առհասարակ կացուցանէր» (Բուզ. Ե. Ը—ԺԹ.)։

Այս ապստամբ գաւառաց նուաճման համառօտ պատմութիւններն կը կնքէ Բուզանդ Մուշեղի հայրենասէր վաստակոց վրայ փառաւոր գովեստիւ. *«Այլ քաջն զօրավարն սպարապետն Հայոց լի էր քինիւ մեծաւ և բազում նախանձու զամենայն աւուրս կենաց իւրոց, և միամտութեամբ և արդար վաստակով ջանայր հանապազ և վաստակէր ի վերայ թագաւորութեանն Հայոց աշխարհին։ Զտիւ և զգիշեր կայր յաշխատութեանն. ջանայր և ճգնէր կալ ի ճակատու պատերազմին, և ոչ թողոյր բնաւ ամենևին և ոչ քան զկորի մի գետին ի սահմանաց երկրին Հայոց ուրեք վարել. ի վերայ աշխարհին կեալ, և մեռանել ի վերայ անուանն քաջութեան, ի վերայ բնակ տերանց, և ի վերայ բնակչաց աշխարհին, ի վերայ քրիստոնէութեանն հաւատոյ, ի վերայ հաւատացեալ, յԱստուած և ի Քրիստոս մկրտեալ ժողովրդոց, ի վերայ եկեղեցեաց և ի վերայ նուիրեալ սպասուց, ի վերայ վկայարանացն Քրիստոսի, ի վերայ ուխտի Աստուծոյ, ի վերայ քերց և եղբարց, ի վերայ մերձաւորաց տոհմին, ի վերայ բարեկաց բարեկիր բարեկամաց. հանապազ կայր զօրավարն Մուշեղ ի նահատակութեան պատերազմին, և զանձն փոխանակ առնել աշխարհին, և յանձն իւր անխայէր ի մե-*

ռանել, զամենայն աւուրս կենաց իւրոց առաջի իւրոց բնակ տերանցն Արշակունեաց վաստակէր» (Բուզ. Ե. Ի.)։

Ց. Բուզանդայ ԻԱ.—ԻԴ. գլուխներն կը բովանդակեն գովեստ և ամբաստանութիւն, յորս կան ոչ սակաւ անհաւատալի կէտեր՝ զորս որոշել ճշմարիտ պատմչի պարտքն է։ Գովեստք Բուզանդայ են զՆերսիսէ, իսկ ամբաստանութիւնքն զՊապայ։ Թէ Ներսէս էր բարեկարգիչ, «մխիթարէր, դարմանէր և տեսուչ լինէր աղքատաց, զօրկունս և զաղքատս հանգուցանէր, շինէր զեկեղեցիս ընդ ամենայն տեղիս, և զամենայն կործանեալս կանգնէր, և զամենայն կարգս տապալեալս ուղղէր և նորոգէր, շինէր և հաստատէր, խրատէր և յանդիմանէր», այլովքն հանդերձ—ճշմարիտ հայրապետի համար է արդարև հաւատալի, բայց ոչ նոյնպէս, թէ «առնէր բազում նշանս և զօրութիւնս մեծամեծս և բազում բժշկութիւնս սքանչելեաց»։ Հաւատալի է նոյնպէս, թէ Ներսէս իբրև հայր կ'օրհնէր. անհաւատալի է սակայն, թէ զամենայն «զոր օրհնէր՝ օրհնէր», այսինքն՝ զով որ կ'օրհնէր՝ կ'օրհնուէր, և «զորս անիծանէր՝ անիծեալ լինէին». որպէս թէ կար ի վեր քան զբնութիւն և անվրէպ զօրութիւն յօրհնութիւնսն և յանէծս Ներսիսի։ Նա բնաւ թէ Ներսէս կ'անիծէր զոք՝ չէ հաւատալի, եթէ պարտինք ընդունել թէ Ներսէս էր ճշմարիտ աշակերտ այն աստուածային Վարդապետին, որ կը պատուիրէ զանիծիչս անգամ օրհնել։ Յայտնի է, թէ Բուզանդ կը խօսի հոս ըստ միամիտ հաւատոց իւրոյ ժամանակին, և ոչ իբրև ճշմարիտ պատմիչ։ Գալով ամբաստանութեանցն զՊապայ—և այս է մանաւանդ քննութեան արժանի կէտ—սոցա մի մասն է յայտնապէս առասպել, զոր օրինակ թէ «մինչդեռ տղայիկ էր Պապ՝ ձօնեաց զնա մայր նորա Փառանձեմ դիւաց», թէ՝ «կախարդանօք երևէին ի նմա դևք յօձից կերպարանս», այնպէս որ «ամենայն մարդ աչօք բացօք տեսանէր զնոսա», բաց ի Ներսիսէ և ի Խադայ։ Գալով բնութեան դէմ մեղաց, զորս կը թողունք յիշել յանուանէ, չարատելու համար զգաստ ականջներ՝ Պապ եղած էր թերևս այնպիսի մոլութեանց գերի։ Այսպիսի օրինակներ չեն անլուր ի պատմութեան երևելի անձանց։ Կայսրներ, թագաւորներ, երևելի իշխաններ, պապեր անգամ, ոչ յոռիքն միայն, այլև ազնուագոյնք՝ կ'ամբաստանուին այս մոլութեամբ, յանուանէ՝ հիներէն Տիտոս, և նորերէն Փրեդերիկոս մեծ։ Արժան է նկատել նաև երիտասարդ թագաւորին վրայ վատթար ազդեցութիւնը ոչ Պարսից միայն, այլև Յունաց, որոց բարոյականութիւնը կասկածելի է յայսմ մասին։ Բայց այս ամբաստանութիւն, եթէ ճշմարիտ ևս է՝ կը վերաբերի Պապայ առանձին և ոչ հրապարակական կենաց, զոր մա-

նաւանդ կը նկատենք հոս. մենք կը խնդրենք թէ որպիսի ոք եղաւ Պապ, ոչ իբրև սոսկական, այլ իբրև թագաւոր։

9. Ըստ Բուզանդայ՝ որպէս թէ Պապ յանդիմանուելով ստէպ ի Ներսիսէ՝ կը թշնամանայ ընդ նմա և կամի սպանանել զնա, և կ'սպանանէ իսկ, և կ'եղծանէ, իբրև ի հեճուկս՝ ի նմանէ հաստատեալ ամէն կարգ, թոյլ տալով սոսկալի զեղծմանց բոլոր ազգութեան մէջ.—«Այլ թագաւորն Պապ յամենայն ժամ էր թշնամի մեծի քահանայապետին վասն յանդիմանութեան մեղաց իւրոց։ Իբրև ոչ զգաստանալ կամէր և ոչ համբերել նախատանացն՝ էարկ ի միտս իւր սպանանել զմեծ քահանայապետն Աստուծոյ զՆերսէս. և զի յայտնի ոչ մարթէր նմա առնել՝ կեղծաւորեալ կերպարանէր իբրև այն եթէ յուղղութիւն ինչ եկեալ է։ Եւ կոչեալ զնա յապարանս իւր ի Խախ աւանի յԵկեղեաց գաւառի՝ արար նմա ընթրիս։ Ինքնին թագաւորն յոտն կացեալ հոլանեալ, ի մէջ գետնին անցեալ՝ անապակ մատուցանէր առնն Աստուծոյ յընթրիս անդ, դեղ մահու ընդ կոփնդն խառնեալ» (Բուզ. Ե. ԻԴ.)։ Կ'ընդունէինք թերևս այս պատմութիւնը, որ ինքնին չէ անհնարին և ոչ իսկ անհաւանական՝ եթէ օրինակ մահուն Ներսիսի կարծեցեալ դեղատուութենէն՝ չէր անտեղի և յայտնապէս սուտ։ Ըստ Բուզանդայ՝ որպէս թէ Ներսէս, երբ առաւ մահացու բաժակը՝ գիտաց թէ էր թոյն։ Իսկոյն գնաց իւր տունը բոլոր մեծամեծաց հետ որ էին ընդ նմա յընթրիսն, և վերցունելով պարեգօտը՝ ցուցուց սրտին վրայ կապուտակեալ իբրև զչափ նկանակի։ Թողունք, որ այս նշանն, զոր իբրև արդիւնք թունոյ մէջ կը բերէ Բուզանդ՝ չէ ամենևին նշան թունաւորելոյ. զարմանալին այն է, որ Ներսէս թունոյն ազդեցութիւնը կտրելու համար մատուցած դարմանները կը մերժէ, մարտիրոսութիւն համարելով մեռանել այնպէս. ուստի և իբր երկու ժամ գունդ գունդ արիւն դուրս հոսելով կը մեռնի.—«Յորժամ ըմպէր զբաժակն զայն՝ իմացեալ անդէն... յարուցեալ գնաց ի վանս իւր. և զհետ գնացին նորա ի տաճարէն արքունի ամենայն մեծամեծքն նախարարքն Հայոց, և Մուշեղ սպարապետն և Հայր մարդպետն։ Եւ իբրև եմուտ ի վանս իւր՝ վերացուցեալ զպարեգօտն իւր ցուցանէր ի վերայ սրտին կապուտակեալ քան զչափ նկանակի միոյ։ Իսկ մեծամեծքն նախարարացն մատուցանէին նմա թիւրակէս և անդեղեայս վասն ապրելոյ. իսկ նա ոչ կամեցեալ զայն ի բաց մերժէր, այլ ասէ. Մեծապէս եղև ինձ բարի, զի եհաս ինձ մեռանել վասն Քրիստոսի։... Յետ այսորիկ սկսաւ զարիւնն գունդ գունդ ի ներքուստ ընդ բերանն արտաքս հոսել իբրև զերկուս ժամս» (Բուզ. Ե. ԻԴ.)։ Այսպէս Բուզանդ կարծելով առնել

զՆերսէս մարտիրոս՝ առնէ զնա անձնասպան, տալով նմա մերժել դարմաններն, որով թերեւս ազատէր զկեանսն՝ եթէ ճշմարիտ էր թունաւորութիւնն։ Թէպէտ ունինք պատճառ մերժելոյ, իբրեւ կեղծեալ, Ներսիսի մահուան պարագաներն, համարելով սակայն ճշմարիտ՝ չէ ամենեւին արտաքոյ հաւանականութեան ասել, թէ սրտին վրայ կապուտակելն եւ արեան գունդագունդ հոսելն ընդ բերանն, եթէ ունին ինչ նշանակութիւն՝ այս է թէ արեան շրջանին կասելն եղաւ Ներսիսի մահը, ուստի եւ այն նշանք էին մանաւանդ կաթուածոյ քան թունաւորելոյ արդիւնք, զոր ագէտ եւ չարամիտ թշնամիք կարծեցին ի թունոյ, եւ զոճիրն ընծայեցին Պապայ իբրեւ թշնամւոյ Ներսիսի։

Ներսէս, որպէս վայել էր՝ թաղուեցաւ մեծ շքով ի Թիլ, իւր հարց գերեզմանատեղին։ Թող քաղաքական եւ զինուորական մեծամեծներն հանդերձ բազմութեամբ զօրաց՝ ինքն իսկ Պապ գնաց ի յուղարկաւորութիւն մեծ հայրապետին, ըստ Բուզանդայ կեղծաւորութեամբ, ծածկելու համար զոճիրն.—«Եւ առեալ զմարմին սրբոյն Ներսէսի զառնն Աստուծոյ պաշտօնեայք եկեղեցւոյն, եւ Փաւստոս եպիսկոպոս եւ պաշտօնէիցն գլխաւոր Տրդատ, եւ Մուշեղ սպարապետն եւ Հայր մարդպետ, եւ ամենայն ազատագունդ բանակն արքունի՝ բարձին յուղանէն ի Խախ գեղջէ ուր գործն կատարեցաւ, տարան ի Թիլն աւան յիւր գեւղն. Հանդերձ սաղմոսիւք եւ օրհնութեամբ, կանթեղիւք վառելովք եւ մեծապաշտամամբք եւ բազում յիշատակօք զսուրբն յուղարկեցին։ Բայց մինչեւ էր ծածկեալ զմարմին սրբոյն՝ ինքն թագաւորն Պապ երթեալ պատեաց եւ թաղեաց ի մարտիրոսական բնակութիւնն. բայց թագաւորն Պապ ի չքմեղս լինելով՝ հլուելոյն առնէր, իբրեւ թէ իւր չիցէ գործեալ զայն» (Բուզ. Ե. ԻԴ.)։

Բուզանդ չթողուր Ներսիսի մահուան առանց հրաշից կատարուիլ, եւ այս առթիւ կը մուծանէ Եպիփան եւ Շաղիտա անուն երկու երեւելի անապատաւորաց վարուց եւ գործոց պատմութիւնը չորս առանձին գլուխներով զորս մէջ բերած ենք այլուր. Հոս պատմենք միայն տեսիլը, որ եղաւ սոցա ի մահուան Ներսիսի։ Սոքա ի տուընջեան մինչ կը նստէին իւրաքանչիւր իւր լեռը՝ կը տեսնեն զՆերսէս թռուցեալ ամպովք ի ձեռն հրեշտակաց։ Շաղիտա որ էր քաջ հոգետես՝ կը հասկնայ իսկոյն, թէ Ներսէս մեռած էր եւ թէ հոգի նորա էր որ կը վերանար յերկինս. իսկ Եպիփան համարեցաւ զնա յափշտակեալ մարմնով։ Երկոքին եւ ելլելով իրենց լեռներէն՝ կու գան յԵկեղեաց գաւառ եւ կ'իմանան, թէ մեռած էր սուրբն, եւ կը պատմեն իրենց տեսիլը ժողովրդեան.—«Արք երկու-

կրօնաւորք անապատաւորք մինչդեռ նստէին ի լերինն, անուն միում Շաղիտա, և էր սա ազգաւ ասորի և նստէր յԱռեւծ լերինն, և միումն անուն Եպիփան, և էր սա ազգաւ յոյն և նստէր ի մեծի լերինն ի տեղի դիցն զոր կոչեն Աթոռ Անահտայ, և էին սոքա երկոքին լեալ աշակերտք սրբոյն Դանիելի մեծի. և մինչդեռ յիւրաքանչիւր լերին նստէին սոքա, ի ժամու յորում մեռաւ սուրբն Ներսէս՝ տեսանէին աչօք բացօք ի տուընջեան ժամու զայրն Աստուծոյ զՆերսէս իբրև յամպս յափշտակեալ, զի հրեշտակք տանէին զնա ի վեր, և գունդք գունդք գային նմա առաջի։ Իբրև տեսին զայս տեսիլ անապատաւորքն՝ զարմացան ընդ գործն։ Բայց Շաղիտային որ էր յԱռեւծ լերինն, քանզի էր հմուտ այր՝ գիտաց եթէ հանգուցեալ է սուրբն Ներսէս, և այն՝ ոգիք նորա երևին նմա. բայց Եպիփան եդ ի մտի յիւրում, թէ մարմնով իցէ յափշտակեալ։ Ապա յարեան յիւրաքանչիւր լեռնէ, ընթացեալք փութով մինչև յԵկեղեաց գաւառ, եկին քննեցին տեսին, զի կատարեալ էր սուրբ հայրապետն Ներսէս. և եկին մինչև ի Թիլոյ գեւղն և տեսին զանզին յորում եդեալ էր զնա, և գիտացեալք միմեանց արքն հաւատարիմք՝ պատմէին միմեանց զոր ինչ տեսինն՝ առաջի ժողովրդոցն (Բուզ. Ե. ԻԵ.)։

10. Տեսնունք այժմ, թէ ինչ էին գործք Պապայ, որոց վասն կը բամբասէ զնա Բուզանդ, իբրև խանգարիչ կարգաց և ուղղութեանց Ներսիսի։ Ըստ Բուզանդայ՝ Ներսէս շինած էր այրեաց, որբոց, կուսանաց համար յատուկ տեղեր ամէն գաւառի մէջ, և առատ ռոճիկ կարգած էր այնպիսեաց համար իւրաքանչիւր գաւառի ժողովուրդէն։ Պապ հրաման կու տայ աւերել այս հաստատութիւններն, և որ մեծի անզգամութեան էր, բայց է անհնարին զրպարտութիւն՝ կու տայ պղծել զկուսանսն։ Ի կենդանութեան Ներսիսի մուրացիկ ամենևին չէր տեսնուէր Հայոց բոլոր սահմաններուն մէջ, այլ ժողովուրդը կը տանէր զպխտոյս նոցա յատս նոցա, և աղքատք լցեալ էին ամէն բարեօք։ Պապ պատժով արգելեց տալ տուրս աղքատաց։ Յաւուրս Ներսիսի ոչ ոք կ'իշխէր թողուլ զիւր պսակեալ ամուսին և առնուլ ուրիշ կին. յետ մահուն Ներսիսի Պապ հրաման կու տայ թողուլ զկանայս, այնպէս որ կըրնար մարդ տասը կին փոխել։ Նոյնպէս յետ մահուն Ներսիսի շատ գաւառներ և շատ մարդիկ համարձակութիւն առին թագաւորէն դառնալ ի կռապաշտութիւն, և կանգնեցան պատկերք կռոց շատ տեղեր։ Տրդատայ և Լուսաւորչին ժամանակէն եկեղեցիք ունէին եօթն եօթն հող կամ կալուած գետնոյ, յորոց կը կերակրէին ոչ միայն կղերն, այլ և որդիք և մերձաւորք նոցա։ Պապ յետ մա-

հուն Ներսիսի այն հողերուն հինգն առաւ յարքունիս, թողլով իւրաքանչիւր եկեղեցւոյ երկու հող միայն և մէն մի երէց և սարկաւագ, մնացեալներն առաւ ի ծառայութիւն տէրութեան։ Դարձեալ՝ ի նախնեաց անտի սահմանուած էր երկրին պտուղներէն տալ տասանորդ եկեղեցեաց. Պապ կ'արգելու նաև զայս սովորութիւն։ Ներսէս արգելած էր խոտի՝ հեթանոսական օրինօք կոծ դնել ի վերայ մեռելոց. յետ մահուան նորա առ Պապաւ նորոգուեցաւ արարողութիւնն այն հին։ Ահա բանք Բուզանդայ. «Թագաւորն Հայոց Պապ թէպէտ և սպան զհայրապետն աշխարհին Հայոց զՆերսէս՝ սակայն ոչ յագեցաւ մահուամբ նորա, այլ ջանայր թէ զինչ միանգամ կարգք իցեն ուղղութեան ի Ներսիսէ եդեալ՝ եղծեսցէ և խանգարեսցէ։ Եւ սկսաւ հրաման տալ յայտնապէս յաշխարհին՝ աւերել զայրենոցն և զորբանոցն և զկուսաստանս, զորս Ներսիսի էր շինեալ յամենայն գաւառս, զի որ միանգամ կուսանք և հաւատաւորք իցեն՝ անդր ժողովեսցին ի պահս և յաղօթս, և կերակրել յաշխարհէ և յիւրաքանչիւր ընտանեաց, յամենայն կողմանց ռոճիկս և զարմանս կարգեալ. և զկուսանսն հաւատաւորս տայր թագաւորն Պապ ի խառնակութիւն պղծութեան։ Յաման Ներսիսի զաղքատս բնաւ ամենեւին ի մոյր ոչ տեսանէր ոք ընդ ամենայն սահմանս Հայոց, այլ անդէն ի հանգստեան նոցին, այսինքն յօրկանոցն ամենայն մարդիկ տանէին զամենայն պիտոյս նոցա. անդէն իսկ անկարօտ յամենայն ումեքէ լցեալ էին։ Իսկ յետ մահուն քահանայապետին թէ առնէր ոք հանգիստ աղքատաց՝ մեծ պատիժս կրէր ի թագաւորէն։ Յաւուրսն Ներսիսի ոչ ոք իշխէր հանել կամ թողուլ զկին իւր ամուսին, զոր միանգամ քողով կամ պսակաւ հարսանեացն օրհնութեամբ առեալ էր, և ոչ այլ առնել միւս անգամ համարձակէր. իսկ յետ մահուան նորա ամենայն մարդիկ առին հրաման ի թագաւորէն թողուլ զկանայս ամուսինս իւրեանց. էր զի մի այր տասն կին փոխէր։ Յետ նորա ելցին յաշխարհէս բազում գաւառք Հայոց և բազում մարդիկ ի հնութիւն դիւապաշտութեան դարձան, և ընդ բազում տեղիս Հայոց կուռս կանգնեցին ի համարձակութենէ թագաւորին Պապայ. զի ոչ գոյր խնդրիմանիչ և ոչ ոք էր այն յորմէ խիթային. զինչ և կամէին գործել՝ համարձակութեամբ գործէին. բազումք պատկերս կանգնեալ երկիր պագանէին։ Եւ հատ ես յարքունիս Պապ զհող եկեղեցւոյն որ տուեալ էր թագաւորին Տրդատայ առ մեծաւն Գրիգորիւ քահանայապետիւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյ ընդ ամենայն երկրին Հայոց։ Յեւթն հողոյն զհինգն հատանէր յարքունիս և միայն թողոյր երկուս հողս, և երկուս առ գեղ մի, երէց և սարկաւագ, և

գայլն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան—զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագաց։ Եւ զկարգս պտղոյն և տասանորդացն որ ի նախնեացն կարգեալ սովորութիւն էր տալ յեկեղեցիս՝ հանէր Պապ հրաման ընդ աշխարհ, զի մի ոք տացէ։ Եթէ յանկարծ մեռանէր ոք՝ ոչ ոք իշխէր անյուսութեամբ լալ զմեռեալըն և ոչ կոծ ոք դնէր կամ աշխարանս, և ոչ ձայնս ոք արկանէր ի վերայ մեռելոյն յաւուրսն Ներսիսի, այլ լոկ արտասուօք և բաւ արժանի սաղմոսիւք և օրհնութեամբ, կանթեղօք և մոմեղինօք լուցելովք զմեռեալսն յուղարկէին։ Ապա յետ մահուանն Ներսիսի զմեռեալսն լային փողովք և փանդռօք և վնօք զկոծսն պարուցն կաքաւելով, զոլգսն հատեալս, զերեսս պատառեալս, արք և կանայք ճիւաղութեամբ պարուք դէմ ընդ դէմ հարկանելով զմեռեալսն յուղարկէին» (Բուզ. Ե. ԼԱ.)։ Թող չափազանցութիւնը որ կայ այս նկարագրին մէջ՝ յայտնի կը տեսնուի, թէ Բուզանդ կը ջանայ փոխել կամ ծեքել Պապայ կարգադրութեանց ոգին, բարեկարգիչ թագաւորին ուղղութիւններն տալով Ներսիսի դէմ անձնական ատելութեան։ Արդարև հասարակաց օգտին ծառայող բարեսիրական և վանական հաստատութիւնք համաձայն են քրիստոնէական ոգւոյն, և բարւոք տէրութիւն մը պարտի նպաստել մանաւանդ այս ոգւոյն քան արգելուլ զայն։ Դարերու փորձը ցուցած է սակայն, թէ այսպիսի հաստատութիւնք, եթէ քան զչափն բազմանան՝ քաջալերելով ծուլութիւնը՝ կը յաւելուն քան կը կարճեն հասարակաց թշուառութիւնը։ Ուստի եթէ այնպիսի հաստատութիւնք բազմացած էին յանչափս առ Պապաւ, բարեսիրութեան կայր եռանդով, ինչպէս կ'երեւի Բուզանդայ նկարագրէն՝ Պապայ կարճելն այն հաստատութիւններն, թերեւս սակաւ ինչ չափազանց նախանձու՝ չէր հակառակ բարեկարգիչ թագաւորի պարտուց և ոչ անհամաձայն արդի լուսաւորեալ սկզբանց։ Եւրոպական ազգաց մէջ բարեսիրական և վանական պէսպէս և անթիւ հաստատութիւններ սկսան և յառաջ տարուեցան մեծ ազատութեամբ եկեղեցւոյ կողմանէ։ Զարմանք չէ որ Հայոց մէջ ևս եկեղեցւոյ կողմանէ սկսէին և տարուէին յառաջ նոյն նման հաստատութիւնք։ Բայց ինչպէս յԵւրոպա անչափ ազատութիւնն յայսմ բերաւ զեղծումն՝ նոյն ազատութիւն կրնար բերել միևնոյն զեղծումն նաև ի Հայս, և բերաւ իսկ։ Ի սկզբանէ անտի դարձին Հայոց ի քրիստոնէութիւն առ Տրդատաւ՝ եկեղեցին սկսաւ վայելել մեծ ազատութիւն։ Նորընծայ թագաւորին եռանդը մեծցուց կղերը և՛ պատուով և՛ հարստութեամբ։ Կաթողիկոսութիւնն որ ի սկզբան ժառանգական էր ի տան Լուսաւորչին՝ ունէր ազդեցութիւն մեծ, գրեթէ հաւասար թագա-

ւորին։ Այս Խոսրովու յաջորդաւ Տրդատայ այնչափ էր այս ազդե-
ցութիւն, որ արքունի հրամանք հաւասար կ'երթային յանուն կա-
թողիկոսին և թագաւորին (Բուզ. Գ. Դ.)։ Վրթանէս գահակից էր
մանաւանդ թագաւորին քան խորհրդակից և խրատտու։ Գալով եկե-
ղեցական ընչից՝ կալուածք եկեղեցւոյ էին այնչափ, որ թող եկե-
ղեցւոյ նուիրուած գեղեր և ագարակներ որ անթիւ էին՝ Լուսա-
ւորչին տունը միայն, իբրև ժառանգական քահանայապետութիւն՝
ունէր հնգետասան գաւառ իբրև առանձին ստացուած, «ձեռական
իշխանութիւն» (Բուզ. Գ. ԺԳ.)։ Այս Ներսէսի, առ որով եկեղեցա-
կան ճոխութիւնն հասած էր յիւր վերջին ծագ՝ երկրին ազնուա-
գոյն մասն էր եկեղեցւոյ, մինչև Արշակայ մարդպետին սպառնալ՝
տալ գրաւել յարքունիս Աշտիշատայ գեղեցիկ տեղերն իբրև արդարև
թագաւորավայել (Բուզ. Անդ)։ Բնական էր որ եկեղեցւոյ այս դիր-
քըն ձգէր տէրութեան ուշադրութիւնը։ Արդէն առ Տիրանաւ կը
տեսնենք կաթողիկոսին և թագաւորին մէջ անհամաձայնութիւն,
որ տակաւ կը սաստկանայ առ Արշակաւ, մինչև խզել բարեկամու-
թեան վերջին թելն ի մէջ Ներսէսի և թագաւորին։ Ներսէս կը
հեռանայ բանակէն մինչև ի մահն Արշակայ։ Զարմանք չէ որ առ
Պապաւ պահանջմունք Ներսէսի բերին նոյն հակառակութիւնը։
Պապ թշնամի է Ներսէսի, Ներսէս դժգոհ ի Պապայ։ Այս վիճակն
էր արդեօք արդիւնք անձնական հակառակութեան, ինչպէս կու-
տայ կարծել Բուզանդ, թէ ջանից թագաւորին՝ սեղմելու եկեղեցւոյն
անչափ ազատութիւնը։ Ինչպէս ամէն հաստատութեան՝ նոյնպէս
եկեղեցականին անչափ ազատութիւնը տարած է միշտ գեղծման։ Ուս-
տի կղերական ազատութեան սեղմումն աշխարհական իշխանութեան
կողմանէ շատ անգամ չէ անիրաւ՝ ինչպէս կը բամբասուի։ Անցեալ
դարուն վերջին կիսէն հետէ քաղաքակիրթ տէրութեանց մէջ տես-
նուած սեղմումներու գիտենք թէ այնօրինակ գեղծմունք եղան
պատճառ։ ԶԱւստրիա միայն, որ քան զայլ տէրութիւնս Եւրոպայ
պահպանողական է՝ յիշել միայն բաւական է։ Յովսէփ Բ. կայսեր
(1765—1790) անուանեալ նորաձևութիւնք որ այնչափ կարևոր
էին՝ եղան ոչ սակաւ գժտութեան առիթ Հռոմայ հետ, մինչև
Պիոս Զ.-ի երթալ անձամբ առ կայսր։ Հաւանական է թէ նորա-
ձևութիւնն առնոյր յեղափոխութեան ձև՝ եթէ պարագայք ժամա-
նակին չտային իմաստուն պապին՝ փոխել սպառնացող կերպարան-
քըն ի կերպարանս աղաչաւորի։ Յովսէփ անթիւ վանական հաստա-
տութիւններէն սոսկ տեսականները ջնջեց, գործնականներն տասա-
նորդեց, քաղաքաց եկեղեցիներուն հարիւրաւորն իջաւ տասնաւորի.
ընդհակառակն ամէն գիւղ կամ չէն ունեցաւ եկեղեցի ժողովրդա-

պետով մը զօրս առաջ չունէր․ դատարկապորտներու յոյսը վերցաւ բարեմիտ ժողովրդեան բարեխրութեանը, կեղծաւորներու մուտը փակուեցաւ ի վանորայս, եկեղեցւոյ պաշտօնէից թիւը նուազեցաւ առանց պակսելու։ Ի՞նչ տարբերութիւն ունի Յովսէփայ Բ-ի ուղղութիւններէն Պապայ հատանելն եկեղեցւոյ հողերուն հինգ եօթներորդը, բառնալն ի սպառ կամ ըստ մասին աղքատանոցներ, հիւանդանոցներ, այրենոցներ, կուսանոցներ, որ եղած էին ծոյլերու և տէրութեան ծառայութենէ փախչողներու ապաստանարան։ Այլ թէ Պապ ի հեճուկս Ներսեսի «սկսաւ հրաման տալ» ոչ միայն «աւերել զայրենոցս և զօրբանոցս և զկուսաստանս», այլ և «զկուսանսն տալ ի խառնակութիւն», թէ «հրաման տայր ամենայն աշխարհի իշխանութեան իւրոյ», զի «աղքատքն ի մոյր ելցեն», և «ոք ինչ մի իշխեսցէ տանել նոցա», և թէ «եթէ առնէր ոք հանգիստ աղքատաց՝ մեծ պատիժս կրէր ի թագաւորէն», թէ «ամենայն մարդ առին հրաման ի թագաւորէն թողուլ զկանայս ամուսինս իւրեանց», թէ «բազում գաւառք և բազում մարդիկ ի հնութիւն կռապաշտութեան դարձան, և ընդ բազում տեղիս Հայոց կուռս կանգնեցին», և զորս սոյնն նման են՝ կը մերժենք իբրև լոկ զրպարտութիւն, չարախօսութենէ առեղծուած։ Զայս պիտի չհամարձակէինք թերևս ասել՝ եթէ չունենայինք զանաչառն Ամմիանոս ժամանակակից, որ այնպէս մանր և ճշգիւ կու տայ մեզ Պապայ դէմ եղած զրպարտութեանց բուն պատճառն, ինչպէս նաև զօրինակ եղերելի մահուան նորա։

Պապայ, իբրև բարեկարգչի, միւս եւս մեծ գործն այն է, որ կաթողիկոսաց ի Կեսարիոյ ձեռնադրութիւն առնլոյ հին պայմանը վերցուց, զՅուսիկ ումն եպիսկոպոս ի զաւակէն Աղբիանոսի դնելով կաթողիկոս զկնի Ներսեսի «առանց հրամանի» եպիսկոպոսապետին Կեսարու․ այսպէս հիմն դրաւ Հայաստանեայց եկեղեցւոյ անկախութեան, որ այնչափ գժտութեան առիթ եղաւ երկու մեծ վիճակաց մէջ, ինչպէս պատմուած է այլուր (Բուզ. Ե. Իթ.)։

Ըստ Բուզանդայ՝ թագաւորն Պապ յանկարծ, որպէս թէ յայլոց խելս լեալ՝ խռովեցաւ Յունաց թագաւորէն և յարեցաւ ի Պարսիկս, պատգամաւորներ արձակելով լի թշնամանօք առ կայսր և պահանջելով իբրև ի հնուց Հայոց վերաբերեալ՝ տասն քաղաք Կապադովկիոյ կողմը հանդերձ Կեսարեաւ և Ուռհայիւ, առանց անսալոյ Մուշեղի և այլոց նախարարաց, որ կը խրատէին զնա չբաժանուիլ ի Յունաց։ Ըստ Բուզանդայ՝ Պապայ այս անմիտ յանդգնութիւնն եղաւ պատճառ կորստեան նորա․ քանզի կայսրը հրաման ղրկեց իւր զօրավարներուն, որ դաւով հրաւիրելով զՊապ

ի խնջոյս՝ սպանին։ Այս խժական գործը կը նկարագրէ Բուզանդ
մանր համաձայն Ամմիանու.—«Եւ շրջեցոյց զմիտս իւր թագաւորն
Պապ և խոտորեաց զսիրտ իւր ի թագաւորէն Յունաց, և կամե-
ցաւ խառնել զսէր իւր և առնել միաբանութիւն ընդ թագաւորին
Պարսից, և սկսաւ թիկունս իւր առնել զարքայն Պարսից, և արձա-
կել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեան։ Եւ առաքէր
հրեշտակս առ թագաւորն Յունաց, եթէ Կեսարեաւ հետ և տասն
քաղաք մեր լեալ է, արդ ի բաց տուր. և զՈւռհա քաղաք շինեալ է
նախնեացն մերոց. արդ եթէ ոչ կամիս խանգար ինչ առնել՝ տուր
ի բաց, ապա թէ ոչ կռուիմք մեծաւ պատերազմաւ։ Այլ Մուշեղ
և ամենայն իշխանքն Հայոց շատ եդին ի մտի արքային, զի մի
քակեսցէ զուխտ յերկրէն թագաւորութենէն Յունաց, և ոչ ան-
սաց նոցա, և յայտնեաց զթշնամութիւն իւր զոր ունէր ընդ թա-
գաւորին Յունաց։ Այլ իշխանքն Յունաց և զօրքն նոցին տա-
կաւին էին յերկրին Հայոց և անուն իշխանացն՝ միումն Տերենտ էր,
միւսումն Ադէ։ Եւ յղեաց դեսպան մի գաղտուկ թագաւորն Յու-
նաց առ իշխանսն զօրացն իւրոց որ էին յերկրին Հայոց, և հրա-
ման տայր սպանանել զթագաւորն Հայոց զՊապ։ Եւ եղև իբ-
րև ընկալան զայս հրաման ի թագաւորէն Յունաց իշխանքն իւր՝
սպասէին պահու ի դէպ սպանանել զթագաւորն Հայոց զՊապ։
Եւ եղև ի դիպան ժամանակի իբրև գիտացին Տերենտն և Ա-
դէն զօրավարքն զօրացն Յունաց, թէ միայն է թագաւորն Հայ-
ոց Պապ, և ամենայն մեծամեծքն և զօրքն Հայոց չէին անդ,
և էր թագաւորն Հայոց Պապ բանակեալ ի դաշտին ի Բագրա-
ւանդ գաւառի ի Խու անուն տեղւոջ, և բանակ զօրացն Յու-
նաց բանակեալ էին մօտ առ բանակին Հայոց արքային։ Ապա զօ-
րավարքն Յունաց հաց մեծապէս գործեալ՝ յընթրիս հրաւիրեալ կո-
չեցին զմեծ թագաւորն Հայոց զՊապ մեծապէս ըստ արժանաւո-
րութեան նորա, որպէս օրէն էր զայր թագաւոր ի հաց մեծ կոչել.
և առնէին կազմութիւն պատրաստութեան։ Եւ եկեալ թագաւորն
Պապ յընթրիս՝ մտեալ բազմեցաւ յուտել և յըմպել։ Եւ իբրև մտա-
նէր արքայն ի խորանն Տերենտի զօրավարին Յունաց՝ լեգէոն սպա-
րակիր հետևակն, վահան ի ձեռն, սակուր զգօտւոյ, շուրջ ի ներքոյ
զորմովք խորանին պատեալ պնակէին. սոյնպէս և արտաքոյ կազ-
մէին ի ներքոյ կուռ վառեալք, և ի վերոյ հանդերձք զգեցեալք
պատրաստէին։ Իսկ թագաւորն Պապ համարէր ի միտս իւր, թէ ի
պատիւ ինչ նորա զայս առնիցեն։ Եւ մինչդեռ յընթրիսն ուտէր՝ սա-
կրաւոր զօրքն ի թիկանց կուսէ նորա կարգեալք պնակեալք կային
շուրջ զնովաւ յամենայն կուսէ։ Իբրև ընդ գինիս մտին, որպէս

զառաջին ուրախութեանցն նուագն մատուցին արքային Պապայ, և առհասարակ թմբկահարք և սրնգահարք, քնարահարք և փողհարք խրախճանէին արուեստօք պէսպէս ձայնիւք բարբառեցան։ Եւ փոհանաւոր լեգէոնին հրաման ետուն, և մինչդեռ թագաւորն Պապ զուրախութեան գինին ունէր ի մատունս իւր, և նայէր ընդ պէսպէս ամբոխ գուսանացն, ահեակ ձեռամբն յարմուկն յոր յեցեալ բազմեալ էր՝ ունէր տաշտ ոսկի ի մատունս իւր, իսկ աջ ձեռնն եդեալ էր ի դաստապան նրանին զոր կապեալն էր յաջու ազդերն իւրում, և մինչդեռ բերանն ի բաժակին էր յըմպելն, և աչօքն յառաջ կոյս պշուցեալ հայէր ընդ պէսպէս ամբոխս գուսանացն՝ հրաման լինէր ակնարկելով զօրացն Յունաց։ Եւ լեգէոն սակրաւորքըն երկու ի թիկանց կուսէ կային ի սպասու ոսկիկմբէ փոհանօքն. յանկարծօրէն կեց ի վեր առեալ զսակուրսն՝ զարկանէին թագաւորին Պապայ. մին կշիռ զուլն հարկանէր սակրաւն, և միւսն ևս սակրաւորն զաջ թաթն ձեռինն որ կայր ի վերայ դաստապանի նրանին՝ հարկանէր կտրէր և ի բաց ընկենոյր։ Անդէն ի բերանս տապալէր թագաւորն Պապ, և գինին տաշտին և արիւնն պարանոցին նովաւ հանդերձ ի վերայ բաժակակալ սկտեղն անկանէր առ հասարակ, և անդէն սատակէր թագաւորն Պապ։ Ընդ չփոթելոյ տաճարին խռովութեան Գնէլ տէր գաւառին Անձևացեաց յոտն կացեալ յիւրմէ բազմականէն՝ հանեալ զիւր սուսերն հարկանէր զմի ի լեգէոնաց անտի սպանանէր, յայնցանէ որ հարին զթագաւորն։ Ապա Տերենտ զօրավարն Յունաց զիւր սուսերն հանեալ ածէր, տարակաց ի գըլխոյն Գնելոյ զսկաւառակն գլխոյն ի վերայ աչացն ի բաց ընկենոյր։ Եւ այլ ինչ ոք ոչ կարաց յանդգնել առնել ինչ ընդ նոսա և ոչինչ» (Բուզ. Ե. ԼԲ.)։

11. Դիտմամբ թէ առանց դիտման՝ չենք գիտեր, Բուզանդ՝ որ այսպէս մանր կը պատմէ այս սոսկալի դաւաճանութիւնը՝ չըտար ամենևին Պապայ ոչ խոտորելուն ի Յունաց և ոչ սպանուելուն բուն պատճառը։ Հոս հարկ է դիմել առ Ամմիանոս, որ Պապայ պատմութեան այս մասէն կը բռնայ փարագոյրը, համակ ջատագով կենալով մանուկ թագաւորին։ Չէ մարթ ասել ստուգիւ, թէ Պապ արդարև ունեցաւ այն ամբարտաւան խորհուրդը — պահանջել ի կայսրէն քաղաքներ որ Հայոց կը վերաբերէին ի հնումն, և միտեցաւ ի Շապուհ. սակայն միայն գիտեմք, թէ Ամմիանոս զՊապ գիտէ հաւատարիմ առ Հռոմայեցիս մինչև ի մահ իւր, և արդէն մահուան պարագան զոր կ'ընդունի և Բուզանդ՝ կըցուցնէ թէ Պապ էր Հռոմայեցւոց հետ և վստահ ի նոսա։ Շատ հաւանական է թէ Բուզանդայ այս պատմութիւնն ևս, այն է թողուլն Պապայ

զՑոյնս և յարել ի Շապուհ՝ է այն զրպարտութիւններէն մին, զորս Բուզանդ, կոյր ջատագով բարեկարգութեանց Ներսիսի՝ կը դիզէ ի գլուխ դժբախտ թագաւորին։

12. Եթէ ունեցաւ ևս Պապ այսպիսի ինչ խորհուրդ՝ անտարակոյս պատճառն էր դաւաճանութիւնն նիւթեալ նմա ի Վաղեսէ. բայց զայս ևս չընդունիր Ամմիանոս, ինչպէս պիտի տեսնենք։ Լսենք ուրեմն Ամմիանու։ Պապայ պատմութեան այս մասն զոր կու տայ մեզ Ամմիանոս՝ չիք առ Բուզանդայ. յայտնի է սակայն, թէ պատմութիւն հռոմայեցի վիպագրին չէ և չկարէ լինել գիւտ։ Մինչ Պապ պարապ առնլով պատերազմներէն կը կռուէր իւր երկրին զեղծմանց դէմ՝ ըստ Ամմիանու հակառակորդք նորա, յորոց մի էր Տերենտ չարամիտ չարախորհուրդ՝ կը գրգռէին զՎաղէս կասկածոտ, անգութ և դիւրահաւան ընդդէմ թագաւորին, մինչև կոչել զնա կայսեր, զայլ ոք փոխանակ նորա ղրկելու մտօք, ըստ խորհրդոյ Տերենտի։ Պապ որ միամտութեամբ կ՚երթայ առ կայսր՝ տեսնելով զանձն խաբուած՝ երեքհարիւր ձիաւորօք խոյս կու տայ ի Տարսոնէ ուր էր արգելուած, և մեծ վտանգաւ և դժուարութեամբ կը հասնի ի Հայս ի մեծ ուրախութիւն իւր հպատակաց, ի դերև հանելով իւր հետամուտներուն յոյսը։ Պապայ խուսափելն այսպէս իւր հետամուտներէն, որ կանխելով բռնած էին ամէն անցք՝ ընծայուեցաւ կախարդութեան, որպէս թէ Պապ անհնարին հմուտ կիրկէական դիւթութեան՝ եղած էր չիք յաչաց հալածողաց և թէ նա այս դիւական արուեստիւ կարող էր վնասել նմին իսկ կայսեր։ Չէր ամենևին դժուարին հաւատարմացունել զայս կայսեր, որ ըստ վկայութեան Ամմիանու ոչ հաւատացող միայն, այլ և հալածիչ էր կախարդութեան։ Կախարդութեան անմիտ կասկածը միայն բաւական էր մատնել ի տանջանս և ի մահ արանց և կանանց բազմութիւն հրամանաւ սնապաշտ կայսեր (Ամմ. ԻԲ. 1, ԻԹ. 2)։

13. Մարկեղիանոս ումն յարևմուտս դաւով սպանած էր նոյն տարին (374) ի խնջոյս Կուադ կոչուած գերմանական ցեղին թագաւորը Գաբինիոս։ Այս նենգաւոր գործը պատճառ եղած էր մեծ յուզմանց յարևմուտս։ Զայս կ՚ակնարկէ Ամմիանոս յաջորդ հատուածին մէջ, որ է մին ի փառաւոր յիշատակութեանց հռոմէական պատմութեան զՀայոց. «Մինչ այս խռովութիւնք յուզէին յԵւրոպա ի նենգութենէն Մարկեղինեայ և վասն սպանման թագաւորին Կուադաց՝ յարևելս յանձին Պապայ արքային Հայոց գործէր միւս ևս նմին նման դաւ։ Աւասիկ պատճառ ամբարշտութեան խորհրդոյն որում եղաք հասու։ Սաէպ, և բազում անգամ յանիրաւի, լինէին ամբաստան զմանուկ թագաւորէն առ Վաղէս արք որ ի հասարա-

կաց վնասուց խնդրեն իւրեանց շահ: Ի սոցա համարի էր Տերենտիոս դուքս, որ թէպէտ և շրջէր միշտ զաչս ի խոնարհ և երկիւղած՝ ոչ դադարէր ցորչափ կենդանի էր, գրգռել խռովութիւնս և հերձուածս: Գաղտ ի բանի լեալ սորա ընդ ոմանս ի Հայոց որ վասըն գործոց իւրեանց չարաց յիրաւի ունէին պատճառս երկնչելոյ ի թագաւորէն՝ տայր նոցա ստէպ առնել նամականի առ կայսր: Յաճախ յուշ առնէին կայսեր զսպանումն Կիւղակայ և Արտաւանայ և ապարտէին զմանուկ թագաւորն իբրև յամբարտաւանութիւն հատեալ և մէտ ի հարստահարել, մինչև ետուն յղել պատուէր հրամանի առ Պապ՝ երթալ ի Տարսոն Կիլիկեցւոց, իբր այն թէ ունիցի կայսր խօսել ընդ նմա գիրաց կարևորաց: Անդ կայր Պապ թագաւորաբար, այլ իբրև ի դիպահօջ. ոչ եգիտ մուտ առ կայսր՝ և ոչ հանէր ոք նմա ի վեր զպատճառն վասն որոյ կոչեցաւն: Ապա ազդ լինէր նմա, եթէ Տերենտոն ասէր ի թուղթսն առ կայսրն, եթէ աղերս Հռոմայեցւոցն ընդ Հայոց պահանջէր իմն փութալ ձգել ի Հայս այլ թագաւոր, զուցէ, ասէր, առ ատելութեանն ընդ Պապ և յերկիւղէն թէ դառնայցէ նա յետս՝ ազգն այն բարեկամ Հռոմոց տացէ ձեռս յարքայն Պարսից, որ այրէր խանձէր յինքն կորզել զերկիրն բռնութեամբ կամ սպառնալեօք և կամ ողոքով: Զայս լուեալ Պապայ՝ ի միտ առնոյր, եթէ դաւ էր նմա, և թէ ոչ այլով իւիք գոյր նմա հնար գտանել փըրկութեան ազատ՝ եթէ ոչ փութանակի փախստեամբ: Ապա խորհրդով բարեկամաց ընտրեալ յիւրոց անտի երեքհարիւր հեծեալ սպառազէն, որպէս սովոր էր ի մեծամեծ վտանգս, զոգի ի բռին կալեալ լինէր ձեռներէց՝ ի տարաժամել աւուրն աճապարել անկանել ի ճանապարհ: Այսմ իրազեկ լեալ շահապ քաղաքին ի ձեռըն ոստիկանի պահապանացն՝ պնդէր զկնի, և հասեալ առ նա ի միում յարուարձանացն՝ աղաչէր դառնալ յետս, այլ ոչինչ վճարեալ, նա մանաւանդ զահի ի սպառնալեաց թագաւորին՝ լաւ համարէր խոյս տալ: Հարկ լինէր այնուհետև արձակել լեգէոն մի զկնի փախստէիցն, որոց տեսեալ զգունդն եկեալ հասեալ՝ լինէին դիմակալ, իբրև զկայծակունս տեղացեալ զնետս յոգս կամաւ, որպէս թէ վրիպելով իմն, և այնպէս շտապ տագնապի ի վերայ գնդին հասուցանէին, մինչև զահի հարեալ և՛ զօրավարին և զօրուն՝ ի քաղաքանդր անկանէին, ճեպելով առաւել ի փախստեանն քան ի գալստեանն: Ապա զերծեալք յահէ անտի հալածելոյ՝ թագաւորն և որ ընդ նմայն էին երկուս տիւս և երկուս գիշերս խաղացեալ մեծաւ տագնապաւ հասանէին յափունս անդր Եփրատայ, և զի չէին տակ ի լիւղ անցանել ընդ յորձանսն, և ոչ նաւք գոյին՝ թագաւորն և բո-

վանդակ գունդն ահիւ պաշարեալ առ վտանգին մտանէին ի հնար հայթայթանաց: Առեալ ըստ բաւականին գահաւորակս զորս գտին ի շէնսն՝ կապեցին մէն մի ընդ երկուս տիկս զոր դիւրին էր գըտանել բազմութեամբ ի գինաւէտ երկրին: Արք աւագք ի զօրուէն և թագաւորն գլխովին նստեալ ի գահաւորակսն, ձգելով զերիվարսն զկնի իւրեանց և հարեալ զչորձանսն՝ խառնակի գային հասանէին յայնկոյս գետոյն մեծաւ դժուարութեամբ: Իսկ մնացեալ զօրն, հեծեալ իւրաքանչիւր յերիվար իւր, ի լող անցանէին: Մարտ եդեալ ընդ ալիս, և բազում անգամ մերձ լեալ ըմբռնել, յետոյ ուրեմն թացեալք և ոգեսպառ՝ ունէին զցամաքն, ուր յետ ոգի առնլոյ սակաւիկ մի՝ պնդագոյնս քան զառաջինն յառաջ մատուցանէին զճանապարհն: Խռովեցաւ կայսրն ընդ լուր փախըստեանն Պապայ, քանզի համարէր եթէ ստուգիւ յետս կացցէ այրն. իսկ և իսկ տուեալ աղեղնաւորս հազար թեթեւս Դանիէլի կոմսի և Բարզիմերայ վերակացուի ասպարակրաց՝ արձակէր զնոսա ստիպաւ ածել զՊապ ձերբակալ առ ինքն: Քաջ տեղեակ էին արքն երկրին, և մինչ Պապ շուրջ եկեալ յամէր ի ճանապարհին վասն վայրացն անգիտութեան՝ սոքա անցեալ ընդ կիրճ մի յառաջեցին քան զնա ընդ կարճոյ ճանապարհ, և զօրահատոյց լեալ կալան զգլուխս երկուց ճանապարհաց, որ իբր երեք հազար հրասախաւ հեռի էին ի միմեանց, և կային պատրաստք ունել զՊապ յանցանել նորա ընդ մին կամ ընդ միւսն, զի ոչ գոյր այլ ուղի: Ըստ դիպաց իմն վրիպէր յոյս նոցա: Ճանապարհորդ ոմն որ մտանելոց էր յերկիր մեր՝ գտեալ զերկոսին պողոտայսն փակեալս ի դարանակալաց, անտի՝ կալաւ, առ խոյս տալոյ ի զօրացն՝ արահետ մի թաւուտ, և հասանէր առ Պապեանս որ առնուին հանգիստ: Ածեալ սա առ թագաւորն՝ ազդ արար նմա ի ծածուկ զոր տեսեալն էր, և արգելաւ առ նմա անվնաս: Պապ առանց ի վեր հանելոյ ումէք զոր լուաւն՝ արձակէր հեծեալ մի ընդ աջոյ ճանապարհն, հրաման տուեալ նմա պատրաստել վանս և պաշար: Իբրև մեկնեցաւ նա՝ ընդ ձախոյ ճանապարհն առաքէր զայլ ոք որ չէր գիտակ հրամանին տալոյ ընկերին: Յետ այսպիսի և այսչափ զգուշութեան, ոչինչ զանգաղէր առաջնորդութեամբ ճանապարհորդին ունել զարահետն, ընդ որ եկեալ էր այրն և ընդ որ գրաստ մի բեռնաբարձ հազիւ մարթէր անցանել: Այսպէս թողոյր զհետամուտսն զկնի իւր, որոց կալեալ զերկոսին արսն արձակեալս իբրև յառաջապահ ի խաբել զնոսա՝ համարէին եթէ ոչ այլ ինչ մնայր նոցա առնել՝ բայց տարածել զբազուկս առ զբռամբ ածելոյ զորսն: Մինչ նոքա կային մնային՝ Պապ հասանէր ողջամբ յերկիր իւր:

Ընկալաւ զնա ժողովուրդն ցնծալից ուրախութեամբ, և Պապ յանդէտս լեալ դաւաճանութեանն նիւթելոյ նմա՝ կայր մնայր ի հաւատսն որ առ մեզ: Դանիէլն և Բարզիմերէս լինէին առաւել նշաւակք ի գարշին խրեանց ձեռնունայն, իբրև վատք ոմանք և ապաժամանք: Զառաջինն յապուշ հարեալ կացին արքն, այլ զօրէն օձից պահէին զթոյնս՝ արկանել ի նա յորոյ ի խաբս անկան:

14. Առ ի թեթևացուցանել զանմիտ պատրանսն և նուազեցուցանել զպարծանս խորագէտ հնարից թագաւորին որ արկ զնոսա յայն՝ տային զիւրահաւան կայսեր անհեդեդ կարծիս զթագաւորէն, որպէս թէ լեալ միջամուխ գաղտնեաց զիւթութեանն Կիրկեայ՝ գիտէր կերպս ի կերպս լինել և արկանել զորս կամէրն՝ ի մտաց և ի զգայութենէ: Առ ի ճողոպրելոյ ի ձեռաց մերոց՝ արկ, ասէին, ի կիր զարուեստ կախարդելոյ զաչս, և առ զանմարմնոյ իրիք բնութիւն: Որպիսի հոգ և երկիւղ, եթէ մնասցէ կենդանի այրն, որ այնպէս ծաղր արար զմեզ: Այս բանք գրգռեցին զկայսրն յանհնարին ատելութիւն. զոր ամենայն խորհէին հնարս նենգութեան, զի բռնութեամբ կամ գաղտնի բարձցեն զկեանս թագաւորին Հայոց: Տրայիանոս որ յայնժամ զօրավար մեր էր ի Հայս և յանձանձիւր իրաց պատերազմի՝ յանձն լինէր զործն ծածուկ նամակաւ: Ազգի ազգի հնարիւք շուրջ պաշարեալ սորա զթագաւորն՝ մերթ ցուցանէր նմա թուղթս բարեկամութեան ի Վաղեսէ, մերթ երթայր լինել նմա սեղանակից: Հուսկ ուրեմն կարգեալ յարդարեալ զամենայն՝ հրաւիրէր զնա յընթրիս հանդիսիւ մեծարանաց և պատուոյ: Պապ ազատ ի կասկածանաց եկն ի կոչունսն առանց վարանելոյ, և տուաւ նմա առաջին բարձն ի բազմել: Սեղան մեծասպաս, բազմախորտիկ կայր առաջի. տաճարն հնչէր ի ձայն երգոց արուեստականաց: Այն ինչ սկսան բազմականքն զուարթանալ ի գինւոյ՝ ել արտաքս կոչնատէրն (Տրայիանոս) իբր յանպահէ պատճառաւ: Յայնժամ մի ոմն ի բարբարոս զօրականէ ասպարաւորացն մտեալ ի տաճարն սուսեր ի ձեռն, խժդժագոյն երեսօք անկանէր ի վերայ մանուկ թագաւորին, զի մի մարթասցէ ելանել ընդ դուռնն, զոր և կանխեալ աղխեալ էր զգուշութեամբ: Պապ կանգնեցաւ ի վերայ գահոյիցն, և հանեալ զդաշոյնն կամէր պաշտպանել անձին ոգւով չափ, այլ հարեալ ի կուրծսն՝ իբրև սպանդ տապալէր ընդ գետին, բազմապատիկ հարուածովք խոցոտեալ: Այսպէս անագորոյն նենգութեամբ ի կոչունս, յորմէ Եւքսինոսն Պոնտոս անգամ ակն ածէ՝ դէմ յանդիման հիւրամեծարն աստուածութեան, փրփրեալ հեղաւ արիւն օտար ի սեղանի առն հռոմայեցւոյ՝ իբրև վերջին բաժակ ի յագուրդ կոչնականաց որ ահաբեկ լեալ

ցրուէին։ Ողբասցէ, եթէ իցէ հնար հրաժարելոյ ի կենաց ողբալ, ընդ այս գործ անիրաւութեան Փաբրիկիոսն Լուսկինոս, որ թէպէտև գիտէր, եթէ ո՛րպիսի աւերածոյ լինելոյ էին պատճառք արշաւանք Պիւռոսի յԻտալիա՝ ազնուական մտօք զԴեմոքարէս, կամ որպէս այլք ասեն, զՆիկիաս տաճարապետ թագաւորին, որ խոստանային մատուցանել նմա դեղ մահու՝ ոչ միայն մերժէր, այլև գաղտ ազդ առնէր նմա զգոյշ լինել յիւրոց մտերմաց. ա՛նչափ նուիրական էր սեղան թշնամւոյն անգամ ի դարուն յայնմիկ ուղղութեան և արդարութեան։ Ոմանք կամին ապաքէն արդարացուցանել զանագորոյն ոճիրն որ եղև առ Պապ օրինակաւ Սերտորիոսի. այլ են սոքա սուտակասպասք, ոգէոք այնմ զոր Դեմոսթենէսն ասէ, պարծանք աշխարհին Յունաց, եթէ Ո՛չ օրինակն և ոչ անպատիժ մնալ ուրուք մարթացան երբէք՝ զոր ինչ հակառակն է իրաւանց՝ իրաւացուցանել» (Ս.մ. Լ. 1)։

Այս՝ ըստ Ամմիանու բարբարոսաց անգամ զզուելի դաւաճանութիւն, զոր այնպէս քստմնելով կը պատմէ հեթանոս պատմիչն՝ Գաթըրճեան, անտարակոյս ի շնորհս ուղղափառութեանն Տերենտի (քանզի չէր նա արիոսեան) կը թուի ջանալ պատ ի պատ բանիւք արդարացուցանել, հաւատալով կեղակարծ աւանդութեան մը զոր ազգային կ'անուանէ։ Ըստ Գաթըրճեանի՝ Տերենտ, բարեպաշտ և ուղղափառ, որ հակառակ էր Պապայ, անտարակոյս սպաննելոյն համար զՆերսէս յանիրաւի և խանգարելուն Ներսիսէ դրուած ամէն կարգ և կանոն՝ չհամարձակելով յայտնել զայսոսիկ արիանոս կայսեր, որ արդէն ցանկացող էր աւերման ուղղափառ եկեղեցեաց՝ կ'իմացունէր նմա միայն ամբարտաւան թագաւորին անգթութիւններն, մինչև ստիպել կայսեր կոչել զնա հնարիւք, այլովքն հանդերձ.—«Մինչդեռ յԱսորիս էր, ասէ, կայսր՝ ստէպ պատգամ առ նա հասանէր ի կողմանց Հայոց աշխարհին վասն Պապայ արքային։ Տերենտիոս դուքս զօրացն ի Հայս, այր բարեպաշտօն և ճշմարտահաւատ, կասկածանօք և հակառակութեամբ իմն էր ընդ արքային Հայոց, թերևս վասն տարապարտ սպանման եպիսկոպոսապետի աշխարհին մեծին Ներսիսի, զոր ինքնին նիւթեաց թագաւորն, և վասն խանգարման կարգացն լաւութեան, և բազումք իսկ ի Հայոց անտի միաբան էին ընդ նմա թերևս վասն նորին պատճառանաց։ Բայց Տերենտեայ չէր մարթ զբուն պատճառս իւրոց մերկանալ առաջի արիանոս կայսեր, որ յառաջ քան զամենայն ընդ կորուստ ուղղափառ եկեղեցեացն կամէր։ Շատ համարէր Տերենտ ցուցանել կայսեր զամբարհաւաճութիւն մանկանն թագաւորի և զանագորունութիւնն առ հնազանդեալսն իւր և զսպանութիւնսն» (Գաթըրճ.

Պատմ. Տիեզ. Բ. 506)։ Ամչնալով սակայն Գաթըրճեան յարգարախօսութենէ ժամանակակից հեթանոս պատմչին, որ պատմութեան ծածկագոյն երեսը մերկանալով կը դնէ մեր առջև՝ կը յաւելու ի վախճանի սա խոստովանութիւնը. «Այսպիսի իմն օրհասիւ վախճանէր թագաւորն մանուկ, որում համակ ջատագով մտեալ արդարացուցանէ Հռոմէական պատմագիրն, հակառակ վկայութեան առհմային պատմութեանն (յաւ ևս լինէր՝ եթէ ասէր պատմութեան Խորենացւոյն), որ նախ ապստամբեալ զնա դնէ ի կայսերէ (հակառակ պատմութեան Ամմիանու, որ հաւատարիմ մնացած կը դնէ զՊապ Հռոմայեցւոց մինչև ի մահ իւր)։ Այլ որպէս ինչ և իրքն իցեն՝ սակայն լի էր անիրաւութեամբ նենգաւոր գործ սպանմանն յընթրիս անդ, որ և յԵւքսինոսն (Հիւրընկալն) Պոնտոս, ասէ պատմագիրն, ակնածելի է։ Այն իսկ մանաւանդ աղէտք են, զի այնպիսի այր որպիսի Տրայիանոս կամս էր՝ լինի գործի հնարաւորութեան անագորոյնն և կասկածոտն կայսեր, և գտանէր նմանող Մարկղիանեայ ումեմն՝ որ յարևմուտս զԳաբինիոս զարքայ Կուադաց անդէն ի նմին ամի ետ սպանանել ի հացի» (Գաթըրճ. Անդ)։

15. Պապայ սպանման արդիւնքն եղաւ ծանր ոչ Հայոց համար միայն, այլ և Հռոմայեցւոց։ Վաղէս, որ առ երկիւղի կորուսանելոյ զՀայաստան չխղճեց տալ խողխողել յընթրիս զերիտասարդ թագաւոր նորա յանիրաւի՝ յետ ոչ աւելի քան երկուց ամաց ստիպեցաւ ելլել կորակոր այն երկրէն, զոր իբր ի չորեքհարիւր ամաց հետէ այնչափ խնամով և կորստեամբք պահած էին նախնիք նորա։ Արդար արեան հեղման ահաւոր փոխարէն։ Շապուհ որ կը ջանար յանկուցանել յինքն զՊապ, մանաւանդ յետ պրծելոյ նորա թակարդէն զոր լարած էր նմա Վաղէս՝ արտմեցաւ յոյժ, լսելով զմահ նորա, և տեսնելով թէ Հռոմայեցւոց ազդեցութիւնը կը զօրանար ի Հայս առ նոր թագաւորաւն փութով մեծ զօրավարին Մուշեղի, որ կ'ամրացունէր զերկիրն զինուորական նոր պատրաստութիւններով, ինչպէս պիտի տեսնենք՝ խորհեցաւ այլ հնար։ Իբրև վերջին դարման բառնալու մշտնջենաւոր գժտութեան և պատերազմներու պատճառն ի մէջ երկուց ազգաց ի պատճառս Հայոց՝ կ'առաջարկէ Վաղեսի ջնջել Հայոց թագաւորութիւնը և բաժնել զերկիրն ի մէջ իւրեանց։ Վաղէս կը մերժէ առաջարկութիւնը՝ բայց պատգամաւորք նորա կ'ընդունին բաժանման յատակագիծը զոր Շապուհ կը դնէ առաջի նոցա, տալով փոքր ինչ մասն կայսեր և զմեծագոյն մասն ինքեան պահելով։ Թէպէտ Վաղէս կը մերժէ վաւերացունել իւր պատգամաւորներուն ինքնակամ գործը և կը պատրաստուի ի պատերազմ՝ բայց Գոթաց ապստամբութեան պա-

ճառաւ յարեւմուտս՝ կ'ստիպուէր ընդունել զպայմանն, եւ կը հանէ զօրքն Հայաստանէ։ Այս երկրորդ անգամն էր, որ Հայք Հռոմայեցիներէն, իրենց հին դաշնակիցներէն դաշամբ կը մատնուէին Սասանեանց։ Թէ ինչ եղաւ այսր հետեւանքն ի Հայս՝ պիտի տեսնենք ի Բուզանդայ. բայց լսենք նախ Ամմիանոս, որ այն մեծ փոփոխութիւնը կը պատմէ մեզ մանր. «Այս անցք (սպանման Պապայ) որ անցին ի Հայս՝ չթուեցան հաճոյ Շապհոյ, որ ջանայր հնարէր յինքըն կորզել զՊապ. ընդ այն մանաւանդ տխրէր, զի իրք նորա ձախող էին, մինչ Հռոմայեցւոցն պսակէին յաջողութեամբ։ Խռովեալ տագնապեալ յանձն իւր՝ առաքէր զԱրշակ ոմն հրեշտակութեամբ առ կայսր, հաւանեցուցանել զնա թողուլ զթագաւորութիւնն Հայոց, որ առիթն լեալ էր անդուլ անդադար կռուոց ի մէջ ազգացն երկոցունց։ Առ այս տայր պատասխանի Վաղէս օրինակ զոյս. Չառնում, ասէ, յանձն բառնալ ինչ ի դաշանցն կռելոց, զուն եղեալ իմովսանն պահել զպայմանսն։ Պատասխանի արդարեւ ազնուական և անյողդողդ։ Մօտ ի կատարած կուս ձմերայնոյն գրէր Շապուհ նամակ ուռուցեալ բանիւք ամբարտաւանութեան։ Ոչ այլով իւիք, ասէ, հնար իցէ խլել յարմատոյ զպատճառս կռուոյն՝ եթէ ոչ վճռով արանց որ գիտակն իցեն դաշինն կռելոյ ընդ Յովիանոս, քանզի գիտէր եթէ բազմաց ի նոցանէ վճարեալ էր ի կենաց։ Իբրեւ ծանրացաւ վէճն՝ կայսր որ չէր յաջողակ ի գտանել հնարս, սակայն դիտէր առնել ազնուագոյն խրատուց՝ լաւ համարեցաւ տալ հրաման Վիկտորի զօրավարի հեծելազօրուն և Ուրբիկեայ կոմսի Միջագետաց երթալ ի Պարսս, տալ զվերջին պատգամ կայսեր, թէ Շապուհ որ պարծէր լինել արդար և իւրովն միայն լինել գոհ՝ ժըլատութեամբ ջանայր կորզել զՀայս, որոց ստէպ խոստումն տուեալ էր՝ թողուլ զնոսա ինքնօրէնս ազիկամխ։ Սպառնայր կայսրն առնուլ զէն, եթէ Շապուհ դրժիցէ ուխտին, կամ յայլ ինչ նմին հակառակ մտաբերիցէ։ Այս պատգամաւորութիւն էր արդարեւ ուղիղ և ըստ օրինաց. այլ դեսպանք Վաղեսի առանց սպասելոյ հրամանի ի կայսերէ, հաճեալ ընդ բաժանումնն՝ յանձն առնուին ունել գոյզըն ինչ մասն յերկրէն Հայոց, որպէս առաջի առնէր նոցա թագաւորն։ Յետ դարձին նոցա գայր հասանէր Սուրէն, որ երկրորդն էր իշխանութեամբ զկնի թագաւորին, մատուցանել կայսեր զբաժինն՝ զոր դեսպանացն մերոց առեալ էր յանձն։ Ընդունելութիւն մեծ լինէր պատգամաւորին, այլ արձակեցաւ նա չհասեալ որում ցանկայրն, և լինէր երկուստեք պատրաստութիւն պատերազմի։ Ի մտի եղեալ էր կայսեր ի կակղել ձմերայնոյն արշաւել ի Պարսս երիւք բանակօք, ուստի և լինէր բանագնաց ընդ Սկիւթացիսն՝ գալ նմա

ի թիկունս օգնականութեան: Զհասեալ Շապհոյ որում վայրապար ունէր ակն՝ բրդէր ի սրտմտութիւն բարկութեան, լսեալ մանաւանդ, եթէ կայր պատրաստ ի մարտ՝ առ ոչինչ գրեալ զցասումն նորա տայր հրաման Սուրենայ, ըստ պայմանին զոր Վիկտորի կոմսի և Ուրբկայ յանձն առեալ էր՝ երթալ գրաւել զիւր բաժինն, և եթէ ընդդէմ ոք դառնայցէ՝ տալ պատերազմ: Գործն ըստ հրամանին առնոյր կատարումն, և չեղև մեզ հնար արգելուլ կամ առնուլ վրէժս, զի Վաղեսի պատերազմ մեծ առաջի կայր ի Գոթաց որ արշաւեցին ի Թրակիա:... Համբաւ ձախողանացն զոր առնոյր Վաղէս ի Թրակիայ՝ արկին զնա ի վարանս: Իսկ և իսկ հրաման տայ Վիկտորի իշխանի հեծելազօրուն երթալ ի Պարս, որպէս զիարդ և մարթէր՝ մտանել ի դաշն հաւանութեան վասն աշխարհին Հայոց. և մինչ ինքն հանդերձէր երթալ յԱնտիոքայ ի Կոստանդնուպոլիս՝ առաքէր առաջի իւր զՊրոփոտուրոս և զՏրայիանոս, երկոքին ևս մեծամիտք և անհմուտք իրաց պատերազմի: Սոքա փոխանակ նուաճեցուցանելոյ զբազմութիւն թշնամւոյն մանր մանր ճակատուք՝ յանխորհուրդս իմն հանին ի ճակատ զլեգէոնսն ածեալս ի Հայոց՝ քաջք արդարև, այլ վասն սակաւութեան իւրեանց անբաւականք ճակատեալ կալ առաջի թշնամւոյն, որ յաջողութեամբն խրախտայր և բազմութեամբն լցեալ ողողեալ էր զլերինս և զդաշտս առհասարակ» (Ամմ. Լ. 2, ԼԱ. 7):

16. Գանք այժմ լսել ի Բուզանդայ՝ ինչ որ պատահեցաւ ի Հայս զկնի սպանմանն Պապայ: Բուզանդ չունի ինչ որ յիշեցինք յԱմմիանոսէ, այն է ինչ որ յետ այն ազետալի սպանման անցան ի մէջ Վաղեսի և Շապհոյ, և զարգիլնս բանագնացութեանցն ի վնաս Հայոց. կ'ակնարկէ սակայն Ամմիանու պատմութեան գլխաւոր կէտերն, այն է զթողուլն հռոմէական զօրուն զՀայս, զգալն Սուրենայ և զանկանելն Հայոց ընդ իշխանութեամբ Պարսից, հանդերձ ներքին դիպօք զորս չունի Ամմիանոս: Ահա բովանդակութիւն պատմութեան Բուզանդայ: Արդէն 376-ին, իբր երեք ամօք յետոյ քան զմահն Պապայ, չկան հռոմայեցի ոչ զօրք և ոչ զօրավար ի Հայս, ուստի և Մանուէլ սպարապետ, յաջորդն Մուշեղի, կը համարձակի մերժել Հռոմայեցիներէն տրուած վերջին թագաւորն զՎարազդատ, և կը կոչէ զՊարսիկս (377): Սուրէն կու գայ 10 հազարաւ ոչ իբրև թշնամի, այլ իբրև բարեկամ: Բայց այս վիճակը չտևեր երկար: Գրեթէ նոյն տարին Հայք կ'ապստամբին, Սուրէն կը մերժուի քսութեամբ Մերուժանայ: Այսպէս իբր եօթը տարի (Բուզ. Ե. ԽԲ.), այն է 377—383, կամ ի մերժմանէն Վարազդատայ մինչև ի մահն Մանուէլի, Հայք կը մնան ինքնօրէն

ոչ ընդ իշխանութեամբ Պարսից, մանաւանդ թէ են ստէպ ի պատերազմի ընդ նոսա (Բուզ. Ե. ԼԹ, Խ, ԽԱ, ԽԳ.), և ոչ ընդ իշխանութեամբ Հռոմայեցւոց. քանզի Թէոդոս մեծ, յաջորդն Վաղեսի (379—395) զբաղեալ յարևմուտս գոթական պատերազմաւ՝ հազիւ ի դադարել այն պատերազմին (382) ունեցաւ ժամանակ դարձունել իւր ուշադրութիւնն յարևելս: 383-ին կ'սկսին յիշուիլ ի մատենագրաց ոմանց Դ. դարու (Որոս. Պակատ. Կղաւդ. Լիբան. ըստ Գաթըրճեանի Տիեզ. Պատ. Բ. 520, Ծան. 1) յաղթութիւնք ինչ զօրավարաց Թէոդոսի ի Միջագետս: Դարձեալ Թեմիստիոսի փիլիսոփայի և ճարտարախօսի ճառէն, զոր 393-ին խօսեցաւ նա առաջի Թէոդոսի՝ յայտնի է թէ մինչև այն թուականն Հայք չունէին ինչ աղերս բարեկամութեան ընդ Հռոմայեցիս. «Հայք, ասէ ճառն, յետս կացեալ են ի Հռոմայեցւոց... այլ որպէս յաղթեցաք Գոթաց առանց արեան և արտասուաց՝... այսպէս և զՀայս ընկալցուք միւսանգամ» (առ Գաթըրճ. Անդ. 519, Ծան. 2): Կը փափաքէին սակայն Հայք մտանել ընդ իշխանութեամբ Յունաց, և այս անտի մանաւանդ յայտնի է, զի Մանուէլ ի մահուան իւրում (383) գրով կը յանձնէ զՀայս Թէոդոսի (Բուզ. Ե. ԽԴ.). բայց կը խաբուի: Հայոց մնալն այնպէս ինքնօրէն չէր հաճոյ ոչ Պարսից միայն, այլև Հռոմայեցւոց. ուստի և Թէոդոս (384) ի դաշինս ընդ Շապհոյ Գ. դիւրաւ յանձն առաւ բաժանել զՀայս, կամ մանաւանդ վաւերացուցանել՝ ինչ որ արդէն եղած էր առ Վաղեսիւ, առնլով Մեծին Հայոց արևմտեան փոքրագոյն մասը, և թողլով Պարսից մեծագոյնը: Այսպէս ինչ որ հեթանոսն Յովիանոս և արիանոսն Վաղէս յանձն առին ի հարկէ առ տկարութեան՝ ուղղափառն Թէոդոս, զոր այնպէս փառօք կը տօնէ Հայաստանեայց եկեղեցին՝ յանձն առաւ. մինչ էր հզօրագոյն—մտանել ի ձեռս Պարսից խժաբարոյից փոքր քրիստոնեայ ժողովուրդ մի, ուսմամբ, բարոյիւք և եկեղեցեաւ դուստր յունականին, պատուար ի մէջ արևմտեան քաղաքակրթութեան և արևելեան բիրտ բարբարոսութեան: Հայաստան է այնուհետև երկու փոքր թագաւորութիւն, կրճեալ և գձձեալ, որպէս ասէ Բուզանդ, արևմտեան հռոմէական մասն ընդ Արշակաւ վերջնով որդւոյ Պապայ, և արևելեան պարսկականն՝ ընդ Խոսրովաւ: Մինչև ցայս վայր, այն է մինչև 385 կամ 386, կը բերէ Բուզանդ իւր պատմութիւնը, զոր կ'առնունք ահա մի ըստ միոջէ:

Յետ սպանմանն Պապայ, ըստ Բուզանդայ, նախարարք ամենայն, ընդ որս մանաւանդ սպարապետն Մուշեղ, կը զայրանան գործուած անգգամութեան վրայ. բայց տեսնելով զանձինս անկարող խնդրել վրէժ հին դաշնակից հզօր կայսրութենէն, նաև յա-

համարելով հնազանդել քրիստոնեայ ազգի քան կրակապաշտ Պարսից՝ կը լռեն, և կ'ընդունին ի Վաղեսէ փոխանակ սպանուած մանուկ թագաւորին միւս ևս թագաւոր մանուկ, ոչ տիօքն միայն, այլև մտօքն և բարուք և հանճարով, զոր Բուզանդ կը նկարագրէ այսպէս. «Եւ ժողովեցան եկին ամենայն իշխանքն Հայոց մեծամեծք ի մի վայր ի միասին, և Մուշեղ սպարապետն և Հայր մարդպետ, և ամենայն իշխանքն ասէին. Զի՞նչ արասցուք կամ զի՞նչ գործեսցուք. խնդրեսցո՞ւք զվրէժ թագաւորին մերոյ, թէ ոչ: Եւ ապա հաստատեցաւ այս բան ի խորհրդեանն, և ասեն. Ոչ կարեմք հեթանոսաց Պարսկաց ի ծառայութիւն մտանել, և թշնամի առնել զթագաւորն Յունաց, և ոչ զերկոսեան թշնամի առնել, և ոչ առանց միոյ թիկանց կարեմք կեալ: Ապա եկաց այս բան ի խորհրդին, թէ զինչ եղև՝ ահա եղև, թող ծառայեսցուք թագաւորին Յունաց. կացցուք ի հնազանդութեան իշխանութեան թագաւորութեան նոցա. զիարդ և կամք իցեն թագաւորութեանն Յունաց՝ արասցեն մեզ: Եւ ոչ ինչ արկին ի միտ կամ վրէժ խնդրել, կամ այլ ազգ ինչ իրս առնել, այլ անցին կացին լուռ: Եւ եղև յետ մահուն Պապայ թագաւորեցոյց թագաւորն Յունաց զՎարազդատ ոմն ի նմին տոհմէն Արշակունի ի վերայ աշխարհին Հայոց: Եկն բազում շքով եմուտ յերկիրն. Հայոց և թագաւորեաց յերկրին Հայոց: Եւ էր նա մանուկ յաւուրց, լի արութեամբ, կորովի ձեռօք, քաջ սրտիւ, և ի մտաց թեթև, մանկաբարոյ, տղայահանճար, մանկամիտ: Բայց սակայն իբրև տեսին զնա՝ ժողովեցան առ նա ամենայն ազգք Հայոց, մեծամեծ նախարարք. և կամեցեալ խնդացին զթագաւորել նորա ի վերայ իւրեանց» (Բուզ. Ե. ԼԳ, ԼԴ.):

17. Ի հանդէս զինուորական հանճարոյն Մուշեղի և փութոյ նորա ի պայծառութիւն և յապահովութիւն երկրին՝ Բուզանդ կը դնէ հոս նոր իմն հնարս, յոր ձեռնարկեց սպարապետն քաջ ի զգուշութիւն վտանգին, զոր կ'սպառնային Հայաստանի անկախութեան բանագնացութիւնք ի մէջ երկուց մեծ տէրութեանց. «Սպարապետն Հայոց Մուշեղ, ասէ, առաջնորդէր Հայոց, և զգուշանայր զսահմանօքն, որպէս սովոր էր կարգել զաշխարհ մեծապէս, և խրատ բարեաց թագաւորին մանկանն Վարազդատայ մատուցանէր: Եւ հոգայր հանապազ վասն թագաւորութեան աշխարհին Հայոց, թէ զի՞արդ կամ ո՞րպէս չէն լինել մարթասցէ, և հանապազ երկս արկանէր բարեխորհուրդն, զի հաստատուն կալ կարասցէ թագաւորութիւնն: Խորհէր ևս ընդ իշխանսն Յունաց, և նոքօք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք շինել ի մի մի գաւառսն, ո՛ր՝ մին մի քաղաքըս, ո՛ր՝ երկուս երկուս, ամուրս պարսպաւորս զօրանիստս հաստատել

ընդ ամենայն երկիրն Հայոց, մինչև ի Գանձակ սահման երկրին որ Պարսից կուսէ էր, և զամենայն ազատն Հայոց կայսերական թոշակօքն զինուորել, նոյնպէս և զօրաց երկրին Հայոց. զի այսպէս ամենայն զգուշութիւն լինել առ ի թշնամեաց իւրեանց ի զօրացն Պարսից: Եւ թագաւորն Յունաց յանձին ունէր մեծաւ խնդութեամբ առնել զայս, զի այսու ամենայնիւ աշխարհն հաստատուն լինի և անշարժ ի հիմանէն, զի մի կարասցէ թագաւորն Պարսից յիւր փոխարել զաշխարհն Հայոց» (Բուզ. Ե. ԼԴ.):

18. Բայց հաւատարիմն Մուշեղ առաւ ընդ հուպ իւր անդուլ վաստակոց հատուցումը: Վարազդատ ի քսութենէ իւր դայեկին Բատայ Սահառունւոյ, որ կամէր յափշտակել սպարապետութիւնն՝ դաւով սպաննեց զՄուշեղ ի խնջոյս.—«Իբրև տեսանէին զթագաւորն Հայոց զՎարազդատ մեծ նախարարքն Հայոց, թէ մանուկ բանսերթուկ է, զչար ի բարւոյ որոշել չգիտէ՝ սկսան այնուհետև ըստ կամաց իւրեանց վարել զթագաւորն, որպէս և կամէին՝ բանիւք իւրեանց տանէին և բերէին զնա: Նա առաւել ունկն դնէր մանկտւոյն որ ի տիոց հասակակիցք էին նորա, առաւել քան զծերոցն իմաստնոց որք կարող էին զօգտակար խրատն մատուցանել նմա: Այլ Բատ, որ նահապետն էր ազգին Սահառունեաց տոհմին, դայեակ սնուցիչ թագաւորին Վարազդատայ՝ կամեցաւ նա զգործ զօրավարութեան սպարապետութեան Մուշեղայ յինքն յափշտակել ի նմանէ: Վասն այսորիկ սկսաւ քսու մատուցանել զնմանէ առ թագաւորին Վարազդատայ առ իւրում սանուն և ասել, թէ ի սկզբան ի նախնեացըն հետէ զձեր Արշակունեաց տոհմն Մամիկոնէից է կորուսեալ, զի հակառակորդք ձեր դոքա լեալ են ի բնէ անտի, և համակ զերկիրս Հայոց դոցա է կերեալ, մանաւանդ Մուշեղի, զի այր չար է և նենգաւոր: Սիրելի է թշնամեաց ձերոց, և ատելի սիրելեաց ձերոց, և համակ ընդ ձեզ նենգաւ է գնացեալ, երկմտութեամբ և դժխեմութեամբ: Զի ո՞չ այն Մուշեղ է, որ ի թագաւորութեան ժամանակի Պապայ ի պատերազմունսն Պարսից քանիցս անգամ ձեռնհաս եղև սպանանել զՇապուհ արքայն Պարսից՝ և ոչ եսպան, այլ արձակեաց զթշնամին. և երբեմն զկանայս Շապհոյ թագաւորին ի բուռն էարկ, և խնամոտ գթով ժանուարօք արձակեաց զնոսա զհետ Շապհոյ: Ո՞չ այդ այն Մուշեղն է, որ զՈւռնայր արքայ Աղուանից ի բուռն էարկ. և սպանանել ոչ կամեցաւ, այլ արձակեաց զթշնամին: Ո՞չ այդ այն Մուշեղ է, զի զարքայն Պապ հրամանաւ դորա և զորին խորհրդով զօրավարքն Յունաց սպանին. զի դա ոխացոյց զրգռեալ զարքայն Յունաց ի վերայ թագաւորին Պապայ, մինչև ետ սպանանել: Այլ արժան է մեռանել ի ձեռաց քոց, և չէ

պարտ կեալ դմա. այլ թէ ոչ աճապարեսցես, արքայ, այժմ գհայ երկիրս խորհի լնուլ քաղաքօք, և զօրանիստ առնէ ասա բնակութեան զօրացն Յունաց։ Եւ այնուհետև կամ թագաւորն Յունաց հանէ ի քէն զթագաւորութիւնս Հայոց, կամ այս Մուշեղ սպանանէ զքեզ և ինքն թագաւորէ։ Եւ այսպիսի բանիւք գաղտնի հանապազ զթագաւորն գրգռէին, մինչև հաւանեցաւ ըստ կամաց նոցա զսպարապետն զզօրավարն Հայոց սպանանել։ Այլ խորհուրդ առարին, թէ որպէս ըմբռնել կարասցեն զնա, քանզի մեծապէս երկնչէին ի նմանէ։ Թէ զգայ՝ ասեն, մեծ պատերազմ առնէ, և ոչ ոք կարէ զդէմ քաջութեան նորա ունել, բայց հնարիւք մեքենաւորութեամբ ինչ լինիցի հնար։ Այսպէս սպասէին նմա։ Եւ եղև յաւուր միոջ հրաման ետ Վարազդատ արքայ ընթրիս մեծ գործել և մեծ պատրաստութիւն առնել, և կոչել հրամայեաց յընթրիսն զամենայն աւագս պատուականս և զմեծամեծս և զզօրավարն Մուշեղ։ Պատրաստեալ Վարազդատ արս ընտիրս, հզօրս, զօրեղս, զի կազկայցեն գործոյն, հարկանել յանկարծօրէն յանպատրաստից յեղակարծումն ժամու ի վերայ Մուշեղի։ Զնոսա քաջ ուրախ առնէր մեծապէս, և շատ գինի տայր ըմպել և բազում առնէր զբօսումն ուրախութեան։ Արքայն Վարազդատ տայ նշանս յառաջագոյն այնոցիկ զորս էր սպանողն պատրաստեալ, եթէ յորժամ գիտիցէք, թէ քաջ արբեալ իցէ և զմտօք զառանցեալ յարբեցութենէ սպարապետն Մուշեղ՝ ես յարուցեալ իբրև ի ճեմիշն երթալոյ պատճառաւ, և դուք պատեսջիք զնովաւ։ Եւ եղև իբրև անցին զառանցին ի գինւոյն ըստ չափ անցանելով, և թագաւորն Վարազդատ պահէր զանձըն ի գինւոյն. իբրև գիտաց Վարազդատ, թէ արդ յարբեցութենէ մտաց ինչ չզգան՝ ինքն յարուցեալ իբրև յապարահէ զանց առնելոյ պատճառաւ, և ուղղանին ամենայն բազմականացն յառն կացին առհասարակ, իբրև նմա պատիւ ինչ առնել։ Եւ յանկարծ արքն որոց էր տուեալ հրաման, երկոտասան այր կից զոյգ զկնի կողմանէ զնմանէ բուռն հարկանէին, վեց այր ի մի բազուկն Մուշեղի, և վեց այր ի միւս բազուկն։ Եւ ընդ առն կալ թագաւորին, նայեցեալ ընդ նա եթէ այս ընդէր է, և թագաւորին պատասխանի տուեալ ասէ. Երթ առ Պապ արքայ, հարց և տես, թէ ընդէր է այդ։ Եւ թագաւորն ի դուրս կոյս գնացեալ ելանէր։ Եւ ասէ Մուշեղ. Ի վերայ բազում խմոց փոստակացն արեան և քրտան և սլաքօքն գքիրան ջնջելոյ, ա՛յս հատուցումն եղև։ Բայց իբրև եհաս ինձ մահս՝ թէ ի վերայ ձիոյ դիպեալ էր...։ Զայս միայն բանս ժամանեաց ասել, և այլ ոչ ինչ ոչ։ Եւ անդէն Բատ Սահառունի, դայեակն արքային Վարազդատայ, զնրանն զոր յիրում ած-

սերն ունէր՝ հանեալ, անցոյց ընդ փողս զօրավարին Մուշեղի, և անդէն ի բաց եհատ զգլուխ նորա։ Եւ բարձին զնա, և տարան զմարմին նորա ի գեւղն իւր» (Բուզ. Ե. ԼԵ.)։ Վարազդատ այս անզ-գամութիւնը գործեց անտարակոյս ոչ առանց քաջալերուելու յօրի-նակէ սպանմանն Պապայ։ Քանի՜ զօրաւոր է օրինակ, մանաւանդ երբ կը տրուի իշխանութենէ։

Բուզանդ, որ այնպէս դիւրամէտ է ի հաւատալ դիւական ե-րևոյթներու կախարդանօք, ինչպէս տեսանք ի պատմութեան Պա-պայ՝ կը ծաղրէ զընտանիս Մուշեղի, թէ հաւատալով հին հայ ա-ռասպելին առլեզաց՝ դրին զդի նորա ի տանիս բարձր աշտարակի, յուսալով, թէ վասն զի այր քաջ էր Մուշեղ՝ առլէզք գալով պիտի յարուցանէին զնա լիզելով.—«Եւ եղև իբրև տարան զմարմինն սպարապետին Մուշեղի ի տուն իւր առ ընտանիս իւր՝ ոչ հաւա-տային ընդանիք նորա, թէպէտև տեսանէին զգլուխ նորուն զատ ի մարմնոյն անտի։ Զի ասէին. Դորա յանթիւ ճակատ մտեալ էր, և վէր երբէք չէր առեալ. ոչ նետ մի դիպեցաւ երբեք, և ոչ այ-լոց զինու խոցեալ է զդա։ Իսկ կէսք յառնելոյ ակն ունէին նմա, մինչև զգլուխն անդէն ի կոճեղն կարեալ կցեցին, և հանին եդին ի տանիսն աշտարակի միոյ, ասէին, թէ վասն զի այր քաջ էր՝ առ-լեզք իջանեն և յարուցանեն զդա։ Պահապան կային և ակն ունէին յառնելոյ, մինչև նեխեցաւ մարմինն. ապա իջուցին յաշտարակէ անտի, և լացին թաղեցին զնա որպէս օրէն էր» (Բուզ. Ե. ԼԶ.)։

19. Բայց ոչ Բատայ և ոչ Վարազդատայ մնաց վրէժ արեանն Մուշեղի։ Բատ արդարև առաւ սպարապետութիւնը որ Մամի-կոնեան ցեղին էր, բայց առ եղեռնէ իւր և սանուն իւրոյ Վա-րազդատայ։ Մանուէլ և Կոմս անուն երկու եղբարք Մամիկոնեան տոհմէն, գտնուելով ի պատերազմի ուրեք Շապհոյ՝ մեծամեծ քա-ջութիւններ կը գործեն, բայց ի պարտիլ Պարսից զօրուն և փախ-չել՝ սոքա ևս երկու եղբարք փախչելով կու գան ի Հայս։ Մանուէլ որ երիցագոյնն էր Մամիկոնեան ազգին՝ առաւ ոչ միայն Նահապե-տութիւնը որ տրուած էր Վաչէ անուն ումեմն նոյն ցեղէն, այլև սպարապետութիւնն, իբրև իւր ցեղին սեպհական, առանց հրամա-նի Վարազդատայ։ Այս պատճառաւ կ'սկսի ի մէջ Մանուէլի և Վա-րազդատայ սաստիկ վէճ։ Մանուէլ յետ յիշեցուցանելոյ Վարազդա-տայ իւր և իւր նախնեաց վաստակը և հաւատարմութիւնն առ Արշակունիս՝ կը յիշեցունէ նմա ապերախտութիւնը, որով առաւ նա խողխողել զՄուշեղ ի բազմականին, և խրատ կու տայ նմա մեկնել աշխարհէն, սպառնալով նմա մահ։ Մանուէլի այս համար-ձակութիւնն—մերժել կայսրէն տրուած թագաւորը՝ չէր անտարա-

կոյս առանց թելադրութեան Շապհոյ, ընդ որում սկսած էին Հայք
մտերմանալ յետ մեկնելոյն Հռոմայեցւոց յերկրէն։ Վախճան այս
բանակռուութեան եղաւ արիւնահեղ պատերազմ, ուր յաղթեցին
Մանուէլեանք, և Վարազդատ խոյս տուաւ ի Յոյնս, և Բատ,
քսուն Վարազդատայ, բռնուելով սպանուեցաւ չարաչար հանդերձ
որդւովքն (374).—«Այս կացոյց թագաւորն Վարազդատ ի գործ
զօրավարութեան սպարապետութեանն զԲատ նահապետն Սահա-
ռունեաց տոհմին, որ էր իւր դայեակ, բանսարկու քսուն, սպանողն
Մուշեղի։ Եւ էր նա սպարապետ փոխանակ նորա, զօրավար ամե-
նայն Հայոց։ Եւ ազգին Մամիկոնեան տոհմին տանուտէր նահա-
պետ կացոյց թագաւորն՝ Վաչէ անուն ումն ի նմին տոհմէ։ Յայնմ
ժամանակի դարձան ի գերութենէն, զոր տարեալ էր Շապհոյ ար-
քային՝ երկու եղբարք ի Մամիկոնեան տոհմէն, անուն միումն
Մանուէլ, և անուն երկրորդին Կոմս։ Քանզի զայն ժամանակաւ
թագաւորին Պարսից Սասանականին տուեալ էր պատերազմ ընդ
մեծ թագաւորին Քուշանաց ընդ Արշակունւոյն որ նստէր ի Բահլ
քաղաքին։ Եւ իբրև երթային զօրքն Պարսից ի Քուշանացն պատե-
րազմն, ապա և զմարդիկ գերութեանն որ ի Հայոցն էին՝ թագա-
ւորն Պարսից յղէր ի պատերազմ ընդ իւր զօրսն. և Մանուէլս այս
երթայր ընդ նոսա հանդերձ եղբարբն իւրով Կոմսիւ։ Եւ իբրև ե-
ղեն խառնուրդք երկոցունց գնդացն ընդ միմեանս՝ ապա ի պար-
տութիւն մատնեցան զօրքն Պարսից յերեսաց զօրացն Քուշանաց,
դարձան ի փախուստ անհնարին հարուածովք. բայց Մանուէլ որ-
դի Արտաշինայ ի Մամիկոնեան տոհմէն հանդերձ եղբարբն իւրով
Կոմսիւ բազում քաջութիւնս կատարեալ ի նմին ճակատուն՝ հետի-
ոտս այրէին։ Սակայն թագաւորին Պարսից բազում տրտմութիւն
լինէր յաղագս իւրոյ զօրաց կոտորածոյն, և արձակեաց յերկիրն
իւրեանց զՄանուէլ և զԿոմս, որոց գնացեալք գային յիւրեանց եր-
կիրն, և էին հետիոտք երկոքին եղբարքն, և էին երկոքեան մեծք
և անհեդեդք, երկոքեան անձնեայք սկայազունք։ Մինչդեռ գային
ի ճանապարհի՝ ոչ կարէր Մանուէլն գնալ, զի ոտիքն ցաւած էր,
ապա Կոմս եղբայր իւր ստանձնեալ առեալ բառնայր, և տան-
տասն խրասախ բերէր ըստ անձին զայնչափ այրն զանհեդեդ զա-
նարի, եկն եբեր յերկիրս Հայոց։ Իբրև եկն եհաս յերկիրն Հայոց
Մանուէլ եղբարբն իւրով Կոմսիւ հանդերձ, իբրև ետես զնա Վաչէն
որ յառաջն էր լեալ նահապետ՝ ետ ցնա զպատիւ իշխանութեանն
զոր առեալ էր ի թագաւորէն Վարազդատայ, քանզի էր նա երէց
յազգին, և Մանուէլ ունէր զնահապետութեան ազգին տանուտէ-
րութեան պատիւն, և Վաչէն լինէր երկրորդ։ Իսկ յորժամ եհաս

եկաց Մանուէլն ի փառս տէրութեան իւրոյ՝ առանց հրամանի
թագաւորին Վարազդատայ յինքն յափշտակեաց զզօրավարութեանն
զսպարապետութիւնն, զի այն ինչ զոր իւրոց նախնեացն ի բնէ
կալեալ էր ի սկզբանէն, և զոր արքայն Վարազդատ շնորհ առնէր
իւրում դայեկին Բատայ՝ զայն Մանուէլ յինքն հանեալ ունէր։ Յետ
այսորիկ պատգամ յղէր սպարապետն Հայոց Մանուէլ առ թագաւորն
Վարազդատ և ասէր, թէ Փոխանակ ամենայն ազգին մերոյ վաստա-
կոցն, զոր ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ միամտութեամբ
առ ձեզ Արշակունիս վաստակեալ եմք, և եդեալ զանձինս մեր ի վե-
րայ ձեր, կեցեալ և մեռեալ եմք ի վերայ ձեր, ամենայն նախնիքն մեր
առաջինքն անկան ի պատերազմունս ի վերայ ձեր․ Վասակ հայր
Մուշեղի կորեաւ ի վերայ Արշակայ արքայի, և մեք հանապազ
վաստակեալ և աշխատեալ եմք ի վերայ թագաւորութեան ազգիդ
ձերոյ․ և փոխանակ կեանս առնելոյ ընդ վաստակոցն՝ արդ որք ի
թշնամեացն ոչ մեռան՝ զայն դուք Արշակունիքդ կոտորեցէք։
ԶՄուշեղ, այր քաջ, եղբայր իմ, որ ի վերայ ձեր մաշեաց զանձն
իւր ի մանկութենէ իւրմէ, վանեաց կոտորեաց զթշնամիս ձեր, և
զոր ոչ կարացին թշնամիքն սպանանել՝ դու կալար ի բազմականի
խեղդեցեր։ Նա դու չես իսկ Արշակունի, այլ ի պոռնկութենէ ե-
ղեալ ես որդի, վասն այդորիկ ոչ ծանեար զվաստակաւորսն Արշա-
կունեաց։ Մեք չեմք իսկ լեալ ձեր ծառայք, այլ ընկերք ձեր և ի
վերոյ քան զձեզ․ զի մեր նախնիքն լեալ էին թագաւորք աշխար-
հին Ծենոյ, և վասն եղբարց իւրեանց գրգռութեանն, զի արիւն
մեծ անկեալ էր ի վերայ՝ վասն այնր եմք գնացեալք, և վասն
բարւոյ հանգստի գտանելոյ՝ եկեալ դադարեալ եմք։ Առաջին թա-
գաւորքն Արշակունիք գիտէին զմեզ ով էաք կամ ուստի էաք, այլ
դու քանզի չես Արշակունի՝ գնա յաշխարհէս, և մի մեռանիր ի
ձեռաց իմոց։ Իսկ Վարազդատ թագաւորն պատգամ յղէր պատաս-
խանւոյ առ զօրավարն Մանուէլ և ասէր․ Ես քանզի եմ Արշակու-
նի՝ եդի զթագ նախնեացն իմոց Արշակունեաց և կալայ զաշխարհ
առաջնոց իմոց, և խնդրեցի զվրէժ հօրեղբօրն իմոյ Պապայ ի չա-
րագործ յեղբօրէն քումմէ ի Մուշեղայ․ բայց զի դու չես յաշ-
խարհէս յայսմանէ,—զի քեզէն իսկ ասացեր, բաս, յերկրէն յաշ-
խարհէն Ծենոյ եմք լեալք թագաւորք ի բնութենէ, և այսր պան-
դուխտք եմք եկեալք՝—արդ ըստ օրինակի եղբօրն քո մի մեռանիր։
Զի իմ առ բարերարութեան իմոյ արձակեալ լիցի զքեզ․ երթ գնա
յերկիրն Ծենոյ, անդ կեաց և անդէն թագաւորեսջիր յերկրին քում։
Ապա թէ ոչ կամիցիս գնալ՝ մեռանիս ի ձեռաց իմոց որպէս և
Մուշեղն մեռաւ։ Յորժամ բազում անգամ երթեալք եկեալք պատ-

գամաւորք բազում խստագոյն քան զխստագոյն բանս կսկծանաց առ միմեանս յղէին՝ յետ այնորիկ ժամադիր միմեանց լինէին՝ պատերազմաւ զմիմեանս տեսանել, և ի հասեալ ժամադիր ժամուն եկեալ տային ընդ միմեանս պատերազմ: Թագաւորն Վարազդատ առնոյր զզօրն իւրոյ բանակին, և գնայր հասանէր ի տեղի ճակատուն, վառեալ կազմեալ պատրաստեալ ի պատերազմ. սոյնպէս և սա պատրաստագոյն քան զնոսա: Եւ Մանուէլ սպարապետն հասանէր իւրով գնդաւն ի նոյն տեղի. և ի դաշտին Կարնոյ լինէին խառնուրդք երկոցունց գնդացն ընդ միմեանս բախելոցն: Թագաւորն Վարազդատ և սպարապետն Մանուէլ զնիզակս առեալ՝ միմեանց յարձակեալ ախոյեանք ելանէին: Իբրև զաչս ի վեր ամբառնայր արքայն Վարազդատ և նայէր ընդ գոյն իւր և տեսանէր զսպարապետն Մանուէլ՝ ի մեծութենէն հասակին և ի շքեղութենէ անձինն, և յամրակուռ յերկաթապատ յոտիցն մինչև ցգլուխն առհասարակ յանվթար զինէն, ի հաստամեստ յանձնէն և ի հաստատուն երիվարէն և յասպազէն վառելոյն յանշարժ սպառազինէն՝ համարեցաւ կշռեալ զնա ի միտս իւր իբրև զլեառն մի բարձր անմատոյց: Սակայն ածեալ զմահ ընդ միտս՝ յարձակեցաւ, զի այնուհետև չունէր ակն անձինն ապրելոյ: Սակայն զի մանուկ մարդ էր արքայն Վարազդատ, իբրև եռես զՄանուէլն այնպէս՝ զի չէր ինչ կուռոյ տեղեակ՝ էած զմտաւ թէ ի զրահսն ոչինչ կարիցէ նիզակ գործել, առ ձեռաց կորովութեանն զնիզակն ընդ բերան արկանէր զօրավարին Մանուէլի: Իսկ Մանուէլ բուռն հարկանէր զնիզակէն. հանեալ ի նմանէ զնիզակատէգն՝ ընդ իւր թուրծն հանէր և բազում զիւր թափէր զատամունսն, զնիզակն յինքն հանեալ յարքայէն: Եւ արքայն Վարազդատ ի փախուստ դառնայր յերեսաց զօրավարին Մանուէլի. և անդէն Մանուէլ զտէգ նիզակին ի ձեռինն կալեալ՝ նիզակաւն ի կառափն մատուցեալ ծեծէր զարքայն Վարազդատ, այնպէս տանէր զնա, և անդէն որդիքն Մանուէլի յարձակեցան մէն մի նիզակ ի ձեռն, Համայեակն և Արտաշէսն՝ սպանանել զարքայն: Իսկ Մանուէլ աղաղակէր զկնի որդւոցն իւրոց և ասէր. Ա՜յ, մի լինիք արքայասպանք: Եւ նոցա լուեալ զձայն հօրն՝ վազվաղակի արագ արագ դառնային ի նմանէ. և ի պարտութիւն մատնեցաւ այն օր գունդն արքունական առաջի մանուէլեան գընդին: Ոչինչ սակաւ այնուհետև սպանեալք անկանէին ընդ երեսս դաշտին, բազում խոցք և խեղք վիրաւորք և բազում նախարարք սատակեցան, բազում փախստեայք հալածական լինէին... Իսկ այլ զօրքն ամենայն դեռ գային ի կոտորածոյն, զբազումս ձերբակալ արարեալ և կալեալ ածէին: Եւ զհատն, արքայն Վարազդատայ

գքսուն, զսպանողն Մուշեղի, կոչեալ իւր որդւովն առաջի սպարապետին Մանուէլի, և զայլս որք միանգամ գործոյ սատարն լեալ էին՝ ըմբռնէին զամենեսեան առ նա ածէին։ Եւ մեծաւ դատաստանօք դատեցաւ զանօրէնն Բատ սպարապետն Մանուէլ։ Բայց նախ յանդիման նմա հրամայէր փողոտել զորդին նորա, ապա յետոյ զնա գլխատել, և զայլսն կոտորեաց ըստ նմին օրինակի։ Եւ զԹագաւորն Վարազդատ հալածեցին յերկրէն ի սահմանացն Հայոց։ Չոգաւ գնաց նա յերկիրն Յունաց. անդ եկաց որչափ և եկեաց, և անդէն մեռաւ» (Բուզ. Ե. Լէ.)։

20. Վարազդատայ կուսակից նախարարներէն, որ սպանուեցան այս պատերազմին մէջ՝ Բուզանդ կը յիշէ յանուանէ զԳարեգին նահապետ Ռշտունեաց, ոչ առանց պատճառի։ Այս անձը որ փեսայացած էր Մամիկոնեան տան՝ թողած էր տխուր յիշատակ Մամիկոնեան ազնիւ ցեղին մէջ իւր կնոջն Համազասպուհւոյ եղերելի վախճանին համար, որուն գէթ անուղղակի պատճառ եղած էր Գարեգին։ Համազասպեան, եղբայր Համազասպուհւոյ, կը հանդիպի Գարեգնի ի խուան վիրաւորելոյ։ Գարեգին կ'աղաչէ իւր աներոջը խնայել նմա։ Անյիշաչարն Համազասպեան կը հրամայէ վահանաւորաց ոմանց ծածկել զնա վահանօք. բայց Դանուն անուն ոմն զօրավար սպարակրաց զնդին Մանուէլի տեսնելով զնա և տեղեկանալով, թէ Համազասպենի հրամանաւ կը պահէին զնա վահանաւորքն՝ զայրանալով կ'սպաննէ զնա, նրբութեամբ իմն հեգնելով Համազասպենի գութը.—«Մինչդեռ գունդն մանուէլեան էին զկնի փախստէիցն՝ գայր հասանէր Համազասպեան սեպուհ մ'ի Մամիկոնեան տոհմէն, անցանէր առ անկելովք դիակամբքն և առ խոց վիրաւորօքն պատերազմին, և ընդ նոսին ընկեցեալ էր և Գարեգին տէր գաւառին Ռշտունեաց, բայց ողջ կայր։ Այս Գարեգին փեսայ լեալ էր յառաջ նորին Համազասպէի, զքոյր նորին Համազասպուհի ունէր կին։ Եւ իբրև եկն Թագաւորն Շապուհ յերկիրն Հայոց՝ սա եթող զկինն իւր և փախեաւ։ Ապա տարան զՀամազասպուհի յերկիրն Տոսպայ, ի քաղաքն ի Վան, հանեալ կախեցին զնա Պարսիկքն ի բարձր աշտարակացն որ կայր ի վերայ քարանձաւին, ի կախաղանի սպանին զնա։ Իսկ յայնմ աւուր իբրև անկեալ կայր այն Գարեգին ի մէջ անկելոցն՝ եկն Համազասպ աներ (աներձագ) նորուն անցանել առ նոքօք։ Աղաղակեաց Գարեգին և ասէ. Տէր Համազասպեան, և զիս տես. հրաման տուր նժոյգ մատուցանել, թող հեծայց։ Եւ ասէ ցնա Համազասպեան. Ո՞վ ես դու։ Եւ ասէ. Ես եմ Գարեգին Ռշտունի։ Եւ ետ հրաման Համազասպեան վահանաւորացն որ ընդ նմա էին, ասէ. Իջէք և դիք զվահանսդ ի վերայ

նորա և պահեցէք: Եւ ինքն էանց: Այա իջին վահանաւորքն, եդեալ զվահանսն ի վերայ, և կային պահէին ըստ հրամանի տուելոյն: Այա յետ այսորիկ գայր Դանուն ամն գամայեա (? գնդայեա) սպարակրացն գնդին մանուէլեան զօրացն. ետես զի իջեալ էին վահանաւորք ի վերայ և զԳարեգինն պահէին: Եհարց ցնոսա, թէ Ո՞վ է այդ, և դուք հեմ իջեալ կայք յայդմ տեղւոջ: Ասեն նոքա, թէ Սա Գարեգին Ռշտունեաց տէր է, և մեզ հրաման եա Համազասպեան իջանել պահել զսա: Եւ մեծաւ ցասմամբ զայրանալով ի բարկութիւն մեծ բորբոքէր Դանունն և ասէր. Արդ ուրեմն վերընտին կամի Համազասպեան զսա իւր փեսայ առնել, և զՀամազասպուհի զքոյր իւր տալ սմա կնութեան. վասն այսորիկ անխայեաց ի դա, պահել հրամայէր: Եւ անդէն առն ածեալ էջ ի ձիոյն, եհան զթուրն, մատուցեալ ի նա պատառ պատառ կոտորեալ, անդէն ցրեալ սատակեաց զնա» (Բուզ. Ե. Լէ.):

21. Ինչպէս տեսանք Ամմիանոսէ՝ Շապուհ տեսնելով, թէ Վաղէս կը դանդաղէր ընդունել Հայաստանի բաժանման առաջարկութիւնը՝ հրաման տուաւ Սուրենայ երթալ գրաւել զՀայս, ի հարկին նաև բռնութեամբ: Բայց ըստ Բուզանդայ կը թուի թէ բըռնութեան հարկ չմնաց. Հայք ինքնակամ ընդունեցան զՍուրէն, մանաւանդ ինքեանք իսկ կանխեցին հրաւիրել զՊարսիկս: Ահա պատմութիւն Բուզանդայ, որ միաբան է ընդ Ամմիանու: Ըստ Բուզանդայ՝ Մանուէլ յետ մերժելոյ զՎարազդատ՝ խորհրդով տիկնոջն Զարմանդխտոյ կնոջ Պապայ, և հաւանութեամբ մեծամեծ նախարարաց կ'առնու զիշխանութիւնն իբրև յանձանձիչ կամ խնամակալ, զերկոսին որդիսն Պապայ զԱրշակ և զՎաղարշակ, որ տակաւին չէին հասկու (չափահաս) ի ձեռն առնուլ տէրութեան սանձը՝ պատուով շրջեցուցանելով իբրև օրինաւոր ժառանգս գահուն: Տեսնելով սակայն երկիրը մնացած անօգնական,—քանզի Վաղէս դաշամբ հրաժարելով Հայաստանէ՝ քաշած էր լեգէոններն ի պատճառս պատերազմին Գոթաց—լաւ համարեցաւ զՇապուհ առնել իւր թիկունս. ուստի և իսկոյն զրկուեցան հրաւիրակք առ Շապուհ յայտնել նմա զհպատակութիւն ազգին: Ուրախ եղաւ Շապուհ, և զրկուեցաւ Սուրէն իբրև բարեկամ և օգնական Մանուէլի տան հազարաւ պարսիկ հեծելովք միայն, մեծամեծ ընծայիւք առ Մանուէլ և թագաւորական նշաններով առ տիկինն Հայոց և առ երկոսին ժառանգս գահուն: Այս կը թուի եղած Վարազդատայ մերժման տարին (377).

—«Եւ սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ նուաճեաց զաշխարհըս, և զամենայն մեծամեծս և զնախարարսն Հայոց առ ինքն ժողովէր, և էր նա առաջնորդ և գլուխ նոցա. և վարէր զիւր իշխա-

նութիւնն, և հրաման տայր աշխարհի փոխանակ թագաւորի, և ունէր զաշխարհ ի շինութեան։ Եւ զկինն Պապայ արքայի զԶարմանդուխտ տիկին, հանդերձ որդւովքն Արշակունեօք, առեալ զնոսա՝ ի տեղի թագաւորի կալեալ ի պատիւ շրջեցուցանէր։ Մեծաւ իմաստութեամբ և բազում յաջողութեամբ աշխարհին Հայոց մեծապէս առաջնորդէր, որչափ եկաց ժամանակս։ Բայց անուանք պատանեկացն Արշակունեաց, անուն երիցուն Արշակ, և կրսերոյն Վաղարշակ։ Զսոսա առեալ Մանուէլն սպարապետն իբրև զսան սնուցանէր, և զմայրն նոցա զԶարմանդուխտ ի մեծի շքի տիկնութեան պատուէր։ Բայց յորժամ տեսանէր Մանուէլն, եթէ զոր ինչ գործեացն ընդդէմ էր հրամանաց թագաւորին Յունաց՝ ածեալ զմտաւ խորով, թէ արժան է նմա դէթ զմի ոք թիկունս առնել՝ խորհեցան խորհուրդ ընդ տիկնոջն, և կամեցաւ թիկունս առնել զարքայն Պարսից։ Ապա յետ այսորիկ առաքեցին Զարմանդուխտ տիկինն Հայոց և սպարապետն Մանուէլ զԳարջոյլ Մաղխազ հրովարտակօք ընծայիւք և պատարագօք առ թագաւորն Պարսից, զի ի նա ձեռս տայցեն և զնա պաշտիցեն, և նմա միամտութեամբ ծառայեսցեն, և տայցեն նմա զաշխարհս Հայոց։ Եւ չոգան հասին Գարջոյլն և որք ընդ նմայն էին ի դուռն թագաւորին Պարսից. մատուցին նմա զհրովարտակսն զտիկնոջն և զսպարապետին Հայոց, և ետուն նմա զյղեալ պատգամսն հնազանդութեան։ Եւ յորժամ ետես զնոսա թագաւորն Պարսից՝ մեծաւ խնդութեամբ ընկալեալ զնոսա, մեծապէս մեծարանօք պատուեաց զնոսա, և մեծաւ պարգևօք առնէր զԳարջոյլն։ Եւ ընդ նմա առաքէր յերկիրն Հայոց զՍուրէն պարսիկ մի ճոխ ի նախարարացն իւրոց, և ընդ նմա յղեաց տասն հազար հեծեալս վառեալս սպառազէնս, զի երթիցէ Սուրէն յաշխարհն Հայոց ի թիկունս օգնականութեան զօրավարին Մանուէլի, և պահել ի թշնամեաց զտիկինն զԶարմանդուխտ։ Եւ ետ թագաւորն Պարսից տանել ի ձեռն Սուրենայ թագ և պատմուճան և զվառ թագաւորացն տիկնոջն Զարմանդխտոյ, և թագս մանկանցըն որդւոցն երկոցունց, Արշակայ և Վաղարշակայ։ Զսոյն և սպարապետին Մանուէլի սոյնպէս ետ տանել զթագաւորական պատմուճանն, սամոյր մի և զգլխոյ պատիւ զարդմանակ ոսկի արծաթ, և ի պատիւ գլխոյ ի վերայ գագաթանն ի թիկանց արծուոյն հանգոյցք թագի կապեալ աշխարհաւանդ հանգոյց, և լանջաց պատիւ ապիզակ, որպէս օրէնք են ունել թագաւորաց, և չիկակարմիր խորան, և ի վերայ խորանին արծուի նշան, և սրահակս մեծամեծս և կապուտակ երկնագոյն հովանոցս։ Եւ ոսկի սպաս տաճարին առաքէր սպարապետին Մանուէլի, և տայր նմա յիւրմէ ձեռանէ իշխանու-

թիւն մեծ ի վերայ աշխարհին Հայոց։ Եւ եկն եհաս Գարջոյլն Խորխոռունի յերկիրն Հայոց, և էած զՍուրէն պարսիկ տասն հազարաւն։ Եկին բերին զպարգևսն տիկնոջն և մանկանց նորա. սոյնպէս սպարապետին Մանուէլի ունէին պարգևս, և աւագացն և տանուտերացն, իւրաքանչիւր մեծամեծացն Հայոց։ Եւ յորժամ տեսանէին զմեծարանսն և զսէր թագաւորին Պարսից տիկինն Զարմանդուխտ և սպարապետն Հայոց Մանուէլ՝ մեծաւ խնդութեամբ մեծարէին զՍուրէնն։ Տային զաշխարհն Հայոց ի ձեռն Սուրենայ, և հնազանդէին հրամանաց թագաւորին Պարսից և կարգէին թագաւորին Պարսից յաշխարհէն Հայոց հարկս՝ տալ ընծայս և պատարագս։ Սոյնպէս և մարզպանին Սուրենայ հասս և կօշիկս և զգեստս զառճկացն, սոյնպէս և տասն հազարացն զարման և կերակուր ըստ պիտոյիցն։ Եւ սրտի մտօք արարին իւրեանց թիկունս, և տէր գտեալ իւրեանց զարքայն Պարսից՝ կային ի ծառայութեան նորա։ Եւ տէպ տէպ դեսպանք թագաւորին Պարսից երթային և գային յերկիրն Հայոց, մեծապէս զմտերմութիւն միամտութեանն որ էրն՝ ցուցանէին թագաւորին, և նա տէպ առաքէր պարգևս տիկնոջն Զարմանդխտոյն, սոյնպէս և զօրավարին Հայոց Մանուէլի։ Յոյժ մտերիմ և սիրելի լինէր Մանուէլ թագաւորին Պարսից, և մեծապէս փառաւորեալ աւագանայր ի նմանէն» (Բուզ. Ե. Լէ.)։

22. Ըստ Բուզանդայ՝ Մերուժան տեսնելով զՄանուէլ այնպէս փառաւորեալ՝ կը գրգռէ զնա քսութեամբ, որպէս թէ Շապուհ կամէր տալ սպանանել զնա ի ձեռն Սուրենայ։ Մանուէլ որ գիտէր Շապհոյ նենգաւորութիւնը՝ կը հաւատայ Մերուժանայ բանսարկութեան և զայրանալով կը հալածէ զՍուրէն իւր տասն հազարաւ, կեանքը միայն շնորհելով նմա։ Շապուհ երիցս զօրք կը ղրկէ Մանուէլի վրայ, բայց Հայք կը յաղթեն։ Մերուժան վերջին անգամ կու գայ աւելի մեծ բանակաւ, բայց յաղթուելով կ'սպանուի։ Մանուէլ, Վարազդատայ մերժման թուականէն հաշուելով՝ իբր եօթը տարի կը վարէ զիշխանութիւնն, ի մեծ պատուի ունելով զտիկինն Զարմանդուխտ և երկու արքայազուն իշխաններն զԱրշակ և զՎաղարշակ, և յետ ամուսնացուցանելոյ զնոսա մեծ շքեղութեամբ՝ կը մեռնի, յորդորելով զորդի իւր զԱրտաշիր կալ մնալ հաւատարիմ իւր բնիկ տերանց Արշակունեաց, պատմելով իւր հաւատարիմ վաստակն առ ազգն, և պատուէր տալով չառնել կոծ ի վերայ իւր։ Այլ, բմբէ, Մանուէլիւ կը մարի նաև հայ ազգին կեանքը։ Բարեպաշտն Թէոդոս, ինչպէս յիշեցինք, ցանկալով իւր ընդարձակ երկիրներուն վրայ յաւելուլ պատառիկ մի ևս ի Հայոց՝ կը հաճի Հայաստանի բաժանման, և իբրև երկու տարի ետքը (386),

յետ մահուն Արշակայ, որ գոհ եղած էր թագաւորել այն փոքրիկ մասին վրայ, մինչ Խոսրով ոմն առաւ պարսկական մեծագոյն մասին թագաւորութիւնը՝ կը ջնջէ իւր բաժնէն հայ թագաւորութեան անունը, չտալով յաջորդ Արշակայ.—«Մերուժանն Արծրունի իբրեւ տեսանէր զայն ամենայն փառս աւագութեան, որովք շքեղացոյց զՄանուէլ արքայն Պարսից, զի որպէս զեղբայր կամ զորդի այնպէս պատուեաց զնա՝ յոյժ նախանձէր, և խնդրէր նա հնարս հնարել, հանել զնա յաչաց թագաւորին Պարսից։ Եւ իբրեւ այլ հնարս ինչ ոչ կարէր գտանել դուրս նենգութեանց առ Պարսիկս ընդ որ մտցէ՝ ապա խորհեցաւ նա ընդ միտս իւր զնենգութիւն չար, և կեղծաւորութեամբն իւրով զգործ իւր յառաջացոյց։ Զի իբրեւ նայեցաւ ի միամտութիւն զօրավարին Մանուէլի՝ սկսաւ նախ հպատակութեամբ զմիտսն գողանալ. նախ մտերմութեամբ հաճել զմիտս նորա, ապա զանձն իւր հոգածու և խնամակալ երևեցուցանէր նմա։ Ապա եկեալ գուշակութիւն առնէր նմա սուտ ի քմաց իւրոց, թէ Գիտասջիր դու, ո՛ Մանուէլ, զի դեսպանք լեալ է յարքայէն Պարսից, յաղագս քո բերեալ ունին հրաման առ Սուրէնն, զի զքեզ կալցին կապեսցեն, կամ աստէն սպանցեն, կամ ոտիւք և ձեռօք և պարանոցաւ կապելով մեծաւ զգուշութեամբ տանել առ թագաւորն Պարսից։ Արդ դուն գիտա, տես խորհեաց ընդ միտս քո, թէ զինչ գործեսցես։ Եւ եղև յորժամ լուաւ զայս Մանուէլ՝ կայր զարմացեալ հիացեալ ընդ միտս իւր և ասէր, թէ Զիք իմ յանցուցեալ առ Պարսիկս. էր աղագաւ զայն առնիցեն մեզ։ Եւ ասէ Մերուժանն ցՄանուէլ. Ես ճշգրտեցի և հաստատեցի, զի իրքդ այդ ստոյգ են. ես մեծաւ սիրով և հոգաբարձութեամբ գուշակ եղէ քեզ։ Իբրեւ հաւատաց բանին Մերուժանայ Մանուէլն և կործեաց ի միտս իւր, թէ ստոյգ են բանքն այն զոր լուաւ՝ ապա զունդ կազմեաց և զօր բազում առ ինքն կուտեաց զօրավարն Հայոց Մանուէլ։ Եւ մինչդեռ խաղաղութեամբ Սուրէնն իւրով բանակաւն բանակեալ էր յանհոգս յանկարծս և աննենգ խաղաղութեամբ, իբրեւ ոչինչ գոյր ի մէջ նոցա նենգութիւն դաւաճանութեան ըստ համբաւահան չարագործն Մերուժանայ՝ յանկարծումն յեղակարծումն զօրավարն Հայոց Մանուէլ հասանէր անկանէր ի վերայ բանակին Սուրէնայ, և զատոն հազարան զՊարսիկսն միանգամայն կոտորէր։ Բայց զմարզպան Սուրէնն միայն արձակէր, շնորհել զարևն իւր պարգև տրարեալ։ Եւ զարմացեալ Սուրէն ընդ իրսն ընդ այնոսիկ, թէ ընդէր, էր աղագաւ նա զայս արդեւք գործեաց, և ասէ Մանուէլ ցՍուրէն. Զքեզ վասն բարեկամութեան սիրոյն արձակեալ, ողջանգամ երթիջիր զճանապարհս քո, այլ ես ի Պարսկաց ի խաբս այլ

ոչ անկայց: Եւ ինքն Մանուէլ զգունդն կազմէր և զօրսն պատրաստէր, և գիտաց այնուհետև, թէ մեծ թշնամութիւն յարոյց և մեծ գրգռութիւն ընդ թագաւորին Պարսից: Եւ յայնմհետէ զօրավարն Հայոց Մանուէլ հանդերձ ամենայն գնդաւն զտիկինն Զարմանդուխտ զկին թագաւորին Պապայ ի գլուխ առեալ՝ ի տեղի թագաւորացն շրջեցուցանէին, և ինքեանք կային ի մարտի պատերազմին յաղագս շինութեան աշխարհին Հայոց յամենայն կողմանց ընդ թշնամիս և ընդ սահմանակիցս որ շուրջ զիւրեամբք էին, և առաւել ընդ զօրսն Պարսից զամենայն աւուրս կենաց իւրոց: Բայց Մերուժանն գնայր անդր առ թագաւորն Պարսից ամբաստան զՄանուէլէ: Ապա թագաւորն Պարսից արձակեաց ի վերայ Հայոց զԳումանդ Շապուհ՝ գալ առնուլ աւերել զերկիրն: Եկին հասին նոքա մինչև ի սահմանսն Հայոց որ յԱտրպատական կուսէն էր: Իբրև զայն լսէր զօրավարն Հայոց Մանուէլ՝ գումարէր զզօրսն իւր ըստ բազում ժամանակին որչափ և եկն ի ձեռն իւր՝ քսան հազար, և ճեպեաց Մանուէլ և եհաս ընդդէմ գնդին, և արկանէր ի սուր զզօրսն Պարսից, և զԳումանդ Շապուհն սպանանէր, և դարձեալ ելանէր մեծաւ յաղթութեամբ: Ապա յետ այսորիկ Վարազ անուն զօրավար թագաւորին Պարսից գայր հասանէր յերկիրն Հայոց տալ պատերազմ ընդ Մանուէլի սպարապետին և ընդ ամենայն գնդին Հայոց: Ապա կազմէր պատրաստէր սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ հեծեալս սպառազէնս տասն հազար, և եկեալ տայր պատերազմ ընդ Վարազայ: Հարկանէր և սատակէր, ջնջէր զնոսա ի միջոյ, և զինքն զՎարազն սպանանէր. թափէր զկապուտ աւարին, զզարդ և զզէն զօրացն, և դառնայր մեծաւ խաղաղութեամբ: Յետ այսր ամենայնի առաքեաց թագաւորն Պարսից զՄռիկանն ի վերայ երկրին Հայոց: Եկն եհաս նա հանդերձ ամենայն բազմութեամբ զօրաց իւրոց յերկիրն Հայոց, և էառ զկողմն մի երկրին Հայոց, և բանակեալ էր յԱրտանդան դաշտին: Անկանէր ի վերայ բանակին Մանուէլն ի գիշերի, և անդէն առհասարակ ընդ սուր հանէր զամենեսեան ի դակիշն, և զՄռիկանն սպանանէր, և ոչ զմի ոչ ապրեցուցանէր, և թափէր աւար բազում» (Բուզ. Ե. ԼԸ—ԽԱ.):

Այս պատերազմներէն ետքը եղաւ միւս ևս և մեծ յարձակումն Պարսից, առաջնորդութեամբ Մերուժանայ: Բուզանդ այս մեծ պատերազմին պատմութենէն առաջ կը յիշէ եօթնամեայ խաղաղութեան ժամանակ, իբրև ժամանակ յանձանձչութեանն Մանուէլի, և արդարև Վարազդատայ մերժման թուականէն (377) հաշուելով մինչև 383, որ է հաւանականագոյն թուական մահուանն Մանուէլի՝ կը գտնենք եօթը տարի: Ահա Բուզանդայ խօ-

գլուխը, որ ունի Մանուէլի յանձանձչութեան ժամանակին համա-
ռօտ պատմութիւնը մինչև ի բաժանումն թագաւորութեանն. «Եւ
յետ այսորիկ (այսինքն յետ վանելոյ Մանուէլի զՍուրէն և Պարսից
զերբեակ յարձակումն, ինչպէս նաև Մերուժանայ պատերազմը զոր
պիտի պատմենք) ամս եւթն, և այլ ոչ ևս յաւելին զօրքն Պար-
սից ժտել ինչ մտանել ի սահմանս Հայոց, և եղև խաղաղութիւն
երկրին։ Եւ ժողովեցան առ զօրավարն Մանուէլ ամենայն ցրուեալք
երկրին, եկին անկան այր յայր, և էին բանակեալ յանհոգս, և զօ-
րավարն Մանուէլ առաջնորդէր նոցա։ Եկին ապա և մնացորդք ի
տանէն Սիւնեաց, պատանեակք երեք մնացեալք ի կոտորածէն Պար-
սից, առ զօրավարն Հայոց Մանուէլ, և անուանք նոցա՝ միումն Բա-
բիկ, միւսումն Սամ և միւսումն Վաղինակ։ Եւ ընկալաւ զնոսա
զօրավարն Հայոց Մանուէլ, և եղև նոցա օգնական, և դարձ արար
նոցա յերկիրն իւրեանց. և կացոյց տէր զԲաբիկ ի վերայ երկրին
և զերկուսն ևս ըստ իւրաքանչիւր չափու, և էր Բաբիկ նիզակա-
կից զամենայն աւուրս կենաց նորա։ Նոյնպէս յամենայն գաւառս
կացուցանէր սպարապետն Հայոց Մանուէլ նահապետս և տեարս
գաւառաց գաւառաց, և առաջնորդէր ամենեցուն խաղաղութեամբ։
Եւ ամենայն երկիրն Հայոց էր ի խաղաղութեան ընդ հովանեաւն
Մանուէլի զամենայն աւուրս կենաց նորա. ամենայն մարդիկ երկ-
րին Հայոց վայելէին յաւուրս իւրեանց, ուտէին և ըմպէին և ուրախ
լինէին զայն ամս եւթն տէրութեանն Մանուէլի, մինչև ի բաժա-
նումն երկրին Հայոց և ի քակտումն թագաւորութեանն» (Բուզ.
Ե. ԽԲ)։

Այս միջանկեալ գլուխը դնելով կու գայ Բուզանդ պատմել
Պարսից վերջին և մեծ յարձակումն ի վերայ Մանուէլի առաջնոր-
դութեամբ Մերուժանայ, որ և կ'սպանուի այս պատերազմին մէջ.—
«Ապա Մերուժանն Արծրունի փախուց ևս յաւուրսն Արշակայ ար-
քային լեալ էր ապստամբ ի թագաւորէն Հայոց, ինքնակամ ձեռս
տուեալ յարքայն Պարսից, և զօրէնս մազդեզանցն յանձն առեալ էր
և ուրացեալ զհաւատոյն քրիստոնէութեան, և բազում անգամ լեալ
էր առաջնորդ զօրացն Պարսից, և մեծամեծ չարիս անցուցեալ էր
ընդ երկիրն Հայոց և տակաւին էր նա առ թագաւորին Պարսից։
Ապա գրգռեաց Մերուժանն այս զթագաւորն Պարսից, և առեալ
զօրս բազումս ի նմանէ՝ եկն եհաս յերկիրս Հայոց։ Եւ էր սորա
մեծաւ պարծանօք պարծեցեալ առ թագաւորին Պարսից, զի կամ
կալեալ կապեալ տարցի զՄանուէլն առ թագաւորն Պարսից, և կամ
զգլուխն հատեալ զառաջեաւ բերցէ թագաւորին Պարսից։ Գայր
հասանէր ամենայն բազմութեամբ զօրացն Պարսից ի գաւառն

Կորճէից, և ինքն իւրով սեպհական գնդաւն, հրոսիւն ժողովելով մեկնէր զատանէր յԱրեաց գնդէն: Կամէր յանպատրաստից գալ անկանել ի վերայ Մանուէլի, միայն անձամբ անուն առնուլ, և ինքեամբ միայն կատարել ջանայր, ի պարծանս իւր անձամբ վճարել զգործ պատերազմին: Վասն այսորիկ այսպիսի բանս խօսէր ընդ զօրավարսն Արեաց գնդին և ասէր, եթէ Ես նախ երթայց լրտեսեցից, և զձեզ տարայց ի վերայ, զի այսպէս դիւրաւ լիցի ի բուռն արկանել զնա: Եւ ինքն զիւր գունդն առեալ՝ խաղայր գայր հասանէր յերկիրն Կող գաւառին և ինքն զտեղի առեալ՝ առնէր տես ի բանակն Մանուէլի: Եւ գային հասանէին լրտեսքն և գիտէին զՄանուէլ, զի էր բանակ նորա ի Բագրեւանդ գաւառին ի Բագուան աւանի, որ է մօտ յաւերական Զարեհաւան քաղաքի: Եկին դիտեցին դէտքն զբանակն Մանուէլի, և զերամակ ձիոց բանակին յորում վայրի կային, և չոգան տանել զրոյց նմա: Եւ խորհեցաւ նա առնուլ զերամակ բանակին. այնմ ուշ առնէր, և խնդալից եղեալ ասէր պարծելով առաջի իւրոց զօրացն, թէ Վաղիւ յայս ժամ իմ կալեալ կապեալ ընկեցեալ զՄանուէլն, և յանդիման նմին զկին նորա Վարդանոյշ խայտառակեալ իցէ: Եւ չու արարեալ կատարել զգործն՝ յոր փութացեալ կամէր հասանել: Եւ էին ի վայրսն, ընդ որ գայ էր գնդին ընդ ճանապարհն՝ լերինք ինչ, որում ի բնակչացն Եղջերք կոչեն: Եւ մինչդեռ գայր Մերուժանն ի ճանապարհի գնդաւն իւրով՝ դիպեցան նմա ուղևորք, յորս հարցանէր Մերուժանն և ասէր. Ճանապարհս ի Բագրեւանդ ընդ որ երթայ: Եւ ուղևորացն տուեալ պատասխանի՝ ասացին. Ճանապարհ ընդ Եղջերս է: Եւ մեծապէս խորհեաց Մերուժանն ընդ միտս իւր, տրտմեցաւ ընդ բանսն, սակայն տայր հրաման չարաչար քարշել զուղևորսն և ծեծել: Եւ ինքն անցեալ ըստ ուղին իջանէր ի հմայս քաղդէութեան, դրուէս հարցանէր. և ոչ գոյր նմա յաջողակ յուռութ կախարդանացն յոր յուսայրն: Ապա տրտմութեամբ մեծաւ զիւր դէտսն առաջի արկեալ՝ յերամակակայն արշաւէր, զի հնար լիցի նմա նախ ըմբռնել: Եւ հասեալ ի տեղին՝ զերամակ ձիոցն ոչ գտանէր, վասն զի յԱստուծոյ այնպէս խնամ եղև իրաւունք պատրաստութեան Հայոց գնդին, զի սպարապետին Մանուէլի ամենայն Հայոց գնդին տուեալ էր ժամ յորս երթալոյ. վասն այսորիկ դիպեցաւ զի զամենայն երամակն ի շէն էր ածեալ. և նոքա դեռ որսոյ պատրաստեալ էին ի հեծանել: Եւ անդ զուժաւոր հասանէր առ զօրավարն Հայոց Մանուէլ, թէ Գիտա, տես զի Մերուժանն Արծրունի հասեալ է բազում գնդաւ ի վերայ քո: Ապա կազմեցան ըստ նմին, պատրաստեցան ամենայն զօրքն Հայոց գնդին, և Մանուէլ սպարապետն. և մտին առաջի սուրբ ոսկերացն

Յովհաննու որ կայր յայնմ գեւղ, ուխտաւոր լինէին և խնդրէին յԱս-
տուծոյ, զարդար դատաւորն յօգնականութիւն կոչէին լինել նոցա
այցելու օգնական։ Եւ անտի ի դուրս ելեալք՝ զաւրքն Արշակունի
հանդերձ մանկամբք Արշակաւ և Վաղարշակաւ գնաց և զիւրեանց
կանանին ընդ նոսա արձակեալ՝ յամուրն յուղարկէին ի լեառնն
մեծ որ անուանեալ կոչի Վարագ։ Եւ զմանուկն Արտաւազդ որդի
Վաչէի ընդ կանանին տայր հրաման երթալ Մանուէլ. իսկ նա ոչ
հնազանդէր, չառնոյր յանձն։ Եւ էր նա ի տիոց տղայ, և ըստ ման-
կութեանն օրինի, ըստ կրօնից (սովորութիւն) Հայոց, որպէս օրէն
էր զգլուխ մանկտւոյն գերծուլ՝ սոյնպէս ի ժամանակին գերծեալ
էր զգլուխ մանկանն Արտաւազդայ, և ցցունս էր թողեալ և գէս
արձակեալ։ Ապա իբրև ոչ հաւանեցաւ նա ընդ կանանին երթալ՝
մտրակ ի վեր առեալ Մանուէլի տանջէր զմերկ գլուխ Արտաւազ-
դայ, սաստէր նմա չերթալ ի պատերազմ վասն մանկութեան ժա-
մանակին տիոց։ Իսկ նա առ նորա ականէ գնաց ընդ նոսա. բայց
ապա յետոյ վառեալ կազմեալ պատրաստէր երթալ զկնի պատե-
րազմին։ Այլ յորժամ զաւրքն ամենայն աղխին յուղարկեցին յա-
մուրն՝ ինքեանք վառեալք կարգեալք կազմեալք ի պատերազմն, ի
մի վայր գումարեալք, նշանս արձակեալք, դրօշս փողփողեալս, ընդ
Գեւղն աւան ի դուրս ելանէին ընդ կողմն արեւմտից. և անդէն
ընդ առաջ ելանէր նոցա Մերուժան իւրով գնդաւն որ եկեալ էր
ի վերայ նոցա։ Եւ չարագործն մեղաւորն Մերուժան զիւր զգէնն
և զարդ և զնշանն սաղաւարտին բազմաց եդեալ էր զնոյն օրի-
նակ, և զբազումս յիւր կերպարանեալ էր ի մէջ իւրոյ գնդին, և
ինքն զիւր նշան ոչ ունէր։ Սակայն Մանուէլ իբրև տեսանէր զնո-
ցա գունդն՝ հանդերձ իւրով գնդաւն առիւծաբար վարազօրէն յար-
ձակեալ ի նոցա գունդն խառնեցաւ. ուշ եդեալ այնոցիկ որ զՄե-
րուժանայ նշանսն ունէին՝ համարէր եթէ զՄերուժանն սպանա-
նիցէ։ Եւ զբազում ախոյենից հատանէին զգլուխս, որք զնոյն զնո-
րին Մերուժանայ ունէին զնշանս, և տեսանէին զի չէր նա։ Ապա
խօսել սկսանէր սպարապետն Մանուէլ ընդ իւրում նիզակակցին
Բաբկան և ասէր. Տեսանես քանի խաբեաց զմեզ կոխարդն Մե-
րուժան. այլ իմ և նորա յառաջու շատ լեալ ի միոջ վայրի ի հաշ-
տութեան ժամանակի՝ նշան մի գիտեմ ես զնորա, զի յորժամ ի
ձի հեծեալ էր՝ երան բարձի նորա ոչ յանձին և ի ծունկն ոչ հա-
սանէր, այլ ի բացեայ կայր ի ձիոյ անտի։ Արդ եկ, զոյգ հասարակ
այսմ նշանի ուշ դիցուք, թերևս ճանաչել կարասցուք զգիւթ քու-
ւյն զկախարդն։ Ապա զոյգ միտ եդեալ երկոցունցն, և տեսեալ
զՄերուժանն՝ այնու նշանաւ ծանեան. տեսին զի յայլակերպս լեալ

էր, զի՛ւր նշանսն ոչ ունէր։ Ապա ձայն տուեալ յառաջ կոչեաց զՄերուժանն Մանուէլ և ասէ ցնա. Ա՜յ կախարդ, ցե՞րբ խաբես զմեզ, և վասն քո և զայլս ևս տաս ջարդել. այլ մեք ծանեաք զքեզ զի ուադիկ կաս, և ապրել քեզ չէ՛ք հնար այսօր ի ձեռաց մերոց, զի այսօր էած կատարեաց զչարիս քո տէր Աստուած ի գլուխ քո և մատնեաց զքեզ Տէր ի ձեռս մեր։ Իսկ յորժամ զայն լսէր Մերուժանն՝ անդէն փաղփաղակի նիզակ առեալ, յառաջ խաղացեալ ախոյեան ելանէր Մանուելի։ Սակայն յորժամ հարկանէին երկոքեան զմիմեանս նիզակօքն, քանզի երկոքեան արքն յաղթք էին՝ ի ձիոյն յերկիր անկանէին, և անդէն նիզակակիցն Մանուելի Բաբիկ տէր գաւառին Սիւնեաց հասանէր, նիզակաւ ի վերուստ ի վայր ի կողին կարէր (զՄերուժան) ընդ գետինն, և ոչ կարէր յառնել։ Իսկ զսպարապետն Մանուէլ իւր փարաւանդասպասքն յերիվարն հանէին, և զՄերուժանայ զգլուխն ի բաց հատանէին. և ամենայն զօրացն լինէր փախուստ, իբրև տեսին թէ Մերուժանն մեռաւ։ Եւ աստի գունդն Մանուէլեան խրախոյս առեալ յարձակեցան զհետ Մերուժանեան գնդին. հարկանէին սատակէին զնոսա, և զմի ի նոցանէն ոչ ապրեցուցանէին։ Այլ մանուկն Արտաւազդ ի Մանուելէ գաղտ եկեալ էր ի ճակատն. փառեցաւ կազմեցաւ և եմուտ զանխուլ ի Մանուէլեան գնդէն առ ափն Եփրատ գետոյ՝ եհար սատակեաց ի Մերուժանեան գնդէ անտի անթիւ բազում սպառազէնս։ Եւ նշանակիր մի ի Մերուժանայ իբրև ետես զԱրտաւազդն՝ յընչացք երաց, զի տեսանէր զնա պատանեակ մի կայտառ անմօրուս, երեսօք գեղեցիկ, ապա զնշանն զնիզակաւն սպատեալ յարձակեցաւ ի վերայ նորա։ Իսկ նա ընդ գիրկս մտեալ հարկանէր զայրն նետիւ, և կարանէ ի կարան թափ հանեալ զնետն ի ցամաք ընկենոյր զնա։ Եւ առեալ զնիզակն, զհետ մտեալ փախստէիցն, ընդ սուր հանեալ զզօրսն Մերուժանայ՝ աւելի քան զամենեսեան Արտաւազդ որդի Վաչէի մանուկն կոտորէր. և ինքն մեծաւ անուամբ և բազում աւարաւ դառնայր. և զօրքն բերէին զկապուտն զոր թափէին ի զօրաց թշնամեացն։ Բայց յաւուր յայնմիկ լինէր մեծ վնաս անհնարին. զի զՎաչէ, զերկրորդն Մանուելի՝ ձին զուլամբ երթեալ սպանանէր. սոյնպէս և զԳարջոյլ Մաղխազձին տարեալ սատակեաց, վասն զի ի սրմուղ թերավարժ ձի հեծեալ էին երկոքին։ Իբրև դառնայր Մանուէլ երթալ ի բանակն տիկնոջ՝ տանէին ընդ ինքեանս զգլուխն Մերուժանայ, և Սամուէլ որդին Վահանայ ոչ գիպեցաւ ընդ Մանուելի, զի դարձաւ նա ի բանակն։ Սակայն յորժամ տեսին զգլուխն Մերուժանայ կանայք

բանակին Մանուէլի՝ մեծաւ աղաղակաւ ճիչ բառնային, զի նոքա այսպէս համարեցան թէ այն գլուխ Սամուէլի որդւոյ Վահանայ իցէ, վասն զի նման միմեանց էին երկոքեան, Մերուժանն և Սամուէլ։ Ապա տեսին զգլուխն Մերուժանայ, զի ի ցիցն երկայն կախեալ էր, յայնժամ ծանեան եթէ չէ Սամուէլայ, այլ Մերուժանայ Արծրունւոյ։ Ապա եկին բերին զմարմին Վաչէի ի բանակ անդր, հօրն Արտաւազդայ, և զմարմինն Գարջուլայ Մաղխազու Խռախոռունւոյ, եդին աշխար մեծապէս և լացին զնոսա։ Եկին բերին զայրն նշանակիրն Մերուժանայ, զոր եհարն Արտաւազդ նետիւն, և ամենայն ոք զարմանայր ընդ այն, զի նետն թափ կարանէ ի կարան անցեալ էր. իբրև տեսին զնա՝ (Արտաւազդ) ապրեցաւ ի մահուանէ։ Այլ իբրև լուան զօրքն Պարսից, զոր թողեալ էր Մերուժանայ ի գաւառն Կորճէից, թէ սատակեցաւ Մերուժանն և կորեաւ գունդն որ ընդ նմա՝ և ինքեանք ի Պարսից երկիրն փախստական գնացին. և Հայոց երկրին լինէր խաղաղութիւն բազում» (Բուզ. Ե. ԽԳ.)։

Չիք տարակոյս, թէ ինչպէս Բուզանդայ պատմութեան ուրիշ մասերուն, մանաւանդ պատերազմի նկարագիրներուն մէջ՝ նոյնպէս ի սոսին կան անվնաս աւելաբանութիւններ, սակայն չէ անհաւանական, թէ Շապուհ փորձեց քանիցս անգամ նուաճել զՀայս զինուք յետ մերժուելուն Սուրէնայ, մինչև մահուամբ Մերուժանայ բանսարկուի վերցաւ գրգռութիւնն, և յարձակմունք դադարեցան։ Այս վերջին պատերազմին պատմութեան մէջ յիշուած մանր պարագաներէն, ինչպէս Գարեգնի Ռշտունւոյ սպանման, Մանուէլի և Մերուժանայ մենամարտութեան, Արտաւազդայ մանկան քաջութեան,—որոյ վասն և ազատեցաւ ի մահուանէ, որում կը թուի թէ արժանի էր ըստ զինուորական օրինաց՝ հակառակ հրամանաց սպարապետին մտնելուն համար ի ճակատ—կանանց կոծելուն զՍամուէլ Մամիկոնեան, զգլուխն Մերուժանայ վասն նմանութեանն կարծելով գլուխ Սամուէլի, այլովքն հանդերձ, պարագաներ զորս այնպէս մանրապատում կ'ընէ Բուզանդ՝—կը թուի թէ ականատես էր պատմիչն այս պատերազմին դիպաց։ Արդարև զարմանալի է. ինչ բաներ որ կը թուին չնչին՝ կը յիշէ Բուզանդ, ինչպէս Մերուժանայ սրունից հեռի մնալն երիվարէն ի ձիավարութեան, պատանեկաց գլուխը գերծուլ և ցցունս թողուլն սախնի Հայոց ըստ հին արևելեան սովորութեան, և այլ սոցին նմանք՝ են արդարև նշան անմեղ հաւատարմութեան մեր միամիտ պատմչին։

23. Բուզանդայ Ե. դպրութեան վերջին (ԽԳ) գլուխն ունի

զպատմութիւն Մանուէլի թագաւորեցուցանելոյն զորդիս Պապայ զԱր-
շակ և զՎաղարշակ, հիւանդանալուն և մահուան։ Մանուէլ յետ
ամուսնացուցանելոյ զերկոսին Արշակունի (որքայազուն) իշխանս
տալով առաջնոյն (Արշակայ), որ էր երէցն, զդուստր իւր Վարդան-
դուխտ, և երկրորդին՝ զդուստր ասպետին Բագրատունւոյ, և առ-
նելոյ նոցա փառաւոր հարսանիս ի Կարին՝ կը թագաւորեցուցանէ
զնոսա, զՎաղարշակ կրտսերն առնելով երկրորդ նմա, և ինքն
հիւանդանալով կը մեռանի, ինչպէս արդէն յիշեցինք՝ ազնիւ խրատ-
ներ տալով իւր որդւոյն Արտաշրի, և իւր թաղման համար տալով
մասնաւոր պատուէրներ, և հանելով յընչից իւրոց ամբաւ ողոր-
մութիւնս աղքատաց, և բազում գանձս (գումար) եկեղեցեաց՝ կը
մեռանի ի մեծ սուգ համօրէն հայ ազգին.—«Ապա յետ այսր ամե-
նայնի զօր արարեալ զօրավարն սպարապետն Մանուէլ, հանդերձ
Արշակունի տիկնաւն և մանկամբքն երկոքումբք Արշակաւն և Վա-
ղարշակաւ, հանդերձ ամենայն բանակաւն Հայոց, մեծամեծ աւա-
գայնովն նախարարօքն երևեալ հասանէր ի գաւառն Կարնոյ, և
ամենայն տանուտեարք ընդ նմա։ Եւ տայր սպարապետն Մա-
նուէլ զդուստր իւր Վարդանդուխտ կին Արշակայ մանկանն Արշա-
կունւոյ, և փեսայ իւր առնէր զնա։ Առնէր հարսանիս և եղբօր
նորին Վաղարշակայ, և տայր նմա զդուստր ասպետին Բագրա-
տունւոյ ի Սպեր գաւառէ, որ թագադիրքն թագակապքն լեալ էին
ի բնմէ ազգին թագաւորութեանն Արշակունւոյ, և մեծապէս արա-
րեալ զհարսանիսն ամենայն երկիրն Հայոց՝ ցնծացեալք խնդացեալք
էին ընդ այն մեծ խնդութիւն ուրախութեան։ Ապա յետ այսորիկ
դարձեալ ի մի վայր ժողովեալ զաշխարհ ամենայն զմարդիկ երկրին
Հայոց՝ թագաւորեցոյց զմանուկն Արշակ երկրին Հայոց, և զՎա-
ղարշակ երկրորդ նմին։ Եւ ընդ այն ևս ցնծացեալ առնէին մեծապէս
ուրախութիւն և ցնծութիւն ամենայն երկիրն Հայոց։ Ապա յետ
այսորիկ հիւանդացաւ սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ
զախտ հիւանդութեան մահու, և կոչեաց զորդի իւր զԱրտաշիր
և ետ նմա զտէրութիւն իւր և զսպարապետութիւն զօրավարու-
թեանն իւրոյ։ Եւ պատուիրէր նմա հնազանդ հպատակ կալ ար-
քային Արշակայ և լինել միամիտ, ջանալ վաստակել և տալ պատե-
րազմ փոխանակ աշխարհին Հայոց, որպէս քաջ նախնիքն ի վերայ
աշխարհին մտադիւր մեռանել։ Զի, ասէ, առ Աստուած այն արդա-
րութիւն մեծ է և ընդունելի, և ոչ Աստուած թողու ի ձեռայ
յորժամ այնպէս լինիք։ Անուն քաջութեան յերկրի թողուք և զար-
դարութիւն յերկինս ընծայեցուցանէք. և ամենևին ի մահուանէ մի

երկնչիք, այլ յուսասջիք յայն որ զամենայն արար և հաստատեաց.
և զնենգութիւն և զկեղծութիւն և զչարութիւն յանձանց ձերոց ի
բաց արարէք, և զտէր Աստուած սրբութեամբ և միամտութեամբ
պաշտեցէք, և ի վերայ աստուածապաշտ աշխարհի Համարձակու-
թեամբ մեռարուք, զի այն ինքն մահ վասն Աստուծոյ է, փոխա-
նակ եկեղեցեաց նորա և ուխտի նորա, և ի վերայ բնակ տերանց
աշխարհիս Արշակունեաց: Եւ յետ այսորիկ գրեաց Հրովարտակ առ
թագաւորն Յունաց, և նմա յանձն արար զաշխարհս Հայոց և
զԱրշակ արքայ: Եւ յետ այսորիկ իբրև միահամուռ ժողովեալ կային
շուրջ զնովաւ, և իբրև կայր հիւանդ ի մահիճս իւր, անդ թագա-
ւորն Արշակ և անդ Վարդանդուխտ կին թագաւորին, և անդ ամենայն
աւագք և մեծամեծք. և նախարարք Հայոց այր և կին առհասարակ
ամենայն երևելի մարդիկ՝ ապա եբաց Մանուէլ զամենայն անդամս իւր
առհասարակ առաջի ամենեցուն, մերկացաւ և եցոյց զի քան զդրամ
խայծ ոչ գտանէր ողջ ի մարմնի նորա զոր խոցեալ էր ի պատե-
րազմի:... Սկսաւ լալ և ասել, թէ Ես ի մանկութենէ համակ սնայ
ի պատերազմունս, և մեծաւ քաջութեամբ զամենայն վէրս յանձն
իմ առի. և ընդէր ոչ եհաս ինձ մեռանել ի պատերազմի. քան
զօրէն անասնոյ մեռելոյ եղէ: Զի լաւ էր ինձ եթէ ի պատերազ-
մի մեռեալ էի ի վերայ աշխարհի, զի մի զեկեղեցիս և մի զուխտ
Աստուծոյ առ ոտն կոխիցեն: Սակայն և ի վերայ Արշակունեաց բնիկ
տերանց աշխարհիս, և ի վերայ կանանց և ի վերայ որդւոց մերոց
և ի վերայ աստուածապաշտ մարդկանս և ի վերայ եղբայրութեան
ընկերութեան և մտերիմ բարեկամութեանն զի՛ էր եթէ հասեալ
էր ինձ մեռանել. թէպէտ շատ զանձնս յանդուգն վարեցի՝ զվա-
թար մահս մահճացս եհաս ինձ մեռանել: Զայս և բազում և աւե-
լի քան զոյնս խօսեցաւ առաջի Արշակայ արքայի և առաջի ամե-
նեցուն և աղաչեաց ևս զթագաւորն Արշակ և ասէ. Իմ Աստու-
ծով կեցեալ և ջերմ քրիստոնէութեամբ. մի յանկարծ իբրև հեթա-
նոսս կոծ կամ աշխարանս ոք անյուսութեամբ դնիցէ ինձ: Զի որ
միանգամ յուսոյ յարութեան ակն ունին միւսանգամ կենդանու-
թեան և գալստեանն Քրիստոսի՝ չէ պարտ լալ զնոսա: Այլ իմ
ցայժմ յուսով երկիւղիւ կեցեալ, բայց դուք մի թիւրիցէք ի պատ-
ուիրանացն Աստուծոյ. աւելի զարդարութենէ փոյթ արասջիք, ևս
առաւել զօրութենէ: Զի մեզ մեծ Հայրապետն Ներսէս զայս
համակ պատուիրէր, և ինքն յամենայն ժամ ի կենդանութեանն
զայն գործէր, և այլոց ուսուցանէր առնել. զի ողորմէր աղքատաց,
տնանկաց, գերեաց, ամայեաց. օտարաց, պանդխտաց. զի այսպէս
առնէր նա. Քան զօրութիւն առնել, կամ քան զտուրս տալ՝ այլ

ինչ մեծ և պատուական առաջի Աստուծոյ չիք։ Եւ զաշխար կամ զկոծ գնել մեռելոց զառն մեզս համարէր, և յամս իւր եհատ զայս յերկրէս Հայոց, զի յաւուրս նորա ոչ ոք իշխէր գնել կոծ կամ աշխարանս. այլ յետ մահու նորա անմիտ մարդիկ համարձակեցան զայս գործել։ Այլ վասն իմ ոք կոծ մի դիցէ. եթէ դնէ ոք՝ նա լիցի դատապարտ. այլ ոչ եթէ յետ մահուն իմոյ իմ իշխանութիւն ինչ է սաստել՝ զի զոր ոչն կամիմ մի արասցեն, այլ ինձ յիշատակ արասցէ որ զիս սիրէ։ Ի պատերազմի ի մահուանէ մի երկնչիք, ուր ես ոչ մեռայ, զի առանց Աստուծոյ ինչ ոչ լինի։ Զայս և զայսպիսի և որ ինչ այս բանից նման են բանք՝ խօսեցաւ։ Բազում և անչափ գանձս աղքատաց և կարօտելոց բաշխէր, իւրովք ձեռօք մատակարարէր և բազում մասունս յընչից իւրոց տայր յեկեղեցիս և ի վկայանոցս, և բազում գանձս տայր ցքահանայապետսն, և տալ ինքն մեռանէր։ Այլ իբրև մեռաւ մեծ սպարապետն Մանուէլ, հրամանն զոր տայր յաղագս կոծոյն չդնելոյ՝ այնմ ինչ ոք ոչ անսաց. այլ ամենայն մարդ երկրին Հայոց կոծ եդեալ մեծաւ աշխարանօք լային զնա առհասարակ ազատք և շինականք։ Զի ամենայն մարդ իբրև զհօրէ ի կարի առնէին զնմանէ վասն քաղցրութեան մարդասիրութեան, հեզութեան հանդարտութեան, խնամոտ բարերարութեան բարենշան աշխարհաշէն անձին Մանուէլի։ Ամենեքեան բերանաբաց հառաչէին զկնի նորա, կղկղամթ կաթոգի լինէին զիրեանց քաջ զօրավարէն, զփրկչէն իւրեանց, զյաղթական զանուանի զարգասուէն, յայնպիսոյն հեռացեալ գնացեալ յանջատել և ի մեկնելոյն» (Բուզ. Ե. ԽԴ)։

24. Բուզանդայ Զ. դպրութեան Ա. գլուխն, որ և է բոլոր պատմութեան նորա գրեթէ վերջինն՝ կը պատմէ Արշակունեաց թագաւորութեան բաժանումն յերկուս։ Ըստ յիշեալ գլխոյն Բուզանդայ՝ յետ մահուն Մանուէլի թագաւորութիւնն Արշակայ չմնաց հաստատուն։ Նախարարք չհաճեցան ընդ Արշակ, ուստի և դիմելով առ Շապուհ Գ. (384—389)՝ կը խնդրեն այլ թագաւոր, և կը տրուի նոցա Արշակունի տոհմէ Խոսրով ոմն, որում Շապուհ կուտայ զքոյր իւր Զրուանդուխտ բաւական զօրօք, և Զիկ ոմն նուիրակապետ՝ դաստիարակ նմա։ Այս գործ նախարարաց էր ապըստամբութիւն Հռոմայեցւոց դէմ, ուստի և բնական էր Արշակայ, որ տրուած էր ի Թէոդոսէ կամ էր ընդ պաշտպանութեամբ նորա՝ խոյս տալ յարևմտեան սահման Հայոց։ Թէոդոս, յորոյ ի պաշտպանութիւն դիմած էր Արշակ, կամ որպէս այլուր ասէ Բուզանդ, որում յանձնուած էր նա գրով ի Մանուէլէ (Բուզ.

Ն. խԴ.)՝ կը պատրաստուի կռուել։ Կը գումարուին երկուստեք
բանակներ, Հռոմայեցւոցն՝ յԵկեղեաց ի թիկունս Արշակայ, և Պար-
սկցն՝ յԱյրարատ յօգնութիւն Խոսրովու. բանագնացութիւնք կ՚սկը-
սին, Թէոդոս կը զիջանի, և Հայաստան որ սկզբամբ բաժնուած էր
ի մէջ երկու տէրութեանց առ Վաղեսիւ և Շապհով Բ՝ կը բաժ-
նուի արդեամբ.—«Ապա յետ մահուն Մանուելի զօրավարին Հայոց
բազումք ի Հայոց նախարարացն անտի ելին գնացին զատեան առ
թագաւորն Պարսից, և մատնեցին նմա զաշխարհն Հայոց, և խընդ-
րեցին ի նմանէ թագաւոր Արշակունի։ Եւ նորա յանձին կալեալ
մեծաւ խնդութեամբ ընդ իւր ձեռն տալ իւրով բանիւ ի նմին
տոհմէ ի թագաւորութենէն Հայոց Արշակունի, և նովաւ յինքն
գրաւել զաշխարհն Հայոց։ Ապա գտանէր ի նմին տոհմէ մանուկ
մի անուն Խոսրով, և կապեաց թագ ի գլուխ նորա, և ետ նմա
կին զքոյր իւր զԶրուանդուխտ, և արար ընդ նմա զամենայն զզօրս
զօրութեան իւրոյ, և Զիկ նուիրակ դաստիարակ ետ արքային Խոս-
րովայ, և եկին հասին յաշխարհն Հայոց։ Իբրև ետես Արշակ ար-
քայ զնոսա՝ մերժեցաւ տեղի ետ, չոգաւ գնաց ի սահմանս Յունաց,
և էին թիկունք Արշակայ թագաւորին Հայոց, և Խոսրովու՝ թա-
գաւորն Պարսից։ Ապա եկին զօրքն Յունաց թագաւորին ի թի-
կունս, և թագաւորն Արշակ (էր) զԵկեղեաց գաւառաւ, և զօրքն
Պարսից և արքայն Խոսրով՝ յԱյրարատ գաւառին։ Ապա դեսպանք
և հրեշտակք երկուց թագաւորացն, Յունացն և Պարսից, մի-
մեանց առ միմեանս երթևեկէին։ Եւ այնուհետև առնեն խոր-
հուրդ միաբանութեան հաւանութեան ընդ միմեանս թագաւորն
Յունաց և թագաւորն Պարսից, և լաւ համարեցան զաշխարհն
Հայոց ընդ երկուս ի մէջ իւրեանց բաժանել» (Բուզ. Զ. Ա.)։ Եթէ
պարտ է հաւատալ Բուզանդայ՝ Թէոդոս և Շապուհ արարին զայս
բաժանումն՝ որպէս զի տկարացուսցեն և ապա դիւրաւ տիրեն ի-
ւրաքանչիւր միոյ մասին.—«Զի ասէին, թէ ի միջի մերում բնակեալ
է այս հզօր և հարուստ թագաւորութիւն, լաւ է զի այսու եղծա-
նել և խանգարել կարասցուք զայս թագաւորութիւնս. նախ ընդ
երկու բաժանել երկու թագաւորօքս Արշակունեօք զորս կացուցաք,
ապա և ընդ նոսա կրծել ջանասցուք, աղքատացուցանել, ի մէջ
արկանել ի ծառայութիւն, զի մի կարասցեն ի մէջ մեր ամբառնալ
զգլուխս» (Անդ)։ Մեզ չթուիր հաւանական Հայաստանի բաժանման
դնել պատճառ երկուց մեծ դրացի տէրութեանց ժլատութիւնը
միայն։ Երկու ոսոխ տէրութեանց, որ իրարմէ կորզել կը ջանային
միշտ Ասիոյ յառաջակողմը, Հռոմայեցիք գոնէ մինչև Տիգրիս,
Պարսիկք մինչև Եփրատ՝ հարկաւոր էր Հայաստան իւր աշխարհա-

գրական գրին իբրև պատուար և դուռն Միջագետաց, և որ այս պատճառաւ էր նիւթ մշտնջենաւոր կռուոյ, որում վերջ տալու համար հարկ եղաւ բաժնել զՀայս երկու, ի սկզբան իբրև ազատ թագաւորութիւններ, և յետ որոյ այս բաժանմամբ կորոյս Հայաստան զինուորական կարևորութիւնը՝ բնական էր այն թագաւորութեանց ևս ջնջուիլ, որպէս և եղաւ իսկ։ Բայց և Հայաստան ոչ սակաւ նըպաստ եղաւ իւրովսանն այս վախճանին։ Հայք ի բնէ տկար, համեմատութեամբ այն երկու դրացեաց, և նախարարական դրութեամբ բաժանեալ ի մէջ իւրեանց, ուստի և անմիաբան՝ չէին կարող զդէմ ունել երկու տէրութեանց միանգամայն. հարկ էր նոցա յարել ի մին կամ ի միւսն, և այս հարկն էր պատճառ, որ Հայք եղան ի վաղուց երկու, արևելեան և արևմտեան, այլով բանիւ՝ յունական և պարսկական կուսակցութիւն, որոց մերթ մին կը զօրանար և մերթ միւսն։ Այսպէս Հայաստան բաժնուեցաւ երկու, Պարսից բաժինն էր Խոսրովու, Յունացն՝ Արշակայ։ «Եւ հաստատեցին զայս խորհուրդ, ընդ երկու զաշխարհն բաժանեցին։ Բաժին կողմանն Պարսից էր թագաւորին Խոսրովու, և բաժին մասինն Յունաց էր Արշակայ։ Բայց և ի նոցանէ բազում գաւառք կրճեալք հատեալք այսր անդր, և մնաց սակաւ մասն յաշխարհաց երկոցունց առ երկոսեան թագաւորսն»։

25. Բուզանդ կը թուի այս միջոցին մեռած, ինչպէս այլուստ ևս կը տեսնուի (Բուզ. Զ. Ե.), ուստի և չգիտեր զպատրազմն որ ծագեցաւ այս երկու ստուեր թագաւորաց մէջ, զմահն Արշակայ, և զխոպառապուռ բարձումն թագաւորութեան նորա, վասն որոյ կը յաւելու. «Բայց սակայն երկոքեան թագաւորքն Արշակունիքն ի մէջ երկու բաժնացն սահմանս արկեալ հաստատէին խաղաղութեամբ, և երկիրն Հայոց, երկոքեան բաժինքն, երկուց թագաւորացն հնազանդէին, իւրաքանչիւր բաժին իւրաքանչիւր թագաւորի. բայց սակայն մեծ էր Խոսրովու բաժինն քան զԱրշակայ»։

26. Զարմանալի է արդարև, թէ ինչպէս Հռոմայեցիք յանձն առին այս անհաւասար բաժանումը։ Սակայն լաւ աշխարհացոյց մը բաւական է ցուցնել մեզ պատճառը։ Հռոմայեցիք, ռազմագէտ ժողովուրդ՝ չնայեցան այն բաժնին փոքրկութեան, քանզի թէպէտ փոքր՝ էր սակայն կարևոր, վասն զի ունէր զԾոփս (Չորրորդ Հայք), զոր կարգեցին և ամրացուցին հետզհետէ կայսերք, մանաւանդ Յուստինիանոս (Նոր. ԼԱ.), ընդ որ էր մօտ ի Միջագետս, մանաւանդ թէ էր իսկ Միջագետք կամ Միջագետք Ասորւոց։ (ժամանա-

կագր. Եղես. Գիրք Դ. 37: Եւագր. առ Ասեմ. Հտ. Ա.. 395, 273: Գաւազանագ. Երուկղ., և ի մերոց՝ Կիրակ., Ինճիճ. Ստորագր. Հին Հայաստ. էջ 77): Բուզանդ յիշատակելով ապա համառօտիւ Արշակունեաց թագաւորութեան բաժանման տխուր արդիւնքը—«Բազում գաւառք յերկոցունցն հատան, նուաղեաց բաժանեցաւ ցրուեցաւ թագաւորութիւնն Հայոց, պակասեաց յիւրմէ մեծութենէն յայն ժամանակն և յապայ»՝—կու տայ վախճան իւր պատմութեան, ստիպելով զմեզ խնդրել այլ աղբիւր:

ԳԼՈՒԽ Բ.

ՀԱՅՔ ՅԵՏ ԲԱԺԱՆՄԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ, ՄԻՆՉԵՒ Ի ԲԱՐՁՈՒՄՆ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ։

1. Աղբիւր յետ Բուզանդայ՝ Խորենացին. Ժամանակ սորա։ 2. Խտիր նորա ի Բուզանդայ։ 3. Անպատեհութիւնք սխալ ժամանակագրութեանն Խորենացւոյն։ 4. Ըստ Խորենացւոյն պարագայք որ չեն հաւանական։ 5. Թէ Խորենացւոյն մատեանն թուի յետին գործ։ 6. Կարէ՞ առնուլ իբրեւ աղբիւր։ 7. Արշակ վերջին ի բաժնին Յունաց։ 8. Գանձք Արշակայ. Պատերազմ վասն այսր. Մահ Արշակայ. Բարձումն թագաւորութեան Հայոց ի բաժնին Յունաց։ 9. Նախարարք մեկնին յԱրշակայ երթալ առ Խոսրով. Գազաւոն։ 10. Կաթողիկոսութիւն մեծին Սահակայ։ 11. Հաւանական ժամանակ Բուզանդայ։ 12. Վռամշապուհ։ 13. Խնդրուածք Սահակայ։ 14. Հին ինչ պարսկական օրէնք։ 15. Համազասպ Մամիկոնեան փեսայ Սահակայ. Հրովարտակն Վռամայ ըստ Խորենացւոյն։ 16. Իշխանութիւն Վռամշապհոյ ըստ Խորենացւոյն։ 17. Վռամշապուհ։ 18. Երթ Սահակայ առ Յազկերտ։ 19. Խորամանկ քաղաքականութիւն Յազկերտի. Որդին Շապուհ կը տրուի թագաւոր Հայոց։ 20. Հայք կը գրգռին. Ներսէս Ճիճրակացի։ 21. Սահակ այս անիշխանութեան ժամանակ. Թուղթք նորա ըստ Խորենացւոյն. Մեսրոպ եւ Վարդան կը ղրկուին ի Կոստանդնուպոլիս։ 22. Նոյն պատմութիւն ըստ Կորեան։ 23. Հրաւէր առ Սահակ ի բաժնէն Պարսից։ 24. Կը ղրկուին աղաչաւորք առ Վռամ։ 25. Ամրութիւնք Կարնոյ. Պրոկոպիոս։ 26. Դիտողութիւնք զնկարագրէ Խորենացւոյն վասն Կարնոյ։ 27. Արտաշիր Կամբաստանուի. Խրատ Սահակայ առ նախարարս։ 28. Արտաշիր եւ Սահակ կոչին ի դուռն։ 29. Վռամ ընկենու զԱրտաշիր թագաւորութենէ եւ զՍահակ կաթողիկոսութենէ. Սուրմակ՝ կաթողիկոս։

1. Յետ Բուզանդայ մի միայն աղբիւր մեր է Խորենացւոյն պատմութեան վերջին մասն, այն է Գ. դպրութեան ԽԲ. գլխէն մինչեւ ի վախճան գրոյն։ Բայց հարկ է մեզ նախ ստուգիւ գիտել թէ ո՛ր դարու մարդ է նա եւ երբ գրեց իւր պատմութիւնը։ Այս խորհրդաւոր անձին, եթէ է արդարեւ պատմական անձն՝ ինչպէս ծննդեան եւ մահուան՝ նոյնպէս պատմութեան յօրինման ժամանա-

կին վրայ ստոյգ ինչ տալ դժուարին է. ինչ որ մեծ հաւանութեամբ բուն իսկ պատմութենէն գուշակելով կրնանք ըսել—եթէ ճշմարիտ է պատմութիւնն—է այս։ Որովհետև Խորենացին բերելով զպատմութիւն իւր մինչև ի մահն Սահակայ և Մեսրոպայ (441)՝ կը դադրի և չյիշեր ամենևին Վարդանանց պատերազմը, որ եղաւ 450-ին՝ կը հետևի թէ մահ նորա եղած է ի մէջ ամացն 441 և 450։ Եւ որովհետև կ'ըսէ, թէ էր արդէն ծերացեալ երբ կը գրէր այն պատմութիւնը՝ եթէ դնենք զնա 75-ամեայ յամին 445 իբր հաւանական թուական մահուան նորա՝ ծնունդ նորա լինի ի սկզբան թագաւորութեանն Պապայ (368)։ Այս հաշիւ է բնական։ Եթէ ծննդեան թուականը տանինք ևս ամօք ինչ յառաջ, մահուան թուականը չենք կրնար տանել յետս, քանզի Վարդանանց պատերազմն է սահման. եթէ չդնենք այս սահմանը մահուան նորա՝ չենք կրնար մեկնել Վարդանանց պատերազմը չյիշելուն պատճառը։ Արդ եթէ Խորենացին էր ժամանակակից Պապայ, ինչպէս կրնար յօրինել զՊապայ այն պատմութիւնն հակառակ երկու ժամանակակից պատմչաց, Բուզանդայ և Ամմիանու, դնելով զնա առ Թէոդոսիւ Ա. (379—395), և գլխատեալ հրամանաւ նորա, մինչ գիտենք Ամմիանոսէ, թէ սպանումն նորա եղաւ իբր տասն ամօք յառաջ առ Վաղեսիւ դաւով։

2. Ի թագաւորութենէն Խոսրովու Կոտակայ մինչև յԱրշակ Գ, կամ մինչև ի բաժանումն թագաւորութեանն ինչ որ պատմեցինք ի Բուզանդայ՝ բազմօք կը տարբերին ի պատմելոյն ի Խորենացւոյն։ Այս տարբերութիւն կը տեսնուի նաև ի պատմութեան բաժանման աշխարհին Հայոց։ Մինչ ըստ Բուզանդայ, ինչպէս տեսանք, նախարարք կը խնդրեն յարքայէն Պարսից այլ թագաւոր, և կը տրուի նոցա Խոսրով փոխանակ Արշակայ, որ խոյս կուտայ առ Թէոդոս ընդ որոյ իշխանութեամբ կամ պաշտպանութեամբ էր նա, և ապա երկուց տէրութեանց միաբան հաւանութեամբ կը բաժնուի Հայաստան խաղաղ՝ ըստ Խորենացւոյն՝ Շապուհ (Բ. թէ Գ՝ չէ յայտ) որ յաղթուած էր ի մեծէն Թէոդոսէ հօրէն Արկադեայ՝ կը խնդրէ հաշտութիւն, և Արկադ կը հաճի, քանզի զօրավարք նորա ձանձրացած էին անդուլ պատերազմներէ, ուստի և յանձն առին բաժնել զՄիջագետս և զՀայաստան։ Զայս տեսնելով Արշակ Պապայ որդին, որ ըստ Խորենացւոյն ի Թէոդոսէ դրուած էր թագաւոր զկնի Վարազդատայ՝ կը թողու զԱյրարատ, իւր հարց թագաւորութիւնը, և կ'երթայ տիրել ի բաժնին Յունաց, ընտրելով ունենալ փոքր բաժին և ծառայել քրիստոնեայ թագաւորի՝ քան տիրել մեծ մասին, և լինել ընդ իշխանութեամբ հեթանոսաց։ Եւ որովհետև Պարսից

բաժնին նախարարք թողլով իւրեանց երկիրներն գացած էին Արշակայ հետ ի բաժին անդր Յունաց՝ Շապուհ կը գանգատի առ Արշակայ, և նա կը պատասխանէ, թէ նախարարք գացած էին իւրեանց կամօք և ոչ բռնութեամբ, վասն զի չառին յանձն լինել ընդ պարսիկ մարզպանաւ: Զայս լսելով Շապուհ՝ կը դնէ իւր բաժնին վրայ թագաւոր քրիստոնեայ Արշակունի, Խոսրով անուն, և կը հրաւիրէ զնախարարս Հայոց իւրոյ բաժնին երդմամբ և մուրհակաւ՝ թէ անշրջելի էր իւր այս հրամանն: Նախարարք ընդունելով հրաւէրը, տեսնելով ևս մուրհակը՝ կ'երթան իւրաքանչիւր յերկիր իւրեանց ի սակաւուց ամանց: Ահա բանք Խորենացւոյն. «Իմացեալ Շապհոյ, թէ թերուղիղ է Արկադ՝ խօսի ընդ նմա ի խաղաղութիւն, քանզի էր պարտեալ հարեալ ի հօրէ նորա մեծէն Թէոդոսէ: Յանձն առնու և Արկադ առնել զհաշտութիւն, առաւել յիւրոց զօրագլխաց. զի թէպէտև յԱստուծոյ էր պարգևեալ զյաղթութիւն յամս կենաց երանելոյն Թէոդոսի՝ սակայն զօրագլուխքն վատակեալ՝ ձանձրացեալ լինէին յաշխատութենէ հանապազորդ պատերազմացն: Վասն որոյ հաւանեալ կամաւ յանձն առին բաժանել զՄիջագետս և զՀայոց աշխարհս կրկին սահմանադրութեամբ: Վասնորոյ թողեալ Արշակայ զբուն թագաւորութիւն հօրց իւրոց զԱյրարատ և զամենայն մասն բաժնին Պարսից՝ գնաց տիրել արևմտեայ կողմանց աշխարհիս մերոյ որ ի մասն բաժնին Յունաց, ոչ միայն մօրն ազգաւ, որ էր ի կայսերական քաղաքին (ըստ նախընթաց գլխոյն Թէոդոս յարձակելն զերկուս որդիս Պապայ զԱրշակ և զՎաղարշակ անոնց մայրը պահած էր իբրև պատանդ ի Կոստանդնուպօլիս. բայց այս պատմութիւն կարօտ է հաստատութեան), այլ լաւ համարեալ նուազ կողմանն տիրել և ծառայել քրիստոնեայ թագաւորի, և ոչ յօլովից իշխել և մտանել ընդ լծով հեթանոսաց: Գնացին զհետ նորա հանդերձ կանամբք և որդւովք և նախարարութիւնք որ ի բաժնի Շապհոյ, թողլով զիւրաքանչիւր արարս և գեւղս և զդաստակերտս: Ընդ որ զչարեալ Շապհոյ՝ գրէ առ Արշակ, թէ Ընդէր գրգռեցեր զպատերազմ ի մէջ իմ և կայսեր, տանելով զնախարարութիւնս իմոյ բաժնիս: Եւ պատասխանի լսէ յԱրշակայ, թէ Վասնզի ոչ համբերէին ընդ պարսիկ առաջնորդաւ վարել՝ եկին զհետ իմ. և արդ եթէ հաւատացես ինձ զմասինդ քո իշխանութիւն, որպէս և կայսր զիւրոյս՝ պատրաստ եմ ի պաշտել զքեզ՝ որպէս զկայսր. ապա թէ ոչ է հաճոյ քեզ այս, և իւրեանց կամօք դարձցին նախարարքս՝ ոչ արգելում: Զայս լուեալ Շապհոյ՝ թագաւորեցոյց Հայոց ի վերայ բաժնի իւրոյ զԽոսրով ոմն ի նմին ազգէն Արշակունեաց, և առ նախարարս իւրոյ մասինն որ եկեալ էին զհետ

Արշակայ՝ գրեաց հրովարտակ, որ ունէր զայս. Դիւցազանց քաջ, Շապուհ արքայից արքայ. նախարարաց Հայոց, որոց կալեալ իշխանութեան յիմ բաժնին հատանմ՝ ողջոյն շատ շնորհեմ ձեզ: Թէպէտ ոչ ազատաբար արարեալ թողէք զիւրաքանչիւր իշխանութիւնս, և մեզ ոչինչ նիւազ էր ի ձէնջ՝ սակայն ըստ տիրաբար խնամոց գթացաք ի ձեզ և յաշխարհդ ձեր. զմտաւ ածեալ եթէ ոչ կարեն հօտք առանց հովուաց լինել և հովիւք առանց բարիոք վերակացուի. վասնորոյ թագաւորեցուցաք ձեզ զԽոսրով ոմն ի դենէ ձերմէ և յազգէ բնիկ ձերոյ տէրութեանդ: Արդ դարձեալ ձեր յիւրաքանչիւր արարս՝ իշխեցէք որպէս և ցայժմ: Երդուեալ ի հուր և ի ջուր և ի փառս անմահից իմոց նախնեաց. զի առանց նենգութեան և պատրանաց արարաք զայդ, և անշրջելի պահեմք: Իսկ այնք որք ոչ լուիցեն հրամանաց մերոց՝ գտանս նոցա հանդերձ գիւղօք և դաստակերտօք հրամայեցաք ունել յարքունիս: Ողջ լերուք: Իբրև լուան նախարարքն Հայոց, այնք որք ունէին զիշխանութիւն ի գաւառս բաժնին Պարսից, թէ կացոյց Շապուհ թագաւոր հաւատացեալ Արշակունի, և զմուրհակ ուխտին տեսին՝ թողեալ զԱրշակ դարձան ի բնակութիւնս իւրեանց» (Խոր. Գ. ԽԲ. ԽԳ.): Թէ այս երկու տարբեր պատմութեանց, Բուզանդայ և Խորենացւոյն, որն է ընտրելի ի մասին ստուգութեան՝ դիւրին է որոշել: Այսպէս նախամեծար է Բուզանդ ոչ միայն իբրև ժամանակակից և ականատես, այլև ազատ յանտեղութեանց, որովք լի է պատմութիւնն զոր բերենք ի Խորենացւոյն: Առաջին անտեղութիւն յայսմ մասին պատմութեան Խորենացւոյն, այն է ի պատմութեան բաժանման թագաւորութեանն՝ է ժամանակագրութիւնն, որում անգիտանալ անհնար էր նմա՝ եթէ էր ժամանակակից: Այս բաժանումն, զոր, ինչպէս տեսանք, կը դնէ Խորենացին առ Արկադեաւ՝ եղած է 384-ին, և կը կշռի մեծին Թէոդոսի ժամանակին (379—395) և Արտաշրի Բ-ի (380—384) վերջին, և աւելի հաւանականապէս՝ Շապհոյ Գ-ի (384—389) առաջին տարւոյն, ոչ թէ Արկադեայ ժամանակին (395—408), որ բազում ամօք յետոյ է: Առ Թէոդոսիւ և առ Շապհով Գ. է նոյնպէս մահն Արշակայ և բարձումն թագաւորութեանն ի բաժնին Յունաց (386 կամ 387). իսկ վերջ թագաւորութեանն Խոսրովու և սկիզբն թագաւորութեանն Վռամշապհոյ (391 կամ 392) կը կշռին Թէոդոսի և Վռամայ Դ-ի (389—399) ժամանակներուն: Եթէ ընթերցողն առնու աշխատութիւն յանձն միտ դնել այս ժամանակագրութեան, որ հաւանականագոյն, մանաւանդ թէ ստուգագոյնն է՝ կրնայ քաջ տեսնել Խորենացւոյն թուականի մեծամեծ սխալներն, և պարտի խոստովանել,

թէ Խորենացին չկարէ լինել մատենագիր Ե. դարու, և ժամանակակից, ինչպէս կը կարծուի առհասարակ՝ իւր պատմութեան այս մասին։

3. Խորենացւոյն սխալ ժամանակագրութեան մեծ անպատեհութիւնն այն է, որ քանի մը գլխաւոր դէպք ըստ հաշուի Խորենացւոյն դրուելով իբր տասն կամ աւելի ամօք յետոյ քան զբուն թուական իւրեանց՝ կը խախտեն թագաւորաց տարիներն, հակառակ ժամանակագրութեան նորին իսկ Խորենացւոյն, կ'անձկանայ ժամանակի միջոցն, այնպէս որ դժուարին լինի զետեղել պատմութեան մնացորդ մասը։ Զոր օրինակ, եթէ դնենք թագաւորութեան բաժանումն առ Արկադեաւ, այսինքն փոխանակ դնելու 384-ին, դնենք յամին 396 կամ աւելի անագան՝ ժամանակի միջոցն անտի մինչև 428, որ է ստոյգ թուական բարձման թագաւորութեանն՝ կը նուազի, ուստի և հարկ լինի վերջին սահմանը, 428, յետս մղել նոյն չափ ամօք, և ընդ նմին յետս կը մղուին շատ դէպք, զորօրինակ Վռամշապհոյ թագաւորութեան թուականն, մահն Սահակայ և Մեսրոպայ, պատերազմն Վարդանանց, Վահանայ մարզպանութեան թուականն այլովքն հանդերձ. և որովհետև այս ամենայն դէպք կապուած են ընդ պատմութեան Սասանեան թագաւորաց, որոց թուականներն են որոշ՝ հարկ է այնուհետև և զնոսա ևս խախտել և կռուել ընդ արտաքին պատմութեան։ Եւ զի անտեղի է այս՛ հարկ է մեր պատմութեան հայրը դնել սխալած, կամ որպէս ասէ Գաթըրճեան՝ «ի Մովսիսէ առ Մովսէս բողոք առնուլ», և կամ, որ լաւագոյն է՝ «Մովսեսիւ զՄովսէս ուղղել»։

4. Թող զայս՝ Խորենացին կը յեռու իւր պատմութեան մէջ ուրեք ուրեք պարագաներ՝ որ չեն հաւանական կամ հակառակ կ'ելլեն ուրիշ պարագաներու։ Զոր օրինակ չէ հաւանական, թէ նախարարութիւնք Պարսից բաժնին Արշակայ հետ կու գան ի բաժինն Յունաց հանդերձ կանամբք և որդւովք, թողլով զզօրս իւրեանց և զկալուածս, գիւղեր, դաստակերտներ, յորոց էր ապրուստ նոցա. նոյնպէս թէ Գազաւոն ի դառնալն առ Խոսրով՝ տարաւ ընդ իւր Յունաց բաժնին նախարարները. թէ սոքա իբրև պայման խնդրեցին ի Խոսրովայ՝ պաշտպանել զկալուածս իւրեանց ի գործակալաց կայսեր, և թէ Խոսրով խոստացաւ պաշտպանել՝ եթէ պատերազմել անգամ հասնէր կայսեր դէմ։ Հակասական է, թէ Արշակ վերջին, որոյ վասն կ'ըսէ թէ չկամելով հեթանոս տեառն ծառայել, թողուց զԱյրարատ զժառանգութիւն իւրոց նախնեաց և ընտրեց զբաժինն Յունաց՝ յետոյ դարձաւ և խնդրեց ի Շապհոյ նաև զբաժինն Պարսից և կը խոստանար ծառայել նմա։

5. Այս ամենայն—որչափ և հակառակ թուի շատերուն, որ գիտեն զԽորենացին մատենագիր Ե. դարու—կ'ստիպէ զմեզ ըսել, թէ Մովսէսի Խորենացւոյ անուամբ ծանօթ մատեանն է աւելի յետին գործ, զոր հեղինակն, ո՛ ոք և է՝ կ'ընծայէ Մովսէսի ումեմն Խորենացւոյ քերթողահօր, որ որպէս թէ ապրեցաւ մինչև ի վերջ Խորենացւոյ քերթողահօր, որ որպէս թէ ապրեցաւ մինչև ի վերջ կոյս Ե. դարու: Ըստ մեզ է թերևս Սիւնեցին Մովսէս քերթող Է. դարու, ինչպէս լեզուէն ևս յայտնի է: (Համեմատէ Գ. գլրութեան ԿԲ. գլուխը):

Խորենացւոյն պատմութիւնն համարելու համար գրուած յետոյ քան զԵ. դար՝ ունինք բաւական պատճառներ: Թող Մ. Լա Գարիէրի գիւտը, զոր հրատարակեց թեւադրեալ Խորենացւոյն Բ. գլրութեան ԶԳ. գլխէն, իբրև առնուած Սեղբեսորոսի փարուց պատմութենէն, որ կը կարծուի յետոյ քան զժամանակն որ կը տրուի Խորենացւոյն՝ բաւական մեծ պատճառ է Փարպեցւոյն, որ գրած է ի վերջ կոյս Ե. դարուն՝ յիշելով մանր բոլոր հայ պատմիչներն որ յառաջ քան զինքն, ինչպէս զԱգաթանգեղոս, զԲուզանդ և զԿորիւն՝ լռելն զպատմութենէ Խորենացւոյն, նա թուելն չգիտել իսկ, թէ կար այն դարուն մէջ Մովսէս Խորենացի անուն պատմիչ. մինչ Փարպեցին պարտ էր մանաւանդ գիտել այն պատմութիւնն, եթէ, ինչպէս կ'ըսէ մատեանն՝ գրուած էր այն ի խնդրոյ Սահակայ Բագրատունւոյ մարզպանի, որ էր ընկեր և գործակից Վահանայ, բարեկամին և պաշտպանին Փարպեցւոյն:

Արդարև կան առ Փարպեցւոյն բանք ինչ կամ տսացուածք, որ կը գտնուին նաև առ Խորենացւոյն, զոր օրինակ ի նկարագրի Փարպեցւոյն գաւառին Այրարատու՝ «հոծեալս երէովք կճղակաբաժանիք և որոճայնովք», կը գտնենք առ Խորենացւոյն ի նկարագրի գաւառին Կարնոյ—«Լերինքն լի են երէովք կճղակարաշխիւք և որոճայնովք»: Այս նմանութիւնն է թերևս պատահական և է գոյգն ինչ, բայց ոչ նոյնպէս գիւտի գրոյն պատմութեան հատուածը, որ գրեթէ բառ առ բառ նոյն է յերկոսին:

ԱՌ ՓԱՐՊԵՑԻՈՅՆ.

«Վաղվաղակի ստիպով տուաքեալ դեսպան զՎահրիճ անուն ոմն.. առ այր մի երէց հաբէլ անուն... փութանակի հասանել առ սքանչելի եպիսկոպոսն Գանիէլ. նախ ի նմին Գանիելէ ինքն (Վահրիճ) տեղեկանայր.. և առեալ առ սուրբ հայրապետն հայ-

ԱՌ ԽՈՐԵՆԱՑԻՈՅՆ.

«Վասնորոյ յաշխարհէս մերոյ առաքեաց հրեշտակութեամբ զայր մի պատուական և հաւատարիմ Վահրիճ անուն... առ հաբէլ... գոր առեալ, և երթեալ նորա ի փու հանդերձ քաջ հմտացեալ ի Գանիելէ... եկեալ եսուն ցմեծն-Սահակ և Մեսրոպ: Որոց... տե

ոց Սահակ և առ երանելին Մաշթոց հասանէր... Բայց տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրօք ստոյգ հոլովել զհեգենայ բառից հայկականաց հագներգաբար մուրացածիւն այնուիկ գծագրութեամբ: Չկնի այսորիկ ինքնին Մեսրովբ իջանէ ի Միջագետս հանդերձ աշակերտօք առ նոյն Դանիէլ, և ոչ աւելի ինչ գտեալ քան զառաջինն՝ անցանէ յԵդեսիա առ Պղատոս ոմն ճարտասան հեթանոս, իշխան դիւանին: Եւ նորա խնդութեամբ ընկալեալ և զոր ինչ միանգամ ի միտ առնոյր բան հայերէն յինքն առեալ և շատ ջանացեալ և ոչ օգտեալ՝ զօգտութիւն խոստովանեաց հռետորըն. և զայլ ոմն ասելով յուժ հասու, վարդապետ իւր լեալ յառաջագոյն, և այս առեալ զճարտարացն գրեան ի նոյն դիւանէն Եդեսեայ և գնացեալ քրիստոնէութեան հաւատոց, որոյ անունն Եպիփանոս. զոր խնդրեալ գտցես լցուցանել զփափաքդ քո:

Յայնժամ Մեսրովբայ օգնականութիւն ի Բաբելոսէ եպիսկոպոսէ գտեալ և անցեալ ընդ Փիւնիկէ՝ ի Սամոս դիմէ: Քանզի Եպիփանու վճարելով զկենցաղս՝ թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հռոփանոս, հրաշալի արուեստիւ հելլէն գրչութեան, որ ի Սամոս էր միայնացեալ: Առ սա երթեալ Մեսրովբայ և յայսմ ևս անշահ մնացեալ՝ յաղօթս ապաւինի. և տեսանէ ոչ ի քուն

ղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրօք ըստոյգ հոլովել զհեգենայ բառից հայկականաց հագներգաբար՝ մուրացածոյին այնուիկ գծագրութեամբ:

Չկնի այսորիկ ինքնին Մեսրոպ իջեալ ի Միջագետս հանդերձ աշակերտօք առ նոյն Դանիէլ, և ոչ աւելի ինչ գտեալ քան զառաջինն՝ անցանէ և յԵդեսիայ առ Պղատոս ոմն ճարտասան և հեթանոս՝ իշխան դիւանին: Եւ նորա խնդութեամբ ընկալեալ, և զոր ինչ միանգամ ի միտ առնոյր բան հայերէն յինքն առեալ, և շատ ջանացեալ և ոչ օգտեալ՝ զօգտութիւն խոստովանեաց հռետորն: Եւ զայլ ոմն ասելով յուժ հասու, վարդապետ իւր եղեալ յառաջագոյն, և այս առեալ զճարտարացն գրեան ի նոյն դիւանէն Եդեսիայ և գնացեալ քրիստոնէութեան հաւատոց, որոյ անուն Եպիփանոս. զոր խնդրեալ գտցես լցուցանել զփափաքդ քո:

Յայնժամ Մեսրոպայ օգնականութիւն ի Բաբելոսէ եպիսկոպոսէ գտեալ, և անցեալ ընդ Փիւնիկէ ի Սամոս դիմէ. քանզի Եպիփանու վճարելով զկենցաղս՝ թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հռոփանոս, հրաշալի արուեստիւ հելլէն գրչութեամբ, որ ի Սամոս էր միայնացեալ: Առ սա երթեալ Մեսրոպայ, և յայսմ ևս անշահ մնացեալ՝ յաղօթս ապաւինի. և տեսանէ ոչ ի քուն երազ և

երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն՝ թաթ ձեռին աջոյ, գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեան՝ վերջք գծին կուտակեալ ունէր քարն։ Եւ ոչ միայն երևութացաւ, այլ և հանգամանք ամենիցն որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ։

Եւ յարուցեալ յաղօթիցն ե-ստեղծ զնշանագիրս մեր հանդերձ Հռոփանոսիւ, կերպաձևեալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրովբայ, փոխագրելով զհայերէն աթութայսն ըստ անսայթաքութեան սիղոբայիցն ի Հելլենացւոյն»։

ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի Ա., Ե, Է, Ը, Ի, Ո, Ւ. զի որպէս ի ձեան՝ վերջք գծին կուտեալ ունէր քարն։ Եւ ոչ միայն երևութացաւ, այլ և հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ։

Եւ յարուցեալ յաղօթիցն, ե-ստեղծ զնշանագիրս մեր՝ հանդերձ Հռոփանոսիւ, կերպաձևեալ զգիրն Մեսրոպայ առձեռն պատրաստ, փոխագրելով զհայերէն աթութայսն ըստ անսայթաքութեան սիւղոբայից Հելլենացւոց»։

Ո՛վ չտեսներ մեծ նմանութիւնը, որ կայ այս երկու խմբագրութեանց մէջ. բայց այս բաւական չէ ցուցնելու, թէ Փարպեցին առած է ի Խորենացւոյն, և հետևցունել՝ թէ ունէր նա զԽորենացին ի ձեռին։ Ինչպէս տեսանք՝ Հակառակը մանաւանդ կը տեսնուի Փարպեցւոյն լռութենէն. ուստի չէ անհաւանական, թէ առ Փարպեցւով կար անանուն գրուած մը իբրև պատմութիւն հայերէն նշանագրաց գիւտին, և այն անանուն գրուածէն առած են թէ Փարպեցին և թէ Խորենացին, ինչպէս կը կարծեն ոմանք (Նորայր Բիւզ.)։

Գալով առանձինն վերոյիշեալ հատուածին՝ դիտել արժան է, որ Փարպեցին այն հատուածին մէջ միայն ունի չորիցս Մեսրոպ անունը, մինչ բոլոր պատմութեան մէջ, ինչպէս նաև Կորիւն՝ Համակ կ'անուանէ զնա Մաշթոց, որ է եկեղեցական պատուանուն և կը նշանակէ ըստ Յունաց *բարձրութիւն*. իսկ Մեսրոպ անունը, որ կը նշանակէ պարսկերէն քարտուղար՝ է անուն պաշտօնին նորա յաշխարհականութեանն։ Այսպէս Փարպեցւոյն՝ Հակառակ իւր սովորութեան կոչելն զնա Մեսրոպ այն հատուածին մէջ՝ բաւական նշան է, թէ այն հատուածն է ուրիշ գրչէ, և այս չկարէ լինել Խորենացին, որ ունի ուրիշ յայտնի նշան թէ է յետոյ քան զՓարպեցին, այն է դնելն եօթն ձայնաւորներն միայն իբրև բուն գիւտ Մեսրոպայ, մինչ առ Փարպեցւոյն չկայ ձայնաւորի յիշատակութիւն։

(Յետնագոյն կարծիք է, թէ բաղաձայնք կային իբր 29 թուով· Մեսրոպ ձայնաւորները միայն եմոյծ)։

Կարնոյ նկարագիրն կը թուի գրուած յետ շինութեան այն քաղաքին առ Յուստինիանոսիւ (527—565), և կայ իսկ աւանդութիւն, թէպէտ յետին՝ թէ շինութեան այն քաղաքին ի Յուստինիանոսէ Խորենացին էր վերակացու։

Ոմանք իբրև ստոյգ նշան, թէ պատմութիւն Խորենացւոյն գրուած է ի Ե. դարու՝ կը բերեն զլեզուն իբրև աշակերտի թարգմանչաց· բայց այս ևս չունի զօրութիւն։ Թող որ Խորենացւոյն հայերէնն շատ հեռու է Եզնկայ, Բուզանդայ, Հին և Նոր կտակարանաց հայերէնէն՝ լեզուն ևս չէ միօրինակ, միոյ գրչի գործ, այլ խառն. կան ի նմա տեղեր, ինչպէս ԿԲ. գլուխն, որ ունի Է. դարու յունաբանութիւնը· և վիճակ հայ կղերին որ նկարագրուած է Ողբին մէջ՝ կը պատշաճի Է. դարուն մանաւանդ քան Ե-ին։

6. Այս ամէնը կը համարձակեցունէ զմեզ ըսել, թէ Խորենացւոյն պատմութեան վերջին մասն, առ ի չգոյէ ուրիշ աղբեր, (բայց ի պատմութենէ Կորեան հայերէն նշանագրաց գիւտին և թարգմանութեանց վրայ), կրնանք գործածել միայն մեծ զգուշութեամբ։ Առնունք ուրեմն պատմել զանցս, որ անցին ի մէջ երկուց թագաւորաց, և կը գտնուին առ Խորենացւոյն միայն և զորս չյիշեր Բուզանդ, որ յետ բաժանման և տիրելոյ երկուց թագաւորաց «բաժանուորաց»՝ կը դադրի պատմելէ, թերևս և ապրելէ։

7. Արդ ըստ Խորենացւոյն՝ Արշակայ հետ գացող նախարարներէն ոմանք, առնլով յետոյ խոստումն ի Շապհոյ Գ-է կամ ի յաջորդէ նորա ի Վռամայ Գ-է (389)՝ դարձան ի բաժինն Պարսից առ Խոսրով, և առին իւրեանց ժառանգական երկիրներն. այլք մնացին առ Արշակայ, և կորուսին իւրեանց կալուածներն։ Առ Արշակայ մնացող նախարարներէն գլխաւորք էին Դարա Սիւնի, որ սպարապետ եղաւ Արշակայ, Գազաւոն Կամսարական և Պերոզ Գարդմանացի։ Ի սոսա յարեցան Ատատ Գնունի, Կենան Ամատունի, Սուր—Մոկացի, Որստոմ Առաւենեան և այլք ոմանք ոչ նշանաւորք· «Նախարարք Հայոց, այնք որք ունէին զիշխանութիւն ի գաւառս բաժնին Պարսից (և եկեալ էին ընդ Արշակայ)՝ թողեալ զԱրշակ դարձան ի բնակութիւնս իւրեանց, բայց յերից պատանեաց սննդակցաց արքային և ի մօտաւոր մերձաւորաց—Դարա որդի Բաբկայ տեառն Սիւնեաց, որ աներ էր Արշակայ, (աներ Արշակայ, ըստ Բուզանդայ ժամանակակցի, ինչպէս տեսանք՝ էր Մանուէլ Մամիկոնեան, և ոչ Բաբիկ Սիւնի), և Գազաւոն որդի Սպանդարատայ տեառն Շիրակայ և Արշարունեաց, և Պերոզ յազգէն Գարդմանացւոց. և ի

նոսին յարեցեալք՝ Ատատ յազգէն Գնունեաց, Կենան յազգէն Ամատունեաց, Սուրա յազգէն Մոկաց, Ըրստոմ Առաւենեան և այլք անյալք ոմանք: Վասնորոյ զժառանգութիւնս նոցա կալաւ Խոսրով յարքունիս հրամանաւ Շապհոյ, և ոչ եթող զկալուածս որդւոյ ի Հայր, և ոչ եղբօր յեղբայր» (Խոր. Գ. ԽԳ.):

Բայց նաև Յունաց բաժնին նախարարներէն ոմանք, որոց մին էր Սահակ ոմն ասպետ, այսինքն Բագրատունի՝ չէին գոհ զԱրշակայ և կը խնդրէին առիթ՝ խոյս տալ առ Խոսրով: Արշակ խեթիւ էր մանաւանդ ընդ Սահակայ, գրգռուելով իւր կնոջէն (որ ըստ Բուզանդայ՝ էր Մամիկոնեան, դուստր սպարապետին Մանուէլի, ինչպէս տեսանք արդէն), որպէս թէ Սահակ, որ էր լեալ աներ Վաղարշակայ, Արշակայ կրտսեր եղբօրն և գահակցին՝ մեռելոյ թագաւորութեան առաջին տարին (տես Խոր. Գ. ԽԱ.) պահած էր մեռելոյն թագաւորական զարդերն: Կը թուի թէ նաև ազգականք Սահակայ կը հաստատէին զայս քսութեամբ: Երկիւղ Արշակայ որպէս և կնոջ նորա, ինչպէս կ'երևի՝ այս էր, թէ Սահակ ունենալով ի ձեռին այն զարդեր կամ նշաններն՝ զհետ էր թագաւորելու: Այս պատճառաւ Արշակ կը նեղէր զՍահակ, Խորենացւոյն բառով «չարչարեաց զնա», մինչև ստիպուիլ Սահակայ փախչել առ Խոսրով: Սահակայ հետ ի բանի էին և Սուրէն Խոռխոռունի, Վահան Առաւեղեան և Աշխադար Դիմաքսեան, բայց չկրնալով ճանապարհել՝ մնացին, և կ'սպասէին պատեհ ժամու կատարել զխորհուրդ իւրեանց: Խոսրով կ'ընդունի պատուով զՍահակ, կը պարգևէ նմա մեծամեծ կալուածներ, և կը կարգէ զնա սպարապետ.—«Բայց էին ոմանք ի նախարարացն, որ ունէին զիշխանութիւնս իւրեանց ի բաժնին Յունաց առ Արշակայ, որպէս Սահակ ասպետ, որ էր լեալ աներ Վաղարշակայ, եղբօր Արշակայ, և խնդրեցին գալ առ Խոսրով. ընդ որում (Սահակ) խեթի հայէր Արշակ, հանապազ հրապուրեալ ի կնոջէն իւրմէ, որպէս թէ զարդ արքունական ունել նմա ի փեսայէն իւրմէ մնացեալ: Ապա յայնժամ եղև քսութիւն սուտ զնմանէ յազգականաց իւրոց ի Սպեր գաւառէ, վասնորոյ չարչարեաց զնա Արշակ արքայ: Եւ յայնմանէ խնդրէր Սահակ փախչել յԱրշակայ և անկանել առ Խոսրով. և խորհրդակից նմին իբր գործակցեալ լինէին Սուրէն Խոռխոռունի և Վահան Առաւեղեան և Աշխադար յազգէն Դիմաքսենից: Բայց ի գնալն նորա ոչ ժամանեցին նոքա, խափանեալ ի զօրացն Արշակայ. թաքուցեալ դողեցին ընդ կեղծաւորութեանն առագաստիւ, սպասեալ դիպող աւուր: Բայց Խոսրով մեծապէս ուրախ եղև ընդ գալն Սահակայ ասպետի, և սպարապետէ զնա ի վերայ զօրաց իւրոց կարգեաց և դարձոյց ի նա զկալուածս Հայ-

րենիս, և այլ աւանս հանդերձ ագարակօք պարգևեաց Նմա յայնո-
ցիկ ի ժառանգութենէ, որք ի բաժնոյն Պարսից առ Արշակայ մնացին
(Խոր. Գ. խԳ, խԴ.)։

Զայնու ժամանակաւ ոմանք ի Վանանդեցւոց, որ էին անուանի
յաւագակութեան, ապստամբելով ի Խոսրովայ՝ ապաւինեցան լեռ-
նային տեղեր Արշակայ բաժնին մէջ, և յելուզակութեամբ կը խռո-
վէին երկու թագաւորաց երկիրներն։ Սահակ ասպետ, սպարապետ
Խոսրովու, զրկուելով ասոնց վերայ՝ կը ցրուէ զնոսա.—«Զայսա
ւուրբք ոմանք յազգէն Վանանդացւոց ապստամբեցին ի Խոսրովայ
և ոչ յոք ապաւինեցան՝ այլ միայն ի մայրիս լերանց իւրեանց և
յանձուկս Տայոց քարանց. յելուզակաբար արշաւանօք յիշխանութիւն
երկոցունց թագաւորացն Հայոց՝ խռովէին զաշխարհս և անհանգիստ
պահէին։ Յորոց վերայ չոգաւ սպարապետն Խոսրովայ Սահակ ասպետ
և զբազումս ի նոցանէ սատակեաց և զբազումս փախստական արար
ի կողմանս Զորրորդ Հայոց։ Զի ոչ յերկիրն Խաղտեաց անկան, ի
Յոյնս ապաւինելով, և ոչ առ թագաւորն Արշակ անցին, այլ զա-
ւագակս ոմանս որ ի կողմանս Զորրորդ Հայոց էին ի սահմանս
Ասորւոց՝ զիմեցին ապաստան առնել։ Քանզի Վանանդացիք զաւա-
գակութեան գործ մեծ ցանկութեամբ գործէին, և որպէս ուղխ
երք՝ անխորժելի թուէին նոցա։ Զորոց ձիգ զհետ մտեալ Սահակայ
վարէ յերկար մինչև ի սահմանս Մանանաղւոյ» (Խոր. Գ. խԴ.)։

Ց. Արշակ, չենք գիտեր ինչ պատճառաւ՝ կը տանէր զիւր
գանձն Անւոյ ամրոցէն ի Ծոփս։ Սուրէն Խռախոռունի, Վահան
Առաւեղեան և Աշխադար Դիմաքսեան, զորս յիշեցինք վերագոյն՝
յափշտակելով գանձը՝ կամին երթալ առ Խոսրով, բայց արգի-
ւելով Սամելէ Մամիկոնենէ, բարեկամէն Արշակայ՝ կ՚ապաւինին
Մանանաղւոյ կողմերն անմատոյց այր մի։ Մինչ Սամէլ կը ջանար
հանել զնոսա այրէն և առնուլ գանձը՝ Սահակ ասպետ որ զհետ
էր աւազակներուն՝ կը հասնի հոն, և հալածելով զՍամէլ՝ կ՚ազատ-
է պաշարուածներն յայրին հանդերձ գանձիւն, և կը հասցունէ առ
Խոսրով։ Ասոր կը գրգռի պատերազմ ի մէջ Արշակայ և Խոսրովու։
Այս պատմութեան մէջ Խորենացին գեղեցիկ կը նկարագրէ զայրն
և զհնարս Սամէլի մերձենալոյ այրին».—Սուրենայ Խռախոռունւոյ
և Վահանայ Առաւեղինի և Աշխադարայ Դիմաքսենի գտեալ ժամ
պատեհ, զի էր հանեալ զգանձն Արշակայ յամրոցէն Հանւոյ՝ տա-
նել յաշխարհն Ծոփաց, զոր յափշտակեալ և կամեցեալ անցանել
առ Խոսրով՝ ոչ ժամանեցին։ Քանզի աճապարեալ Սամէլի Մամիկո-
նենի մտերմի Արշակայ, յոլովաձեռն գնդաւ զհետ մտեալ՝ փա-
խստեայս արկանէ յամուր այրս ի գաւառին Մանանաղւոյ,

մուտ ոչ գտանէր· բայց ի կողմանէ դոյզն ելք էին առ ի թաւալ և առաջի դրաց այրին սեալ էր ուղղորդ միապաղաղ, և ի վերուստ պաղանձաւ քուաւոր որ Հայի յանդունդս խորաձորոյն, և որ ինչ զերծանի՝ յանհնարին ուղխս սաստկութեան անկանի, անդադար հոլովմամբ գլորեալ, ոչ ուրեք լինել ոտնկալու: Վասնորոյ տարակուսեալ Սամէլ վարանէր առ անհնարութիւն տեղեացն: Եւ ազդարարեալ Արշակայ՝ հրամայեաց արկղ գործել երկաթակապ, և քաջ արանց ի ներքս մտանել, և այնպէս շղթայատող կարիւք ի վերուստ ի վայր իջուցանել ի դուրս այրին: Սակայն և ոչ այն ինչ վնասեաց, քանզի յոյժ ի զատ պահէր ցիրդն: Եւ մինչդեռ նոքա յայնմ էին՝ լինէր իմն ըստ դիպուածոյ բախտի հասանել անդր ասպետին Սահակայ բովանդակ գնդաւն Խոսրովայ, որով հետամուտ յեղուզակացն էր: Թողեալ զնոսա՝ դիմէ ի վերայ այնոցիկ որք ընդ այրին մարտնչէին, և հալածական արարեալ՝ հանէ զՍուրէն և զՎահան և զԱշխադար հանդերձ գանձիւքն, փոյթ ընդ փոյթ հասուցանէ առ Խոսրով: Իսկ Խոսրով առեալ ի գանձուցն՝ հանէ և մասն Տայհոյ. և հրամանաւ նորա տայ նոցա եւ գաստակերտս ընտիրս և յարմարս յայնոցիկ ժառանգութենէ, որք ի բաժնոյն Պարսից մնացին առ Արշակայ: Եւ այս եղև սկիզբն պատերազմին Արշակայ և Խոսրովու» (Խոր. Գ. ԽԵ.):

Ո՛չ Արկադ (իմա Թէոդոս), ասէ Խորենացին, և ոչ Տայուհ (Գ) օգնեցին Արշակայ և Խոսրովու այս պատերազմին մէջ, սակայն չարգելեցին ևս զնոսա: Ուստի երկու թագաւորք կռուեցան ի դաշտին Երևել ի գաւառին Վանանդայ: Կը յաղթուի Արշակայ զօրքը, Կ'սպանուի Գարա Սիւնի սպարապետ Արշակայ, որ փախչելով հազիւ կ'ազատի քաջութեամբ Գազաւոնի Կամսարականի յասպետէն Սահակայ, որ սաստկութեամբ կը հալածէր զփախստեայսն: Արշակ գալով յԵկեղեաց՝ տրտմութենէն կը մեռնի (386 կամ 387) ոչ յետ բազմաց հիւծական ախտիւ, «թագաւորն լաւ ի լաւաց թագաւորացն Հայոց», ասէ Գաթըրճեան:—«Թէպէտ և ոչ եղեն ձեռնտու Տայուհ և Արկադ (Թէոդոս) Խոսրովայ և Արշակայ, լինել զօրավիգն օգնականութեան առ ի տալ ընդ միմեանս պատերազմ՝ սակայն և ոչ արգելին զնոսա: Եւ սպառեալ պատգամաւորութեանն՝ ժողովեալ Արշակայ զզօրս իւր խաղայ ի վերայ Խոսրովայ: Գնաց և Խոսրով ի բանակէն իւրմէ առ ծովուն Գեղամայ, զոր Մուրսն կոչեն, ընդ առաջ Արշակայ, զի մի ի սահմանս իւր իջցէ. և ոչ այնչափ ատակեաց աճապարել, մինչև եգիտ զԱրշակ իջեալ յիւր սահմանն ի գաւառին Վանանդայ: Եւ պատահեն միմեանց ի դաշտին որ կոչի Երևել, և տան պատերազմ ընդ միմեանս սաստիկ յոյժ: Հարկանի

զօրն Արշակայ. մեռանի և սպարապետն նորա Դարա Սիւնի ի պատերազմին, և փախստական լինի Արշակ սակաւուք։ Եւ զհետ նորա մտեալ քաջին Սահակայ ասպետի սպարապետին Խոսրովայ՝ վարէր սաստկապէս։ Այն օր ահագին նահատակութիւնս ցուցեալ Գազաւոնի որդւոյ Սպանդարատայ, բազում անգամ դարձեալ յարձակմամբ ցրուէ զհետամուտսն և տայր պարապ ժամ գնալոյ Արշակայ։ Եւ դարձաւ Խոսրով ի տեղի իւր, և գնաց Արշակ յԵկեղեաց, և հիւանդացեալ անդ մաշարայական ախտիւք՝ ջերանի հիւծմամբ»։ Խորենացին կը յաւելու, թէ Յոյնք (իմա Թէոդոս) չդրին թագաւոր յիւրեանց բաժնին։ Այսպէս բարձաւ թագաւորութիւնն Արշակունեաց ըստ մասին, և արևմտեան փոքր, բայց ծաղկեալ և բարգաւաճ մասն Մեծին Հայոց եղաւ նահանգ Հռոմէական.—«Եւ այնուհետև ոչ ևս կացուցին Յոյնք ի բաժնի իւրեանց թագաւոր, այլ առաջնորդէր նախարարացն այնր կողման քաջն Գազաւոն» (Խոր. Անդ)։

Խորենացին հոս Խէ. գլխով կու տայ համառօտ ինչ տեղեկութիւն զՄեսրոպայ, զորմէ պիտի խօսինք յետոյ երկայնագոյնս, առնլով մանաւանդ ի պատմչէն վարուց նորա և աշակերտէն, ի սքանչելւոյն Կորենէ։ Ուստի մտանինք այժմ ի կարգ պատմութեան մերոյ։

Գ. Նախարարք Յունաց բաժնին տեսնելով, թէ Հռոմայեցիք (Թէոդոս) չդրին թագաւոր իւրեանց բաժնին՝ դժուարելով խոնարհեցան երթալ առ Խոսրով, առ որ կը գրեն թուղթ, զորոյ օրինակն կու տայ մեզ Խորենացին, ինչպէս նաև Խոսրովայ պատասխանն առ նոսա.—«Տեսեալ նախարարացն Հայոց, եթէ ոչ կացուցին Յոյնք ի վերայ նոցա թագաւոր, և դժուարին վարկուցեալ զանառաջնորդն լինել՝ խոնարհեցան կամաւ հնազանդել թագաւորին Խոսրովու։ Նմին իրի գրեն առ նա թուղթ օրինակ զայս. «Սպարապետն Գազաւոն և ամենայն նախարարք Հայոց մասինն Յունաց. տեառն մերում Խոսրովայ արքայի կողմանն Այրարատոյ խնդալ։ Ինքնին, տէր, գիտես զմտերմութիւն մեր առ յիշեալ թագաւորին մերում Արշակայ՝ զոր մինչև ցոր վախճանին անշիջելի պահեցաք. և արդ խոնարհեալ եմք նոյնպէս ծառայել քեզ միամտութեամբ՝ եթէ հաստատեսցես առ մեզ դաշամբք գիրս զայսոսիկ։ Առաջին՝ չյիշել զյանցանս մեր, զոր պատերազմեցաք ընդ քեզ ի հարկէ և ոչ ի կամաց։ Երկրորդ՝ զի դարձուսցես ի մեզ զամենայն ժառանգութիւնս մեր որ ի մասինդ Պարսից, զոր հատեր յարքունիս։ Երրորդ՝ հնարել թափել զմեզ ի կայսերէ, զի մի վրդովեսցեն զբնակութիւնս մեր որ ունիմք իշխանութիւն յայսմ բաժնի։ Եւ զայս պայման ուխտի գրել և խա-

հաստատել կնքեցես, զոր տեսեալ՝ փութասցուք ի ծառայութիւն ձեր: Ողջ լեր, տէր մեր»: Ըստ Խորենացւոյն՝ Խոսրով սա պատասխանը կու տայ այս թղթոյն. «Քաջ արանց Խոսրով Հայոց արքայ. առատեղատի Գազաւոնի և ամենայն նախարարաց մերոց ողջոյն: Նաւ ուրախ լերուք, զի և մեք ողջ եմք, և ուրախացաք ընդ լուր ողջունի ձերոյ: Եւ առաքեցաք ըստ խնդրոյ ձերոյ զայս պայման ուխտի: Առաջին՝ չյիշել զյանցանս ձեր, զոր չունէաք առ յանցանս իսկ, այլ երախտաւորս զմխամտելն առ թագաւորին Արշակունւոյ զոր պաշտէիքն, զի և առ մեզ զնոյն յուսամք լինել: Երկրորդ՝ զարձուցանել ի ձեզ զժառանգութիւնս ձեր, զոր ունիմք յարքունիս, բայց յոյժմանէ զոր ումեք ումեք պարգևեցաք, և ոչ շրջին պարգևք թագաւորաց առանց վնասու. մանաւանդ զի ի դիւան հօրն մերոյ տեսան Տայհոյ արքայից արքայի եմուտ. այլ փոխանակ ընդ այնր յարքունուստ լնումք զձերոյն պակասութիւնն: Երրորդ՝ թափեմք զձեզ ի գործակալացն Յունաց, թէպէտ պատերազմաւ ընդ կայսեր, թէպէտ խաղաղութեամբ: Եւ զքեզ, Գազաւոն, արիւն իմ և հարազատութիւն, ոչ ըստ վաղընջուց ազգականութեանն, այլ ըստ արդեանս, որ ի մօրէ քումմէ Արշանուշայ Արշակունւոյ, հանեալ զքեզ ի հայրենեաց քոց Կամսարականաց և ի մայրենիս քո լիս առեալ ազգ՝ Արշակունի անուամբ պատուեցից» (Խոր. Գ. ԽԲ.): Գազաւոն, ասէ Խորենացին, կը դարձունէ Յունաց բաժնին բոլոր նախարարներն առ Խոսրով, և կը պատուի մեծ փառօք: Խորենացին կը յաւելու նաև, թէ Սամէլ Մամիկոնեան, որ սպանած էր իւր հայրը Վարդան և մայրը Տաճատուհի ուրացութեան համար, բըռնելով Խոսրովայ թուղթը և նախարարաց թղթոյն պատճէնը՝ կ'երթայ առ Արկադ, և կը պատուի. իսկ թուղթերուն օրինակներն կը պահուին յարքունի դիւանն ի յիշատակ ապստամբութեանն Հայոց զօրաւորաց ժամանակս.—«Զայս տեսեալ Գազաւոնի՝ ընդ հուպ զարձուցանէ զբնաւ նախարարսն առ Խոսրով, և բարեբաստիկ եղեալ քաջափառութեամբ՝ հանդիպի ամենայն խնդրոցն և խոստմանցն: Բայց Սամելի Մամիկոնենի յինքն ըմբռնեալ զթուղթն Խոսրովու և զպատճէն թղթոց նախարարացն՝ զառուցեալ ի նոցանէ գնաց առ կայսրն Արկադ: Քանզի էր սպանեալ նորա զհայր իւր Վարդան և զմայր իւր Տաճատուհի՝ երկնչելով յաղագս ուրացութեանն, և ոչ իշխէր զառնչել ի Պարսից և ի քեռեաց իւրոց Արծրունեաց՝ նմա՝ հրամայէ զհաւատար Յունաց: Իսկ Արկադայ բարի արարեալ նմա՝ հրամայէ զհաւատար թղթոցն հեղլէն զրով ի դիւանի իւրում դնել, զի պահեսցին յիշատակք ազգաց ապստամբողաց, որ կայ մինչև ցայսօր» (Խոր. Անդ): Սամէլս այս էր Սամուէլն Մամիկոնեան, որ ըստ Բուզանդայ՝

գտնուեցաւ ի պատերազմին Մանուէլի ընդ Մերուժանայ, ինչպէս արդէն տեսանք, և զոր յետ պատերազմին կանայք շփոթեցին ընդ Մերուժանայ, այս վերջնոյն գլուխն համարելով Սամուէլի, քանզի Սամուէլ և Մերուժան նման էին յոյժ միմեանց։ Զիարդ և իցէ՝ Սամուէլ կամ Սամէլ չէր որդի Վարդանայ և Տաճատուրհւոյ, այլ Վահանայ ուրացելոյ, որոյ կին էր Որմիզդուխտ քոյր Շապհոյ ըստ Բուզանդայ (Բուզ. Դ. Ծ.), և Սամուէլ սպանելով զերկոսին՝ փախաւ յերկիրն Խաղտեաց (Բուզ. Դ. ԾԹ.) և ոչ առ Յոյնս։ Բուզանդ կը յիշէ նաև զՎարդան եղբայր Վահանայ, բայց ոչ զկին նորա Տաճատուհի։ Որմիզդուխտ, ըստ Խորենացւոյն՝ էր կին Մերուժանայ (Խոր. Գ. ԼԶ)։ Դիցուք թէ պատմութիւն Խորենացւոյն է ճշմարիտ, այսինքն Որմիզդուխտ էր կին Մերուժանայ, և Տաճատուրհի կին Վահանայ, որ սխալմամբ գրուած է Վարդան, և թէ Սամուէլ փախաւ առ Յոյնս ըստ Խորենացւոյն, և ոչ ի Խաղտիս ըստ Բուզանդայ. միթէ Արկադ ևս գրուած է սխալմամբ փոխանակ Թէոդոսի. քանզի եթէ ծնողասպանին Սամուէլի թուղթերն առնլով փախչելն առ Յոյնս եղաւ առ Խոսրովաւ, այն է 387 կամ 388—(քանզի այս է Գազաւոնի և նախարարաց առ Խոսրով երթալուն թուականը),—այսինքն առ Շապհով Գ. (385—389)՝ Խոսրով էր առ Թէոդոսիւ. նա ոչ Խոսրով միայն, այլ և յաջորդին նորա Վռամշապհոյ առաջին տարիներն կը կշռին վերջին 4 կամ 5 ամացն Թէոդոսի։

Ըստ մեզ՝ հօս յայտնապէս կը սխալի մեր պատմութեան հայրը կամ աղբիւր նորա ուստի կ՚առնու, շփոթելով ոչ միայն զՎարդան ընդ Վահանայ և զՏաճատուհի ընդ Որմիզդխտոյ՝ այլ և զԱրկադ ընդ Թէոդոսի։ Ցաւալին այն է, որ այս սխալմամբ, ըստ իւր վկայութեան՝ ծերունի պատմիչն մեր կասկածելի կ՚ընէ իւր պատմութեան այս մասին ուրիշ կէտերն ևս, զորս յիշեցինք և պիտի յիշենք։ Բայց մենք արդէն յայտնեցինք մեր սակաւ վստահութիւնն առ Խորենացին, ըսենք ևս, թէ առ ի չգոյէ ուրիշ աղբեր՝ մեծ զգուշութեամբ կ՚առնունք զԽորենացին իբրև աղբիւր յետ Բուզանդայ իբր ի հարկէ։ Գաթըրճեան ևս կը դնէ զՍամուէլ որդի Վարդանայ և Տաճատուհւոյ ըստ Խորենացւոյն, և ոչ Վահանայ և Որմիզդխտոյ ըստ Բուզանդայ, ինչպէս կ՚երևի՝ ի պատիւ Խորենացւոյն, նախամեծար առնելով զնա քան զԲուզանդ, բայց չհասնիլ իւր նպատակին, քանզի կ՚ստիպուի ուղղել զքերթողահայրն, ճանչնալով զսխալ նորա, և դնել Թէոդոս փոխանակ Արկադայ (Գաթըրճ. Պատմ. տիեզ. հտ. Բ. էջ 521)։

Խորենացին կը դնէ զՍամուէլ ապաւինեալ առ Յոյնս (Թէոդո

կամ Արկադ) և գտեալ ի նոցանէ բարիս․ սակայն չթուիր Հաւանական, թէ Թէոդոս, և ոչ իսկ Արկադ «բարի առնէին» մատնչի մը, որ ծնողասպան ևս էր։ Հաւանականագոյն է ուրեմն դնելն Բուզանդայ զՍամէլ փախուցեալ ի Խաղտիս յետ սպանութեանն․ իսկ առնուլ տանելն Սամէլի զթուղթս Խոսրովու և նախարարաց առ կայսր և վասն այսր գտանելն բարիս ի նոցանէ՝ չէ Հաւանական, ինչպէս պիտի տեսնենք յետոյ։ Ո՜րչափ ուրախ ենք, որ մեր պատմութեան մէջ նախամեծար ըրինք Խորենացւոյն զԲուզանդ իբրև ժամանակակից, ինչպէս էր իսկ արժան ըստ օրինաց անաչառ քննադատութեան։

Նաև զերթալն Գագաւոնի և Յունաց բաժնին նախարարաց, որ էին ի բնէ Պարսից բաժնէն, առ Խոսրով՝ չէր կրնար, ինչպէս կը կարծէ Խորենացին, ապստամբութիւն Համարել Թէոդոս կամ Արկադ, որ զիւր բաժինն ևս, ըստ Խորենացւոյն, յանձնեց Խոսրովու, սպարագայ մը՝ որ ըստ մեզ չէ Հաւանական։ Ասացաք թէ չէ Հաւանական, քանզի գիտեմք այլուստ արտաքին վկայութենէ, թէ իսկ և իսկ զկնի մահուն Արշակայ (386) Յունաց բաժինը եղաւ նահանգ Հռոմէական, այսինքն իշխանութիւն երկրին յանձնուեցաւ կոմսի, կամ զինուորական կուսակալի, թէպէտ Հայ նախարարներէն չառնուեցաւ ինքնօրէնութիւնն, զոր ի վաղուց ունէին իրենց երկիրներուն վրայ․ միայն մին ի նոցանէ ունէր գլխաւորութիւն իմն ի վերայ այլոց, այնպէս որ կայսրն առ նա կ'ուղղէր իւր Հրամաններն առ նախարարս։ Այսպէս ըստ Թէոդոսեան մատենին (գիրք ԺԲ. Տ. ԺԳ. Օր. 6) Թէոդոս արդէն 387-ին այս կարգադրութեան Համեմատ կը գրէ Գադդան կամ Գագանաս (թերևս Գագաւոն) Ծոփաց նախարարին, որ ունէր գլխաւորութիւնը․ «Գադդանայ, Նախարարի Ծոփաց աշխարհին։ Սահմանեմք զօսկին պսակական տալ այսրէն յետոյ և դարձուցանել առ նոսա՝ յորոց ոչ ըստ օրինի թուի Հանեալ, զի ըստ Հին սովորութեան օրինակի՝ ամենայն նախարարք ի սկըոյ Հպատակութեանն, որ պարտի Հռոմէական տէրութեանն՝ պսակ յիւրեանց ի սեպՀական ընչից արասցեն, մատուցանել փառաւորութեամբ մերում լուսաւորութեանս։ Տուեալ ԺԲ. կաղանդացն Յուլեայ, ի Կոստանդնուպոլիս, ի Վաղենտիանեայ Աւգոստեայ՝ երրորդ անգամ, և յԵւտրոպեայ Հիւպատութեանն» (Գաթըրճ. Տիեզ. պատմ. Բ. էջ 520, ծան. 2)։ Զայս կը թուի ակնարկել նոյն իսկ Խորենացին, որ ասէ յայտնապէս, թէ «Այնուհետև (զկնի մահուանն Արշակայ) ոչ ևս կացուցին Յոյնք ի բաժնի իւրեանց թագաւոր, այլ առաջնորդէր նախարարացն այնր կողման քաջն Գագաւոն, և աշխարհին իւրեանց մասինն կացուցին Յոյնք Կոմէսս իշ-

խանս»: Կամի ասել, թէ Գադաւոն ունէր գլխաւորութիւն իմն այն բաժնին նախարարաց վրայ, իսկ երկրին քաղաքական վարչութիւնն յանձնուեցաւ կոմսի, այսինքն զինուորական իշխանի: Թէոդոսի յիշեալ օրէնքն Յունաց բաժնին համար չփոխուեցաւ երբէք, ուստի և չենք կրնար երբև պատմական ընդունել՝ ինչ որ Խորենացին կը պատմէ ի սկզբան ԽԹ. գլխոյն, թէ Խոսրով խնդրեց յԱրկադեայ և առաւ Պարսից բաժնին վրայ նաև Յունաց բաժնին իշխանութիւնը.— «Իբրև տիրեաց Խոսրով բոլոր ամենայն նախարարացն Հայոց որում ցանկայրն՝ յղէ առ Արկադ և խնդրէ ի նմանէ հաւատալ յինքն զմասն Յունաց որ ի Հայս, զոր չէն կալեալ հարկեցեն նմա անսխալ, որպէս նորուն գործակալացն: Եւ կասկածեալ Արկադայ ի միաբանութենէ նախարարացն Հայոց, թէ միաբանութեամբ հանիցեն ի նմանէ և տացեն ի Պարսս զբաժինն զայն՝ կատարէ զխնդիրս Խոսրովայ»: Չէ պարտ մոռանալ, թէ Խոսրով չէր առ Արկադեաւ, ուստի և չէր կրնար ունենալ ընդ նմա գործ: Խոսրով արկաւ իշխանութենէն 391-ին, մինչ Արկադ առաւ զկայսրութիւնն 395-ին, որ է ամ մահուան մեծին Թէոդոսի: Այս դժուարութեանց նայելով՝ կը թուի մեզ թէ ի պատմութեան աստ Խորենացւոյն գոյ սխալ կամ շփոթութիւն: Իսկ գալով առ Սամուէլ՝ Բուզանդայ պատմութիւնն կը թուի մեզ աւելի պարզ և հաւանականագոյն, այսինքն թէ Սամուէլ առ մոլի նախանձաւորութեան կրօնից, սպանեալ զհայր իւր ուրացեալ և զմայրն մոգակրօնիկ՝ փախստեայ անկաւ ի Խաղտիս. իսկ ըմբռնումն թղթոյն Խոսրովու և նախարարաց և տարուլին առ կայսր, և հաւասարի նոցա դրուլին յարքունական դիւանի հելլէն գրով ի յիշատակ ազատամբ ազգին Հայոց, եթէ է ճշմարիտ՝ եղած է երբ 387-ին առ Թէոդոսիւ, առ որով էր Խոսրով, և ոչ տասն ամօք յետոյ առ Արկադաւ, երբ 397-ին, մինչ չկար Խոսրով: Ահա միւս ևս նշան սխալ ժամանակագրութեան Խորենացւոյն, որ երբ տասն ամօք յետակոյս կը խախտէ դիպաց ժամանակներն, ինչպէս արդէն ըսուեցաւ:

10. *Հոս հարկ է մեզ խօսել զկաթողիկոսութենէն Սահակայ: Արդէն տեսանք ի Բուզանդայ, թէ ինչպէս Պապ յետ մահուն Ներսէսի կարգեց կաթողիկոս զՅուսիկ ոմն ի զաւակէն Աղբիանոսի առանց հրամանի եպիսկոպոսապետին Կեսարու, և այս պատճառաւ ոչ սակաւ խռովութիւն ծագեցաւ ի մէջ Յունաց և Հայոց: ԶՅուսկանէ ասէ Բուզանդ, թէ էր այր լաւ, այլ թոյլ.—«Սա էր, ասէ, քրիստոնեայ, բայց համարձակութեամբ յանդիմանութեամբ ինչ ընդ ումեք չիշխէր բարբառել, զի երկչոտ էր և հաւան, և ըստ կամաց թագաւորին միայն ունէր զպատիւն, և կայր ի լռութեան և*

ի հանդարտութեան զամենայն աւուրս կենաց իւրոց» (Բուզ. Ե. ԻԹ.)։ Յուսիկան յաջորդեց, ըստ Բուզանդայ, Զաւէն, նոյնպէս ի զաւակէն Աղբիանոսի, եպիսկոպոս Մանազկերտոյ, որ էր վիճակ Աղբիանոսի, շնորհեալ նմա ի Խոսրովէ Կոտակայ (Բուզ. Գ. Դ.)։ ԶԶաւէնայ ասէ Բուզանդ, թէ էր այր խիստ, որկորուստ և ագահ, փոխեց կղերականաց հանդերձն ի ձև զինուորական, և ինքն ևս կ'զգենուր ճամկաւոր հանդերձներ, սամոյրենիս, կնգմենիս, և այնպէս կ'ելլէր ի բեմ.—«Եւ էր Զաւէնս այս անուանի, զաւակ Աղբիանոս եպիսկոպոսի ի գեղջէ Մանազկերտոյ. էր սա բարոյիւք չարաչար խիստ և նախանձոտ։ Բայց սակայն կրօնս մի (կարգ, կանոն) եդ յիւրում ժամանակի, զի ամենայն քահանայից ուսոյց տանել հանդերձ զինուորաց։ Թողին զկրօն առաքելական եկեղեցեացն, սկսան գնալ ըստ իւրեանց մտաց, զի ոչ ըստ կրօնիցն ագանէին քահանայքն զպճղնաւորն, որպէս օրէն էր ի բնէ, այլ սկսան զխտորկտուրսն ի վերայ ծնգացն ունել։ Եւ զարդարէին զհանդերձս իւրեանց պէսպէս նարօտօք, և սիգային որպէս ոչ վայել էր. և զմորթ մեռելոտի գազանացն քահանայքն անխտիր ագանէին, որ ոչ վայել էր։ Եւ ինքն Զաւէնն ածինեալս և զտապակեալս զժապաւինեալս նարօտօք ագանէր, զսամոյրենիս և զկնգմենիս և զգայլենիս ագանէր, և (քահանայքն) աղուեսենիս զանձամբ արկեալ՝ անխտիր ի բեմ ելեալ նստէին։ Որկորստութեամբ, ագահութեամբ, անառակութեամբ կայր Զաւէն զամենայն աւուրս կենաց իւրոց» (Բուզ. Զ. Բ.)։ Սմա յաջորդեց, ըստ Բուզանդայ, Շահակ ոմն Կորճեայ, որպէս ասէ. «Ապա Շահակ Կորճեայ եկաց գլուխ եպիսկոպոսաց փոխանակ Զաւէնայ յետ մահու նորա։ Եւ էր սա այր քրիստոնեայ, բայց ոչինչ զչարեցաւ ընդ կարգս Զաւէնայ, զոր եդեալն էր նորա՝ փոխել» (Բուզ. Զ. Գ.)։ Շահակայ յաջորդեց Ասպուրակ կամ Ասպուրակէս առ Խոսրովաւ վերջնով, դարձեալ ի զաւակէն Աղբիանոսի.—«Ապա յետ մահուն Շահակայ եպիսկոպոսի, ասէ Բուզանդ, եկաց գլուխ եպիսկոպոսաց Ասպուրակ ոմն ի զաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի, այր քրիստոնէամիտ, աստուածապաշտ, արդար, և առաջնորդեաց դրանն Խոսրովու. բայց միայն վասն կրօնիցն հանդերձոյն զեդեալ կարգն Զաւէնայ գնայլին» (Բուզ. Զ. Դ.)։ Եւ ի ԺԵ. գլուխ նոյն դպրութեան դարձեալ խօսի զնմանէ այսպէս. «Եւ էր, ասէ, գլխաւոր եպիսկոպոսաց Հայոց Ասպուրակ, այր սուրբ և բարեպաշտօն, երկիւղած յԱստուծոյ և ի մարդկանէ։ Բայց ոչինչ կարէր յանդիմանութեամբ խօսել ընդ ումեք, այլ ինքն ի լռութեան էր և ի համեստութեան, ի զգաստութեան, ի պարկեշտութեան, ի պահս և յաղօթս. յամենայն ժամ աղաչէր զԱստուած, բայց ի հանդերձն

զգենլոյ՝ ըստ կրօնիցն Զաւէնայ գնայր նա. ագանէր զամզայեալս և ժապաւինեալս։ Բայց էր սա այր քաղցր և խոնարհ, բարերար և մարդասէր զամենայն աւուրս կենաց իւրոց»։ Խորենացին չյիշեր զՅուսիկ, այն զոր ըստ Բուզանդայ Պապ դրաւ կաթողիկոս փոխանակ Ներսիսի, այլ կու տայ Պապայ զկնի Ներսիսի դնել յաթոռ կաթողիկոսութեան զՇահակ, զորմէ սակ միայն, «ոչ հեռի ի գովութենէ, զոր կացոյց (Պապ) փոխանակ Ներսիսի, առանց մեծ արքեպիսկոպոսին Կեսարու» (Խոր. Գ. ԼԹ.)։ Խորենացին գիտէ նաև զԶաւէն ի կարգի կաթողիկոսաց, բայց զկնի Շահակայ, (մինչ ըստ Բուզանդայ՝ Շահակայ նախորդն է Զաւէն), զոր յիշելով միայն կ'անցնի —«Բայց յերկրորդ ամի Վարազդատայ եկաց եպիսկոպոսապետ Հայոց Զաւէն, ի նոյն ազգականութենէ Աղբիանու»,—առանց յաւելլոյ ինչ զվարուց և զնորաձևութենէ նորա։ Ըստ Խորենացւոյն Շահակ ևս էր ի զաւակէ Աղբիանոսի, մինչ ի Բուզանդայ կը կոչուի «Կորճեայ»։ Իսկ զԱսպուրակիսէ, որ ըստ Խորենացւոյն է յաջորդ Զաւինայ՝ Խորենացին սակ լոկ, թէ «Եկաց յեպիսկոպոսութիւն Հայոց», և թէ էր «ազգական Շահակայ և Զաւինայ» (Խոր. Գ. ԽԱ.)։

11. Զյաջորդն Ասպուրակիսի, զմեծն Սահակ չգիտեր Բուզանդ, և ոչ իսկ կը յիշէ զնա ի վախճանի Զ. դպրութեան։ Բայց Բուզանդ, ինչպէս կարծեմք՝ վախճանած էր յառաջ քան զկաթողիկոսութիւնն Սահակայ, այն է յառաջ քան զամն 390, կամ իբր 3 կամ 4 ամօք յառաջ քան զմահն Արշակայ Գ, առ որ հասուցանելով կը դադարեցունէ զպատմութիւն իւր, ուստի և հաւանականապէս չգիտեր Արշակայ մահը, յետ որոյ կը թուի սկսեալ համբաւն առաքինութեան և իմաստութեան մանուկ յաջորդին Ասպուրակիսի։ Եւ եթէ նոյն համարինք ընդ պատմագրին «Փաւստեայ Բուզանդեայ» զՓաւստոսն, յիշեալ ի Ե. գլուխն Զ. դպրութեան Բուզանդայ — (և այս է արդարև, ինչպէս տեսանք այլուր, հաւանական ի նոյնութենէ և՛ անուան և՛ ազգին երկոցունց)—կը գտնենք, թէ այս Փաւստոսի կենդանութեան ժամանակը չ'անցաւ այսր քան զժամանակ կրկնակ թագաւորութեանն, այսինքն քան զժամանակն՝ յորում Արշակ և Խոսրով կը թագաւորէին միևնոյն ժամանակ, իւրաքանչիւր ուրոյն յիւրում բաժնին։ Արդ այս կրկնակ թագաւորութիւն տևեց մինչև 386 կամ 387, կամ մինչև ի մահն Արշակայ։ Ահա Բուզանդայ յիշեալ գլուխն. «Էր առ այնմ ժամանակաւ Փաւստոս եպիսկոպոս. սա ի ժամանակս Ներսեսի եպիսկոպոսապետին էր ի տան նորին իբրև թելակալ։ Քանզի էին ի ներքնի հայրապետին ի տան իւրում ընդ նորա ձեռամբ երկոտասան եպիսկոպոսք, աթոռակիցք իւր, գործակիցք և խորհրդակիցք, թող զայ-

լոց գաւառաց ամենայն եպիսկոպոսեանն որ ընդ նովաւ։ Այլ երկոքեան սոքա (Փաւստոս և Զորթ) էին յայնց երկոտասանեցն, և էին ի տեսչութիւն աղքատանոցացն հաստատեալք, և յամենայնի էին հաւատարիմք նորա ի ժամանակս նորա, և յամս Խոսրովու և Արշակայ երկուց թագաւորացն բաժանաւորացն դեռ ևս կային նոքա կենդանիք» (Բուզ. Զ. Ե.)։ Այս գլուխն է թերևս տեղեկութիւնն, զոր Բուզանդ կը խոստանայ տալ զանձնէ ի վախճանի ցանկին գլխոց Զ. դպրութեան։ Այսպէս անհնար էր Բուզանդայ, որ այնպէս նախանձախնդիր էր յիշել զշառաւիղս տանն Լուսաւորչին՝ չյիշել Ներսիսի որդին, եթէ սա սկսած էր զիւր փառաւոր ընթացսն առ նովաւ։ Նաև չէ անհաւանական, թէ Սահակ կը գտնուէր յայնժամ ի Յոյնս, ուր կեցաւ նա շատ տարիներ ի հրահանգս։ Այսպ առաջին յիշատակիչ կաթողիկոսութեանն Սահակայ է Խորենացին, որ մեր պատմութեան այս նշանաւոր կէտը կը պատմէ այսպէս. «Յետ այսր վախճանեալ եպիսկոպոսապետն Ասպուրակէս՝ ի տեղի նորա յաջորդէ Խոսրով զՍահակ որդի մեծին Ներսիսի, որդւոյ Աթանագինեի, որդւոյ Յուսկան, որդւոյ Վրթանիսի, որդւոյ սրբոյն Գրիգորի» (Խոր. Գ. ԽԹ.)։ Խոսրովայ ընտրելն զՍահակ ի կաթողիկոսութիւն՝ չէր վասն սերելոյն նորա միայն ի Լուսաւորչէն, այլ ունէր նաև հաւանականապէս ուրիշ, և քաղաքական պատճառ։ Խոսրով որ սկսած էր միտել ի Յոյնս՝ թերևս նպաստաւոր գտաւ իւր խորհրդոյն զՍահակ, սնեալն յունական հրահանգօք և ոգւով, ուստի և առանց հարցանելոյ արքայից արքային՝ կարգեց զՍահակ կաթողիկոս։ Այս պատճառաւ, և մանաւանդ ի պատճառս միտման նորա ի Յոյնս՝ Շապուհ Բ. ըստ Խորենացւոյն, բայց ըստ ճշգրիտ ժամանակագրութեան՝ Շապուհ Գ. կամ մանաւանդ Վռամ Գ, կը գրէ յանդիմանութիւն առ Խոսրով, և կ'ընդունի ի նմանէ խիստ պատասխան։ Խոսրով վերցունելով դիմակը՝ յայտնապէս կը խնդրէ յԱրկադեայ (395—408), յաջորդէն Թէոդոսի, օգնել նմա զօրօք, խոստանալով դարձունել ի նա զբովանդակ Հայս։ Վռամ (ըստ Խորենացւոյն Շապուհ Բ.) իմանալով զայս ի մատնութենէ նախարարաց Հայոց՝ կը ղրկէ զորդին իւր (Յազկերտ Ա., ըստ Խորենացւոյն Արտաշիր) ընկենուլ զԽոսրով աթոռութենէն։ Ի հրաժարել Արկադեայ օգնել՝ Խոսրով կ'ստիպուի երթալ ընդ Յազկերտի ի Պարս, և կը դրուի իբրև ապստամբ յԱնյուշ բերդն։ Խոսրովայ հետ իբրև կասկածելի կը տարուի նաև Գազաւոն, որոյ տունը կ'առնուի յարքունիս, ինչպէս նաև եղբօր նորա Տաւարշայ և Պարգևայ Ամատունւոյ, որ զօրօք զհետ պնդած էին Յազկերտի՝ ազատել զԽոսրով, և չյաջողելով կ'ստիպուին կռուել։ Ոմանք կ'սպան-

ուխն, այլ բռնուելով կը տարուին գերի, և մորթուելով և լցուելով իբրև տիկ՝ կը դրուին միշտ յանդիման Խոսրովու ի բերդին։

12. Յազկերտ յառաջ քան զմեկնելն կը թագաւորեցունէ Հայոց վերայ Խոսրովու, փոխելով զանուն նորա — առաջին անունն չէ յայտ — յանուն հօր իւրոյ և հաւուն՝ Վռամշապուհ, զՍահակ և զնախարարս կարգեալս ի Խոսրովայ կը խափանէ իրենց պատուէն, նոյնպէս զՅոյնս որոց Խոսրով տուած էր պաշտօն. — «Բայց Շապուհ (իմա Վռամ Գ.) էր ցասմամբ ընդ Խոսրովայ ի բարեկամանալն (սորա) ընդ Արկադեայ (իմա Թէոդոսի, քանզի Արկադ յետոյ է քան զթերութիւնն Խոսրովու) անձամբ, և յանհրաման կարգել յեպիսկոպոսութիւն զմեծն Սահակ, վասնորոյ յղեաց մեղադրութիւն հանդերձ սպառնալեօք. ըմբոստացաւ Խոսրով, և խրոխտով վեսական պատասխանեաց, արձակեաց զպատգամաբերսն անարգանօք։ Եւ խոկոյն խօսեցաւ ընդ Արկադեայ (Թէոդոսի), զի լուծեալ զհաշտութիւնն ընդ Շապհոյ (Վռամայ)՝ օգնեսցէ նմա զօրու, և սա դարձուսցէ առ նա զբոլոր աշխարհս։ Այլ Շապուհ (Վռամ Գ.) ի հրապուրելոյ դաշնակութեան նոհապետացս մերոց, նոյնհետայն առաքէ զորդի իւր զԱրտաշիր (իմա Յազկերտ) զօրուծանու ի Հայս։ Եւ ի հրաժարել Արկադայ (Թէոդոսի) ի կուսակցելոյն Խոսրովայ, և ոչ զօք յօտար ազգաց գտեալ ի սատարութիւն՝ անկարացեալ ընդդիմանալ կամ խուսափել ի նմանէ՝ չոգաւ առ նա։ Այլ Արտաշրի (Յազկերտ) ընկեցեալ զնա ի տէրութենէն, փոխանակ կացուցանելով զՎռամշապուհ եղբայր նորին՝ ոչ զմեծն Սահակ և ոչ զօք ի նախարարացն կարգելոցն ի Խոսրովայ եթող, այլ վրդովեաց ի պատուոյ իւրաքանչիւր. նա և հրամայեաց ևս ընդ Յոյնս զնոյն կարգ ունել։ Եւ թողեալ զունդ սատար՝ ինքն ի Տիզբոն փութայ հասանել, ի ծնրութեան հօրն ակն ածելով. — (այս, ինչպէս նաև ասելն յետոյ — «թագաւորեաց ամս հինգ»՝ կը յարմարին որդւոյն Շապհոյ Բ-ի ծերացելոյ, այն է Արտաշրի Բ, որ արդարև թագաւորեաց չորս կամ հինգ տարի, 380—384, բայց ժամանակք սոցա չեն յարմարիլ ժամանակին զորմէ բանքս են, ինչպէս պիտի տեսնենք ի ստորև) — ընդ իւր ունելով զԽոսրով՝ դնել յԱնուշն կոչեցեալ բերդի. որոյ թագաւորեալ ամս հինգ։ Ընդ նմա տարաւ զԳազաւոն, կասկածեալ յառնն քաջութենէ, և զառն նորա հրամայէ ունել յարքունիս, նոյնպէս և զեղբօր նորա Տաւարշայ և զՎարդեայ Ամատունւոյ։ Քանզի նոքա երկոքեանն հանդերձ զինուորօք իւրեանց ևթն հարիւրովք նկատեալ որսացան զյաջողութիւն ժամու ի ճանապարհի կարաւանին՝ զերծուցանել զարքայն իւրեանց Խոսրով, և ոչ աջողեցան ի պարուանդելոյ առից նորա

ի շղթայս։ Եւ հզօր մարտի եղելոյ՝ սպանան Շաւարշ և Մանուէլ
որդի Պարգևայ, և բազումք ընդ նոսա. իսկ Պարգև ի կալանս
ըմբռնեալ՝ ածաւ առաջի Արտաշրի (Վռամայ), և տիկ տեսակ գոր-
ծեալ ուռուցմամբ՝ հրամայեաց դնել յանդիման Խոսրովայ հանա-
պազ» (Խոր. Գ. Ծ.)։ Հոս ևս կարևոր է գիտել, թէ ժամանակա-
գրութիւն Խորենացւոյն չէ ուղիղ։ Թագաւորք Պարսից, զորս Խո-
րենացին կը յիշէ յանուանէ, ինչպէս Շապուհ Բ. և Արտաշիր Բ՝
չեն կշռէր ժամանակի դիպացն, զորս կը դնէ Խորենացին դիպեալ
առ նոքօք—Շապհոյ Բ-ի (310—380) և որդւոյ նորա Արտաշրի Բ-ի
հնգամեայ ժամանակն (380—384) յառաջ են քան Խոսրովայ թա-
գաւորութեան տարին, որ է 385,—և ոչ մանաւանդ ժամանակին
Արկադեայ, որ նստաւ 395-ին, այն է առ Վռամաւ Գ։ Այս Խորենա-
ցւոյն Շապհով և Արտաշրիւ պարտ է իմանալ զՎռամ Գ. (389—
399) և զՅազկերտ Ա. (399—420), ինչպէս նշանակեցաւ ի մէնջ։

13. Սահակաւ դադրած էր արու տոհմն ի զաւակէ Լուսա-
ւորչին. քանզի Սահակ, վերջին արու մնացորդ Գրիգորեան տան՝
չունեցաւ որդի, այլ միայն դուստր մի միամօր Սահականոյշ անուն,
զոր ամուսնացոյց Սահակ Համազասպայ ումեմն Մամիկոնենի։ Յետ
մահուն Սահակայ ասպետի, սպարապետին Խոսրովու՝ Սահակ կը
խնդրէր ի Խոսրովայ, և յետ կալանաց նորա ի յաջորդէն և յեղ-
բօրէ նորա Վռամշապհոյ (391—414)՝ տալ զսպարապետութիւնն
փեսային իւրում Համազասպայ։ Վռամշապուհ չհամարձակելով առ-
նել զայս առանց հրամանի Վռամայ, յիշելով զարկածս եղբօրն
այսպիսի պատճառաւ՝ կը ղրկէ զՍահակ յանձնարարական թղթով
առ թագաւորն, որ պատուով ընդունելով զՍահակ՝ կը շնորհէ նմա
ինչ որ կը խնդրէր. սպարապետութիւնը կը տրուի Համազասպայ
նոր կալուածներով, յանցաւոր համարուած ցեղերուն կը շնորհուի
ներումն և կը հրամայուի յետս դարձունել նոցա ստացուածներն,
որ յարքունիս գրաւեալ էին, բաց յաստիճանէ պատուոյն նոցա,
որ կ'իջնէ կրտսերագոյն նախարարութեանց կարգը. միայն Համա-
զասպայ տոհմը կը բարձրանայ ի հնգերորդ աստիճան ի կարգի
նախարարաց։ Այս ամենայն հրամանք թագաւորին իբրև օրէնք
կը գրուին յարքունական դիւանին.—«Սուրբք ոմանք երևելիք
առաջինք ի նախարարացն և ի վերադիտաց աշխարհիս, լուսաւո-
րութեան պատճառք, որդեծնութեամբ իջեալ ի մեծն Սահակ,
դադարումն եղև ուստերաց նորա, ունելով դուստր մի Սահակա-
նոյշ կոչեցեալ, որ տուաւ յամուսնութիւն Համազասպայ Մամիկո-
նենի։ Եւ ի մեռանել քաջ սպարապետին Հայոց Սահակայ ասպետի՝
ի տեղի նորա զնա (զՀամազասպ) աղաչեաց (Սահակ) կարգել Խոս-

րովայ արքայի, և զկնի կալանաց՝ եղբօր նորա Վռամշապհոյ։ Այլ սա հրաժարէր տուանց արքայից արքայի առնել զայս. յիշելով թէ սակս այսպիսի իրաց կրեալ վիշտս եղբայր նորին Խոսրով։ Վասն որոյ առեալ (Սահակայ) ի սմանէ (ի Վռամշապհոյ) թուղթս ի թախանձելոյ գատերն՝ ինքնին չոգաւ առ Արտաշիր (Վռամ) Պարսից արքայ։ Եւ մեծարի ի նմանէ յոյժ. նախ վասն քաջատոհմիկ ազգին Պահլաւկաց—(Խորենացին ըստ աւանդութեան՝ գիտէ զՍահակ իբրև սերունդ Անակայ՝ Պարթև կամ Պահլաւ).—դարձեալ և զի առաջի անհաւատից արգոյ և պատուական ցուցանէ Աստուած զծառայս իւր։ Որոյ զընաւն կատարեալ խնդիրս (Վռամ), նախ վասն փեսայի նորա Համազասպայ, դարձեալ և վասն մնացելոցն մեղուցեալ նմա ազգացն Կամսարական և Ամատունի, որ սուզեալ ղօղեալ էին յանյայտ տեղիս. վասնորոյ մաղթեաց գթալ իբր յաստուածային հրամանէ՝ ոչ բառնալ որդւոց զյանցանս հարց, մանաւանդ զի և հարք որք մեղանն՝ նոքին իսկ սակս այնր և մեռան։ Որոց մնացելոցն պարգևեալ զկեալն՝ հրամայեաց զտուն երկաքանչիւրոցն զկալեալսն յարքունիս դարձուցանել ի նոսա. բայց միայն ի գահ հայրենի ոչ հաստատել, այլ ի խոնարհ քան զբազումս մատուցանել նախարարս, ի կարգ կրտսերագունից պատրաստել։ Իսկ զազգն Համազասպայ, որ է տոհմ Մամիկոնեան՝ ի վեր մատուցանել, զի կարգեսցին ունել զհինգերորդ գահ նախարարացն Հայոց, և ի դիւանի իւրում գրել» (Խոր. Գ. ԾԱ.)։

14. Խորենացին կու տայ հոս հին ինչ պարսկական օրինաց վրայ կարճառօտ տեղեկութիւն, որոյ համառօտութենէն և մթութենէն սաչափ միայն կ'իմացուի, թէ ի նստել նոր թագաւորի յաթոռն՝ նախկին դահեկանք կը փոխուէին, և կը դրոշմուէր նոր դահեկան ի պատկեր նորոյ թագաւորին։ Իսկ դիւանն, այսինքն մատեանն յիշատակաց չէր փոխուէր, այլ կը պահուէր հինն, ուր կ'արձանագրուէին օրէնք և հրամանք նոր թագաւորին յանուն այս վերջնոյն, մինչև առնէր սա աշխարհագիր, և յայնժամ կը փոխուէր դիւանը։ Ուստի արտօնութիւնք որ տրուեցան Մամիկոնեանց, և միւս երկու ցեղերուն շնորհուած ներումն՝ արձանագրուեցան ի դիւանի նախորդ թագաւորին Շապհոյ Գ. կամ թերևս Շապհոյ Բ. յանուն Վռամայ, քանզի դեռ եղած չէր նոր աշխարհագիր։ Թէ ինչ նպատակաւ կը յիշէ Խորենացին այս օրէնքը չէ յայտ. հարկ է յիշել միայն, թէ այս եղաւ ոչ յաւուրս Արտաշրի Բ-ի և ոչ յաջորդին նորա Շապհոյ Գ-ի, այլ Վռամայ Գ-ի, որ որով թագաւորեց Վռամշապուհ, որոյ ժամանակ եղան յիշեալ դէպք, այսինքն յետ 391-ին, ուր Արտաշիր Բ. և Շապուհ Գ. յա-

առաջադոյն են քան զՎռամշապուհ։ Ահա Խորենացւոյն յիշեալ հատուածը. «Զերկուս զայս այսպէս պահէին սովորաբար. զի յորժամ նստէր արքայ նոր՝ նոյնժամայն փոխէին զդրամ գտեալ ի գանձս արքունի, զնորայն տպաւորեալ պատկեր. և զգիր գիւանին յայլ փոխեալ նորա անուամբ, սուղ ինչ զանազանեալ, ոչ բառնալով զհինն։ Իսկ եթէ յամիցէ ի տէրութեանն ամս բազումս և արասցէ աշխարհագիր նոր՝ թողուին զայն որ ի հնոյն փոխեցաւ, զի միայն ի նորայն վերագրեսցի անուն։ Արդ Արտաշիր ոչ ժամանէ ի կարճութենէ աւուրցն այլ առնել աշխարհագիր. յայնմ որ յառաջնոցն փոխեաց՝ իւր անուամբն հրամայեաց գրել զայդ ամենայն» (Խոր. Գ. ԾԱ.)։ Արդարև Արտաշրի Բ-ի և Շապհոյ Գ-ի թագաւորութիւնն եղև կարճ. բայց հոս ևս կը սխալի Խորենացին, քանզի յիշեալ դէպք, այսինքն երթալն Սահակայ ի Պարս և խնդրել ներումն վասն յանցաւոր նախարարաց՝ եղաւ առ Վռամշապհով, այսինքն յետ 391-ին, ուստի և առ Վռամաւ Դ, 389—400։

15. Ըստ Խորենացւոյն՝ արքայն Պարսից (Վռամ Դ.) հանդերձ սպարապետութեամբն, որում կը ցանկար Համազասպ՝ կը շնորհէ նմա նաև գեղեր և դաստակերտներ, և կատարումը կը յանձնէ Վռամշապհոյ առանձին հրովարտակաւ կամ թղթով, զոր կու տայ մեզ Խորենացին իբրև բուն պատճէն այն թղթոյն. «Հրամայեաց տալ գահու և պատուոյ (գահ և պատիւ)՝ հանդերձ իշխանութեամբ գիւղից և դաստակերտաց Համազասպայ, որում ցանկայրն սպարապետութեան Հայոց, հրովարտակ առ Վռամշապուհ մեր թագաւոր գրեալ զայս. Մազդեզանց քաջ, Արտաշիր արքայից արքայ. առ եղբայր Վռամշապուհ թագաւոր Հայոց ողջոյն շատ։ Ընկալեալ զգրեալսդ քո, որ ինչ վասն եպիսկոպոսիս Սահակայ, և յիշեցի զերախտիս նախնեաց դորա, որ էին նահապետք Սուրէնեան Պահլաւոյ, և կամաւ յանձն առին զտէրութիւն իմոյ նախնւոյն և համանուանն Արտաշրի. և այնչափ սիրեալ զնա քան զիւրեանց ազգայինսն՝ մինչ զի ոչ շատացան միայն ի Պարսից աշխարհէս մարտնչել ընդ նոսա, այլև ի ձեռն եկեալ նորին ազգաւ՝ սպանին զԽոսրով դքո նախնին, և զտոյժս սպանութեանն իւրեանց հատուցին մահուամբ։ Իսկ որդի սպանողին Գրիգոր, զկեանս և զթագաւորութիւն կորուսեալ հիւանդութեամբ Տրդատայ՝ վերստին ետ իւրով բժշկութեամբ, և առաւել առ ձեզ երախտաւոր։ Վասն որոյ զոր խայցեալդ դորա զՀամազասպ կացուցես ի վերայ զօրացդ սպարապետ՝ մեր հրամանաւ, և ազգի դորա տացես զգահ հինգերորդ պատուոյ նախարարացդ, և զգիւղս և զդաստակերտս, զոր

տուեալ է նախնեացն քոց Հարց զօրս՝ կալցին զոքա։ Սապէս և զունս վնասակարաց ազգացդ զոր կալաք յարքունիս՝ թողցես ի բաց, աներկիւղաբար ժառանգել նոցին մնացորդաց. բայց գոհուց Հայրենականաց պատուոյ մի արասցես արժանի. զի և մեք ի մերում դիւանի հրամայեցաք գրել։ Ողջ լեր» (Խոր. Գ. ԾԱ.)։ Որպէս այլուր ասացաւ՝ Խորենացին ի հաստատութիւն պատմութեան իւրոյ կը սիրէ բերել թուղթեր և նամակներ, յորոց դէթ ոմանց վաւերականութիւնը կասկածելի է։ Սոյա կարգէն կը թուի այս թուղթըն առ Վռամշապուհ։ Նախ՝ ըստ նամակին՝ գրողն է Արտաշիր Բ, քանզի համանուն իւր կը կոչէ զԱրտաշիր Ա.—«Կամաւ յանձն առին զտէրութիւն իմոյ նախնւոյն և համանուանն Արտաշրի». բայց Արտաշիր Բ. յառաջ է քան զՎռամշապուհ, ուստի և չէր կրնար գրել առ նա թուղթ։ Երկրորդ՝ նամակը կը յիշէ զսպանումն Խոսրովու, հօր Տրդատայ, յԱնակայ Պահլաւէ, Տրդատայ արկածը, և Հայոց դարձն ի ձեռն Գրիգորի։ Պարսիկ թագաւոր մը կրնար գիտնալ զայսոսիկ և յիշել, թէպէտև են վէպ, բայց ոչ այնպիսի բանիւք որ կը վայելեն ի բերան քրիստոնէի, և ոչ հեթանոս թագաւորի թշնամւոյ քրիստոնէութեան, որպիսի էր Արտաշիր՝ զսպանողն Խոսրովու, զբարեկամս Սասանեանց՝ համարել չարագործս—«հատուցին մահուամբ զտոյժս սպանութեան իւրեանց»,—զԳրիգոր կոչել բուժիչ Տրդատայ հրաշիւք—«զկեանս և զթագաւորութիւն վերստին ետ Տրդատայ իւրով բժշկութեամբ»,—և երախտաւոր Հայոց, դարձուցանելուն համար զնոսա ի քրիստոնէութիւն—«առ ձեզ եղև երախտաւոր»,—և ի վարձ այս երախտեացն նորա շնորհել զաւակի նորա Սահակայ խնդիրը—«վասնորոյ», ի վարձ երախտեացն Գրիգորի, «զորդեացեալդ զորս զՀամազասպ կացուսցես», և այլն։ Հաւանական է սակայն, թէ Վռամ հրաման տուաւ հրովարտակաւ կամ պատգամաւորաւ Վռամշապհոյ կատարել եղած շնորհումներն։ «Բայց յորժամ եկն մեծն Սահակ, ասէ Խորենացին, և զամենայն պարգևեալսն յԱրտաշրէ հաստատեաց՝ մեռաւ արքայն Պարսից Արտաշիր, և փոխանակ նորա թագաւորեաց Վռամ որ և Կրմանն կոչեցաւ՝ ամս տասն։ (Արտաշրի յաջորդեց ոչ Վռամ, այլ Շապուհ Գ. 384—389, և ապա Վռամ)։ Եւ զնոյն բարեկամութիւն կալաւ ընդ աշխարհս Հայոց և ընդ թագաւորին մերում Վռամշապհոյ և ընդ մեծին Սահակայ. և էր խաղաղութիւն ի մէջ Վռամայ և Արկադեայ» (Խոր. Գ. ԾԱ.). Խորենացւոյն պատմութեան այս մասին մէջ կարևոր կէտ է ժամանակագրութեան ուղղութիւնը։ Խորենացին տալով յաջորդել Արտաշրի Բ. (380—384) զՎռամ Գ. Կրման (389—399 կամ 400)՝ կը թողու դուրս զՇապուհ Գ. (384—389),

որ է ի մէջ Արտաշրի և Վռամայ: Այս ստամամբ յանկարծ կ'ուղ-
ղուի ժամանակագրութիւնն, այսինքն Վռամշապուհ, Վռամ և Ար-
կադ լինին ժամանակակից, և պատմութիւնը կը հաշտուի ժամա-
նակագրութեան հետ, ընդ որում կ'երթար խոտորնակ:

16. Եթէ պարտ է հաւատալ Խորենացւոյն՝ Վռամշապուհ
կ'իշխէր Պարսից և Յունաց բաժնին միանգամայն, տալով երկու-
տէրութեանց ևս հարկս.—«Եւ Վռամշապուհ ունէր զաշխարհս
մեր, և ծառայէր երկոցունց թագաւորացն, տալով զհարկս, զմա-
սինն Պարսից՝ Վռամայ, և զմասինն Յունաց՝ Արկադեայ» (Խոր.
Գ. ԾԱ.): Այս կը նշանակէ, թէ Հայաստան միացաւ միւսանգամ
առ Վռամշապհով: Սակայն այս չգտներ հաստատութիւն արտա-
քին պատմութենէ, և ոչ իսկ ի Խորենացւոյն, որ ինչպէս արդէն
տեսանք՝ իւր այս պատմութեան հակառակ կը վկայէ, թէ «այնու-
հետև (յետ մահուն Արշակայ) ոչ ևս կացուցին Յոյնք ի բաժնին
իւրեանց թագաւոր», այլ «աշխարհին իւրեանց մասինն կոմէսս իշ-
խանս»: Զնոյն կը կրկնէ իբր կէս դար յետոյ Պրոկոպիոս, թէ
«Յայնմ ժամանակէ հետէ կացուցանէ կայսր ի վերայ Հայոց կոմսս»:
Այնպիսի միութիւն հակառակ էր մանաւանդ քաղաքականութեան
Պարսից, որ կը ջանային որչափ հնար էր հեռացունել զՀայս բաժ-
նին իւրեանց ի Յունաց, և մօտենալն թագաւորի բաժնին իւրեանց
առ Յոյնս՝ էր նոցա կասկածելի, ինչպէս տեսանք Խոսրովու օրի-
նակէն: Հաւանական է սակայն, թէ Վռամշապուհ կը վայելէր ոչ
ի Պարսից միայն, այլև ի Յունաց մեծարանս, մինչև Վռամայ կամ
մանաւանդ Յազկերտի Ա.. (399 կամ 400—420) կարգել զնա միջ-
նորդ, ապաքէն ոչ առանց հաճութեան Արկադեայ, խաղաղել զգժ-
տութիւնն որ ծագած էր ի մէջ գործակալացն Յունաց և Պարսից.
—«Յայնմ ժամանակի հիւանդացեալ Արկադ, և շարժմանց ահա-
գնից և հրընկեցութիւն եղեալ ի Բիւզանդիոն, որ յաղագս մեծին
Յովհաննու՝ շփոթեալ լինէր թագաւորութիւնն Յունաց. և զօրքն
ընդ միմեանս պատերազմէին և ընդ Պարսս: Վասնորոյ Վռամ հրա-
մայեաց Վռամշապհոյ մեր թագաւորին իջանել ի Միջագետս, զի խա-
ղաղացուցեալ կարգեսցէ զնոսա, և համար երկաքանչիւրոցն հա-
ցէ գործակալացն: Եւ իջեալ նորա կարգէ զայս ամենայն» (Խոր.
Գ. ԾԲ.): Արդարև ի Կոստանդնուպոլիս եղան խռովութիւնք (403)
ի պատճառս Ոսկեբերանի որ աքսորուեցաւ, բայց այս ամենայն ե-
ղած է առ Յազկերտիւ Ա., և ոչ առ Վռամաւ Դ, որպէս կարծէ Խո-
րենացին:

17. Երթալն Վռամշապհոյ այս պաշտօնիւ ի Միջագետս՝ ե-

զաւ Հայոց համար առիթ մեծ իմն օգտի, այն է հայերէն նշանագրաց գիւտին, զորմէ պիտի խօսինք առանձին։

«Վախճանեալ Արկադայ՝ ասէ Խորենացին (Գ. ԾԳ.), փոխանակ թագաւորէ նորին որդի, որ կոչեցաւ Թէոդոս փոքր (408—450), և զնոյն բարեկամութիւն (զոր ունէր Արկադ) կալաւ ընդ մերում աշխարհիս և ընդ արքային մերում Վռամշապհոյ։ Բայց—կը յաւելու—զմասն իւր նմա ոչ հաւատաց, այլ ինքեան գործակալօք կալաւ»։ Ա՞յս էր արդեօք բարեկամութիւնն Թէոդոսի առ Վռամշապուհ։ Վռամշապուհ իշխանութեամբ արդարև փոքր, բայց արդեամբք մեծ՝ եղաւ ևս աւելի մեծ, սատարելով իւր ժամանակին երկու մեծ լուսաւորաց, Սահակայ և Մեսրոպայ, ի գործ դպրութեան ազգին և բարձման մնացորդաց հեթանոսութեան, ինչպէս պիտի տեսնենք յետոյ։ Զայս, ինչպէս նաև Վռամշապհոյ պատմութեան ուրիշ կէտերը՝ կը բովանդակէ ճարտար գրիչ մը գեղեցիկ յօդուածով, ոչ չենք կրնար առանց օրինակելու անցնիլ. «Առ հանդարտ և իմաստուն թագաւորաւս ոգի առ աշխարհն Հայոց՝ լռելով անդադար հակառակութեան նախարարութեանցն ընդ միմեանս և ընդ թագաւորին։ Գործէր նա ձեռն ի ձեռն ընդ եպիսկոպոսապետին և և ընդ համօրէն կղերականաց, որոց էր «պատուագիր» (Կորիւն), օգնական էր նա նոցա ի կրթութիւն բարոյից ազգին և յառաջութիւն կրօնից ջնջմամբ հեթանոսութեանն։ Էր սատար և յառաջացուցիչ դպրութեան ազգին իւրոյ, հոգաբարձութեամբ գիւտի հայերէն նշանագրաց և կարգմամբ դպրոցաց, սահմանելով զծախսն յարքունուստ։ Ո՜ տայր թէ և զկրթութիւն պայազատին իւրոյ և որդւոյ հասանէր նմա հանել ի գլուխ։ Թողեալ նորա ուստր մի զԱրտաշէս տասնամեայ՝ վախճանէր խաղաղութեամբ, յետ Խոսրովայ Բ-ի լեալ առաջին և վերջին թագաւոր Արշակունի՝ որ մեռանիցի անշարժ յաթոռոյ միահեծան թագաւորութեանն յոր միանգամ ել» (Գաթըրճ. Պատ. տիեզ. Բ. 523)։

18. Յետ մահուան Վռամշապհոյ (414) Սահակ կ'երթայ առ Յազկերտ (399—420) խնդրել զԽոսրով, որ կը պահուէր յԱնուշ բերդին, թէպէտ արձակ։ Յազկերտ կը շնորհէ Սահակայ խնդիրը՝ և Խոսրով գալով կը թագաւորէ միւսանգամ տարևոր ժամանակ միայն կամ աւելի պակաս։ Գազաւոն գերեկկեցն Խոսրովու մեռած էր. Խոսրով խնդրեց և ընկալաւ որդւոյ նորա Հրահատայ արձակումը, բայց չժամանեց տեսնել զնա. քանզի Հրահատ յետ մահուան հօրը տարուած էր աւելի հեռաւոր տեղ.—«Յայնմ ժամանակի (յետ մահուան Վռամշապհոյ) երթեալ մեծին Սահակայ ի դուռն արքային Պարսից Յազկերտի խնդրել զկապեալն Խոսրով, որ զկնի մահ-

ւանն Արտաշրի (Վռամայ) լուծեալ պահեցաւ արձակ յԱնուշն կոչեցեալ բերդի։ Եւ Յազկերտի հաւանեալ կատարել զհայցուածսն, տալով նմա (Խոսրովու) զտէրութիւնն՝ արձակեաց զնա ի Հայս։ Սա (Խոսրով) խնդրեաց զՀրահատ որդի Գազաւոնի, որ յետ հօրն նորա մահուան հանեալ յանյիշելի ամրոցէն՝ անդր ևս քան զՍագաստան էր գումարեալ. զոր ոչ ժամանեաց տեսանել Խոսրով՝ մի և եթ ի կրկնումն թագաւորեալ ամ» (Խոր. Գ. ԾԵ.)։

Դժբախտութեամբ Յազկերտ, որ քան զնախորդս իւր աւելի սիրով էր ընդ քրիստոնեայս՝ յանկարծ կը փոխուի, գրգռուելով ի մոլեռանդութենէ քրիստոնէից ոմանց, որ իշխեցին ատրուշան այրել—քրէական յանցանք ի Պարսս։

19. Յազկերտ, որ չէր կրնար բռնութեամբ վարուիլ ընդ Հայս՝ խորհեցաւ այլ հնարս. փոխանակ տալոյ նոցա քրիստոնեայ թագաւոր հայ՝ ղրկեց զիւր որդին զՇապուհ (416—420), խորհելով, որպէս ասէ Խորենացին՝ այնու մեղմով իմն ընդելացուցանել զնախարարս Հայոց ի կրօնս Մազդեզանց. բայց չաջողեցաւ։ Քանզի նախարարք չարարին Շապհոյ պատիւ իբրև թագաւորի, նա մանաւանդ արհամարհանօք զնային ընդ նա։ Նախարարաց արհամարհոտ վարման օրինակներ կը յիշէ Խորենացին. «Յետ որոյ (Խոսրովու) Յազկերտ ոչ ևս ի նոցանէ, այլ զՇապուհ զորդի իւր թագաւորեցուցեալ Հայոց, հնարս դաւնութեան խորհելով՝ իբր թէ այնպէս հանդիպեալ առ նմա նախարարքն յանգչիցին խօսիւք, տուրևառիւք, խրախճանութեամբ և զբօսանօք որսոց, այլ և եկամուտ հարազատութեամբ. զի մարթ լիցի զնոսա և ի դէն Մազդեզանց առաջնորդեցուցանել , որով ամենևիմբ զատչիցին ի Յունաց. ոչ գիտելով անմիտն, թէ Տէր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց. թէպէտ առժամայն աջողեցաւ։ Քանզի մեռեալ Համազասպայ, և ի սգի մեծի եղեալ Սահակայ՝ ոչ ոք ի միաբանութիւն հաւաքեաց զգունդս Հայոց, վասնորոյ դիւրամուտ եղև յաշխարհս Շապուհ, ընդ իւր ածելով զՀրահատ և զամենայն փառանդիսն. սակայն ոչ կարաց հաճել զմիտս նախարարացն, ամենեցուն ատեցեալ զնա, և ոչ արքայօրէն մեծարելին զնա յորս կամ ի խաղու։ Եւ երբեմն զհետ երամակաց ցռուց յանդգնագոյնս արշաւեալ ընդ խորտաբորտսն և ի վիմուտ տեղիս, յորմէ կասել սկսաւ Շապուհ։ Իսկ Առամայ Մոկացւոյ եպերեալ զնա ասէ. Գնա, գնա, աստուածորդիդ Պարսից, թէ այր իցես։ Եւ նա ասէ. Դու երթիցիր, զի ի քարինս՝ դիւաց է շահատակել։ Դարձեալ յայլում ժամու դիպեցաւ ի շամբս կինճս որսալ հրով, և Շապհոյ ոչ համարձակեալ ի թաւուտն քաջարշաւ լինել, մինչև շրջապատէր հուրն. և նորա զհայեցուածսն յերկուս

բաժանեալ՝ այսր անդր բերեալ լինէր երկմտութեան: Միւսանգամ ասէ Ատոմ. Աստուածորդիդ Պարսից, ահա հայր քո և աստուած, ընդէր զանգիտես: Իսկ Շապուհ ասէ. Թողեալ զկատակելդ՝ յանցանել ընդ հուրդ դարձո զքեզ, որ և ես զկնի քո. քանզի յառաջելն ձիս իմ խրտչի: Յայնժամ ոստանեաց զնա Ատոմ ասելով. Մինթէ և այդ քարինք իցեն, զի ես յառաջեցից. և արդ եթէ դու զՄոկացիս կոչես գիւագգիս՝ ես զՍասանեանսդ կոչեմ կնամարդիս: Եւ մտրակեալ զերիվարն՝ իբրև ընդ հովիտս ծաղկանց անցանէր ընդ հուրն, զերծուցանելով զՇապուհ: Եւ յետ այնր գիտացեալ, եթէ նա լուռ ոչ լինի՝ անցեալ գնայ ի Մոկաց աշխարհն: Այլ երբեմն ի մականական խաղուն երկիցս պատահեաց Շաւասպայ Արծրունւոյ զգնդակն հանել ի Շապհոյ: Եւ նորա ածեալ նմա մականաւն՝ ասէ. Ծանիր զքեզ: Իսկ նորա պատասխանեալ, թէ Այո, ասէ, ճանաչեմ և զիս արքայորդի ի սերմանէ Սանատրոյ, և ունիմ իշխանութիւն ընդ եղբարս քո զբարձն արքայի համբուրել, որպէս և անուանակոչեցեալս եմ: Եւ զայս ասացեալ յոյժ քամահաբար՝ ի ձիարձակարանէն արփայագնաց լինէր: (Այս բան Խորենացւոյն—«Որպէս և անուանակոչեցեալս եմ»՝ կ'ակնարկէ Արծրունի անուան նշանակութիւնը, որ առայժմ անծանօթ է մեզ): Դարձեալ երբեմն ի խնջոյսն ուրախութեան Խոսրով Գարդմանացի ի գինւոջ զեղխեալ առաջի Շապհոյ զօրէն սեղեխի տափեցելոյ զհետ ջնարահար քաջամատն կնոջ կրթէր: Ընդ որ ցասուցեալ Շապհոյ՝ հրամայէ ունել զնա և ի դահճի պահել. այլ նա ի փաղակաւորն հաստատեալ զաջն, որպէս զունակ Տրդատայ Բագրատունւոյ՝ յիւր տունն անցեալ գնայր, և ոչ ոք ի սպասաւորացն արքունի համարձակեալ արկանել ի նա ձեռն, յառաջագոյն գիտելով զփորձ առնն» (Խոր. Գ. ԾԵ.):

Շապուհ յետ անարդաբար թագաւորելոյ իբրև չորս տարի (416—419), լսելով զհիւանդութիւն հօր իւրոյ Յազկերտի՝ կը փութայ ի Պարս, բայց չհասնիր թագաւորութեան, քանզի հօրը մահուան օրը կ'սպանուի.—«Զքառեամ անարդաբար թագաւորեալ Շապհոյ՝ հասանէ նմա համբաւ հիւանդութեան հօրն, և գնայ փութանակի, իւրում տեղակալին հրամայելով զօրագլխի՝ ունել զմեծամեծս Հայոց և տանել ի Պարս: Իբրև եկն հասանել Շապհոյ ի Տիզբոն՝ մեռաւ հայրն նորա Յազկերտ, թագաւորեալ ամս մետասան: Ի նմին աւուր և նա անդէն ի դրանէ մարդկանն նենգեալ սատակեցաւ» (Խոր. Գ. ԾԶ.): Յազկերտ Ա. թագաւորեց ոչ 11, այլ իբր 20 տարի ըստ նմին իսկ Խորենացւոյ, որ գիտէ զնա թագաւորած Վռամշապհոյ 6-րդ տարին, այն է 399-ին, և մեռած 419-ին կամ 20-ին:

20. Շապուհ ի մեկնելն հրամայած էր իւր տեղակալին՝ բըռնել Հայոց մեծամեծներն և տանել ի Պարսս։ Բայց նախարարք գումարելով զզօրս իւրեանց, զօրավարութեամբ ուրումն Ներսեհի Ճիճրակացւոյ՝—այս անունն անծանօթ է մեզ—ընդդիմացան Պարսից զօրուն, որոց զօրագլուխն սպանուեցաւ ի քաջէն Ապրսամայ Սպանդունւոյ։ Մեծ քաջութիւն ցուցին, ասէ Խորենացին, մանաւանդ Վանանդեցիք։ Բայց արդիւնքն ոչ այլ ինչ եղաւ՝ բայց աւեր և ապականութիւն։ Ոչ սակաւ վնաս եղաւ նաև տէրութեան. քանզի նուաղեցան հարկք, և ճանապարհք լցան աւազակօք։ Այս անիշխանութիւնը տևեց իբր երեք տարի (419—421).—«Ի ձեռն քաջին և բարեբախտին Ներսեհի Ճիճրակացւոյ զօրագլուխ եղելոյ ժողովեալ նախարարացն Հայոց հանդերձ զօրօք իւրեանց՝ տան ընդ գընդին Պարսից պատերազմ, հարկանեն զզօրսն, և սպանանէ Ապըրսամ Սպանդունի զզօրագլուխն. և ինքեանք ցրուեալ տիրագլուխք անձնապահապետք յամենայն լերինս և յամուրս շրջէին, յորում համօրէն Վանանդեցիք երևեցան նահատակեալք քաջութեամբ։ Ուստի աղմկաւ և բազում խռովութեամբ մնացեալ աշխարհս մեր յանիշխանութեան ամս երիս՝ աւերեալ ամայանայր. վասնորոյ պակասեալ լինէին հարկք արքունի, և հատեալ ճանապարհք ռամկաց, և ամենայն բարեկարգութիւն վրդովեալ ապականէր» (Խոր. Անդ.)։

Այս պատմութիւն կը թուի թէ ծանր եղաւ Հայոց, ոչ միայն անիշխանութեան պատճառաւ, այլ և ի պատճառս պատերազմին որ ծագեցաւ ի մէջ Յունաց և Պարսից։ Հոս կը հասնի մեզ յօգնութիւն Սոկրատ պատմիչ ժամանակակից։ Արդէն 421-ին Վռամ Ե. դառնաբար կը պահանջէր զոմանս ի քրիստոնեայ Պարսից, որ ապաստանած էին առ Յոյնս և զորս Յոյնք չառին յանձն տալ։ Այս, ինչպէս նաև առևտրական վէճք գրգռեցին պատերազմ ի մէջ երկու տէրութեանց։ Հայաստան և Միջագետք եղան կռիւն զօրաց, թէպէտ ճակատք երկուց կողմանց չունեցան ուրիշ արդիւնս՝ բայց անդորոյն յաղթութիւններ և անօգուտ պաշարումներ։ Յոյնք ի զուր փորձեցին առնուլ զՄծբին, և ոչ Պարսիկք յաջողեցան ի Միջագետս։ Ի վախճանի կնքեցան դաշինք, և Հայաստանի բաժանումն հաստատուեցաւ միւսանգամ։ Այս խաղաղութեամբ ազատեցան Յունաց բաժնին Հայք. բայց այնք որ ի բաժնին Պարսից էին՝ կրեցին Վռամայ ցասման վրէժը։ Զայս կ'ակնարկէ թերևս ասելն Խորենացւոյն, թէ «Վռամ զքէն վրիժուցն խնդրեաց ի մերմէ աշխարհէս, խաղաղութիւն առնելով ընդ Յոյնս՝ ոչ ի բաժին նոցա հայի» (Խոր. Գ. ԾԶ.)։ Խորենացին զայս Վռամ կ'անուանէ Եր-

կրորդ, որ պարտի լինել Հինգերորդ: Կ'երևի թէ Խորենացին չգիտեր առաջին չորս Վռամներն (Վռամ Ա. 272—275, Վռամ Բ. 275—292, Վռամ Գ. ամիսս ինչ, և Վռամ Դ. 389—400):

21. Կարևոր է հոս գիտել, թէ ինչ եղաւ Սահակ այս անիշխանութեան ժամանակ: Սահակ տեսնելով զերկիրն յանիշխանութեան՝ գնաց Յունաց կողմը, բայց չգտաւ ընդունելութիւն ըստ արժանի իւր պատուոյն և աստիճանին, այսինքն իբրև եպիսկոպոս վիճակին, և ոչ թոյլ տրուեցաւ նմա ուսուցանել ժողովրդեան Հայերէն դպրութիւն նորագիւտ նշանագրով. —«Իբրև ետես մեծն Սահակ զայս ամենայն չարիս ի մասինն Պարսից՝ գնաց նա զկողմամբք արևմտից մերոյ աշխարհիս, ի բաժին մասինն Յունաց, և ոչ ըստ արժանեաց իւրոց եղև ընկալեալ» (Խոր. Գ. Ծէ.): Յետ գիւտին նշանագրաց բացուեցան արդարև դպրոցք, ինչպէս պիտի տեսնենք, բայց ի բաժնին Պարսից միայն, և ոչ ի բաժնին Յունաց, որպէս ասէ Խորենացին այլուր. «Մեսրոպ ժողովեալ մանկունս դպրոցս կարգեաց յամենայն գաւառս և ուսոյց զբնաւ կողմանս բաժնոյն Պարսից, բաց ի Յունաց մասնէն» (Խոր. Գ. ԾԴ.), և պատճառը կու տայ.—«Որք, ասէ, ընդ ձեռնադրութեանն տուգանեցան՝ վիճակեալ յաթոռն Կեսարու, վարել յունական դպրութեամբ», այսինքն որովհետև Սահակ առած չէր ձեռնադրութիւնն ի Կեսարիոյ՝ հոտը պիտի կրէր պատիժը, զրկուելով հովուէն և լեզուէն միանգամայն: Բռնութիւնը բռնութեամբ կը վանի. ուստի խորագէտն Սահակ գտաւ այլ հնարս: Կոստանդնուպոլսի եպիսկոպոսունք իբրև տիեզերական պատրիարք՝ կը պնդէին ունենալ վերին իշխանութիւն բոլոր մետրապոլտաց վրայ, թէպէտ այս վերջինք մանաւանդ Կեսարուն՝ հակառակ էին այս պահանջման: Սահակ նպաստաւոր գտնելով ինքեան Կոստանդնուպոլսի պատրիարքաց այս պահանջումը՝ խորհեցաւ բողոքել զմետրապոլտէն առ պատրիարքն, իբրև առ գլխաւոր. և որովհետև մետրապոլիտն աշխարհական իշխանաց ձեռօք կը գործէր՝ հարկ էր բողոքել նաև առ կայսրն: Ուստի գրուեցաւ թուղթ նախ առ Թէոդոս. «Խաղաղասէր կայսեր, տեառն իմում Աւգոստոս Թէոդոսի. Սահակ Հայոց եպիսկոպոս ի Տէր խնդալ: Գիտեմ զի համբաւ նեղութեանս մերոյ հասեալ է ի ներող լսողութիւն ինքնակալիդ. սակս որոյ յուսալով ի գթածութիւն բարերարութեանդ քո՝ դիմեալ ապաւինեցայ յառաջ ձեր. և ոչ հանդիպեցայ ընդունելութեան յիմում վիճակիս ի հրամանէ վերակացուացս սոցա. այնչափ ատեցեալ զմեզ՝ մինչև զնշանագիրս անգամ ոչ ընկալան, զորս եբեր նոյն այր, զոր առաքեցի առ ձեր բարերարութիւնդ, բազում անգամ ճգնեալ զորա յԱսորւոց ա-

խարհին։ Արդ հաճոյ թուեսցի տէրութեանդ ձերում ոչ անխչխան առնել զմեզ ի մերում վիճակիս, և հրամայել ընդունել զմեզ և զվարդապետութիւնս մեր։ Ողջ լեր»։

Ահա օրինակ թղթոյն Սահակայ առ պատրիարքն.

«Սահակ եպիսկոպոս Հայոց. առ վարդապետ մեր Ատտիկոս եպիսկոպոս աշխարհամուտ գրանդ, օրհնութեամբ ողջոյն։ Յուսացեալ ի ձեր սրբութիւնդ՝ առաքեցի զուսուցող մերոյ աշխարհիս Մեսրոպ և զթոռն իմ Վարդան, որպէս զի ի լսել քո ի դոցանէ զաղէտս նեղութեան մերոյ՝ բարեխօսեալ առ մեծի թագաւորիդ օգնեսցես մեզ, որպէս արդարև եղբայր սիրելի։ Ողջ լեր»։ Ինչպէս յայտնի է նամակէն՝ թուղթերուն հետ զրկուեցան նաև Մեսրոպ և Վարդան Մամիկոնեան թոռն Սահակայ, խօսել բերանացի։

Ըստ Խորենացւոյն՝ Սահակ գրեց նաև առ Անատոլիոս զօրավար կողմանց բաժնին Յունաց, աղաչելով զնա օգնել Մեսրոպայ և Վարդանայ ի ճանապարհորդութեան սոցա ի Կոստանդնուպոլիս. «Սահակ եպիսկոպոս Հայոց. քաջի զօրավարի Անատոլեայ խնդալ։ Շնորհ ունիմ Աստուծոյ յաղագս զքեզ պատրաստելոյ մեզ յապաւինութիւն. վասնորոյ զգացուցանեմ, զի ի հայթայթանս մերոյ նեղութեանս առաքեցի զուսուցանողդ մեր զՄեսրոպ և զթոռն իմ Վարդան ի դուռն արքունի. և աղաչեմ զքո քաջութիւնդ ձեռնտու լինել ճանապարհիդ։ Ողջ լեր»։

Անատոլիոս թղթով կ՚իմացունէ կայսեր զառաքումն Մեսրոպայ և Վարդանայ, և առնլով հրաման՝ կ՚ուղարկէ զնոսա։ Մեսրոպ զբազմութիւն աշակերտացն, զորս կը տանէր ընդ իւր, թողլով ի Մելիտինէ առ Ակակիոսի եպիսկոպոսի քաղաքին՝ կ՚երթայ ընդ եպիսկոպոսին Դերջանու ի Կոստանդնուպոլիս.—«Զայս տեսեալ Անատոլեայ, միանգամայն և զլուր առաքինութեանն Մեսրոպայ յիշեալ, որ յառաջագոյն հնչեցեալ էր զնմանէ՝ ոչ փոքր արար նոցա ընդունելութիւն, մինչև ի ձեռն փափուխ ընթացից գրով զգացուցանել կայսերն։ Առնու հրաման արժանապէս առաքել փութով։ Վասնորոյ արգելեալ ի քաղաքին Մելիտինէ զբազմութիւն աշակերտաց, զոր ընդ ինքեան ածեալ էր Մեսրոպայ, հանդերձ գլխաւորաւն նոցա Ղևոնդիւ առ եպիսկոպոսին Ակակիոսի, և իւր Անատոլեայ առեալ զՄեսրոպ և զՎարդան՝ տայ ցեպիսկոպոսն Դերջանու ցԳնիթ, և բարեփառութեամբ զնոսա յուղարկէ» (Խոր. Գ. Ծէ.)։

Սահակայ բողոքն իբրև առ բարձրագոյն ատեան չկարէր չթուել հաճոյ կայսեր, իբրև նշան հպատակութեան (որում կը թուի թէ կ՚սպասէր կայսր, ինչպէս կ՚երևի նամակէն), և մանաւանդ պատրիարքին, որ թերևս կը մնար այնպիսի առթի՝ ցուցնել իւր վե-

րին իշխանութիւնն ի վերայ մետրապոլտին. ուստի ընդունեցաւ Սահակայ խնդիրը.—«Մտին, ասէ Խորենացին, Մեսրոպ և Վարդան ի Բիւզանդիոն, և յանդիման եղեալ մեծի թագաւորին՝ առին զոր յուսային և զոր ոչն յուսային, և դարձան հանդերձ թղթով այսպիսեաւ. «Ինքնակալ Թէոդոս Աւգոստոս և կայսր Հռոմայեցւոց՝ մեծի Սահակայ եպիսկոպոսի խնդալ: Հրամայեալ մեր տեսանել զթուղթս՝ վերահասու եղաք գրելոցս առ ի քէն, և մեղադրեցաք յոյժ, զի ամենայն սրտիւ միտեցար զհետ հեթանոս թագաւորի, և մեզ ոչ թղթով բաւականացար ծանօթանալ: Եւ առաւել յայսմ մեղադիր եմք, զի արհամարհեալ զճարտարօքս որ ի մերում քաղաքիս՝ յԱսորեաց ոմանց խնդրէիր զիմաստից գիւտս: Վասնորոյ հաճեալ էաք ընդ մերոց ծառայից արհամարհել զայդպիսի ուսմամբդ. բայց զի յետոյ պատմեաց մեզ Մեսրոպ, թէ կատարումն արուեստից ի շնորհաց Վերնոյն եղև՝ գրեցաք զի ամենայն փութով ուսցին, և զքեզ պատուով ընկալցին, որպէս զորդարև վարդապետ իւրեանց, հանդոյն արքեպիսկոպոսին Կեսարու, և զարմանք և ծախք յարքունուստ եղիցին: Եւ հրամայեցաք քաղաք շինել յաշխարհիդ Հայոց յապաւինութիւն ձեզ և մերոց զօրաց: Եւ վասն քո արարաք ստրատելատ զՎարդան զորդի որդիացելոյ քո, և յառաջին վարդապետսն գրեցաք զՄեսրոպ: Ողջ լեր»: Գրեթէ նոյն մեղադրանօք, բայց ի նվաստ է թուղթ պատրիարքին.—«Ատտիկոս ինքնագլուխ եպիսկոպոս Կոստանդնուպոլսի. եղբօր սիրելւոյ և աթոռակցի, Սահակայ եպիսկոպոսի Հայոց ի Տէր խնդալ: Բազում գոհութիւն Աստուծոյ մատուցանեմք յաղագս քո բարեհամբաւութեանդ ի մէջ այդպիսի բարբարոս ազգի. այլ ազատ ի մեղադրանաց ոչ թողումք, որ ոչ կանխաւ յիշատակեցեր զսիրելութիւն Գրիգորի և Ներսիսի, երանելեաց քոց հարց: Եւ առաւել ընդ այս զարմանամք, եթէ զիարդ թողեր զաղբիւրն եկեղեցւոյ զհայր մեր սուրբ Յովհաննէս, որ ոչ միայն տիեզերական մայրաքաղաքիս, այլ սովաւ և ամենայն քրիստոնեայք և ընդհանուր աշխարհ ի նմանէ վարդապետեալ ուսանի, ուստի և Ոսկի բերան կոչեցին զնա: Եւ ձեզ զանց զնովաւ արարեալ՝ կամեցայք ի սահանական ջրոց զփափագ ծարաւոյն յագեցուցանել. մինչև Ամենակալին տեսեալ զնատի աշխատութիւնն՝ բխեաց ի ձեզ զշնորհս Հոգւոյն, ընդ որ այժմ ուրախ եմք: Իսկ արդ հրամանաւ ինքնակալին Աւգոստոսի առեալ լիցի քեզ իշխանութիւն վարդապետել զկողմնդ մեր. և աղանդոյն բորբորիտոնաց՝ կամ հաւանել և կամ հալածել ի քումմէ վիճակէդ: Եւ զառաքեալս ի քէն զՄեսրոպ ձեռնադրեցաք լինել եկղեսիաստիկոս» (Խոր. Գ. Ծէ.):

Հաւանական է թէ ի պատճառս անարժան ընդունելութեան, զոր տեսաւ Սահակ ի բաժնին Յունաց՝ եղաւ թղթակցութիւն ի մէջ Սահակայ մի կողմանէ, և Թէոդոսի և Ատտիկոսի միւս կողմանէ, և անտարակոյս յունարէն։ Ուստի եթէ օրինակ թղթոցն, զորս կու տայ մեզ Խորենացին, են վաւերական՝ թարգմանութիւն են։ Սակայն ինչպէս այլք ոմանք ի թղթոց զորս կը բերէ Խորենացին՝ նոյնպէս սոքա կու տան կասկած։ Մեղադրանք Թէոդոսի, ըստ Խորենացւոյն, զՍահակայ, թէ «ամենայն սրտիւ միտեցար զհետ հեթանոս թագաւորի, և մեզ և ոչ թղթով բաւականացար ծանօթանալ», թէ «արհամարհեալ զճարտարօքս որ ի մերում քաղաքիս՝ յԱսորեաց ոմանց խնդրէիր զիմաստից գիւտս», և թէ «հաճեալ էաք ընդ մերոց ծառայիցդ արհամարհել զայդպիսի ուսմամբ, բայց զի կատարումն արուեստիդ ի շնորհաց Վերնոյն եղև՝ գրեցաք զի ամենայն փութով ուսցին»—այսպիսի բանք, ասեմք, չունին ամենևին նշանակութիւն ի բերան Թէոդոսի։ Նոյնչափ անտեղի է մեղադրելն Ատտիկոսի զՍահակ, թէ «թողեր զաղբիւրն եկեղեցւոյ զհայր մեր սուրբ Յովհաննէս, որ ոչ միայն տիեզերական մայրաքաղաքիս, այլև ամենայն քրիստոնեայք և ընդհանուր աշխարհ ի նմանէ վարդապետեալ ուսանի, ուստի և Ոսկի բերան կոչեցին զնա, և ձեր զանց զնովաւ արարեալ՝ կամեցայք ի սահանակէն ջրոց զփափագ ծարաւոյն յագեցուցանել», և թէ «Ամենակալին տեսեալ զնորա աշխատութիւնն՝ բխեաց ի ձեզ զշնորհս Հոգւոյն»։ Հայք որ կը խնդրէին հնարել կամ գնել ի կարգի զնշանագիրս իւրեանց՝ չունէին պէտս դիմել Կոստանդնուպոլսոյ գիտուններուն և ոչ եկեղեցւոյ վարդապետի, որպիսի էր Ոսկեբերան, այլ քաջ հռետորներու կամ քերականներու, և արարին իսկ այնպէս ըստ պատմութեան։ Եւ ոչ այբուբեն մը արհամարհելի է՝ եթէ չէ հրաշիւք սրուած։ Դարձեալ այն չափազանց գովեստ զՈսկեբերանէ, թէ է «Աղբիւր եկեղեցւոյ», և թէ «Ոչ միայն տիեզերական մայրաքաղաքիս, այլ և ամենայն քրիստոնեայք և ընդհանուր աշխարհ ի նըմանէ վարդապետեալ ուսանի, ուստի և Ոսկի բերան կոչեցին զնա»՝ լեռնոյ մը բերան թերևս հնարաւոր էր, բայց ոչ Ոսկեբերանի անմիջական յաջորդին Ատտիկոսի, որ թշնամի իսկ էր նորա։

Մեսրոպ և Վարդան կու գան առ Անատոլիոս, որ իսկոյն կը կատարէ կայսեր հրամանը։ Սահակ կը հաստատուի ի վիճակին իւրում։ Յունաց բաժնին իշխանք և բազումք ի կղերականաց կու գան առ Մեսրոպ, որ կ'ուսուցանէ զնոսա՝ ինչպէս ուսուցած էր զարևելեայս.—«Եկեալ Մեսրոպայ և Վարդանայ ստրատելատի՝ գտին զզօրավարն Անատոլ հուպ ի մերս եկեալ սահման. որոյ

ընկալեալ զհրամանն արքունի՝ առաւել յօժարաբար և քաջափոյթ ձեռնարկութեամբ զգործն ի կատարումն աւարտեաց։ Քանզի իշխանք և գլխաւորք և որք միանգամ յայտնիք էին ի կողմանն՝ ի մի վայր եկեալ հասանէին հանդերձ ամենայն քահանայական ագաւն ինքնակամ, իբր յաստուածատաք ձայնէ հրաւիրեալ. զոր անյապաղաբար սկսեալ ուսուցանել՝ երագապէս վարդապետեցին ընկողմն արևմտեայն, որպէս զարևելեայն» (Խոր. Գ. ԾԸ.)։ Սահակայ մեծամեծ գործերէն մին ևս այս եղաւ, որ արդէն քաղաքականապէս պառակտեալ Հայք զերծան նաև եկեղեցականապէս պառակտելէ։ Առանց Սահակայ՝ Հայ ազգէն երևելի մաս մը վաղուց կորուսած էր և՛ զեկեղեցին և՛ զլեզուն, միութեան երկու զօրաւոր կապք յետ քաղաքականին։

22. Կորիւն ևս կը պատմէ Մեսրոպայ երթն ի Կոստանդնուպոլիս, առանց յիշելու թուղթեր գրուած ի Սահակայ առ կայսր և առ պատրիարքն, և ի սոցանէ առ Սահակ. ծածկութեամբ կ'անցնի նաև երթալուն պատճառը։ Ըստ Կորեան՝ Մեսրոպ կամելով վարդապետել նաև Յունաց բաժնին Հայոց՝ կ'երթայ ի Կոստանդնուպոլիս առնուլ հրաման, և ընդունելով մեծ պատուով կը գտանայ հրովարտակօք կայսեր առ Անատոլիոս զօրավար Անտիոքայ; և կը բանայ արքունի ծախիւք դպրոցներ յուսումն հայերէն նորագիւտ դպրութեան.—«Յորժամ այնպէս ընդ ամենայն տեղիս լի առնէր Մեսրոպ զսուրբ Աւետարան Տեառն և ամենեցուն զգուշացուցեալ զկենաց ճանապարհն վարելոյ՝ խորհուրդ առնոյր այնուհետև վասն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հոռոմոց։ Եւ փութացեալ գնայր հանդերձ աշակերտօք անցանել ի կողմանս Յունաց. և վասն առաւելագոյն բարեգործ համբաւուց յառաջագոյն զնմանէ անդ ի հիւսիսական կողմանց հռչակելոց, առաւել միմտութեամբ ընտանեբար յեպիսկոպոսաց աշխարհին և յիշխանաց և ի գաւառականացն պատուեալ, մանաւանդ ի սպայապետէն աշխարհին որ անուանեալ կոչէր Անատոլիս, որ գիրս առաջի եդեալ՝ գրով ցուցանէր կայսերն որում անուն Թէոդոս կոչէին, որդի Արկադու կայսեր. ուստի և հրաման ելանէր՝ վայելուչ մեծարանօք զսուրբն Ակումիդ (առաջին վարդապետ՝ ըստ Խորենացւոյն Գ. ԾԷ.) անուն կոչելոյ։ Իսկ նորա զբազմութիւն աշակերտացն (զորս ընդ իւր կը տանէր Մեսրոպ թերևս յուսումն հելլենարէն լեզուի) տարեալ ի քաղաքըն Մելիտինացւոց՝ յանձն առնէր սրբոյ եպիսկոպոսի քաղաքին զոր Ակակիոսն կոչէին, և գլխաւոր աշակերտացն Թողոյր զայն որում Ղևոնդէոսն կոչէին, այր հաւատարիմ և ճշմարտապաշտ։ Եւ առեալ երանելոյն (Մեսրոպայ) զպատուական եպիսկոպոսն Դերջանոյ որոյ ա-

նուն կոչէր Գինթ, և սակաւս յաշակերտաց անտի, և բազում պատիւ գտեալ՝ Հասանէին ի թագաւորակաց քաղաքն Կոստանդնական, զորմէ խնկոյն պատմէին յարքունիսն։ Եւ մտեալ առաջի պատուական աթոռոյն՝ յանդիման լինէր տասնածակարգ թագաւորացն և Հայրապետին սրբոյ կաթողիկոսին աշխարհամուտ դրանն որում Ատտիկոս կոչէին, յորոյ և գտեալ շնորհս՝ հրամայեալ լինէր ժամանակս ինչ անդէն ի տիեզերական քաղաքին մեծարել դարմանօք կարգելովք յեկեղեցւոյն և յարքունեաց և ի պատուական իշխանաց քաղաքին։ Եւ ապա յետ պատեհքին կատարելոյ ցուցեալ կայսերն զգիտոյից հանգամանս, և առեալ զանընդդիմակաց հրամանն հանդերձ սակրօք (բառ լատ. sacer—նուիրական, իբր գիր արքունի) կայսերագիր նշանակելովք վասն մանկտոյն յաշակերտութիւնն առ ի կէս ազգէն Հայոց ժողովելոյ, և եկեղեցեաց հաստատութեան, և մեծամեծ պարգևօք պատուել։ Վասնորոյ հաւանեցուցեալ ճշմարտին զարքունիսն, և երկիր պագեալ ծիրանափառ օգոստականացն և սրբոյ կաթողիկոսին, և ընկալեալ ողջոյն յեկեղեցւոյն և յերևելի իշխանացն քաղաքին, և ամենայն խրախուսովքն յաջողեալք՝ ելանէին ի դեսպակս ի կառս արքունատուրս։ Եւ մեծաւ շքով և բազում վայելչութեամբ ունէին զճանապարհս արքունականս, և ամենայն քաղաքացն պատահելով պայծառագոյն երևէին, մեծամեծ պարգևս գտեալ՝ գային հասանէին ի ժամադիր կողմանս. և անդէն վաղվաղակի պատահեալ սպարապետին Հայոց, հանդերձ սակրօք կայսեր յանդիման լինէին։ Եւ նորա առեալ սակրս կայսերական նշանօք՝ փութայր վաղվաղակի զհրամանն կատարել. և հրեշտակս արձակեալ այնուհետև ի գաւառս կէս ազգին Հայոց յիշխանութեանն կայսեր բազմութիւն մանկանց ժողովել, և նոցին ռոճիկս կարգել ի պատեհագոյն տեղիս, յոր և երանելին զվարդապետութիւնն իւր ի գործ արկեալ և ժողովելոցն քաղցրացուցանէր» (Կորիւն)։

23. Այն ինչ խաղաղած էր այս վէճն ի բաժնին Յունաց ի նպաստ Հայոց՝ Պարսից բաժնին նախարարներէն եկաւ հրաւէր առ Սահակ՝ երթալ հաշտեցուցանել զնոսա ընդ միմեանս. քանզի Վռամ (Ե.) տեսնելով, թէ առանց նախարարաց անհնար էր նուաճել զերկիրն՝ կ'առաջարկէր ի ձեռն Սմբատայ ասպետի խօսել ընդ նոսա ի հաշտութիւն։ Ուստի Սահակ յանձնելով վարդապետութեան գործն Մեսրոպայ՝ կը փութայ յԱյրարատ.—«Յայնժամ գային հասանէին ի բազում նախարարացն կոչնականք զմեծէն Սահակայ, զի ի մէջ նոցա անցեալ՝ ի միաբանութիւն հաւաքեսցէ զամենեսեան։ Քանզի գիտացեալ արքային Պարսից Վռամայ, եթէ առանց նախարարացն Հայոց ոչ մարթի ունել զաշխարհն՝ հաշտութիւն խօսեցեալ ի ձեռն

Սմբատայ ասպետի։ Վասնորոյ թողու զՄեսրոպ ի վերայ վարդապետութեան կողմանն արեւմտից, և առ նմա զԹոռունս իւր զՀմայեակ և զՀամազասպեան, զեղբարսն Վարդանայ սպարապետի... ինքն եկեալ անցանէ յԱյրարատեան գաւառն» (Խոր. Գ. ԾԲ.)։ Սահակ վարդապետութեան գործին հետ կը յանձնէ Մեսրոպայ ուրիշ գործ, այն է *չարչարանօք եւ մահուամբ* հալածել Բորբորիտոն կոչուած աղանդաւորներ, հին գնոստիկեաններէն մնացորդ, որ ապաւինած էին այն կողմերը։ Հալածել այս աղանդաւորներն՝ էր մին ի պայմանաց, որովք տրուեցաւ Սահակայ իշխանութիւն Յունաց բաժնին Հայոց վրայ ի պատրիարքէն Կոստանդնուպոլսի, ինչպէս տեսանք ի Թղթին Ատտիկոսի առ Սահակ ըստ Խորենացւոյն։ Կորիւն ևս Սահակայ տրուած արտօնութեանց կարգը կը դնէ այս հալածումը.—«Առեալ (Մեսրոպայ) զանընդդիմակաց հրամանն հանդերձ սակերօք (հրովարտակօք) կայսերագիր նշանակելով՝ վասն մանկտոյն յաշակերտութիւնն առ ի կէս ազգէն Հայոց ժողովելոյ, և վասն ժանտագործ ազգին բարբարոսաց (բորբորիտոնք՝ ըստ Խորենացւոյն), և եկեղեցեաց հաստատութեան»։ Ըստ Խորենացւոյն՝ Սահակ ի մեկնելն ի բաժնէն Յունաց՝ յանձնեց Մեսրոպայ կատարել այն պայմանը.—«Հրամայէր քննել զժանտագործ Բորբորիտոնսն, եթէ ոչ հեզութեամբ և ոչ սաստիւ դարձեն յուղղութիւն՝ չարչարանօք հալածել, զի թշնամանք ի թշնամանաց վրէժ առնուցուն, և խայտառակեսցի մահուամբ անիրաւ մահ հոգւոց»։ Կորիւն ասէ, թէ Մեսրոպ ի գալն ի Հայս՝ կատարեց այն հրամանը։ Յետ պատմելոյ թէ «Երանելին (Մեսրոպ) զվարդապետութիւն իւր ի գործ արկեալ ժողովելոցն քաղցրացուցանէր»՝ կը յաւելու. «Այլս յետ այնորիկ ձեռն արկանէր զժպատեհ և զկամակոր բարբարիանոս աղանդն քննելոյ. և իբրև ոչինչ գտանէր հնարս յուղղութիւն ածելոյ՝ առեալ ի գործ արկանէր ըզթշուառացուցիչ գաւազանն, ծանրագոյն պատուհասիւք ի բանտս, ի տանջանս, ի գելարանս։ Իսկ յորժամ այնու ևս պակասեալք ի փրկութենէն գտանէին՝ խարակեալս, ապախտանձեալս, մրեալս և գունակ գունակ խայտառակեալս՝ յաշխարհէն կորզէին» (Կորիւն)։ Ի բանից աստի Կորեան յայտնի է, թէ միջին դարուց հաւատաքննութեան կտտանօք կատարուեցաւ այն հալածումն, զոր չէ բաւական արդարացուցանել ժամանակին ոգին՝ հալածելու աղանդաւոր անուանեալներ։

24. Սահակ, ապաքէն խորհրդով նախարարաց զօրս գումարեց առ իւր՝ կը ղրկէ զՍմբատ և զՎարդան առ Վռամ։ Կը շնորհուի ներումն, և կը դրուի թագաւոր որդին Վռամշապհոյ Արտաշէս, պարսիկ անուամբ Արտաշիր, վերջինն Արշակունի թագաւորաց.—«Եկեալ

(Սահակայ) յԱյրարատեան գաւառն, կուտեալ զամենայն նախարարազունսն՝ առաքէ զՍմբատ ասպետ և զՎարդան սպարապետ զԹոռն իւր ի դուռն արքային Պարսից։ Եւ նորա հաստատեալ զհաշտութիւնն՝ մուրհակ մոռացման յանցանաց կնքէ, ըստ խնդրոյ նոցա Թագաւոր կացուցանելով զԱրտաշէս որդի Վռամշապհոյ. և փոխեալ զանունն, Արտաշիր կոչելով՝ զաշխարհս Հայոց ի նա հաւատաց առանց պարսիկ վերակացուի. որ տիրեաց ամս վեց» (Խոր. Գ. ԾԸ.)։

25. Խորենացին Գ. գրութեան ԾԹ. գլխով կը խօսի զամրութեանց Կարնոյ, զոր Անատոլիոսի համար ասէ թէ շինեց հրամանաւ փոքուն Թէոդոսի։ Արդէն ինքն Թէոդոս ի նամակին իւրում առ Սահակ, ըստ Խորենացւոյն, խոստացած կամ ծանուցած էր, թէ պիտի շինէր քաղաք յապաւինութիւն Հայոց և իւր զօրուն—«Հրամայեցաք քաղաք շինել յաշխարհիդ Հայոց յապաւինութիւն ձեզ և մերոց զօրաց»։ Խորենացին նախ կը նկարագրէ գաւառին այն մասն ուր եղան այն շինութիւնք. «Անատոլեայ զօրավարի ընկալեալ զհրամանն արքունի, եկեալ յաշխարհս մեր և շրջեալ ընդ բազում կողմանս մեր՝ հաճի ի գաւառին Կարնոյ իբրև ի միջոցի շինել զքաղաքն արգաւանդահող շատաջուր և բերրի. իբր միջոց վարկուցեալ զվայրն ոչ կարի ի բացեայ ի տեղեացն՝ ուր Եփրատայ մասին ինչ բղխեն աղբիւրք ականց, և հանդարտ գնացիւք յառաջացեալ ծովանան մօրաբար երևութիւք. յորում ամբաւութիւնք ձկանց և զանազան հաւուց ճարակաւորաց, յորոց ի ձուոց միայն կերակրեալ լինէին բնակիչքն։ Եւ զեզերբ մօրին շամբք և բազմութիւն եղեգանց. և դաշտքն ունին զԹանձրութիւն խոտոյ և զքաջաբերութիւն սերմանաւոր պտղոց, և լերինքն լի են երէովք կճղակաբաշխիւք և որոճայնովք. նաև զանասուն պաճարս բազմացուցանեն, մեծահասակս, քաջամարմինս և յոյրս ցուցանեն, համակեալս ի գիրութեան»։ Յետոյ կ'սկսի պատմել քաղաքին և ամրութիւններուն շինութիւնը շատ մութ ոճով։ Խորենացւոյն մթին նկարագրէն այսչափ միայն կը հասկնանք, թէ Անատոլիոս հաստատեց քաղաքը գեղեցիկ լերան մը ստորոտն, ուր մանր մանր աղբիւրք կը բխէին։ Իսկ քաղաքէն անդին դէպ ի լեռը բարձրաւանդակի՝ վրայ շինեց Թէոդոս անուամբ բերդ, զոր Խորենացին պատուար կ'անուանէ. և որովհետև պիտի շինէր վրան բարձր աշտարակ՝ շատ խոր փորելով «անդնդալիր հաստատեաց, ասէ, զհիմունս պատուարին»։ Անատոլիոս այս աշտարակաւոր բերդէն անդին, ի հիւսիսոյ, յարեւելից և յարևմտից շինել տուաւ ուրիշ աշտարակներ, որանք «ժայռաոր, ասէ, իբրև զնաւացուցս», այլ «բոլորաձև»։ Իսկ քաղաքին մէջ ծածուկ ջրմուղներով բերաւ առատ ջուր. ջերմուկներուն վրայ շինեց յարկեր կոփածոյ քարերէ. լցուց քաղաքը զինուք և պահա-

պան գնդովք, և անուանեց Թէոդուպոլիս, զի յիշատակաւ քաղաքին անմահանայ անուն կայսերն.—«Եւ առ ստորոտով մի գեղեցկանիստ լերինն գտեալ բազում աղբիւրս ականակիտս և մանունս բխեալ անդ եռեղագրեաց զքաղաքն, զորով շրջափակեալ խոր փոսիւ՝ անդնդալիր հաստատեաց զհիմունս պատուարին, և ի վերայ բարձրաբերձ աշտարակս ահագինս շինեաց, յորոց զառաջինն Թէոդոս անուանեաց ի պատիւ Թէոդոսի: Եւ ի նմանէ և անդր շինեաց աշտարակս ժայռաւորս իբրև զնաւացուցս և առանցս գոգաւոր խորշիւք, որք ընդդէմ հային լերինն: Սոյնպէս և ընդդէմ դաշտին հիւսիսոյ. իսկ ընդդէմ արևելից և արևմտից կանգնեաց աշտարակս բոլորաձևս: Եւ ի մէջ քաղաքին ի բարձրաւանդակ վայրի մթերանոցս բազմապատիկս շինեաց, և Աւգոստիոն անուանեաց ի պատիւ Աւգոստոսի: Եւ այլ ջուրս ընդ յոլով տեղիս ածեալ մտոյց անյայտ գնացիւք: Եւ ելից զինու և պահապան գնդիւք զքաղաքն, և անուանեաց Թէոդուպոլիս, զի յիշատակաւ քաղաքին անմահ լիցի անունն: Եւ ի վերայ ջերմն բղխեալ աղբերացն՝ յարկս ի վիմատաշ քարանց շինեաց» (Խոր. Անդ.): Բայց Կարնոյ քաղաքին վրայ աւելի ճիշդ տեղեկութիւն կու տայ Պրոկոպիոս յոյն պատմիչ Զ. դարու ժամանակակից Յուստինիանու կայսեր (527—565): Ըստ Պրոկոպիոսի՝ գլխաւոր ամրութիւնն զոր շինեց Անաստասիոս՝ էր բերդն անուանեալ Թէոդոս ի վերայ բլրոյ, դիւրին յառնուլ, որպէս և առաւ իսկ Կաւատ արքայ Պարսից, երբ եկաւ Ամիդ քաղաքին վրայ: Յետ սակաւուց Անաստաս կայսր (491—518) պարսպով պատեց բլբլուրն, ուր էր Թէոդոսի բերդը, և նորոգելով քաղաքը՝ կոչեց յիւր անուն, բայց չկարաց խափանել բերդին հիմնադրին Թէոդոսի անունը: Պարիսպը զոր շինել տուաւ Անաստաս՝ էր լայն, բայց ցած, ուստի և դիւրին էր թշնամեաց առնուլ զքաղաքն: Պարիսպը ոչ պատուար ունէր պատսպարուելու. և ոչ խրամ, այլ ընդ հակառակն բարձր բլուր կար մօտ ի վերայ քան զպարիսպն: Յուստինիանոս, որ մեծամեծ նորոգութիւններ ըրաւ Հայաստանի այն գաւառներուն մէջ որ կը վերաբերէին հռոմայեցւոց, կամելով առնել զքաղաքն անառիկ՝ խոր խրամ բացաւ զպարսպաւն զոր և ամրացուց պատուարաաշտարակներն ևս ամրացունելով արար մէն մի բերդ, և այսպէս առնելով զքաղաքն զօրանիստ Հայաստան կեցող զօրաց և զօրավարաց՝ ապահով գործեց զերկիրն յարշաւանաց Պարսից: Այժմու Կարին չէ այն հին Թէոդուպոլիս: Ահա բանք Պրոկոպիոսի. «Իբրև Թէոդոս կայսր գրաւեաց զթագաւորութիւնն Արշակայ՝ կանգնեաց ի բլրի ուրեք բերդ, որ կոչեցաւ Թէոդոսիուպոլիս, դիւրին յառնուլ, որպէս և առաւ իսկ ի Կաւատայ արքայէն Պարսից ի խաղալ նորա ի վերայ Ամ-

դացւոց քաղաքին։ Յետ սակաւ միոյ Անաստաս կայսր շինեաց անդ քաղաք, պարսպաւ պատեալ զբլուրն, յորում էր բերդն Թէոդոսի, և թէպէտ յիւր անուն կոչեաց զքաղաքն՝ զանուն Թէոդոսի առաջնոյ շինչին ոչ կարաց խափանել։ Պարիսպն Թէոդոսուպօլսոյ էր լայն յոյժ, այլ խոնարհ ըստ բարձրութեանն, զի էր ոտս իբրև երեսուն, ուստի և դիւրին էր առնուլ զայն թշնամեաց, մանաւանդ Պարսից, ի ժամանակս յարձակման։ Զանէր ինչ ի պատսպարութիւն պատուար ինչ, և ոչ իսկ խրամ, այլ բլուր ինչ բարձր յարուցեալ կայր ի մօտոյ ի վերոյ քան զպարիսպն։ Վասնորոյ Յուստինիանոս կայսր խրամ խոր առ պարսպաւն բացեալ, և զբարձրաւանդակն զայն հարթյատակ գործեալ՝ դարձոյց զտեղի նորա ի վիհս անմատոյցս և ի խոխոմս ահագինս։ Եւ առ ի զպարիսպն ևս գործելոյ բարձըր յոյժ և անմատոյց՝ ետ շինել ի նմա ամրութիւնս պէս զունակ այնց՝ զորս տուեալ էր շինել ի Տարա քաղաքի։ Ի պարսպի անդ եթող միջոցս բացեալս, որչափ ինչ բաւական էր ի ձգել զէնս. շուրջանակի ածեալ սրահ քարակերտ՝ ի նմա ևս եթող միջոցս բացեալս. կանգնեաց և արտաքուստ այլ պարիսպ երկրորդ, և զիւրաքանչիւր յաշտարակացն դարձոյց ի մէն մի բերդ ըստ նմանութեան պարսպին Տարայի։ Եւ այսպէս կարգեալ զտեղին զօրանիստ ամենայն զօրաց և զօրավարաց որ ի Հայս՝ կացոյց զազգն Հայոց անբոյթ յարշաւանաց Պարսից» (Պրոկ. գիրք Գ. շինուած. Գլ. Ե.)։

26. Դիտելու արժանի է, որ Կարնոյ նկարագիրն առ Խորենացւոյն կը թուի գրուած յետոյ քան զԵ. դար, քանզի կը յարմարի մանաւանդ շինութեանն Յուստինիանու նկարագրելոյ Պրոկոպիոսէ, քան շինութեանցն Թէոդոսի և Անաստասայ։ Բայց գրալիչ թագաւորութեանն Արշակայ չէր Թէոդոս փոքր, ինչպէս կը թուի կարծել Պրոկոպիոս, այլ Թէոդոս մեծ։

27. Արտաշիր, այն է Արտաշէս, որդին Վռամշապհոյ, ասէ Խորենացին յառաջ տանելով զիւր պատմութիւն, վարելով անառակ կեանս՝ եղաւ ատելի նախարարաց, որք յետ ամբաստանելոյ զնա առ Սահակայ, երբ գտան զնա անհաւան իւրեանց խորհրդոյն, որ էր մատնել զմանուկ թագաւորն՝ արքային Պարսից, և խնդրել պարսիկ իշխան՝ իրենց համամիտ երիցաւ միով Սուրմակ անուն գացին առ Վռամ բողոքել զԱրտաշրէ՝ թէ անարժան էր ի թագաւորել, և զՍահակայ՝ թէ միտեալ է ի Յոյնս.—«Բայց թագաւորն Հայոց Արտաշիր անհուն սկսաւ ողողանել յանառակ ցանկութիւնս, մինչև տաղտկանալ ի նմանէ ամենայն նախարարացն։ Որոց եկեալ առ մեծն Սահակ զբողոք բարձին, հրաւիրելով և զնա յօգնականութիւն իւրեանց՝ չարախօսել առ արքային Պարսից և ի բաց ընկենուլ ըզ-

թագաւորն իւրեանց, և պարսիկ ածել ունող աշխարհիս։ Այլ նա ասէ. Ոչ տա սուտս ունիմ զձեզ. իմ իսկ լուեալ է այդպիսի աղէտս ամօթալեաց, և բազում անգամ յանդիմանեալ՝ ուրացաւ։ Եւ արդ պարտ է փոքր մի տանել լթերութեան առնն մինչև զելս իրացն խորհել մարթասցուք կայսերբն Յունաց Թէոդոսիւ, և ոչ անօրինաց մատնել ի ծաղր և յալպանումն։ Եւ նոքա ոչ կամէին. այլ ջանային համախորհուրդ զնա իւրեանց առնել։ Այլ նա ասէ. Ինձ քաւ լիցի մատնել գայլոց զիմ մոլորեալ ոչխար, և ոչ պատել զբեկեալն կամ զհիւանդացեալն՝ այլ գահավէժ առնել։ Զի թէ էր հաւատացեալ թագաւորի առաջի՝ փութայի և ոչ յապաղէի, յուսալով զկանգնումն գլորելոյն. այլ հեթանոսաց, յաւաւել կործանումն՝ ոչ առնում յանձն, ըստ այնմ, թէ Մի մատներ գազանաց զանձն խոստովանող քեզ։ Քանզի դրոշմեալ է աւազանաւն, թէպէտև անառակ է. պոռնիկ է, այլ քրիստոնեայ է. գիճացեալ է մարմնով, այլ ոչ անհաւատ հոգւով. զեղխ է վարուք, այլ ոչ կրակապաշտ. տկար է ի կանայս, այլ ոչ ծառայէ տարերց։ Եւ զիարդ լինիցի այդ, փոխանակել զիմ ախտացեալ ոչխար ընդ առողջ գազանի, որոյ առողջութիւնն է մեզ պատուհաս։ Իսկ նախարարացն զմտաւ ածեալ, իբր թէ խաբկանօք լցէ գործն, յապաղել զնոսա զի զթագաւորն պատրաստեցուսցէ՝ ասեն ամենեքեան. Վասն զի ոչ համակամեցար մեզ չթագաւորել նմա՝ արդ և մեք կամեսցուք և քեզ չքահանայանալ մեզ։ Եւ միաբանեալ ամենեքին՝ անցին առ արքայն Պարսից Վռամ հանդերձ Սուրմակաւ ոմամբ արծկէացի փառամոլ երիցու, չարախօսել զարքայէն իւրեանց զԱրտաշրէ, և զմեծէն Սահակայ՝ զՅունովք գլեալ խորհրդովն» (Խոր. Գ. կԳ.)։

28. Արտաշիր և Սահակ անդէն կը կոչուին ի դուռն ի Վռամայ։ Ի Սահակայ կը խնդրուի ամբաստանել զԱրտաշիր. բայց նա չառնուր յանձն, և ոչ թախանձանք հազարապետին Արեաց, որ էր Սուրենեան Պահլաւ, ուստի և ազգական Սահակայ ըստ աւանդութեան (իբրև սերունդ Անակայ), կարացին հաւանեցուցանել զնա յայն։ Միայն չթուիր հաւանական Սահակայ «անմաքրասէր» կոչելն Պարսից կրօնքն ի խօսելն ընդ Սուրենայ.—«Յայնժամ արքայն Պարսից Վռամայ կոչեցեալ ի դուռն զթագաւորն Հայոց զԱրտաշիր և զմեծն Սահակ՝ խնդրէին ի նմանէ ամբաստանել զԱրտաշրէ. և նա հրաժարէ բնաւ ասել ինչ չար կամ բարի։ Ապա հրամայէ հազարապետին Արեաց որ է Սուրենեան Պահլաւ, զի հաւանեցուսցէ զնա խրատու սիրելութեան որպէս զազգայինն։ Եւ նորա անկեալ ի բանս հրապուրանաց ասելով. Զի արիւն իմ ես և հարազատութիւն՝ զբարին քո խօկալ ասեմ. եթէ միայն այժմ միաբանեսցիս ընդ նախարարացդ՝ մեծարեալ լինիցիս յարքայէն Պարսից, և զթոռն քո

Վարդան կարգեաց ի վերայ Հայոց զուգահաւասար թագաւորին և
համապատիւ: Այլ նա ոչ առնոյր յանձն առնելով. Զիա՞րդ վասն սնափա-
ռութեան և իշխանասիրութեան չարաբանիցեմ զընկերէ, կամ ընդէր
ձեր այդպիսի յօժարութիւն ընկենուլ զԱրտաշիր. զի ես զնորա աղը-
տամբութեան ինչ խորհուրդ ոչ գիտեմ. ապա եթէ վասն անառակ
ինչ վարուց, զոր նոքա ամբաստանենն՝ պատուոյ արժանի է ի ձէնջ
ըստ ծնրում անմաքրասէր օրինացդ, թէպէտ ըստ մերումն դատա-
պարտի. բայց սակայն յինէն ոչինչ էք լսելոց ամենևին» (Խոր. Գ. ԿԴ.):

29. Վռամ զայրանալով կը կազմէ ատեան, և առանց ուն-
կըն դնելու բանիցն Արտաշրի և լսելով միայն ամբաստանութեանցն
Սուրմակայ, որ գաղտ ի բանի էր ընդ նախարարսն՝ դատապարտելով
զԱրտաշիր կ'առնու ի նմանէ զթագաւորութիւնն, որպէս և զկաթո-
ղիկոսութիւնն ի Սահակայ. երկոցունց ևս ինչք կը գրաւուին յարքու-
նիս, և Սուրմակ կ'առնու կաթողիկոսութիւնը, զոր հազիւ տարի մը
միայն վարելով կը մերժուի նախարարներէն, ինչպէս նաև յաջորդ-
նորա Բրքիշոյ ասորի, որ եկաւ հրամանաւ Վռամայ, այլ զեղխ և
զօշաքաղ, տիրող վիճակացն, որ և ունէր կանայս ի սպասու,—յետ
երեքամեայ աթոռակալութեանն: Փոխանակ թագաւորի կը ղրկուի
մարզպան պարսիկ Վեհմիհրշապուհ անուն:

Այսպէս առ տկարութեան կամ մանաւանդ առ անմիաբանու-
թեան նախարարաց Հայոց բարձաւ մեծարոյ թագաւորութիւնն
Արշակունեաց, տևելով իբր 580 տարի, լեալ խաղալիկ ի ձեռս
քաղաքականութեան երկուց հզօր ոսոխ տէրութեանց—Հռոմայե-
ցւոյն և Պարսկին.—«Ապա զայրացեալ Վռամայ, ի մեծի հրապարակին
արարեալ քննութիւն, և ոչ դնելով ունկն Արտաշրի՝ յօժարութեամբ
լսէր չարախօսացն, առաւել ևս յոյժ աղտեղութեան բանիցն Սուրմա-
կայ: Քանզի զաթոռ եպիսկոպոսապետութեան էր նմա նախարարացն
խոստացեալ, թշնամասիրացն և ստախօսիրացն, վասնորոյ ինքնասի-
րութեամբ պատրաստեաց զլեզուն իւր սուսեր սատակիչ: Մինչև
հրամայեաց Վռամ առնուլ զթագաւորութիւնն յԱրտաշրէ, և ան-
դէն արգելուլ զնա, և զամենայն ինչս ազգի նորա առնել յարքու-
նիս. նոյնպէս և զմեծն Սահակ, և զտունն կաթողիկոսութեան ու-
նել յարքունիս, և տալ նորա փոխանակ յաթոռ եպիսկոպոսութեանն
Հայոց զՍուրմակն զայն: Եւ մեծապարգև զնախարարսն արձակեալ
պարսիկ մարզպանաւ, որում անուն էր Վեհմիհրշապուհ: Բայց Սուր-
մակայ ոչ աւելի տևեալ քան զմի ամ՝ ի նոցին նախարարացն Հալա-
ծեցաւ յաթոռոյն. որ ապա զիւրոյ գաւառին զԲզնունեացն զեպիսկո-
պոսութիւնն ի Պարսից արքայէն եգիտ ունել ազգաւ»:

ԳԼՈՒԽ Գ.

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ Բ. ԴՊՐՈՒԹԵԱՆ ԽՈՐԵՆԱՑՒՈՅՆ, ԺԴ. ԳԼԽԷՆ ՄԻՆՉԵՒ Ի ՎԱԽՃԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՆ։

Մինչև ցարդ, ի Տիգրանայ մեծէ մինչև ցանկումն Հարստութեանն Արշակունեաց (90 ն. ք. զՔր.—428 յ. Քր.), տուինք Հայ ազգին պատմութիւնն արտաքին և ազգային ժամանակակից աղբիւրներէ։ Բայց կայ միւս ևս աղբիւր ազգային, այն է Խորենացին, կամ լաւ ևս ասել՝ ուրումն Մովսիսի Խորենացւոյ անուամբ ծանօթ պատմութիւն, որ բազմօք կը տարբերի ցարդ յիշուած ժամանակակից աղբիւրներէն, կամ հակառակ է նոցա։ Եւ որովհետև այս պատմութեան, թէպէտ չէ ժամանակակից, մեծ յարգ կ՚ընծայուի, նա մանաւանդ համարուած է իբրև պատգամ կամ վճիռ մեր հնագոյն պատմութեան անգամ վերաբերեալ որևիցէ վիճի կամ խնդրոյ՝ հարկ է մեզ բերել ի մէջ. այն պատմութեան մանաւանդ այն կէտերն, որ տուած են և կու տան յիրաւի տարակոյս անաչառ և լուսաւորեալ քննադատի։ Որ և իցէ պատմութենէ կասկածել, և այնչափ առաւել որչափ հին է պատմութիւնն՝ իրաւացի է և պարտք ամէն անաչառ պատմչի, որոյ պաշտօնն պարտի լինել գտնել եթէ ոչ ճշմարտութիւնը՝ գէթ հաւանականութիւնը. և որովհետև այս ճշմարտութիւնն կամ հաւանականութիւն կախեալ է մեծաւ մասամբ պատմութեան աղբիւրներուն բնութենէն՝ մեր առաջին և կարևոր գործն է տեսնել, թէ ինչ աղբիւրներէ կը բխէ այս պատմութիւնն։

Մովսիսի Խորենացւոյ, յոր իբր վերադիր յաւելուած է նաև Քերթող կամ Քերթողահայր անունն, անձին վրայ ժամանակակից աղբերէ չունինք ամենևին տեղեկութիւն, բաց իւր պատմութեան ճակատէն—«Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց», որ չունի մեծ պատմական զօրութիւն։ Փարպեցին, Ե. դարու պատմիչ, չըյիշեր ամենևին ոչ զանուն գրոյն, և ոչ զհեղինակին, մինչ ուրիշ Հայ պատմչաց վրայ որ յառաջ են քան զինք, ինչպէս Ագաթանգեղոսի, Բուզանդայ, Կորեան՝ կը խօսի յանուանէ և երկար։ Խորենացւոյն վրայ մեր այս մասին մէջ խօսուեցաւ արդէն. հոս հարկ

է դարձեալ լուելուլ ինչ ինչ։ Յիշուելու կարեւորագոյն կէտն է ժամանակ պատմագրութեան Խորենացւոյն։ Եթէ ընդունինք իբրեւ ճշմարիտ, թէ պատմութիւն Խորենացւոյն գրուեցաւ ի խնդրոյ Սահակայ Բագրատունւոյ մարզպանի՝ հարկ է ընդունել, թէ գրութեան թուականն չկարէ լինել յետոյ քան 480 կամ 482, որ է թուական մահուանն Սահակայ Բագրատունւոյ։ Ուրիշ կողմանէ յայտնի է, թէ այն պատմութիւն չկարէ լինել գրուած յառաջ քան զամն 440 և 441, որ է թուական Սահակայ և Մեսրոպայ մահուան, ուր կը հանգուցանէ հեղինակն զպատմութիւն իւր։ Եւ որովհետև ըստ իւրում վկայութեան հեղինակն էր ծերացեալ, այսինքն գոնէ 70 կամ 75 ամեայ, երբ կը գրէր պատմութիւնը՝ ապա էր հասակակից իւր վարդապետներուն, Սահակայ և Մեսրոպայ։ Այս հաշիւ, ինչպէս տեսանք՝ կը հեռւի ի հանգամանաց պատմութեան Խորենացւոյն, բայց կու գայ հակառակ աւանդութեանն, որ կը դնէ զԽորենացին Սահակայ և Մեսրոպայ կրտսերագոյն աշակերտներէն, ուստի և մատենագիր առաջնոյ կիսոյ Ե. դարուն. բայց լինել կրտսերագոյն աշակերտ, միանգամայն հասակակից իւր վարդապետներուն՝ կը թուի տարօրինակ։ Ապա կամ թուական մատենագրութեան պատմութեան Խորենացւոյն ըստ վերոգրեալ հաշուին է մերժելի, և կամ աւանդութիւնն. ըստ մեզ երկոքին ևս։

Եւ ոչ՝ լինելն պատմութեան Խորենացւոյն գրուած ի խնդրոյ Բագրատունւոյ ասպետի՝ ունի հաստատութիւն առաջի լռութեան Փարպեցւոյն, որ չգիտէր ո՛չ Մովսէս Խորենացի պատմիչ յիւրում դարու, և ոչ պատմութիւն Հայոց յօրինեալ ի նմանէ ի խնդրոյ Սահակայ Բագրատունւոյ, որում ի մօտոյ ծանօթ էր Փարպեցին, ինչպէս այլուր ասացաւ։

Միւս ևս խնդիր է, թէ պատմութիւն Խորենացւոյն հասած է մեզ անարատ իւր սկզբնական ձեւովն, թէ կրած է յաւելուած կամ փոփոխութիւն։ Երրորդ դպրութեան ԿԱ. գլխոյն վերջին մասը, «բայց քանզի—վերաբանութեան», ԿԲ. գլուխն ամբողջ, ինչպէս նաև Ողբը՝ են կասկածելի, և հաւանականապէս այլոց և յետնագոյն գրչի գործ։ Զիարդ և իցէ՝ թողլով այս կնճռոտ խնդիրներն և նկատելով զգրուածն այնպէս ինչպէս կը գտնուի այսօր՝ տեսնենք նախ, թէ ինչ աղբիւրներէ կ'առնու Խորենացին։ (ԶԽորենացւոյն տես՝ և զԱ. մասն պատմութեան մերոյ, էջ 88—92, և այլուր)։

Զառաջին աղբերէ Խորենացւոյն, այն է զՄարիբասայ, որմէ առէ Խորենացին թէ կ'առնու իւր պատմութիւնն մինչեւ Արտաշէս (Ա. ըստ Խորենացւոյն)՝ խօսուեցաւ մեր պատմութեան առաջին մասին մէջ ըստ բաւականին (88—202). նոյնպէս զԱփրիկանոսէ,

որ է երկրորդ աղբիւր նորա, որպէս ասէ, յԱրտաշիսէ մինչև ցԵրուանդ (Խոր. Բ. Ժ.)՝ խոստացաւ բաւական մեր պատմութեան այն մասին մէջ, (էջ 264—265)։ Հոն ցուցուած պատճառներուն համար չենք կրնար ընդունել, թէ Խորենացին ունեցաւ զԱփրիկանոս, և ոչ՝ թէ Ափրիկանոս առաւ յԵդեսիոյ դիւանէն, այսինքն մատենադարանէն, ուր Խորենացին կ՚երազէ լինել մեր առաջին թագաւորաց գործերն մինչև ցԵրուանդ։ (Խորենացւոյն ճարտարմտութիւնն իմանալու համար համեմատէ Ա. Ը. ընդ Բ. ԼԸ.)։ Հոս կը յաւելունք սա ևս, թէ եթէ Ափրիկանոս քաղած էր իւր ժամանակագրութիւնը մեհենական պատմութենէն Սինոպայ (Խոր. Բ. Ժ), որ էր մայրաքաղաք Պոնտոսի՝ չէր կրնար զՄիհրդատ Ե, զանուանին և զհզօր ի թագաւորս Պոնտոսի, կոչել բդեշխ Վրաց։ Այնպիսի քաղաքի մեհենական պատմութեան մէջ հարկաւ յիշուած էին Միհրդատայ երկար պատերազմներն ընդդէմ Հռոմայեցւոց, դաշնակցութիւնն ընդ Տիգրանայ և ուրիշ շատ պարագաներ, որոց անգէտ է մեր պատմութեան հայրն։ Կը հարցունենք նաև, թէ Խորենացին ինչպէս գտաւ Ափրիկանոսի գրոց մէջ, որ էր համառօտ ժամանակագրութիւն և ոչ ընդհանուր պատմութիւն, եօթն հայ թագաւորաց պատմութիւնը։ Ափրիկանոսէ առաւ Խորենացին, և Ափրիկանոս ի դիւանէն Սինոպայ, թէ Միհրդատ էր քեռայր Տիգրանայ։ Ուստի յիրաւի է տարակուսել, թէ Խորենացւոյն պատմութեան այս կարևոր մասը, որ կ՚ընծայուի մեզ իբրև առնուած Ափրիկանոսէ՝ ոչ այլ ինչ է եթէ ոչ հաւաքածոյ աննշան աղբիւրներէ, կամ մանաւանդ, որ աւելի հաւանական է՝ քաղուած Յովսեպոսէ հանդերձ թերութեամբք նորա, կրճատելով կամ փոխելով ինչ ինչ, որ չէր համաձայն Խորենացւոյն դիտման, որ էր ցուցանել զՏիգրան անյաղթ և գրեթէ միահեծան տէր յառաջակողման Ասիոյ։ Արդարև Տիգրան էր յայնժամ արքայից արքայ, տէր ո՛չ Հայաստանի միայն, այլև Ասորւոց, և ունէր գոնէ վերին իմն իշխանութիւն Փոքուն Ասիոյ միոյ մասին (Կապադովկիոյ) վրայ. սակայն պարտ է խոստովանել ժամանակակից պատմութեան առջև, թէ շատ պարագաներ ստիպեցին զնա տեղի տալ բուռն և յամառ զօրութեան Հռոմէական աշխարհակալութեան։

Ապաքէն զարմանալի է, որ Խորենացին Տիգրանայ պէս հզօր և ըստ Կիկերոնի արդարև «մեծ» թագաւորի մը պատմութիւնը կը համառօտէ ինը մանր գլուխներու մէջ այնպէս կրճատ և խառն ի խուռն՝ որ չարժեր ամենևին բան առ բան յիշել։ Բաւական կը համարինք դնել Լանկլուայի դիտողութիւնը Խորենացւոյն պատմութեան այս մասին վրայ։ Հայասէր գաղղիացին, որ շատ անգամ

խնայելով և լռութեամբ կ'անցնի մեր պատմութեան հօր թերութիւններն՝ հոս չհամբերելով «Այս (ԺԷ.) գլխոյն մէջ համառօտեալ դէպք զՏիգրանայ, զՄիհրդատայ և զորդւոյ նորա երկար կը պատմուին, քան յոյն և լատին պատմիչներէ, այնպէս մանր մասամբք՝ որ կը ցուցնեն յայտնապէս, թէ Մովսէս Հորենացի յոյժ քննած է պատմական օտար յիշատակներ իւր երկրին պատմութեան վրայ։ Աղբիւրք յորոց կ'առնու նա իւր տեղեկութիւններն՝ էին կամ հակիրճ յոյժ կամ անստոյգ, և պատմութիւն նորա ունի սխալներ, զորս մի ըստ միոջէ նշանակել տղայութիւն է։ Բաւական է յոյն և լատին ժամանակակից պատմագրաց դիմել տեսնելու համար, թէ չէ ամենևին ճիշդ պատմութիւն Մովսէսի։ Ստուգագոյն աղբիւրք են Ստրաբոն, Ապպիանոս, Դիոն Կասսիոս, Եւտրոպիոս, Յուստինոս, Կիկերոն, Պլուտարքոս, Վէլլէոս Պատերկուղոս, որ կու տան մանր տեղեկութիւններ Տիգրանայ մանկան, պատանդութեան նորա ընդդէմ հօրն, փախստեան նորա ի Հռոմ, այլովքն հանդերձ, դէպք՝ զորովք բոլորովին լռութեամբ կ'անցնի պատմիչ մեր» (Վիք. Լանկլ. Ժողովածոյ հին և նոր պատմ. Հայոց. Հտ. Բ. էջ 89, Ծան.)։ Ընթերցողք մեր չունին ամենևին պէտս դիմելոյ յիշեալ աղբիւրներուն. մեք նոցա ընտիրներէն և մերձաւորագոյններէն ժամանակաւ՝ առած ենք ինչ որ կարևոր էր ի վերայ ծագման Տիգրանայ, թագաւորելուն նորա և զօրանալուն, տիրելուն Ասորւոց երկրին, այն երկրին ժողովրդենէն հրաւիրեալ, դաշնակցութեան նորա ընդ խնամւոյն իւրում Միհրդատայ Եւպատորի, երկար պատերազմներուն Հռոմայեցւոց դէմ իբրև զօրավիգն նորա, ի վախճանի տեղի տալուն Պոմպէի, խոնջեալ և պարտասեալ ծանր և անդուլ պատերազմներէ և ծերութենէ։

Խորենացին Բ. դպրութեան ԺԴ. գլխով կ'սկսի Տիգրանայ պատմութիւնն այսպէս. «Յետ Արտաշիսի առաջնոյ՝ թագաւորէ Տիգրան որդի նորա... և ժողովեալ զզօրս Հայոց՝ ընդդէմ երթայ զօրացն Յունաց, որք յետ մահուանն Արտաշիսի հօրն իւրոյ և ցըրուելոյ զօրացն՝ հետամուտ լեալ դիմեալ գային յաշխարհս մեր։ Որոց ընդդէմ պատահեալ Տիգրանայ՝ արգելեալ ի վերջ նահանջէ։ Եւ ի քեռայր իւր Միհրդատ հաւատացեալ զՄաժաք և զհոգս Միջերկրայցն, և զօր բազում թողեալ նմա՝ դառնայ յաշխարհս»։ Խորենացին կամ աղբիւր նորա կը թուին բոլորովին անգէտ Փոքուն Ասիոյ և Յունաց պատմութեան նախ քան զՔր. Ա. դարուն գրեթէ ամբողջ առաջին կիսուն մէջ։ Այս երկիրներուն պատմութիւնն, ինչպէս կ'աւանդեն ժամանակակից պատմիչք՝ չթողուր ընդունել յարձակումն ոչ յարևմտից յարևելս և ոչ յարևելից յարևմուտս յառաջ

քան զՄիհրդատ Ե. Թագաւոր Պոնտոսի։ Ուստի և չէ պատմական ոչ Արտաշիսի ուրումն Հայ Թագաւորի աշխարհակալութիւնն ի Փոքր Ասիա և ի Յունաստան, ոչ Յունաց կողմանէ արշաւանք Հայոց վրայ և ոչ Տիգրանայ կողմանէ զօրօք ընդդիմութիւն այնպիսի արշաւանաց։ Եւ աւելի հակառակ է ժամանակակից պատմութեան՝ զՄիհրդատ մեծ հզօր Թագաւորն Պոնտոսի դնել Տիգրանայ կողմանէ կարգեալ վերակացու Փոքուն Ասիոյ, որպէս Թէ այս Թերակղզին էր ընդ իշխանութեամբ Տիգրանայ։ Տիգրան Թագաւորած է իբր 95-ին նախ քան զՔր., այսինքն ամօք ինչ յետոյ քան զսկիզբն պատերազմին Միհրդատայ ընդ Հռոմայեցիս։

Միհրդատ 123-էն հետէ Ն. Ք. զՔր., այն է իւր Թագաւորութեան սկիզբէն, կը պատրաստուէր նուաճել զՓոքրն Ասիա և հանել զՀռոմայեցիս ի Թերակղզւոյն, ուր մուտ գտած էին նոքա 180-ին և ունէին ազդեցութիւն մեծ, մանաւանդ Թէ վերին իշխանութիւն Փոքուն Ասիոյ մանր մանր տէրութեանց վրայ։ Միհրդատ յետ նուաճելոյ լռելեայն այլ և այլ հիւսիսային բարբարոս ցեղեր, գումարելոյ իբր 300,000-է կազմեալ բանակ, և առնելոյ իւր դաշնակից զԹագաւորն Հայոց, զհայրն Տիգրանայ, որ նոյնպէս կը կոչուէր Տիգրան ըստ Ապպիանու՝ սկսաւ ի գործ դնել զիւր խորհուրդն 88-ին, այսինքն երբ Կասսիոս, մին ի դատաճանաց Կեսարու, էր փոխանակ բդեշխի յարևելս, իմա իբր 7 ամօք յետոյ քան զԹագաւորելն Տիգրանայ, ընդ որում նորոգած էր Միհրդատ դաշնադրութիւնը, և էր, ըստ միաբան վկայութեան յոյն և հռոմայեցի պատմագրաց՝ աներ Տիգրանայ և ոչ քեռայր նորա։ Այսպէս կ'սկսի 88-ին Միհրդատայ արշաւանն։ Հռոմայեցիք կը վանին յԱսիոյ, Միհրդատայ զօրավարն Արքեղայոս կ'անցնի 150,000 զօրօք Հելլեսպոնտոս և կը մտնէ Յունաստան. Յոյնք կ'ապստամբին, բայց Սուղղա գալով (87) կը վանէ զզօրսն Միհրդատայ, և Յոյնք կը նուաճին։ Այսպէս խորհուրդն Միհրդատայ չյաջողիր։ Հռոմայեցիք կը մտնեն միւանգամ յԱսիա, Միհրդատ կ'ստիպուի խօսել հաշտութիւն ընդ Սուղղայի (84)։ Յետ մահուն Սուղղայի (78) Միհրդատ կը նորոգէ պատերազմը. Ղուկուղղոս կը ղրկուի Միհրդատայ դէմ. Միհրդատ այս անգամ ևս յաղթուելով (72, 71)՝ կ'ապաւինի առ Տիգրան. Ղուկուղղոս կը պահանջէ ի Տիգրանայ տալ ի ձեռս զՄիհրդատ։ Տիգրան, տէր Հայաստանի և յաղթող Պարթևաց, որ թողած էին նմա Միջագետաց հիւսիսային մասն, տէր նաև Ասորւոց (Սելևկեանց) երկրին՝ կը մերժէ Ղուկուղղոսի պահանջումը։ Ղուկուղղոս սակաւ զօրօք կը մտնէ Հայաստան (69)։ Տիգրան լսելով զարշաւանն Ղուկուղղոսի՝ կու գայ բազմութեամբ զօրաց Ասորւոց երկրէն, կու տայ

ճակատ (68), այլ չյաջողիր. Տիգրանակերտ կ'առնուի։ Ղուկուղղոս կը խորհի առնուլ զԱրտաշատ, բայց իւր զօրաց դժգոհութենէն կ'ստիպուի դառնալ ի Փոքր Ասիա, յետ առնլոյ զՄծբին (67), որ էր քաղաք գանձուց Տիգրանայ։ Յետ Ղուկուղղոսի Պոմպէոս կը կատարէ Պոնտոսի և Հայոց գործը, զոր երկու մեծ զօրավարք, Սուղղա և Ղուկուղղոս, դիւրացուցած էին։ Միհրդատ կը մեռնի. Պոնտոս լինի նահանգ հռոմէական (64). գրեթէ նոյն ժամանակ Տիգրան կ'ստիպուի հրաժարել իւր բոլոր երկիրներէն Հայաստանէ դուրս (Ասորւոց երկրէն և ի Կապադովկիոյ), ընդունելով Հռոմայեցւոց վերին իշխանութիւնն իբրև պատուար Պարթևաց դէմ, ընդդէմ որոց կ'ուղղուէր Հռոմայեցւոց արշաւանն։

Այս պատմութեան մէջ, որ, որչափ և ի նպաստ Հռոմայեցւոց գրուած համարինք, է ժամանակակից և ստուգագոյն՝ չունին ամենևին տեղի դէպք պատմեալք ի Խորենացւոյն Բ. դպրութեան ԺԴ. գլխոյն առաջին մասին մէջ։ Խորենացւոյն Բ. դպրութեան ԺԴ. գըլխոյն երկրորդ հատուածն է մեհեաններու շինութեան, դից պատկերներուն և Բագրատունեաց հալածման վրայ։ Զայսմանէ տես մեր Պատմութեան առաջին մասն, էջ 170—179. իսկ դից պատկերներուն վրայ խօսեցանք արդէն։ Հոս սաչափ միայն կը յաւելունք, թէ եթէ այնպիսի պատկերներ բերուած են ի Յունաց՝ այս եղած է Միհրդատայ արշաւանաց ժամանակ ի Յոյնս, այն է 87-ին ասուտի և առ Տիգրանաւ որ էր դաշնակից նորա։ Չէ անհաւանական, թէ Տիգրան առընթեր հին դիցապաշտութեան Հայոց կամեցաւ տնկել յունական Պառնասն, և այս նորաձևութիւնն կը թուի մանաւանդ լեալ պատճառ դժկամակութեան Վահունեաց, որ էին հին քրմական ցեղ Հայոց ուստի և անկան քրմութենէ, քան կանգնելն նոցա զարձանն Հերակղի յԻւրեանց գիւղն յԱշտիշատ, համարելով զնա զԻւրեանց նախնին Վահագն։ Այսպէս նոր քրմական յոյն ցեղ փոխանակեց զՎահունիս. ուստի և կը գտնենք, ի դարձին Հայոց առ Լուսաւորչաւ՝ քրմական ցեղէն ի պաշտօն եպիսկոպոսութեան կարգեալ անձանց անուններն գրեթէ համակ յունարէն, ինչպէս Աղբիանոս, Եւթաղիոս, Եւսեբիոս, Ագապէս, Արտիթէս, Անտիոքէս, Տիրիկէս, Կիւրակոս (Ագաթ. ԾԻԱ.)։

Զարմանալի է որ Խորենացին Տիգրանայ իբր ութևտասնամեայ տէրութիւնն Ասորւոց երկրին՝ կ'իջեցունէ լոկ վրէժխնդրական արշաւանի.—«Եւ նոյնհետայն դիմէ յաշխարհն Պաղեստինացւոց՝ վրէժ պահանջել ի Պտղոմայիդ Կղէոպատրայ յաղագս Դիոնիսի որդւոյ նորա առ հայր իւր յանցանաց։ Առեալ գերի բազում և ի Հրէից՝ նստի շուրջ զՊտղոմայիդ քաղաքաւ։ Իսկ դշխոյն Հրէից Աղեքսան-

դրիա որ և Մեսաղինայ,՝ որ էր լեալ կին Աղեքսանդրի, որդւոյ Յովհաննու, որդւոյ Շմաւոնի, եղբօր Յուդայ Մակաբէի, որ զայնու ժամանակաւ ունէր զթագաւորութիւնն Հրէից, ինչս բազումս տալով դարձոյց զնա անտի։ Քանզի էր (Տիգրանայ) լուեալ և համբաւ թէ Վայկուն ումն անուն յելուզակ խռովէ զերկիրն Հայոց, զլեառն ամուր կալեալ, որ և այժմ յանուն յելուզակին կոչին Վայկունիք» (Խոր. Բ. ԺԴ.)։ Խորենացին կ'առնու զայս պատմութիւն ոչ թէ Ափրիկանոսի ժամանակագրութենէն, ուր թերևս և ոչ իսկ կը յիշուէր այս, այլ Յովսեպոսէ։ Ահա բանք Յովսեպոսի. «Զայնու ժամանակաւ ազդ եղև, եթէ Տիգրան արքայ Հայոց մտեալ էր յԱսորիս հինգ հարիւր հազար արամբք և թէ գալոց էր ընդ հուպ ի Հրէաստան։ Այսպիսի վտանգ մեծ և անակնկալ զարհուրեցոյց զդշխոյն Աղեքսանդրա և զհամօրէն թագաւորութիւնն։ Առաքեաց նա առ թագաւորն (Տիգրան) ընծայս մեծամեծս ի ձեռն հրեշտակաց, որ գտին զնա պատաղեալ պաշարմամբ Պտղոմայիդայ։ Տիկին Սեղենէ, այլով անուամբ Կղէոպատրա, որ թագաւորէր յայնժամ յԱսորիս՝ յորդորեաց զհպատակս իւր քաջութեամբ զդէմ ունել այնմ որ գայր յիւր վտարել զերկիրն։ Հրեշտակք Աղեքսանդրայ զամենայն ջան յանձին կայան ածել զՏիգրան յաղերս վասն նորա և ազգին։ Տիգրան ընկալաւ զնոսա քաղցրութեամբ, և արձակեաց յուսով մեծաւ։ Այն ինչ առեալ էր նորա զՊտղոմայիդ՝ լուաւ եթէ Ղուկուղղոս որ զհետ մտեալ էր Միհրդատայ և չէր հասեալ նմա, զի խոյս տուեալ էր նա ի Վիրս՝ մտեալ էր ի Հայս և աւերէր գերփէր զերկիրն. այս համբաւ ետ Տիգրանայ դառնալ յետս» (Յովս. Նախն. պատմ. Հր. ԺԴ. 14)։ Զարմանալի է սակայն, որ Ղուկուղղոս,—դիտմամբ թէ յանդէտս՝ չենք գիտեր—կը փոխուի առ Խորենացւոյն ի Վայկուն յելուզակ։ Պատճառ գալուն Տիգրանայ ի վերայ Կղէոպատրայ յայտնի է Յովսեպոսէ, վասն զի հակառակ էր նա Տիգրանայ. Խորենացին կ'ընծայէ զայն յանցանաց Դիոնիսիոսի, որդւոյ Կղէոպատրայ, Տիգրանայ հօրը դէմ, առանց յայտնելու թէ ինչ էր յանցանքը։ Սակայն գիտենք այլուստ, թէ Կղէոպատրա չունէր որդի Դիոնիսիոս անուն. Անտիոքոս Դիոնիսիոս էր որդի Անտիոքոսի Գրիւպոսի. Կղէոպատրայի որդին էր Անտիոքոս Ասիացի, մանուկ և անկարող յանցաւոր գտնուելու Տիգրանայ հօրը, որ այն թուականէն (70) քան և թերևս աւելի ամօք յառաջ մեռած էր։

Գալով Պտղոմայիդ կամ Սեղենէ Կղէոպատրայ՝ գիտել պարտ է, զի Պտղոմայիդ, այն է Աքր կամ Սէն Ժան տ'Աքր, այժմու Աքեա, էր քաղաք եգիպտացի (Պտղոմեան) թագուհիներուն որ կ'երթային յԱսորիս։ Սեղենէ Կղէոպատրա, որ էր դուստր Պտղոմեայ Փիսկոնի,

յետ այլևայլ ամուսնութեանց եղաւ կին Անտիոքոսի բարեպաշտի, որդւոյն Անտիոքոսի Կիզիկեցւոյ, և ունեցաւ երկու որդի, Անտիոքոս Ասիացի և Սելևկոս Կիպիոսակտէս։ Սոքա էին ժառանգ թագաւորութեանն Սելևկեանց, և գլխաւոր քաղաք նոցա էր յայնժամ Դամասկոս։ Յետ մահուն հօր նոցա, մինչդեռ տղայքն էին անչափահաս՝ մայր նոցա էր յանձանձիչ (80—70,) և յերեսաց Տիգրանայ, յորմէ հետէ մտաւ նա յԱսորիս՝ ապաւինեցաւ յիւր քաղաքն Պտղոմայիդ, զոր եկաւ պաշարեց Տիգրան։ Քաղաքն առնուեցաւ, և ձերբակալ եղաւ Թագուհին, և սպանուեցաւ յետոյ։ Այս ժամանակն էր (70) որ Ղուկուղղոս մտաւ Հայաստան, և Տիգրան լսելով զայս՝ աճապարեց զօրօք գալ ընդդէմ նորա։ Խորենացին որ չկամիր գիտել զՂուկուղղոս՝ Վայկուն անուն յելուզակի ուրուք յարձակման կու տայ Տիգրանայ աճապարանօք դարձն ի Հայս։ Թերևս կար յայնժամ նաև հիւսիսային վայրենի ցեղի մը կողմանէ յարձակումն Արձախու Վայկունիք կոչուած լեռնային գաւառը. բայց Տիգրանայ այսպիսի մեծ զօրութեամբ դառնալուն պատճառն, ինչպէս տեսանք Յովսեպոսէ՝ էր Ղուկուղղոս, որ առ Խորենացւոյն լինի Վայկուն, և գաւառը Վայկունիք։ Բայց հոս կը տեսնուի նաև աշխարհագրական սխալ, որ կասկածելի կ'ընէ թէ զՎայկուն և թէ զՎայկունիս գաւառ։ Խորենացւոյն Վայկունիքն, իբրև գաւառ Արձախու, այլուր կոչուած է Վակունիք, բայց ուղղագոյն ընթերցուածն կը թուի լինել Վահունիք, քանզի գաւառն էր ժառանգական երկիր Հայոց հին քրմական ցեղին Վահունեաց, և ի դարձին Հայոց առ Տրդատաւ տրուեցաւ եկեղեցւոյ և եղաւ կալուած տան Լուսաւորչին հանդերձ եկեղեցաքաղաքաւն Ամարասաւ, զոր ծաղկեցուց Գրիգորիս որդին Յուսկան, եպիսկոպոս գաւառին, և կոչուեցաւ կաթողիկոս Աղուանից, վասն զի Արձախ էր մասն Աղուանից երկրին։ Դիւրին է գուշակել զայս ի Բուզանդայ, որ յետ պատմելոյ զեպիսկոպոսանալն Գրիգորիսի Աղուանից այն մասին, զքարոզելն նորա Մազքթաց և մարտիրոսանալն այն բարբարոս ազգէն՝ կը յաւելու. «Այսպէս սպանին զառաքինի քարոզն Քրիստոսի զմանուկն Գրիգորիս։ Եւ ապա բարձին զնա որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, և բերին ի գաւառն *իւրեանց* ի կողմանս Աղուանից ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գեւղն որ անուանեալ կոչի Ամարազ. և եդին զնա առ եկեղեցեաւն զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի, քահանայապետին մեծի աշխարհին Հայաստան երկրին» (Բուզ. Գ. Զ.)։ Այս տեղեկութենէն կը տեսնուի, թէ Վայկուն, ուստի և Վայկունիք, իբրև յանուն յելուզակին կոչուած այսպէս՝ լինի կասկածելի։ Բուզանդ այս գաւառը

գիտէ Հաբանդ (քանզի առ Նովաւ վաղուց դադրած էր գաւառն ի
լինելոյ Վաչունեաց, և անցած էր եկեղեցւոյ), և կը կոչէ «գաւառ
խուրեանց», այսինքն Գրիգորիսի և Խուրցն, և ասէ ևս, թէ Լուսա-
ւորիչ կանխաւ շինած էր զեկեղեցին յԱմարաս, որ էր գլխաւոր
տեղի կամ աւան գաւառին։ Եթէ մեր այս տեսութիւնը բանի ևս
թուի, և ընդունինք զՎայկունն իբրև պատմական անձն և զգա-
ւառն ստուգիւ յանուն նորա կոչուած Վայկունիս՝ դարձեալ կը
մնայ ստոյգ, թէ Տիգրանայ աճապարանօք դարձն ի Հայս բազմու-
թեամբ զօրաց՝ էր Ղուկուղղոսի համար մանաւանդ, որպէս պատմէ
Յովսեպոս, քան աւազակի մը համար։

Խորենացւոյն Բ. դպրութեան ԺԵ. գլուխն է զՊոմպէոսէ.
«Յայնմ ժամանակի Պոմպէոս Հռոմայեցւոց զօրավար զօրօք բազմօք
եկեալ հասեալ ի Միջերկրայս, զՍկաւրոս սպարապետ իւր յԱսորիս
առաքէ՝ տալ պատերազմ ընդ Տիգրանայ։ Որոյ եկեալ և ոչ պա-
տահեալ Տիգրանայ,— քանզի էր (նա) դարձեալ յիւր աշխարհն
վասն խուճապանաց յելուզակին—անցեալ Սկաւրոս ի Դամասկոս և
տեսեալ զքաղաքն առեալ ի Մետեղայ և ի Ղուզայ՝ զնոսա հալա-
ծեալ անտի, ինքն ի Հրէաստան փութայր հասանել ի վերայ Արիս-
տաբուղի, օգնականութեամբ եղբօր նորա Երիցու, Հիւրկանու քա-
հանայապետի, որդւոյ Աղեքսանդրի»։ Այս հատուած ևս է Յովսե-
պոսէ, թէպէտ այլայլեալ։ Ահա բանք Յովսեպոսի. «Ի ժամանակին
զի Պոմպէոս մեծն տայր պատերազմ ի Հայս՝ առաքէ զՍկաւրոս
յԱսորիս զօրօք. սա գտանէ, հասեալ ի Դամասկոս, զի Մետեղայ և
Ղողեայ առեալ զքաղաքն՝ մեկնեալ էին ի բաց։ Անդ ազդ լեալ
նմա որ ինչ անցք անցանէին ի Հրէաստան՝ չոքաւ անդր ակնկա-
լեալ շահու» (Յովս. Պատմ. պատեր. Հր. Ա. 4)։ Այլուր (Հր. Նախն.
պատմ. ԺԴ. 3, 4) յայտնագոյն ևս. «Զայնու ժամանակաւ Պոմպէոս
զբաղեալ զպատերազմաւ Հայոց ընդդէմ Տիգրանայ՝ առաքէ զՍկաւ-
րոս յԱսորիս։ Իբրև եհաս սա ի Դամասկոս, զոր սակաւ մի յառաջ
առեալ էր Մետեղայ և Ղողեայ՝ եդ ի մտի մտանել ի Հրէաստան»։
Այս մասին մէջ Խորենացին, գիտամբ թէ յանգէտս՝ լռութեամբ
կ'անցնի պատմական կարևոր կէտ մի իբրև նուազումն փառաց
Տիգրանայ։ Յետ պարտութեանն և փախստեան Միհրդատայ՝ կա-
տայ Պոմպէի իսկ և իսկ երթալ յԱսորիս, մինչ ժամանակակից
պատմութենէ յայտնի վկայուած է, թէ Պոմպէոս, յետ վերջին
պարտութեանն Միհրդատայ իսկոյն գնաց Տիգրանայ վրայ, և յետ
վճարելոյ գրեթէ առանց արեան Հայոց գործը և հրաժարեցուց-
նելոյ զՏիգրան դաշամբ Հայաստանէ դուրս երկիրներէն (64)՝ գնաց
յԱսորիս, զոր արար նահանգ։ Նա և այն, թէ «Պոմպէի հուպ ի

րիքով հասանեն աւետիք մահուանն Միհրդատայ» (Խոր. Բ. ԺԵ.)՝ է նոյնպէս Յովսեպոսէ.- «Պոմպէոս ընկալաւ զլուր մահուանն Միհրդատայ մինչ էր մօտ յԵրիքով» (Յով. Պատ. Հր. Ա. 5)։ Զենք գիտեր սակայն, թէ ուստի է և ինչ աստիճան հաւանականութիւն ունի այն զոր կը յաւելու պատմիչ մեր, թէ Պոմպէոս Պոնտացւոյ Պիղատոսի հօրը տուաւ սպաննել զՄիհրդատ Թունով.—«Պոմպէոս ի ձեռն հօրն Պոնտացւոյ Պիղատոսի զՄիհրդատ սպանանէ Թունաւոր դեղովք» (Խոր. Բ. ԺԵ.)։ Ստուգագոյն աւանդութիւն մահուան Միհրդատայ ըստ ժամանակակից պատմութեան այս է, թէ Միհըրդատ մեծ բազմութեամբ Թրակացի ասպատակօք կը խորհէր իջանել յԻտալիա. այլ զօրն ապստամբեցաւ թելադրութեամբ Փառնակայ, որդւոյ Միհրդատայ, և Միհրդատ չմատնուելու համար Հռոմայեցւոց՝ առաւ թոյն, և երբ թոյնը չազդեց՝ կամեցաւ անձին առնել սրով, և ի չհամարձակել նորա դարձեալ՝ գաղատացի ոմն մատոյց նմա զայս վերջին ծառայութիւն (63)։ Խորենացին ԺԶ. գլխոյն սկիզբը կը յիշէ Հրեայ գերիներ, զորս «նստոյց Տիգրան յԱրմաւիր և յաւանին Վարդգեսի որ ի վերայ Քասաղ գետոյ», պատմութիւն մը՝ որում կը վկայէ Բուզանդ. «Զայս ամենայն բազմութիւն Հրէից զորս գերեցին տարան (Պարսիկք առ Արշակաւ) յերկրէն Հայոց, ածեալ էր յերկրէն Պաղեստինացւոց մեծի թագաւորին Հայոց Տիգրանայ» (Բուզ. Դ. ԾԵ.)։ Զէ անհաւանական, թէ Տիգրան բերաւ Ասորւոց երկրէն և Պաղեստինէ Հրեայ գաղթականներ, զորս զետեղեց յայլևայլ քաղաքս Հայոց։ Գաղթականներ բերել ի Հայս ի շինութիւն երկրին՝ չէր օտար ի սովորութենէն Տիգրանայ, ինչպէս յայտնի է Տիգրանակերտի պատմութենէն, զոր ելից Տիգրան գաղթականօք այլևայլ յոյն քաղաքաց բնակիչներէն։ Սակայն հաւանական է, թէ Հրեայ գաղթականներ եկած էին ի Հայս յառաջագոյն իսկ քան զՏիգրան։

Խորենացւոյն այս ԺԶ. գլխէն, ինչպէս նաև ԺԵ, ԺԷ և ԺԸ. գլուխներէն կը տեսնուի, թէ մեր պատմիչն առնլով Յովսեպոսէ (Յովս. Հր. հնխ. պատմ. ԺԴ. 11, 12 և այլն)՝ այն ժամանակին հռոմէական պատմութեան վրայ սաչափ միայն գիտէ կամ կամի գիտել, թէ նախ Սկաւրոս (64) սպարապետ Պոմպէի, ինչպէս արդէն յիշեցինք, ապա Գաբինոս (64—56), հուսկ յետոյ Կրասոս (55) կու գան կամ կը ղրկուին յԱսորիս «տալ պատերազմ ընդ Տիգրանայ», բայց կամ չեն հանդիպիր նմա,—«ոչ պատահէ նմա», ինչպէս Սկաւրոս (Խոր. ԺԵ.), կամ չեն համարձակիր կռուել,—«ոչ իշխեաց ի դիմի հարկանել Տիգրանայ», ինչպէս Գաբինոս (Գլ. ԺԶ.), և կամ «սատակի ամենայն զօրօքն հանդերձ ի պատերազմելն ընդ

Տիգրանայ, զորոյ ժողովեալ Տիգրանայ զգանձսն՝ դառնայ ի Հայս, ինչպէս Կրասոս (Գլ. ԺԷ.)։ Յայտնի է սակայն յոյն և Հռոմայեցի պատմիչներէն, զորս վերագոյնն յիշեցինք և յորոց ոմանք են ժամանակակից կամ գրեթէ ժամանակակից, թէ այն զօրավարներէն, որ են յետ 64-ին՝ և ոչ մին եկաւ Տիգրանայ դէմ, որ յետ այն թուականին, այն է յետ պարտութեան իւրոյ ի Պոմպէոսէ դաշամբ՝ չիշխեց և չկարէր իշխել ելանել դուրս իւր ընիկ երկրէն Հայաստանէ։ Այն Հռոմայեցի զօրավարք եկան նուաճել ոչ զՏիգրան, որ արդէն նուաճեալ էր և մնաց միշտ հաւատարիմ Հռոմայեցւոց ըստ Ստրաբոնի՝ այլ զԱսորիս, զՊաղեստին և զԵգիպտոս։ Վերջինն, Կրասոս, առաջին եռապետներէն մին, հաւասարելու համար փառաց իւր երկու ընկերներուն, Կեսարու և Պոմպէի, որ մեծամեծ յաղթութիւններով պայծառացած էին՝ եկաւ երթալ Պարթևաց վրայ, և արդարև գրեթէ ջնջուեցաւ զօրօք Պարթևաց դէմ պատերազմին մէջ, ուր Խորենացին գլխաւոր գործող կը համարի զՏիգրան, որ չյիշուիր ամենևին թէ ունեցաւ մասն այն պատերազմին մէջ (55, 54), նա մեռած իսկ էր։ Ի լուսաւորութիւն Հռոմայեցւոց և Պարթևաց պատմութեան այս մասին, որ կը վերաբերի ըստ մասին նաև Հայոց՝ դնենք հոս Վիքթոր Տիւրիւիի Հռոմայեցւոց պատմութենէն յաջորդ հատուածը, զոր կը քաղէ ժամանակակից պատմութենէ. «Յետ Պոմպէի չեղև ինչ փոփոխութիւն յարևելս։ Այլ Գաբինիոս եցոյց եթէ բազում ինչ մարթ էր շահել յերկրէն Ասորւոց։ Վտարեցաւ նա ի Պտղոմեայ Աւղետայ գնովք բիւր քանքարաց, և յետ հաստատելոյ զնա ի թագաւորութեան Եգիպտացւոց վաճառեաց նմա և զկէս զօրաց իւրոց։ Ի Հռոմ ամբաստանեցաւ նա իբրև վնասակար հռոմէական ժողովրդեան, արդարացաւ կաշառօք, այլ յերկրորդում պատասխանատուութեանն, յորում Կիկերոն եկաց նմա պաշտպան յանխորհուրդս առ հաճելոյ զմիտս Պոմպէի՝ գնաց կծծութեամբ ընդ դատաւորսն, և պարտաւորեցաւ յաքսոր։ Զսա փոխանակէր Կրասոս, որ մին էր յառաջնոց երից արանց, և մեկնեցաւ՝ ի մտի եդեալ արշաւել ի Պարթևս։ Առանց կանխաւ տեղեկանալոյ հանգամանաց երկրին, առանց առնելոյ ի բանի զոր չէինն գոհ, և զազգն արուարձանեալս որ ձեռնհաս էին տալ նմա առաջնորդս և այրուձի բազում՝ Կրասոս աճապարեաց անցանել ընդ Եփրատ, էառ քաղաքս ինչ ի քաղաքաց, արձակեաց ապատակ առանց մեծի դժուարութեան, և ետ հռչակել զանձն ինքնակալ վասն այնպիսի դոյզն յաջողուածոց։ Ապա փոխանակ քաջութեամբ խաղալոյ յառաջ ի վերայ Բաբելոնի և Սելևկիայ, երկուց քաղաքաց որ առէին զտէրութիւնն Պարթևաց՝ դարձաւ այսրէն

ձմերել յԱսորիս, ուր թոյլ ետ զօրուն մեղկել հատանել ի յուլութիւն և ի ցոփութիւն. և ինքն որ էր զվաթսնամենիւք անցեալ, ոչ յայլ ինչ մտաբերէր՝ բայց այց առնել մեհենից առ ի կողոպտելոյ զգանձս նոցա. տաճարն Երուսաղեմի լինէր կապուտ կողոպուտ, որպէս լեալ էր մեհեանն Հիերապօղեայ: Արտաւազդ արքայ Հայոց խոստանայր նմա անցս ընդ երկիր իւր, ուր զօրն Հռոմայեցւոց գտանելոց էր պաշար, ճանապարհ անկասկած և վայր դիպող ի հրահանգս զինուորութեան. այլ Կրասոս չառ յանձն: Եանց երկրորդ անգամ ընդ Եփրատ առ Զևգմաւ եօթն լեգէոնովք և չորեքհազար հեծելովք, և հրապուրեալ յիշխանէ ումեքէ արաբացւոյ (որ էր մին յԱբգարաց)՝ մխեցաւ ի Միջագետս, ի ծով ուրեմն աւազոյ, ուր յետ սակաւուց ամենայն ինչ պակասէր զօրուն, մանաւանդ վստահութիւն ի զօրավար անդր իւրեանց (53):

Պարթևք բաժանեալ էին զզօրութիւն իւրեանց. արքայն Հրահատ (Որոդէս) խաղայր ընդ հիւսիսակողմն՝ ունել զառաջս արքային Հայոց, իսկ Սուրէն սպարապետն Արեաց գումարեալ էր զանթիւ այրուձին՝ ի մէջ առեալ փակել զհետևակազօրն Հռոմայեցւոց կուռ վառեալ: Իբրև անկանէր այրուձին այն ի վերայ լեգէոնացն՝ կարգքն խիտ առ խիտ ճակատեալք զդէմ ունէին յարձակմանն, այլ զէնք Հռոմոցն եղեն նոցա անօգուտ: Եթէ սոքա յառաջ խաղային՝ Պարթևք տային խոյս. եթէ առնուին զկայ՝ վաշտք հեծելոցն գային շուրջ զետեղակալ լեգէոնովքն և ծակոտէին զնոսա նետիւք: Հետևակազօրն թեթև արձակեալ ի վերայ նոցա՝ գայր այսրէն խառն ի խուռն, ամրանալ զկնի լեգէոնացն: Մանուկն Կրասոս յարձակեցաւ յայնժամ ի գլուխ 1300 հեծելոց, որոց հազարն էր այրուձի Գաղղատացի: Տեղի ետ թշնամին, և ձգեաց զնա հեռի ի բանակատեղւոյն բաժնիւ միով հետևակաց, որ զհետ երթային զնորա՝ իբրև տեսին զթշնամին զի փախչէր. այլ սոցա յանկարծ դարձուցեալ զերեսս պատէին զնովաւ: Յետ սաստիկ կռուոյ, Կրասոս ծակոտեալ ի վիրաց՝ տայր զինակրին իւրում սպանանել զնա առ ի չանկանելոյ կենդանւոյն ի ձեռս: Պարթևք հատեալ զգլուխն՝ գային շրջեցուցանել դէմ յանդիման լեգէոնացն առաջի աչաց սրտառուչ հօրն: Առժամայն սկսաւ ճակատն և տևեաց մինչև ցայգ, և ոչ միոյ կողման լինէր յաղթութիւնն. երկոքին կողմանք բանակէին հանդէպ միմեանց: Ի կողմն լեալ ի գետնի յանհնարին վհատութեան՝ Կրասոս զմտաւ ածէր զանդունդն յոր արկ զնա ամբարտաւանութիւն նորա: Ի զուր ջանայր քաջալերել զանձն. հարկ իմն լինէր տալ անձամբ անձին հրաման դարձի զօրուն: Թողեալ չորեքհազար վիրաւորս՝ գային հասանէին ի քաղաքն Խառան, ուստի ի վաղիւն

դիշերային մեկնէր զօրն լռելեայն։ Բայց խաբեցան յառաջնորդէն՝ և յընդ հուպ ի վերայ հասանել Պարթևաց, զահի հարեալ զօրացն՝ ստիպէին զզօրավարն երթալ խօսել ի հաշտութիւն ընդ Սուրենայ։ Այլ դաւ էր այն. Կրասոս և որ ընդ նմայն երթեալ էին՝ սպանան։ Խուն ինչ մնացորդ կարաց անցանել ընդ Եփրատ, ընդ որ և Պարթևք անցանէին զկնի նոցա։ Այլ Կասիոս ելեալ ի Խառանէ յառաջ քան զզօրավար իւր և ողջամբ հասեալ յԱսորիս՝ եգիտ պարապ կազմելոյ գունդս, և վանէր զնոսա (53)։ Միւս անգամ փորձ փորձեալ նոցա (Պարթևաց) ընդ հրամանատարութեամբ Բակրոյ, որդւոյ թագաւորին՝ ոչինչ լաւ քան զառաջին նուազն յաջողէին (52)։ Սակայն Բիբուղոս յաջորդն Կասեայ պաշարեցաւ յԱնտիոք քաղաքի (51), և Պարթևք սպառնային Կիլիկեայ, ուր կուսակալ էր Կիկերոն»։ Այս հատուածէն որ քաղուած է այն ժամանակին Հռոմէական պատմութեան երևելի [illegible], և ուրիշ պատմական ակնարկութիւններէ բաւական յայտնի կը տեսնուի, թէ Կրասոսի պատերազմն էր ընդդէմ Պարթևաց և ոչ Հայոց, և Տիգրան, կամ մանաւանդ յաջորդ նորա Արտաւազդ՝ էին, կամաւ թէ ակամայ ձեռնտու Հռոմայեցւոց և ոչ Պարթևաց, ընդ որս մանաւանդ թշնամութեամբ էին Հայք (Յուստ. ԽԲ.)։ Ուստի հակառակ է պատմութեան՝ ասելն Խորենացւոյն, թէ Կրասոս «Խաղաց ի վերայ Տիգրանայ, և անցեալ ընդ Եփրատ սաստիկ ամենայն զօրօքն հանդերձ ի պատերազմելն ընդ Տիգրանայ», առանց ամենևին յիշելոյ զՊարթևս։ Հակառակ պատմութեան է նաև այն, զոր ասէ Խորենացին, թէ Տիգրան առաւ Կրասոսի բոլոր աւարը.—«Ժողովեալ Տիգրանայ զգանձսն (Կրասոսի)՝ դառնայ ի Հայս», մինչ գիտենք, թէ ի ձեռս Պարթևաց անկաւ Հռոմայեցւոց գերին և աւարն, յորս էին արծուէնշան դրօշք, զորս յետ տուին Պարթևք առ Օգոստեաւ (20)։

Ըստ ԺԲ. գլխոյն՝ յետ բնաջինջ լինելոյ Կրասոսի Հռոմայեցիք բարկանալով կը զրկեն բազմութեամբ զօրաց զԿասիոս, որ գալով չթողուր Հայոց անցնել ընդ Եփրատ.—«Զչարեալ Հռոմայեցւոց առաքեն զԿասիոս անթիւ զօրօք։ Սա եկեալ և ընդդէմ կացեալ չտայ թոյլ զօրացն Հայոց անցանել ընդ Եփրատ և ապստամբել յԱսորիս»։ Զայս ևս կ'առնու Խորենացին Յովսեպոսէ. «Կրասոս յաջորդեաց Գաբինեայ ի կուսակալութեան Ասորւոց, և առ հայթայթելոյ զծախս պատերազմին որ ընդ Պարթևս՝ առ զամենայն ոսկի զոր եգիտ ի տաճարին. անց յետոյ ընդ Եփրատ և սատակեցաւ ամենայն զօրօքն։ Կասիոս կանխեալ եկն յԱսորիս արգելուլ զխաղալ Պարթևաց յառաջ, որ պատրաստէին մտանել անդր» (Յովս. Վասն Հր. պատ. ընդդէմ Հռոմ. Ա. 6)։ Յովսեպոս չըսեր թէ Հռոմայեցիք

ղրկեցին զԿասիոս ընդդէմ Հայոց, այլ թէ Կասիոս կանխեց մտնել յԱսորիս չտալու համար թոյլ Պարթևաց անցանել ընդ Եփրատ։ Այսպէս Յովսեպոս, ըստ պատմութեանն զոր վերագոյնն համառօտեցինք՝ կու տայ իմանալ, թէ Կասիոս էր ի զօրավարաց Կրասոսի, և յետ սպանման նորա և ցրուելոյ զօրուն՝ աճապարեց կանխել գալ յԱսորիս զդէմ ունել Պարթևաց։

Խորենացին նախընթաց գլխոյն մէջ ըսած էր, թէ Գաբինոս յանձնած էր գաղտ Տիգրանայ զորդին Միհրդատայ զՄիհրդատ, զոր Պոմպէոս բռնած էր.—«Գաղտնի հաշտութիւն խօսեցեալ (Գաբինոս) ընդ Տիգրանայ՝ տայ զքեռորդին նորա զպատանին Միհրդատ զորդին Միհրդատայ, զոր կալեալ էր Պոմպէի ի Մաժաք» (Խոր. Բ. ԺԶ.)։ Հոս կ'ըսէ, թէ Տիգրան կասկածելով՝ թէ իւր քեռորդին չէր Միհրդատ՝ չտուաւ նմա մասն ինչ իշխանութեան։ Զարմանք է որ Տիգրան յետ պահելոյ այնչափ տարի առ իւր զպատանին Միհրդատ՝ յանկարծ կը տարակուսի թէ է քեռորդի նորա.—«Զայսու ժամանակաւ թերահաւատութիւն լեալ Տիգրանայ ի պատանին Միհրդատ, չկարծելով լինելոյ քուերորդի՝ չտայ նմա մասն ինչ իշխանութեան»։ Կրտսերն Միհրդատ, այն է երէց որդին Միհրդատայ, զոր Խորենացին կը կոչէ «պատանի»՝ 88-էն հետէ վարած էր մեծամեծ պաշտօններ ի կենդանութեան հօրն, և էր այնպէս ծանօթ և անուանի, որ անհնար էր Տիգրանայ այնպէս երկար ունել զնա առ իւր առանց քաջ ճանաչելոյ զնա։ Երկրորդ՝ ինչ մասն իշխանութեան էր, զոր Տիգրան չտուաւ քեռորդւոյն. եթէ Պոնտոսի թագաւորութենէն՝ այն արդէն ջնջուած էր, քանզի Պոնտոս 64-էն հետէ եղաւ նահանգ Հռոմայեցւոց։ Սա ևս զարմանալի է, որ Միհրդատ չկարէր լինել քեռորդի Տիգրանայ, քանզի ըստ միաբան վկայութեան յոյն և հռոմայեցի պատմագրաց՝ ոչ թէ քեռայր էր Տիգրանայ Միհրդատ, այլ աներ նորա, քանզի Տիգրան առած էր զԿղէօպատրա, մին յերեցագոյն դստերաց Միհրդատայ։ Խորենացին կը յաւելու, թէ Տիգրան չտուաւ Միհրդատայ և ոչ զիւր աշխարհն Վրաց»։ Ըստ Խորենացւոյն՝ Միհրդատայ ցեղն ունէր Վրաց իշխանութիւնը (Խոր. Բ. Ը, ԺԱ.). այս է բոլորովին անտեղի։ Իսկ այն զոր կը յաւելու, թէ «Եւ Միհրդատայ արհամարհութիւն կրեալ ի քեռւոյն իւրմէ Տիգրանայ՝ ապստամբութեամբ անկանի առ Կեսար, իշխանութիւն գտեալ ի նմանէ զՊերգեայ քաղաքի՝ զօրավիգն օգնականութեան լինի Անդիպատրոսի հօր Հերովդի, Կեսարու հրամանաւ, և շինեալ զՄաժաք ընդարձակագոյն և պայծառ շինուածովք՝ անուանէ Կեսարիա ի պատիւ Կեսարու», և թէ «յայնմհետէ բարձեալ լինի իշխանութիւն Հայոց ի քաղաքէն յայնմանէ»՝—է

պատմութիւն անհիմն, լի ժամանակագրական սխալներով, զորս մի առ մի հերքել աւելորդ է։ Սաչափ միայն ասել բաւական է, թէ Միհրդատ, զոր Խորենացին կը յիշէ առնլով դարձեալ Յովսեփոսէ խառնիխուռն, իբրև օգնական Անդիպատրոսի ի նպաստ Կեսարու, չէ կրտսերն Միհրդատ, որդի մեծին Միհրդատայ, այլ Միհրդատ Պերգամացի (տես Յովս. Նախն. պատմ. Հր. ԺԴ. 14, և Թէոդոր Րէյնաք, Միհրդ. Եւպատ. էջ 297) և կոչելն Մաժաքայ Կեսարիա եղած է պատիւ Տիբերի և ոչ Կեսարու, իսկ իշխանութիւնն Հայոց բարձաւ ի Մաժաքայ 64-ին առ Պոմպէիւ, երբ Տիգրան հրաժարեցաւ դաշամբ իւր բոլոր երկիրներէն արտաքոյ Հայաստանի։

Խորենացին կ'սկսի իւր ԺԹ. գլուխն այսպէս. «Յետ այսր ամենայնի ի հիւանդութիւն եղեալ Տիգրան՝ աղերսէ ի սէր զԱրտաշէզ արքայ Պարսից, յաղագս հպատակութեան հօրն՝ հանելով ի նոցանէ զնախագահութիւն։ Իսկ սա իւրովք կամօք զերկրորդականն ունելով ըստ իրաւանց՝ դարձուցանէ ի նա զնախագահութիւնն, և ի հաշտութիւն ածեալ զԱրտաշէզ՝ առնու ի նմանէ զօր յօգնականութիւն»։ Չէ ամենևին ճշմարիտ, թէ Պարթևաց թագաւորութիւնն էր ի բնէ առաջին, և Հայոցն՝ երկրորդ, կամ այլով բանիւ՝ Հայոց երկրորդ հարստութիւնն, այն է Արշակունեաց՝ էր ձեռակերտ իշխանութիւն, որդի բառիւ՝ աւատ Պարթևաց։ Պողիբիոս և Ստրաբոն կը խօսին ըստ բաւականին Հայոց երկրորդ հարստութեան ծագման և ընդարձակելուն վրայ. կայ նաև աղօտ ակնարկութիւն, ինչպէս յիշեցինք վերը, թէ եղան պատերազմներ ի մէջ այս նորընծայ թագաւորութեան և Պարթևաց, յանուանէ առ հարբն կամ նախորդաւ Տիգրանայ, որ ըստ Ապպիանոսի կոչուէր նոյնպէս Տիգրան, ըստ և Յուստինոսի՝ Արտաւազդ. իսկ զՏիգրանայ ունինք աւելի մանր և ստոյգ տեղեկութիւններ. բայց չիք ուրեք ամենևին ակնարկութիւն, թէ Պարթևաց թագաւորութիւնն էր ի բնէ առաջին և Հայոցն՝ երկրորդ, կամ Խորենացւոյն բանիւ՝ Պարթևք ունէին նախագահութիւն ի վերայ Հայոց։ Խնդիրն առաջնութեան և երկրորդութեան կը ծագի այն սխալ պատմութենէն, թէ Արշակ մեծ (Պարթև) նուաճելով բոլոր Ասիա՝ տուաւ զՀայաստան և զՄիջագետս իբրև աւատ եղբօր իւրում Վաղարշակայ։ Այս կարծեաց դէմ զինեցանք մեք յառաջնում մասին Պատմութեան մերոյ, գնելով Արշակունեաց հարստութիւնն ոչ իբրև աւատ Պարթևաց, այլ իբրև ինքնօրէն իշխանութիւն, դուստր հին Արարատեան թագաւորութեան, նկատելով զԱրտաքսիաս իբրև շառաւիղ այն հին Հայ թագաւորական տանն, որ երկրորդ անգամ ծաղկելով Արշակունի անուամբ՝ հասաւ Տիգրանաւ յիւր յետին բարձրութիւն։ Մեր այս տեսութենէն շատ հեռի

չէ արդի քննադատութիւնն, ինչպէս տեսանք Ռէյնաքայ երկայն յօդուածէն զոր համառօտիւ կը կրկնենք հոս. «Պարտութիւնն Անտիոքոսի մեծի առ Մագնեսեաւ — ասէ Ռէյնաք ի գիրսն Միհրդատ Եւպատոր, էջ 103 եղև նշան համօրէն ազատութեան բովանդակ աշխարհին Հայոց։ Երկոքին կուսակալք, գաւառատեարք թագաւորին (Անտիոքոսի մեծի), Արտաքսիաս և Զարեհադրէս, ազնուականք երկու իրանեանք, որպէս թուի՝ հռչակեցին զանձինս միահեծան իւրաքանչիւր յիւրում իշխանութեան, և կոչեցան թագաւորք կամօք և պաշտպանութեամբ ծերակուտին։ Այսպէս արկաւ հիմն երկուց հայ թագաւորութեանց որ կացին մնացին զողջոյն դարն Բ., ի հիւսիսոյ արևելից՝ Մեծ Հայք, որ ունէր գլուխ նիստ ի հովտին Երասխայ, յարևմտից հարաւոյ՝ Ծոփք, որոյ մայրաքաղաք էր Կարկաթիոկերտ, շինեալ ի բարձրաւանդակի որ հայէր ի դաշտավայրս Դկլաթ գետոյ. (Ստր. ԺԱ. 14, 15)։ Երկոքին հայ տէրութիւնք թէպէտև կրեցին հակառակութիւն յԱսորւոց առ Եպիփանն Անտիոքաւ՝ կալան պինդ զազատութիւն իւրեանց, տարածեցան ընդ ամենայն կողմանս, նա կապեցան իսկ առ ժամանակ մի զօդիւ դաշանց ընդ Փոքուն Հայոց։ Այլ ընդ հուպ Մեծ Հայք, թագաւորութիւնն Արտաքսիասայ, գըտաւ յառաջադէմ քան զմիւս զերկուսն, և անձուկ աշխարհակալութեան նորա ստիպեաց զնոսա խնդրել պաշտպանութիւն յօտարաց։.. Ի կատարած կոյս դարուն՝ յառաջադէմ խաղացք Մեծին Հայոց խափանեցան ի Պարթևաց, որոց հանեալ էր ի Սելևկեանց ըզՄարս և զՄիջագետս։ Ութերորդն Արշակ, Միհրդատ մեծ, որ ած զիշխանութիւն Պարթևական ի ծագ անդր բարձրութեան՝ կոքաւէր, մօտ ի վախճան տէրութեան իւրոյ, ի կռիւ ընդ Հայոց, և յաղթեալ թագաւորի նոցա Արտաւազդայ (Յուստ. ԽԲ. 2, 16)՝ առնոյր պատանդ զարքայորդին Տիգրան (Յուստ. ԼԸ. 3. Ստր. ԺԱ. 14, 15)։ Զառ յանձն Պարթևն շնորհել սմա ազատութիւն և ըզգահ հաւուց իւրոյ (95 նախ քան զՔր.)՝ բայց տալով նմա հըրաժարել խոստմամբ յեօթանասուն փոքր գաւառաց կամ հովտաց աշխարհին Հայոց։ Հայաստան խոնարհեալ, այլ ոչ բեկեալ և ոչ նուաճեալ (Ստր. ԺԶ. 1, 19)՝ ետես զանձն շուրջ պաշարեալ իբրև գօտւով ի մանր մանր տէրութեանց, որ էին փոքր ի շատէ ընդ իշխանութեամբ Պարթևաց, որպէս Ուռհայաստան, Կորդուք, Ադիաբէն, Մարք Ատրպատականի, որ էին արգել ընդարձակելոյ նորա։ Տիգրան որ կալեաց թագ յայնպիսում դժուարին ժամանակի, այն ինչ համբարձեալ յաթոռն՝ սկիզբն արար գործոյն աշխարհակալութեան, մարտ տուեալ ընդ արքային Ծոփաց Արտանայ (Վարդանայ)։ Վերջինն Զարեհադրեանց ոչ գտեալ օգնութիւն ի տկար դրացւոյ իւրմէ,

ի Կապադովկիոյ՝ ընկճեցաւ, և Ծոփք հանդերձ սահմանօքն (Եկեղեաց, այլովքն հանդերձ) միացան ընդ Մեծին Հայոց (Ստր. ԺԱ. 14, 15)»:

Այսպէս Տիգրան իւր աշխարհակալութեամբ, և ոչ «հպարտութեամբ հօրն», առաւ Արքայից արքայ անունը, զոր Պոմպէոս թոյլ տուաւ նմա պահել նաև յետ պարտութեանն: Արքայից արքայ անունն ունին բոլոր դահեկանք ոչ Տիգրանայ միայն, այլև յաջորդաց նորա:

Խորենացին յետ գնելոյ Տիգրանայ կարծեցեալ հաշտութիւնն ընդ Արտաշէզի կամ Արշէզի՝ կու տայ նմա արշաւել յԱսորիս ընդդէմ Հռոմայեցւոց, պատմութիւն մը՝ որ չունի հիմն ըստ ժամանակից վկայութեան: Յետ պարտութեանն և սպանման Կրասոսի (53), Կասիոս, ինչպէս պատմեցինք՝ անցաւ զԵփրատ և չթողուց Պարթևաց մտանել յԱսորիս: Բայց յետ մեկնելոյն Կասիոսի յարևմուտս, երբ Հռոմայեցիք յուզման մէջ էին երրորդ եռապետութեան կռիւներով՝ Պարթևք պարապ գտնելով անցան զԵփրատ և կալան զԱսորիս և զՊաղեստին (36): Հրեայք խռովութեան մէջ էին յայնժամ: Հիւրկանոս Բ. և Արիստոբուղոսի եղբարք կը ջանային կորզել զիշխանութիւնն իրարմէ (Յովս. Հր. նախն. պտմ. ԺԴ. 1—4): Պոմպէոս որոշած էր վէճն ի նպաստ Հիւրկանու (Անդ. ԺԴ. 5): Կեսար ի գալն յարևելս (47)՝ հաստատած էր ի քահանայապետութեան զՀիւրկանոս, իսկ Անտիպատրոսի, հօր Հերովդի, տուած էր թագաւորութիւնը (Անդ. ԺԴ. 15). զնոյն հաստատեց և Անտոնիոս երբ եկաւ յարևելս (42) յետ սպանման Կեսարու (44) (Յովս. ԺԴ. 23): Երբ Պարթևք մտան յԱսորիս և ի Պաղեստին՝ Անտիգոնոս որդին Արիստոբուղի կը դիմէ առ նոսա և կը շահի զնոսա խոստմամբ: Պարթևք կ'օգնեն Անտիգոնոսի կողման և դաւով կը բռնեն զՀիւրկանոս և զՀերովդեանս: Զայս ամենայն կը պատմէ երկար Յովսեպոս, որմէ կ'առնու Խորենացին կամ աղբիւր նորա, փոխանակ Պարթևաց զՀայս ցուցնելով գործող այն արշաւանաց ժամանակ: Առ Խորենացւոյն՝ Բակուր որդի թագաւորին Պարթևաց չյիշուիր ամենևին. Լիսանիաս որդի Պտղոմեայ արքայի Լիբանանու, աներոյն Անտիգոնոսի՝ լինի Պակորոս (Բակուր) որդի Ասորւոց թագաւորի. Բարզափառնէս նախարար, սպարապետ Պարթևաց՝ լինի Բարզափրան նահապետ Ռշտունեաց, քանզի Ռշտունեաց էր սպարապետութիւն հարաւային զօրուն ի Հայս ըստ Խորենացւոյն (Խոր. Գ. Զ.). Բակուր, տակառապետ արքային Պարթևաց՝ լինի Գնէլ Գնունի, քանզի տակառապետութիւնն էր Գնունեաց, նոյնպէս ըստ Խորենացւոյն (Խոր. Բ. Է.): Համառօտիւ, ինչ որ կը պատմուի

զՊարթևաց առ Յովսեպոսի՝ այն ամենայն կը տրուի Հայոց առ Խորենացւոյն, մինչ գիտենք ժամանակակից պատմութենէ, թէ Տիգրան կամ Հայք չունեցան ամենևին մասն այն գործերուն մէջ։ Հոս կը գտնենք Յովսեպոսի և Խորենացւոյն հատուածներն, ցուցնելու համար, թէ մեր պատմութեան հօր աղբիւրն ո՛չ թէ Ափրիկանոս է, այլ Յովսեպոս, որ ըստ հաճոյս կը փոխուի առ Խորենացւոյն։

ՅՈՎՍԵՊՈՍ

«Կասիոս (զօրավար Կրասոսի, յետ պարտութեան սորա) խոյս ետ յԱսորիս և արգել զանցս Պարթևաց, որ պատրաստէին մտանել անդր։... Անց նա անտի ի Հրէաստան, և ապա յարևմուտս, քանզի յարեաւ ընտանի պատերազմ զայնու ժամանակաւ ի մէջ Հռոմայեցւոց։... Կայսր (Կեսար) սպանաւ ի Կապիտողին ի Կասեայ և ի Բրուտոսէ յետ տիրելոյ զամս երիս և գկէս ամի։... Յետ երկուց ամաց, մինչ Բարզափառնէս, մին յաւագաց անտի Պարթևաց, վարէր զԱսորիս ընդ Բակորոյ, որդւոյ արքային նոցա՝ Լիսանիաս որ յաջորդեալ էր հօր իւրում Պտղոմեայ Մեննեայ (արքայի Լիբանանու, աներոյն Անտիգոնոսի)՝ խոստացաւ նոցա հազար քանքար և կանայս հինգհարիւր, եթէ հալածեալ զՀիւրկանոս ի թագաւորութենէն՝ հաստատեսցեն զԱնտիգոնոս։ Ուստի անկան նոքա յուղի։ Բակուր խաղայր առ ծովեզերբն, և Բարզափառնէս անտի ընդ ցամաքակողմն։ Բակուր առաքեաց առաջի իւր ի Հրէաստան փաշտ մի հեծելոց ընդ հրամանատարութեամբ տակառապետին իւրոյ, որ

ԸՍՏ ԽՈՐԵՆԱՑՒՈՅՆ

«Առեալ (Տիգրանայ յԱրտաշէզէ) զօր յօգնականութիւն ինքեան՝ զԲարզափրան նահապետ Ռշտունեաց նախարարութեանն սպարապետ կացուցանէ Հայոց և Պարսից զօրաց, և առաքէ ի վերայ զօրացն Հռոմայեցւոց, հրաման տուեալ զընակիչս աշխարհին Ասորւոց և Պաղեստինացւոց ի հաշտութիւն հաւանութեան խօսել։ Նմա ընդ առաջ լինի ոմն Պակարոս (Բակուր. ըստ Յովսեպոսի՝ Լիսանիաս որդի Պտղոմեայ Մեննեայ արքայի Լիբանանու աներոյն Անտիգոնեայ, Յովս. Ժ. 7, 10, ինչպէս կը տեսնուի ի հատուածին Յովսեպոսի ի հանդիպոյ) անուն, որոյ հայրն թագաւոր լեալ Ասորւոց, և ինքն խնամի Անտիգոնեայ Արիստոբուղեանց։ Եւ եկեալ առ Բարզափրան նահապետ Ռշտունեաց և սպարապետ Հայոց և Պարսից, և խոստանայ հինգ հարիւր կին գեղեցիկ և հազար քանքար ոսկւոյ, զի օգնեսցէ նոցա, ընկենլով ի թագաւորութենէ Հրէից զՀիւրկանոս, և թագաւորեցուցանէ զԱնտիգոնոս։ Իբրև ետես Հիւրկանոս Հրէից քահանայապետ և թագաւոր, և Փասայեղոս եղբայր

կոչէր նոյնպէս Բակուր, տուեալ նմա հրաման գործել ընդ Անտիգոնեայ, որոյ շահեալ էր զՊարթևս խոստմամբք։ Անտիգոնոս եդ ի մտի ընդունել զտակառապետն իբրև միջնորդ խաղաղութեան. Փասայէլ ևս (եղբայր Հերովդի) հաւանեցաւ, և այսպէս եմուտ պարթևն ի քաղաք անդր հինգ հարիւր հեծելովք, պատճառանօք ցածուցանելոյ զխազմն։ Եւ խորհուրդ Փասայելի երթալ գտանել զԲարզափառնէս՝ խօսել զպայմանաց միաբանութեան. և նա հաւանեցաւ, հակառակ խրատուն Հերովդի, որոյ գիտացեալ զնենգութիւն բարբարոսացն՝ խրատ տայր նմա ջանալ սպանանել մանաւանդ զբարբարոսն, քան առնուլ յանձն անկանել յորոգայթն որ լարէր։ Բակուր (տակառապետն) առ ի բառնալոյ զամենայն կասկած տարակուսի ի մտաց Փասայելի՝ գնաց ընդ նմա հանդերձ Հիւրկանու, և եթող առ Հերովդի զոմանս ի հեծելոց անտի զորս Պարթևք ստիկանս կոչեն։ Իբրև հասին ի Գալիլեա՝ Բարզափառնէս ընկալաւ զնոսա մարդասիրութեամբ, նա և պարգևս ևս տայր նոցա, այլ եդ նա արս ի դարանի ի ճանապարհին ընդ որ երթալոց էին։ Տարան զնոսա ի տուն մի մօտ ի ծովեզրն, Եգիպպոն անուն, ուր զգացուցին նոցա եթէ Անտիգոնոս խոստացեալ էր Պարթևաց հազար քանքար և հինգ հարիւր կին։ Ոմանք խորհուրդ ետուն Հերովդի, եթէ զզօրս Հռոմայեցւոց փախստական արարեալ, զոմանս ի ծով, զոմանս ի քաղաքս, խաղաղութեամբ ընդ երկիրն անցանէր Բարզափրան՝ խօսելն և ինքեանք զխաղաղութիւն առ Բարզափրան։ Եւ նորա զԳնէլ ոմն տակառապետ արքային Հայոց որ էր յազգէն Գնունեաց, առաքէ յԵրուսաղէմ հանդերձ հեծելազօրու, իբր թէ ի պատճառս խաղաղութեան, բայց ի գաղտնիս օգնել Անտիգոնեայ։ Եւ Հիւրկանոս զտակառապետն ամենայն զօրօքն ոչ ընդունէր յԵրուսաղէմ, այլ միայն հինգհարիւր հեծելովք։ Եւ տակառապետին դաւով խրատ տուեալ Հիւրկանու, զի առ Բարզափրան երթիցէ վասն աւերածոյ աշխարհին, և ինքն խոստանայր լինել բարեխօս։ Եւ Հիւրկանու երդումն խնդրեալ ի Բարզափրանայ՝ երդնու նմա յարեգակն և յամենայն պաշտամունս իւրեանց երկնայինս և երկրայինս և յարև յԱրտաշեզի և Տիգրանայ։ Ընդ որ վստահացեալ Հիւրկանոս՝ թողու զՀերովդէս ի վերայ Երուսաղեմի, և զՓասայեղոս երէց եղբայր Հերովդի առեալ ընդ իւր՝ գայ առ Բարզափրան ի ծովեզրն, ի գեւղն որ կոչի Եքտիպոն։

Փասայելի փախչել, այլ նա չառ յանձն թողուլ զՀիւրկանոս, և եդ ի մտի երթալ գտանել զԲարզափառնէս։ Տրտունջ լինէր նմա. Եթէ ցանկութիւն արծաթոյ, ասէ, յօժարեցայց մատնել զիս՝ ինձ մարթ էր տալ առաւել քան զոր Անտիգոնոսն խոստացաւ տալ։ Բարբարոսն այն հաստատէր նմա երդմամբ, թէ սուտ էին իրքն և չոքաւ գտանել զԲակուր (ձարքայորդին)։ Այն ինչ մեկնեալ էր Բարզափառնեայ՝ նոքա որոց հրաման տուեալ էր՝ կալան զՓասայէլ հանդերձ Հիւրկանու։ Իսկ տակառապետն զոր առաքեալ էր Բարզափառնէս ունել զՀերովդէս՝ արար զոր կարողն էր առնել, հանելոյ զնա յապարանիցն, այլ չկամեցաւ նա ելանել։ Տակառապետն խորհէր զայլ հնարս խաբելոյ զնա նենգութեամբ, մինչ Հերովդէս մտաբերեաց գաղտ մեկնել գիշերայն։... Սակայն Պարթևք յաւարի առին յԵրուսաղէմ զտունս փախստէիցն առանց բռնաւ մխելոյ ձեռս յերիս հազար քանքարսն որ էին Հիւրկանու։ Խիլ արկին և ապարանիցն արքունի, այլ ոչ գտին զոր յուսային. զի Հերովդէս որ գիտակն էր խորամանկութեան նոցա՝ առաքեալ էր յԻդումայեցիս որ ինչ էր նորա պատուական, զմայր և զեղբարս իւր ևս։ Բարբարոսքն ոչ համարեալ շատ կողոպտել զքաղաքն՝ քանդեցին նաև զշէնսն, և ոչ միայն կացուցին զԱնտիգոնոս թագաւոր, այլև ետուն

Եւ Բարզափրան խորամանկութեամբ պատուէր զնոսա, և ինքն յանկարծակի գնացեալ անտի՝ մնացելոց զօրացն հրաման տայր ի բուռն առնուլ զնոսա և ի ձեռն Անտիգոնի մատնել։

Եւ Անտիգոնոս ի վերայ Հիւրկանու անկեալ՝ զականջն ատամամբքն ի բաց կտրէր. զի թէ և այլ ժամանակ փոխեսցի՝ անհնար լիցի նմա զքահանայապետութիւնն ունել, քանզի օրէնքըն զողջանդամսն հրամայեն կացուցանել քահանայս։ Եւ Փասայէլ եղբայր Հերովդի իւրովի զարկեալ զգլուխ իւր զքարի՝ առաքեցաւ բժիշկ յԱնտիգոնէ, իբր թէ բժշկել զնա. ելից զվէրն թունաւոր դեղովք, և վախճանեցոյց։ Եւ Բարզափրանայ հրաման տուեալ տակառապետին հայոց յԵրուսաղէմ զՀերովդէս որսալ. իսկ տակառապետն ելեալ արտաքս քան զպարիսպն, զՀե-

ի ձեռս նորա զՀիւրկանոս և զՓասայէլ կալեալ։ Անտիգոնոս ետ կտրել զականջսն Հիւրկանու, զի զինչ փոփոխութիւն և հասանիցէ՝ գուցի անբաւական վարել զքահանայապետութիւնն, քանզի օրէնք մեր արգելուն մատուցանել յայն պատիւ՝ որոց խեղութիւն ինչ իցէ յանդամսն։ Իսկ Փասայէլ, որոյ չէր ոչ սուր և ոչ ազատութիւն վարելոյ ձեռօքն՝ ոչինչ զանգաղեցաւ գտանել հընարս առնելոյ անձին, հարեալ զգլուխ իւր զքարի։... Ոմանք ասեն եթէ Անտիգոնոս առաքեաց նմա բժիշկս, որ փոխանակ դեղոց ի բժշկել զնա՝ արկին թոյն ի վէրսն։... Թէպէտև բարկացան յոյժ Պարթևք, զի Անտիգոնոս չեղև ձեռնհաս տալ նոցա զհինգ հարիւր կանայսն զորս խոստացեալ էր՝ թագաւորեցուցին զնա յԵրուսաղէմ, և տարան զՀիւրկանոս կալեալ յաշխարհն իւրեանց»։

րովդէս պատրել. զոր չառեալ յանձն Հերովդի, այլ և ոչ կալ ի քաղաքին, երկուցեալ ի պատառմանէ Անտիգոնեացն՝ ի գիշերի ի ծածուկ ընտանեօք հանդերձ առ Եդովմայեցիս փախչէր. ի Մասանդան յամուր թողեալ զընտանիսն, ինքն ի Հռոմ փութայր հասանել։ Բայց զօրքն Հայոց ձեռնտուութեամբ Անտիգոնեանցն յԵրուսաղէմ մտանեն, ոչ ինչ ումեք վնասեալ, բայց միայն զՀիւրկանու զինչսն առնուին աւելի քան զերեքհարիւր քանքար։ Եւ ընդ գաւառն ասպատակեալ զՀիւրկանեանսն առեալ աւերէին և զՄարիսացւոց քաղաքն գերի առեալ, թագաւոր կացուցանելով զԱնտիգոնոս։ Եւ զՀիւրկանոս կապեալ ածեն Տիգրանայ հանդերձ գերութեամբն, և Տիգրան հրաման տայ Բարզափրանայ նստուցանել զգերին Հրէից որ ի Մարիսացւոց՝ ի քաղաքն Տամիրամայ» (Խոր. Բ. ԺԹ.)։

Ի. գլխոյն մէջ կը պատմէ Խորենացին այսպէս. «Հերովդէս անցեալ ի Հռոմէ առաջի Անտոնի և Կեսարու և Սինկղիտոսին՝ զինքեան միամտութիւն առ Հռոմայեցիսն պատմէ, և թագաւոր եղեալ Հրէաստանի յԱնտոնինէ՝ առնու իւր զօրավիգն օգնականութեան զԲենդիտոս սպարապետ Հռոմայեցւոց զօրօք, ի պատերազմել ընդ զօրս Հայոց և քակել զԱնտիգոնոս։ Որոյ (Բենդիտեայ) հասեալ յԱսորիս՝ փախստական առնէ զզօրս Հայոց. և զՍիղոն թողեալ ընդդիմակաց Հայոց մերձ յԵփրատ, և զՊակարոս (Բակուր, զօրքայրդին Պարթևաց, զոր Խորենացին կը կարծէ լինել Ասորւոց թագաւորի որդի, շփոթելով զնա ընդ Լիսանեայ որդւոյ Պտղոմեայ արքային Լիբանանու) սպանեալ՝ դառնայ յԵրուսաղէմ ի վերայ Անտիգոնի։ Իսկ Հայոց միւսանգամ օգնականութիւն գտեալ ի Պարսից դիմեալ ի վերայ Սիղոնի և փախստական ի Բենդիտոս արկանեն, հեղումն արեանց առնելով անբաւս» (Խոր. Ի.)։

Ըստ ԻԱ. գլխոյն՝ Անտոնիոս կու գայ անձամբ ի Սամոսատ, և լսելով Տիգրանայ մահը՝ կ'առնու քաղաքը, և թողլով զՍոսիոս օգնական Հերովդի՝ ինքն կ'երթայ յԵգիպտոս առ Կղէոպատրա։ Սոսիոս կ'առնու զԵրուսաղէմ և սպաննելով զԱնտիգոնոս՝ կը թագաւորեցունէ զՀերովդէս.—«Զչարեալ Անտոնինոս՝ իւրովի հասանէ ամենայն զօրօք Հռոմայեցւոց. և հասեալ ի Տամշատ լսէ զմահն Տիգրանայ. և առեալ զքաղաքն և թողեալ զՍոսիոս զօրավիգն Հերովդի մարտ դնել ընդ Երուսաղեմի ի վերայ Անտիգոնի՝ և ինքն ի ձմերոց գնայ յԵգիպտոս։ Փութայր հասանել ըստ շամշութեան առն կնամոլոյ, ցանկութեամբ ի Կղէոպատրեայ դշխոյն Եգիպտացւոց։ Այս Կղէոպատրեայ դուստր էր Պտղոմէոս Դիոնիսի, թոռն Պտղոմայիդ Կղէոպատրայ և Հերովդի յոյժ սիրելի. վասնորոյ առաւել ևս յանձնէ Անտոնինոս զՀերովդէս Սոսեայ։ Որ և մարտուցեալ խիստ քաջապէս՝ առնու զԵրուսաղէմ, և սպանեալ զԱնտիգոնոս՝ թագաւորեցուցանէ զՀերովդէս ամենայն Հրէաստանի և Գալիլեայ» (Խոր. Բ. ԻԱ.)։ Խորենացւոյն այս երկու գլուխներն, Ի. և ԻԱ., համառօտութիւն են Յովսեպոսի նախնեաց Պատմութեան ԺԴ. գրոց ԻԶ.—ԻԸ. գլուխներուն։ Յովսեպոսի պատմութիւնն է, թէ Հերովդէս Անտոնիոսի և Աւգոստեայ միջնորդութեամբ կ'առնու ծերակուտէն զթագաւորութիւնն Հրէաստանի։ Նախոյն Բենտիդիոս կը ղրկուի զօրօք. Պարթևք կը յաղթուին. Բակուր կ'սպանուի, Բենտիդիոս կը խաղայ Երուսաղեմի վրայ Անտիգոնոսի դէմ, կը թողու զՍիղոն սակաւուք. Հրեայք, այսինքն կուսակիցք Անտիգոնոսի (և ոչ Հայք, որպէս կամի Խորենացին), կը հալածեն զՍիղոն, որ կ'երթայ առ Բենտիդիոս. Անտոնիոս կու գայ անձամբ, և յետ առման Սամոսատայ կը մեկնի յԵգիպտոս, թողլով զՍոսիոս օգնական Հերովդի։ Սոսիոս կ'առնու զԵրուսաղէմ, և բռնելով զԱնտիգոնոս կը տանի առ Անտոնիոս, որ կու տայ գլխատել զնա.—«Գութն ընդ աղէտս Հերովդի, ասէ Յովսեպոս, ետ Անտոնեայ ջանալ օգնել նմա։ Ի նոյն միտս էր և Աւգոստոս։ Անտոնիոս յաւել ասել, թէ վասն պատերազմին ընդդէմ Պարթևաց՝ կարևոր էր կացուցանել զՀերովդէս թագաւոր Հրէաստանի։ Հաւանեցաւ ծերակոյտն, և անդէն Բենտիդիոս առաքեցաւ զօրօք վանել զՊարթևս յերկրէն Ասորւոց։ Եմուտ նա ի Հրէաստան պատրուակաւ օգնելոյ Հերովդեանց, և առեալ կաշառ յԱնտիգոնեայ՝ մեկնեցաւ, երթալ ազատել զքաղաքսն յորս ասպատակէին Պարթևք, թողեալ զՍիղոն դոյզն գնդաւ զօրավիգն Հերովդի։... Հրեայք կողմանն Անտիգոնեայ հալածեցին զՍիղոն, որ չոգաւ առ Բենտիդիոս, զի հանդերձեալ էր սա խաղալ ի վերայ Պարթևաց։... Պարթևք մատնեցան ի պար-

տութիւն մեծաւ պատերազմաւ, ուր Բակուր սպանաւ, և Անտոնիոս յետ առնլոյ զՍամոսատ՝ մեկնեցաւ յԵգիպտոս, յանձն արարեալ զՀերովդէս Սոսեայ, որ առ զԵրուսաղէմ... և կալեալ զԱնտիգոնոս տարաւ առ Անտոնիոս, որ խաբեաց զնա յուսով՝ մինչև ետ հատանել զգլուխ նորա»:

Ինչպէս կը տեսնուի այս քաղուածէն՝ Խորենացին չտարբերիր Յովսեպոսէ՝ բայց միայն համառօտութեամբն, և այնու միայն որ այս արշաւանաց ժամանակ (36) Հռոմայեցւոց դէմ ոսոխ կը դնէ զՏիգրան, որ արդէն մեռած էր (54), կամ զՀայս, որ գէթ առ երեսս բարեկամ և դաշնակից էին Հռոմայեցւոց: Արտաւազդ, որդին և յաջորդ Տիգրանայ, իւր հօրը պարտութենէն հետէ չհակառակեցաւ Հռոմայեցւոց բաց ի մի անգամէն, երբ իւր 6,000 հեծելովք թողուց զԱնտոնիոս և մեկնեցաւ, ինչպէս արդէն տեսանք:

Խորենացին իւր Բ. դպրութեան ԻԲ. գլուխը կ'սկսի Արտաւազդայ պատմութեամբ ասելով. «Հայոց թագաւորէ Արտաւազդ որդի Տիգրանայ», և բերելով ներքին սովորութիւն մի իբրև հին օրէնք՝ կը յարէ. «Սա ժառանգեցուցանէ զեղբարս իւր և զքորս ի գաւառս Աղիովտի և Առբերանոյ, թողլով ի նոսա զմասն արքունի որ ի չէնս այնմ գաւառաց, հանդերձ առանձին մտից և ռոճկաց, ըստ օրինակի ազգականացն որ ի կողմանս Հաշտենից. որպէս զի լինել նոցա պատուականագոյն և առաւել թագաւորազնն քան զայնս Արշակունիս, միայն օրինադրէ ոչ կեալ յԱյրարատ ի բնակութիւն արքայի»: Զեղբարս, զքորս, նաև զորդիս անգամ, բաց յանդրանկէն, հեռացունելու բարբարոս սովորութիւնն, զոր իբրև օրէնք Արշակունի թագաւորաց կը դնէ Խորենացին, ինչպէս այլուր ըսուեցաւ կը թուի մեզ երկբայելի, այնու մանաւանդ որ Խորենացին կ'ընծայէ զայն իւր դիւցազնին Վաղարշակայ, որոյ գոյութիւնն, ինչպէս արդէն տեսանք՝ կը թուի լինել ընդ կասկածանօք:

Խիստն Մովսէս, որ միշտ քաջ և աշխարհական իշխաններ կը խնդրէ տալ օրինակ իւր ընկճեալ, նուաճեալ և վհատեալ ազգին (Խոր. Ա. Ա.), չկրնալով լռել կամ ծածկել զԱրտաւազդայ պարտութիւնն և զձերբակալութիւն, որ հակառակ էին իւր նպատակին՝ որպէս թէ ի վրէժ այն ձաղանաց՝ կը դնէ սաստիկ պարսաւ վարուց և գործոց դժբախտ թագաւորին: Կը ցուցնէ զնա ամենևին անմասն ի քաջութենէ. «Սա, ասէ, ոչինչ գործ արութեան և քաջութեան եցոյց. այլ ուտելեաց և ըմպելեաց պարապեալ, մօրից և եղէգնապուրակաց թափառեալ շրջէր և առապարաց, զիշավայրիս և զխոզս արածելով. զիմաստութենէ և զքաջութենէ և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ, ծառայ և ստրուկ արդարև որովայնի

լինելով՝ զաղբիւս մեծացուցանէր»: Մինչ Խորենացին, աւելի քան հինգ հարիւր ամօք յետոյ քան զԱրտաւազդ, ընծայեցուցանէ մեզ զԱրտաւազդ «զիմաստութենէ և զքաջութենէ անփոյթ, ծառայ և սորուկ որովայնի»՝ պատկառելի յոյն հեղինակ մի, Պլուտարքոս, գրեթէ ժամանակակից Արտաւազդայ, կը կոչէ զնա նշանաւոր գրիչ, քաջ հմուտ յոյն դպրութեան (Պլուտ. Կրաս. 33):

Ըստ Խորենացւոյն՝ «Արտաւազդ բասրելով յիւրոց զօրացն վասն առաւել պղերգութեանն և սաստիկ որկրամոլութեանն, մանաւանդ զի և զՄիջագետս Անտոնի հանեալ էր ի նմանէ՝ զայրացեալ հրաման տայր զօր յարուցանել զբիւրաւորս Ատրպատական նահանգին, զընակիչս լերինն Կովկասու հանդերձ Աղուանիւք և Վրօք. խաղայ իջանէ ի Միջագետս և հալածական առնէ զզօրս Հռոմայեցւոց: Մռնչեալ առիւծաբար գազանութեամբ Անտոնինոս (կարդա Անտոնիոս), առաւել ևս թունեալ ի Կղէոպատրայ, քանզի (սա) քէն պահէր վասն լլկանաց իւրոյ հանոյն որ ի Տիգրանայ, և ոչ միայն Հայոց, այլ բազում թագաւորաց լինէր մահաբեր, զի նոցայոցն տիրեսցէ իշխանութեանց: Սակս որոյ բազում թագաւորս սպանեալ Անտոնի՝ ի Կղէոպատրա հաւատայ զնոցա իշխանութիւնն, բայց ի Տիւրոսէ և ի Սիդոնէ և որ միանգամ ընդ Ազատ գետովն էին: Եւ առեալ զբազմութիւն զօրացն՝ դիմէ ի վերայ Արտաւազդայ. և անցեալ ընդ Միջագետս՝ կոտորէ անհնարին զզօրս Հայոց և ձերբակալ առնէ զարքայն նոցա: Եւ դառնայ յԵգիպտոս պարգևել Կղէոպատրի զԱրտաւազդ որդի Տիգրանայ, հանդերձ բազում ընչիւք յանկածէ պատերազմին» (Խոր. Բ. ԻԲ, ԻԳ.):

Զարմանալի է որ Խորենացին, իբր թէ անգէտ ժամանակակից պատմութեան, Յովսեպոսի իսկ, զոր գիտէ այնպէս ճարտարութեամբ օրինակել՝ կը մոռնայ զԱրտաւազդայ օգնելն Անտոնիոսի յարշաւանս նորա Պարթևաց դէմ, զգալ նորա ի Հայս, և դաւով բռնելով զԱրտաւազդ հակառակ իրաւանց ազգաց՝ կապեալ ոսկի չղթայիւք տանելն յԱղեքսանդրիա ի ձողանս և սպանանելն զնա չարաչար: Խորենացին զանց առնելով զայսու ամենայնիւ՝ կու տայ Արտաւազդայ յիմարաբար խաղալ ի Միջագետս ընդդէմ Հռոմայեցւոց, և իբրև թէ ի ճակատու յաղթուած՝ տարուել իբրև գերի առ Կղէոպատրա:

Չէ ամենևին պատմական, թէ Հռոմայեցիք հանին յԱրտաւազդայ զՄիջագետս: Հայք վաղուց առ Տիգրանաւ կորուսած կամ թողուլ ստիպուած էին այն երկիրները: Միջագետք, այսինքն արևմտեան մասն այն երկրին, Ուռհայաստան և Միգդոնիա հանդերձ Ադիաբենիւ, էին յայնժամ ուրոյն թագաւորութիւններ ընդ վերին իշ-

խանութեամբ Պարթևաց, և ոչ իսկ Հռոմայեցի զօրք կար յայնժամ ի Միջագետս, որոց վրայ յարձակէր Արտաւազդ։ Դժբախտ թագաւորն կը կենար հանդարտութեամբ յիւր երկրին, և եղաւ յանկրաւէ զոհ վրէժխնդրութեան կատաղի Հռոմայեցւոյն։

Վիքտոր Տիւրիւի կը համառօտէ Անտոնիոսի յիմարութիւններն յարևելս զայս օրինակ, յիմարութիւններ՝ զորս կը թուի ակնարկել և Խորենացին. «Եթէ թագաւորն Հայոց չէր թողեալ այնպէս վաղ զբանակն Հռոմայեցւոց իւրովք 6,000 հեծելովքն՝ ամօթալի դարձն Անտոնիոսի չլինէր այնպէս ձախող։ Անտոնիոս յամեցոյց զքէն վրիժուն, զի մի բռնադատեսցի յապաղել զերթն իւր առ Կղէոպատրա։․․ Ի գուր գոգ ի նմին տարւոջ (36) բախտն մատոյց նմա առիթ նորոգելոյ զիւր կորուստն։ Ի մէջ թագաւորին Մարաց և Հրահատայ յարեաւ գժտութիւն վասն աւարաբաժնին, և զայրացեալ մարին՝ սպառնայր ձեռս տալ ի Հռոմայեցիս անդր։ Կղէոպատրա արգել զԱնտոնիոս անսայ հրաւիրանաց մարին, և ձգեաց զնա յԱղեքսանդրիա։․․ Յամին 35 Անտոնիոս առնէ պատրաստութիւն յԱսորիս, այլ չեթող նմա Կղէոպատրա։ Ի միւսում ամին ձեռն արկ միւսանգամ գործոյն, և եմուտ նախ ի Հայս, որոյ թագաւորն առ ի տալ տեղի մրրկին՝ չոգաւ ի կոչ նորա։ Այն ինչ հասեալ նորա ի բանակն՝ լեալ ձերբակալ՝ ածաւ, կապեալ ոսկի շղթայիւք, յԱղեքսանդրիա, ուր իբրև ի մայրաքաղաք արևելից եմուտ Անտոնիոս ձաղել։ Հռոմ զչարէր ընդ գործս Անտոնեայ իբրև հակառակ իւրոց իրաւանց, այլ Անտոնիոս մոռացեալ էր թէ էր հռոմայեցի։ Ետ նա անուն թագաւորի Աղեքսանդրի և Պտղոմեայ, երկուց որդւոցն որ եղեն նմա ի Կղէոպատրայ. առաջնումն ետ հանդերձ Մարօք զՀայս և զթագաւորութիւնն Պարթևաց. երկրորդումն՝ հանդերձ Փիւնիկեաւ զԿիլիկիա և զԱսորիս. քոյր նոցա Կղէոպատրա ընկալաւ վարձանս զԿիւրենէ։ Յետոյ յանդիման կացոյց ժողովրդեան զերկոսին իշխանսն — զԱղեքսանդր, որ կրէր պատմուճան մարական և խոյր, և զՊտղոմէոս՝ ըզգեցեալ ամղան, պսակ ի գլուխ զօրէն պայազատացն Աղեքսանդրի։ Իսկ ինքն փոխանակ հռոմէական պատմուճանին արկեալ էր վերարկու ի ծիրանւոյ։ Էր տեսանել զնա իբրև զթագաւորս արևելից պսակեալ թագաւ, գաւազան ոսկի ի ձեռին և նրան յազդեր. և կամ առընթեր Կղէոպատրայ շուրջ եկեալ ի հրապարակս Աղեքսանդրիոյ յաճախագոյն ևս նստեալ ի կառս, իբրև զԴիոնեսոս, զարդարեալ պսակօք, կօշիկ գաւառնաց յոտս, թագ ի գլուխ յոսկւոյ և նիզակ չաստուծոյն զինւոյ ի ձեռին։ Այսպէս գնայր Անտոնիոս յարևելս ի հեճուկս Հռոմայ, մինչև լեալ ատելի և՛ Հռոմայ և՛ իշխանացին

իւրում Աւգոստեայ՝ կորեաւ ի ճակատուն Ակտիոնի ընդդէմ Աւգոստեայ, որ նովին եղև միահեծան» (31)։

Խորենացւոյն պատմութեան Բ. դպրութեան ԻԴ. գլխէն մինչև ի գլուխն ԼԴ. ունինք զպատմութիւն նախ՝ Արշամայ ուրումն, և ապա՝ որդւոյ նորա Աբգարու, իբրև թագաւորաց Հայոց զկնի Արտաւազդայ։

Ինչ որ Խորենացին կը պատմէ զյաջորդաց Արտաւազդայ յԱրշամայ և անդր՝ նոյնպէս հակառակ է արտաքին, մեծաւ մասամբ ժամանակակից պատմութեան, այնպէս որ եթէ ընդունինք զմին յերկուց անտի իբրև վաւերական՝ հարկ է մերժել զմիւսն իբրև անվաւեր։ Ի զուր է—չկրնալով մերժել զարտաքինն, արդարացուցանելու համար զԽորենացին, բաժնելով զյանժամու Հայաստան երկու, վերին և ստորին, ինչպէս կ'ընէ Չամչեան—ինչ որ արտաքինք կը պատմեն զՀայոց՝ դնել կատարուած ի վերին Հայս, և ինչ որ Խորենացին կը պատմէ՝ ի ստորին Հայս։ Այսպիսի բաժանումն ոչ միայն բանի է, այլ և օտար պատմչաց երկու դասին ևս, (Խորենացւոյն և արտաքին պատմչաց,) որք իրենց պատմութեան ասպարէզ գիտեն զողջոյն զՄեծ Հայս։ Եւ ոչ առողջ մտաց է դարձեալ յերկուս ոտս կաղալ իբրև զԹաթըրճեան, զերկոսին պատմութիւնսն միանգամայն ուրոյն ուրոյն բերելով ի մէջ, առանց համարձակելու տալ վճիռ ըստ օրինաց անաչառ քննադատութեան ի նպաստ միոյն կամ միւսոյն, ի շնորհս ո՛ւմ, չենք գիտեր։ Մեք զհետ երթալով առածին, թէ Սիրելի է Պղատոն, բայց առաւել սիրելի ճշմարտութիւն, երկու կողման ևս ճոխութիւնն դնելով ի կշիռ՝ առինք զարտաքինն ոչ իբրև նախամեծար, այլ իբրև միայն ճշմարիտ։ Հոս հարկ կը համարինք սակայն արկանել ընդ անաչառ քննութեամբ մեր ծերունի պատմիչն, և առ այս բաւական է միայն ցուցնել, թէ ինչ աղբերէ կ'առնու նա և ինչ արուեստիւ։

Խորենացւոյն Բ. դպրութեան ԺԴ. գլխէն մինչև ԻԴ. բաւական յայտնի տեսնուեցաւ, թէ աղբիւր Խորենացւոյն ինչպէս Տիգրանայ նախորդներուն պատմութեան համար չէր Մարիբաս՝ նոյնպէս Տիգրանայ համար չէր Ափրիկանոս, այլ գրեթէ միայն Յովսեպոս, և այն՝ կրճատեալ և այլայլեալ։ Արշամայ և Աբգարու պատմութեան համար ևս, զոր կ'ամփոփէ Խորենացին ԻԴ. գլխէն մինչև ի գլուխն ԼԴ՝ առեմք զնոյն, այսինքն թէ աղբիւր Խորենացւոյն ո՛չ թէ Ափրիկանոս է և ոչ այլ ոք, այլ գրեթէ միայն Յովսեպոս։

Ըստ Խորենացւոյն՝ յետ Արտաւազդայ «զօրքն Հայոց հրամանաւ Արշեզի—(իմա Որոդայ, այն է Արշակ ԺԴ. 60—36, քանզի չիք թագաւոր Պարթևաց Արշէզ անուն, ո՛չ ըստ պատմագրաց և

ոչ ըստ դաշնեկանաց. Խորենացին է, որ ինչպէս այլուր ասացաւ, չէ յայտ ուստի առնելով՝ կը դնէ այլ իմն կարգ Պարթեւ թագաւորաց, տարբեր անուամբք և թուականօք)—թագաւորեցուցանեն ի վերայ ինքեանց զԱրջամ որ և Արշամ, որդի Արտաշիսի եղբօր մեծին Տիգրանայ, հայր Աբգարու»: Զսա, ասէ, ոմանք յԱսորւոց կոչեցին Մանովայ»: Երկու անուն ունենալ, կը յաւելու պատմիչ մեր, սովորութիւն էր նաև այլոց ազգաց, զորօրինակ Հերովդէս-Ագրիպպաս, Տիտոս-Անտոնինոս, և կամ Տիտոս-Յուստոս: Այս Արշամ, ասէ Խորենացին, չկրնալով գտնել օգնութիւն Արշէզի յաջորդէն յԱրշաւրէ (այն է ի Հրահատայ Դ, այսինքն Արշակ ԺԵ. 36—4) որ էր մանուկ, «ընդդէմ կալ Հռոմայեցւոց՝ խօսի ընդ նոսա ի հաշտութիւն խաղաղութեան, տալով հարկս ի Միջագետաց և ի կողմանց Կեսարու ի ձեռն Հերովդի, և, կ՚ըսէ, այս եղև սկիզբն Հայոց մասնաւոր մտանել ընդ հարկաւ Հռոմայեցւոց»: Խորենացին չգիտեր, թէ արդէն Տիգրան մեծ՝ դաշամբն ընդ Պոմպէի (64)՝ հրաժարած էր ո՛չ ի Միջագետաց միայն, այլև ուրիշ երկիրներէ, որոց տիրած էր աշխարհակալութեամբ, ինչպէս արդէն յիշուեցաւ: Որովհետև բոլոր Պաղեստին, սահմանակից Ասորւոց և Միջագետաց, յանձնուած էր Հերովդի յՕկտաւեայ (Օգոստոսէ)՝ չէ անհաւանական թէ Հերովդէս ունէր ազդեցութիւն մեծ Միջագետաց և հիւսիսային Ասորւոց վրայ ևս (Ուռհայաստան, Միգդոնիա), և հարկք այն կողմանց կ՚առնուէին ի ձեռն Հերովդի: Չէ ուրեմն սխալ բան Խորենացւոյն, թէ Արշամ սկսաւ տալ «հարկս ի Միջագետաց ի ձեռն Հերովդի», և թէ «ի ձեռն հրեշտակաց յղէ առ կայսրն ի Հռոմ, զի մի զնա ընդ իշխանութեամբ Հերովդի արասցէ. իսկ կայսրն ոչ միայն զԱրշամ չազատէ յիշխանութենէ Հերովդի, այլ և զամենայն Միջերկրեայս (իմա զՄիջագետս) նմա հաւատայ»: Այսպէս Խորենացին շատ գեղեցիկ կը ցուցնէ զյայնժամու հանգամանս հիւսիսային Միջագետաց, այն է Ասորւոց, Ուռհայաստանի և Միգդոնիայ (Մծբնայ) ընդ Հռոմայեցւովք: Սխալ Խորենացւոյն յայնմ է, որ համարելով զՈւռհայաստան և զՄիգդոնիա ընդ իշխանութեամբ Հայոց՝ ինչպէս էին առ Տիգրանաւ և, ըստ իւր պատմութեան, առ Վաղարշակաւ և առ յաջորդօք նորա՝ զիշխանսն Ուռհայաստանի (Մանովէ, Աբգար) կը կարծէ լինել Հայոց թագաւորներ: Այսպէս Խորենացւոյն ոչ թէ պատմութիւնն է սխալ, այլ հարաւային մասանց Հայոց նոր յարաբերութիւնն, զոր Խորենացին կը շփոթէ ընդ հնոյն: Չէ և այն զարմանալի, թէ Արշամ, կամ ո՛վ ոք և էր, իշխանն Ուռհայաստանի, տեսնելով զՀերովդէս գրեթէ արձակ իշխան այն կողմանց, նաև իւր երկրին՝ «երկրպագէ Հերովդի իբրև տեառն ամե-

նայնի»։ Զայսոսիկ ևս կը գտնենք առ Յովսեպոսի, թէպէտ ոչ բան առ բան և ի միում վայրի, այլ ցիր աստ անդ։ Համառօտիւ՞ բանք Խորենացւոյն յայս երկու գլուխս (ԻԴ, ԻԵ.) Հայլին յՈւռՀայաստան, և ոչ բնաւին ի Հայս, որոյ պատմութիւնն այլ է, ինչպէս տեսանք, և զոր կը թուի Խորենացին մեր անգիտանալ ի սպառ։

Խորենացին նոյն ԻԴ. գլխոյն մէջ Ենանոս անուն Հրէի ումեք, ըստ Խորենացւոյն՝ Բագրատունւոյ—քանզի ամէն Հրեայ ի Հայս ըստ Խորենացւոյն է Բագրատունի (տես և գլ. ԼԳ)—կու տայ արձակել զՀիւրկանոս քահանայապետ (զոր կը համարի Բարզափրանայ Ռշտունւոյ, սպարապետին Տիգրանայ գերեալ առ Տիգրանաւ), և այս պատճառաւ, նաև ըստ ամբաստանութեան Զօրայի նահապետի Գնթունւոյ՝ որպէս թէ Արշամ զայրանալով Ենանոսի՝ կը տանջէ զնա (զիւր թագակապ ասպետն) և կ'սպառնայ սպաննել զորդիս նորա, մինչև առ աՀին ուրանալ նմա զՀրէութիւն։ Զայսմ ամենայնէ խօսուած է երկար յառաջնում մասին Պատմութեան մերոյ (էջ 170—179). ուստի աւելորդ կը համարինք աստ կրկնել միւսանգամ։

Գալով Հիւրկանու արձակման՝ կ'ըսենք թէ այս դժբախտ քահանայապետին վրայ Յովսեպոս, ոչ հեռի ժամանակաւ և հմուտ իրաց Հրէից՝ կը խօսի երկար և բոլորովին տարբեր, ինչպէս արդէն յիշուեցաւ։ ԶՀիւրկանոս գերի եկած ի Հայս առ Տիգրանաւ կը պատմէ նաև Բուզանդ. սակայն յայտնի է, թէ ինչպէս Խորենացին՝ նոյնպէս սա կ'առնուն ուրիշ աղբերէ, որ չկարէ լինել ստոյգ քան զՅովսեպոս, որ իւր ազգին երևելի քահանայապետին պատմութիւնը կ'ընէ գրեթէ ժամանակակից մարդոց։ Նոյնպէս Զօրայի Գնթունւոյ ամբաստանութեան համար զԵնանոսէ, այսինքն զԱնանիայէ ումեմնէ Հրէէ՝ կ'ըսենք, թէ կարէ լինել ստոյգ, սակայն կը վերաբերի ՈւռՀայաստանի և ոչ Հայոց։ Զիարդ և իցէ՝ ունենալով զՅովսեպոս՝ ստիպեալ եմք ասել, թէ Խորենացւոյն պատմութիւնն, ինչպէս նաև Բուզանդայն, զՀիւրկանոսէ՝ չեն ստոյգ։

(Զայս ըսինք Հիւրկանու համար՝ յեցեալ ի վկայութիւնն Յովսեպոսի, որ էր Հրեայ և ժամանակակից։ Նոյնը կ'ըսենք Հրեայ գերութեան համար, զոր ըստ Խորենացւոյն բերաւ Տիգրան Մարխացւոց քաղաքէն։ Նախ՝ զՄարխսա քաղաք երկրին Յուդայ, ըստ ոմանց Սամարիա, գերեցին և քանդեցին ո՛չ թէ Տիգրան կամ Հայք, այլ Պարթևք 39-ին նախ քան զՔրիստոս, մինչև Տիգրան մեռած էր 55-ին։ Երկրորդ՝ Տիգրան չմտաւ երբէք Պաղեստին կամ Հրէաստան, ուստի կրնար բերել այնչափ Հրեայ գերիներ, մինչև զետեղել զնոսա այլևայլ քաղաքներ։ Չենք սխալիր եթէ ըսենք, թէ Հրեայ գերու-

թեան սկիզբն ի Հայս կ'երթայ մինչև Նաբուգոդոնոսորայ ժամանակ։ Զէ անհաւանական, թէ հին Հայք, այն է Արարատեան տէրութիւնն, ունէր եթէ ոչ դաշնակցութիւն, գոնէ սերտ բարեկամութիւն ընդ Բաբելոնի. և առ այս ըստ բաւականին հաւանականութիւն կու տայ ակնարկութիւն Քսենոփոնի ի խրատսն Կիւրոսի, թէ Հայրն Տիգրանայ առաջնոյ չգնաց՝ բայց մեծ դժուարութեամբ Մարաց և Պարսից հետ ընդդէմ Բաբելոնի։ Զիարդ և իցէ՝ կը թուի եթէ ոչ ստոյգ, գէթ հաւանական, բան Խորենացւոյն, թէ հին Արարատեան թագաւորներէն մին, Հրաչեայ, որ է թերևս Ուրշայն սեպաձև արձանագրութեանց և կամ որ և իցէ Արարատեան թագաւոր մը՝ խնդրեց Նաբուգոդոնոսորէ հրեայ գերիներ, որոց գլխաւորին անունն էր ըստ Խորենացւոյն Շամբաթ։

Թողունք Հրաչեայ և Շամբաթ անունները, թողունք և Արարատեան թագաւորի մը խնդրելն հրեայ գաղթականութիւն ի Նաբուգոդոնոսորայ. տակաւին հաւանական կը թուի, թէ հիւսիսային-արևմտեան կողմն Արարատայ էր իբր Սիպերիա, ուր Բաբելոնի, թերևս նաև Ասորեստանի թագաւորք կը ղրկէին հրեայ գերիներ, և այսմ շատ յարմար կու գայ Սպեր անուն հիւսիսային-արևմտեան գաւառ Հայոց, որ ի վաղուց համարուած է երկիր Բագրատունեաց, կարծելոյ ծագմամբ հրեայ։ Այս դիտողութիւնն ըրինք առ այժմ իբրև ազդ, հաստատութիւնը թողլով ապագայ և աւելի ճշգրտոյն հետազօտութեանց։ Բարեկամ մը սեպագիրներու ուսման հմուտ (յարգոյ Յովսէփ Վ. Սանտալճեան), թելադրեց մեզ այս դիտողութիւնը)։

Թողունք ուրիշ անհամաձայնութիւններ որ կան ի պատմութեան Խորենացւոյն ընդ Յովսեպոսի։ Ըստ Յովսեպոսի՝ Բարզափանէս (ոչ Բարզափրան) էր սպարապետ Պարթևաց յարշաւանս սոցա ի Պաղեստին, և տակառապետն որ կը յիշուի՝ էր Բակուր, նոյնպէս Պարթև, և ոչ Գնէլ հայ, ինչպէս տեսանք։ Յովսեպոս համակ Պարթևաց կու տայ՝ ինչ որ Խորենացին կ'ընծայէ Հայոց, և պատմութիւն Յովսեպոսի հաւատարմագոյն է։ Արդէն ըսինք, թէ Հայք ամենևին մասն չունեցան և չէին կրնար ունենալ Հռոմայեցւոց այն պատերազմներուն մէջ իբրև թշնամի նոցա, վասն զի 64-էն հետէ Հայք էին գէթ առ երեսս դաշնակից և բարեկամ Հռոմայեցւոց. ժամանակն ևս չյարմարիր, քանզի Կրասոսի արշաւանն եղաւ 54-ին, իսկ Անտոնիոսին՝ 36-ին, մինչ Տիգրան մեռած էր 55-ին։

Թէպէտ Արշամայ և Աբգարու վրայ գրուածներն չեն վերաբերիր մեզ, և կրնայինք բոլորովին թողուլ՝ բայց ցուցնելու հա

մար, թէ Խորենացին կամ աղբիւր նորա ո՛րչափ կ՚այլայլէ իւր աղբիւրն որ է Յովսեպոս՝ ցուցնենք թէ ինչ է ԻԸ. գլխոյն պատմութիւնն ըստ Յովսեպոսի։

ԻԸ. գլխոյն մէջ Խորենացին կը պատմէ դժտութիւն ինչ Արշամայ ընդ Հերովդի, և ակամայ հնազանդել նմա այս վերջնոյն, ինչպէս տեսանք և վերադոյնն.—«Յետ այսորիկ եղև խռովութիւն ի մէջ Հերովդի արքայի Հրէաստանի և մերոյն արքայի Արշամայ։ Քանզի Հերովդէս յետ բազում գործոց արութեանց, ձեռնամուխ լինի ի բարեգործութիւնս, (իմա ի մեծագործութիւնս), շինուածս բազումս առնելով յոլով քաղաքաց, սկսեալ ի Հռովմէ (!) մինչև ցԴամասկոս։ Խնդրեալ ի յԱրշամայ բազմութիւն արանց անարուեստից գործաւորաց, որով զԱսորւոց զԱնտիոքայ զանանց և զանկոխ հրապարակսն ի խոհերացն և ի տղմոցն՝ լցցէ։ Զօր չառեալ յանձն Արշամայ՝ զօր ժողովէ ընդդիմանալ Հերովդի, և ի ձեռն հրեշտակաց յղէ առ կայսր ի Հռոմ, զի մի՛ զնա ընդ իշխանութեամբ Հերովդի արասցէ։ Իսկ կայսրն ոչ միայն զԱրշամ չազատէ յիշխանութենէն Հերովդի, այլ և զամենայն Միջերկրայս (թուի ասել Միջագետս) նմա հաւատայ»։ Արդարև գիտենք Յովսեպոսէ, թէ Հերովդէս մեծամեծ շինութիւններ ըրաւ յարևելս (Յովս., Նախն. պատմ. Հր. ԺԵ. 11, և Պատմ. ընդդէմ Հռոմ. Ա. 16), բայց ոչ սկսեալ ի Հռոմէ։ Նոյնպէս թէ Հերովդէս Անտիոքայ փողոցներն մաքրեց աղմէ և յատակեց հրապարակներն սալոտակ կճով՝ այս ևս է Յովսեպոսէ.—«Զմեծ հրապարակն Անտիոքայ Ասորւոց որ քսան վտաւանաւ երկայնութեան լի էր միշտ տղմով, մինչև չլինել մարթ անցանել՝ յատակեաց» (Յովս. Պատմ. Հր. ընդդէմ Հռոմ. Ա. 16, և Նախն. պատմ. ԺԶ. 9)։ Թէ այս շինութեանց համար Հերովդէս խընդրեց գործաւորներ յԱրշամայ, այսինքն յիշխանէն Ուռհայաստանի, և սա ոչ միայն յանձն չառաւ, այլև իշխեց ընդդիմանալ Հերովդի զօրօք, և ի ձեռն դեսպանաց խնդրեց ի կայսերէ չընել զնա հպատակ Հերովդի, բայց կայսր ոչ միայն չազատեց զնա Հերովդի իշխանութենէն, այլ մանաւանդ յանձնեց Հերովդի զՄիջագետս, և Արշամայ, իմա իշխանին Ուռհայաստանի տեսեալ զայս, «երկրպագէ Հերովդի իբրև տեառն ամենայնիւ՝—այս ևս է Յովսեպոսէ, բայց այլագգ, և ո՛չ որպէս պատմէ Խորենացին։ Նախ առ Յովսեպոսի չիք բան զՀայոց, այլ զԱրաբացւոց, իմա զՈւռհայաստանէ, և ոչ Արշամ յիշուած է անդ, և չէր իսկ մարթ, քանզի չիք այնու անուամբ թագաւոր ո՛չ Հայոց և ոչ Ուռհայաստանի, ինչպէս պիտի տեսնենք յետոյ։

Ըստ Յովսեպոսի՝ Հերովդի դժտութիւնն էր Արաբացւոց հետ,

այսինքն Ուռհայեցւոց, զորս կոչէ Յովսեպոս Արաբացիս, քանզի Միջագետաց այն մասն, իմա Ուռհայաստան, Միգդոնիա՝ կը կոչուէր այն ժամանակի պատմութեան մէջ Արաբիա, վասն զի բնակիչքն էին մեծաւ մասամբ արաբացի։ Աբգար կամ Աքպար, Ուռհայաստանի իշխանն կը կոչուի հռոմայեցի պատմիչներէ (Տակիտոս) արաբացի, և Բուզանդ կ'անուանէ Ասորւոց այն կողմերն (Եդեսիա, Մծբին)՝ Արուեստան, որ կը նշանակէ Արաբիա (Բուզ. Դ. ԻԱ.), ինչպէս Արուայիկն՝ ըստ մերոց է Արաբացի։ Իսկ պատճառ գժտութեանն էր ըստ Յովսեպոսի այս.—յետ որոյ Օգոստոս Տրաքոնացւոց երկիրն, որ էր ի մէջ Հրէաստանի և Միջագետաց, տուաւ Հերովդէի՝ աւազակաբարոյ բնակիչք երկրին, որ սովոր էին կեալ յելուզակութեամբ, հալածուելով ի Հերովդէ՝ կը գտնէին պաշտպանութիւն յԱրաբացւոց, այսինքն ի բնակչաց Ուռհայաստանի։ Հերովդէս կը պահանջէր յիշխանէ նոցա տալ ի ձեռս փախստեայ աւազակներն, որ իւր հպատակներն էին, նաև զարծաթն 160 քանքար, զոր Հերովդէս փոխ տուած էր նոցա։ Երբ Արաբացիք (Ուռհայեցիք) սկսան դէմ դնել Հերովդի զօրօք, և կը զլանային հատուցանել զփոխն և տալ աւազակներն զորս կը պահանջէր Հերովդէս՝ ծագեցաւ պատերազմ, զորմէ երկար կը պատմէ Յովսեպոս (Նախն. պատմ. ԺԶ, 13. Պտրզմ. ընդդէմ Հռոմ. Ա.. 14, և այլուր)։ Աւազակներն զորս կը պահանջէր Հերովդէս յԱրաբացւոց Ուռհայի՝ լինին առ Խորենացւոյն գործաւոր, և վասն այսորիկ լինի պատերազմն։ Հերովդէս բողոքեց հռոմայեցի կուսակալներուն որ ի Միջագետս, և որոշուեցաւ դատն ի նպաստ Հերովդի. Արաբացիք չանսացին վճռոյն. երկուստեք դեսպանք գացին ի Հռոմ առ կայսր, և Օգոստոս տուաւ իրաւունս Հերովդի։ Զայս տեսնելով Արաբացիք (ըստ Խորենացւոյն՝ Արշամ) ստիպուեցան հնազանդիլ Հերովդի ակամայ. այս է Արշամայ ակամայ հնազանդութիւնն Հերովդի, կամ որպէս յետոյ ասէ՝ «երկրպագելն Արշամայ Հերովդի իբրև տեառն ամենայնի», կամ որ նոյն է ըստ Յովսեպոսի—«Այս ցածոյց զամբարտաւանութիւնն Արաբացւոց այնպէս՝ մինչև համարել զՀերովդէս իւրեանց պաշտպան» (Յովս. Պտր. Հր. ընդդէմ Հռոմ. Ա.. 14)։ Ահա այս է գժտութիւնն Արաբացւոց։

Խորենացին այս Բ. դպրութեան ԻԶ. գլխէն մինչև ի գլուխն ԼԵ. կը դնէ զպատմութիւն Աբգարու, իբրև որդւոյ Արշամայ արքային Հայոց, յաջորդի Արտաւազդայ։ Արդարև յետ համառօտելոյ զպատմութիւն Արշամայ իբրև Հայոց թագաւորի նախընթաց երկու գլուխներուն մէջ՝ հարկ էր գալ ի պատմութիւն որդւոյ նորա և յաջորդի։ Արդարև Աբգար (ասորի և ոչ հայ) էր իշխան և ոչ թագաւոր Ուռ-

Հայաստանի, ինչպէս գրուած է նաև ի կասկածեալ նամակին նորա առ Քրիստոս – «Աբգար Արշամայ, իշխան աշխարհի»: Այս երկու բառք թարգմանութիւն են յունարէն τόπαρχος անուան, որ կը նշանակէ տեղապետ, որպիսի էին իշխանք Ուռհայաստանի, և կը թուի լեալ որդի և յաջորդ Մանուայ և ոչ Արշամայ, անուն՝ որ կը թուի լինել պէտակ: Աբգարէ որպէս թէ առ Քրիստոս գրուած նամակին սկիզբը կարդալով «Աբգար Արշամայ»՝ Խորենացին կամ այլ ոք կարծած է, թէ Արշամ (բուն անուամբ Մանուէ) էր հայր Աբգարու. բայց ասորերէն հարազատ օրինակ նամակին ունի փոխանակ Արշամայ՝ Ուշամա, այսինքն թուխ, քանզի Ուռհայաստանի իշխաններէն ոմանք իրենց բուն անուան հետ ունէին նաև յորջորջանաց անուն կամ վերադիր, ինչպէս Սոմախա, Ուշամա, Սևերոս, այլովքն հանդերձ:

Աբգարու կամ մանաւանդ Աբգարներու վրայ պատմուած է բազում ինչ խառն ի խուռն: Խորենացին չհամարելով բաւական հայացունել զԱբգար՝ կը ջանայ հայացունել նաև զանունն, ստուգաբանելով *աւագ այր*, զոր որպէս թէ Ասորիք չկարելով ուղիղ հնչել՝ աղաւաղած էին յ*Աբգար*.— «Այս Աբգարէս կոչիւր աւագ այր վասն առաւել հեզութեանն և իմաստութեանն, որում յետոյ և տիքն. զայս ոչ կարելով ուղղախօսել Յունաց և Ասորւոց՝ կոչեցին Աբգարիոս» (Խոր. Բ. ԻԶ.): Լանկլուա չընդունիր զայս.— «ստուգաբանութիւն Աբգար անուան զոր տայ աստ Խորենացին՝ սխալ է, և թէպէտ Յուլիոս Ափրիկանոս առ Եւսեբեայ (Քրոն. Բ.) թուի հաստատել զմեկնութիւն նորա յասելն, Յեդեսիա թագաւորէ Աբգար, այր կատարեալ» այլ չէք պատճառ ընդունելոյ»: Չենք սխալիր կարծեմ, եթէ նայելով Տակիտոսի ուղղագրութեան, որ կը գրէ Ակբար՝ համարինք սեմական բառ, իբրև բաղդատական *քէպիր*—*մեծ* բառին, որպէս թէ մեծագոյն, որ կը մերձենայ Խորենացւոյն աւագ բառին:

Աբգարներու վրայ, ըսինք, շատ բան ըսուած է խառն ի խուռն. բայց Ասեման, կը թուի մեզ, վերցուց խառնակութիւնը, հանելով հին ասորի աղբիւրներէ Աբգարեանց ազգաբանութիւնը: Ըստ պատմութեան Ասորւոց, զոր կը բերէ անուանի մատենագիրն ասորի Ասեման, որ ծաղկեցաւ յանցեալ դարու, առնլով Դիոնեսիոսէ Ասորւոյ, որ նստաւ պատրիարք Ասորւոց Յակոբիկեանց 818-ին՝ Եդեսիա կամ Ուռհա ունեցած է ի վաղուց թագաւորներ կամ իշխաններ Մանուէ և Աբգար անուն մինչև 217, ուր դադրած է այս իշխանութիւնն. այսինքն գրեթէ ի սկզբան հարստութեանն Սասանեանց: Որովհետև ըստ աւանդութեանն զոր կը բերէ Ասեման, Ուռհայաստան և թա-

գաւորք նորա էին ասորի՝ կը հետևի թէ Աբգար ևս էր ասորի և ոչ հայ։ Զամչեան (Պատմ. Հյ. Ա. էջ 574) կը համարի այն ասորական աւանդութիւնն առասպել։ Բայց և այնպէս ոչ հաւանականութիւն միայն, այլ և ստուգութիւնն յայն կողմն է՝ թէ Մանովէք կամ Աբգարք, յորոց մին է այն որ կը յիշուի հոս՝ էին ասորի, և կոչուած են նաև արաբացի. զպատճառն արդէն ըսինք։

Ինչ որ Խորենացին կը պատմէ զԱբգարէ ԻԶ.—ԻԹ. գլուխներուն մէջ, զորօրինակ զխռովութիւնն ի մէջ Աբգարու և Հերովդէի, զկռիւն և զյաղթութիւն, զձաղումն հրեշտակաց նորա ի Հռոմ, ըզգայրանալն Աբգարու և խորհելն ապստամբել ի Հռոմայեցւոց, գերթալն նորա խաղաղել Պարթևաց յաջորդութեան վէճը, զօգնել նորա Արետայ արքայի ընդդէմ որդւոյն Հերովդէի, զառաքումն երկու իշխանաց առ Մարինոս կուսակալ Հռոմայեցւոց ի Փիւնիկէ, այլովքն հանդերձ՝ կը թողունք, իբրև վերաբերեալ (եթէ ճշմարիտ ևս են), Ուռհայաստանի կամ Ասորւոց և ոչ Հայոց, և կու գանք ի պատմութիւն դարձին Աբգարու։ Այս պատմութիւն ևս, ճշդիւ խօսելով՝ չունի ամենևին վերաբերութիւն Հայոց. բայց որովհետև դարձն Աբգարու իբրև առաջին հայ թագաւորի ի քրիստոնէութիւն, ի վաղուց անտի մեծ համբաւ բռնած է յազգին՝ հարկ կը համարինք այս կարևոր դիպուած վրայ խօսել ըստ բաւականին, մանաւանդ որ պատմութիւնն ունի կէտեր՝ որ առաջի անաչառ քննադատութեան չեն արդարանար, և զորս գէթ հարևանցի ակնարկել կարևոր պարտք են անվեհեր պատմագրի, հասնելու համար գէթ պատմութեան ճշմարիտ մարմնոյն, կեղևելով վկայաբանական ստեղծումներ, որ արտաքոյ են պատմական հաւանականութեան անգամ, թող թէ ստուգութեան։

Նախ կ'ըսենք, թէ Աբգարու դարձին պատմութիւնն, զոր կը բերէ Խորենացին արդարև ասորի աղբերէ (Դերուբնա)՝ է պատմութիւն դարձի Ագիաբենի թագաւորին Իզատայ որդւոյ Մանովազայ։ Մանովազ և Իզատ փոխուած են ի Մանովէ և յԱբգար, սակայն պատմութեան պարագաներն են մեծաւ մասամբ նոյն, սա տարբերութեամբ միայն՝ որ Ագիաբենի թագաւորին դարձն է ի հրէութիւն, մինչև Աբգարուն է ի քրիստոնէութիւն։ Այս նոյնութիւն չկրնար համարուիլ արդասիք դիպաց, և ոչ Ագիաբենի պատմութիւնն պատուաստ ի մերոյն, քանզի այն դարձն յառաջագոյն է քան զմերն։ Ահա պատմութիւնն ըստ էական մասանց, յորս է նոյնութիւնն։ Ագիաբենի թագաւորն Մանովազ ունէր որդի Իզատ, որոյ մայրն էր Հեղինէ։ Հրեայ ոմն Անանիա անուն կը քարոզէ Հեղինէի և որդւոյն հրէութիւն. Իզատ և մայր նորա կը դառնան։

Յետ ժամանակաց Հեղինէ կ'երթայ յԵրուսաղէմ, մինչ սով մեծ կը տիրէր ի քաղաքին։ Հեղինէ բերել կու տայ ցորեան բազում յԱղեքսանդրիայ և պաղատիտս թզոյ Կիպրոսէ՝ բաշխել սովելոց։ Հեղինէ կը թաղուի ի շիրմին՝ զոր ինքն շինել տուած էր մօտ յԵրուսաղէմ։ Ի պատմութեան Աբգարու ևս կայ Անանիա (Անանէ), որ կը բերէ Քրիստոսի թուղթը և կենդանագիրն առ Աբգար, որ կը հաւատայ և կը դառնայ ի քրիստոնէութիւն. կայ և Հեղինէ Աբգարու կին, որ կ'երթայ յԵրուսաղէմ ի սովին, կը գնէ ցորեան բազում յոյժ և կը բաշխէ կարօտելոց, և որոյ շիրիմ ևս կայ նշանաւոր առաջի դրան Երուսաղեմի, ասէ Խորենացին, մինչև ցայսօր։

Այսչափ մերձաւորութիւն որ կայ ի մէջ երկուց պատմութեանց՝ բաւական է տալ մեզ ասել, թէ մին, և անտարակոյս մերն, է նմանութիւն միւսոյն։ Թող նմանութեան յիշեալ կէտերն՝ ոչ սակաւ մերձաւորութեան նշան է և այն, զոր Յովսեպոս և Խորենացին կը պատմեն յաջորդութեան կռուին համար, որ հաւանական է թէ դիպեցաւ ի մէջ Պարթևաց, և զոր, ըստ Յովսեպոսի՝ խաղաղացոյց Իզատ, և ըստ Խորենացւոյն՝ Աբգար։ Ըստ Յովսեպոսի՝ Արտաւան Գ. Պահլաւ, արքայ Պարթևաց (14) մերժուելով յիւրոցն՝ կ'ապաւինի առ Իզատ, որ յորդորելով զգլխաւորս Պարթևաց, մանաւանդ զԱբիանակ երևելի իշխան Պարթև՝ կը խաղաղէ զերկիրն, և Արտաւան կը հաստատուի ի թագաւորութեան (Յովս. Նախն. պտմ. Ի. 2)։ Այս պատմութիւն Յովսեպոսի կ'ակնարկէ այն խռովութիւններն, որ եղան ի Պարթևս (16—40) և զորս փոքր ի շատէ կը յիշեն Տակիտոս, Յովսեպոս, Դիոն։ Նայելով յազգականութիւն կամ ի մերձաւորութիւն Ադիաբենի թագաւորաց ընդ Պարթևաց (Րընան, Առաքեալք)՝ միջնորդութիւն ինչ եղած գնել յԻզատայ չէ անհաւանական։ Խորենացին տալով զայս մերձաւորութիւն ասորւոյն կամ արաբացւոյն Աբգարու՝ կու տայ նմա երթալ—և հարկ էր ընել զայս յետ շփոթելոյ զԱբգար ընդ Իզատայ—անձամբ ի Պարթևս, և ոչ խաղաղել միայն յաջորդութեան վէճն, որ ծագած էր ի մէջ Արտաշիսի (իմա Արտաւանայ Գ.) և եղբարց նորա, այլ հաստատել ևս օրէնս յաջորդութեան, այսինքն թէ թագաւորէր Արտաշիսի ցեղն իբրև բուն Պահլաւ, որդւոց յորդիս, և ի սպառել այն ցեղին՝ տիրէին առհմք միւս եղբարց, որ էին Կարէն, Սուրէն և քոյր նոցա Կոշմ, կին սպարապետին Արեաց՝ իբրև Կարենի, Սուրենի և Ասպահապետի Պահլաւք։ Խորենացին, ինչպէս այլուր նոյնպէս հոս, փոխելով Պարթև թագաւորին Արտաւանայ անունն յԱրտաշէս և ընելով զնա որդի Արտաշիսի, որ չունի հաստատութիւն՝ կու տայ նմա այն երկու եղբայրներն, Կարէն, Սուրէն և քոյր մի ևս, մինչ ար-

տաքին ժամանակակից պատմութիւնն (Տակիտ., Յովս., Դիոն) գիտեն Արտաւան և ոչ Արտաշէս, և կու տան նմա արդարև երկու եղբայր, բայց ոչ Կարէն և Սուրէն, այլ Վարդան և Գոտարզ: Գիտենք ևս, թէ հակառակ կարծեցեալ օրինացն Աբգարու, որպէս կամի Խորենացին՝ Արտաւան կ'սպանուի (41), և կը թագաւորեն եղբարք նորա Վարդան և Գոտարզ (իբրև Արշակ Ի. և ԻԱ.,—50) մինչև ի Վաղարշ Ա. (Արշակ ԻԳ, 51—91) նոյն Պահլաւ ցեղէն, առ որով հաստատուեցան իրք ոչ Պարթևաց միայն, այլև Հայոց: (Տես և Գաթըրճեան, Տիեզ. պատմ. Հտ. Բ. 99—107):

Խորենացին ի գնելն Պարթևաց այն ազգաբանութիւնն, առնլով չենք գիտեր ինչ աղբերէ՝ ունէր նպատակ, որպէս թուի, ցուցնել, թէ ինչպէս նախախնամութիւնն գիտաց շնորհել Հայոց Լուսաւորիչ «ի Պարթևական մեղապարտ ազգէն». քանզի կը յաւելու, բայց կասկածելով—«Ասեն զսուրբն Գրիգոր ի Սուրենեանն Պահլաւէ», անտարակոյս ըստ վկայաբանութեան իմիք:

Ագիաբենի արքունեաց դարձն ի հրէութիւն չէ ամենևին անհաւանական: Յառաջնում դարու անդ նախ քան զՔրիստոս, մանաւանդ յարևելս, այնպէս ընդելեալ էին միտք մարդկան դէպ ի միաստուածութիւն՝ որ ոչ հասարակ մարդիկ միայն, այլև երևելի ընտանիք կ'ընդունէին զկրօնս Հրէից, բաց ի թլփատութենէ և ի խտրութենէ կերակրոց: Սկզբունք Պօղոսի արդէն սկսած էին յառաջ քան զՊօղոս: (Զայսմանէ տես Ռընան, Առաջին դարք քրիստոնէութեան, Առաքեալք, Գլ. ԺԳ.):

Գալով դարձեալ ի պատմութիւն Աբգարու դարձին ի քրիստոնէութիւն՝ չէ նոյնպէս անհաւանական, թէ արդէն իսկ ի սկզբան առաջին դարուն տարածեցաւ քարոզութիւն Աւետարանին յԱսորիս և ի Միջագետս, ուստի և անշուշտ յԵդեսիա, մինչև Աբգարու անգամ միտել ի քրիստոնէութիւն: Սակայն կան պարագաներ ի պատմութեան դարձին Աբգարու՝ որ են վկայաբանական կեղծիք, զորօրինակ թէ հրեշտակք, զորս ղրկեց Աբգար առ Մարինոս կուսակալ կայսեր ի Պաղեստին և ի Փիւնիկէ՝ ի դարձին ելին յԵրուսաղէմ առ Քրիստոս, և տեսնելով զսքանչելիս նորա՝ եկան պատմեցին Աբգարու, որ հաւատաց ի նա «ճշմարտապէս իբրև յարդարև որդի Աստուծոյ, և ասէ. Այն զօրութիւնք ոչ մարդոյ են այլ Աստուծոյ, զի չիք ոք ի մարդկանէ որ կարէ զմեռեալս յարուցանել, բայց միայն Աստուած»: Արդարև բանք քրիստոնէի եղեալք ի բերան Աբգարու: Բայց քան զայս աւելի նուազ հաւանական է հրաւիրել նորա թղթով զՔրիստոս գալ բժշկել զնա. ա. հ: Ահա պատճէն թղթոյն առ Խորենացւոյն. «Աբգար Արշամայ, իշխան աշխարհի. առ

Յիսուս փրկիչ և բարերար, որ երևեցար աշխարհին Երուսաղեմացւոց, ողջոյն: Լուեալ է իմ վասն քո և վասն բժշկութեանդ որ լինին ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց. զի որպէս ասի՝ տաս դու կուրաց տեսանել և կաղաց գնալ, և զբորոտս սրբես, և զայսս պիղծս հանես, և որ միանգամ չարչարեալ են երկար հիւանդութեամբք՝ բժշկես. դու և զմեռեալս յարուցանես: Եւ իբրև լուայ վասն քո զայս ամենայն՝ եդի ի մտի իմում մի յերկուց աստի. կամ թէ դու Աստուած իցես, իջեալ յերկնից գործես զայդ, կամ թէ որդի իցես դու Աստուծոյ, և զայդ առնես: Արդ վասն այնորիկ գրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեսցես առ իս և բժշկեսցես զհիւանդութիւնս զոր ունիմ ես: Նա և լուայ, զի Հրեայք տրտնջեն զքէն և կամին չարչարել զքեզ. բայց քաղաք մի փոքրիկ և գեղեցիկ է իմ, և բաւական է մեզ երկոցունցս»: Թուղթը տանողներն որպէս թէ կը տեսնեն զՅիսուս յԵրուսաղէմ: Նայելով Յովհաննու Աւետարանին գլ. ԺԲ. 20—23, ուր ըսուած է թէ հեթանոսք ոմանք եկած էին այն տօնին յԵրուսաղէմ և կամէին տեսնել զՅիսուս՝ ազբիւր Խորենացւոյն այս հեթանոսներով կ'իմանայ Աբգարու դեսպանները, որք որպէս թէ չհամարձակելով մօտենալ Յիսուսի՝ ըսին Փիլիպպոսի և Անդրէի, և նոքա՝ Յիսուսի: «Իսկ ինքն Փրկիչն—կը յաւելու պատմութիւն Խորենացւոյն—յայնմ ժամանակի յորում կոչեացն զնա՝ ոչ առ յանձն, (թերևս կամի ասել, թէ ունէր ի մտի երթալ յետոյ), բայց թղթոյ արժանի արար զնա»: Զիք տարակոյս, թէ ճարտարութեամբ յարմարցուած է Աւետարանին այն պատմութիւնն Աբգարու հրեշտակաց. բայց բանք Յովհաննու են այն հեթանոսաց, այսինքն Յունաց համար, որ մտեալ ի հրէութիւն՝ Զատկի տօնին կու գային յայցելութիւն տաճարին («յելելոցն անդր՝ զի երկիր պագանիցեն ի տօնին»), որ, ինչպէս կ'ըսէ Րենան (Առաքեալք էջ 253)՝ «էր մին ի նուիրական տեղեաց աշխարհի, որոյ համբաւն տարածեալ էր ի հեռաստան, և ուր լինէին նուէրք յաճախագոյն քան այլուր. հրէական կրօնք էին տիրող մեծի մասին երկրին Ասորւոց»: Զիարդ և իցէ՝ այս հրեշտակութիւն կամ այցելութիւն առ Փրկիչն թող համարուի հաւանական. բայց Բոլորովին զուրկ է հաւանականութենէ Քրիստոսի թուղթն, զոր Խորենացին կը դնէ գրեալ ի Թովմայ իբրև պատասխանի, ուր որպէս թէ կ'ըսէ Փրկիչն. «Երանի իցէ այնմ որ հաւատայ յիս՝ իբրև ոչ իցէ նորա տեսեալ զիս. զի գրեալ է վասն իմ այսպէս. Զի որք տեսանենն զիս՝ ոչ հաւատասցեն յիս, և որք ոչն տեսանեն՝ նոքա հաւատասցեն և կեցցեն: Իսկ վասն այնր զի գրեցեր դու առ իս, գալ ինձ առ քեզ՝ արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն

որոյ առաքեցայ ես։ Եւ երբև կատարեցից զայս՝ ապա համբարձայց առ այն որ առաքեացն զիս. և յորժամ համբարձայց՝ առաքեցից զմի յաշակերտաց ատտի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ և կեանս քեզ և որոց ընդ քեզ են շնորհեսցէ»։ Զարմանալի է որ ամենազօր Փրկիչն յետ համբարձման իւրոյ կը թողու Աբգարու բժշկութիւնը՝ մինչ կարող էր իսկ և իսկ ի հեռուստ անգամ բժշկել զնա բանիւ։ Բայց ինչպէս պիտի հասկցուէր պատմութեան անտեղութիւնը։ «Զայս թուղթ — կը յաւելու Խորենացին — երեր Անան սուրհանդակ Աբգարու, ընդ որում և զկենդանագրութիւն Փրկչական պատկերին, որ կայ յԵդեսացւոց քաղաքին մինչև ցայսօր ժամանակի»։

Թող որ երկու նամակներուն ևս պարագաներն, որովք նամակագիրն կը կարծէ վաւերական ընել զնոսա, չեն ամենևին բնական. երկու բան մանաւանդ, այսինքն, մի՝ կոչելն Աբգարու զՅիսուս Փրկիչ, որ վաղահաս էր տկար հաւատացելոյն Աբգարու համար. և երկրորդ՝ թէ ո՛չ տեսողք, այլ չտեսողք պիտի հաւատային ի նա (բանք որ կ'ակնարկեն Յովհաննու Ի. 29 համարն, — «Երանի որոց ոչ իցէ տեսեալ և հաւատասցեն»)՝ — կը ցուցնեն յայտնապէս, թէ նամակներն գրուած են յետ խմբագրութեան չորրորդ Աւետարանին, իմա այնպիսի ժամանակ, երբ Նոր Կտակարանին կանոնն առած էր զիւր վերջին ամբողջութիւն, և հաւատալիք Քրիստոսի անձին և պաշտաման վրայ՝ որոշուած և ծանուցուած էին, այսինքն թէ Յիսուս էր փրկիչ աշխարհի, առաքեալ յԱստուծոյ, մանաւանդ թէ Աստուած իսկ։ Ըսինք՝ տկար հաւատացելոյն Աբգարու։ Ո՞չ ապաքէն հրաւիրել նորա զՓրկիչն գալ բնակել ընդ իւր կը ցուցնէ, թէ անտեղեակ էր նա տնօրէնութեանց Փրկչին, որ կատարելոց էին յԵրուսաղէմ, և չունէր տակաւին զնմանէ զպատշաճ կարծիս։

Այս թուղթք Աբգարու, զորս կը բերէ Խորենացին՝ առնուած են, ինչպէս կ'ընդունի նաև Գաթըրճեան, Եւսեբեայ Եկեղեցական պատմութեան հայերէն թարգմանութենէն, և որոց աղբիւրք, ինչպէս նաև բովանդակ պատմութեան՝ են յետին ասորական մատեանք դիւանին Եդեսիայ։ Եւսեբիոս անգէտ է միայն պատկերին պատմութեան, զոր կը թուի թէ չգտաւ այն դիւանին մէջ, ուստի և այս առասպելն հնարուած է յետոյ քան նամակներունը։

Ըստ ԼԳ. գլխոյ պատմութեան Բ. գրոց Խորենացւոյն՝ յետ համբարձման Փրկչին Թովմաս առաքեալ կը ղրկէ զԹադէոս մին յեօթանասնից առ Աբգար։ Բովանդակ գլխոյն նիւթն է վկայաբանական (légendaire), լի նորանշան դիպօք, ստորին և հետևակ-տունց ամենևին պատմական հիման։ «Յետ համբառնալոյ Փրկչին մերոյ, կ'ըսէ, Թովմաս առաքեալ, մի յերկոտասանից, առաքեաց

նմի յեօթանասնից անտի զԹադէոս ի քաղաքն Եդեսիա բժշկել զԱբգար և աւետարանել ըստ բանին Տեառն։ Որոյ եկեալ ի տուն Տուբիայ իշխանի Հրէի, զոր ասեն լինել յազգէն Բագրատունեաց, որոյ խուսեալ յԱրշամայ ոչ ուրացաւ զՀրէութիւնն ընդ այլ ազգականս իւր, այլ նոյն օրինօքն եկաց մինչև հաւատալ ի Քրիստոս։ Եւ ել համբաւ նորա (Թադէի) ընդ ամենայն քաղաքն։ Լուեալ Աբգարու՝ ասէ. Նա է վասն որոյ գրեացն Յիսուս. և խկոյն կոչեաց զնա։ Եւ եղև ի մտանելն Թադէի՝ տեսիլ մեծ երևեցաւ Աբգարու յերեսսն Թադէի. և յարուցեալ ի գահոյիցն անկաւ ի վերայ երեսաց իւրոց և երկիր եպագ նմա, և զարմացան ամենայն իշխանքն որ շուրջն կային, զի ոչ գիտացին զտեսիլն։ Ասէ ցնա Աբգար, եթէ Դու իցես արդարև աշակերտ օրհնելոյն Յիսուսի, զոր ասաց առաքել ինձ այսր, և կարող իցես բժշկել զցաւս իմ։ Պատասխանի ետ Թադէ. Եթէ հաւատասցես ի Քրիստոս Յիսուս յորդին Աստուծոյ՝ տացին խնդրուածք սրտի քո։ Ասէ ցնա Աբգար. Ես հաւատացի ի Նա և ի Հայրն Նորա. վասն որոյ կամեցայ առնուլ զզօրս իմ և գալ կոտորել զՀրեայսն որ խաչեցին զնա, եթէ ոչ էր արգելեալ վասն թագաւորութեանն Հռոմայեցւոց։ Եւ յայսմ բանէ սկիզբն արարեալ Թադէի՝ աւետարանեաց նմա և քաղաքի նորա. և եդեալ ձեռն ի վերայ՝ բժշկեաց զնա և զԱբդիու պատագրոս իշխան քաղաքին և պատուական յամենայն տանն արքայի. նաև զամենայն որ էին ի քաղաքին հիւանդք և ախտաժէտք՝ բժշկեաց։ Եւ հաւատացին ամենեքեան. և մկրտեցաւ ինքն Աբգար և ամենայն քաղաքն. և զդրունս տաճարաց կռոցն փակեցին, և որ ի վերայ բագնին և սեանն կային պատկերքն՝ ծածկեալ պատեցին եղեգամբ։ Եւ ոչ զոք ածէր բռնութեամբ ի հաւատս, բայց օր ըստ օրէ յաւելեալ ի հաւատացեալսն բազմանային։ Իսկ առաքելոյն Թադէի զմոյրարար ոմն մետաքսագործ մկրտեալ և անուն կոչեցեալ Ադդէ, ձեռնադրեալ ի վերայ Եդեսիայ՝ փոխանակ իւր թողու առ արքայի։ Եւ իւր առեալ հրովարտակ յԱբգարէ, զի ամենեքեան լուիցեն Աւետարանին Քրիստոսի՝ գայ առ Սանատրուկ քեռորդի նորին, զոր կարգեալ էր ի վերայ աշխարհին և զօրացն։ Բայց Աբգար յօժարեցաւ գրել թուղթ առ Տիբերիոս կայսր, որ ունի օրինակ զայս.

«Աբգար արքայ Հայոց. տեառն իմում Տիբերի կայսեր Հռոմայեցւոց խնդալ։ Գիտելով իմ թէ ոչինչ ծածկի ի քումմէ թագաւորութենէ, այլ իբրև զմտերիմ քո աւելի ևս իմացուցանեմ ի ձեռն գրոյ։ Զի Հրեայք որ բնակեալ են ի գաւառս Պաղեստինացւոց, ժողովեալ խաչեցին զՔրիստոս առանց իրիք յանցանաց, ի վերայ մեծամեծ երախտեացն զոր արար առ նոսա, նշանս և սքանչելիս,

մինչև զմեռեալս անգամ յարուցանել։ Եւ գիտեա զի զօրութիւնքս այս ոչ են սոսկ մարդոյ, այլ Աստուծոյ։ Զի և ի ժամանակին յորում խաչեցին զնա՝ արեգակն խաւարեցաւ, և երկիր շարժեալ տատանեցաւ, և ինքն յետ երից աւուրց յարեաւ ի մեռելոց և երևեցաւ բազմաց։ Եւ այժմ յամենայն տեղիս անուն նորա ի ձեռն աշակերտաց նորա սքանչելիս մեծամեծս կատարէ, որ և առ իս ինքեան եցոյց յայտնապէս։ Եւ այդ այսուհետև տէրութիւնդ քո գիտէ, որ ինչ արժան է հրամայել ի վերայ ժողովրդեանն Հրէից որք զայն գործեցին, և գրել ընդ ամենայն տիեզերս՝ զի երկրպագեսցեն Քրիստոսի իբրև ճշմարիտ Աստուծոյ։ Ողջ լեր»։

Աբգար կ՚ընդունի պատասխան Տիբերէ.

Տիբերիոս կայսր Հռոմայեցւոց. Աբգարու թագաւորի Հայոց խնդալ։ Զթուղթ մտերմութեանդ քո ընթերցան առաջի իմ. վասն որոյ շնորհակալութիւն ի մէնջ քեզ հասցէ։ Թէպէտև ի բազմաց մեր լուեալ զայս յառաջագոյն՝ եցոյց և Պիղատոս ստուգապէս վասն նշանացն նորա, և եթէ յետ յարութեանն ի մեռելոց հաւատարիմ եղև բազմաց թէ Աստուած է։ Վասն որոյ և ես կամեցայ առնել զայդ զոր և դու խորհեցար։ Այլ քանզի սովորութիւն է Հռոմայեցւոց աստուած ի հրամանէ թագաւորի միայնոյ ոչ նստուցանել, մինչև ոչ փորձեալ քննեսցի նա ի սինկղիտոսէն՝ վասնորոյ և իմ յայտնեալ զքանս զայս սինկղիտոսին՝ արհամարհեաց սինկղիտոսն, զի ոչ քննեցաւ նա յառաջագոյն ի նմանէ։ Այլ մեք տուաք հրաման ամենայնումեք որում և հաճոյ թուեսցի Յիսուս՝ ընկալցին զնա ընդ Աստուածս, և մահ սպառնացեալ՝ որ չարախօս կայցեն ըզքրիստոնէից։ Եւ վասն ժողովրդեանն Հրէից որ յանդգնեցան խաչել զնա, զորմէ լսեմ թէ ոչ արժանի խաչի էր նա և մահու, այլ պատուի և երկրպագութեան, յորժամ առից պարապումն ի պատերազմէս Սպանիացւոց ապստամբողաց լինէն՝ քննեալ հատուցից նոցա զարժանն»։

Աբգար կը գրէ երկրորդ անգամ թուղթ առ Տիբեր.

«Աբգար արքայ Հայոց. տեառն իմում Տիբերի կայսեր Հռոմայեցւոց խնդալ։ Զթուղթն գրեալ ըստ արժանի քոյոյ տէրութեանդ տեսի, և ընդ հրաման մտածութեանդ քո ուրախացայ. և եթէ ոչ ցասնուցուս ինձ՝ գործ սինկղիտոսիդ յոյժ այպանելի է. քանզի առ դոսա՝ ի քննութենէ մարդկան տուեալ լինի աստուածութիւնն։ Եւ արդ այսուհետև եթէ ոչ լինիցի հաճոյ Աստուածն մարդոյն՝ Աստուած լինել նա ոչ կարէ. և իբրև յայսմանէ մարդոյն արժան է առաքել զԱստուածն։ Բայց քեզ տեառն իմոյ հաճոյ թուեսցի առաքել զայլ ոք յԵրուսաղէմ փոխանակ Պիղատոսի, զի լուծցի նա ա-

արգանօք յիշխանութենէն յոր կարգեցեր զնա, վասն զի արար զկամս Հրէից և խաչեաց զՔրիստոս ի տարապարտուց առանց քոյոյ հրամանի։ Ողջ լինել քեզ ըղձամ»։

«Զայս գրեալ Աբգարու՝—յաւելու Խորենացին—զհաւասար թըղթոյն եդ ի դիւանի իւրում որպէս և զայլսն։ Գրեաց և առ Ներսեհ մանուկ արքայ Ասորեստանի ի Բաբելոն.

«Աբգար արքայ Հայոց. որդւոյ իմում Ներսեհի խնդալ։ Զգիր ողջունի քո տեսի, և զՊերոզ լուծի ի կապանաց, և զվնաս նորա թողի նմա. և եթէ կամ իցէ քեզ՝ կարգեսցես զնա ի վերակացութիւն Նինուէի, որպէս և կամիս։ Այլ վասն այնր զի գրեցեր առ իս, թէ տուր ածել զայրդ բժիշկ որ զնշանսդ առնէ և քարոզէ այլ Աստուած ի վեր քան զհուր և զջուր, զի տեսից և լուայց դմա՝ նա ոչ էր բժիշկ ըստ արուեստի մարդկան, այլ աշակերտ էր Որդւոյն Աստուծոյ արարչի հրոյ և ջրոյ, և վիճակ հասեալ ի կողմանս Հայոց առաքեցաւ։ Բայց յընկերաց նորա գլխաւորաց Սիմովն անուն, նա ի կողմանս Պարսից առաքեալ է. խնդիր արարեալ լուիցես նմա, յորժամ և հայրն քո Արտաշէս։ Եւ նա բժշկեսցէ զամենայն հիւանդութիւնս և ճանապարհ կենաց ցուցցէ»։

«Եւ յաւել ևս գրել, կ'ըսէ Խորենացին, առ Արտաշէս արքայ Պարսից օրինակ զայս.

«Աբգար արքայ Հայոց. Արտաշիսի եղբօր իմում Պարսից արքայի խնդալ։ Գիտեմ զի արդ լուեալ է քո վասն Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ զոր խաչեցին Հրեայքն, որ յարեաւն ի մեռելոց, և առաքեաց զաշակերտսն իւր ընդ ամենայն տիեզերս՝ ուսուցանել ընդհանուր։ Եւ մի յաշակերտաց նորա գլխաւորաց Սիմովն անուն՝ է ի կողմանս քոյոյ տէրութեանդ։ Արդ խնդիր արարեալ գտցես զնա, և նա բժշկեսցէ զամենայն ախտս հիւանդութեանց որ ի ձեզ և ճանապարհ կենաց ցուցցէ. և հաւատասցես բանի նորա, դու և եղբարք քո և ամենեքեան որ հնազանդին քեզ կամաւոր։ Զի ախորժելի է ինձ զձեզ ըստ մարմնոյ ազգականս՝ լինել ինձ մտերիմ հարազատս և ըստ հոգւոյ»։

«Եւ մինչդեռ պատասխանի այսց թղթոց ոչ էր ընկալեալ՝ վախճանի Աբգարիոս, թագաւորեալ ամս երեսուն և ութ»։

Ինչ որ ըսինք առաջին երկու նամակներուն համար՝ կրնանք ըսել նաև այս վերջիններուն համար, թէ են յետին գործ, և ոչ Աբգարու անձին և ժամանակին։ Ոչ այլ ինչ կը գտնենք նամակներուն մէջ առ Տիբեր և առ այլս՝ եթէ ոչ, ինչպէս տեսանք՝ կատարեալ հանգանակ հաւատոյ ըստ Աւետարանաց, զոր կը թուի ի ձեռին ունել հեղինակ նամակներուն։ Գ. և Դ. դարերուն քրիստոնէէ և ոչ

Քրիստոսի յարութենէն 2 կամ 3 տարի յետոյ դարձող Աբգարէ կրնայ սպասուիլ այնպիսի կատարեալ դաւանութիւն, որ գրեթէ բան առ բան առնուած է Աւետարաններէն, զոր օրինակ թէ տայր նա կուրաց տեսանել, կաղաց գնալ, սրբէր զբորոտս, զայսս պիղծս հանէր, բժշկէր զորս միանգամ տանջէին երկար հիւանդութեամբք՝ յարուցանէր զմեռեալս. թէ Հրեայք տրտնջէին զնմանէ և կամէին սպանանել զնա. թէ կատարելոց էր յԵրուսաղէմ՝ ինչ բանի համար որ եկած էր, և ապա համբառնալոց առ այն որ առաքեացն զնա. թէ ի ժամանակին՝ յորում խաչեցին զնա՝ արեգակն խաւարեցաւ, երկիր շարժեալ տատանեցաւ. թէ յետ երից աւուրց յարեաւ ի մեռելոց և երևեցաւ բազմաց, ա. հ։

Առանձին դիտողութեան արժանի են սա կէտերն, որ ոչ կը նուազեցունեն միայն, այլ և կը բառնան նամակներուն պատմական և ժամանակագրական յարգը. նախ՝ արքայ Հայոց անուն տրուած Աբգարու ի թղթին նորա առ Տիբեր և Տիբերին առ նա՝ չէ պատմական։ Տիբեր չէր կրնար կոչել զԱբգար «արքայ Հայոց» ի ժամանակին՝ երբ Արտաշէս (Զենոն, 18), և Միհրդատ Վիր (35) կը տրուէին հետ զհետէ (տես մասն Բ. գլ. ԺԱ.) թագաւոր Հայոց ի նմին իսկ Տիբերէ, մինչ Աբգար էր «իշխան աշխարհի», տեղապետ (τόπαρχος) Ուռհայաստանի ընդ ազդեցութեամբ Հերովդի, չունենալով մասն Հայոց հետ։

Չէ ամենևին հաւանական, թէ Պիղատոս, ինչպէս նամակը կու տայ ըսել Տիբերի՝ գրած էր «ստուգապէս» առ նա վասն նշանացն Քրիստոսի, և թէ յետ յարութեան «հաւատարիմ եղև բազմաց թէ Աստուած էր». չէ հաւանական նոյնպէս ասելն Տիբերի, թէ «յորժամ առից պարապումն ի պատերազմէս Սպանիացւոց ապստամբողաց յինէն՝ քննեալ հատուցից նոցա (Հրէից) զարժանն».— Տիբեր չունեցաւ ամենևին պատերազմ Սպանիացւոց հետ։

Ասելն Աբգարու առ Տիբեր, թէ «այժմ յամենայն տեղիս անուն նորա ի ձեռն աշակերտաց նորա սքանչելիս մեծամեծս կատարէ», և առ Արտաշէս, թէ «առաքեաց զաշակերտս իւր ընդ ամենայն տիեզերս ուսուցանել ընդհանուր»՝ կը ցուցնէ թէ գրողը չկարէր լինել Աբգար, այլ այլ ոք բազում ամօք յետոյ քան զնա. քանզի աշակերտաց ցրուելն ընդ ամենայն տիեզերս, որ ակնարկէ Մատթէոսի ԻԸ. 19 համարը—«Գնացէք, աշակերտեցէք զամենայն հեթանոսս»—չեղաւ իսկ և իսկ առաջին 2 կամ 3 տարիներուն մէջ՝ մինչև գիտել և վկայել Աբգարու, թէ «սքանչելիք մեծամեծք կատարէին ի ձեռն աշակերտաց նորա ընդ ամենայն տիեզերս»։ Դարձեալ, թէ մին ի գլխաւոր աշակերտաց Սիմոն զրկուած էր ի կող-

մանս Պարսից (Բաբելոն)՝ կ'ակնարկէ Պետրոսի ընծայուած Ա. Թուղթըն, Ե. 13, ուր կը յիշուի Բաբելոն իբրև վիճակ Սիմոնի, այն է Պետրոսի, ըստ մեկնութեան նախնի հարց ոմանց։ Ապաքէն դըժուարին, նա անհնարին իսկ էր Աբգարու գիտել եկեղեցական պատմութեան այս նուրբ խնդիրներն և հիմնել ի նոսա իւր թուղթերն։

Նաև գրելն Աբգարու թուղթ առ Ներսէհ ումն մանուկ արքայ Ասորեստանի ի Բաբելոն, որդի Արտաշիսի արքայի Պարսից՝ չունի ամենևին հաստատութիւն, քանզի ո՛չ Ներսէհ կայ, ո՛չ Արտաշէս Պարսից թագաւոր, և ոչ Բաբելոն յԱսորեստանի այն ժամանակին պատմութեան մէջ։ Տիլլըմէ ևս զարմանալի կը գտնէ Բաբելոն յԱսորեստանի։ Խորենացին կ'ըսէ, թէ Աբգար յառաջ քան զընդունելն պատասխանի իւր թուղթերուն առ Ներսէհ և առ Արտաշէս՝ մեռաւ։ Այս թուղթերը գրուեցան 37-ին մօտ, որ է Աբգարու մահուան տարին. արդ այն թուականին և վաղ իսկ, մինչև 41 կը տիրէին Վարդան և Գոտարզ (Արշակ Ի. և ԻԱ.) եղբարք. ո՞վ էին ուրեմն այն Ներսէհ և Արտաշէս հայր նորա։

Աբգարու դարձին և թղթակցութեան վրայ մեր քննութիւնը կը բովանդակենք ըսելով, թէ աղբիւրն, ուստի առնու Խորենացին— քանզի չէ իրաւացի ըսել թէ Խորենացին կ'ստեղծու անձամբ—էր գործ ասորւոյ ուրուք դպրոցին Եդեսիայ, իբրև Ա. դարու ծնունդ, թէպէտ չէր հին քան զԳ. և զԴ. դար յետ Քրիստոսի, գործ՝ որոյ նմաններն բազում էին ի դիւանին Եդեսիայ, և որ, եթէ կ'ընծայուին ժամանակին յառաջ քան զՔրիստոս, կամ իբր ժամանակակից նմա՝ կը կրեն յայտնապէս առասպելական դրոշմ։ (Տես Րընան. Պատմ. Սեմ լեզ. Գիրք Գ. Գլ. Գ.)։

Արդարև ոմանք յարդի քննչաց, ինչպէս Տիլլմոն գաղղիացի, Բաւէ անգղիացի և Վէլտէ գերմանացի, ըստ Գաթըրճեանի, արդարացուցին իւիք իւիք զթուղթն Քրիստոսի առ Աբգար (թէպէտ ոմանք առ հասարակ կը մերժեն), զբան թղթոյն «երանի իցէ այնմ որ հաւատայ յիս իբրև ոչ իցէ տեսեալ զիս», և «գրեալ է վասն իմ, զի որք տեսանենն զիս՝ ոչ հաւատասցեն յիս, և որք ոչն տեսանեն՝ նոքա հաւատասցեն և կեցցեն»՝ հանելով ոչ ի բանն Յովհաննու Ի. 29, այլ ի բանն Եսայեայ ԾԲ. 16—«Որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, և որոց չիցէ լուեալ՝ ի միտ առցեն, և ԿԵ. 1. «Յայտնի եղէ այնոցիկ որ զինէն ոչ հարցանէին, գտայ այնոցիկ որ զիս ոչ խնդրէին»։ Յայտնի է սակայն, թէ բանի է մերձեցումն, և բանք թղթոյն կը նային ի բանն Յովհաննու։ Իսկ պատկերին պատմութեան համար սաչափ միայն ասէ Գաթըրճեան, թէ

ոչ Եւագր, այլ յառաջ քան զնա Խորենացին կը յիշէ զայն պատմութիւն։

Գաթըրճեան կը թուի արդարացունել մանաւանդ Տիբերի թուղթըն առ Աբգար, ուր ըսուած է թէ ծերակոյտն մերժեց զառաջարկութիւն Տիբերի՝ կարգել զՔրիստոս յԱստուածս։ Առ այս կը թուի յենուլ Գաթըրճեան ի վկայութիւնն Տերտուղիանոսի (Պաշտպանատու. Ե.) թէ «Տիբերիոս յորոյ ժամանակին իսկ եմուտ յաշխարհ քրիստոնէութիւն, յորժամ պատմեցաւ նմա յԱսորւոց Պաղեստինացւոց որ ինչ ի յայտնութիւն ճշմարտութեան աստուածեղէն մարդոյն էր՝ հան նա զամենայն յանդիման ծերակուտին յաւելուածով առաւելութեան վճռոյն իւրոյ։ Այլ ծերակոյտն, քանզի չէր ինքնին քննեալ՝ մերժեաց։ Իսկ կայսր եկաց յառաջնում խորհրդեան իւրում, սպառնացեալ պատուհաս որոց ամբաստանն կային զքրիստոնէից»։ Բայց խնդիր այն չէ, թէ զՅիսուսէ իբրև զՄեսիայէ տեղեկութիւն տրուեցաւ Տիբերի յԱսորւոց ոմանց Պաղեստինացւոց (թէպէտ այս ևս չթուիր հաւանական), և Տիբեր առաջարկեց ծերակուտին աստուածացունել զՅիսուս, և չեղաւ ընդունելի, այլ թէ Տիբերի առաջարկութիւնն եղաւ ի թելադրութենէ թղթոյն Աբգարու։ Սակայն դիտողութեան արժանի է, որ հարկ չկար ամենևին Տիբերի արգելուլ ամբաստանել զքրիստոնեայս, քանզի քրիստոնէից դէմ հալածմունք դեռ սկսած չէին առ Տիբերիւ (14—37), մինչ տակաւին ի խանձարուրս էր քրիստոնէութիւն, նա գրեթէ անծանօթ իսկ։

Խորենացւոյն Բ. դպրութեան ԼԴ. գլուխն է վկայաբանական։ Յետ ասելոյ, թէ «յետ մահուանն Աբգարու բաժանի թագաւորութիւնն Հայոց յերկուս. քանզի Անանուն որդի նորա կալեալ թագ թագաւորել յԵդեսիա, և քեռորդի նորա Սանատրուկ ի Հայս»՝ կը խօսի զնահատակութենէն Թադէոսի և Բարթողիմէոսի, իբրև առաքելոց Հայոց։ «Ի սկզբանէ իբրև ամօլ և առաքեալ համարեալ է ընդ Թադէոսի՝ և Բարթողիմէոս, բայց անստոյգ իմն է պատմութիւնն» (Գաթըրճեան)։ Արդարև Բուզանդ, որ ստէպ «աթոռ» կամ «վիճակ» Թադէոսի կ'անուանէ զՀայս՝ չյիշեր ամենևին զԲարթողիմէոս։

Զարմանալի է որ Հայք մոռցած են զԹովմաս, զոր պարտ էր մանաւանդ կոչել պաշտպան Հայոց։ Նմա յանձնուեցաւ, եթէ պարտ է հաւատալ աւանդութեան՝ գրել պատասխանի թղթոյն Աբգարու, և նա էր դարձեալ որ ղրկեց զԹադէոս։ Խորենացին, հաւատարիմ իւր սովորութեան՝ հոս ևս կը ցուցնէ մեզ իւր աղբիւրը. «Գտանի, ասէ, որ ինչ առ սոցա ժամանակաւ (Անանուան և Սանատրկոյ)

յառաջագոյն գրեալ յայլոց. իմա զգալուստ առաքելոյն ի Հայս (այսինքն գնալն Թադէոսի առ Սանատրուկ յետ դարձին Աբգարու, ինչպէս պատմեց ԼԳ. գլխոյն մէջ), հաւատալն Սանատրկոյ և թողուլ զհաւատն յերկիւղէ նախարարացն Հայոց, և կատարումն առաքելոյն և որ ընդ նմա ի գաւառին Շաւարշան որ այժմ կոչի Արտազ, և պատառումն քարին և յիրար գալ և ընդունել զմարմին առաքելոյն, և առնուլ անտի աշակերտացն և թաղել ի դաշտին, և մարտիրոսանալ Թագաւորի դստերն Սանդխտոյ հուպ ի ճանապարհն, և ապա ուրեմն յայտնել նշխարաց երկոցունց և փոխել յառապարն։ Այս ամենայն, ասէ, որպէս ասացաք՝ յայլոց պատմեալ է յառաջագոյն քան զմեզ, ոչինչ կարևորագոյն համարեցաք ոճով երկրորդել։ Նոյնպէս և որ ինչ վասն կատարմանն Ադդէի, աշակերտի առաքելոյն յԵդեսիա յորդւոյն Աբգարու՝ գտանի յայլոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ»։ Զիք տարակոյս, թէ առ Խորենացւով և յառաջագոյն իսկ կային վկայաբանական գրուածներ ասորերէն կամ յունարէն (յորոց մին էր Ղերուբնա) զդարձէն Աբգարու և զնուանեալ առաքելոց Հայոց Թադէոսէ և Բարթողիմէոսէ ևս և զՍիմոնէ։ Թէ կային այսպիսի գրուածներ, որ համարուած էին պատմութիւն Հայոց՝ յայտնի է և ի Բուզանդայ, որ կը դնէ յառաջ քան զիւրն ուրիշ երկու պատմութիւն, որ կը թուին լինել երկու վկայաբանութիւնք, մին՝ զառաջնոյ դարձէն ի ձեռն Թադէի առ Սանատրկաւ, և երկրորդն՝ զերկրորդ դարձէն ի ձեռն Լուսաւորչին առ Տրդատաւ (Տես Բուզ. Գ. Ա.)։ Խորենացին կը յիշէ նաև զկատարումն Սիմովնի, զոր չգիտեր թէ ո՛վ էր (Խոր. Բ. ԼԴ.)։ Բայց մեք թողեալ զայս ամենայն, իբրև արտաքոյ մեր նպատակին՝ գանք առ Սանատրուկ։

Սանատրուկ էր, ըստ Խորենացւոյն, քեռորդի Աբգարու, զոր որպէս թէ Աբգար առ կենդանութեամբ իւրով «կարգեալ էր ի վերայ աշխարհին» (այսինքն ի վերայ Մեծին Հայոց) և զօրացն, և որ յետ մահուն Աբգարու «զօրս ժողովէ ի ձեռն քաջացն Բագրատունեաց և Արծրունեաց դայեկաց իւրոց՝ իջանել տալ պատերազմ ընդ որդիսն Աբգարու, զի բոլորին տիրեսցէ թագաւորութեան», մերժելով զորդին Աբգարու զԱնանունն, որ նորոգեց հեթանոսութեան պաշտօնը, սպան զԱդդէ, բայց և ինքն սպանաւ արկածիւ, այսինքն ի սեանէ, որ իյնալով ի վերնատանէ ապարանիցն ջախջախեց զոտս նորա։ «Եւ իսկոյն, կ'ըսէ, պատգամ բնակչաց քաղաքին եկն առ Սանատրուկ, խնդրելով պայման ուխտի, զի մի վրդովեսցէ զնոսա ի քրիստոնէութեան հաւատոց, և նոքա տացեն զքաղաքն ի ձեռս և զգանձս թագաւորին. զոր արարեալ՝ յետոյ ստեաց. նա և

զամենայն զաւակ տանն Աբգարու մաշեաց սրով բաց յաղջկանց՝ զորս եհան ի քաղաքէն բնակել ի կողմանս Հաշտենից»:

Ի գլուխն ԼԶ. յառաջ կը տանի Խորենացին զպատմութիւն Սանատրկոյ, որոյ գործերը չհամարելով յիշատակաց արժանի՝ կը յիշէ միայն զշինութիւն Մծբնայ. որպէս թէ Սանատրուկ նորոգեց զայն ի հիմանց, որ խախտեալ էին ի շարժմանէ, և կանգնեց զիւր պատկերն ի միջի, «մի դրամ ի ձեռին ունելով», որ կը նշանակէր՝ թէ «ի շինել քաղաքիս ամենայն գանձքս ծախեցան, և այս միայն մնաց»: Զամչեան այնչափ ճշմարիտ կը համարի այս պատմութիւնը՝ մինչև թուել ընդունել ոմանց ստուգաբանութիւնը, թէ Մծբին է աղաւաղեալն հայերէն բառին «Մնաց մին»: Արդարև ամէն անտեղութիւն պարտ է ընդունել, արդարացունելու համար զԽորենացին:

Բայց Խորենացին, սիրող ստուգաբանութեան՝ կ'ստուգաբանէ նաև զանունն Սանատրուկ, իբրև «տուրք Սանոտայ».—«Բայց թէ ընդէր Սանատրուկ կոչեցաւ՝ ասելի է: Զանզի յաւուրս ձմերայնոյ ճանապարհորդեալ ի Հայս քոյր Աբգարու Ոդէ՝ պատահէ բքոյ ի լերինս Կորդուաց. ցրուեաց զամենեսեան մրրիկ, մինչ ոչ գիտելով ընկեր զընկեր՝ ընդ ո՛ր վարեցաւ: Իսկ դայեակն նորա Սանոտայ՝ քեռ Բիւրատայ Բագրատունւոյ, կնոջ Խորենայ Արծրունւոյ, առեալ զմանուկն, քանզի տղայ էր՝ եդ ի մէջ ստեանց իւրոց, մնալով ի ներքոյ ձեանն զերիս տիւս և զերիս գիշերս: Զորմէ առասպելաբանեն, եթէ կենդանի իմն նորահրաշ սպիտակ յաստուածոցն առաքեալ՝ պահէր զմանուկն: Բայց որչափ եղաք վերահասու՝ այսպէս է. շուն սպիտակ ընդ խնդրակսն լեալ, պատահեաց մանկանն և դայեկին: Արդ կոչեցաւ Սանատրուկ, ի դայեկէն զանուանակոչութիւնն առեալ, որպէս թէ տուրք Սանոտայ: Սա թագաւորեալ յերկոտասաներորդի ամի Արտաշիսի Պարսից արքայի, կեցեալ ամս երեսուն՝ մեռաւ յորսի, նետիւ ուրուք դիպեալ փորոտեացն, իբր թէ վրէժս հատուցեալ ընդ չարչարման սրբոյ դստերն»:

Չէ պարտ մոռանալ սակայն, թէ անունն Սանատրուկ կայ ի պատմութեան յառաջագոյն իսկ քան զայս Սանատրուկ: Մին ի Պարթև թագաւորաց, Արշակ ԺԱ. (86—70 ն. ք. զՔր.) կը կոչուէր Սանատրուկ, Σανατρούκης ըստ դահեկանաց, և Թարգմանիչ Գ. Մակաբայեցւոց կը կոչէ Սանատրուկ զՍենեքերիմ արքայ Ասորեստանի: Խորենացին յարելով—«Ղերուբնայ որդի Ափշադարայ դպրի գրեաց զամենայն գործս որ ինչ յաւուրս Աբգարու և Սանատրկոյ, և եդ ի դիւանին յԵդեսիա»՝ կու տայ գուշակել, թէ դարձեալ Եդեսիոյ դիւանն էր աղբիւր նորա, թէպէտ չըսեր, և չէ հաւանական, թէ անձամբ քաղեց զայսուիկ Խորենացին այն համբաւաւոր ասորական

դիւանէն, որ իբրև հաստատակաց տեղի է Խորենացւոյն այն ժամանակին պատմութեան: Յիշելով զբան Րընանի, թէ գործք դիւանին Եդեսիոյ առաջնոյ դարուն կը կրեն առասպելական դրոշմ՝ անցնինք յառաջ:

Թող խառնակութիւնը, որ կը տիրէ Խորենացւոյն այս պատմութեան մէջ, ուր քաղաքականն խառն է ընդ եկեղեցականին լի հրաշալեօք, թող և աղբիւրներու չփոթութիւնը, որ կոյտ իմն է աստրական առասպելաց՝ ժամանակակից պատմութիւնն, զոր կու տան մեզ յոյն և հռոմայեցի պատմիչք ժամանակին (Տակ., Յովս., Սուետոն, Դիոն) և դահեկանք, յայտնի և որոշ թուականօք՝ կը բառնան ամէն տարակոյս, թէ Խորենացին, թերևս նպատակաւ ջնջելոյ զհետս օտար ազդեցութեան իւր հայրենեաց պատմութենէն, արհամարհոտ իմն լռութեամբ թողլով զանցս բուն Հայոց՝ Ուռհայաստանի պատմութիւնը կու տայ մեզ իբրև մի միայն Հայոց պատմութիւն, աննշան Մանովաներով և Աբգարներով: Մենք արդէն համառօտեցինք ինչ որ յիշեալ օտար, բայց ժամանակակից աղբիւրք ունին զՀայոց յԱրտաւազդայ մինչև ի Տիրիթ կամ ի Տրդատ Ա., այսինքն 5-էն նախ քան զՔր. մինչև 53 յետ Քրիստոսի: Կը մնայ խօսել սակաւուք զՍանատրկոյ իբրև արդարև թագաւորէ Հայոց, թէպէտ նոր և օտար հարստութենէ, և դրուած Հայոց վրայ:

Խորենացին չգտնէր յիշատակաց արժանի գործ Սանատրկոյ բաց ի շինուածոյ Մծբին քաղաքի: Թէ Սանատրուկ, իբրև թագաւոր Հայոց և Ուռհայաստանի, այն թուականին շինեց զՄծբին վերստին ի հիմանց՝ չէք յիշուած ի պատմութեան: Բուզանդ զՄծուրս, քաղաք առ իւրով ժամանակաւ, ոչ հեռի յԱշտիշատէ, ուր Եփրատայ երկու բազուկք կը միանան՝ կը յիշէ շինուած ի Սանատրկոյ.—«Ի գետախառնունսն երկուց գետոցն... ի հնոյն իմն շինած քաղաք, զոր շինեալ Սանատրուկ արքայի, որում անուն տեղւոյն Մծուրք կոչէր» (Բուզ. Դ. ԺԴ.): Բուզանդ կը յիշէ նաև շիրիմ մեծագործ Սանատրկոյ զոր Պարսիկք չկրցան քակել.—«Բայց միայն զգերեզման շիրմին Սանատրկոյ արքային ոչ կարացին բանալ վասն անհեդեդակայագործ հաստաշինած ճարտարագործ արարածոցն» (Բուզ. Դ. ԻԴ.): Բուզանդ կոչելով այլուր զՍանատրուկ «առաքելասպան», և «յակամայ հնազանդեալ հաւատոցն»՝ կը ցուցնէ թէ չէր անտեղեակ վկայաբանութեանն Թադէոսի, որ կար ապաքէն առ իւրով ժամանակաւ:

Բայց Սանատրուկ կը թուի լեալ եղբայրն Փարսմանայ, Միհրդատ Վիր, զոր կացոյց Տիբեր ի վերայ Հայոց (35—45), և այս յայտնի է մանաւանդ յաղիողորմ վախճանէ նորա, կնոջն և որդւոյ

(տես Տակիտ. Պատմ. ԺԲ, ԽԴ, ԾԲ, զոր կ'ակնարկէ և Խորենացին Բ. ԼԷ.) ի դաւաճանութենէ Հռադամիստայ, Փարսմանայ որդւոյն, որոյ և՛ անձին և՛ բարուց հանդամանք գրեթէ աներկբայելի կ'ընեն, թէ է Երուանդն Խորենացւոյն։ Ոչ այսչափ միայն. Արտաշէս ևս եբր որդի Սանատրկոյ, տղայ, զոր Խորենացին կը դնէ «ապրեալ ի կոտորածէն Երուանդայ» և զորոյ պատմութիւնն այնպէս երկար կը բերէ անգին հատակոտորներով երգոց վիպասանաց, առ որս կը զրկէ վստահութեամբ զկարծեցեալ Մեկենաս իւր զԲագրատունին Սահակ (Խոր. Բ. ԽԹ.)՝ ոչ այլ ոք է՝ եթէ ոչ դարձեալ Տիրիթն կամ Տրդատ Տակիտոսի։ Զայս վճիռ կու տայ և կորովին Գաթըրճեան, (այլուստ այնպէս երկիւղած, մանաւանդ թէ երկչոտ), նոյն համարելով զԱրտաշէս Բ. Խորենացւոյն ընդ Տիրիթայ կամ Տրդատայ Տակիտոսի։ Ահա բանք նորա. «Ի բաց եդեալ զհանդամանս ժամանակաց, զոր տայ Մ. Խորենացի պատմութեան Արտաշիսի Բ. (տալով սմին 41 ամս թագաւորութեան ըստ հաշուի, այլ ըստ համեմատութեան դիպացն՝ աւելի քան զամս 75 ընձայելով, այնուզի համեմատէ զդէպսն Արտաշիսի ընդ ժամանակս Ներոնի, Վեսպիանու, Տիտոսի, Դոմետիանու, Ներուայ, Տրայիանոսի և Ադրիանուսիկ), զայս տեսեմ և զայլ ևս ինչ հանգամանս պատմութեան առ Խորենացւոյն ի բաց թողեալ, այնչափ ինչ նմանութիւն գոյ պատմութեանն Արտաշիսի Բ. ըստ դիպացն ընծայելոց յերգոցն վիպասանաց՝ ընդ պատմութեան Տրդատայ առ Տակիտայ և Յովսեպայ (տես էջ 107—124), մինչև գրեթէ առանց յերկուանաց մարթի նոյն զերկոսին համարել։ Գլխաւոր կէտք համեմատութեան են՝ Ա. Դիր և աղերս Պարթևաց և Հռոմայեցւոց ընդ միմեանս, նոյն յերկոսին ևս պատմութիւնսն. Բ. Յերկոսին ևս՝ մերժի յանժամու թագաւորն Հայոց, և ի Պարթևաց կացուցանի զօրօք (անդ ի ձեռն Սըմբատայ, աստ ի ձեռն Վասակայ) թագաւոր Հայոց. Գ. Որպէս աստ, նոյնպէս և անդ Փարսման ումն արքայ Վրաց է հակառակ Պարթևաց և Հայոց. Դ. Դոմետ ումն ըստ երգոցն վիպասանաց (Դոմիտիոս Կորբուղոնն Տակիտեայ) եկեալ ի Հռոմայեցւոց կողմանց հակառակ թագաւորին Հայոց հաստատելոյ ի Պարթևաց. Ե. Ե՛ւ անդ և աստ շինութիւն Արտաշատ քաղաքի. Զ. Մարտ պատերազմի ընդ Ալանաց (երկից)․—Թող զայլ ինչ մերձաւորագոյն յիշատակս առ Խորենացւոյն, որպիսի ինչ հռոմէական զօրաց չժամանել ի դէպ ժամու յօգնականութիւն (Երուանդայ). յետ Արտաշիսի դրուելոյ յինքն զաշխարհն՝ հասանել Հռոմայեցւոցն լեգէոնաց անագան. երթալ (Արտաշիսի) ընդ առաջ կայսեր և ցածուցանել զնա, և այլ ևս նոյնպիսիք»։

Եթէ քաջ միտ դնէր Գաթըրճեան հանգամանաց պատմութեան նախորդացն Արտաշիսի, այն է պատմութեան Սանատրկոյ և Երուանդայ՝ պիտի ընդունէր յառաջ քան զմեզ, թէ Սանատրուկ էր Մեհրդատն Վէր, և Երուանդ՝ Հռադամիզդն Տակիտոսի: Զիարդ և իցէ՝ կը թուի թէ աստուածաբանական երկիւղածութիւնն բաւական ազդեցութիւն ունեցած է սուր և հատու մտաց մեր վաղեմի կրօնակցին, ուստի և շատ բան կը շնորհէ պատուոյն և համբաւոյ ծերունի հայ պատմագրին, որոյ խոտորելն ժամանակակից պատմութենէ ոչ իւր յանցանք են, այլ խորագէտ հնարից աղբերաց նորա, որ կ'ընտրեն ունենալ թագաւոր պոռնկորդի (Երուանդ) մանաւանդ քան ի Հռոմայեցւոց կամ ի Պարթևաց տրուած թագաւոր:

Ըստ աղբերաց Խորենացւոյն (Գլ. Լե.)՝ ինչպէս Սանատրուկ է քեռորդի Աբգարու անյայտ հօրէ, նոյնպէս Երուանդ է որդի վատանուն կնոջ Արշակունւոյ.—«Կին ոմն, կ'ըսէ, յազգէ Արշակունեաց, անձամբ խարատի և խոշորագեղ, վարար, զոր ոչ ոք դիմագրաւեաց առնուլ կնութեան, ծնանի երկուս մանկունս յանկարգ խառնակութենէ, որպէս Պասիփայէ զՄինոտավրոս: Եւ ի զարգանալ մանկանցն՝ կոչեն անուանս Երուանդ և Երուազ: Եւ ի չափ հասեալ Երուանդայ՝ լինի սրտեայ, անդամովք յաղթ: Սա ի բազում իրս վերակացու առաջնորդութեամբ առաքեալ ի Սանատրկոյ, գտանի երևելի, մինչև ամենայն նախարարացն Հայոց սիրելի լինել. և խոնարհութեամբ և առատաձեռնութեամբ զամենայն ոք յինքն յանկուցանէր: Եւ ի մեռանելն Սանատրկոյ՝ միաբանեալ թագաւորեցուցին զնա առանց յազգէ Բագրատունեաց լինել թագադիր: Բայց ի թագաւորելն իւրում Երուանդ, կասկած ունելով յորդւոցն Սանատրկոյ՝ կոտորէ զամենեսեան»:

Եթէ պարտ է հաւատալ Խորենացւոյն՝—և արդարև չթուիր հեռի ի ճշմարտութենէ—Երուանդ, ինչպէս բարուքն՝ նոյնպէս հայեցուածովն էր գժնեայ, մինչև համարել դիւական.—«Բայց ասեն զԵրուանդայ՝ ըստ հմայից գժնեայ գոլով ական հայեցուածով. վասնորոյ ընդ այգանալ աշալրջացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմս որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ, և ի հայեցուածոցն գժնէութենէ ասեն պայթել որձաքար վիմացն: Բայց այս կամ եղիցի սուտ և առասպել, և կամ դիւական ինչ առ իւր ունել զօրութիւնս, զի այսպէս հայեցուածոցն անուամբ վնասեացէ զորս կամի» (Խոր. Բ. ԽԲ.):

Չէ ամենևին անհաւանական, թէ Երուանդ ըստ Խորենացւոյն իւր ութևտասն կամ քսանամեայ (ըստ արտաքին պատմութեան՝ իբրև Հռադամիզդ իւր իննամեայ) թագաւորութեան ժամանակ բրու-

գեղեցիկ շինուածներ.—«Յաւուրս սորա փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյն. քանզի էր հեռացեալ գետն Երասխ, և յերկարել ձմերայնոյն, և ի դառնահոտ շնչմանէ հիւսիսոյ պաղացեալ ձուլեալ վտակն՝ ոչ ուստեք արբուցումն բաւական թագաւորականին գտանէր տեղւոյ։ Ընդ որ նեղեալ Երուանդայ, նա և ամրագունի ևս տեղւոյ եղեալ ի խնդիր՝ փոխէ զարքունիսն յարևմուտս կոյս ի քարակտուր մի բլուր, զորով պատ առեալ Երասխայ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ։ Պարսպէ զբլուրն, և ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բազում տեղիս կտրեալ զքարինսն մինչև յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչև դիմել ջուրց գետոյն ի փորուածն, յըմպելեաց պատրաստութիւն։ Ձմիջնաբերդն ամրացուցանէր բարձր պարսպօք, և դրունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, և ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչև ցդուռնն, և ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մէջ աստիճանացն, որպէս զի ըմբռնեսցի՝ թէ ոք գաղտ ելանելով դաւել կամիցի զարքայն։ Եւ էր, ասեն, երկդիմի, որպէս զի մինն լիցի սպասաւորացն արքունի և ամենայն ելևմտից ճանապարհ տուընջենային, իսկ միւսն գիշերային և մարդադաւաց»։

Նկարագիր Խորենացւոյն կը թուի այս։ Երուանդ յարևմտից Արմաւիրի գտնելով քարաբլուր մի մօտ յԵրասխ՝ պատեց զայն պարսպաւ, և բացաւ քարաբլրոյն յատակէն մինչև ի յատակ գետոյն ջրանցներ, ընդ որս կու գար ջուր ի քաղաքն։ Ի գագաթան քարաբլրոյն շինեց դուռն, յոր մարթ էր ելանել երկաթի սանդղով՝ որ ունէր երկուստեք աստիճաններ։ Միոյ կողման աստիճաններուն վրայ կային ծածուկ որոգայթներ, այնպէս որ եթէ ոք յանդէտս ելանէր այն աստիճաններէն՝ կը բռնուէր։ Սանդղոյն մի կողմն էր տուընջեան համար ի պէտս սպասաւորաց և վասն մտից ելից, և էր բաց ի տուընջեան. միւս կողմն, որոյ աստիճաններուն վրայ էին որոգայթք՝ կը բացուէր գիշերը. ով գիշերայն կամէր մտնել ի սենեակ թագաւորին դաւելու համար զնա՝ կը բռնուէր։ Արդարև զարմանալի շինուած, եթէ ճշմարիտ է բան Խորենացւոյն։

«Բայց Երուանդ շինեալ զքաղաքն իւր և փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմաւիրայ, ուրոյն ի կռոցն, զոր ոչ օգուտ իւր համարեցաւ յիւրն փոխել ի քաղաքն, զի մի ի գալն և ի զոհել անդ աշխարհի, ոչ զգուշութեամբ պահեսցի քաղաքն. այլ հեռագոյն ի նմանէ իբր քառասուն ասպարիսաւ զհիւսիսով նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ և անուանեաց Բագարան, այսինքն թէ ի նմա յօրինեալ է զկազմութիւն բագնացն, և փոխեաց անդր զամենայն զկուռսն որ յԱրմա-

ւէր։ Եւ մեհեանս շինեալ՝ զեղբայր իւր զԵրուազ քրմապետ կացուցանէր։

Այս երկու քաղաքներն շինեց Երուանդ իւր ապահովութեան համար։ Բայց կասկածոտ բռնաւորն չմոռցաւ նաև իւր զուարճութիւնը, ուստի և տնկեց անտառ.—«Տնկէ և մայրի մեծ ի հիւսիսոյ կողմանէ գետոյն, և որմովք ամրացուցանէ, արգելլով ի ներքս այծեմունս երագունս, և զեղանց և զեղջերուաց ազգ, և ցիռս և վարազս. որք ի բազմութիւն աճեցեալ լցին զանտառն, որովք ուրախանայր թագաւորն յաւուրս որսոց։ Եւ անուանէ զանտառն Ծննդոց»։

Բան զանտառն գեղեցիկ էր գիւղն, զոր Ձեռակերտ կ'անուանէ Խորենացին, և կը պատմէ ախորժելով. «Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք։ Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիբ. իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտարանաց բազմութիւն, որպէս շուրջ զբբօքն զայլ բոլորակութիւն ական։ Իսկ զբազմութիւն այգեստանոյ, իբրև զարտևանաց խիտ և գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն զիր կարակնաձև՝ արդարև գեղաւոր կուսից յօնից զարևանդաց համեմատ։ Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն. իսկ գետն բերանացեալ զարաւանդօք ափանցն՝ զերկթերթիւն նշանակէ շրթունս։ Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն գոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի. և արդարև բերրի և թագաւորական դաստակերտն»։ Խորենացին Երուանդաշատ կ'անուանէ քաղաքը, և Երուանդակերտ՝ գիւղը։

Գանք այժմ ի պատմութիւն Արտաշիսի ըստ Խորենացւոյն։ Ի պատմութեան Խորենացւոյն ևս Արտաշէս (Տրդատ) կու գայ Պարթևաց զօրօք, բայց ոչ իբրև եղբայր Վաղարշու, առաքեալ փոխանակ Երուանդայ (Հռադամիզդ) ի հեծուկս Հռոմայեցւոց, այլ իբրև մանուկ տղայ, որդի Սանատրկոյ, ապրեալ ի կոտորածէն Երուանդայ և փախուցեալ ի Պարթևս. կը պատերազմի ոչ ընդ զօրս Հռոմայեցւոց, այլ ընդ զօրս Երուանդայ, ուր կը յիշուի և Փարսման՝ վրացի զօրօք։ Չյիշուիր այս պատմութեան մէջ ո՛չ Ներոն, ո՛չ զօրավար նորա Դոմիտիոս Կորբուղոն, զոր դիտէ երգն վիպասանաց, ոչ երթալն Արտաշիսի (Տրդատայ) ի Հռոմ և պսակելն ի Ներոնէ, և այլ բազում ինչ՝ զոր այնպէս մանր կը պատմէ Տակիտոս։ Այսպէս ի պատմութեան Խորենացւոյն հռոմէական միջամտութիւնն ծածկուած է քողով, պարթևականն՝ ըստ մասին։ Որովհետև արտաքին

աղբիւրն, ժամանակակից, չկարէ լինել սուտ, որչափ և խոտիւ դատենք՝ յայտնի է ուրեմն, թէ աղբիւր Խորենացւոյն, ինչպէս միշտ՝ նոյնպէս աստ կը ջանայ բառնալ պատմութենէն զհետս օտար ազդեցութեան։ Տեսանք Տակիտոս իւր բոլոր պարագաներով. տեսնենք արդ զԽորենացին, առ որում, թող զայն մասնաւոր դիտումն հեռացունելու զօտարն՝ շատ բան եթէ ոչ ճշմարիտ, գէթ հաւանական է։

Ահա պատմութիւնն Արտաշիսի ըստ Խորենացւոյն. «Բայց ի թագաւորելն իւրում Երուանդ, կասկած ունելով յորդւոցն Սանատրկոյ՝ կոտորէ զամենեսեան... բայց մի ումն տղայ Արտաշէս անուն, զոր առեալ սննուցի նորա՝ փախեաւ ի կողմանս Հերայ, ի հովուավանս Մաղխազանի (հանդրուանք Մաղխազեան, արքունի, հովուաց՝ որ էին Մարաց, այժմու Պրդերու ցեղէն)։ Լուեալ դայեկի նորա Սմբատայ, որդւոյ Բիւրատայ Բագրատունւոյ ի Սպեր գաւառի՝ զբօթն Սանատրկոյ և զգոյժ կոտորման որդւոց նորա... գայ անցանէ ի խնդիր մանկանն Արտաշիսի։ (Աղբիւր Խորենացւոյն, կամ թերևս ինքն Խորենացին, ո ոք և է, ի շնորհուկս Մեկենասին իւրոյ Սահակայ Բագրատունւոյ, ինչպէս բազում ուրեք՝ նոյնպէս աստ կը մուծանէ իբրև գլխաւոր գործող ի պատմութեան Արտաշիսի զՍմբատ Բագրատունի. հռոմէական աղբիւրն Տակիտոս չգիտեր ըզՍմբատ, այլ գիտէ Վասակ ումն սպարապետ պարթևական զօրուն. բայց և այնպէս չէ անհաւանական, թէ մեծ նպաստ եղան Արտաշիսի (Տրդատայ) Բագրատունիք, թողլով դայեկութեան խնդիրը)։ Որում իրազգած եղեալ արքային Երուանդայ՝ հետայոյզս առաքէ. վասնորոյ բովանդակ ժամանակս ընդ երեսս լերանց և դաշտաց այլակերպեալ շրջելով հետի հանդերձ մանկամբն՝ սնուցանէ ի հովուավանս և յանդէորդս, մինչև պարապ գտեալ ժամ՝ անցանէ առ Դարեհ արքայ Պարսից։ (Զիք այսու անուամբ ևս թագաւոր Պարթևաց ո՛չ ըստ պատմագրաց և ոչ ըստ դահեկանաց. թերևս ըստ դիպաց իմն կամ խորհրդով փոխուած է անուն Վաղարշու ի Դարեհ)։ Եւ քանզի այր քաջ էր Սմբատ և ծանօթ յառաջագոյն՝ պատուի մեծապէս ընդ զօրագլուխսն Պարսից, որպէս և մանուկն ընդ որդիս թագաւորին։

«Բայց Երուանդայ զմտաւ ածեալ, թէ որպիսի՛ չար թագաւորութեան նորա սնանի ի Մարս, խէթ սրտի լեալ՝ ոչ հեշտալի էր նմա քուն։ Հանապազ ի յարթնութեան յայն հոգալով, նաև ի քուն անուրջս ահագինս նմին իբր տեսանէր։ Վասնորոյ ի ձեռն հրեշտակաց և պատարագաց խնդրէր հաշտեցուցանել զարքայն Պարսից՝ տալ ի ձեռս զԱրտաշէս, ասելով, թէ Արիւն իմ և հարազատութիւն՝

ընդէր սնուցանես զմարդ Արտաշէս հակառակ ինձ և իմոյ թագաւորութեանս, լսելով բանից Սմբատայ յեղուզակի, որ ասէ թէ որդի է Արտաշէս Սանատրկոյ. և զորդի հովուաց և զանդէորդաց ջանայ առնել Արշակունի, և արիւն քո և հարազատութիւն համբաւելով զնմանէ։ Նա չէ որդի Սանատրկոյ, այլ ընդ խաբս գտեալ Սմբատայ զմար ումն տղայ՝ բաջաղի։ Նոյնպէս և առ Սմբատ յղէր բազում անգամ, թէ ընդէր այդ քո սնոտի աշխատութիւնդ, խաբեալ ի ստնտուէդ, սնուցանես զորդի մարիդ հակառակ ինձ։ Եւ լսէ ոչ սիրելոյ բանս պատասխանեաց։... Բայց թիկունս արարեալ Երուանդայ զՀռոմայեցիս՝ ոչ ինչ վտանգի ի թագաւորութեանն Վեսպիանու և Տիտոսի, թողլով ի նոսա զՄիջագետս։ (Ահա Խորենացւոյն ժամանակագրական մեծագոյն սխալներէն մին—դնել զԵրուանդ առ Վեսպասիանոսիւ և առ Տիտոսիւ, այն է մինչև 80 յետ Քր.-ի. այսպէս ժամանակ թագաւորաց և երևելի երևելի անցք պատմութեան Հայոց կը խախտին համեմատութենէն՝ զոր ունին կայսերաց և Պարթև թագաւորաց ժամանակներուն հետ, և կ'անյագանին բազում ամօք յԵրուանդայ և այսր. այնպէս որ Արտաշէս, որ ըստ երգոց վիպասանաց իսկ արդէն թագաւորած էր ի սկզբան կայսրութեան Ներոնի (54)՝ լինի թագաւորեալ Տիտոսի վերջին տարին (80), այսինքն իբր 27 և աւելի ևս ամօք յետոյ քան զբուն ժամանակն, և մահ նորա, որ եղաւ Դոմետիանոսի առաջին տարին (81)՝ լինի եղած Ադրիանոսի գրեթէ վերջընթեր տարին (115), այսինքն իբր 35 ամօք յետոյ քան զբուն ժամանակն)։

«Իսկ ի զարգանալ մանկանն Արտաշիսի, և ի բազում արութիւնս քաջութեան ցուցանել դայեկին Սմբատայ, հաճեալ ընդ նա նախարարք Արեաց՝ մաղթեն զթագաւորն տալ նմա պարգևս՝ զինչ և խնդրեսցէ։ Եւ յանձն առեալ թագաւորին՝ ասէ ցնախարարսն. Տեսէք զինչ կամի այրն քաջ։ Եւ նոքա ասեն. Անմահ բարերարութիւնդ քո, ոչ այլ ինչ կամի Սմբատ, քան թէ զարիւնդ քո և հարազատութիւն, զԱրտաշէս որդի Սանատրկոյ, զմերժեալն ի թագաւորութենէ իւրմէ, հաստատել յիւրում թագաւորութեանն։ Եւ յանձն առեալ արքային արքայից՝ տայ ի ձեռն Սմբատայ մասն ինչ ի զօրացն Ասորեստանի և զզօրս Ատրպատականի, զի տարեալ զԱրտաշէս հաստատեսցէ ի գահն հայրենի։ Լուր հասանէ առ Երուանդ յՈւտէացւոց գաւառին, եթէ գումարեաց արքայն Պարսից զօր բազում ի ձեռն Սմբատայ, զի ի վերայ քո խաղացեալ անցէ զմանուկն Արտաշէս ի թագաւորութիւն իւր։ Զայս իբրև լուաւ Երուանդ՝ եթող անդէն զբազումս ի նախարարացն կողմնապահս, և ինքն գնաց ի քաղաքն իւր փութանակի, կուտել առ ինքն զզօրս

Հայոց և զՎրաց և զկողմանցն Կեսարու, այլ և Միջագետացն աղերսիւք և տրովք։ Եւ էին աւուրք գարնայնոյ. վասնորոյ երագ ժողովեցան զօրքն ամենայն. Նաև Արգամ տանուտէր ազգին Մուրացան, որ ի ծննդոցն Աժդահակայ, ամբոխ հեռևակաւ։ Քանզի էր Երուանդայ դարձուցեալ ի նա զգահն երկրորդական, զոր հանեալ էր ի նոցանէ Տիգրանայ և տուեալ էր իւրում քեռայնն Միհրդատայ. իսկ յետ մահուանն Միհրդատայ ոչ լինէր ումեք տուեալ, մինչև Երուանդայ դարձուցանել զնա առ Արգամ։ Եւ ոչ միայն զնա, այլ և ամենայն նախարարացն տայր պարգևս, և զօրացն ամենեցուն պարգևէր առատապէս։ (Խորենացին կոչելով զԱրգամ «ի ծննդոցն Աժդահակայ»՝ կը թուի ակնարկել Մարաց գերութիւնը, զորմէ տես յառաջնում մասին Պատմութեան մերոյ, էջ 195, յօդուած 44։ Իսկ վասն Միհրդատայ, եթէ Խորենացին այս անուամբ կ'իմանայ զմեծն Միհրդատ Եւպատոր, արքայ Պոնտոսի՝ չթուիր ճշմարիտ պատմութիւն։ Թող որ Միհրդատ չէր քեռայր Տիգրանայ, այլ աներ նորա՝ ոչ ուրեք յիշուած է, թէ եղև նա երբէք պաշտօնեայ, պատուով երկրորդական Տիգրանայ, իբր թէ փոխարքայ նորա)։

«Իսկ Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսիւ աճապարէր հասանել ի սահմանս Ուտէացւոց։ Ընդ առաջ նորա ելին զօրք այնր կողմանն, նաև նախարարքն զորս եթող Երուանդ։ Զայն իբրև լուան այլ նախարարքն Հայոց՝ լուծանէին լքանէին և զատչել յԵրուանդայ խորհէին. նա և զայն ևս տեսանէին, եթէ զօրքն Հռոմայեցւոց ոչ հասանէին նմա ի թիկունս։ Իսկ Երուանդ առաւել ևս յորդորագոյն տայր զպարգևսն, և բաշխէր միոյ միոյ ումեք ի նոցանէ զգանձսն. և որչափ առատանայր՝ առաւել ևս ատելի լինէր։ Քանզի գիտէին ամենեքեան, եթէ ոչ առ առատութեան տայ, այլ առ երկիւղի վատնէ։ Եւ ոչ այնչափ սիրելի զայնոսիկ առնէր, որոց շատն տայր՝ քան թէ թշնամի զայնս, որոց ոչն տայր պերճագոյնս։

«Բայց Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսիւ ելանէ առ ափն ծովուն Գեղամայ, զթիկամբք Արագածն կոչեցեալ լերինն. աճապարէին հասանել ի բանակն Երուանդայ։ Առ ոչինչ համարեալ զբազմութիւն զօրաց նորա՝ միայն կասկածէին ի Մուրացանէն Արգամայ. զի այր քաջ էր և բազում տէր տիգաւորաց։ Եւ ճամբարն Երուանդայ էր բացագոյն ի քաղաքէ նորին աւելի քան երեքհարիւր ասպարիսաւ ի հիւսիսոյ ի վերայ գետոյն Ախուրեան։ Զայս իբրև լսէր Երուանդ՝ հանէր ընդ առաջ զբազմութիւն զօրացն, և ճակատէր ոչ հեռի յիւրմէ բանակէն։ Իսկ Արտաշիսի առաքեալ պատգամ առ Արգամ նահապետ Մուրացանաց հանդերձ բազում երդմամբք, թո-

ղուլ ի վերայ նորա՝ զոր ինչ գտեալ է յԵրուանդայ, և կրկին այլ յաւելուլ, միայն զի զԵրուանդ թողեալ ի բաց գնասցէ։

«Եւ իբրև հանդէպ ճակատուն Երուանդայ ելին նշանք Արտաշիսի, Արգամայ առեալ զբազմութիւն հետևակացն՝ ի կողմ ելանէր։ Եւ Սմբատ հրամայէր զփողսն պղնձիս հնչեցուցանել, և յառաջեալ զճակատն իւր՝ իբրև զարծուի յերամս կաքաւուց խոյանայր։ Իսկ նախարարքն Հայոց որ յաջ և յահեակ թևսն էին՝ ի նա խառնեալ միանային։ Եւ զօրքն Վրաց հանդերձ արքայիւն իւրեանց Փարսմանաւ, թէպէտ և յանդուգն յարձակմամբ յառաջեալ բախէին՝ արագալէս դառնային ի միւս կողմն փախուցեալ։ Եւ անդ էր տեսանել կոտորած անհնարին զգնդին Երուանդայ և զզօրաց Միջագետաց։ Եւ ի խառնակել այսպիսի ճակատուց՝ պատահեն Արտաշիսի արք քաջք տաւրացիք, որոց զգլխս ի բաց եդեալ, Երուանդայ պայմանեալ սպանանել զԱրտաշէս։ Որոց դիպեալ՝ հետի ընդ մէջ անցանէր Գիսակ որդի ստնտուին Արտաշիսի, և սատակեալ զնոսա, ուր և զկէս դիմաց նորա ի վայր բերեալ սուսերաւ, զյաղթութիւն ստացեալ մեռանի ի վերայ այսպիսեացս։ Եւ մնացեալ զօրքն ի փախուստ դառնային։

«Իսկ Երուանդ ձիովն իւրով բովանդակ ասպարէզս անցեալ ելանէ ի խառնս կարգեալս ի բանակէն իւրմէ ի քաղաքն իւր, հեծեալ ի նոր ձիս հանդոյց ի հանդուցէ փախչել։ Եւ քաջն Սմբատ զհետ մտեալ, սաստկագոյնս վարէր զնա ի գիշերի մինչև ցդուռն քաղաքին։ Եւ Մարաց զօրացն անցեալ ի կողմն երուանդական գնդին՝ նսեմաւ ի վերայ դիականցն բանակէին։ Իսկ Արտաշիսի հասեալ Երուանդայ՝ ի խորանս նորա բնակեցաւ զայն գիշեր. և այգուն եղելոյ՝ զպարտեալսն թաղել հրամայեաց. և անուանեաց զհովիտն ուր ի վերայ դիականցն բնակեցաւ՝ Մարաց մարգ, և զտեղի ճակատուն՝ Երուանդավան, որ կոչի մինչև ցայսօր ժամանակի, այսինքն եթէ յայսմ տեղւոջ վանեաց զԵրուանդ։ Եւ ինքն չուեաց ի քաղաքն Երուանդայ. յառաջ քան զմիջօրեայ հասեալ ի դաստակերտն Երուանդայ, և միաբան գոչմամբ հրամայեաց աղաղակել զօրացն՝ «Մար ամատ», որ թարգմանի Մարս եկն, յիշեցուցանելով զթշնամանսն զոր յղէր Երուանդ առ թագաւորն Պարսից և առ Սմբատ, Մար զնա կոչելով։ Յայսմ ի սոյն ձայն անուանեցաւ դաստակերտն Մարմէտ. իբր ի կամաց Արտաշիսի, բառնալ զանուն Երուանդայ ի տեղւոջէն. այս պատճառ է անուանակոչութեան դաստակերտին։

«Բայց Սմբատայ գիշերոյն զհետ մտեալ Երուանդայ, եկեալ սակաւ վաշտկանաւ՝ զդուռն քաղաքին պահէր մինչև ի գալն Արտաշիսի զօրացն ամենեցուն։ Եւ ի մարտնչել քաջացն ընդ ամրոցին՝ անձնա-

տուրք եղեն մարդիկ ամրոցին և բացին զդուռն քաղաքին: Իսկ մի ոմն ի զինուորացն մտեալ եհար վաղերբ զգլուխն Երուանդայ, և ցրուեաց զուղիղն ի յատակս տանն. և այսպիսի ջախմամբ վախճանեցաւ, կալեալ զթագաւորութիւնն ամս քսան: Բայց Արտաշիսի յիշեալ, թէ խառնուած Արշակունեաց է Երուանդ՝ հրամայէ զդի նորա թաղել մահարձանօք»:

Վերջին մասն այս գլխոյն չէ պատմական: Ըստ Տակիտոսի, որ է աւելի հաւանական՝ Փարսման, հաճելու համար զՀռոմայեցիս, սպաննել տուաւ զԵրուանդ իբրև ակամայ մտնիչ երկրին. երկրորդ՝ քսան տարի տալ թագաւորութիւն Երուանդայ աւելի իմն է. երրորդ՝ լինել Երուանդայ Արշակունի և թաղելն պատուով իբրև այնպիսի՝ չէ ճշմարիտ, մինչ ըստ ժամանակակից պատմութեան էր նա որդի Վրաց թագաւորին, և Խորենացին կ'ընէ զնա որդի աննշան պոռնիկ կնոջ Արշակունւոյ:

«Յետ մահուանն Երուանդայ մտեալ Սմբատայ՝ զարքունական յուղէր զգանձսն. և գտեալ զթագն Սանատրկոյ արքայի, (այսինքն զթագն թագաւորացն Արշակունեաց, որով հաւանականաբար պսակուած էր Սանատրուկ, բայց ոչ Երուանդ) դնէ ի գլուխն Արտաշիսի և թագաւորեցուցանէ ի վերայ ամենայն երկրիս Հայոց:... Իսկ Արտաշիսի առեալ զթագաւորութիւնն՝ տայ պարգևս զօրացն Մարաց և Պարսից, և արձակեաց յաշխարհն իւրեանց: Տայ և առնն քաջին և պատուականին Արգամայ զխոստացեալ գահն երկրորդական, և պսակ յակնթակապ, և գինդ յերկուսին ականջսն, և կարմիր զգեստ միոյ ոտինն, տարգալ ունել ոսկի և պատառաքաղ, և ոսկեղէնօք ըմպել նուագօք: Եւ ոչինչ ընդհատ յայսց պատուոց տայ դայեկին իւրոյ Սմբատայ, բայց միայն յերկուց գնդաց և ի կարմիր կօշկէ. և աւելի քան զհայրենական զիւր թագակապ ասպետութիւնն և զիշխանութիւն արևմտեայ զօրուն՝ հաւատայ ի նա զամենայն զօրս Հայոց, և զբոլոր աշխարհիս զգործակալս (զպաշտօնեայս) և զհամօրէն տունն արքունի»:

Արտաշէս հաստատեց նաև, ըստ Խորենացւոյն, նոր ցեղեր յանուն ոմանց, որ մեծամեծ ծառայութիւններ ըրած էին ի պատերազմունս նորա և յառաջ: Այսպիսի նոր ցեղեր եղան Տրունիք և Դիմաքսեանք: Տրունիք կոչուեցան, իբրև ուրոյն ցեղ՝ հնդեասան որդիք Տուր անուն ուրումն. ոչ թէ ի վարձ ինչ քաջութեան, այլ վասն զի հայր նոցա Տուր, որ ընտանի էր Երուանդայ՝ կ'իմացունէր զգաղտնիս նորա Արտաշիսի, և ի պատճառս այս քսութեան սպանեալ յԵրուանդայ.—«Պատմի սորա (Արտաշիսի) ի նոյն աւուրս աբեալ ազգ զորդիսն Տուրայ, պատանիս հինգ հանգերձ տասամբ, յա-

նուն Հօր իւրեանց Տրունիս, ոչ վասն արութեան ինչ գործոց, այլ միայն վասն քսութեան Հօր նոցա, զոր առնէր ի տանէն արքայի առ Սմբատ, քանզի ընտանի էր Երուանդայ, սակս նորին և սպանաւ ի նմանէ» (Խոր. Բ. Խէ.)։ Ոչ զանուն այր ցեղի և ոչ յանուանէ զոք յայնմ ցեղէ յիշուած կը գտնենք ուրեք, և ոչ իսկ առ Խորենացւոյն, բաց յայնմանէ զոր յիշեցինք։

Ինչպէս Տրունեաց՝ նոյնպէս Դիմաքսենից ցեղն Հաստատուցաւ, ըստ Խորենացւոյն, յԱրտաշիսէ, բայց այս ի վարձ մեծի ծառայութեան։ Խորենացին զանունն Դիմաքսեան կ՚ստուգաբանէ իբրև կիսադէմ. որպէս թէ Դիսակ, որդի ստնտուին Արտաշիսի, յազատելն զԱրտաշէս ի Տաւրացւոց Հարեալ սուսերաւ՝ կորոյս զկէս դիմացն, ինչպէս արդէն յիշուեցաւ.—«Զներսէս զորդի որդւոյ իւրոյ ստնտուին Դիսակայ, (ընթերցիր՝ «զորդի Դիսակայ որդւոյ ստնտուին իւրոյ»), ազգ զնա սերելով՝ անուն կոչէ զնահատակութեանց Հօրն՝ Դիմաքսեան. քանզի որպէս ասացաքն՝ զկէս դիմացն սուսերաւ ի վայր բերեն ի վերայ Արտաշիսի»։

Թէ արդարև «Դիմաքսեան» անունն, ըստ ստուգաբանութեան Խորենացւոյն, կը նշանակէ որդի կամ սերունդ Դիմակիսի՝ ինքնին չէ յայտ։ Դիտել արժան է նախ, թէ հայերէն՝ նա որ կորոյս զկէս դիմացն, ըստ օրինաց բաղդութեան կարէ կոչուիլ «կիսադէմ», բայց թէ կարէ կոչուիլ նաև «դիմակէս»՝ չենք գիտեր։ Սակայն գտնենք թէ այսպիսի ինչ զարտուղութիւն ունէր հին, մեզ անծանօթ հայերէնն, այնպէս որ մարթ էր ասել անխտիր «զուարթադէմ» և «դիմազուարթ», «չքնաղադէմ», և «դիմաչքնաղ». և արդարև ունինք «լիաբերան» և «բերանալիր», «ունայնաձեռն» և «ձեռնունայն», թէպէտ կայ թեթև ինչ խտիր ի մէջ երկոցունց։ Կայ սակայն ուրիշ դժուարութիւն ընդունելոյ Դիսակայ համար դիմակէս կամ կիսադէմ յորջորջումը։ Եթէ Դիսակ յետ կորուսանելոյ զկէս դիմացն ապրէր՝ թերևս կոչուէր դիմակէս կամ կիսադէմ, ուստի և ցեղ նոցա «Դիմակիսեան», որ կարաց աղաւաղմամբ կամ կըրճատմամբ լինել «Դիմաքսեան»։ Բայց ըստ վկայութեան Խորենացւոյն՝ Դիսակ մեռաւ ի կռուին ի հատանելոյ կիսոյ դիմացն, ուստի և չկարէ կոչուիլ դիմակէս։ Այն որ յետ կորուսանելոյ զաչս կամ զձեռն իւր կ՚ապրի՝ կրնայ կոչուիլ կոյր կամ ձեռնատ. բայց նա որ աչաց կամ ձեռաց կորստեան պատճառաւ կը մեռնի՝ չկոչուիր կոյր կամ ձեռնատ։ Միով բանիւ՝ Դիմաքսեան կոչումն այն ցեղին կրնայ ունենալ այլ պատճառ մեզ անծանօթ։ Զստուգաբանութիւն Խորենացւոյն կրնանք ընդունել միայն՝ դնելով թէ պատմութիւն ի վայր դնելոյ կիսոյ դիմացն Դիսակայ սուսերաւ՝ է վաւերական. այսինքն՝

է առնուած ժամանակակից աղբերէ, զոր օրինակ յերգոց վիպասանաց և կամ ի մեհենական պատմութենէ Ողիւպ (Ողիմպ) անուն քրմին Անւոյ, եթէ կար այնպիսի պատմութիւն և էր գլխաւոր աղբիւր Խորենացւոյն, որպէս ինքն ասէ, ի պատմութեան Արտաշիսի և Արտաւազդայ (Խոր. Բ. ԽԸ.)։ Ո՞չ ապաքէն կրնանք, այլ ստուգաբանութեանց պէս, և զայս ընծայել Խորենացւոյն անյագ միտման ստուգաբանելու։ Սակայն կը թուի թէ Դիմաքսեանք էին հին ցեղ։ Առ Բուզանդայ, որ յետ երգոց վիպասանաց է հնագոյն պատմական յիշատակարան մեր պատմութեան՝ կը յիշուի առ Տիրանաւ Վարազ ոմն իշխան Դիմաքսենից, որ էր մին յիշխանաց առաքելոց ածել զծերունի եպիսկոպոսն Դանիէլ ի կաթողիկոսութիւն յետ մահուն Յուսկան.—«Եւ յղեցին առ նա (առ Դանիէլ) զՄու իշխանն Սահառունեաց տոհմին, և զԱրտաւան իշխանն Վանանդայ, և զԿարէն իշխանն Ամատունեաց տոհմին, և զՎարազ իշխանն Դիմաքսենից» (Բուզ. Գ. ԺԴ.)։

Թէ Արտաշէս կամ Տրդատ, պսակեալն ի Ներոնէ, պսակեցաւ նաև ի Սմբատայ Բագրատունւոյ ըստ օրինակի թագաւորաց Հայոց, չէ ամենևին անհաւանական, մանաւանդ թէ կատարել այս կէ կրօնական արարողութիւնն, զոր Պարթևք ևս ունէին՝ էր հարկ վաւերացունելու համար նոր թագաւորն յաչս ժողովրդեան. հարկ էր և Արտաշիսի վարձատրել ըստ արժանւոյն զևր բարեմիտ ծառայս։ Այս է նիւթ ԽԷ. գլխոյ Բ. դպրութեան Խորենացւոյն։

Յաջորդ գլխոյն մէջ (ԽԸ.) կը պատմէ Խորենացին, թէ ինչպէս Սմբատ հրամանաւ Արտաշիսի երթալով ի քաղաքն կոյս Բագարան կ'սպանանէ զԵրուազ քրմապետ, զեղբայրն Երուանդայ, և կը կարգէ փոխանակ նորա մոգ.—«Զկնի այսորիկ հրաման տայ Սմբատայ երթալ յամուրն Բագարան, որ հուպ ի քաղաքն Երուանդայ ի վերայ Ախուրեան գետոյ, զի սպանցէ զԵրուազ եղբայր Երուանդայ։ Զոր կալեալ Սմբատայ՝ երկան զուլանէ հրամայէ կախել և ընկենուլ ի պտոյտ մի գետոյն։ Եւ ի տեղի նորա ի վերայ բագնացն կացուցանէ զընտանի Արտաշիսի, աշակերտ մոգի ուրումն երագահանի, որ յայն սակս մոգպաշտէ անուն կարդային։

Արտաշէս, ըստ Տակիտոսի, էր մոգ, ուստի հաւանական է թէ հաստատեց մոգութիւն փոխանակ կռապաշտութեան, զոր կ'առէին Պարթևք, բայց Հայք ընդունած էին ազդեցութեամբ Յունաց առ առաջին Արշակունեօք (Տիգրան)։ Թէ Արտաշէս (Տրդատ) ջնջեց կռապաշտութիւնը՝ անտի յայտնի է մանաւանդ, որ Սմբատ ոչ միայն զերի առաւ Երուազայ ծառաներն, իմա մեհենին պաշտօնեաներն՝ այլ և կողոպտեց տարաւ մեհենին բոլոր հարստութիւնը.

—«Եւ ապա աւար առեալ (Սմբատ) զգանձսն Երուազայ և ծառայս անձինս հինգ հարիւր, նաև զընտիր գանձուցն մեհենից՝ բերէ Արտաշիսի։ Եւ Արտաշէս պարգևէ Սմբատայ զծառայսն Երուազայ, բայց զգանձսն հրամայէ տանել Դարեհի Պարսից արքայի, յաւելլով և ինքն ի գանձսն ի շնորհակալութեան պատիւ, իբրու հօր և օգնականի»։ Ուստի հակառակ է այսմ այն՝ զոր կը պատմէ յետոյ, թէ Արտաշէս յետ շինելոյ զԱրտաշատ, որ այրեալն և աւերեալ էր (ի Կորբուլոնէ)՝ «շինէ ի նմա մեհեան և փոխէ ի Բագարանէ զպատկերն Արտեմեայ (Անահտայ) և զամենայն կուռս հայրենիս», ա. հ.։ Ծառայքն Երուազայ, զորս կը յիշէ Խորենացին այնպէս բացում թուով՝ ոչ թէ սովորական սպասաւորներ էին, այլ հաւանականապէս հերատուկք (hiérodule), այսինքն արք և կանայք նուիրեալք մեհենից, զորս սովոր էին ունել ընդ ձեռամբ քրմապետք ըստ Ստրաբոնի։

«Յայնժամ Սմբատայ զծառայսն Երուազայ, զոր գերեացն ի Բագարանէ, տարեալ բնակեցուցանէ ի թիկանց Մասեաց, ի նոյն անուն Բագարան կոչելով զձեռակերտն։ Ինքն անցանէ ի Պարսս ընծայատար Դարեհի, ոչինչ փոյթ տանելով զհռոմայեցւոց իշխանութեանէն»։ Կամի ասել՝ առանց նկատելու, թէ այն սերտ բարեկամութիւնն ընդ Պարթևս կարէր լինել անհաճոյ Հռոմայեցւոց. և կը թուի թէ եղաւ իսկ այնպէս. իսկոյն եկան հարկահանք և գունդ մեծ, զորս հազիւ կարաց ցածուցանել Արտաշէս.—«Իսկ ի գնալն Սմբատայ ի Պարսս՝ հասանեն հարկահանք կայսեր և սպայ ծանր ի սահմանս Հայոց. զորս մաղթեալ Արտաշիսի և կրկին տուեալ զհարկսն՝ հաշտեցուցանէ»։

Չիք տարակոյս, թէ Խորենացին չէ առանց աղբեր. միայն աղբիւրք նորա են շատ անգամ աննշան, և ինքն ևս երբեմն կամաւ կամ յանդէտս կ'ամոքէ պատմութիւնը։ Ի վախճանի ԼԶ. գլխոյն Խորենացին իմացուց, թէ Աբգարու և Սանատրկոյ պատմութեան համար իւր աղբիւրն էր Ղերուբնա.—«Ղերուբնա որդի Ափշադարայ դպրի գրեաց զամենայն գործս, որ ինչ յաւուրս Աբգարու և Սանատրկոյ, և եդ ի դիւանին որ յԵդեսիա»։ Հոս կ'իմացունէ, թէ ի Սանատրկոյ և այսր, մանաւանդ Արտաշիսի պատմութեան համար, աղբիւրք իւր էին՝ մեհենական պատմութիւն Ողիւպ անուն քրմի մը Հանւոյ, Պարսից մատեանք և Հայոց երգն վիպասանաց։ Չենք գիտեր թէ ո՛վ էր Ողիւպ և ոչ՝ թէ ինչ էին մեհենական պատմութիւնքն զորս գրեց նա։ Մեհենական պատմութեամբք սա կը հասկցուի, թէ Ողիւպ լինելով քուրմ Հանւոյ՝ մեհենին դիւաններէն հանեց Հայոց պատմութիւն մը. բայց այսպիսի գործ ոչ ու-

րեք յիշուած է, և ոչ Խորենացին, յորոյ ձեռին կը գտնուէր այն
պատմութիւն, ինչպէս կու տայ կարծել՝ տալ մեզ կատարեալ տե-
ղեկութիւն գործին վրայ, այնպէս որ յիրաւի է տարակուսել թէ
կար արդեամբ այնպիսի գրուած: Նոյն բան է Պարսից մատեաննե-
րուն համար: Հաւատարմագոյն աղբիւր Խորենացւոյն զԱրտաշիսէ
ըստ մեզ է երգն վիպասանաց. այս միայն ծանօթ է մեզ, և այն
ըստ մասին, այսինքն հատակոտորներէն, զորս կը գտնենք առ Խո-
րենացւոյն և այլ ուրեք ուրեք: Վիպասանք, այսինքն վիպասանու-
թիւնք, էին Գողթնացի Հայ երգչաց երգեր, գրո՞վ թէ անգիր՝ չէ
յայտ, յորս կը պատմուէին գործք Արտաշիսի, և կային առ Խորե-
նացւով, քանզի անդր կ'ուղարկէ նա զՄեկենաս իւր Սահակ, թէ-
պէտ հատակոտորք որ առ մեզ հասած են՝ չեն կացուցաներ կա-
տարեալ մարմին պատմութեան.—«Արտաշիսի վերջնոյ գործք բա-
զում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն որ պատմին ի Գողթան»:
Խորենացին կ'ըսէ համառօտիւ, թէ ինչ գործեր էին այնք—«շինել
զքաղաքն, և խնամութիւն ընդ Ալանս և ծնունդք զարմիցն, և
իբր տրփանք Սաթինկան ընդ վիշապազունսն՝ առասպելաբար, այ-
ինքն ընդ զարմս Աժդահակայ, որ ունէին զամենայն զառ ստորո-
տովն Մասեաց, մարտ ընդ նոսա և քայքայումն յիշխանութեանէն,
և սպանումն նոցա և հրկիզութիւն շինուածոցն, և նախանձ որ-
դւոցն Արտաշիսի և գրգռութիւն ընդ միմեանս ի ձեռն կանանցն:
Այս ամենայն, որպէս ասացաք՝ յայտնի են քեզ յերգս վիպասանացն»:
Ինչ որ է կամ կը թուի լինել Հայոց վիպասաններէն առնուած,
իբրև պատմական և արժանի հաւատարմութեան՝ բերուած է մեր
Պատմութեան պատմական մասին մէջ:

Խորենացւոյն ԾԴ. գլուխն է շփոթ: «Աղմուկ շփոթից լին-
եալ յարևմուտս, ընդ որ փութահացեալ Արտաշէս՝ նշկահեալ ընդ-
դիմանալ Հռոմայեցւոցն, ոչ տալով հարկս: Իսկ Դոմետիանոսի կայ-
սեր ցասուցեալ՝ զօրս ի վերայ Արտաշիսի առաքէ. որոց հասեալ ի
կողմանս Կեսարու՝ զՏիրան և զզօրսն արևմտեան առաջի եդեալ
ածեն տագնապաւ մինչև ցքաջ ընդարձակ հովիտն Բասենայ. յո-
րում ընդդէմ դիպեալ Արտաւազդ արևելեան և հիւսիսային զօրօքն
հանդերձ ամենայն որդւովքն արքայի, և պատերազմեալ սաստկա-
պէս՝ վտանգին: Յորոց ի վերջս պատերազմին հասեալ Սմբատ հա-
րաւային զօրօքն, ընդ մէջ անցեալ ապրեցուցանէ զորդիսն արքայի.
յաղթութիւն և զրաւ պատերազմին արարեալ: Զի թէպէտև ծեր-
գոյն էր՝ երիտասարդապէս յարդարեաց և մղեաց զճակատն, և հե-
տամուտ եղեալ հալածեաց զզօրն Հռոմայեցւոց մինչև ի սահմանս
Կեսարու: Զայս կամելով երգել յառասպելսն՝ Դոմետ զոմն ասեն կ-

կեալ, որ է ինքն կայսրն Դոմետիանոս. ոչ եկեալ այսր, այլ զհրաման նորա և զզօրս այլաբանելով յանուն նորա կոչէն»։ Խորենացին կամ աղբիւր նորա, տեսնելով յերգս վիպասանաց «Դոմետ ումն եկեալ», և կարծելով զայն Դոմետ (որ է Դոմիտիոս Կորբուղոն զօրավար Ներոնի) զկայսրն Դոմիտիանոս՝ կը համարի զԱրտաշէս ներշկահեալ Դոմետիանու և պատերազմեալ ընդ Հռոմայեցիս, ա. հ.։ Բայց Արտաշէս, ուրոյն այն պատերազմներէն, զոր ունեցաւ ընդ Հռոմայեցիս ի սկզբան թագաւորութեան իւրոյ՝ չունեցաւ այլ պատերազմ այն ազգին հետ։ Խորենացին որ չգիտեր Տրդատ-Արտաշիսի երկար պատերազմներն առ Ներոնիւ, տեսնելով ևս զանունն Դոմետ՝ կը կարծէ թէ Արտաշէս ունեցաւ պատերազմ ընդ Դոմետիանոսի, մինչ չէ իսկ յայտնի թէ Արտաշէս կենդանի էր առ Դոմետիանոսիւ. ըստ հաւանականագոյն հաշուոյ՝ Արտաշէս կը թուի մանաւանդ մեռած Դոմետիանոսի առաջին տարին, կամ ամաւ միով յառաջ կամ յետոյ, այն է 80-ին կամ 81-ին։

Նոյն ԾԴ. գլխոյն վերջին մասին մէջ ևս շփոթ է պատմութիւն Խորենացւոյն։ «Բայց ըստ բախտին եղեալ Արտաշիսի՝ մեռանի ի նոյն ժամանակի Դոմետիանոս ի Հռոմ, և զկնի նորա Ներուաս ոչ աւելի թագաւորեալ քան զմի ամ։ Ընդ որս առաւել հպարտացեալ զօրացն Հայոց և Պարսից՝ ասպատակ ևս ի Յոյնս արարին»։ Խորենացին կը կարծէ, թէ յետ մահուն Դոմետիանոսի և միամեայ թագաւորութեանն Ներուասայ, Հայք Պարսից հետ միանալով յարձակեցան ի Յոյնս, ա. հ.։ Այսպիսի յարձակումն ի Հայոց, միաբանութեամբ Պարթևաց, եղած կը գտնենք ի ժամանակակից պատմութեան ոչ յետ մահուն Դոմետիանոսի (95) առ Արտաշիսիւ, այլ ինքն առ Վաղարշիւ Ա.. Պարթևաց, այլ յետ մահուն Կոմոդոսի (195) առ Վաղարշիւ Դ. (191—208), որ մեր Վաղարշու հետ (195—210) յարձակեցաւ Հռոմայեցւոց վրայ. բայց Սեպտիմոս Սեւերոս (193—210) գալով յարևելս՝ վանեց զՊարթևս, և մեր Վաղարշ հաճեցոյց զնա ընծայիւք, տալով նաև պատանդս և զօր յօգնականութիւն։ Տես մասն Բ, գլ. ԺԲ, 9.

Նոյն շփոթութիւնը կը տեսնէ ԾԵ. գլխոյն մէջ։ Խորենացին կը դնէ զԱրտաշէս ոչ առ Դոմետիանոսիւ միայն (81—98), այլ և առ Տրայիանոսիւ (98—117)։ Գիտենք սակայն ի Դիոնէ, որ է գրեթէ ժամանակակից, թէ ինչպէս յառաջ քան զՏրայիանոս, առ Դոմետիանոսիւ, թերևս ի սկզբան իսկ կայսրութեան նորա (81), Արտաշէս մեռած էր, և կը թագաւորէր ի Հայս որդին Արտաշիսի Աշխադար (ըստ Խորենացւոյն՝ Տիրան), զոր Խոսրով արքայ Պարթևաց (107—121) մերժելով՝ դրած էր թագաւոր Հայոց զՊարթամասիր,

որդի եղբօր իւրոյ Բակրոյ. բայց Տրայիանոս կը պահանջէր ի Խոսրովայ՝ կոչել յետս զՊարթամասիր և թոյլ տալ Աշխադարայ երթալ յաթոռն, իսկ Խոսրով կ'ընդդիմանար, մինչև ի գալ Տրայիանոսի ի Հայս, կոչելով զՊարթամասիր, որ կը խնդրէր կայսրէն հաստատել զնա ի թագաւորութեան Հայոց՝ մերժեց զնա և յայտնեց նմա, թէ ունէր ի մտի բառնալ զթագաւորութիւնն Հայոց և առնել զՀայաստան նահանգ, ինչպէս բրաւ իսկ։ Իսկ Պարթամասիր սպանուեցաւ ի պատերազմի ընդդէմ Հռոմայեցւոց։

Խորենացին այս ԾԵ. գլխոյն մէջ տարբեր կ'ընծայեցունէ պատմութիւնը։ Ըստ Խորենացւոյն՝ Արտաշէս կը թագաւորէ տակաւին առ Տրայիանոսիւ, և Պարթամասիրայ դէպքն, այսինքն գալն առ Տրայիանոս և մերժուիլն ի նմանէ և սպանումը՝ կ'ընծայուին Մաժանայ քրմապետի, որպէս թէ Մաժան գալով առ Տրայիանոս՝ կ'ամբաստանէ զեղբարս իւր զԱրտաւազդ և զՏիրան, յուսալով ինքն առնուլ սպարապետութիւնը, բայց մերժուելով կայսրէն՝ կ'սպանուի եղբայրներէն։

Ահա պատմութիւն Խորենացւոյն. «Զայսու ժամանակօք լինի թագաւորեալ Հռոմայեցւոց Տրայիանոս, և խաղաղացուցեալ զամենայն արևմուտս՝ դիմէ ի վերայ Եգիպտացւոց և Պաղեստինացւոց, և նուաճեալ զնոսա ընդ իւրով ձեռամբ՝ խաղայ յարևելս ի վերայ Պարսից։ Աստ աճապարեալ Արտաշէս մեծապէս ընծայիւք իջանէ ընդ առաջ նորա, և թողութիւն ի նմանէ գտեալ՝ դառնայ յաշխարհս Հայոց։ Եւ Տրայիանոս անցեալ ի Պարսս և զամենայն զկամս իւր կատարեալ՝ դառնայ ընդ Ասորիս։ Ընդ առաջ նորա իջանէ Մաժան, մատնութիւն զեղբարցն առնէր. Գիտեա, ասէ, արքայ, եթէ զԱրտաւազդ և զՏիրան վտարանդիս ոչ արասցես և զզօրն Զարեհի ոչ հաւատասցես՝ հարկքն անաշխատ ի քեզ ոչ եկեսցեն։ Զայս արար Մաժան՝ քէն պահելով վասն Սմբատայ, զի և զնա նորա էր սնուցեալ. ընդ նմին և զՏիրան խորհեցաւ հանել, զի ինքն լիցի քրմապետ միանգամայն և սպարապետ արևմտից։ Զորմէ ոչինչ փոյթ արարեալ Տրայիանու՝ արձակէ ունայն։ Իսկ Արտաւազդայ և Տիրանայ իմացեալ զխորհուրդն նորա, դարան գործեալ յորս՝ սպանին զՄաժան, զոր տարեալ թաղեցին ի Բագնացն աւանի իբր զքրմապետ։ Իսկ Արտաշէս յայնմհետէ անսայթաք հարկեաց Տրայիանու, և յետ նորա Ադրիանոսի կայսեր զամենայն աւուրս»։

Խորենացւոյն Կ. գլուխն ունի Արտաշիսի մահուան և յուղարկաւորութեան պատմութիւնը, զոր Խորենացին որպէս թէ կ'առնու Արիստոնէ Պեղղացւոյ, որ էր մատենագիր առաջնոյ կիսոյ Բ. դարուն։ «Գեղեցիկ իմն — կ'ըսէ քերթողահայր մեր — պատմէ և Արիստոն

Փեղղացի (կարդա՝ Պեղղացի) յաղագս մահուանն Արտաշիսի: Բանզի
ի ժամանակի որպէս ապստամբեցին Հրեայք յԱդրիանոսէ Հռոմայե-
ցւոց թագաւորէ և ետուն պատերազմ ընդ Ռուփոսի եպարքոսի,
առաջնորդութեամբ առն ուրումն աւազակի, որոյ անունն էր Բար-
քոբայ (կարդա՝ Բարքոքեբաս), այսինքն աստեղ որդի, որ էր գոր-
ծովք չարագործ և սպանող, բայց անուամբ իւրով մեծաբանեալ
պարծէր, որպէս թէ յերկնից ծագեաց նոցա փրկիչ, իբր նեղելոց
և գերեաց: Եւ այնքան սաստկացոյց զմարտն՝ մինչև ի նա հայելով
ի բաց կացին ի հարկելոյ Հռոմայեցւոց Ասորիք և Միջագետք և
Պարսք ամենայն, քանզի էր և լուեալ, եթէ եմուտ յԱդրիանոս
ախտ ուրկութեան: Բայց մերն Արտաշէս ոչ երկմտեաց ի նմանէ:

Եւ եղև ընդ այն ժամանակս հասանել Ադրիանոսի ի Պաղես-
տինէ և սատակել զապստամբսն պաշարմամբ ի քաղաքի մի փոքր՝
հուպ յԵրուսաղէմ. վասնորոյ և ամենայն ազգին Հրէից հրամայեաց
մերժել ի հայրենի աշխարհէն, որ և ոչ ի բազում հեռաստանէ
հայեսցին յԵրուսաղէմ: Եւ ինքն շինէր զԵրուսաղէմ զաւերեալն ի
Վեսպիանոսէ և ի Տիտոսէ և յիւրմէ, և անուանեաց Եղիա յիւր ա-
նուն, որպէս և կայսրն իսկ Ադրիանոս՝ արեգակն: Բնակեցոյց ի
նմա հեթանոսս և քրիստոնեայս, որոց եպիսկոպոս էր Մարկոս ոմն:
Ընդ այն ժամանակս առաքեաց զօր ծանր զկողմամբք Ասորեստա-
նեայց, և մերոյն Արտաշիսի հրամայեաց երթալ ի Պարսս հանդերձ
իւրովք զիւգաստառօք (վերակացուօք չափուց և կշռոց, ըստ Գա-
թըրճեանի), զորոյ զհետ քարտուղարութեամբ լեալ այս այր, որ
զայս պատմութիւն ետ մեզ, հանդիպի Արտաշիսի ի Մարս ի Սո-
հունդ անուանեալ տեղւոջ:

Պատմի և հիւանդանալ նմա ի Մարանդի, ի Բախուրակերտ
աւանի, և զԱրեգոյ զօմն նահապետ Արեզենից տոհմին, զայր շոյտ
և շղոմարար և սուտակասպաս ի նորին խնդրոյ արձակէ յԵկեղեաց
յԵրիզա, ի մեհեանն Արտեմիդայ, խնդրել ի կռոցն բժշկութիւն և
բազում կեանս: Որոյ ոչ ժամանեալ դառնալ՝ հասանէ վախճան
Արտաշիսի: Եւ գրէ, եթէ որչափ ամբոխութիւնք մեռան ի մահ-
ուանն Արտաշիսի, սիրելի կանայք և հարճք և մտերիմ ծառայք,
և որպիսի շուք բազմադիմիս արարին առ ի պատիւ դիոյն, քաղա-
քական կարգօք և ոչ որպէս զբարբարոսս: Դագաղքն էին ոսկե-
ղէնք, գահոյքն և անկողինքն բեհեզեայ, և պատմուճանն որ զմար-
մնովն՝ ոսկեթել. թագ կապեալ ի գլուխն, և զէնն ոսկւով առաջի
եդեալ. և զգահոյիւքն շուրջ՝ որդիքն և բազմութիւն ազգականացն,
և առ այսոքիւք պաշտօնէիցն զինուորութիւնք, և նահապետքն և
նախարարութեանցն գունդք և միանգամայն զօրականացն վաշտք:

ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատեցին. և առաջի պղնձիս հարկանելով փողս, և զկնիսն ձայնարկու կուսանք սևազգեստք և աշխարող կանայք, և զհետ՝ բազմութիւն ռամկին: Եւ այսպէս տարեալ թաղեցին: Եւ շուրջ զգերեզմանաւն լինէին կամաւոր մահունք, որպէս վերագոյնն ասացաք: Եւ սորա այսպէս սիրելի եղեալ աշխարհիս մերոյ, թագաւորեալ ամս քառասուն և մի»:

Այս գլխոյն մէջ, ինչպէս տեսնուեցաւ՝ Խորենացին կը պատմէ նախ Հրէից ապստամբութիւնն առ Ադրիանոսիւ առաջնորդութեամբ Բարքոքեբայ անուն հրէին, և թէ ինչպէս Ադրիանոս նուաճելով զապստամբութիւնն՝ հանեց զհրեայս Հրէաստանէ, արգելլով նոցա ի հեռուստ անգամ մօտենալ Երուսաղեմի, զոր վերստին շինելով բազմամարդացուց օտար գաղթականներով, և կոչեց յիւր անուն Եղիա: Խորենացին իւր պատմութեան այս մասն առած է Եւսեբեայ Եկեղեցական պատմութեան հայերէն թարգմանութենէն հանդերձ սխալներովն: Արդարև Եւսեբիոս կ'ըսէ, թէ Արիստոն Պեղղացի գրեց այն ապստամբութեան պատմութիւնը, զոր Խորենացին կ'առնու առանց յիշելոյ զԵւսեբիոս: Բայց Խորենացին այն պատմութեան վրայ կը յաւելու ուրիշ պարագայ, որպէս զի գտնէ Արտաշիսի այն յուղարկաւորութեան փառաւոր պատմութեան ականատես վկայ: Ըստ Խորենացւոյն՝ Ադրիանոս, յետ նուաճելոյ զհրեայս կը ղրկէ զօր ծանր յԱսորեստան, և մերայն Արտաշիսի կը հրամայէ երթալ ի Պարսս մասնաւոր պաշտօնիւ: Արիստոն Պեղղացի, որ կ'երթար այն արշաւանին հետ իբրև քարտուղար, հանդիպելով Արտաշիսի ի Մարս (կամի ասել Հայոց Մարք կոչուած գաւառը)՝ լինի ականատես մահուան նորա և յուղարկաւորութեան, և կը գրէ պատմութիւնը, որմէ, ինչպէս կու տայ կարծել՝ կ'առնու Խորենացին:

Թէ այնպիսի փառաւոր յուղարկաւորութիւն եղած է Արտաշիսի՝ չէ անհաւանական, նա՛ արժանի և վայել իսկ էր այնպիսւոյ թագաւորի. բայց թէ մահն Արտաշիսի (եթէ է նա Տրդատն Տակիտոսի, որպէս ամենայն պարագայք պատմութեան նորա, ես և ըստ Խորենացւոյն, կը միաբանին հաստատել), դիպեցաւ առ Ադրիանոսիւ, իբր 137-ին, և Արիստոն Պեղղացի եղաւ ականատես այն մահուան և յուղարկաւորութեան՝ այս հակառակ է պատմութեան, և Խորենացին կը գործէ հոս սխալ մեծ, մանաւանդ թէ կու տայ իսկ կասկածել իւր հաւատարմութենէն: Տեսնենք թէ ո՛վ էր Արիստոն Պեղղացի, ո՛ր ժամանակի հեղինակ և ինչ գործեր ունէր: Արիստոն Պեղղացի էր առ Ադրիանոսիւ յառաջնում կիսու Բ. դարուն, և

ունէր գրուած մի, «Պայքար Պապիսկեայ ընդ Յասոնի Հրէի»։ Զայս գործ նորա կը յիշեն Կեղսոս, Որոգինէս, Հերոնիմոս և այլք․ բայց այս գրուածն էր աստուածաբանական։ Այլ ունէր նա թերևս ուրիշ գրուած պատմական, որմէ առած է Եւսեբիոս Հրէից պատմութեան պատմութիւնը․ բայց թէ Արիստոն այն պատմական գրուածին մէջ կամ այլուր գրեց նաև Արտաշիսի մահն և յուղարկաւորութիւնը՝ հակառակ է այս պատմութեան, և չկարէ ընդունիլ առանց բռնաբօսելու ժամանակագրութիւնը։ Դնելու համար զԱրտաշէս առ Ադրիանոսիւ՝ հարկ է տալ նմա իբր 80-ամեայ ժամանակ թագաւորութեան, այն է ի կայսրութենէն Ներոնի (55) մինչև ի պատերազմն Հրէից առ Ադրիանոսիւ (135)։ Եթէ ընդունինք ևս զհաշիւ Խորենացւոյն, որ կը դնէ զԱրտաշէս թագաւորեալ ի վերջին ամս Դոմետիանոսի, այն է իբր 80-ին՝ դարձեալ Արտաշէս լինի թագաւորեալ աւելի քան 55 տարի, մինչ ինքն իսկ Խորենացին կու տայ նմա թագաւորել 41 տարի։ Եթէ այս 41 տարին հաշուենք Ադրիանոսի արշաւանին տարիէն ի վեր (137 ըստ Խորենացւոյն)՝ Արտաշէս լինի թագաւորեալ ոչ առ Դոմետիանոսիւ, այլ առ Ներուասաւ, կամ ոչ 41, այլ 57 տարի, դարձեալ անհամաձայն պատմութեան Խորենացւոյն։ Զիարդ և իցէ՝ դնելն Խորենացւոյն զԱրտաշէս առ Ադրիանոսիւ և զԱրիստոն ոչ միայն պատմիչ, այլ և ականատես յուղարկաւորութեան նորա՝ է Խորենացւոյն պատմութեան առեղծուածներէն մին։

Ի պատմութեան յուղարկաւորութեան Արտաշիսի միւս ևս դժուարութիւն այն է, թէ «որդիք և բազմութիւն ազգականացն, պաշտօնէից զինուորութիւնք, նահապետք և նախարարութեանցն գունդք և միանգամայն զօրականացն փաշտք», այլև սիրելի կանայք և հարճք և մտերիմ ծառայք նորա գտանուեցան մօտ. միթէ բոլոր երկիրն և արքունիք և տէրութիւնն համօրէն թագաւորին հետ էին յայնմ հեռաւոր ճանապարհորդութեան։ Դարձեալ՝ Արտաշէս լինելով մօտ՝ չէ հաւանական թէ զրկեց մարդ տէրութեան հարաւային արևելեան ծայրէն մինչև հիւսիսային արևմտեան ծայրն, Եկեղեաց գաւառ, խնդրել բժշկութիւն ի կռոցն Անահտայ, որ գարշելի էր ըստ կրօնից մոգուցն։ Բայց թերևս մեր այս վերջին երկու առարկութիւնք չթուին այնպէս զօրաւոր։

Խորենացւոյն ԿԱ․ գլուխն է զԱրտաւազդայ։ Արտաւազդ չյիշուիր յարտաքին պատմութեան, սակայն հաւանական է թէ յաջորդեց հօրն սակաւ ժամանակ, թերևս աւուրս ինչ միայն։ Ըստ Խորենացւոյն՝ Արտաւազդ երթալով յորս զակամբ Գինայ (որ կը թուի լինել Երասխայ կամ Մեծամօրայ հիւսիսային վտակներէն մին),

խելագարեցաւ, և յածելով այսր անդր երիվարաւն մոլեգնաբար՝ անկաւ ի խոր վիհ և եղաւ անհետ.—«Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա:... Յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ անցեալ զկամրջաւն Արտաշատ քաղաքի, որսալ կինճս և իշավայրիս զակամբ Գինայ՝ ազմկեալ իմն ի ցնորից խելագարանաց, ընդ վայր յածելով երիվարաւն՝ անկանի ի խոր իմն մեծ, և խորասոյզ լեալ անհետի»: Բան այսպէս խելագարելով վիհ մը իյնալ և անհետանալն՝ աւելի բնական կը թուի մեզ և աւելի մօտ վիպասանաց առասպելին, թէ որովհետև վայրագ և բուռն էր Արտաւազդ, երթալով յորս Մասեաց կողմերն՝ սպանուեցաւ, թերևս թելադրութեամբ եղբարցն, և ելաւ համբաւ, թէ քաջք, այսինքն դևք ըստ սնապաշտ կարծեաց Հայոց, կալան զնա և կը պահէին: Զիարդ և իցէ բուն մահը՝ այս կարծեաց վրայ հիմնուած է ռամկական առասպելն, զոր կը յիշէ Եզնիկ, և աւելի մանր՝ Խորենացին: Այս գլխոյն մէջ Խորենացին կը յաւելու նաև վիպասանաց գեղեցիկ հատակոտորներէն մին, ուր Արտաշիսի անիծից կ'ընծայուի Արտաւազդայ կորուստը: Մենք արդէն բերինք այս գլուխն իբրև պատմական, թէպէտ պաճուճեալ ազգային վիպասանական և ժողովրդական քողով:

Խորենացին (Գլ. ԿԶ.) իւր պատմութեան Արտաւազդէ մինչև Խոսրով՝ աղբիւր կը ցուցնէ Բարդածան ոմն ասորի աղանդաւոր՝ հետևող Կնոստիկեանց վարդապետութեան: Սա որպէս թէ գալով ի Հայս, աշակերտելու համար «խուժ» Հայերն, և չընդունելով կ'երթայ յԱնի, և կարդալով Հայոց մեհենական պատմութիւնը՝ կը հանէ մեր թագաւորներուն գործերն, յաւելլով զգործս իւրոյ ժամանակին, և կը թարգմանէ ասորերէն, որ ապա կը թարգմանուի յունարէն.—«Զրուցէ մեզ զայս Բարդածան որ յԵդեսիայ. քանզի նա յաւուրս Անտոնինոսի վերջնոյ երևեցաւ պատմագրող: Որ յառաջ աշակերտեալ էր աղանդին Վաղենտինոսի, զոր յետոյ անարգեալ յանդիմանեաց, ոչ գալով ի ճշմարտութիւն, այլ միայն ի նմանէ զատուցեալ՝ ա՛յլ հերձուած յարդարեաց յինքենէ: Սակայն զպատմութիւնս ոչ ստեաց, զի էր այր կորովի բանիւք. որ և առ Անտոնինոս գրեաց թուղթ, և բազում ասացուածս արար ընդդէմ աղանդոյն Մարկիոնացւոց և բաշխից և կռոց պաշտաման զոր ի մերում աշխարհիս: Վասն զի եկն նա այսր, որպէս զի աշակերտել զօք կարասցէ ի խուժ հեթանոսացս, և իբրև ոչ ընկալեալ եղև, եմուտ նա յամուրն յԱնի, և ընթերցեալ զմեհենական պատմութիւնն, յորում և զգործս թագաւորացն, յաւելլով իւր և որ ինչ առ իւրեաւն, և փոխեաց զամենայն ի լեզու ասորի, որ և ապա

անտի լեզուէ ի յոյն բան:… Յայսմ պատմութենէ առեալ մեր երկրորդեցաք քեզ ի թագաւորութենէն Արտաւազդայ մինչև յարձանն Խոսրովու»:

Խորենացին Արտաշէսի պատմութեան համար բաւած էր սակաւ մի յառաջ, թէ Ուղիւպ քուրմ Հանւոյ հանեց Անւոյ մեհենին դիւաններէն Արտաշէսի պատմութիւնը, «և զայլ բազում գործս զոր ասել կայ մեզ առաջի»: Միթէ այն բազում գործոց մէջ չկայի՞ն նաև Արտաշէսի որդւոց, Տիրանայ և Տիգրանայ, մանաւանդ Արտաւազդայ գործերն, որ այնպէս մօտ յարաբերութիւն ունէին Արտաշէսի պատմութեան հետ: Բայց ընդունինք թէ Ուղիւպ հանած չէր Արտաշէսի և նորա ժամանակին պատմութիւնն ամբողջ, ուստի և հարկ եղաւ ասորւոյն Բարդածանայ մտնել Անւոյ դիւաններն և հանել զպատմութիւն Արտաւազդայ և եղբարց նորա: Միայն կը հարցունենք. Անւոյ դիւանին պատմութիւններն հարկաւ էին հայերէն. քանզի կ'ըսէ թէ Բարդածան փոխեց զայնս յասորի լեզու, և անկէ թարգմանուեցան յունարէն: Բարդածան գիտէր ուրեմն հայերէն: Ընդունինք թէ գիտէր: Ի՛նչ գրով գրուած էին այն պատմութիւնք, մինչ Հայք չունէին գիր նոյն իսկ ըստ պատմութեան Խորենացւոյն, որ կ'ըսէ թէ յառաջ քան զՄեսրոպ չկար հայերէն գիր: Եթէ ըսուի, թէ Հայք յառաջ քան զՄեսրոպ կը գրէին յունարէն կամ պարսկերէն տառերով՝ այս չլուծեր դժուարութիւնը. քանզի եթէ մեհենական պատմութիւնք կրնային գրուիլ յունարէն կամ պարսկերէն տառերով, ի՛նչ հարկ կար Մեսրոպայ գիր հնարել: Կը մնայ միայն ըսել, թէ այն պատմութիւնք գրուած էին պարսիկ լեզուաւ:

Խորենացին կամի հաւատարմացուցանել մեզ թէ Բարդածան, թէպէտև էր հերձուածող՝ «սակայն զպատմութիւնս ոչ ստեաց, զի էր այր կորովի բանիւք»: Ընդունինք թէ Բարդածան էր ճշմարտախօս, բայց չենք կրնար ընդունել թէ էր «պատմագրող»: Պատմութիւնն գիտէ զնա անուանի Կնոստիկեան, որ գրեց զբաշխից և ըղբախտից, այսինքն ճակատագրի վրայ. այսպէս գիտեն զնա Եւսեբիոս, Եպիփան, Հերոնիմոս, Եփրեմ և այլք. բայց չիք ուրեք յիշուած թէ էր նա նաև պատմագրող. և ոչ կը գտնենք բաւական պատճառ ի հաստատութիւն վկայութեան Խորենացւոյն, թէ Բարդածան եկաւ ի Հայս «աշակերտել զոք ի խուժ հեթանոսացս», և չեղև ընկալեալ. և եթէ չեղև ընկալեալ, ի՛նչպէս գտաւ մուտ ի դիւանն մեհենին Անւոյ և ի՛նչ շահ ունէր հանել այն դիւանէն քանի մը հայ թագաւորաց պատմութիւնը: Այն ևս խնդիր է, թէ բնաւ կա՛ր յԱնի որևիցէ լեզուաւ մեհենական պատմութիւն, այս-

ինքն տարեգիր, զոր կը գրէին քուրմք մեհենին։ Խորենացին այսպիսի մեհենական պատմութեան գոյութեան վրայ չտար մեզ ուրիշ վաւերական վկայութիւն՝ բայց իբր երկու կարծեցեալ աղբիւրներէն, զորս որպէս թէ Ողիւպ ումն քուրմ, և ապա Բարդածան ասորի հանեցին այն մեհենին դիւաններէն։

Բայց կայ նաև ուրիշ կարևոր պատճառ, որ չթողուր մեզ հաւատալ, թէ Բարդածան այն քանի մը գլուխներն, Արտաւազդայ, Տիրանայ, Տիգրանայ, Վաղարշու և Խոսրովայ վրայ, հանեց Անւոյ մեհենական պատմութենէն։ Եթէ արդարև կար ճշմարիտ մեհենական պատմութիւն յԱնի, և Բարդածան տեսաւ զայն՝ պիտի տեսնէր հոն, յԱրտաւազդայ մինչև Խոսրով, ի նախորդն մեծին Տրդատայ ըստ Խորենացւոյն, այսինքն մինչև 226, ոչ թէ չորս, այլ եօթն թագաւոր, զորս գիտէ արտաքին պատմութիւնն մեծաւ մասամբ ժամանակակից, և որոց պատմութիւնն ունի սերտիւ աղերս ընդ պատմութեան Հռոմայեցւոց (Տրայիանոսի, Ադրիանոսի, Անտոնինոսի Պիոսի, Ղուկիոսի Վերոսի, Կոմոդոսի, Սեպտիմոսի Սևերոսի, Կարակալլայի, Մակրինոսի, Աղեքսանդրի Սևերոսի) և Պարթևաց (Վաղարշու Ա., Բակրոյ, Խոսրովու և Վաղարշու Բ, Գ. և Դ.), զորոց գրեցին նշանաւոր պատմիչք ժամանակակիցք և իբր ժամանակակիցք, Դիոն Կասսիոս, Հերոդիանոս, Եւտրոպիոս, Սեքստոս Ռուփոս, Սպարտիանոս, Յուլիոս Կապիտոլինոս, Ղուկիանոս։

Խորենացին ԿԱ. գլխոյն վերջը յարելով—«Եւ առնու զթագաւորութիւնն Տիրան եղբայր նորա»՝ կ'սկսի գլուխն ԿԲ. այսպէս. «Թագաւորէ Հայոց Տիրան որդի Արտաշիսի յերրորդ ամի Պերոզի առաջնոյ, Պարսից արքայի»։ Խորենացւոյն Պերոզն է Վաղարշ Գ, յաղթողն Հռոմայեցւոց, ինչպէս յայտնի է ԿԴ. գլխէն—«Պերոզ արքայ Պարսից ի Հռոմայեցւոց իշխանութիւնն արշաւեաց, ուստի և Պերոզ անուանեցաւ, որ է յաղթող, քանզի յառաջ անուանիւր Վաղեգեսոս (Վաղարշ) ի Յունաց լեզուն»։ Արդ այս Վաղարշ, ըստ ստոյգ ժամանակագրութեան Պարթև թագաւորաց՝ է 149—191. ապա Տիրան, ըստ Խորենացւոյն, թագաւորեց 152-ին, այն է երրորդ տարին Վաղարշու։ Եթէ, ըստ Խորենացւոյն, Արտաշէս մեռաւ իբր 137-ին, Հրէից պատերազմէն սակաւ մի յետոյ առ Ադրիանոսիւ, ինչպէս տեսանք, և Տիրան (որ է գրեթէ անմիջական յաջորդ նորա, քանզի Արտաւազդ մեռաւ «յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ») թագաւորեց Վաղարշու երրորդ տարին, ապա թագաւորած է աւելի քան 15 ամօք յետոյ քան զԱրտաշէս, և ոչ իսկ և իսկ զկնի նորա։ Չկրնար ըսուիլ, թէ Վաղարշու թուականն է սխալ, քանզի նոյն Խորենացին զՎաղարշ կը դնէ Մարկոս

Աւրելիոսի և Ղուկիոս Վերոսի ժամանակ (161—180). բայց գիտենք արտաքին պատմութենէ, թէ Տիրան (կամ Աշխադար՝ ըստ արտաքին ժամանակակից պատմութեան) թագաւորեց Դոմետիանոսի առաջին կամ երկրորդ տարին (81 կամ 82) մինչև 107 կամ 108, այն է առաջին կամ երկրորդ տարին Պարթևաց թագաւորին Խոսրովու (107—121), որ ընկէց զնա աթոռէն։ և դրաւ զիւր եղբօրորդին զՊարթամասիր, որոյ պատճառաւ գժտեցաւ ընդ Տրայիանոսի, ինչպէս արդէն տեսանք։ Բայց Խորենացւոյն ժամանակագրութեան սխալներն մի առ մի ցուցնել աւելորդ աշխատութիւն է. այսչափ միայն բաւական է ըսել, թէ Խորենացւոյն ոչ միայն ժամանակագրութիւնն, այլ և յաջորդութիւնը, զոր կու տայ Հայ թագաւորաց Արտաւազդէ մինչև Խոսրով՝ են կրճատ, խառնակ և բոլորովին տարբեր արտաքին ժամանակակից պատմութենէ։ Թողլով զայս ամենայն՝ գանք ի պատմութիւն Տիրանայ և յաջորդաց նորա։

Ըստ Խորենացւոյն՝ Տիրան էր յոյլ, զբօսասէր.—«Սորա ոչինչ պատմին գործք մեծամեծք, այլ միայն թէ մտերմութեամբ ծառայեաց Հռոմայեցւոց. եկաց խաղաղութեամբ, որսոց և զբօսանաց պարապեալ, *որպէս ասեն*։ Այս բանք «որպէս ասեն»՝ կը ցուցնեն, թէ աղբիւր Խորենացւոյն էր ո՛չ թէ մեհենական պատմութենէ հանուած, այլ հասարակաց զրոյցներու կամ երգերու հաւաքածոյ մը պարսիկ կամ ասորի լեզուաւ, զոր ունէր Խորենացին ի ձեռին։

Զարմանալի է, որ Խորենացին աւելի քան քսան տարի թագաւորող Տիրանայ գործերէն ուրիշ բան չգտնէր պատմելու արժանի՝ բայց միայն թէ Տիրան ունէր երկու ձի, զարմանալի արագ.— «Ձիոց երկուց լեալ (սորա), թեթև առաւել քան զՊեգասոս, երագութեամբ անբաւ, զորս ոչ երկրակոխս, այլ օդագնացս համարէին, զոր խնդրեալ հեծանել Դատաքէի ուրումն իշխանի Բզնունեաց՝ պարծէր ընչեղագոյն գոլ քան զարքայ»։ Միւս եւս գործ Տիրանայ յիշեալ ի Խորենացւոյն՝ էր տալ նորա Արշակունեաց բնակելոյ ի Հաշտեանս, որոց նեղ կու գար այն գաւառն՝ Աղիովտի և Առբերանոյ գաւառներն.—«Եկեալ առ նա կանխագոյն իւրոյ ազգին Արշակունեաց որ էին ի կողմանս Հաշտենից՝ ասեն. Ընդարձակեա մեզ զժառանգութիւնս, զի նեղ է, քանզի բազմացաք. և նա հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ ի գաւառն Աղիովտի և Առբերանոյ»։

Տիրանայ յուլութեան և թուլութեան իբրև նշան կը թուի յաւելուլ Խորենացին զառանձնանալն նորա Եկեղեաց գաւառին Զրմէս աւանը, թողլով կառավարութեան հոգն իւր սիրելիներէն Երախնաւու անուն Անձևացի պատանւոյ մը, զոր կը գովէ Խորե-

նացին, իբրև ընտիր և համեստ և ի ցանկութիւնս մարմնոյ օրինաւոր, թողլով նմա զմին ի կանանց, զինչս և զերկրորդութեան պատիւն, զոր ունէր Արտաւազդ. մեռեալն անորդի, և օգնական Դրուասպ ումն պարսիկ, խնամի նախարարաց Վասպուրականի, որում և պարգևած էր գեղեր և ագարակներ.—«Յաւուրս սորա ասեն լեալ զպատանի ումն յազգէն Անձևացեաց, սէգ յամենայնի, Երախնաւու անուն կոչեցեալ. որ առնէ կին զվերջին կանանցն Արտաւազդայ զոր ի Յունաց էր ածեալ: Եւ քանզի զաւակ ոչ գոյր Արտաւազդայ՝ արքայ թողու յԵրախնաւու զամենայն տունն Արտաւազդայ: Զի ասէին զնա այր ընտիր լինել և համեստ յամենայնի, այլ և ի ցանկութիւն մարմնոյ իբրև զօրինաւոր ոք: Զոր սիրեալ արքայի՝ տայ նմա զգահն երկրորդական զոր ունէրն Արտաւազդ՝ և զհօգս արևելեան զօրուն ի նա հաւատացեալ՝ առ. նմա թողու զԴրուասպ ումն պարսիկ զմտերիմ իւր, որ խնամացեալ էր ընդ նախարարսն Վասպուրականի, որում տուեալ էր զաւանն Տատեօնս հանդերձ ագարակօքն, և զայգին մեծ յոր մտանէր առուն՝ գետ հանեալ ի ծովէն Գայլատուայ»: Արդարև մեհենական տարեգիրներէ հանուած պատմութեան համար չնչին դէպք: Ի վախճանի կը գնէ Խորենացին զօրինակ մահուն Տիրանայ, թէ «մեռաւ ի ճանապարհի, ձեան հիւսխոյ կալեալ»:

Չիք տարակոյս, թէ այս ընտանեկան դիպուածք, ուր քաղաքական յարաբերութեանց յիշատակութիւն ամենևին չկայ՝ առնուած են երգերէ, ինչպէս նաև երգէ առնուած է ԿԳ. գլխոյն պատմութիւնն զՏրդատայ ումեմնէ Բագրատունւոյ, զոր կը բերէ Խորենացին, ինչպէս հաւանական է՝ ի շնորհս Բագրատունեաց, որոց այնպէս բարեկամ է, ապա թէ ոչ՝ չունէր քաղաքական պատմութեան մէջ ամենևին տեղի, որպէս ինքն իսկ Խորենացին կը խոստովանի— «Զայս աւելորդ եղև պատմել մեզ զնահատակութիւն առնն յանկարծի».—«Տրդատ ումն անուն յազգէն Բագրատունեաց, որդի Սմբատայ, այր սրտեայ և ուժեղ, կարճ հասակաւ և գծուծ տեսլեամբ, զոր իւր փեսայացոյց արքայ Տիրան ի դուստր իւր յԵրանեակ. որ ատեցեալ զայր իւր զՏրդատ պչրանօք և պռստելեաւ կայր զօրհանապազ, աւագելով զինքն իբր թէ չքնաղագեղ ընդ վատակերպոյ, և քաջատոհմիկ ընդ վատթարազգւոյ բնակէ: Ընդ որ զայրացեալ Տրդատ՝ յաւուր միում գանէ զնա սաստկապէս, և կորեալ զգեղձան հերսն և զվարսիցն փետեալ զխոպոպիս՝ հրամայէ քարշել արտաքս և ընկենուլ ի սենեկէն: Եւ ինքն գնաց ապստամբեալ ի կողմանս ամրութեանն Մարաց. և հասեալ ի Սիւնեաց աշխարհն՝ ժամանէ նմա

համբաւ մահուանն Տիրանայ. զոր լուեալ դադարէ անդ։ Եւ եղև յաւուր միում կոչել զնա յընթրիս Բակրոյ նահապետին Սիւնեաց, և յուրախանալն գինւոյ՝ տեսեալ Տրդատայ զկին մի, զի յոյժ գեղեցիկ էր և երգէր ձեռամբ, որում անուն էր Նազինիկ՝ տրփացաւ, և ասէ ցԲակուր. Տուր ինձ զվարձակս զայս. և նա ասէ. Ոչ տամ, զի հարճ իմ է։ Իսկ Տրդատայ բուռն հարեալ ի կինն՝ յիւրն քարշեաց ի բազմականն. շամշելով վաւաշէր ըստ օրինակի երիտասարդի անարգել տարփաւորի։ Ընդ որ խանդացեալ Բակրոյ՝ յարեաւ հանել զնա ի նմանէ։ Բայց յառն կացեալ Տրդատայ, ծաղկակալ սկտեղըն իբր զինու վարեցաւ, նաև զբարձակիցսն ի բազմականացն ի բաց պուղեաց»։ Խորենացին յաւելլով իւր կողմանէ—«Եւ անդ էր տեսանել նոր զոմն Ոդիսեւս զՊենելոպայ զսեղխն սատակելով, և կամ զՂապիթեայցն և զյուշկապարկացն կըղեխն սատակելով, և կամ զՂապիթեայցն և զյուշկապարկացն կըռիւս ի վերայ Պերիթեայ հարսանեացն»՝—կը ցուցնէ թէ արդարև չէր անհմուտ քերթողահայրն մեր հելլենական դպրութեան բոլոր ճիւղերուն։ Յետ կռուին, ասէ Խորենացին, «յիւր վանսն եկեալ, իսկոյն ի ձի ելեալ հանդերձ հարճիւն՝ ի Սպեր գնաց»։ Որովհետև Տրդատ չէր անուն Բագրատունեաց, զորս ծագմամբ հրեայ կը համարէր Խորենացին՝ կը յաւելու. «Բայց գիտեա, զի ի թողուլ ազգին Բագրատունեաց զօրէնս հարցն՝ նախ խժական ժառանգեցին յորջորջումն, Բիւրատ և Սմբատ և այլ այսպիսի կոչմունս, զըրկեալ ի նախնական անուանցն, որպէս կոչէին յառաջ քան զուկեալ ի նախնական անուանցն, որպէս կոչէին յառաջ քան զուրանալն—Բագադիա, Տուբիա, Սենեքիա, Ասուդ, Սափատիա, Վազարիա, Ենանոս։ Եւ ինձ թուի թէ որ այժմ կոչին Բագրատունիք Բագարատ՝ Բագադիա է դա, և Ասուդ՝ Աշոտ. դոյնպէս և Վազարիա՝ Վարազ, որպէս Շամբատ՝ Սմբատ»։ Այլ զայսմանէ տես յառաջնում մասին մերում։

ԿԴ. գլխով Խորենացին կ՚անցնի ի պատմութիւն Տիգրանայ, իբրև յաջորդի և եղբօր Տիրանայ, և կ՚անուանէ զնա վերջին.— «Փոխանորդէ զՏիրան եղբայր նորա Տիգրան վերջին. թագաւորեալ Հայոց ի քսան և չորրորդի ամի Պերոզի արքայի, և երկայնակեաց եղեալ ամս քառասուն և երկու՝ մեռանի»։ Յայտնի է թէ «երկայնակեաց» ըսուած է ոչ թէ կենաց, այլ թագաւորութեան ժամանակին համար։ «Ոչինչ գործ—կը յաւելու Խորենացին—արժանի յիշատակի ցուցեալ, այլ յաղջկանէ միոջէ ի յունէ ի կալանս ըմբռնեալ ի ժամանակին՝ յորում փախճանեցաւն Տիտոս երկրորդ թագաւոր Հռոմայեցւոց որ անուանեցաւն Անտոնինոս Աւգոստոս», ակնարկելով զԱնտոնինոս Պիոս, որ մեռաւ 161-ին։ Զնոյն պատմութիւն կը կրկնէ ստորև նոր պարագաներով, այսինքն թէ յարշա-

ւանս Վաղարշու Գ-ի Հռոմայեցւոց վրայ (161), հրամանաւ նորա Տիգրան յարձակելով ի Միջագետս՝ կը բռնուի կնոջէ մը որ այն կողմերուն կ'իշխէր: Բայց Ղուկիոս Վերոս գալով ի Միջագետս՝ կ'ազատէ զՏիգրան, տալով նմա իւր ազգականներէն կին Ռոփի անուն, զոր թողուց նա, կ'ըսէ, երբ դարձաւ ի Հայս. բայց չորս պատանիներն, զորս ունեցաւ ի Ռոփեայ՝ ըրաւ ուրոյն ցեղ Ռոփսեան անուամբ.—«Յասպատակելն Պերոզի ընդ Ասորիս ի կողմանս Պաղեստինացւոց՝ վասն նորա և հրամանաւ նորին և մերն Տիգրան ի Միջերկրեայս. և ի կալանս ըմբռնեալ յաղջկանէ միոջէ իշխելոյ կողմանցն այնոցիկ, մինչդեռ Ղուկիանոս կեսար յԱթէնս զմեհեանն շինէր. որոյ և անցեալ զօրօք բազմօք ի Միջերկրեայսն յետ մեռանելոյն Պերոզի նուաճեաց զՀայս, և արձակեաց զՏիգրան: Ետ զՌոփի զկոյս զմերձաւոր իւր նմա կնութեան, զոր եկեալ ի Հայս ի բաց թողու, և ի նմանէ լեալ պատանիս չորս՝ ազգ սերէ յանուն մօրն իւրեանց Ռոփեայ՝ Ռոփսեան. և զառաջին մանկանցն գլուխ նահապետ կացուցանէ և կարգէ ընդ այլ նախարարութիւնս, զի մի անուանեսցին Արշակունիք»:

Թողլով այս պատմութեան ժամանակագրութեան անտեղութիւնը—(քանզի եթէ Տիգրան թագաւորեց Վաղարշու քսաներորդ չորրորդ տարին, որ կը հանդիպի 173-ին, ինչպէս կրնար ազատել զնա Ղուկիոս որ մեռած էր 169-ին, իբր չորս տարի առաջ) - գանք պատմական անտեղութեան: Եթէ Տիգրան հրամանաւ Վաղարշու, այսինքն իբրև օգնական նմա, մտաւ ի Միջագետս՝ էր թշնամի Հռոմայեցւոց, և Ղուկիոս չէր արձակեր զնա և հաստատէր յաթոռն, նաև կին ևս տար նմա իւր ազգականներէն: Բոլորովին տարբեր կը պատմէ, ինչպէս արդէն տեսանք՝ արտաքին պատմութիւնն, որ ոչ միայն ժամանակակից է, այլ և բանաւոր: Ի յարձակել Վաղարշու ի Միջագետս (161)՝ կը ղրկէ զզօրավար իւր Խոսրով ի Հայս: Սոյեմոս, որ է Տիգրան, ինչպէս յայտնի է պատմութեան պարագաներէն՝ ոչ թէ օգնական է Վաղարշու, այլ կը խնդրէ օգնութիւն Հռոմայեցիներէն, բայց չկրնալով դէմ ունել Խոսրովու խոյս կու տայ ի Հռոմ, ուր կ'առնու սենկլիտոսութեան պատիւ, թերևս նաև կին կայսերական տոհմէ, և յետ վանելոյ Պարթևաց Հայաստանէ՝ կը հաստատուի յաթոռ իւր: Տես մեր Պատմութեան երկրորդ մասին մէջ:

Կայ արդարև հայ թագաւոր բանտարկեալ, որ և, ինչպէս տեսանք մեր պատմական մասին մէջ՝ մեռած է ի բանտի, այն է Վաղարշ, զորոյ պատմութիւնն, ինչպէս կը տեսնուի՝ կը խառնէ

Խորենացին կամ աղբիւր նորա ընդ պատմութեան Տիգրանայ, ինչպէս պիտի տեսնենք ի ստորև։

Խորենացին ի վախճանի ԿԶ. գլխոյն կը յիշէ կարևոր ինչ կէտ, որ վերաբերութիւն ունի Հայոց հին կրօնից։ Կան ակնարկութիւններ ի հին պատմագիրս մեր, առ Բուզանդայ, Ագաթանգեղոսի և Խորենացւոյն, թէ Հայոց հնագոյն կրօնքն էր զրադաշտական, այսինքն պաշտօն կրակի, որ կը վառէր բագիններու վրայ անշէջ։ Այս պաշտաման գլխաւոր տեղիք էին ի վաղուց Բագաւան, քաղաք ի Բագրևանդ, յարևելեան մասին Հայոց, և յարևմտեան մասին, ի Դերջան՝ Բագայառիճ, որ ըստ Ագաթանգեղոսի՝ պարթևական լեզուաւ ունէր զնոյն նշանակութիւն, այսինքն Դիցաւան, ուր և կար «Միհրական մեհեան», նուիրեալ Հեփեստեայ, այսինքն կրակի։ Ըստ Խորենացւոյն՝ Արտաւազդ և Տիգրան որդի Արտաշիսի, յետ սպանանելոյ զեղբայր իւրեանց զՄաժան քրմապետ՝ թաղեցին զնա ի Բագաւան, իբրև նուիրական քաղաք Որմզդի, այսինքն Արամազդայ, որոյ պաշտօնեայ էր Մաժան։ Զինչ և իցեն հանգամանք անձին և մահուան Մաժանայ՝ հաւանական կը թուի թէ Մաժան ամն քրմապետ թաղուած էր ի Բագաւան։ Յետոյ, ասէ Խորենացին, Տիգրան Բ. իւր եղբօր գերեզմանին վրայ կանգնեց բագին, պատուիրելով որ զոհերէն վայելէին անցաւորք, և օտարք ընդունուէին հիւրընկալութեամբ.—«Վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուեալ զգերեզման եղբօր իւրոյ Մաժանայ քրմապետի ի Բագնացն աւանի որ ի Բագրևանդ գաւառի, բագին ի վերայ գերեզմանին շինեալ, զի ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեսցեն, և ընդունիցին հիւրք երեկօթիւք»։ Ի բանից Խորենացւոյն յայտնի է, թէ ոչ թէ Տիգրան հաստատեց զԲագաւան իբրև տեղի պաշտաման որմզդական հրոյ, այլ կար անդէն ի վաղուց իբրև նուիրական քաղաք։ Արտաշիր Սասանեան, ըստ Խորենացւոյն, յետ նուաճելոյ զՀայս՝ «զհուրն որմզդական ի վերայ բագնին որ ի Բագաւան՝ անշէջ հրամայեաց լուցանել»։ Յայտնի է թէ ինչպէս քաղաքն՝ նոյնպէս պաշտօնն վաղուց սովորական էր հոն, և Արտաշիր (կամ այլ ոք ի Սասանեանց, քանզի Արտաշիր մտած չէ ի Հայս) «առաւել ևս յորդորէ»։ Նոյնպէս հին էր հոն օտարներ հիւրընկալելու սովորութիւնն ի պատիւ Որմզդի կամ Արամազդայ, որ ըստ Յունաց ևս համարուած էր վանատուր, հիւրընկալ։ Խորենացին կը յուշէ, թէ յաջորդն Տիգրանայ, Վաղարշ, կարգեց հոն «տօն աշխարհախումբ ի սկզբան ամին նորոյ, ի մուտն նաւասարդի»։ Սակայն հաւանական է, թէ այս աշխարհախումբ տօն ևս կից էր այն պաշտաման և այնչափ հին՝ որչափ պաշտօնն։

Ագաթանգեղոս յիշելով զԲագաւան՝ կը ցուցնէ թէ պաշտօնն էր ի պատիւ Արամազդայ ոչ միայն իբրև Հիւրընկալ վանատուր դից, այլև իբրև դից նոր բերոց. տալով Արամազդայ նաև զանունն Ամանոր՝ կու տայ ակնարկել թէ տօնն ևս, իբրև համաշխարհի տօն՝ էր այնպէս հին, ինչպէս պաշտօնն, և Լուսաւորիչ փոխեց զայն ի տօն Յովհաննու Մկրտչի, յորոյ ի յիշատակ կը կատարուէր հոն ամէն տարի աշխարհաժողով տօն.—«Զյիշատակս վկայից բերելոց ժամադրեաց տօն մեծ հաչակել, յառաջագոյն կարծեալ սնոտեացն պաշտաման՝ ի ժամանակի դիցն Ամանորայ ամենաբեր նորոց պտղոց տօնից, Հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղւոջ պաշտէին՝ յուրախութեան Նաւասարդ աւուր» (Ագ. ՇԺԹ)։ Բուզանդ (Գ. ԺԵ.) առանց յիշելու հեթանոսական պաշտօնը՝ կ'իմացունէ թէ Բագաւան էր տեղի աշխարհաժողով տօնի.—«Յայնմ աւուր տօն դիպեցաւ յիշատակի մեծին Յովհաննու, որ ի Գրիգորէ և ի Տրդատայ յաւանին Բագաւանին կարգեալ էր. աշխարհաժողովք մարդկան ժողովեալ էին»։ Ահա հին աշխարհախումբ տօնն քրիստոնէացեալ։ Թէ ուստի առնլով կու տայ մեզ Խորենացին զայն տեղեկութիւն, Բարդածանէ թէ այլուստ՝ չէ փոյթ. ինչ որ ըսինք՝ է պատմական։

Ըստ Խորենացւոյն (ԿԵ.)՝ Տիգրանայ Բ-ի կը յաջորդէ որդին Վաղարշ.—«Յետ մահուանն Տիգրանայ թագաւորէ Վաղարշ որդի նորին յերեսուն և երկու ամի հոմանուանն իւրոյ Վաղարշայ Պարսից արքայի»։ Արտաքին ժամանակակից պատմութիւնն ի մէջ Տիգրանայ (Սոյեմոս) և Վաղարշու գիտէ Սանատրուկ արքայ Հայոց որդի Սոյեմայ առ Սեպտիմոս Սեւերոսի, այլ զՎաղարշ սորին որդի։ Վաղարշու Դ-ի, այն է յաջորդին Պերոզի 32-րորդ տարին առէ Խորենացին թագաւորեալ զմերն Վաղարշ.—«Յետ մահուանն Տիգրանայ թագաւորէ Վաղարշ որդի նորին յերեսուն եւ երկու ամի հոմանուանն իւրոյ Վաղարշայ Պարսից արքայի» (Խոր. Բ. ԿԵ.)։ բայց Վաղարշ Դ. թագաւորած չէ 32 տարի, նա թագաւորեց 191—208։ Մերոյն Վաղարշու թագաւորութեան հաւանական թուականն է 195—217, այսինքն Սեպտիմոս Սեւերոսէ մինչև Մակրինոս, կամ Պարթևաց Վաղարշու Դ-ի 4-որդ տարիէն մինչև Վաղարշու Ե-ի 9-երորդ տարին։

Խորենացին կը ցուցնէ զՎաղարշ մեր աշխարհաշէն, շինիչ երկուց քաղաքաց, որ են Վաղարշաւան և Վաղարշապատ, առաջինն իւր ծննդեան տեղը, և երկրորդն՝ անուանեալն Վարդգեսի աւան։ Վաղարշաւան չկայ ուրեք յիշուած՝ բայց միայն առ Խորենացւոյն, իսկ զՎաղարշապատ, որ չէք յիշուած յարտաքին մատենագիրս

(Ինճիճ. Ստոր. Հին Հայ. 461)՝ կը յիշեն Բուզանդ (Գ. Ե. և Դ. ԾԵ.) և Ագաթանգեղոս՝ բազում ուրեք, իբրև «արքայական կայան», այսինքն մայրաքաղաք (Ագ. ԺԵ), և իբրև «ձմերոց» (Ագ. ԺԱ)։ Զշինութենէ սորա կը պատմէ Խորենացին այսպէս, յիշելով զգեղեցկագոյնն յերգոց վիպասանաց. «Սա պատեաց պարսպաւ և զհզօր աւանն Վարդգեսի, որ ի վերայ Քասաղ գետոյ. զորմէ յառասպելն ասեն. Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, եկեալ նստեալ զՇրէշ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով, կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի»։ «Այս Երուանդ, կը յաւելու Խորենացին, առաջինն է Սակաւակեացն որ ի Հայկազանց, զորոյ զքոյրն կին առեալ Վարդգեսի՝ շինեաց զաւանս զայս և յորում Տիգրան միջին յԱրշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեանն Հրէից, որ եղև քաղաքագիւղ վաճառօք։ Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ և հզօր պատուարաւ և անուանեաց Վաղարշապատ, որ և Նոր քաղաք» (Խոր. Բ. ԿԵ.)։

Խորենացին յետ դնելոյ համառօտ զովեստ զՎաղարշէ, ասելով «Այլք լոկ կեցին, բայց ասեմ զսա և յետ մահուանն կեալ, յաղագս բարի անուանն քան զթուլագոյնս ի թագաւորաց» — (կամի ասել թէ ուրիշ թագաւորներ, նախորդք նորա, ապրեցան ցորչափ կեցին, սա յետ մահուանն ևս կենդանի է)՝ — կը պատմէ, թէ Հայոց վրայ յարձակող հիւսիսային ազգերու դէմ կռուելով մեռաւ. — «Վասն զի ի սորա աւուրս միաբանեալ ամբոխութիւն ի հիւսիսականացն, զԽազրաց ասեմ և զԲասլաց, արտաքս քան զդուռն Ճորայ ելանել, առաջնորդ և թագաւոր ունելով ինքեանց զՎնասեպ ումն Սուրհապ. որք անցեալ զտարբն այսր զԿուր գետով։ Որոց պատահեալ Վաղարշ ամբոխիւ մեծաւ և արամբք մարտկօք՝ ցիր դիաթաւալ կացուցանէ զամբոխն ընդ երեսս դաշտին, և ձիգ զհետ եղեալ անցանէ ընդ կապանն Ճորայ։ Ուր միւսանգամ միաբանեալ թշնամեացն՝ յօրինեցին ճակատ. զորս թէպէտ և վանեալ քաջացն Հայոց փախստականս առնէին՝ սակայն Վաղարշ մեռանի ի ձեռաց կորովեաց աղեղնաւորաց»։

Հիւսիսային ազգաց յարձակումը, զոր կը դնէ Խորենացին առ Վաղարշիւ՝ եղած է իբրև 60 ամօք յառաջ Պարթևաց Վաղարշու Բ-ի ժամանակ, այսինքն երբ 136-ին առ Ադրիանոսիւ, թելադրութեամբ Վրաց թագաւորին Փարսմանայ, զոր Վաղարշ Բ. ամբաստանեց ի Հռոմ. բայց Հռոմայեցիք ոչ միայն արդարացուցին զՓարսման, այլ և թոյլ տուին՝ նմա ի պատիւ մատուցանել զոհ ի Կապիտոլիոնին։ Ընդ այս զայրացեալ Վաղարշու՝ պատրաստեցաւ յարձակել Հռոմայեցւոց վրայ, բայց արգելուեցաւ։ Յաջորդ նորա Վաղարշ Գ. (Պերոզն Խորենացւոյն), և ապա Վաղարշ Դ. կատարեցին։

Ընդ վերջնոյն միաբան էր և մերն Վաղարշ (195). բայց ի դար Սևերոսի Սեպտիմոսի յարևելս 197՝ Վաղարշ մեր Հաշտեցուց զնա ընծայիւք, տալով ևս պատանդ և գունդ աղեղնաւորաց ի Հայոց՝ ինչպէս կը պատմէ Հերովդիանոս, մատենագիր Բ. դարու: Բայց յետոյ Կարակալլա, յարշաւանս իւր ի վերայ Պարթևաց, բանելով բանտարկեց (217) զՎաղարշ, որ և մեռաւ ի բանտի: Խորենացին կամ աղբիւր նորա շփոթած կը թուի Վաղարշու այս պատմութիւնն ընդ պատմութեան Տիգրանայ Բ. (Սոյեմոսի), ինչպէս արդէն յիշեցինք:

Գանք այժմ ի պատմութիւն Խոսրովու, ըստ տոհմային աւանդութեան՝ մեծին Տրդատայ հօր, զոր արտաքին պատմութիւնն կ'անուանէ Տրդատ Բ:

Խորենացին յետ պատմելոյ զմահն Վաղարշու՝ կը յարէ. «Եւ առնու զթագաւորութիւնն Խոսրով որդի նորա յերրորդ ամի Արտաւանայ Պարսից արքայի: Եւ նոյնհետայն միաբանեալ զզօրս Հայոց՝ անցանէ ընդ լեառնն մեծ, վրէժս պահանջելով զմահուան հօրն. և վանեալ սրով և գեղարդեամբ զհզօր ազգսն զայնոսիկ՝ մի ի հարիւրոց յամենեցունց պիտանեացն առնու պատանդս. և զիւրոյ տէրութեանն նշանակ՝ արձան հաստատէ հելլենացի գրով, որպէս զի յայտ լիցի ընդ հնազանդութեամբ լինել Հռոմայեցւոց» (Խոր. Բ. ԿԵ.):

Անցնել զԿովկաս, վանել այն հզօր ազգերն «սրով և գեղարդեամբ», և ոչ այսչափ միայն, այլ և պիտանիներէն,—«ի պիտանեացն» առնուլ հարիւրէն մի պատանդ՝ չէր արդարև դոյզն քաջութեան գործ: Ի՞նչ օգուտ էր սակայն Խոսրովու այնպիսի հեռաւոր սահմաններ, որպիսի էին այն բարբարոս ազգաց երկիրներն՝ կանգնել արձաններ (կոթող) հելլենացի գրով: Խորենացին կու տայ պատճառ.—վասն զի Խոսրով նուաճեց այն երկիրն մինչև անդր քան զԿովկաս. ապաքէն զայս կը նշանակէ ասելն՝ «և զիւրոյ տէրութեան նշանակ՝ արձան հաստատէ հելլենացի գրով»: Հելլենացի գիրն էր երկիւղ տալու համար այն ազգաց՝ թէ զՀռոմայեցիս ունէր իւր պաշտպան: Զարմանալի է մեր պատմութեան հայրը. երբեմն կ'ընէ մեր թագաւորներն ծոյլ, անպիտան, «որոց և զբօսանաց պարապեալ», «ոչ ինչ գործ արժանի յիշատակի ցուցեալ», և դարձեալ կ'ընէ զնոսա քան զԱղեքսանդր մեծ աշխարհակալ: Զիարդ և իցէ՝ Խոսրովու այս արշաւանաց պատմութիւնը կ'առնու Խորենացին որպէս թէ իւր Բարդածանէն. քանզի կը յաւելու անդէն (ԿԶ.). «Զրուցէ մեզ զայս Բարդածան որ յԵդեսիայ»: Ի վախճանի նոյն ԿԶ. գլխոյն կ'երկրորդէ զնոյն:

«Յայսմ պատմութենէ—իմա Բարդածանէ—առեալ մեր երկրորդեցաք քեզ ի թագաւորութենէն Արտաւազդայ մինչև յարձանն Խոսրովու»: Բայց և այնպէս անմիջապէս յաջորդ գլխոյն մէջ աղբիւրը փոխուելով՝ լինի «Աջող քարտուղարն Տրդատայ Ագաթանգեղոս»: Եւ արդարև Ագաթանգեղոսի պատմութեան համառօտութիւնն է ԿԷ. գլուխն, զոր կ՚սկսի այսպէս. «Որպէս ասացաք՝ ի Վաղարշայ առնու զթագաւորութիւնն Խոսրով որդի նորա, հայր որդւոյ մեծին Տրդատայ: Յաղագս սորա և համառօտմիցն կարճ ի կարճոյ իմն անցանելով աջող քարտուղարն Տրդատայ Ագաթանգեղոս՝ փոքր ի շատէ պատմէ զմահն Արտևանայ Պարսից թագաւորին, և զբառնալ տէրութեանն Պարթևաց յԱրտաշրէ (ի ձեռն Արտաշրի) որդւոյ Սասանայ, և զնուաճել Պարսից ընդ ձեռամբ նորա, և զքէնախնդիր լինել Խոսրովայ, հօր Տրդատայ, և ասպատակաւ հինից աւերել զաշխարհն Պարսից և Ասորեստանի: Յետ որոյ ասէ, թէ յղեաց Խոսրով յիւր բնիկ աշխարհն ի կողմանս Քուշանաց, զի իւր տոհմայինքն (այսինքն Պահլաւք) ի թիկունս հասցեն և Արտաշրի ընդդէմ կացցեն: Այլ նոքա, ասէ, չլինէին ունկնդիր, զի հաւանեալք և միամտեալք էին ի տէրութիւնն Արտաշրի քան ընդ տէրութիւն ազգատոհմին իւրեանց և եղբայրութեանն, և թէ՝ Խոսրով առանց նոցա վրէժս պահանջէ. և զնովիմբ ածեալ ասէ, թէ ամս տասն ատէպ ատէպ զայս օրինակ աւար առեալ զամենայն երկիրն յապականութիւն դարձուցանէր: Ապա ասէ և զգալն Անակայ նենգութեամբ, հրապուրեալ ի խոստմունս Արտաշրի, որ ասաց՝ եթէ զբուն պատուական զձեր սեպհական Պահլաւն՝ զայն անդրէն ի ձեզ դարձուցից, և զքեզ թագաւ փառաւորեցից: Վասնորոյ յանձն առեալ Անակայ՝ սպանանէ զԽոսրով»:

Բայց Խորենացին այս աղբիւրն ևս, իմա զԱգաթանգեղոս, բաւական չհամարելով՝ ԿԸ. և ԿԹ գլուխներով ինքն կ՚սկսի պատմել Պարթևաց ծագումը, և կու տայ Պարթև թագաւորաց ազգահամար մը, ընելով զՊարթևս, ըստ աւանդութեան իբրև Ափղանաց, (Քոնթ տը Քոբինոյ, Պատմ. Պարս. հտ. Բ. էջ. 611), սերունդ Աբրահամու ի Քետուրայ, թէ ժամանակագրութեամբ և թէ անուամբք բոլորովին նոր և տարբեր յոյն և հռոմայեցի ժամանակակից պատմիչներէ, որպիսի են Յուստինոս, Տակիտոս, Յովսեպոս և այլք, որոց զպատմութիւն կը հաստատեն դահեկանք.—«ՅԱդամայ քսաներորդ առաջներորդ նահապետ մեզ զԱբրահամ աստուածային պատմութիւնքն ցուցանեն, և ի նմանէ եղեալ ազգդ Պարթևաց: Քանզի, ասէ, յետ մեռանելոյն Սառայի առեալ Աբրահամու կին զՔետուրայ, յորմէ ծնան Եմրան և եղբարք նորա, զոր Աբրահամ ի

կենդանութեանն իւրում մեկնեաց յԽսահակայ, արձակելով յերկիրն արևելից: Յորոց սերեալ ազգ Պարթևաց. և ի նոցանէ Արշակ քաջ, որ ապստամբեալ ի Մակեդոնացւոց՝ թագաւորեաց յերկրին Քուշանաց ամս երեսուն և մի, և յետ նորա որդի նորին Արտաշէս ամս քսան և վեց, ապա Արշակ նորին որդի որ կոչեցաւ մեծ, որ զԱնտիոքոսն եսպան, և զՎաղարշակ զեղբայր իւր թագաւոր կացոյց Հայոց, երկրորդ իւր առնելով: Եւ ինքն չուեալ ի Բահլ՝ հաստատեաց զթագաւորութիւնն իւր ամս յիսուն և երիս. վասնորոյ զարմք նորա Պահլաւք անուանեցան, որպէս և եղբօրն Վաղարշակայ՝ ի նախնւոյն անուն Արշակունիք: Եւ են թագաւորք Պահլաւիկք այսոքիկ: Յետ Արշակայ մեծի առնու զթագաւորութիւն նորա Արշական յերեքտասաներորդի ամի Վաղարշակայ թագաւորին Հայոց՝ ամս երեսուն. ապա Արշանակ՝ ամս երեսուն և մի, յետ որոյ Արշէզ՝ ամս քսան, ապա Արշաւիր՝ ամս քառասուն և վեց: Սորա լինին որդիք երեք և դուստր մի, որպէս յառաջագոյն ասացի, որոց անուանքն՝ անդրանկանն Արտաշէս կոչիւր, երկրորդին՝ Կարէն, երրորդին՝ Սուրէն, և դուստր անուանեալ Կոշմ:

«Արդ յետ հօրն վախճանելոյ, կամ եղև Արտաշիսի ազգաւ ի վերայ եղբարցն թագաւորել, զոր յանձն առեալ եղբարցն, ոչ առաւել ողոքական բանիւք և պատրողօք, քան թէ սաստիւ նուաճեալ նորա: Եւ Աբգարու պայման ուխտի և դաշինս ի մէջ հաստատեալ թագաւորել Արտաշիսի ծննդովք իւրովք: Իսկ եթէ հատցին զարմք նորա՝ եղբարցն մատչել ի թագաւորութիւն ըստ կարգի աւագութեան: Եւ Արտաշիսի զայս ի նոցանէ գտեալ՝ գաւառս պարգևէ, ազգ զնոսա սերելով յանուն իւրաքանչիւր. և ի վերոյ քան զամենայն նախարարութիւնս կարգէ, զնախնականն ի վերայ պահելով զանուն ազգին, զի կոչեցին այսպէս. Կարէնի Պահլաւ, Սուրէնի Պահլաւ և քոյրն՝ Ասպահապետի Պահլաւ, քանզի ի վերայ զօրաց էր այր նորա: Արդ անցցուք այսուհետև ընդ թիւ թագաւորաց ցեղին Արտաշիսի՝ մինչև ցբառնալ ի նոցանէ տէրութեանն: Յետ Արշաւրի, որպէս ասացաք՝ թագաւորէ Արտաշէս ամս երեսուն և չորս, Դարեհ՝ ամս երեսուն, Արշակ՝ ամս իննևտասն, Արտաշէս ամս քսան, Պերոզ՝ ամս երեսուն և չորս, Վաղարշ՝ ամս յիսուն, Արտաւան՝ ամս երեսուն և մի: Զսա սպանեալ Ստահրացւոյն Արտաշրի, որդւոյ Սասանայ, բառնալով զթագաւորութիւնն Պարթևաց՝ հանելով ի նոցանէ զաշխարհն ժառանգութեան»:

Որովհետև Խորենացին ԻԸ. գլխոյն մէջ պատմած էր չորս Պահլաւ տոհմերուն յաջորդութեան պայմանը, որ որպէս թէ եղած էր միջնորդութեամբ Աբգարու՝ հոս նոյն պատմութիւնը կրկնելուն

պատճառը կը ցուցնէ Խորենացին, այն է յիշեցունել ընթերցողաց Լուսաւորչին պարթեւական ծագումը.—«Բայց մի՛ աստանօր բամբասեսցես զմեզ իբր վաւերագործ ոք, որպէս թէ զմիանգամ պատմեալսն դարձեալ ասացաք. այլ գիտեա, զի ախորժելով վասն ազգականաց մերոյ Լուսաւորչին, քաջահմուտ կամեցեալ լինել ընթերցողացն՝ կրկնագրեցաք երկրորդելով»։

Աւելորդ է ըսել, թէ Խորենացւոյն ԿԸ. և ԿԹ. գլուխներն ամենեւին չեն վերաբերիր մեր պատմութեան և չունին կատարեալ պատմական ստուգութիւն, բաց ի թերեւս չորս Պահլաւ ցեղերուն պատմութենէն։ Խորենացին կը խոստովանի, թէ նաև Յոյներէն շատեր, ինչպէս Պաղեփատոս և Պորփիւր և Փիլեմոն և այլք բազումք գրեցին Պարթևաց վրայ. բայց ինքն կ'ընտրէ մանաւանդ առնուլ Խոռոհբուտ և Բարսումա անուն աննշան պարսիկ հեղինակներու առասպելախառն գործերէն, զատելով ստոյգն և ճշմարիտ.—«Բազում են ժամանակիս այսորիկ պատմողք ի Պարսից և յԱսորւոց այլ և ի Յունաց։ Քանզի յիսկզբան թագաւորութեանն Պարթևաց մինչև ցդադարումն՝ ընդ Հռոմայեցւոց կալան գործ, երբեմն հնազանդութեամբ և երբեմն պատերազմաւ, զոր պատմէ Պաղեփատոս և Պորփիւր և Փիլեմոն և այլք բազումք. բայց մեք ասասցուք ի մատենէն զոր եբեր Խոռոհբուտ զԲարսումայի»։

Թէ ո՛վ էին Խոռոհբուտ և Բարսումա՝ Խորենացին (գլ. Հ.) կ'իմացունէ մեզ սա համառօտ տեղեկութեամբ. «Այս Խոռոհբուտ դպիր եղեալ Շապհոյ թագաւորին Պարսից, և անկեալ ի ձեռս Յունաց, յորժամ Յուլիանոս զօրու հանդերձ ի Տիզբոն չոգաւ, և ի մեռանելն նորա անդ՝ ընդ Յոբիանու ի Յոյնս ընդ արքունական սպասաւորսն եկն, և մերոյ հաւատոյս դաւանեալ՝ անուանեցաւ Եղիազար, և յոյն լեզու ուսեալ՝ պատմագրեաց զգործս Շապհոյ և Յուլիանու։ Ընդ նմին թարգմանեաց և զառաջին պատմութիւնս մատեան մի, որ գերեկլից էր լեալ Բարսումայի ուրումն անուամբ, զոր Պարսք Ռաստսոհուն կոչեն. յորմէ մեք ուսեալ՝ երկրորդեմք այժմ ի գիրս յայս, թողլով զառասպելաց նորա բարբաջմունս»։

Հաւանական է թէ Խորենացին այս աղբերէն, Խոռոհբուտ—Բարսումայէ, առած է ինչ որ կը պատմէ մինչև ի գլուխն ՀԵ. Հաւանական է նոյնպէս, թէ Խորենացին ջանաց առնուլ այն առասպելախառն մատենէն, ինչպէս կ'ըսէ՝ «զստոյգն, որ ինչ ճշմարտութեան վայելէ պատմութիւն»։ Բայց թէ ունէր ի ձեռին նաև յոյն պատմիչներ Սասանեանց ժամանակին—Պաղեփատոս, Պորփիւր և Փիլեմոն՝ այս չէ ամենևին հաւանական. նախ՝ վասն զի անտեղի է ընդունել, թէ Խորենացին ունենալով այն յոյն պատմիչներն՝ թո-

ռուց գնոսա, և ընտրեց զառասպելախօսն Խոռոհբուտ—Բարսումա․ երկրորդ՝ վասն զի այն անուններով յոյն պատմիչներ չենք գտներ ի պատմութեան։ Կան արդարև Պաղեփատոս և Պորփիւր անուն պատմիչներ․ բայց սոքա չէին կրնար ծառայել Խորենացւոյն իբրև աղբիւր, քանզի էին հին, և յորոց Ստրաբոն և Եւսեբիոս կու տան մեզ հատակոտորներ միայն․ իսկ Փիլեմոն անուն պատմիչ ամենևին յիշուած չէ ի պատմութեան։ Ուստի չկրալի կրնանք ըսել, թէ Խորենացին չունէր այնպիսի յոյն հեղինակներ, և ստիպուեցաւ առնուլ այն աննշան աղբերէն, թէպէտ կային ուրիշ յոյն և լատին պատմիչներ Սասանեանց ժամանակին, ինչպէս Դիոն Կասսիոս և այլք, որոց անգէտ կը թուի Խորենացին։

ՀԱ․ գլխէն մինչև ՀԵ․ Խորենացին ունի Խոսրովու պատմութիւնն, այսինքն զպատմութիւն պատերազմաց նորա ընդդէմ Արտաշրի, Հռոմայեցւոց օգնականութեամբ և առանձինն, և ի վախճանի՝ զպատմութիւն սպանման նորա յԱնակայ։

Անաչառ խօսելով՝ պատմութիւնն Անակայ իւր սարօքն զրոյց (légende) է մանաւանդ քան պատմութիւն։ Թէ զկնի սպանման Արտաւանայ Խոսրով յետ տասն ամ նեղելոյ զԱրտաշիր կ՚սպանուի դաւով յԱնակայ, որդի սորա Գրիգոր կը տարուի ի Կեսարիա, Արտաշիր կը մտնէ ի Հայս, յերկիւղէ նորա Տրդատ որդի Խոսրովու կը տարուի նոյնպէս փախստական յարևմուտս, Տրդատ և Գրիգոր կը գտնեն զիրար յանծանօթս, Դիոկղետիանոս կայսր ի վարձ մենամարտութեանն ընդ թագաւորին Գթաց՝ կու տայ Տրդատայ հայրենի թագաւորութիւնը, որ մնացած էր տարիներով պարապ, վկայաբանական հանգամանք նահատակութեանն Գրիգորի և դարձին Տրդատայ ի քրիստոնէութիւն, այլովքն հանդերձ՝—են մեծաւ մասամբ անտեղի զրոյցք․ մինչ ժամանակակից պատմութենէ գիտենք, թէ յետ սպանման Արտաւանայ, Հայք օգնականութեամբ Հռոմայեցւոց (Աղեքսանդր Սևերոս) չեն թողուր մտանել ի Հայս Արտաշրի (226—240), և Շապուհ Ա․ յաջորդ նորա (240—271), որ մինչև 258 զբաղեալ էր Հռոմայեցւոց դէմ պատերազմներով՝ հազիւ յետ դաշանցն ընդ Փիլիպպոսի (244) իշխեց մտանել Հռոմայեցւոց երկիրներն, եկաւ մինչև յԱնտիոք և բռնեց զՎաղերիանոս դերի (260)։ Մինչև 259 արտաքին ժամանակակից պատմութիւնն չգիտեր Հայոց թագաւոր սպանեալ դաւով և զՀայս նուաճեալ ի Սասանեանց։ Ուստի հաւանական է թէ Տրդատ Բ, ինչպէս ըսինք, ըստ Հայոց Խոսրով որդի Վաղարշու՝ կը թագաւորէր ի Հայս։ 259-ին կը գտնենք թագաւոր Հայոց Արտաւազդ ումն (թերևս այն Արտաւազդ Մանդակունի, զոր ⁱազգային աւանդութիւնն—Խոր․ Բ․ ՀԶ․—կը հա-

մարի դոյեակ մեծին Տրդատայ) օգնական և բարեկամ Շապհոյ, մինչև խրատ տալ նմա արձակել զՎաղերիանոս: Ի յարձակել Ներսեհի (292—302)՝ Հայք (Արտաւազդ կամ մանաւանդ յաջորդ նորա Տրդատ Գ. մեծն) են արդէն բարեկամ Հռոմայեցւոց և ձեռնտու Գաղերեայ Ներսեհի դէմ պատերազմին մէջ, որոյ արդիւնք եղաւ քառասնամեայ խաղաղութիւնն, այն է Գաղերիոսի պատերազմէն (297) մինչև ի մահն Կոստանդիանոսի և Տրդատայ մեծի (337): Յայսմ քառասնամեայ ժամանակին է Հայոց դարձը, զոր այնպէս հրաշալի դիպօք խճողած են վկայաբանութիւնք, որոց հաւաքումն է Ագաթանգեղոս: Այս հրաշալի պարագաներէն են Անակայ գալուստն և որ ի կարգին: Այս համառօտութենէն կը տեսնուի, թէ Խոսրովայ դաւով սպանութենէն մինչև ի թագաւորելն Տրդատայ օգնութեամբ Հռոմայեցւոց (Դիոկղետիանոսի), և անտի այսր մինչև ի մահն Տրդատայ Հայոց դարձին վրայ ինչ որ կը պատմուի յաւանդութեան Հայոց՝ է լոկ զրոյց կամ վկայաբանութիւն (légende): Մենք այս ժամանակին (ի մահուանէն Արտաւանայ մինչև ի մահն Տրդատայ) մեր ազգային աւանդական պատմութիւնն ուղղած ենք իւրում տեղւոջ ժամանակակից պատմութենէ ըստ սկզբանց առողջ քննադատութեան:

Ըստ Խորենացւոյն՝ յետ սպանման Արտաւանայ վերջնոյ թագաւորին Պարթևաց յԱրտաշրէ՝ երկու Պահլաւ ցեղք, Ասպահապետին և Սուրենեան, իրենց ազգականին Արտաւանայ դէմ նախանձուէ՝ կը միաբանին Արտաշրի հետ. Կարենեան տունը միայն կ'ընդդիմանայ: Բայց Խոսրով, որ ըստ ոմանց եղբայր էր Արտաւանայ՝ կը փութայ յօգնութիւն նորա. բայց լսելով թէ սպանուած էր նա և թէ բոլոր Պարսից զօրքը և նախարարք, նաև ազգականք նորա, բաց ի Կարենեան ցեղէն, միաբանած էին ընդ Արտաշրի՝ կը դառնայ մեծ տրտմութեամբ.—«Քանզի յետ սպանանելոյն զԱրտաւան և թագաւորելոյն Արտաշրի որդւոյ Սասանայ՝ երկու ցեղք Պահլաւին, որ Ասպահապետի և Սուրենեան պահլաւն անուանին, նախանձ պահելով ընդ թագաւորեալ ցեղին իւրեանց հարազատութեան ազգին որ է Արշակունին՝ կամաւ յանձն առին թագաւորել Արտաշրի որդւոյ Սասանայ: Այլ մտերմութիւն պահելով առ եղբայրութիւն ազգականութեանն տուն Կարէն Պահլաւին՝ ընդդիմացան պատերազմաւ Արտաշրի որդւոյ Սասանայ: Բայց յառաջագոյն երբև լուաւ զաղմուկ շփոթին թագաւորն Հայոց Խոսրով՝ դիմեաց յօգնականութիւն Արտաւանայ, թէ հնար լիցի տճապարել ապրեցուցանել միայն զԱրտաւանն, և միջամուխ եղեալ յԱսորեստան՝ լսէ զբօթ մահուանն Արտաւանայ և զմիաբանութիւն ամենայն

զօրաց Պարսից և նախարարաց, նաև զիւրոյ ազգին Պարթևաց և Պահլաւկաց, բայց ի ցեղէն Կարենան, առ որ հրեշտակս առաքեալ՝ դառնալ յաշխարհս մեծաւ տրտմութեամբ և զինանօք (Խոր. Բ. ՀԱ.)։

Ագաթանգեղոս որ յամենայնի միաբան է ընդ Խորենացւոյն, մանաւանդ թէ աղբիւր նորա՝ չգիտեր Կարենան, Սուրենի և Ասպահապետի Պահլաւ ցեղեր, այլ առհասարակ բոլոր Պարթևաց համար կ'ըսէ, թէ միաբանեալ էին ընդ Արտաշրի.—«Տոհմքն և ազգապետքն և նախարարքն և նահապետքն Պարթևաց միամտեալ և հաւանեալ և նուաճեալ էին ի տէրութիւնն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին և եղբայրութեանն»։

Ըստ Խորենացւոյն՝ Խոսրով «նոյնհետայն փոյթ ընդ փոյթ ազդանէ Փիլիպպոսի կայսեր Հռոմայեցւոց, օգնականութիւն ի նմանէ խնդրելով»։ Բայց, կը յաւելու յաջորդ գլխոյն սկիզբը, «Ազմուկ խռովութեան լեալ ի թագաւորութեանն Փիլիպպոսի՝ ոչ կարաց ի Հռոմայեցւոց գնդաց պարապեցուցանել առ ի զօրավիգն լինել Խոսրովու։ Այլ օգնէ նմա ի ձեռն գրոյ, հրամայելով սատարել նմա յամենայն կողմանց։ Որոց առեալ այսպիսի հրաման՝ հասանեն նմա յօգնականութիւն յԵգիպտոսէ և յանապատէն մինչև ի ծովեզերն Պոնտոսի»։ Ագաթանգեղոս չգիտեր նաև այս պարագայն, այն է զխնդրելն Խոսրովու օգնութիւն Փիլիպպոսէ և զչկարել նորա օգնել Հայոց, և այս չէ իսկ ճշմարիտ, քանզի Փիլիպպոս թագաւորեց 244-ին, մինչ Արտաշիր մեռած էր 240-ին։

Խոսրով, ըստ Խորենացւոյն, ընդունելով ըստ հրամանին Փիլիպպոսի կայսեր անթիւ զօրաց բազմութիւն՝ կ'երթայ ի վերայ Արտաշրի, պատերազմելով կը փախցունէ զնա. և ղրկելով դարձեալ հրաւէր Պահլաւ ցեղերուն գալ միանալ ընդ նմա ընդդէմ Արտաշրի, ի չառնուլ նոցա յանձն՝ կը դառնայ տրտմութեամբ. սակայն կը լսէ, թէ իւր ազգականներէն Վեհսաճան, Կարենան Պահլաւ ցեղէն, կուգար ընտանեօք ի կոչ նորա, կ'ուրախանայ. բայց կ'առնու ընդհուպ լուր, թէ սպանուած էր նա ընտանեօք յԱրտաշրէ, բայց ի տղայ մանկանէ Պերոզամատ անուն, Կամսարականաց նախնին, զոր փախուցած էին յերկիրն Քուշանաց, այն է ի Բակտրիա (Բահլ). —«Գտեալ (Խոսրովու) զայսչափ բազմութիւն (ի Փիլիպպոսէ)՝ խաղայ ի վերայ Արտաշրի և ճակատ տուեալ՝ ի փախուստ դարձուցանէ, թափելով ի նմանէ զԱսորեստան և զայլ արքայանիստ աշխարհս։ Դարձեալ յղէ ի ձեռն հրեշտակաց առ իւր տոհմայինսն Պարթև Պահլաւիկ ազգս և առ ամենայն զօրս աշխարհին Քուշանաց, զի առ նա եկեալ վրէժս յԱրտաշրէ պահանջեսցեն, և զարժանաւորն

ի նոցանէ թագաւորեցուսցէ, զի մի՛ տէրութիւնն հեռասցի յին-քեանց: Իսկ նոցա ոչ առեալ յանձն, յառաջատասցեալ ցեղիցն որ Ասպահապետդ և Սուրէն անուանին՝ դառնալ Խոսրով յաշխարհս մեր, ոչ այնչափ ուրախացեալ ընդ յաղթութիւնն, որչափ ընդ վերջակացութիւն ազգականացն դժգմեալ: Յայնժամ հասանեն առ նա ոմանք ի հրեշտակաց իւրոց որք ի պատուականագոյն ազգն երթեալ էին, ի խորագոյն աշխարհն, ի նոյն ինքն ի ներքս ի Բահլ. բերին նմա համբաւ, թէ ազգական քո Վեհսաճան հանդերձ ցեղիւն իւրով Կարենան Պահլաւին ոչ հնազանդեաց Արտաշրի, այլ ի կոչդ քո դիմեալ գայ առ քեզ:

«Թէպէտև յոյժ զուարճացաւ Խոսրով ընդ լուր գալստեան ազգականացն՝ սակայն ոչ յամեաց ուրախութիւնն, ընդ հուպ հասանելով բօթն՝ եթէ ինքնին Արտաշիր հանդերձ միաբանութեամբ զօրացն հետահաս եղեալ՝ կոտորեաց զամենայն ցեղ Կարենան Պահլաւին, ջնջելով զամենայն արու յերիտասարդաց մինչև ցստնդիայս. բայց ի միոյ տղայոյ, զոր առեալ մտերիմ տան նորա, Բուրզ անուն՝ փախեաւ յաշխարհն Քուշանաց, հասուցանելով յազգայինս նորա. զոր բազում ջանիւ խնդրեալ Արտաշրի զմանուկն ի ձեռն առնուլ՝ ոչ կարաց յազգականացն կուսակցելոց, մինչև յոչ կամաց երդնուլ՝ անկասկած լինել մանկանն. վասն որոյ բիւր առասպելս յօդեցին Պարսք զնմանէ, անբանից սպասաւորել մանկանն: Սա է Պերոզամատն, նախնի մեծի ազգին Կամսարականաց, զոր յիւրում տեղւոջ պատմեսցուք»: (Տես Խոր. Բ. ՁԷ.):

Խոսրով զայրանալով, ասէ Խորենացին, այս կոտորածին վրայ, և չգտնելով օգնութիւն Հռոմայեցիներէն—քանզի յետ մահուն Փիլիպպոսի շփոթեցաւ Հռոմայեցւոց տէրութիւնն, և յաջորդք Փիլիպպոսի (249—259) Դեկիոս, Գաղղոս Վաղերիանոս չկրցան օգնել նմա՝—իւր զօրօք և հիւսիսային ազգերով յարձակելով Արտաշրի վրայ՝ կը հալածէ զնա մինչև ի Հնդիկս.—«Այլ մեք այժմ ասասցուք որ ինչ զկնի կոտորածին ազգին Կարենան Պահլաւին, զորոյ զվրէժն ոչ թուլագոյնս ինչ խնդրեաց թագաւորն Հայոց Խոսրով: Թէպէտ վախճանեալ Փիլիպպոսի և շփոթեալ թագաւորութեանն Հռոմայեցւոց, մարդ ի մարդոյ առնլով զտէրութիւնն սակաւաժամանակեայ, Դեկիոս և Գալլոս և Վաղերիանոս կայսերք, ոչ օգնեցին նմա՝ սակայն Խոսրով զօրօք իւրովք և այլ սիրելեօք յարեցելովք յինքն և հիւսիսային ազգօք Արտաշրի յաղթեաց, հալածական առնելով մինչև յաշխարհն Հնդկաց»:

Այս պատմութիւն Խորենացւոյն, թէպէտ մեծաւ մասամբ համաձայն Ագաթանգեղոսի, որ կու տայ Խոսրովու իբր տասը տարի

յարձակել Պարսից երկիրն, աւերել, քանդել և հալածել զԱրտաշիր՝ բոլորովին տարբեր է արտաքին ժամանակակից պատմութենէ։ Ըստ արտաքին ժամանակակից պատմութեան՝ ազգականք Արտաւանայ և ի Պարթևաց ոչ սակաւք կը միաբանին Հայոց հետ, որք օգնականութեամբ Աղեքսանդրի Սևերոսի կայսեր (222—235), և ոչ Փիլիպպոսի, որ աւելի քան քսան ամօք յետոյ է, իբր չորս, և ոչ տասը տարի, կռուելով կը վանեն զԱրտաշիր։

Ըստ Խորենացւոյն, որ դարձեալ միաբան է ընդ Ագաթանգեղոսի, կամ մանաւանդ կ'առնու ի նմանէ, Արտաշիր հալածուելով այսպէս ստէպ ի Խոսրովայ՝ կը խորհի տալ սպանանել զԽոսրով դաւով ի ձեռն Անակայ ուրումն, միոյ յազգականաց Խոսրովու։ Հոս յիշենք միայն հարևանցի, թէ Հայոց դարձին պատմութիւնը կ'սկսի Անակայ գալստեան պատմութեամբ, որոյ համառօտութիւնն է այս. «Փախուցեալ ի Խոսրովայ Արտաշիր մինչ ի յաշխարհն Հնդկաց և նեղեալ յոյժ՝ բազում խոստմունս նախարարացն առնէ, թէ ոք բուժեսցէ զնա յայնմանէ, թէ հնարիւք դեղոց և թէ գաղտնի խողխողմամբ սրոյ՝ սէսպէս պարգևս տալ խոստանայր. մանաւանդ Պարթևազանցդ, ասէ, դիւրահնար գտցես ի ձեռն կեղծաւոր սիրոյ զգաւելն։ Ազգականութեան անուամբ պատրել՝ ի դոստ վստահանալ. խոստանայր զբուն տունն դարձուցանել ի նոսա, որ Պահլաւն կոչէր, զարքայանիստ քաղաքն Բահլ և զամենայն աշխարհն Քուշանաց։ Նա և թագաւորութեան ձև և շուք խոստանայր, և զհաշարակ Արեաց, ընդ իւրով ձեռամբ երկրորդ իւր լինել։ Յոր հրապուրեալ Անակ որ էր ի ցեղէն Սուրենեան Պահլաւէ՝ յանձն առնու սպանանել զԽոսրով։ Եւ հատուածի պատճառաւ փախստական լինի յԱրտաշրէ. և զհետ մտանելով զօրացն Պարսից առ պատճառս, որպէս թէ փախստական վարելով զնա ընդ Ասորեստան՝ հանեն զառեզերբ սահմանացն Ատրպատականի ընդ մէջ Կորդուաց։ Զոր լուեալ մեծին Խոսրովայ յՈւտէացւոց գաւառին, իբր զԿարենեանցն կարծեցեալ եկաւորութիւն՝ գունդ առաքէ յօգնականութիւն Անակայ։ Որոց պատահեալ Անակայ՝ ածեն զնա հրամանաւ թագաւորին ի գաւառն որ անուանեալ կոչի Արտազ, ի տեղի դաշտավայրս, ուր յայտնեցան նշխարք սրբոյ և մեծի առաքելոյն Թադէի։

Եթէ պարտ է հաւատալ Խորենացւոյն՝ Անակայ օթևանին տեղն ի դաշտին Արտազու՝ դիպեցաւ «մօտ առ գիրս սրբոյ առաքելոյն», և հոն եղաւ յղութիւն մօր Լուսաւորչին. և այս անտարակոյս վերին իմն խնամով, որպէս զի նա որ Թադէոսի հոգևոր մշակութեան պակասութիւնը պիտի լնոյր՝ «առ հանգստարանաւ նորա առնոյր զլինելութիւն»։ Թերևս հնար էր գիտնալ, թէ Անակայ

օթեանին տեղն էր Թադէոսի Հանգստարանն. բայց թէ յղութիւնն ևս Լուսաւորչին եղաւ հոն՝ զայս գիտնալ չէր հնար ումեք առանց մասնաւոր յայտնութեան: Այսպիսի անհամ բարեպաշտ գիւտերու պիտի հանդիպինք ստէպ մեր այս պատմութեան մէջ: Ահա բանք Խորենացւոյն. «Ի բնակելն Անակայ ի դաշտին Արտազու՝ պատահէ սորա տեղի օթարանին մօտ առ գիրս սրբոյ առաքելոյն, որպէս թէ ի ներքսագոյն սրսկապանի խորանին, և անդ առեն զյղութիւն մօր սրբոյ և մեծի Լուսաւորչին: Վասն որոյ և զնորին առաքելոյ շնորհն ընկալեալ, որ առ հանգստարանաւ նորին զլինելութիւնն էառ՝ զնորին ելից զհոգևոր մշակութեան պակասութիւն»:

Իբր երկու տարի յետոյ Անակ կ՚սպաննէ զԽոսրով, և կը ջնջուի ընտանեօք, բաց ի տղայ մանկանէ որ կ՚ազատի, իբրև յորովայնէ սահմանեալ Լուսաւորիչ վերին խնամօք.—«Եւ յետ անցելոյ երկուց ամաց զալստեանն Անակայ ի Հայս՝ յերրորդումն սպանանէ զԽոսրով, որ թագաւորեաց ամս քառասուն և ութ, և մեռանի ինքն և ևւրքն ամենայն, պահելով խնամոցն Աստուծոյ զսա միայն, որ ակնարկութեամբ Աստուծոյ և շնորհօք առաքելոյն սնեղծանել կամ լուսաւորել սեմք յորգանդի մօրն, զառաքելութեան իւրոյ զշնորհս ի ձեռն տալով նմա: Իսկ զմնացեալս ի զրուցացս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»:

(Հոս ի դէպ է յաւելուլ իբրև գիտողութիւն, որ անունն Անակ՝ է յունարէն և կը նշանակէ բռնաւոր կամ սպանող):

Ըստ Ագաթանգեղոսի՝ Անակայ տան կոտորածէն փախուցեալ մանկունք են երկու, որոց զմին, Գրիգոր, փախուցանեն ի Յոյնս, և զմիւսն ի Պարսս.—«Բայց միայն երկու մանկունս փոքրկունս յորդւոցն Պարթևին պրծեալ ածն ապրեցուցանէր ի ձեռն դայեկաց ուրուք. զմին ի կողմանս Պարսից, և զմին ի կողմանս Յունաց առեալ փախչէին» (Ագաթ. Բ.): Առաջնոյն վրայ կը յօդէ Զենոբ Գլակ առասպել մը՝ զոր արժան կը համարինք յիշել: Ըստ Զենոբայ՝ որպէս թէ եղբայր Լուսաւորչին կը կոչուէր Սուրէն, զոր փախուցին ի Պարսս, ուր սնաւ նա առ հօրաքեռ իւրում, կնոջ թագաւորին Հեփթաղաց, և երբ զարգացաւ՝ գնաց Ճենաց երկիրն, ուր յետ մնահեփթաղաց, և երբ զարգացաւ՝ գնաց Ճենաց երկիրն, ուր յետ մնալոյ ամս տասն՝ թագաւորեց երկրին Ճենաց Ճինևտասն ամ: Ահա բանք Զենոբայ. «Իսկ զմիւս եղբայր նորա (Լուսաւորչին) որ կոչէր Սուրէն, մանկարարձքն փախուցին ի դուռն Պարսից, և անդ սնաւ առ հօրաքեռն իւրում, որ էր կին թագաւորին Հեփթաղաց Զուանշրի Հեփթաղի. որ իբրև զարգացաւ՝ գնաց յերկիրն Ճենաց յետ մահուն Խոսրովուհեայ (հօրաքեռ իւրոյ), և կացեալ անդ ամս տասն՝ թագաւորեաց անդ ի վերայ երկրին Ճենաց ամս Ճինևտասն: Զոր

ոմանք համբաւեն թէ Սգօն աւեն եղբօրն Գրիգորի, որ է Յակոբ· բայց ոչ գիտեն զստոյգն, զի Յակոբն այն հօրաքեռորդի էր սրբոյն Գրիգորի, և անուն մօր նորա Խոսրովուհի: Իսկ յորժամ մեռաւ մայր նորա, և զթագաւորութիւնն բարձին ի հօրէ նորա Տիրանայ—(ինչ թագաւորութիւն է այս, և ով էր Տիրան),—զի եսպան զնա ի պատերազմի արքայն Լփնայ Ռեգէս՝ ապա Յակոբ հանդերձ քերբն իւրով Սակդնէիւ մնաց որբ: Եւ յետ ժամանակաց քեռորդի նորա գնաց յաշխարհն Գթաց և անդ թագաւորեաց, զոր յետոյ Տրդատ ըմբռնեաց, մինչ առ արքային Յունաց էր: Զի սա էր, որ եկն ի պատերազմ ի վերայ Դիոկղետիանոսի արքային Յունաց, որպէս Ագաթանգեղոս պատմէ» (Զենոբ, էջ 21, 22):

Խորենացւոյն աղբիւր էր մինչև ցարդ (Գլ. ՀԳ.) Խոռոհբուտ: ՀԵ. գլխով Խորենացին կ'առնու դարձեալ նոր աղբիւր, այն է զՓիրմիլիանոս եպիսկոպոս Կեսարու, որմէ առած է, ինչպէս կ'ըսէ, ըզպատմութիւն իւր Խոսրովու մահուանէն մինչև ի թագաւորել Տրդատայ.—«Փիրմիլիանոս եպիսկոպոս Կեսարու Կապադովկացւոց՝ էր սքանչելի յուսումնասիրութեան, որ և ի աղայութեան իւրում առ Որոգինէս երթեալ վարժեցաւ: Սա բազում խօսս արար, յորոց մի է պատմութիւն հալածանաց եկեղեցւոյ, որ յառաջ յաւուրս Մաքսիմիանոսի և Դեկոսի յարեաւ, և որ հուսկ յետոյ յամս Դիոկղետիանոսի, շարայարեալ ի նա և զգործս թագաւորացն»: Ըստ Խորենացւոյն՝ Փիրմիլիանոսի այս հալածանաց պատմութեան մէջ գրած էր նաև Խոսրովու հալածանաց վրայ ի Հայս. բայց Խորենացին այս պատմութիւնն զվկայելոց ի Հայս, ինչպէս նաև այն, թէ Խոսրով ի պատերազմին Կարակալլայի ընդդէմ Վաղարշու մնաց չէզոք, չհամարելով ճշմարիտ՝ կը թողու.—«Գրէ բազում վկայեալս և ի Խոսրովայ ի մերում աշխարհիս. բայց զի ոչ ճշմարտութեամբ ուղիղ պատմէ, և ոչ զանուանս նշանակէ կամ զտեղի կատարմանցն՝ ոչինչ կարևորագոյն համարեցաք երկրորդել: Նոյնպէս և որ զԱնտոնինէ որդւոյ Սևերեայ ասէ՝ պատերազմեալ ընդ Վաղարշայ Պարսից արքայի ի Միջագետս և մեռանել ի մէջ Եդեսիայ և Խառանու, և մերոյն Խոսրովու ոչ յոք հակամիտեալ»:

Խոսրովու հալածանաց համար չունինք ըսելու բան. քանզի չէ անհաւանական, թէ թերևս յառաջին դարէ անտի քրիստոնէութեան, ըստ վկայութեան Տերտուղիանոսի, եկեղեցական մատենագրի Գ. դարու՝ հաւատացեալք բազում էին ի Հայս (Գաթըրճ. Հտ. Բ. 465): Բայց այն որ կ'ըսէ թէ ի պատերազմին Կարակալլայի Խոսրով ոչ ի Պարսիկս յարեցաւ և ոչ ի Հռոմայեցիս՝ ոչ թէ Խոսրովու կը պատշաճի, այլ Սանատրկոյ (193), որ ըստ Հերոդիա-

նու ժամանակակից պատմագրի՝ չյարեցաւ ո՛չ ի Նիգեր, հակառակորդն Սեպտիմեայ, և ոչ ի նոյն ինքն Սեպտիմոս: Անտոնինոսի Կարակալլայի, Սեպտիմեայ որդւոյն պատերազմն էր ո՛չ թէ ընդ Վաղարշու Դ. (209—216), այլ ընդ Արտաւանայ (216–226): Բայց ինչ որ կը պատմէ, կ'ըսէ, Փիրմիլիանոս Խոսրովու մահուանէն մինչ Տրդատայ թագաւորութիւնը՝ պիտի առնունք իբրև սուտ.—«Իսկ որ ինչ զկնի մահուանն Խոսրովու մինչև ցթագաւորութիւնն Տրդատայ ի ժամանակս անիշխանութեանն պատմէ, սուտ համարելով՝ երկրորդեմք համառօտ բանիւք»: Տրդատայ անիշխանութեան ժամանակի պատմութիւնն ունինք ի ՀԹ. գլուխն Խորենացւոյն. Բայց զայսմանէ ի ստորև:

Սակայն այս աղբիւր ևս Խորենացւոյն, Փիրմիլիանոս, չունի գոյութիւն. քանզի Փիրմիլիանոս, որ մեռած էր Գ. դարուն կիսուն մօտ (269, տես Գաթըրճ. Հտ. Բ. էջ 465), ինչպէս կրնար պատմել զանցս Գ. դարուն վերջին տարիներուն, նա մանաւանդ Դ. դարուն առաջին տարիներուն, որպիսի են գործք Տրդատայ յանիշխանութեան ժամանակին: Զիարդ և իցէ՝ Խորենացին որպէս թէ Փիրմիլիանոսէ առնլով՝ կը տանի յառաջ զիւր պատմութիւնն այսպէս. «Նոյն այր ասէ, թէ յետ սուսերահարն լինելոյ Խոսրովու, միաբանեալ նախարարք Հայոց՝ ածեն իւրեանց յօգնականութիւն զզօրս յունաց որ ի Փռիւգիայ՝ Պարսից ընդդիմանալ և պահել զաշխարհս: Եւ իսկոյն ազդեցին Վաղերիանոսի կայսեր: Բայց վասն զի Գութք անցեալ ընդ Դանուբ գետ զբազում գաւառս գերի վարեցին, և զԿիւկղադայ կղզիս աւար առին՝ վասնորոյ ոչ ժամանէ մերոյ աշխարհիս թեւարկել Վաղերիանոս. նա և ոչ յերկարէ զկեանսն, առնլով ի նմանէ զթագաւորութիւնն Կղաւդիոս, և յետ նորա Աւրեղիանոս հուպ ընդ հուպ փոխանորդելով զմիմեանս. այլև ամսականօք թագաւորեալ Կիւնտոս և Տակիտոս և Փղորիանոս եղբարք: Վասնորոյ համարձակաբար արշաւեալ ի մեզ Արտաշրի, և զզօրս Յունաց փախստական արարեալ՝ գերելով զյոլով մասն աշխարհիս յաւէր դարձուցանէ: Յորմէ գաղթեալ նախարարքն Հայոց՝ հանդերձ ազգաւն Արշակունեաց՝ ի Յոյնս ապաւինէին. յորոց մի էր և Արտաւազդ Մանդակունի, որոյ առեալ զՏրդատ որդի Խոսրովու՝ ի դուռն կայսեր հասուցանէ: Վասնորոյ հարկաւորեալ Տակիտոս՝ ընդդէմ Արտաշրի գալ զկողմամբք Պոնտոսի, և զեղբայր իւր զՓղորիանոս այլով գնդաւ ընդ Կիլիկիա արձակէ: Իսկ Արտաշրի հասեալ ի Տակիտոս՝ ի փախուստ դարձուցանէ, որ և սպանաւ ի յիւրոցն ի Ճանիւս Պոնտացւոց, որ են Խաղտիք. նոյնպէս և եղբայր նորա Փղորիանոս յետ ութսուն և ութ աւուր ի Տարսոն: Բայց Յունաց թա-

գաւորեաց Պռոբոս, և խաղաղութիւն արարեալ ընդ Արտաշրի՝ բաժանէ զաշխարհս սահմանադրութեամբ փոսս գործելով»։

Այս պատմութեան մէջ, թող ուրիշ պարագաներ՝ ժամանակագրութիւնն միայն բաւական է ցուցնել, թէ որչափ Խորենացւոյն տգէտ է հռոմէական պատմութեան։ Նախ կ'ըսէ, թէ Հայք «յետ սուսերահարն լինելոյ Խոսրովու» բերին Յունաց (Հռոմայեցւոց) զօրքըն ի Փռիւգիայ, կամի ասել Պոնտոսէ, և «ազգեցին» (իմացուցին) Վաղերիանոսի կայսեր, (պարտի լինել՝ Աղեքսանդրի Սևերոսի 222—235). Վաղերիանոս չէր կրնար օգնել Հայոց Արտաշրի դէմ, վասն զի երբ 30 ամօք յետոյ է նա (253—259), և յերթալն ի վերայ Պարսից, Շապհոյ Ա՝ ինկաւ գերի (259) և մեռաւ ի գերութեան 70-ամեայ։ Դարձեալ՝ Փիրմիլիանոսն Խորենացւոյն Վաղերիանոսի իսկ և իսկ յաջորդած կը դնէ զԿղաւդիոս (268—270) և զԱւրելիանոս (270—275), մոռնալով իբր տասն ամ թագաւորողն Գաղիենոս (259—268). այլ առ սակաւաժամանակեան յաջորդօքն նորա Տակիտոսիւ և Փլորիանոսիւ (276), կու տայ Արտաշրի մտանել ի Հայս յաղթել Տակիտոսի (275—276), մինչ Արտաշիր մեռած էր 240-ին և կը թագաւորէր Շապուհ Ա. (240—271)։ Որչափ Խորենացւոյն անգէտ է նաև արշաւանին Գորդիանոսի Գ, որ փախոյց զՇապուհ (242)։ Չէ ճիշդ նաև՝ ինչ որ կ'ըսէ Պրոբոսի համար. Պրոբոս (276—282) արդարև ամրացոյց զսահմանս տէրութեանն խրամովք և որմովք, բայց ոչ յարևելս առ Արտաշրիւ, քանզի Վռամայ Բ.-ի (275—292) դէմ էին արշաւանք նորա, այլ ընդդէմ Գերմանաց, Հռենոսի և Ելլա գետոյն կողմերն, ուր շատ բարբարոս ցեղեր նուաճեց։

Ըստ Խորենացւոյն՝ ի մտանել Արտաշրի ի Հայս՝ նախարարք կը զաղթեն, և Արտաւազդ Մանդակունի կը փախցունէ զՏրդատ մանուկ, որդի Խոսրովու սպանելոյ յԱնակայ, մինչ արտաքին ժամանակակից պատմութիւնն ո՛չ միայն չտար մուտ Արտաշրի կամ Պարսից ի Հայս, և ոչ իսկ յետ դաշանցն Փիլիպպոսի ընդ Շապհոյ, այլ և գիտէ զՀայս ոչ թէ յանիշխանութեան, այսինքն առանց թագաւորի, այլ ընդ իշխանութեամբ Տրդատայ Բ.-ի (որ է Խոսրովն Հայոց) մինչև 249, երբ Հռոմայեցիք (Դեկոս, 249—251) յաղթուեցան ի Գոթաց որ անցան ընդ Դանուբ, և սպանուեցաւ կայսրն։

Այս թուականէն ետքը սկսաւ խլրտել Շապուհ, և առնուեցան շատ տեղեր որ էին ընդ իշխանութեամբ Հռոմայեցւոց, թերևս և Հայաստան, ուր արդէն կը տիրէր ըստ արտաքին պատմութեան Արտաւազդ ոմն, յաջորդ Տրդատայ Բ.-ի, մինչև ստիպուեցաւ Վաղերիանոս գալ Շապհոյ վրայ և ինկաւ գերի (260)։ Այնուհետև Հայք են ընդ ազդեցութեամբ Շապհոյ։ Արդարև կը տեսնենք զԱրտա-

ւազդ արքայ Հայոց՝ բարեկամ Ծաճկոյ, զոր կը յորդորէ իսկ նա թղթով արձակել զՎաղերիանոս. ի կողմն Պարսից են Հայք նաեւ ի պատերազմին Աւրելիանոսի ընդդէմ Պալմիւրացւոց (273), այսինքն առ Վռամաւ Ա. (272—275)։ Առ Պրոբոսիւ (276—282) և առ յաջորդաւ նորա Կարոսիւ (282—283), որոց յաղթութիւններն Պարսից դէմ առ Վռամաւ Բ. (275—292) գիտէ աղբիւր Խորենացւոյն՝ կը թուի թէ Հայք ազատեցան յազդեցութենէ Պարսից, այնպէս որ յարշաւանս Գաղերիոսի (296) ընդդէմ Ներսեհի, որ գրաւած էր զՄիջագետս և զՀայաստան՝ կը գտնենք զՀայս օգնական նիզակակից Հռոմայեցւոց։ Յետ յաղթութեանն Գաղերիոսի առ Դիոկղետիանոսիւ Հայք եղան միւսանգամ մասն Հռոմէական պետութեան, անտարակոյս իբրև թագաւորութիւն, որոյ թագաւորն, թէպէտ չյիշուիր յանուանէ յարտաքին պատմութեան՝ եղաւ Տրդատ Գ. մեծ (297-ին, կամ թերևս յառաջ իսկ, իբր 287-ին), որդի Տրդատայ Բ-ի, կամ Խոսրովու՝ ըստ ազգային աւանդութեան։ Այս թուականէն, 287 կամ 297, կ՚սկսի թագաւորութիւնն Տրդատայ մեծի, զորմէ բազում ինչ կը պատմէ ազգային աւանդութիւնն, ինչպէս պիտի տեսնենք, խառն ընդ պատմութեան դարձին Հայոց, և այս պատճառաւ մեծաւ մասամբ վկայաբանական։

Չէ անդէպ յիշել հոս Վիքթոր Լանկլուայի դատաստանը Փիրմիլիանու հալածանաց պատմութեան հատակոտորներուն վրայ, զոր կը բերէ Խորենացին. «Մինչև ցարդ ծանօթ էր հերետիկոսաց մկըրտութեան վրայ Փիրմիլիանոսէ նամակ մը միայն, ուր կը հակառակի նա կարծեաց եպիսկոպոսին Հռոմայ, և որ կը գտնուի Կիպրիանոսի թղթոց հետ։ Մովսէս Խորենացի պահած է մեզ իւր պատմութեան մէջ բաւական երկայն հատակոտոր ուրիշ մատենէ, զոր Փիրմիլիանոս գրեց ի վերայ հալածանաց եկեղեցւոյ, և որ արժանի էր աւանդուելու մեզ ամբողջ։ Սակայն կ՚ըսենք, թէ ի հատակոտորսն որ հասած են մեզ (առ Խորենացւոյն)՝ պատմութիւնը չունի ճշգութիւն, մանաւանդ ի տեղեկութիւնսն՝ զորս Փիրմիլիանոս կու տայ հռոմայեցի կայսերաց և նոցա պատերազմական արշաւանաց վրայ»։

Գուտշմիդի գիտունն ակնածութեամբ կը թուի յայտնել զիւր կասկած զստուգութենէ Փիրմիլիանեան հատակոտորոց. բայց մեք կը համարձակիմք յայտնապէս ըսել, թէպէտ առ այժմ իբրև ենթադրութիւն, թէ Փիրմիլիանոսի անուանեալ հալածանաց պատմութիւնն, որմէ իբր թէ են հատակոտորք Խորենացւոյն՝ ոչ այլ ինչ են, եթէ ոչ վկայաբանական (légendaire) գրուած յառաջնում կիսու Դ. դարու, անմիջապէս զկնի մահուն Տրդատայ (337), յորի-

նեալ յունէ մը և պիտակաբար ընծայեալ Փիրմիլլիանու։ Այս կեղծ գրուածն է, որ ծառայած է ի պատմութեան դարձին Հայոց իբրև աղբիւր ոչ Խորենացւոյն միայն, այլև Ագաթանգեղեան մատենին, գործ միոյ ի թարգմանչաց մերոց և պիտակ, բայց խորհրդաւոր անուամբ կոչուած Ագաթանգեղոս, այսինքն՝ «Հրեշտակ կամ աւետաբանիչ բարութեան» (Գաթըրճեան)։ Փիրմիլլիանու ընծայուած պատմութիւնն կամ մանաւանդ վկայաբանութիւն, որ է առաջին կամ գլխաւոր աղբիւր պատմութեան դարձին Հայոց՝ կը թուի թէ չկար կամ չէր տակաւին ծանօթ առ Եւսեբեաւ, որ գիտակ է Փիրմիլլիանու անձին, բայց ոչ այն պատմութեան։ Արդարև զարմանալի է, որ Եւսեբիոս (267 — 338) ժամանակակից Փիրմիլլիանու և Հայոց դարձին, գիտնալով զՀայս յառաջ քան 310 քրիստոնեայ և ջերմ յաստուածապաշտութեան՝ չգիտեր այնպիսի զարմանալի նշաններով կատարուած դարձ ի Հայս. պատճառն այս է որ վկայաբանութիւնք՝, որոց գլխաւորն, թերևս և վերջինն էր Փիրմիլլիանուն, Դ. դարուն կիսուն մօտ սկսելով՝ տակաւ տուին այն դարձին հրաշալի ձև և գտան մուտ յաւանդութիւն ազգին, այնպէս որ հազիւ ուրեմն Սոզոմենոս, իբր 100 տարի յետոյ, այն է ի սկզբան Ե. դարուն, կը յիշէ զՏրդատ արքայ Հայոց յանուանէ, «յաստուածեղէն նշանաց ինչ կատարելոց ի տան նորա լեալ քրիստոնեայ.—ἐκ τινὸς παραδόξου θεοσεμείας περὶ τὸν αὐτοῦ εἶχον χριστιανόν γένεσθαι. ինչպէս նաև Բուզանդ ունի ինչ ինչ Փիրմիլլիանեան զրոյցներէն։ Հայոց դարձին վրայ պիտի խօսինք յետոյ առանձինն. այժմ գանք դարձեալ ի պատմութիւն Արտաշրի։

Հէ. գլխով կը պատմէ Խորենացին զգործս Արտաշրի յետ նուաճելոյ նորա զՀայս, այսինքն նախ աւերել զերկիրն, և ապա «գեղեցկապէս յարդարել», նախարարներն իջուցանել իրենց ամրութիւններէն, պայծառացունել կրակապաշտութիւնը և խափանել կռապաշտութիւնը, նորոգել սահմաններն կոթողներով յիւր անունն, միով բանիւ գրաւել զերկիրն իբրև Պարսից նահանգ պարսիկ գործակալներով։ Բայց այս պատմութիւն չունի ամենևին ստուգութիւն, վասն զի Արտաշիր, զոր աղբիւր Խորենացւոյն կը դնէ առ Պրոբոսիւ, այսինքն 276—282՝ մեռած էր 240-ին, իբր 25 ամօք յառաջ. ապա չէ հնար թէ գտաւ նա մուտ ի Հայս և ըրաւ այն բաներն. մանաւանդ որ, ինչպէս արդէն ըսուած է՝ ժամանակակից պատմութիւնն յայտնապէս կ՚ըսէ, թէ Արտաշիր հալածուեցաւ միացեալ զօրութենէն Հայոց և Հռոմայեցւոց և չգտաւ մուտ ի Հայս մինչև ի մահ իւր։ Ահա պատմութիւն Խորենացւոյն. «Բայց Յունաց թագաւորեաց Պռոբոս, և խաղաղութիւն արարեալ ընդ Ար-

տաշրի՝ բաժանէ զաշխարհս սահմանադրութեամբ՝ փոսս գործելով»։ Զայսմանէ խօսեցանք վերագոյնն։ «Եւ Արտաշրի նուաճեալ զազգ նախարարացն՝ զգաղթեալսն անդրէն դարձուցանէ, և զամրականսն ի վայր իջուցանէ, բաց ի նախարարէ ումեմնէ որոյ անուն Օտայ կոչիւր, ի տոհմէ Ամատունեաց. որ փեսայն էր ազգին Սլկունեաց և սնուցանող Խոսրովիդխտոյ, դստեր Խոսրովի. որջացեալ յամուրն Անի իբր ի կաղաղի հանդարտութեան զօղեալ։ Իսկ Արտաշրի գեղեցկապէս յարդարեալ զաշխարհս Հայոց՝ ի կարգ առաջին հաստատէր։ Նաև զԱրշակունիսն, զմեկուսացեալսն ի թագէն և յԱյրարատն բնակելոյ՝ կարգէ ի նոյն տեղիս մտիւք և ռոճկօք որպէս էինն։ Եւ զմեհենիցն պաշտամունսն առաւել ևս յորդորէ, այլև զհուրն որմզդական ի վերայ բագնին որ ի Բագաւան՝ անշէջ հրամայէ լուցանել։ Բայց զանդրիսն, զոր արար Վաղարշակ պատկեր իւրոց նախնեացն հանդերձ արեգակամբ և լուսնիւ յԱրմաւիր, և փոխեցաւ ի Բագարան և դարձեալ յԱրտաշատ՝ զայնոսիկ փշրէ Արտաշիր։ Եւ զերկիրս գրով ընդ հարկաւ իւրով արկանէ և ամենեւիմբ զիւր անունն հաստատէ։

«Նաև զսահմանս հաստատեալս յԱրտաշիսէ գքարինս յերկրէ կացուցանելով՝ նորոգեաց և յիւր անունն փոխելով արտաշիրական անուանեաց։ Եւ կալաւ զաշխարհս մեր որպէս զմի յաշխարհացն իւրոց, հանդերձ պարսիկ գործակալօք ամս քառն և վեց. և յետ նորա որդի նորին որ անուանեցաւ Շապուհ, որ լսի արքայի մանուկ, ցթագաւորելն Տրդատայ ամ մի»։

Սակայն մասնաւոր դիտողութեան արժանի է այս պատմութեան մէջ քոյր Տրդատայ Խոսրովիդուխտ, զոր որպէս թէ Օտայ նախարար Ամատունի, սնուցիչ նորա, պահեց յԱնի. թէպէտ չէ հաւանական թէ Օտայ հանդերձ Խոսրովիդխտով իբր 26 տարի կարաց դէմ դնել Արտաշրի, որ որպէս թէ բոլոր ամրականներն, այսինքն ամուր տեղեր ապաւինողներն, իջուց բերդերէն, զՕտայ միայն չկարաց իջեցունել. վկայաբան մեր անտարակոյս չէր կրնար խորհել այս կէտը։ Օտայ մը և Խոսրովիդուխտ մը հարկաւոր էին նմա, դարձին տեսարանին վրայ մէն մի իբրև կարևոր դեր խաղացող անձինք. Խոսրովիդուխտ՝ իբրև անմեղ կուսան պիտի ընդունէր զԳրիգոր բանտէն հանելու պատգամը, և Օտայ՝ պիտի հանէր զնա ի բանտէն։

«Բայց Արտաշրի լուեալ էր—կ'ըսէ Խորենացին յառաջ տանելով պատմութիւնը,—թէ առն ի նախարարացն Հայոց առեալ յորդւոցն Խոսրովու՝ փախուցեալ ապրեցոյց։ Եւ քննեալ թէ ով ոք նա իցէ՝ եղև վերահասու թէ նա է Արտաւազդ յազգէն Մանդակու-

նեաց. Հրամայեաց զամենայն ազգն ջնջել սատակմամբ: Քանզի ի գաղթելն Հայոց յԱրտաշրէ՝ գաղթին և նոքա ընդ ցեղս այլոց նախարարացն. և ի նուաճելն Արտաշրի զայլսն՝ դառնան և նոքա և սատակին սրով ամենեքին: Բայց կոյս մի գեղեցկադիտակ ի քերցն Արտաւազդայ գողացեալ Տաճատայ ուրումն, որ էր լեալ յազգէն Աշոցան, փախուցեալ ի Կեսարացւոց քաղաքին ապրեցուցանէր, ամուսնաւորեալ ընդ ինքեան վասն չքնաղագեղ կերպարանին»:

Ինչ որ ըսինք Խոսրովիդխտոյ և Օտայի համար՝ զնոյն պարտ է իմանալ Արտաւազդայ Մանդակունւոյ դայեկորդւոյն Տրդատայ և Տաճատայ համար, որ եղած են կարևոր դեր խաղացող անձինք ի պատմութեան դարձին. Արտաւազդ՝ իբրև վկայ, թէ Տրդատ էր որդի թագաւորին Հայոց, և Տաճատ իբրև քեռայր Արտաւազդայ՝ բնակելով ի Կեսարիա ուր էր Գրիգոր՝ տեղեկանար պատմութեան նորա և որդւոց նորա, և իմացունէր ի ժամանակին Գրիգորի, թէ ուր կը գտնուէր Տրդատ, և Տրդատայ՝ թէ որո՛ց որդի էր Գրիգոր և զորդւոց նորա տար տեղեկութիւն:

Խորենացին ՀԹ. գլխոյն մէջ, առնլով դարձեալ Փիրմիլիանոսէ՝ կը պատմէ Տրդատայ քաջութիւններն անիշխանութեան ժամանակ, այսինքն յառաջ քան զթագաւորել նորա: Ըստ Խորենացւոյն՝ Տրդատ ուսեալ էր ի մանկութենէ ոչ միայն ձիավարութիւն և զինուորութիւն, այլ և էր երևելի ուժով բազկի, նման անուանի յոյն ըմբիշներու, յորոց զոմանս կը յիշէ յանուանէ, առնլով Եւսեբիոսէ: Կը պատմէ նաև, թէ ինչպէս Տրդատ իւր հսկայական զօրութիւնը ցուցուց՝ Հռոմայեցի կայսերաց Կարոսի և Կարինոսի պատերազմներուն մէջ.—«Պատմէ—այսինքն Փիրմիլիանոս—զնահատակութեանցն Տրդատայ, նախ ի մանկութեանն յերիվար կամակոր աշտանակեալ, և կորովի ձիավարեալ, և զէնս շարժեալ յաջողակաբար, և այլ պատերազմականս ուսանել ախորժակս. ապա ըստ Պեղոպոնեսացւոց մեհենական հրամանին Հիփիտեայ ի մրցանակս ագոնին առաւելեալ քան զԿղիտոստրատոս Հռոդացի, որ զվզէ և եթ կալեալ յաղթէր, և դարձեալ քան զԿերասոս արգիացի. զի նա զկճղակ եզին թափեաց, իսկ սա զերկուց ցլուց վայրենեաց միով ձեռամբ կալեալ զեղջերէն՝ թափեաց հանդերձ ընդվզեալ ջախջախմամբ: Եւ ի ձիընթացս մեծի կրկէսին կառավարել կամեցեալ՝ ի հմտութենէ հակառակորդին սասուցեալ յերկիր անկաւ, և բուռն հարեալ արգել զկառսն, ընդ որ ամենեքին զարմացան: Եւ ի պատերազմելն Պրոբոսի ընդ Գութս՝ եղև սով սաստիկ. և յոչ գտանելոյ շտեմարանաց՝ յարեան զօրքն ի վերայ և սպանին զնա, նոյնպէս և ի վերայ ամենայն իշխանացն դիմեցին: Իսկ Տրդատ միայն ընդդէմ

կացեալ՝ չեթող զոք մտանել յապարանսն Լիկիանոսի, առ որում ինքն Տրդատ էր։

«Բայց Կարոս հանդերձ որդւովն Կարինեաւ և Նումերիանոսիւ թագաւորեալ, և զօրաժողով եղեալ՝ ետ ճակատ ընդդէմ Պարսից արքային, և յաղթեալ դարձաւ ի Հռոմ։ Վասնորոյ բազում ազգս ի սատարութիւն կալեալ Արտաշրի, թիկունս արարեալ զանապատն Տաճկաստանի՝ դարձեալ ետ ճակատ ընդ զօրս Հռոմայեցւոց կրկին, աստի և անտի Եփրատու, յորմէ սպանաւ Կարոս ի Յունովն։ Նոյնպէս և Կառինոս որ ի վերայ Կոռնակայ չոգաւ յանապատ, ընդ որում և Տրդատ, և սատակեցաւ նա և զօրն, և մնացեալքն ի փախուստ դարձան։ Յորում և Տրդատայ վիրաւորեալ երիվարն՝ ոչ աճապարեաց ընդ փախստեայսն, այլ առեալ զզէնն իւր և զկազմած ձիոյն՝ ի լիւղ ընդ լայնատարած խորայատակն անցանէր ընդ Եփրատ ի բուն զօրսն իւրեանց, ուր Լիկիանոսն էր»։

Այս պատմութեան մէջ թող որ Խորենացին կը շփոթէ զԿարոս ընդ Կարինոսի՝ Կոռնակն, զոր կը յիշէ իբրև պատմական անձն՝ ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ, ինչպէս կը դիտէ Լանկլուա՝ յունարէն բառն Κεράυνος—կայծակն, որմէ սպանուած կարծուած է Կարոս։ Սամուէլ Անեցի իւր ժամանակագրութեան մէջ կը յօդէ ուրիշ առասպել Կոռնակայ վրայ։ Ահա Լանկլուայի դիտողութիւնը. «Սամուէլ Անեցի իւր ժամանակագրութեան մէջ կը պատմէ, թէ Կոռնակ, սպարապետ զօրուն մեծին Խոսրովու, հօր Տրդատայ, կը համարուի ապրած հարիւր վաթսուն տարի և պահած մինչև յիւր վերջին ժամն ականջները, մազերն, ակռաներն և երիտասարդութեան զօրութիւնը։ Սա սպանեց, կ'ըսէ, զԿարոս հանդերձ որդւովն Կարինոսիւ ի ճակատու ուրեք ընդ Պարսս, որոց կը հրամայէր Կոռնակ։ Այս պատմութիւնն է լոկ կեղծիք։ Կոռնակայ առասպելին առիթ տուած է սխալ մեկնութիւնն, զոր տուած են Հայք Կոռնակ բառին, որ ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ թարգմանութիւն Կոռնակէս կամ Կառնանոս բառին, բառ աղաւաղեալ ի գրչաց փոխանակ քերաւնոսի, որ է կայծակն։ Ըստ պատմութեան՝ Կարոս արդարև մեռաւ կայծակնահար, երբ կը գնէր զիւր բանակն Տիգրիսի մօտ, իսկ Կարինոս սպանաւ ի կռուի։ Այսպէս է գոնէ պատմութիւն հռոմայեցի պատմչաց (Վոպիսկոս, Եւտրոպիոս)։ Շփոթութիւնն որ կը տեսնուի ի պատմութեան Փիրմիլիանու ըստ Խորենացւոյն՝ այսպէս կը մեկնուի դիւրաւ» (Լանկլուա, Ժողովածոյք. Հտ. Բ. էջ 120, ծան. 5)։

Տրդատայ ուժին վրայ ոչ սակաւ բան կը պատմէ նաև Ագաթանգեղոս։ Ըստ Ագաթանգեղոսի՝ Լիկիանէս ընդ որում էր Տրդատ, ի գնալն զօրօք առ Դիոկղետիանոս՝ կը հասնի ի քաղաք մի որոյ

դրունք փակեալ էին, և էր կէս գիշեր։ Զխերուն կերակուրը պակ- սեցաւ, բայց քաղաքին պարիսպներէն ներս կը տեսնուէր համբար խոտոյ, այլ պարսպին բարձրութեանն համար չէր հնար առնուլ։ Տրդատ անցնելով պարսպէն անդին՝ կը նետէ բանակին մէջ խոտ- րու դէզեր, նաև ոչ սակաւ էշ։ Լիկիանէս Տրդատայ այս զօրու- թիւնը տեսնելով՝ կը զարմանայ.—«Յայնմ ժամանակի թագաւորն (Դիոկղետիանոս) հրաման տայր հրովարտակս և դեսպանս առնել առ իշխանս և զօրս իւր, զի ուր և իցեն՝ առ նա հասանիցեն։… Առեալ և Լիկիանէ զբուն գունդն որ ընդ իւրով ձեռամբ էր՝ փութայր հասանել ի տեղի պատերազմին։ Եւ մինչդեռ գային գունդք զօրացն և Տրդատէս ընդ նմա՝ դէպ եղև նոցա գալ մտա- նել ի նեղագոյն տեղի մի յառուամէջս այգեստանւոյն, ի փողոցա- մէջս համբարոցացն առ դրունս քաղաքին, և զդրունս քաղաքին աղխեալ էր, զի ժամ էր հասարակ գիշերոյ։ Իբրև ոչ գտաւ խար երիվարաց զօրուն բազմութեան՝ հայեցեալ տեսանէին ի զուարա- փակ քաղաքորմին, զի խոտահամբար մթերեալ էր. և ոչ ոք կարաց ձգել զձեռն իւր վասն տեղւոյն բարձրութեան։ Յայնժամ Տրդատէս ելեալ և իջեալ՝ հոսէր ընկենոյր բարդս բարդս ի մէջ զօրացն մինչ ի լիութիւն բաւականի. նաև զհամբարապանսն և բազում իշեան յանկոյս որմոյն ընկենոյր ի մէջ զօրացն, և ինքն ելեալ իջանէր»։

Բայց քան զամենայն զարմանալին է մենամարտութիւնն Տըր- դատայ ընդ թագաւորին Գթաց. «Յաւուրս ժամանակացն այնոցիկ զօրաժողով լինէր իշխանն Գթաց տալ պատերազմ ընդ իշխանին Յունաց։ Պատգամս յղէր օրինակաւ այսուիկ. Ես, ասէ, մխոյեան ելանեմ քեզ ի մերոց աստի, և դու ինձ ի յունականաց այտի. եթէ ես զքեզ յաղթահարեցից՝ Յոյնք ինձ հնազանդեսցին ի ծառայու- թիւն. և եթէ դու ինձ յաղթեսցես՝ մերքս քեզ նուաճին և հնա- զանդին։… Իբրև զայս լուաւ թագաւորն Յունաց՝ երկեաւ… քան- զի էր տկար յոսկերաց զօրութեամբ… և ոչ գիտէր զինչ տացէ բանիցն պատասխանի։… Ապա կաց պատմեաց թա- գաւորն իշխանացն զամենայն պատգամս թագաւորին Գթաց՝ Խօսել սկսաւ Լիկիանէս ընդ արքային և ասէ. Մի ինչ զարհու- րեսցի սիրտ տեառն իմոյ, զի գոյ աստ այր մի ի դրան քում, զի իրքդ այդ նովաւ վճարին, Տրդատէս, ի տոհմէ թագաւորին Հայոց աշխարհին։… Յայնժամ հրաման ետ, և ածին զՏրդատիոս յանդի- ման թագաւորին. եւուն կազմութիւն մարտի առ ի ժամ վաղուի զմիմեանս տեսանել պատերազմաւ։ Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս, և զարդարե-

ցին զՏրդատ ի զարդ կայսերական, արկեալ զնովաւ զնշան Թագաւորութեանն. և ոչ ոք գիտէր վասն նորա. Հրաման ել ամենեցուն, թէ ինքն կայսրն իցէ։ Եւ նա առեալ զգունդն զօրաց բազմութեան՝ ի ձայն փողոյ տագնապաւ յառաջ մատուցանէր մինչև յանդիման թշնամեացն։ Իբրև յանդիման եղեն միմեանց կայսերակերպն և Թագաւորն՝ մարակ ի կուշտ արարեալ երիվարացն ի միմեանս հասանէին. անդ յաղթահարէր կայսերակերպն զԹագաւորն, ձերբակալ արարեալ յանդիման առաջի Թագաւորին կացուցանէր»։

Ոչինչ ընդհատ քան զայս առասպելական է այն, զոր Բրաւ Տրդատ ըստ Ագաթանգեղոսի յետ դարձին իւրոյ, երբ կը շինուէին վկայարանք Հռիփսիմեանց։ Հրամանաւ Գրիգորի երթալով Մասեաց լեռն ի վեր իբրև եօթնօրեայ ճանապարհաւ՝ ութ մեծամեծ քարէ արձաններ, զորոց իւրաքանչիւրն հազիւ կրնային շարժել բազմութիւնք մարդկան՝ ուսին վրայ բառնալով բերաւ, իբրև փոխարէն կուսոյն զոր ըրած էր ընդ Հռիփսիմեայ.—«Եկն Թագաւորն խնդրեաց հրաժեշտ ի սրբոյն Գրիգորէ, եօթնօրեայ ճանապարհ կալեալ ի վեր ի բարձր լեառն Մասիս, և անտի ի գլխոյ լեռնէն առեալ վէմս արաստոյս, անտաշս, անկոփս, յաղթս, ծանունս, երկայնս և ստուարս, մեծամեծս, որ զմի մի ոչ լինէր հնար թէև դիպելոյ բազմութեանց ի մարդկանէ զայն շարժել. արդ առեալ սկայազօրն Հայկաբար զութ արձանսն ի վերայ իւրոց թիկանցն զայն դնէր, ստանձնեալ բերեալ ի վկայարան տաճարացն, իբրև փոխարէն անմիտ մարտին, զոր ընդ սրբոյն պատերազմեալ էր յիւրում սենեկին»։ Ցիրաւի է ըսել՝ զոր Խորենացին ըսած է այլով առթիւ. «Ո՜հ, կարի է առասպելս, և առասպելաց առասպել»։

Ի հաստատութիւն Տրդատայ ուժոյն՝ Ագաթանգեղոս կը յիշէ Հասարակաց գրոյց մի (եթէ է գրոյց և ոչ գիւտ նորին իսկ Ագաթանգեղոսի). որպէս թէ հասարակաց առակ էր—«Իբրև զսէգն Տրդատ, որ սիգալովն աւերեաց զթումբս գետոց, և ցամաքեցոյց իսկ ի սիգալ իւրում զյորձանս ծովուց»։ Ո՛րչափ հսկայազօր և դնեն՛ք զՏրդատ՝ չէք տարակոյս, թէ պատմուածներն ի Խորենացւոյն և Ագաթանգեղոսէ՝ քան զճշմարտութիւնն շատ աւելի են։ Վկայաբանութեան գլխաւոր նպատակն ի բարձրացուցանել այնչափ Տրդատայ ոյժն՝ էր անտարակոյս բարձրացունել Հռիփսիմէի յաղթութիւնը, որ չէր հնար այնպիսի ահագին ուժոյ դէմ՝ եթէ ոչ մատամբն Աստուծոյ։

Խորենացին, ըստ իւր վկայութեան (Գլ. ՀԵ.), Տրդատայ թագաւորութեան ժամանակին պատմութիւնը կ'առնու «ի յիշատակաց դիւանագիր մատենից Յունաց», և «ի համբաւուց արանց իմաստ-

նոց Հնախօս սիրաբանից». սակայն չըսեր թէ ինչ էին այն «դիւանագիր մատեանք», և ո՛վ «արք իմաստունք և Հնախօս սիրաբանք»։ —«Բայց որ ինչ և ի թագաւորութեանն Տրդատայ և յետ նորա՝ ոչ հեղգութեամբ և անզգուշաբար վրիպեալ, և ոչ կամաւոր սխալանօք ի սմա յարմարեալ բան, այլ որ ինչ ի յիշատակաց դիւանագիր մատենից Յունաց։ Իսկ ըստ նմանեացն ապա որ ինչ ի համբաւուց արանց իմաստնոց և Հնախօս սիրաբանից ստուգապէս տեղեկացեալ՝ արդարապէս քեզ գրուցեցաք»։

Խորենացին ի վերնագրի Զ. գլխոյն կը յիշէ նոր աղբիւր, այսինքն զԹուղթն Արտիթէոսի ուրումն եպիսկոպոսի վասն սննդեան և վարուց Գրիգորի և որդւոց նորա, իբրև պատասխանի հարցման Մարկոսի ուրումն միայնաւորի։ Սակայն չըսեր, թէ ով էր այն Արտիթէոս։ Ագաթանգեղոս կը յիշէ Արտիթէս ոմն յորդւոց քրմացորս Լուսաւորիչ կացոյց եպիսկոպոս այլևայլ կողմեր։ Ըստ հեղինակին պատմութեան հայերէն դպրութեան՝ այս Արտիթէս էր Խորենացւոյն Արտիթէոսն, որ որպէս թէ «Մարկոս անուամբ միայնակեցի մը խնդրանօք, որ Ագուիճան ըսուած կղզին ապաստանած էր՝ Լուսաւորչին վարուց պատմութիւնը շարագրեց նամակի ձևով, և իրմէն առած է Խորենացին՝ ինչ որ նոյն որբոյն մանկութեան և երիտասարդութեանը վրայ կ՚աւանդէ, ինչպէս անոր Տրդատայ ծառայութեան քով մտնելը»։ Ահա պատմութիւն Արտիթեայ. «Այր ոմն ի Պարսից, ոչ ի փոքունց և յաննշանից, որում անուն էր Բուրդար, գնացեալ անտի և եկեալ ի կողմանս Գամրաց՝ պանդխտեցաւ ի Կեսարիա։ Եւ առեալ կին ի հաւատացելոց, որում անուն Սոփի կոչիւր. քոյր ուրումն մեծատան որ Եւթաղիոս յորջորջէր, դարձաւ անդրէն գնալ յերկիրն Պարսից հանդերձ կնաւ իւրով. զորոյ զհետ հասեալ աներոյ նորա Եւթաղեայ՝ համոզեալ արգելուլ։ Որոյ հանդիպեալ ծննդեան մերոյ Լուսաւորչին՝ ըստ պատահման մատնէ ստնտու մանկանն. և ի հասանել աղետին՝ առեալ Եւթաղեայ զքոյր իւր և զայրն նորա հանդերձ մանկամբն՝ ի Կապադովկացւոց աշխարհն դառնայր»։

Պարսիկ ոմն, ոչ աննշան, գալով ի Կեսարիա՝ կ՚առնու կին քրիստոնեայ, քոյր մեծատան ուրուք, և կը դառնայ երթալ յերկիրն իւր։ Կնոջ եղբայրը կ՚առնու յանձն նախ զատուիլ քրոջմէն, և ապա զղջալով՝ կը փութայ դարձունել զնա յետս։ Արդարև զարմանալի դիպուած։ Քան զայս զարմանալի.—կինն լինի «ըստ պատահման» ստնտու Գրիգորի. ապա ունէր ուրիշ տղայ մանուկ ի տանէն։ Նշանաւոր կին մը որ ունի մանուկ կաթնկեր՝ կ՚առնու միւս ևս մանուկ կաթնկեր. մինչ Անակայ պէս Պարթև իշխանի կը պակսէր

դայեակ Հայոց մէջ: Բայց նախախնամութեան խորհուրդ կար գործին մէջ. քրիստոնեայ կին մը կեսարացի դայեակ մտնելու էր Հեթանոս Պահլաւ մանկան, որպէս զի ի դիպել կատարածին փախցունէր զնա ի Կեսարիա ի մէջ քրիստոնէից, պատրաստել լուսաւորիչ Հայոց: Ցիրաւի ուրեմն Խորենացին հիանալով կը գոչէ. «Այլ զայս ամենայն գործէ յառաջատեսութիւնն Աստուծոյ, որպէս կամք են իմոյս ասել բանի, յաղագս որ ի մեզ փրկութեան ճանապարհ: Ապա թէ ոչ, որում յուսոյ ակն ունելոյ զմանուկ Պահլաւիկ ի Հռոմայեցւոց իշխանութեանն սնուցանէին և Քրիստոսի ընծայէին հաւատով»: «Բայց յորբունս հասակի հասեալ մանկանն՝ փեսայացուցանէ հաւատացեալ այն այր, որում անուն էր Դաւիթ, ի դուստր իւր Մարիամ, որ յետ երից ամաց երկուց որդւոց լինելոյ՝ ի կամաց երկոցունց մեկնեալ ի միմեանց զատչին: Մարիամ հանդերձ մանկամբն կրտսերաւ ի վանս կանանց անկեալ կրօնաւորիւք»: Կային ուրեմն յայնմ դարու կուսանաց վանք, ուր առնականայք ևս կ'ընդունէին հանդերձ տղայ մանկամբք: «Յարբունս հասեալ մանկանն՝ զհետ ընթանայ միայնաւորի մի, որում անուն էր Նիկոմաքոս, և նա առաքէ յանապատ: Իսկ անդրանիկն առ դայեկաց մնացեալ, որ ապա աշխարհավարեալ ամուսնացաւ: Բայց հայրն նոցին Գրիգոր անցեալ գնաց առ Տրդատ՝ զհայրենեացն հատուցանել պարտիս, կամ որպէս պարտ է ասել ճշմարտութեամբ՝ զառաքելութեան վիճակ մերոյ աշխարհիս և զքահանայութեանն հանդերձ մարտիրոսութեամբ վարժելով»:

Ագաթանգեղոս երկուսն Վրթանեսի համար ըսելով համառօտիւ, թէ «աշխարհականաց կեանս էր, ապա յաշտիճան պաշտաման եկաց երիցութեան»՝ երկրորդին, Ռստակէսի խստամբերութիւնը կը նկարագրէ երկար և մեծ գովեստիւ. «Ի մանկութենէ, կ'ըսէ, ըստ աստուածագործ ծառայութեան սնեալ էր. որ ի մենակեաց, լեռնակեաց կրօնս մտեալ էր, և բազում ազգի վշտակեցութիւն ըստ Աւետարանին կրեալ ամենայն կրթութեամբ, և ամենայն իրաց հոգևորաց զանձն տուեալ—մենաւորութեան, լեռնակեցութեան, քաղցի և ծարաւոյ և բանջարաճաշակ կենաց, և արգելանաց անլուսից, խարազնազգեստ և գետնատարած անկողնոց, և բազում անգամ զհեշտական հանգիստն գիշերաց, զհարկ քնոյ յոտնաւոր տքնութեան ի թարթափ ական վճարելով, և զայս արարեալ ոչ սակաւ ժամանակս: Եւ այսպէս ամենայն փորձութեանց ի վերայ հասելոյ կամայական քաջութեամբ տարեալ, և նովին լուսաւորեալ և պայծառացեալ, և ծանօթական և հաճոյ եղեալ առաջի Աստուծոյ և ամենայն մարդկան»:

Ըստ Խորենացւոյն՝ ո՛չ Գրիգոր խնդրեց զնոսա, և ոչ նոքա զնա, ո՛չ միայն հալածանաց ժամանակ, այլև յետ փառաւորելոյ Հօրն, վասն զի ոչ թէ պատիւ կը խնդրէին, այլ պատիւն զհետ նոցա կը վազէր.—«Արդարև, կ'ըսէ, հօր սքանչելւոյ որդիք զարմանալիք. զի ո՛չ նա խնդրեաց զորդիսն, յորժամ դարձաւ ընդ Տրդատայ, և ոչ նոքա չոգան առ նա. և այն դրեթէ վասն երկիւղի հալածանացն. բայց և ոչ ի քահանայանալն և ի փառաւորել հօրն երևեալ պերճացան նոքա, անսպառին և անանցականին միայն ըսկելով. որք ոչ զպատիւն յինքեանս ձգէին, այլ պատիւ զհետ նոցա ընթացաւ, որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»:

Արդարև, ըստ Ագաթանգեղոսի, այսպէս ակնարկէ նաև Խորենացին, ոչ ոք գիտէր, և ոչ իսկ Տրդատ, թէ Լուսաւորիչ ունէր որդիս. անագան ուրեմն իմացուեցաւ այս.—«Իբրև կարի կարօտեալ էր թագաւորն աշխարհաւն հանդերձ զնմանէ (զԳրիգորէ), զի ի մէջ նոցա բնակեսցէ՝ լուան յումեմն ի տեղեկաց, որ գիտակ արարին զթագաւորն վասն սրբոյն Գրիգորի, զի յառաջ մինչդեռ ի մանկութեան տիսն՝ էր ամուսնացեալ և երկուս որդիս ստացեալ»: Ըստ Խորենացւոյն՝ այս տեղեկութիւնը տուող եղաւ Տաճատ, Աշոցան տէր, քեռայրն Արտաւազդայ Մանդակունւոյ.—«Սա (Տաճատ) էր որ յայտնի զգացոյց աներոյն իւրոյ Արտաւազդայ, և նա արքային, նախ՝ զԳրիգոր Անակայ լինել որդի, և ապա զկնի վասն որդւոցն Գրիգորի, որպէս հմուտ եղեալ ի Կեսարացւոց քաղաքին բնակելով»: Բայց Բուզանդ չգիտեր զայս, նա մանաւանդ ի սկզբանէ ընդ Լուսաւորչին գիտէ զորդիս նորա, մանաւանդ զԱրիստակէս.—«Կրտսեր որդին Արիստակէս հօրն էր գործակից եպիսկոպոսակից յամենայն ընթացս վարդապետութեան զամենայն աւուրս կենաց իւրոց մինչև յօրն քրիստոսակոչ հանգստեանն իւրոյ» (Բուզ. Գ. Բ.):

Պատմութիւն ծննդեան և վարուց Գրիգորի և որդւոց նորա, զոր կը բերէ Խորենացին որպէս թէ առնլով Արտիթեայ եպիսկոպոսի թուղթէն, և զոր կ'ակնարկէ միայն համառօտիւ Ագաթանգեղոս (Գ. և ձԻԳ.)՝ է կատարեալ վկայաբանական, նորանշան դիպօք, ուստի և ըստ անաչառ օրինաց քննադատութեան չկրնար ընդունուիլ իբրև պատմական: Առ ի չգոյէ ժամանակակից պատմութեան Գրիգորի անձին վարուց վրայ՝ սաչափ միայն կը թուի հաւանական, թէ ինչպէս կապադովկացի անունն ևս Գրիգոր է բաւական ապացոյց՝ էր նա կապադովկացի, թերևս հովիւ հայ քրիստոնէից ի կողմանէ Կեսարիոյ եկեղեցւոյն, որոյ թեմ էր Հայաստան, և յետ դարձին Հայոց՝ ի խնդրոյ Տրդատայ առաւ նոյն մայր եկեղեցւոյ կողմանէ Հայաստանեայց նորընծայ եկեղեցւոյն կատարեալ մետրապո-

տական իրաւասութիւնը առ պայմանաւ, որ յաջորդք նորա առնուին ձեռնադրութիւնն ի Կեսարիոյ, և եղաւ իսկ այնպէս. քանզի գրեթէ բոլոր յաջորդք Լուսաւորչին մինչև ի մեծն Սահակ կ'երթային առնուլ կաթողիկոսութեան ձեռնադրութիւնն ի Կեսարիա։ Եթէ չհամարինք ևս Կեսարիոյ եկեղեցւոյն թուղթն (առ Ագաթանգեղոսի ՃԺԶ.), ուր յիշուած է այս պայմանն, ճշմարիտ՝ սակայն պայմանը ճշմարիտ է։ Ագաթանգեղոս, կամ մանաւանդ յօրինիչ այն մատենին, ո ոք և էր՝ կը գրէր զայս Ե. դարուն կիսուն, երբ այս պայմանին համար կը յուզուէր սաստիկ վէճ ի մէջ Հայոց և Յունաց առ Սահակաւ, որ ուրեց այս պայմանը, և այս պատճառաւ մետրապոլիտն Կեսարիոյ զատեց Յունաց բաժնին Հայերն յիրաւասութենէն Սահակայ, մինչև հարկ լինել այս վերջնոյն բողոքել ի Կոստանդնուպոլիս առ պատրիարքն և առ Անատոլիոս զօրավար։ Այս խնդրոյն վրայ խօսուած է այլուր։ (Տես և Խոր. Գ. ԾԵ, ԾԸ. և Բուզ. Ե. ԻԹ.)։

Ի լրումն վկայաբանական պատմութեան դարձին Հայոց՝ կը մնայ կէտ մի, այն է Լուսաւորչին և Հռիփսիմեանց նահատակութեան պատմութիւն։ Խորենացին, որ ոչ ժամանակակից էր և ոչ ականատես Հայոց դարձին, յիշելով միայն այն դարձին պատմական կամ իբր պատմական մասը՝ մնացելոյ, այն է հրաշալի դիպաց համար, որովք լի է այն պատմութիւնն, կ'ուղարկէ ընթերցողս իւր Ագաթանգեղոսի իբրև ականատես վկայի, զոր և կը համարի քարտուղար Տրդատայ։ Այս էր հաւատք ո՛չ Խորենացւոյն միայն, այլև բոլոր ազգին մինչև մեր օրերը, և այս՝ բստ բանից Ագաթանգեղոսի միայն, առանց ուրիշ ժամանակակից վկայութեան։ Ահա բանք Ագաթանգեղոսի. «Հրաման հասեալ առ իս ումն Ագաթանգեղոս ի քաղաքէ ի մեծն Հռոմայ, և վարժեալ հայրենի արուեստիւ հռոմայեցի և յունարէն ուսեալ դպրութիւն, և ի վերայ այսոցիկ հասեալ ի դուռն Արշակունեաց, քաջի առաքինւոյ ուժեղ և պատերազմող Տրդատայ,... ոչ ի հին համբաւուց տեղեկացեալ մատենագրել, այլ մեզէն իսկ եղեալ ականատես կերպարանաց, և առընթերակաց հոգևորական գործոցն, և լուսաւոր շնորհապատում վարդապետութեանն»։ Այս վկայութեան հակառակ, առանց երկբայութեան է այսօր, թէ Ագաթանգեղոսի ոչ միայն անունն է սխալ, այլև գրեթէ բովանդակ մատեանն է լոկ զրոյց (légende), լի հրաշիւք և դիպօք, զորս չկրնար իբրև ճշմարիտ ընդունել արդի քննադատութիւնն։ Ահա՛ պատմութիւնն Ագաթանգեղոսի համառօտիւ.—

Տրդատ, յետ մենամարտութեան ընդ թագաւորին Գթաց և յաղթութեանն, առնլով ի վարձ Դիոկղետիանոսէ զիւր հայրենի

թագաւորութիւնն՝ կու 'գայ ի Հայս, յԵկեղեաց գաւառ, ի գիւղն Երիզայ, ուր էր մեհեան Անահտայ, և կը հրամայէ Գրիգորի թաստերէ պսակներ տանել նուէր Անահտայ։ Գրիգոր չառնուր յանձն։ Տրդատ, որպէս թէ չգիտնալով Գրիգորի քրիստոնէութիւնը՝ կ'ըսէ. «Այսչափ ամք են զի յամենայն զօրութենէ քումմէ ծառայեցեր ինձ միամտութեամբ, և ես գոհ էի զվաստակոց քոց. ընդէ՞ր ոչ առնես զկամս իմ». Թէպէտ . ըստ նորին իսկ Ագաթանգեղոսի՝ Տրդատ գիտէր Գրիգորի քրիստոնէութիւնը և վասն այսր տանջած ևս էր զնա կանխաւ բանտիւք և կապանօք.—«Իբրև տեղեկացաւ (Գրիգոր) ի դայեկէն իւրմէ հայրենի գործոցն որ եղեալն էին՝ ել և գնաց առ Տրդատիոս ըստ հեշտ պաշտաման. և թաքուցանէր զանձն և զայն ինչ ի վեր ոչ հանէր թէ ո՛յր, կամ ուստի՛ կամ ո՛րպէս, կամ զի՛արդ. զանձն ի ծառայութիւն տուեալ ի հնազանդութեան պաշտէր առաջի նորա։.. Իսկ իբրև զգացեալ Տրդատիոս վասն Գրիգորի, թէ քրիստոնէական պաշտամանն հաղորդ է՝ սկսեալ այնուհետև պատուհասակոծ առնէր զնա, և ազգի ազգի արհաւիրս արկանէր ի վերայ նորա. բազում անգամ ի բանտս և ի կապանս տանջանօք նեղէր զնա՝ թողուլ ի բաց լինել նմա յերկրպագութենէն Քրիստոսի, ի հնազանդութիւն դառնալ նմա դիցն սնոտեաց և պղծութեան պաշտաման» (Ագ. Գ.)։ Զիարդ և իցէ՝ կը տրուին Գրիգորի անհնարին տանջանք, զորս Գաթըրճեան կը համառօտէ այսպէս. «գայլ ի բերան դնել և պնդել ի գելոցս պրկեալս առասանօք (զաւուրս 7). կախել գլխիվայր զմիոյ ոտանէն և ծեծել գալար բրօք ստէպ (զաւուրս 7). պնդել կոճեղօք զոլոքս ոտիցն, մինչև ի ծայրից մատանցն ցայտել արեան. հարկանել բևեռս երկաթիս ընդ ներբանսն և այնպէս զձեռանէ առեալ յայսկոյս յայնկոյս շրջեցուցանել. հարկանել զաչսն ուժգին և հանել կառափս ի գլուխն. եդեալ զգլուխն ի մամուլս՝ ոլորել, և միանգամայն քացախ և աղ և բորակ փչել եղեգամբ ընդ ռնգունսն. անցուցեալ պարկ լի մոխրով ընդ գլուխն՝ կապել թուլագոյնս զպարանոցաւ, զի ի տալն և առնուլ շունչ վտանգեսցի (զաւուրս 6). կախել գլխիվայր և ջուր եռացեալ ձագարաւ յորովայնն արկանել. բերել զկոզս երկաթի քերչօք. տարածանել ի գետնի տատասկ երկաթի բազում և թաւալել ի վերայ, քարշել, շրջշրջել և թաղել ի տատասկի անդ. դնել կապիճս երկաթիս ի ծունկսն և վարել ուռունս ստուարս, բառնալ ի կախաղան (զաւուրս 3), և կապար հալեալ ջերմաջերմ հոսել զմարմնովքն»։ Արդարև տանջանք, յորոց ապրել անհնար էր. բայց և այնպէս Գրիգոր կը մնայ կենդանի։ Ի փոխճանի իմանալով Տրդատ ի Տաճատայ քեռանէն Արտաւազդայ Մանդակունւոյ սպարապետին իւրոյ, թէ

Գրիգոր որդի էր Անակայ մահապարտի՝ կը նետէ զնա Արտա-
շատու վիրապը, որ էր գուբ մահապարտաց, ուր կը մնայ Գրիգոր
իբրև հնգետասան ամ օձերու հետ, և կ'ապրի նկանակովն՝ զոր
կին մի երկնաւոր տեսլեամբ օր ըստ օրէ բերելով կը նետէ գուբը։
Յետ այսորիկ Տրդատ, որպէս թէ մեծ յաղթութիւն կատարած էր՝
կը հանէ երկու հրովարտակ, ուր կը հրամայէ իւր իշխաններուն և
կուսակալներուն՝ մահուամբ պատժել զքրիստոնեայս, կը պատուի-
րէ նաև իւր հպատակներուն մահու սպառնալեօք՝ մատնել այն-
պիսիներն իշխանութեան (Ագ. ԺԲ.)։ «Այսպէս, կ'ըսէ Գաթըրճեան,
փակի առաջին վարագոյն գործի Հայոց աշխարհին»։

Բայց յանկարծ հալածանաց մրրիկը կը բերէ ի Հայս Հռոմայե-
ցւոց կողմէն խումբ մի կուսանաց, որ գալով գաղտ կը բնակէ «ի
Հնձանայարկս այգեստանւոյն», ի հիւսիսոյ արևելից Վաղարշապա-
տու։ Այս կուսանաց մէջ, որոց գլխաւորին անունն էր Գայիանէ՝
կար կոյս մի գեղեցիկ յոյժ, Հռիփսիմէ անուն։ Ըստ Ագաթանգե-
ղոսի՝ կը թուի թէ այս կուսանք էին քաջ արուեստագէտ և ու-
նէին գործարան. քանզի մին ի նոցանէ «ունէր արուեստ ապակա-
գործութեան, առնել ուլունս ապակեղէնս», և այսու կը հայթայ-
թէին իրենց օրական պարէնը։ Այնչափ բազմութեան կանանց գա-
լուստը մայրաքաղաքին մօտ չկարէր մնալ զանխուլ. ուստի հռչակ-
ուեցաւ իսկոյն, մանաւանդ չքնաղ գեղեցկութիւնն Հռիփսիմեայ,
զոր բերել կու տայ թագաւորն «բռնաբար, մերթ վերամբարձ,
մերթ ի քարշ, յապարանս թագաւորին ի սենեակն արքունի»։ Հոս
չմոռնանք զարմանալի նշան մը, զոր կը պատմէ Ագաթանգեղոս։
Պարկեշտագեղ կուսանք տեսնելով այս բռնութիւնը, գիտնալով ևս
թագաւորին փառաշատ նպատակը՝ կ'սկսին աղօթել ջերմ եռանդեամբ,
և լինի որոտումն այնպէս սաստիկ, մինչև, կ'ըսէ հաւատարիմ
պատմիչն, «թմբրեալ լինէին մարդիկ յահէ անտի, և բազմաց ըն-
դոստուցեալ անգուշեալ բազում երիվարք հեծելոց յահէ անտի՝ ըզ-
բազումս ընկեցեալ և զբազումս ատամթուր հարեալ սատակէին»։

Երկիցս կը փորձէ թագաւորն մերձենալ Հռիփսիմեայ, կռուե-
լով մի անգամ եօթն ժամ, և երկրորդին՝ երեք ժամ. բայց կոյսն
զօրացեալ յԱստուածուստ՝ կը յաղթէ թագաւորին, և թողլով զն
մերկ կողոպուտ թագաւորական հանդերձէն և նշաններէն, և բա-
նալով դուռը և ճեղքելով ամբոխը՝ կու գայ իւր ընկերներուն. և
մինչդեռ կ'աղօթէր՝ կը հասնի դահճապետն գիշերային բազմութեամբ
դահճաց։ Նախ լեզուն կը կտրեն, յետոյ պրկելով ցիցերու՝ կը խո-
րովեն մարմինը կանթեղօք, դուրս կը թափեն փորոտին, և մինչ
կենդանի էր տակաւին՝ կը փորեն աչուըներն և անդամ անդամ կը

յօշեն։ Գրեթէ նոյնօրինակ կոտորած կ'սպառնուի Գայիանէ ուրիշ ընկերներով։ Բոլոր խումբն, էր ըստ Ագաթանգեղոսի, աւելի քան եօթանասուն մարդ, յորոց երեսուն և եօթը միայն սպանուեցան. մնացելոց համար վկայաբանն մեր չըսեր թէ ինչ եղան։ Երկուց համար միայն, Նունեայ և Մանեայ, այսչափ ինչ գիտենք ի Խորենացւոյն, թէ Նունէ երթալով ի Վիրս՝ եղաւ առաքեալ նոցա, զորոյ հրաշալի պատմութիւնն ունի Խորենացւոյն Բ. դպրութեան ՁԶ գլուխն. իսկ Մանէ չկրնալով հասնել իւր ընկերներուն ի փախստեան՝ կը մնայ Դարանաղեաց լեռներուն մէջ յայրի, որ յետոյ կոչուեցաւ, ըստ Խորենացւոյն, յանուն նորա Մանեայ այր, ուր կ'ըսուի թէ առանձնացաւ Լուսաւորիչն մեր մինչև ի մահ իւր։ Զայսմանէ խօսուած է այլուր։

Տրդատ տկար աղջկանէ մը յաղթուելու ամօթէն, թերևս նաև, եթէ ճշմարիտ է պատմութիւնն, ի սիրոյն առ Հռիփսիմէ,—«սիրտ հատեալ զհետ՝ կ'ըսէր, անմռայ ի մտացս չանկանի»,—«ընկզմեալ ի խոր տրտմութիւն», մինչ կամէր ելանել յորս՝ յանկարծ կը հասնի պատուհաս Աստուծմէ. թագաւորն փոխուելով ի խոզ՝ կ'երթայ խոտաճարակ լինել անտառներու մէջ խոզերու հետ, և բոլոր բնակիչք քաղաքին կ'այսահարին։ Խօսրովիդուխտ, քոյր թագաւորին հնգիցս կը տեսնէ տեսիլ, որ կը պատուիրէր սպառնալեօք՝ հանել զԳրիգոր վիրապէն։ Գրիգոր վիրապէն հանուելով կը բժշկէ այսահարներն. կու գայ նաև Տրդատ խոզացեալ կերպարանօքն։ Թէ Ագաթանգեղոս նկարագրապէս կ'առնու Տրդատայ ի խոզ փոխուիլն՝ յայտնի է սա նկարագրէն. «Էր, ասէ, նա փոխեալ ի կերպարանս աղբեւայոյգ խոզաց. քանզի թաւացեալ էին առհասարակ ամենայն մարմինքն, և ընդ անդամս ոսկերացն բուսեալ էր խոզանստև իբրև մեծամեծ վարազաց վայրենեաց. և եղնգունք ծայրից մատանցն ոտիցն և ձեռացն կճղակեալք էին իբրև զգետնաբիր արմատակեր կնճիթացն։ Նա և պատկեր երեսացն դիմացն շրջեալ էր ի պատկեր և ի կնճիթ գոճանացն յեղեգան բնակելոց... մեծաձայն ճչել գնչել, հնչել, բոխահելով փրփրացեալ, դիզեալ զկնճիթակերպ երեսօքն, լեալ ի նմանութիւն չորքոտանեաց, ընթացեալ յեղեգան բնակերամ գազանացն ի միջոյ՝ հասանէր յայն տեղին»։ Պահոց վաթսուն և վեց օրերը՝ զորս սահմանած էր Լուսաւորիչ՝ կը մնայ այնպէս թագաւորն, «ձորձապատեալ պատառեալ ի մէջ բազմամբոխ աշխարհաժողով հրապարակացն»։ Ագաթանգեղոս այս նկարագիրը կ'ընէ երիցս։ Յետ սակաւ աւուրց, այսինքն յետ որոյ շինեցան վկայարանք Հռիփսիմեանց և գետեղեցան մարմինք նոցա յարկերս՝ աղօթիւք Գրիգորի բժշկուելով թագաւորն՝ կ'առնու մատաղ մանկան մարմին.—

«Երանելին Գրիգոր մեծաւ աղօթիւք և պաղատանօք խնդրէր ուժգին վասն բժշկութեան թագաւորին. յանկարծակի հարեալ զգողման՝ զխորխն խոզի արտաքոյ մարմնոյն ի բաց ընկենոյր, ժանգատեսիլ ժանեօքն և կնճթագէմ երեսօքն հանդերձ. խոզանացեալ մազովն թաւութեամբ զխորխացեալ կաշին ի բաց ընկենոյր. և դէմք երե-սացն դարձան յիւր կերպարանն. և մարմինն փափկացեալ մատա-ղացեալ լինէր իբրև զառօրեայ մանկան ծնելոյ. և ողջանդամ մարմ-նովքն ամենևին բժշկեցաւ»:

Յետ այսորիկ Գրիգոր աջակցութեամբ Տրդատայ կ'սկսի կործա-նել ջնջել հեթանոսական պաշտամանց տեղերը, բայց դարձեալ սքանչելեօք, այսինքն խաչին նշանաւ միայն փայտակերտ շինուածք կ'այրէին, քարաշէնքն ի հիմանց շարժելով կը տապալէին, և որ աւե-լին է՝ դեւք ի նմանութիւն առնեձիոյ մկնդաւոր, սուսաւոր, նիզա-կօք և նշանօք ի զէն և ի զարդ վառեալ՝ մեծագոչ աղաղակաւ կը կուլին, վերուստ ի վայր շինուածներէն քարեր և նետեր տեղա-լով: Շատ մեհեաններ այսպէս կործանելէն ետքը՝ Տրդատ բազմու-թեամբ նախարարաց կը ղրկէ զԳրիգոր ի Կեսարիա՝ ձեռնադրել հո-վիւ Հայոց: Ի դարձին կը կործանին ուրիշ մեհեաններ. նշանաւոր է մանաւանդ կործանումն Վահէվահեան մեհենին յԱշտիշատ: Խա-չանիշ փայտէն, զոր Գրիգոր ունէր ի ձեռին՝ ելաւ հողմ սաստիկ և տապալեց շինուածն, ուր նախ շինուեցան եկեղեցի և վկայարանք, մկրտուեցաւ Տրդատ ընտանեօք և ուրիշ անթիւ մարդիկ: Հոս դար-ձեալ Ագաթանգեղոս կը պատմէ սքանչելիս: Երբ թագաւորն և բազմութիւնք մարդկան իջան յԵփրատ գետ մկրտել՝ «զտեղի ա-ռեալ ջուրք գետոյն անդրէն դարձան ընդ կրունկն. և լոյս սաստիկ երևեալ ի նմանութիւն սեան լուսաւորի՝ կայր ի վերայ ջուրց գե-տոյն, և ի վերայ նորա նմանութիւն տէրունական խաչին. և այն-չափ ծագեաց՝ մինչև զճառագայթս արեգականն նուազեցուցանէր: Եւ իւղն օծութեան զոր արկանէր Գրիգորիոս ի վերայ մարդկանն՝ շրջան առեալ ի մէջ գետոյն շուրջ զմարդկաւն խաղայր»: Եօթն օրուան մէջ, եթէ պարտ է հաւատալ Ագաթանգեղոսի՝ աւելի քան չորս միլիոն մարդ մկրտուեցաւ: Դպրոցներ հաստատուեցան յու-սումն դպրութեան, մանաւանդ քրմաց համար, յորոց բազումք կարգեցան հովիւ այլևայլ տեղեր:

Գալով քարոզութեանն՝ Ագաթանգեղոս կարի իմն կ'ընդարձակէ զայս, որպէս թէ յարևմտից յարևելս, ի հիւսիսոյ ի հարաւ բոլոր Հայաստան ընկալաւ քրիստոնէութիւնը.—«Ընդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչև ի ծագս ձգէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն և աւետարանութեանն. ի Սատաղացւոց քաղաքէն

մինչեւ առ աշխարհաւն Խաղտեաց, մինչեւ առ Կաղարջօք, մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչ ի դրունս Ալանաց, մինչեւ ի սահմանս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց. և յԱմդացւոց քաղաքէն մինչեւ առ Մծբին քաղաքաւ քերէր առ սահմանօքն Ասորւոց, առ Նոր Շիրական երկրաւն, և առ Կորդւօք մինչեւ յամուր երկիրն Մարաց, մինչեւ առ տամբն Մահքրտան իշխանին, մինչեւ յԱտրպատական ձգէր տարածանէր զաւետարանութիւնն իւր»։ Բայց այս եւս է աւելի. հաւանականագոյնն, մանաւանդ թէ ճշմարտագոյնն է այս. դարձն սկսաւ պալատէն. և ապա ըստ Սոզոմենոսի՝ թագաւորն հրամանօք կամ քարոզօք յօժարեցուց զժողովուրդն ընդունել նոր վարդապետութիւնը, և չիք տարակոյս, թէ ընդունողք եւս, և այն՝ մեծամեծներէն՝ առ երկիւղի կամ ակնածութեան ընկալան։ Ազգ մը, որ դարերով ծնեալ և սնեալ ի կռապաշտութեան, առանց ուսման և դպրութեան, մանաւանդ քրիստոնէական ուսման՝ ըմբռնել անգամ չէր կարող Աւետարանին մաքուր պատուէրներն։ Բանք Բուզանդայ, զոր ոմանք առ ատելութեան բսուած կը համարին՝ շատ ճշմարիտ են. «Ի վաղնջուց, ասէ, յորմէ հետէ առին նոքա զանուն քրիստոնէութեանն՝ լոկ միայն իբրեւ զկրօնս իմն մարդկութեան յանձինս իւրեանց և ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան, այլ իբրեւ զմոլորութիւն իմն մարդկան ի հարկէ։ Ոչ եթէ որպէս պարտն էր՝ գիտութեամբ, յուսով և հաւատով, բայց միայն սակաւ ինչ որք զհանգամանս գիտէին հելլէն կամ ասորի դպրութեանց, որք էին հասու ինչ այնմ փոքր ի շատէ։ Իսկ որք արտաքոյ քան զգիտութիւն արուեստին (ուսման Ա. գրոց) էին այլ խառնաղանճ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն կամ շինականութեանն, եթէ զցայգ և զցերեկ նստեալ վարդապետայցն և ըստ նմանութեան ամպոցն իբր զյորդահեղեղ ինչ անձրեւաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին՝ ոչ ոք ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի բան և ոչ կէս բանի, և ոչ գոյզն յիշատակ ինչ, և ոչ նշմարանս ինչ զոր լսէինն՝ և ոչ կարէին ունել ինչ ի մտի։ Վասն զի միտք իւրեանց ընդ անպիտանս ընդ անօգուտս եւեթ զբօսեալ էին. զոր օրինակ մանկունք տղայք ընդ մանկութեանն և ընդ տղայութեանն խաղալիկ խանդարեալք, ի զպիտոյիցն և զկարեւորացն ոչինչ փոյթ արարեալ, սոյնպէս և զգերեալ մաշէին յանուղղայ կրթութիւն ընդ չքնաղի մտացն ի հնութիւն հեթանոսութեան սովորութեանց, և զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք, և նմին հաւատացեալք՝ ի նոյն հանապազորդէին»։ Գալով միւսանգամ Ագաթանգեղոսի պատմութեան, զոր իբրեւ զրոյց միայն բերինք համառօտիւ, թերի

չթողնելու համար մեր գործը՝ կ՚ըսենք թէ ըստ ամենայնի իբրեւ պատմութիւն ընդունել զայն ըստ սկզբան արդի քննադատութեան՝ անհնար է։ Զայս կը խոստովանի և Գաթըրճեան.—

«Արդարեւ, կ՚ըսէ, եթէ ըստ սկզբանց եւրոպական բանադատութեան կամիցիմք վարել՝ Ա. Զմարթի զայն մատեան (զԱգաթանգեղոս) գրութիւն այնց ժամանակաց համարել յորս գրեալ ասէ զանձնէ ինքն մատեանն, այլ գործ վերջին կիսոյ դարուն չորրորդի (ըստ մեզ՝ առաջնոյ կիսոյ հինգերորդին)։ Բ. Ըստ նիւթոյն երեւի 1. Սակաւ ինչ անտեղեկութիւն ոչ միայն քաղաքային հանգամանաց ժամանակին, զորմէ գրէ մատենագիրն, այլ և եկեղեցական հնախօսութեան. 2. Աւելաբանութիւն (չափազանցութիւն) բազում ուրեք, և 3. Ցանկութիւն սաստիկ՝ պատմելոյ նորանշան զարմանալիս, մինչեւ թուել իմն, թէ ըստ Դանիէլի գրոցն ձեւեալ իցէ պատմութիւնն, որպէս ինչ՝ կռիւ զգաստն Հռիփսիմեայ ընդ Թագաւորին, բանալ զդուռն սենեկին և փակել արտաքս՝ յիշեցուցանեն զպատերազմն Շուշանայ ընդ ծերոցն լկտեաց, և զդուռնն պարտիզին և զայլն ամենայն. փոխել թագաւորին Հայոց ի խոզակերպ կերպարանս և անասնական բնակութիւնն՝ ակնարկէ զանասնակերպն լինել թագաւորին Բաբելացւոց և զբնակել յանտառս. արկանել Գրիգորի ի վիրապ մահապարտաց, կալ անվնաս, արկանել կնոջ միոյ ազդմամբ Հրեշտակի նկանակ մի օր ըստ օրէ ի վիրապն, ելանել անյոյս՝ այս ամենայն յիշեցուցանէ զարկանել Դանիէլի ի գուբն առիւծուց, զբերելն Ամբակումայ կերակուր օգնականութեամբ Հրեշտակին, զմնալն անարատ և զելանել արտաքս յաղթող»։

«Որչափ և խիստ են այն բանադատութիւնն իցէ—կը յաւելու Գաթըրճեան—որ ցայս վայր յանդգնիցի յառաջել՝ սակայն աստի յառաջ չիշխէ խաղալ, այսինքն ընդ երկրորդական ինչ հանգամանաց զէական մասունս պատմութեան դարձին Հայոց ջնջել»։ (Գաթըրճ. Տիեզ. պատմ. Հտ. Բ. էջ 476)։

Գաթըրճեան չկամի, և չկարէր իսկ, իբրեւ արդարեւ երկիւղած եկեղեցական՝ «մանր կրկտել» այն բանադատութեան պատճառը, որ ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ ի վեր քան զբնութիւն հանգամանք պատմութեան դարձին ըստ Ագաթանգեղոսի։ Արդարեւ եւրոպական բանադատութիւնն չջնջեր և չկարէ իսկ ջնջել այն դարձին երկրորդական հանգամանաց հետ էական մասերն, այսինքն ինչ որ իբրեւ ճշմարիտ պատմական՝ է բնական և ունի զիւր բնական պատճառ։ Ապաքէն քան զդարձն Հայոց նշանաւոր, նա գրեթէ անհնարին էր դարձն հռոմէական պետութեան, և քան զնա նշանաւոր՝ մուտն քրիստոնէութեան յաշխարհ. սակայն գիտենք թէ երկոքին ևս եղան

արդիւնք բնական պատճառաց։ Լսենք երևելի անձի մը, որ է պատմիչ և փիլիսոփայ միանգամայն։ «Ի հատանել Հռոմէական պետութեան, ըստ քաղաքային և զինուորական կարգաց, ի ծագ անդր մեծութեան՝ հասեալ էր նա ըստ բարոյից ևս ի ծայր ապականութեան—էր լեալ անհնարին եպիկուրեան։ Զայն իմն ստէպ յեղյեղուին, թէ կեանք պարտին լինել իբրև տօն ուրախութեան, ուր առաքինութիւն չպարտի գտանել մուտ՝ բայց իբրև համեմ իմն հեշտութեան, և ժուժկալութիւն՝ իբրև հնարք յերկարելոյ զկեանս։ Սրահք խնջոյից պաղպաջունք յոսկւոյ և յականց պատուականաց, ծառայք զարդարեալք ի զարդ մեծաշուք, հրապոյրք կանանց լրկտեաց, բաղանիք շքեղք, տեսիլք թատերաց և կռիւք սուսերամարտից—այսոքիկ էին յայնժամ՝ զորս ազնուականութիւն իմն համարէր հռոմէական սնապարծութիւնն։ Յաղթողք աշխարհի ոչ այլում իմիք տանէին պաշտօն՝ բայց բռնութեան։ Բռնութիւնն բաւական էր տալ նոցա զամենայն ինչ, զոր շահեալ էր մարդկան ի վաղուց աշխատութեամբ և տուրևառիւք։ Ինչք և արարք գրաւեալ յարքունիս, և հարկք զորս հարկանէին ի նահանգաց նահանգաց՝ էին արգասիք յաջող պատերազմաց, և կայսրն գլխովին էր կենդանի նշանակ բռնութեան։ Պայծառութիւնն, որով թուէր փայլել հռոմէական ընկերութիւնն՝ շող իմն էր աղօտ, զոր արձակէր միջերկրական աշխարհն, հատեալ յանհնարին ապականութիւն։

«Ի միում ի նահանգաց պետութեանն յԱսիա, այն է յԱսորիս եկեալ էին ի մի վայր արք ոմանք ի խոնարհագոյն կարգէ, որոց կէտ նպատակի էր աստուածպաշտութիւն և ողորմածութիւն։ Վարդապետութիւն նոցա էր պատշաճագոյնն և համեմատագոյն ոգւոյ հասարակաց եղբայրութեան, որ ծնանէր ի հաւասարութենէ կենաց ազգաց նուաճելոց։ Զայն վարդապետութիւն ուսեալ էր նոցա ի Յիսուսէ։ Հիմն հաւատոյ հրէական ժողովրդեան էր յայնժամ հին ինչ աւանդութիւն ի Փրկիչ ոք, որ ծնանելոց էր ի միջի նոցա ի նորոգել զնախնի փառս ազգին։ Աշակերտք Յիսուսի հաւատացին, թէ նա էր Փրկիչն այն, օծեալն (Մեսիա), որում ակն ունէր ժողովուրդն ի վաղուց հետէ, մինչ քահանայք զվարդապետութիւն նորա համարեցան հակառակ շահուն իւրեանց, և ամբաստան եղեն զնմանէ յատենի հռոմայեցի դատաւորին, որ վասն շնորհս առնելոյ նոցա՝ մատնեաց զնա ակամայ ի մահ։

«Այլ պատուէրք մարդասիրութեան և եղբայրութեան, զորս ուսուցեալ էր նորա՝ կացին մնացին յետ այնորիկ։ Աշակերտք նորա փոխանակ ցրուելոյ՝ եկին կազմեցան ի մի խումբ։ Հիմն ընկերութեան նոցա էր հաւասարութիւն. իւրաքանչիւր տայր զինչս և

պշտաւ էր ի հասարակաց պէտս: Այրիք և որբք խնամէին, աղքատք և հիւանդք գտանէին դարմանս: Այսպէս ծնաւ ընկերութիւն նոր և հզօր, այն է եկեղեցին. նոր՝ քանզի նման նորա չեղև երբէք ի հնումն. հզօր՝ քանզի առանձին եկեղեցիք, զատուցեալք ի սկզբանն՝ ոչինչ յամեցին գալ մտանել ի դաշն յօդուած հասարակաց: Այսպէս կազմեալ յերիւրեալ տարաւ քրիստոնէութիւնն ի գլուխ զամենայն զիւր աշխարհական յաղթութիւնսն:

«Որպէս տեսաք՝ զինուորական զօրութիւնն Հռոմայ եբեր խաղաղութիւն հասարակաց և ծնաւ ոգի եղբայրութեան յազգս նուաճեալս: Ժամանակն էր յաջող յարագ ծաւալումն նորոց կարգաց քրիստոնէութեան ընդ բովանդակ պետութիւնն: Սկիզբն առեալ յերկրէն Ասորւոց՝ տարածէր ուսումնն վաղվաղակի ի Փոքրն Ասիա, ի Կիպրոս, ի Յոյնս, յԻտալիա. եգիտ մուտ մինչև ի Գաղղիա և ի մեծն Բրիտանիա: Քարոզք նորոյ վարդապետութեանն, որ սփռեցան միանգամայն ի կողմանս կողմանս՝ փութացուցին զտարածումն: Եւ ոչ մին ի հին փիլիսոփայից աղանդոց արկ ի կիր այնպիսի հնարս: Ըստ քաղաքական հանգամանաց ժամանակին՝ սահմանք հռոմէական պետութեանն եղեն սահմանք նորոյ վարդապետութեանն: Հռոմ, ուր ասեն թէ մեռաւ Պետրոս, և ոչ Երուսաղէմ, ուր, առանց հակառակութեան, մեռեալ էր Փրկիչն՝ եղև մայրաքաղաք կրօնիցն: Լաւագոյն էր առ այս կայսերական քաղաքն եօթնբլրեան քան զբարձունսն Գեթսեմանեայ և Գողգոթայի, թէպէտ նուիրական էին սոքա յիշատակօք քան զՀռոմ:

«Առաւել քան զայս երիս քրիստոնէութիւնն երևեցոյց զինքն նշանաւոր երիւք այսոքիւք — մեծարել զԱստուած, վարել սրբական վարս, լինել ողորմած առ ընկերն: Յաւուրս անդ տկարութեան իւրոյ ոչ այլ ինչ արար նա՝ բայց առնել եկամուտս (prosélyte) բանիւք հաւանութեան. այլ ըստ աճել նորա թուով և զօրութեամբ՝ սկսաւ յայտնել միտութիւն իմն ի քաղաքականութիւն, այն է ցանկալ կազմել տէրութիւն ի տէրութեան, պետութիւն ի պետութեան: Այս էր ի հարկէ իմն արդիւնք զարգացման նորա: Զմտաւ ածեալ կայսերաց, եթէ այս գնացք հակառակ էին գնացից կայսրութեանն՝ ձեռն արկին ջնջել զքրիստոնէութիւնն, որպէս պահանջէր իսկ ոգին զինուորական վարչութեան, որ ոչ գիտէր այլ հնարս՝ բայց ի բռնութենէ առ ունել զտէրութիւնն հոծ և պնդակազմ:

Ի ձմերան ամին 302, քրիստոնեայ զինուորք լեգէոնաց չառին յանձն խառնել զանձինս ի պաշտօն անդր հեթանոսութեան, կարգեալ ի վաղնջուց ժամանակաց ի պատիւ դիցն: Ապստամբութիւնն տարածեցաւ այնպէս արագ և էր այնպէս սաստիկ՝ մինչև Դիոկղե-

տիանու կայսեր ի խորհուրդ մտանել, զի գիտասցէ թէ զինչ առնել պարտ էր: Դիւրին է իմանալ զդժուարութիւն իրացն, եթէ արասցուք յուշ՝ թէ կինն և դուստրն Դիոկղետիանոսի էին քրիստոնեայ: Կայսրն էր արդարև այր խորհրդական և անհնարին հմուտ քաղաքային իրաց: Գիտաց եթէ հարկ ի վերայ կայր տէրութեանն լինել դիմակալ նորոյ վարդապետութեանն. սակայն ետ պատուէր չհեղուլ ընաւ արիւն: Բայց ո՞ կարող իցէ արգելուլ զկատաղութիւն խառնաղանճ մարդկան: Նիկոմիդիա քանդեցաւ ի հիմանց, այլ փոխանակ ընդ այնր ապարանք կայսեր եղեն հրկէզ, և մին ի հրովարտակաց նորա պատառեցաւ անարգանօք: Քրիստոնեայ սպայք որ էին ի զօրուն՝ ընկեցան ի պատուոյ. կոտորած էր ամենայն ուրեք, և բազումք վկայեցին: Յոյզք խռովութեանն էին այնպէս սաստիկ՝ մինչև կայսեր իսկ չմարթել ունել զառաջս հալածանացն:

«Անդէն յայտնի եղև, եթէ քրիստոնեայք էին մին ի հզօրագոյն մասանց տէրութեանն, և զայրագնեալ ընդ անհնարին անագորունութիւնն որում էին նշաւակ՝ եդեալ էր նոցա ի մտի այլ ոչ ևս ժուժկալել: Յետ հրաժարելոյն Դիոկղետիանոսի յիշխանութենէն (305), Կոստանդիանոս, մին ի նախանձորդաց կայսերական գահոյն, տեսեալ զօգուտն որ առաջի կայր նմա ի փոփոխութենէ գնացից առաջնոցն իւրոց՝ անց ի գլուխ քրիստոնեայ կողմանն: Այսուիկ եգիտ նա յամենայն անկիւնս տէրութեանն համամիտս և համակամս իւր՝ անթիւ բազմութիւն արանց և կանանց ետուն նմա ձեռն մահուչափ: Ած նա զիւրև զարսն բարեկիրս որ էին ի զօրուն: Ի ճակատու ուրեք, զոր ետ նա մօտ ի Միղուեան կամուրջն (312), յաղթութիւնն տարեալ ի գլուխ եցոյց, եթէ չէր վրիպեալ կայսրն ի խորհուրդս իւր: Մահն Մաքսիմինեայ (313), և յետ սակաւ միոյ մահն Լիկինիայ (323) հարթեցին տապալեցին առաջի նորա զամենայն խոչ և զխութ: Նստաւ Կոստանդիանոս մեծն յաթոռն կայսերական միահեծան իբրև առաջին քրիստոնեայ կայսր (324)» (Տրեբեր, Գուպարանք գիտութեան և կրօնից, գլ. Բ.):

Այս համառօտ պատմութենէ քաջ մատենագրին յայտնի է, թէ և պատճառն, որ տուաւ քրիստոնէութեան յաղթել՝ եղաւ տակաւ մեղմով փոփոխումն մտաւոր և բարոյական հանգամանաց հռոմէական աշխարհին, և ոչ յանկարծական ինչ և անպատրաստ դիպուած և կամ ի վեր քան զբնութիւն գործուած: Ընծայել այսպիսի դիպուածոց կամ գործուածոց զդարձ հռոմէական, ինչպէս նաև Հայոց աշխարհին ի քրիստոնէութիւն՝ չէ համեմատ փիլիսոփայական հետազօտութեանց, մինչ ի բովանդակութենէ գիտութեան ունիմք փաստեր, թէ չկայ ի բնութեան յանկարծ ինչ և ի վեր քան զբնու-

թիւն (գերընական), այնու զի տիեզերք, ինչպէս ի բնականս, նոյնպէս ի բարոյականս, են մեր առջեւ հիւսեալ տողեալ իբրեւ շար իմն պատճառաց եւ արդեանց, ուր չիք նշմարանք քակելոյ կամ խզելոյ. եւ ոչ այն, որ կ՚ըսուի հրաշից համար, թէ աստուածային տեսչութեան դիտաւորութենէն է կտրել անջատել երբեմն բնական պատճառաց եւ արդեանց հիւսուածն՝ ունի ի փորձոյ հաստատութիւն: Բայց ինչ հարկ կայ մեզ մտնել աստուածաբանական վերացեալ պայքարներու. արդիւնք իրաց են այնպէս յայտնի, որ եթէ յառաջ տանինք մեր քննութիւնն ի վեր կոյս նախ քան զծագումն քրիստոնէութեան՝ կը գտնենք զնոյն բնական ընթացս պատճառի եւ արդեանց: Անտի յունական փիլիսոփայութիւնն կռուելով ընդդէմ ամօթալի բազմաստուածութեան, եւ աստի հրէական աստուածպաշտութիւնն մարգարէիւք ընդդէմ չոր եւ ցամաք պաշտամանց մովսիսականութեան՝ քրիստոնէութեամբ տուին իրարու համբոյր: Այսպէս բնական պատճառք պատրաստեցին զհռոմէական աշխարհն յընդունելութիւն քրիստոնէութեան: Չէ պարտ ուրեմն զարմանալ, թէ նոր վարդապետութիւնն, անհամեմատ սուրբ քան զհեթանոսականն, եւ բարձր քան զհրէականն, տարածեալ ընդ համօրէն հռոմէական պետութիւնն, ի հարաւոյ ի հիւսիս՝ Ափրիկական նահանգներէն եւ երջանիկ Արաբիոյ անապատէն (Պալմիւրա) մինչեւ ի Բրիտանական կղզիս, եւ յարեւելից յարեւմուտս՝ Ասորւոց երկրէն մինչեւ Գաղատական եւ Սպանիական նահանգներն, առնլով ի մէջ իւր զՄիջագետս եւ զՀայս իբրեւ ձեռակերտ (vassal) հռոմէական պետութեան՝—գրեթէ առնու զկայ առ սահմանօք այս վերջին երկու արեւելեան աշխարհաց առաջակողման Ասիոյ: Ո՞վ ըսաւ նմա. «Մինչեւ ցայս վայր եկեսցես, եւ անդր մի անցանիցես». ո՛չ ապաքէն վասն զի ոչ-հռոմէական մասն աշխարհի չունէր այն պատրաստութիւնը զոր ունէր հռոմէականն: Ո՞չ ապաքէն մասն երկրիս անդր քան զՏիգրիս անմասն է ցարդ քրիստոնէութեան օրհնութիւններէն, վասն զի չպատրաստուեցաւ նա յայն բնական ճանապարհաւ:

Այսչափ բաւական համարելով Հայոց դարձին պատճառներուն վրայ՝ գանք այժմ բուն պատմութեան հանգամանաց: Ի պատմութեան դարձին Հայոց ստուգագոյն կէտն է ժամանակն, այն է սկիզբն Դ. դարուն, այնպէս որ չունինք ըսելու բան հակառակ այսմ: Եւսեբիոս ժամանակակից, փոխանակ յիշելոյ զդարձն Հայոց՝ գիտէ զՀայս քրիստոնեայ անդէն իսկ ի սկզբան Դ. դարու, եւ ջերմագոյնս յաստուածպաշտութիւն, մինչեւ ի ստիպել զնոսա Մաքսիմինոսի Դայայ (306—313) ի կռապաշտութիւն՝ Հայք պատերազմեցան ընդ նմա եւ յաղթեցին.—«Պատերազմ եւս ի բռնաւորէ անտի

ընդ Հայոց գլգուեցաւ, ընդ արս՝ որ ի սկզբանէ բարեկամք և նիզակակիցք Հռոմէական ժողովրդեանն էին։ Բայց քանզի և նոքա քրիստոնեայք էին և ջերմաջերմք ի բարեպաշտութիւնն որ առ Աստուածութիւնն է՝ ջանացաւ աստուածատեացն բռնաւոր բռնութեամբ ածել զնոսա ի պաշտօն կռոցն և դիւաց, և յայն սակս զբարեկամսն յատելիս, զգաշնաւորսն ի թշնամիս դարձոյց»․ «և ինքըն — յաւելու պատմագիրն — ի պատերազմի անդ ընդ Հայոց հանդերձ զօրուն իւրով գունակ գունակ նեղեալ վտանգեցաւ չարաչար» (Եւս. Եկ. պատ. Դպր. Թ. գլ. Ը.)։ Եթէ ճշմարիտ է այս պատմութիւն (և է իսկ այնպէս առանց երկմտութեան), եթէ Հայք, ըստ արտաքին ժամանակակից պատմութեան իսկ (Դիոն. Կասս., Եւտրոպ., Բուզ.), յետ պարտութեանն Ներսեհի ի Գաղերիոսէ եղան միաբանգամ ընդ իշխանութեամբ Հռոմայեցւոց․ եթէ թագաւորն, որ ապաքէն տրուեցաւ նոցա կամ հաստատուեցաւ (297) ի կողմանէ Հռոմայեցւոց (Դիոկղետիանոս), էր ըստ տոհմային աւանդութեան (Ագաթ.) Տրդատ՝ ապա պատերազմն այն, որ չկարէ լինել ոչ յառաջ և ոչ յետոյ քան զամն 311՝ եղաւ առ Տրդատաւ և իբր 5 կամ 6 ամօք յետոյ քան զդարձն առ Գրիգորիւ։ Թէպէտ այսպէս անագան ուրեմն մտաւ քրիստոնէութիւնն յարքունիս Հայոց Հռոմէական ազդեցութեամբ՝ բուն մուտ նորա սակայն կը թուի լեալ հին, ոչ հեռի ժամանակաւ ի սկզբանէ անտի քրիստոնէութեան, ինչպէս կ՚ակնարկէ ասորական աւանդութիւնն դարձին Աբգարու Ուշամայ (Ղապուպնա պէն Խպէտ Շատատի, — Ղերուբնա որդի Ափշադարայ՝ ըստ Խորենացւոյն), թէպէտ ոչ վաւերական։

Գանք միաբանգամ առ Տրդատ։ Խնդիր է, թէ որպիսի առթիւ և յումմէ եղաւ թելադրութիւնն ի նպաստ քրիստոնէութեան ի միտս նախընծայ թագաւորին, որ, գէթ ըստ ազգային աւանդութեան (Ագաթ.), անհնարին գոռոզ և արբեալ ոգւով Դիոկղետիանու, Գալերեայ և Լիկինեայ, ոխերիմ թշնամեաց քրիստոնէութեան՝ էր ի սկզբան, ինչպէս կարի հաւանական է՝ հալածիչ սաստիկ։ Ըստ Խորենացւոյն, և չէ մերժելի, թելադրութիւնն այն ծնաւ ի բարեկամութենէն Տրդատայ ընդ Կոստանդիանոսի ի հարսանիս սորա ընդ Մաքսիմինեայ դստեր Դիոկղետիանոսի։ — «Ընդ նոյն աւուրս լինին հարսանիք Մաքսիմինեայ դստեր Դիոկղետիանոսի ի Նիկոմիդայ, փեսայանալով Կոստանդիանոսի Կեսարու, որդւոյ Կոստայ թագաւորին Հռոմայ, որ (Կոստանդիանոս) չէր ի դստերէն Մաքսիմիանոսի, այլ Հեղենայ պոռնիկէ ծնեալ։ Այս Կոստանդիանոս բարեկամացեալ ի հարսանիսն ընդ Տրդատայ մեր թագաւորի» (Խոր. Բ. ՁԳ.)։ Այս ակնարկութիւն Խորենացւոյն է անգին, միայն սխալ է պատմու-

թիւնն. Հարսանիքն որ եղաւ 307, մարտ 31, էր Փաւստայ դըստեր Մաքսիմիանոսի, որ հանդերձ օգոստականութեան պատուով տուաւ նաև զդուստր իւր Փաւստա ի կնութիւն Կոստանդիանոսի, շահելու համար զնա։ (Տես Գաթըրճ. Պատմ. տիեզ. Հտ. Բ. էջ 192)։ Չէ անհաւանական, թէ Տրդատ գնաց առ նոր կայսրն Կոստանդիանոս, և թելադրեցաւ ի նմանէ ընել զքրիստոնէութիւնն տիրող կրօնք երկրին, ինչպէս ինքն ըրած էր կամ ունէր ի մտի ընել։ Չէ նաև անդէպ հաւատալ, թէ նահատակութիւնք Գրիգորի և աղխողորմ մահ Հռիփսիմեանց, զորս ետ սպանանել (305) Տրդատ յանկարծ իմն ցասմամբ, ընդ որ սոսկացաւ յետոյ (Ագաթ.)—պատմութիւնք որ չեն առանց հիման—արդէն պատրաստած էին զՏըրդատ մեծ իմն փոփոխութեան (ինչպէս հալածանք անմեղ աշակերտացն Յիսուսի և մահն Ստեփանոսի՝ զառաքեալն հեթանոսաց. Ռընան, Ս. Պօղոս) և յաւելին բարոյական զօրութիւն ի քաղաքականն։

Թելադրութիւնն ի տեսութենէն Տրդատայ ընդ Կոստանդիանոսի, (եթէ ակնարկութիւն մեր է ճշմարիտ), չկարէր գալ յարգիւնս՝ բայց մեղմով և ի ստիպելոյ ժամանակին։ «Փոփոխութիւնք ի լաւ անդր որ թուին պայթել յանկարծ՝ պատրաստին ի վաղուց, մինչև լինել արդեամբ կարևոր»։ Զիարդ և իցէ՝ ամն 306, յորում ընտրեցաւ Կոստանդիանոս ի զօրուէն Աւգոստոս՝ ըստ մերձաւորագոյն հաշուոյ եղաւ տարին՝ որ արկ զհայս ի գոգ անդր քրիստոնէական ընկերութեան։ Տրդատ արքունեօքն եղաւ քրիստոնեայ, ոչ ըստ աշխարհի միայն, այլև ըստ հոգւոյ։ Պատմութիւն վարուց և գործոց սքանչելի թագաւորին, թէպէտ մեծաւ մասամբ վկայաբանական կամ զրոյց՝ քան զբաւականն յայտնի է ի ցուցանել զհոգևոր հանգամանս այն մեծ փոփոխութեան։ Ո՞չ ապաքէն քան զանհեղեդ սքանչելիս անուանեալ ատենադպրին Տրդատայ (Ագաթանգեղոս) սքանչելագոյն է և հաւանեցուցիչ պատմութիւն բնական պատճառաց և արդեանց զոր բերինք՝ ի գովեստ փառաց Աւետարանին։

Թող ըստ ոգւոյ իննևտասներորդ դարուն, որ այնպէս դժկամակ է ընդունել սքանչելիս՝ զ'ի վեր քան զբնութիւն պայման պատմութեանն իջեցունենք ի լոկ բնական։ Թող Գրիգոր—փոխանակ լինելոյ, իբրև զաղտնի իմն խորհրդով, որդի Անակայ ուրումն Պարթևի, յղացեալ ի տեղւոջ վկայութեան առաքելոյն Թադէի առ առնուլ զոգի նորա (Խոր.), և ապա մտեալ ի սպասաւորութիւն Տրդատայ ի հատուցանել զպարտս սպանութեան հօրն (Անդ, և առ Ագաթ.)—լիցի ի ծնէ Կապադովկացի (ինչպէս կապադովկական անունն իսկ կը յայտնէ), պաշտօնեայ միոյ ի գլխաւոր եկեղեցեաց

Հայոց ընդ իշխանութեամբ եկեղեցւոյն Կեսարիոյ. տանջանաց թիւր և տեսակներն, որ կուտակութիւն իմն են ս.քանչելեաց՝ իջեցունենք ի լոկ հալածումն. Գրիգորի բազմամեայ բնակութիւնն յօձաբնակ վիրապին՝ ի լոկ բանտարկութիւն. Հռիփսիմեանց, ոչ այնպէս բազմաց, այլ սակաւուց գալուստն ի Հռոմայ՝ իջեցունենք ի փախուստ ի փոքուէն Ասիոյ յերեսաց հալածանաց ուրումն ի բռնաւոր կայսերաց, որ դարանակալ էին անմեղութեան կանանց, և զբրպանումն նոցա՝ ոչ այնպէս կտտանօք, այլ յանկարծ ցասմանէ թագաւորին. զաստուածահարուածն Սոզոմենոսի, զորոյ ոչինչ գիտէ Եւսեբիոս, հնագոյն քան զնա և ժամանակակից՝ իջեցունենք ի լոկ հիւանդութիւն, ըստ նամակին Արտաշրի առ Խորենացւոյն (Խոր. Գ. ԾԱ.), ծագեալ ի տարփանաց, ինչպէս կ'ըսէ ինքն իսկ թագաւորն ըստ վկայութեան կարծեցեալ ատենադպրին իւրոյ, ի յիշելն զչքնաղագեղն Հռիփսիմէ, սպանեալ յւրմէ—«Սիրտ հատեալ զհետ անմոռաց ի մտացս չանկանի». և զբուն պատճառ դարձին, փոխանակ ընծայելոյ խոզակերպն լինելոյ թագաւորին, ինչպէս ակնարկեցինք՝ ընծայենք հռոմէական քաղաքականութեան, որ ստիպուեցաւ ընել զքրիստոնէութիւնն հաւատարապատիւ հեթանոսութեան, մանաւանդ թէ մեծարոյ քան զնա: Այս ամէնն արդարև կը փոխէ պատմութեան ձևն, այլ ոչ իրաց էութիւնը: Որ ի վեր քան զբնականն էր՝ լինի բնական, հանդերձ այնու և բանաւոր:

Չէ իրաւացի՝ անհաւատութեան բիծ դնել փիլիսոփայական հետազօտութեան՝ վասն զի չընդունիր դարձին պատմութիւնը իւր վիպասանական ձևով: Այնու զի կ'ընդունի դէպսն՝ կը ցուցնէ թէ չէ անհաւատ, և զի կ'ընդունի առանց վիպասանական ձևոյն՝ կը ցուցնէ թէ չէ դիւրահաւան: «Credo quia absurdum» Օգոստինոսի՝ չէ ի պայմանաց գիտութեան: Վասն մեր ճշմարիտ պատմութիւն է՝ թէ քրիստոնէութիւնը գտաւ մուտ ի Հայս, իբրև հզօր ազդեցութիւն, անդէն իսկ յառաջնում դարու, և եղաւ կրօնք ազգին յետ իբր 300 ամաց, իբրև քաղաքական հարկ որ արդիւնք էր այն ազդեցութեան. ըստ ձևոյն՝ չէ փոյթ մեզ, որ իբրև ի չափ հասեալ կը խորհինք, և ոչ իսկ փոյթ է մեզ զնոցունց, որ ուղղափառութեան կերպարանօք կամին տալ մեզ ուտել ընդ պտղոյն և զկեղևն, զդժուարահալն, մանաւանդ թէ զանհալն ստամոքսաց իննևտասներորդ դարու:

Յոր կողմն և դարձունենք զելս հետազօտութեան մերոյ՝ յետ մերկանալոյ զաւանդութիւնն ի վիպասանական ձևոյն, զոր հարկ էր նմա առնուլ ի սկզբան ըստ ոգւոյ ժամանակին՝ կայ և մնայ հաւատալ, թէ մեծ իմն փոփոխութիւն եղաւ յազգին առ Գրիգո-

րիւ: Բայց առ Գրիգորիւ դարձն՝ ունի զիւր նախն: Ըսինք վերագոյնն, թէ մեծամեծ փոփոխութիւնք ի լաւ անդր որ յանկարծ կը թուին գալ յարդիւնս՝ չեն առանց յառաջագոյն երկար պատրաստութեան: Զնոյն պարտ է իմանալ զփոփոխութենէն զորմէ բանքս են, եթէ չվկայէր ևս պատմութիւնն: Սակայն պատմութիւնն, ևս և տոհմայինն, կը մատուցանէ մեզ առ այս առատ նիւթ: Ասորւոց երկիրն հանդերձ Պաղեստինաւ էր այնպէս գիրկընդխառն ընդ մերումն՝ որ չէր մարթ այնպիսւոյ մեծի փոփոխութեան (որպիսի էր քրիստոնէութիւնն և որոյ ասպարէզ եղան անդէն իսկ ի սկըզբան այն երկու սեմական աշխարհք, Ասորիք և Պաղեստին), չգործել զիւր ազդեցութիւնն ետ ընդ ետ ի դրացին նոցա, ի մերն:

Ցընթեռնուլ ուրուք զԱգաթանգեղոս՝ կը թուի կարծել զառաջինն, թէ առ Գրիգորիւ եղաւ այն փոփոխումն. այլ ի մէջ կը մտնէ Բուզանդ իւր անպաճոյճ լեզուաւ: Ոչ միայն իբրև երեքհարիւր ամօք յառաջ կը տանի նա զսկիզբն դարձին, այլև գրուած էր, կ'ըսէ, այնր պատմութիւն յառաջ քան զԳրիգորին.—«Ի քարոզութենէն Թադէոսի առաքելոյ և ի նորուն յելից և ի մարտիրոսութենէն մինչև ի կատարումն վարդապետութեանն Գրիգորի և իւրոյ հանգստեանն... այն ամենայն ի ձեռն այլոց գրեցան» (Բուզ. Գ. Ա.): Ապաքէն գրեցան այնու վիպասանական (զրուցական, légendaire) ձևով՝ որով Գրիգորին, սակայն գրեցան:

Առ Տրդատաւ, նախ քան զհրապարակաւ դարձն հանդերձ արքունեօք ըստ հռոմէական օրինակին՝ կային ապաքէն ի Հայս, մանաւանդ յարևմտեան մասին, քրիստոնեայ եկեղեցիք այնպէս բացում՝ որպէս ի հռոմէական պետութեան առ Կոստանդիանոսիւ, թէպէտ և ընդ հալածանօք: Վերագոյնն յիշեցինք Եւսեբեայ վկայութիւնն զպատերազմէն Հայոց ընդդէմ Մաքսիմինոսի յամին իբր 311, ոչինչ աւելի քան 5 կամ 6 ամօք յետոյ քան զդարձն առ Գրիգորիւ: Պատերազմել Հայոց (որ այն ինչ պարապ առեալ էին Ներսեհի պատերազմներէն 297) ընդ Մաքսիմինոսի և վտանգել զզօրս նորա չարաչար՝ չէր դիւրին ինչ և ոչ հնար զոյգն զօրութեամբ: Որչափ և մեծ համարինք զքաջութիւնն և զօրութիւն Տրդատայ՝ հարկ էր նմա գումարել ի մի վայր զբովանդակ Հայս ի վերայ հռոմէական լեգէոնաց. հարկ էր ունենալ իւր համամիտ զնախարարսն, կիսով չափ ինքնօրէնս ըստ ներքին քաղաքային հանգամանաց երկրին, և որոց մեծ մասն էր ապաքէն տակաւին մէտ ի հեթանոսութիւն, ուր Եւսեբիոս ջերմագոյնս գիտէ զՀայս ի բարեպաշտութեան որ առ Աստուած: Ազգ մի առանց ուսման և փիլիսոփայութեան, ընկղմեալ ի բազում դարուց հետէ ի թանձ-

րամած խաւար կռապաշտութեան, որպէս էր Հայոցն. զիա՞րդ ի միջոցի հինգ կամ վեց ամաց հասաւ յայնպիսի նախանձաւորութիւն առ սէր քրիստոնէական հաւատոյ՝ մինչև ինքնակամ խիզախել ի մարտ պատերազմի ընդդէմ հեթանոս թագաւորի, քան զոր ինքն չէր լաւագոյն՝ եթէ չէր ի միջի բաւական մասն մի արդէն քրիստոնեայ, ինչպէս էր ի Հռոմայեցիս առ Կոստանդիանոսիւ։ Երկոքին հրովարտակքն հալածման Տրդատայ (Ագաթ. ԺԲ.), եթէ համարինք զնոսա վաւերականս, բայց մանաւանդ լինելն աշխարհին Հայոց յառաջ իսկ քան զԳրիգոր վիճակ մետրապոլտին Կեսարիոյ՝ բաւական են ցուցնելու, թէ քրիստոնէութիւնն էր յայնժամ ըստ բաւականին տարածեալ ի Հայս։ Զպատմութիւն քարոզութեանն Թադէի, զվկայաբանութիւնն Ոսկեանց, որ չէ յառաջ քան զերկրորդ կէս Ե. դարու, և նորագոյն՝ զՍուքիասանցն, որ էին յազգականութենէ Սաթինկան ըստ աւանդութեան և վկայեցին առ Արտաւազդաւ՝ — կրնայինք համարել նշան կանխագոյն տարածման քրիստոնէութեան ի Հայս՝ եթէ կար բաւական պատճառ վաւերական համարելոյ այնպիսի աւանդութիւններ։ «Բաւական էր արդեօք առ ի դոյն – ասէ բարեաց յիշատակաց արժանին Գաթըրճեան — վկայութիւն դրացւոյն մերոյ Փիրմիլիանու եպիսկոպոսի Կեսարիայ Գամրաց, զորմէ ասի (Խոր. Բ. ՀԵ.) պատմել ի գիրսն հալածանաց. թէ այնչափ յաճախեալ ի Հայս էին քրիստոնեայք՝ մինչև արքայի նոցա յարուցանել հալածանս ի վերայ նոցա և զբազումս սպանանել։ Այլ աւա՜ղ զի այն վկայութիւն չունի ինչ ոյժ, այնու զի այն մատեանն, զոր իբրև մատեան Փիրմիլիանեայ ի կիր արկանէ պատմագիրն հայ (Խորենացի)՝ ունի պատմութիւնս հալածանաց մինչև ցամն 311՝ ըստ վկայութեան նորին պատմագրի, ուր վաղ, յամի 269, վախճանեալ էր Փիրմիլիանոս։ Նմին իրի հարկ է մեզ շատանալ վկայութեամբն Տերտուղիանու († 240) որ բազում հաւատացեալս ի Հայս համարի լեալ» (Տերտ. ընդդ. Հր.)։

Զիարդ և իցէ՝ Հայոց դարձն ի ձեռն Գրիգորի չէր առաջինն յեկեղեցական պատմութեան մերում։ Թողլով զդարձ Աբգարուն, ասորական աղբերէ, ձևեալ ի վերայ պատմութեան դարձին Ադիաբենայ թագաւորին Իզատայ ի հրէութիւն ըստ Յովսեփոսի եբրայեցւոյ ժամանակակցի, թողլով, ասեմք, զայս՝ առնունք իբրև առաւել վաւերական՝ զդարձն Ուռհայեցւոց և Հայոց միանգամայն ի ձեռն Թադէի և Բարթուղիմեայ, երկուց առաքելական ամոլոց, որպէս կամի աւանդութիւնն, և կամ, որ աւելի հաւանական է՝ ի ձեռն Ադդէի ուրումն, որ յետոյ փոխուած է ի Թադէ։ Եթէ դնենք ևս, թէ «գալուստ առաքելոյն Թադէոսի ի Հայս, և հաւատալ Սա-

նատրկոյ և Թողուլ զհաւատն յերկիւղէ նախարարացն Հայոց, և կատարումն առաքելոյն ի գաւառին Շաւարշան, և պատառումն քարին և յերար գալ և ընդունել զմարմին առաքելոյն, և մարտիրոսանալ Թագաւորին դստերն» (Խոր. Բ. ԼԴ.) են ողջոյն իսկ կամ կէս վէպ, և կամ, ընդ հակառակն, եթէ գնենք թէ քարոզողն էր Թադէոս մին յեօթանասնից, և Սանատրուկ ումն թագաւոր Հայոց եղև արդարև «առաքելասպան», որպէս կամի Բուզանդ՝ տակաւին ճշմարիտ է, թէ անդէն իսկ յառաջնում դարու քարոզեցաւ Աւետարանն ի Հայս և հաստատուեցաւ արեամբ։

Բաւական համարելով այսչափ Հայոց դարձին վրայ, զոր, որչափ մարթ էր, հանելով վկայաբանական ձևէն բերինք ի պատմական, ուստի և ի բանաւոր և հաւանական ձև՝ գանք Խորենացւոյն ԶԱ. գլխոյն, ուր թողինք զնա։

Խորենացւոյն ԶԱ. գլուխն է Մամիկոնեանց ծագման վրայ, զորմէ իբրև զրոյց կը պատմէ այսպէս. Սասանեան Արտաշրի ժամանակ Մամիկոնեան ցեղին նախնին Մամգուն Ճենաց երկրէն, որպէս թէ գժտութեան իրիք պատճառաւ ուրիշ երևելի իշխանի հետ՝ կը գտնուի յանցաւոր, և խոյս տալով Ճենաց Արբոկ անուն թագաւորէն, որ կը խնդրէր սպանանել զնա՝ կու գայ առ Արտաշիր Սասանեան, որ ի շնորհս Արբոկայ, որ կը խնդրէր զՄամգուն, սպառնալով պատերազմ՝ թոյլ կու տայ Մամգունայ գաղթել ի Հայս ի սկզբան թագաւորութեանն Տրդատայ.— «Ի սորա (Արտաշրի) աւուրս եկեալ ի Հայս նախնի ազգին Մամիկոնէից յարևելից հիւսիսականէն, ի քաջատոհմիկ և ի գլխաւոր աշխարհէ և ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին, ասեմ իսկ զՃենացն, որ ունին զրոյց այսպիսի։ Յամս կատարման կենացն Արտաշրի՝ Արբոկ ումն Ճենբակուր, որպէս ասի ի նոցա լեզուն պատիւ թագաւորութեան. սորա երկու դայեկորդիք Բղդոխ և Մամգուն անուն կոչեցեալ, մեծ նախարարք։ Եւ չարախօսեալ Բղդոխայն զՄամգունայն՝ հրամայեաց Թագաւորն Ճենաց Արբոկ սպանանել զՄամգունն։ Զոր իմացեալ Մամգունայն՝ ոչ գայ ի կոչն արքային, այլ փախուցեալ աղխիւ իւրով անկանի առ Արտաշիր թագաւորն Պարսից։ Եւ Արբոկ հրեշտակս առաքէ խնդրել զնա. և ի չլսելն Արտաշրի՝ պատերազմ ի վերայ նորա յօրինէ թագաւորն Ճենաց։ Եւ իսկոյն մեռեալ Արտաշրի՝ թագաւորէ Շապուհ։ Արդ թէպէտև ոչ տայ Շապուհ զՄամգուն ի ձեռն տեառն իւրոյ, այլև ոչ յԱրեաց երկիրն թողու. բայց ամենայն աղխիւն իւրով առաքէ զնա իբրև վտարանդի առ զօրծակալս իւր որ ի Հայս։ Եւ յղէ առ թագաւորն Ճենաց ասելով, Թէ Մի թուեսցի քեզ դժուար՝ զի ի ձեռս քո ոչ կարացի տալ

զՄամգուն, վասն զի երդուեալ էր նմա հօրն իմոյ ի լոյս արեգական· այլ վասն անխռով զքեզ առնելոյ՝ հալածեցի զնա յաշխարհէս իմմէ յեզր երկրի և ի մուտս արեւու, որ հաւասար է նմա մահու· և արդ մի լիցի պատերազմ ընդ իս և ընդ քեզ։ Եւ զի քան զամենայն բնակեալս ի վերայ երեսաց երկրի խաղաղասէր ասեն զազգն Ճենաց՝ յանձն առնու առնել զհաշտութիւն»։

Թէ ինչ երկիր էր Ճենք, զոր Խորենացին կը դնէ յարևելից հիւսիսոյ՝ չէ յայտ ստուգիւ, սակայն կը կարծուի թէ էր երկիրն Սինէացւոց կամ Չինաց· և չէ անհաւանական, նայելով երկրին նկարագրին՝ զոր կ'ընէ Խորենացին· թէպէտ քերթողահայրն մեր, միանգամայն աշխարհագիր ըստ աւանդութեան՝ պարտէր ասել մանաւանդ «ի ծագաց արևելից», քան «յարևելից հիւսիսոյ»։

«Սքանչելի է—կ'ըսէ Խորենացին, յառաջ տանելով պատմութիւնը—աշխարհն առատութեամբ ամենայն պտղոց, և գեղեցիկ բուսովք զարդարեալ, քրքմաւէտ և սիրամարգաշատ և բազմամետաքս, անբաւութիւն յամուրաց և հրէշից, և որ էշայծեմունսն անուանեն, ուր հասարակաց կերակուր ասեն զառ մեզ պատուական և սակաւուց ճաշակելիս, զփասեան և զպոր, և այլ այսպիսիք։ Այլ զականց և զմարգարտաց ոչ ասեն գիտել զհամար մեծամեծացն· իսկ պատուականքս առ մեզ զգեստուց և սակաւուց ագանելիք՝ հասարակաց նոցա է զգեստ։ Եւ այս յաղագս աշխարհին Ճենաց։

«Իսկ Մամգունայ յոչ կամաց եկեալ յաշխարհս մեր՝ հանդիպեցաւ գալստեանն Տրդատայ, և ոչ դարձաւ ընդ զօրս Պարսից, այլ ամենայն աղխիւն իւրով ընդ առաջ գնաց նմա մեծաւ պատարագաւ· և Տրդատ ընկալաւ զնա, բայց զկնի իւր ի պատերազմ ոչ էած զնա յերկիրն Պարսից· այլ ետ տեղի աղխի (հետը եղողներուն) նորա և ռոճիկ ի կերակուր, փոխելով տեղի ի տեղւոջէ ցբովանդակ ամս»։

Թէ Մամիկոնեանք էին հատուած ի Ճենաց՝ այս ծանօթ էր յազգին, և Բուզանդ կը յիշէ երկիցս։ Պապ ի զովելն զզօրավարն իւր Մուշեղ՝ կոչէ զնա «Այր, ազգաւ պատուական իբրև զմեզ· նախնիքն զորա իբրև զնախնիսն մեր· թողեալ նոցա զթագաւորութիւնն Ճենաց աշխարհին՝ եկեալ առ մեզ, ի նախնեացն մերոց վերայ կեցեալք և մեռեալք են» (Բուզ. Ե. Դ.)։ Նոյն Բուզանդ Մանուէլ սպարապետին կու տայ ասել ցՎարազդատ· «Մեք չեմք լեալ ձեր ծառայք, այլ ընկերք ձեր և ի վերոյ քան զձեզ· զի մեր նախնիքն լեալ էին թագաւորք աշխարհին Ճենաց... և վասն բարւոյ հանգստի գտանելոյ եկեալ դադարեալ եմք։ Առաջին թագաւորքն Ար-

շակունիք գիտէին զմեզ ով էաք կամ ուստի էաք» (Բուզ. Ե. ԼԵ.)։ Բայց թէ այս, այսինքն գալուստն Մամիկոնեանց ի Հայս, եղու առ Արտաշրիւ, և Տրդատ եղաւ առաջին, որ տուաւ նոցա նախարարութեան պատիւ յետ նուաճելոյ նախնւոյն նոցա Մամգունայ զապստամբ իշխանն Ողկունեաց ըստ Խորենացւոյն, ինչպէս պիտի տեսնենք յետոյ՝ այս չթուիր ճշմարիտ։ Բուզանդ գիտէ շատ հին զՄամիկոնեանս իբրև տոհմ զօրավարաց։ Արտաւազդ և Վաչէ արդէն առ Խոսրովաւ որդւով Տրդատայ կը յիշուին իբրև սպարապետք, և սպարապետութիւնն կը կոչուի իբրև Հայրենի իշխանութիւն այն ցեղին.—«Զվաչէի զօրավարի փոքրիկ մանկիկ մի զնորուն զորդի ի Հայրենի բարձ դահուն մատուցանէին, որում անուն էր յանուն Հօր իւրոյ Արտաւազդ։ Առաջի թագաւորին զհօրն պատիւն ի գլուխն դնէին, և զսպարապետութեանն նորուն տեղի. զի կարի որդի վաստակաւորի էր և ի վաստակաւոր ազգէ» (Բուզ. Գ. ԺԱ.). և զԱրշակայ, թոռնորդւոյն Տրդատայ ասէ, թէ «ի խնդիր ելանէր տոհմին զօրավարաց ազգին քաջացն Մամիկոնենից, մանաւանդ զի իւր դայեակքն և սնուցիչք էին. երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց աշխարհին, և դարձուցանէր զնոսա յընտանութիւնն, զի պառակտեալք և քակտեալ էին յընդանութենէն և յամենայն գործոց Հայոց ի ժամանակս խռովութեանն Տիրանայ» (Բուզ. Դ. Բ.)։ Եւ սակաւ մի խոնարհ ասէ, թէ «սպարապետութիւն զօրավարութեանն Հայոց... էր ի բուն ի նախնեացն կարգաց ի Մամիկոնեան ազգին» (Բուզ. Դ. Բ.)։

Խորենացին, ինչպէս կ՚երևի, ի շնորհուկս կարծեցեալ Մեկենասին իւրոյ Սահակայ իշխանին Բագրատունեաց, զոր կը պատմէ վեալ սպարապետ Հայոց (Խոր. Գ. ԼԵ.)՝ չտար ամենևին սպարապետի անուն Մամիկոնեանց, այլ նուաստացունելով զնոսա կը կոչէ զինակիրս արքայի, այսինքն թագաւորին զէնքը կրող սպասաւոր (Խոր. Գ. ԻԲ. և ԻԵ.). մեծին Վարդանայ միայն կու տայ ստրատելատ տիտղոսը յետ մահուն Սահակայ ասպետի, սպարապետին Խոսրովու վերջնոյ (Խոր. Գ. ԾԲ.)։

Ըստ Բուզանդայ՝ կար նաև ի Պարսկաստան նշանաւոր տոհմ ազգակից Մամիկոնեանց. «ԶԴեհկան Նահապետ, որ տոհմիկ իսկ էր ազգաւ տոհմին զօրավարացն Հայոց, այսինքն Մամիկոնենից, առաքէր զնա թագաւորն Պարսից Շապուհ յերկիրն Հայոց ի վերայ Արշակայ:... Եւ զօրավարն Վասակ ելանէր ընդ առաջ նոցա եւթանասուն հազարաւ. հարկանէր սատակէր զզօրսն ամենայն Պարսից, սպանանէր զիւր զազգայինն (ազգական) զԴեհկան Նահապետն» (Բուզ. Դ. ԼԲ.)։

Խորենացւոյն ԶԲ. գլուխն է դարձեալ զՏրդատայ, այսինքն զնահատակութեանց նորա, որպէս ասէ՝ յառաջ քան զհաւատալն։ Ըստ Խորենացւոյն՝ Տրդատ թագաւորելով Դիոկղետիանոսի երրորդ տարին, այն է 287-ին, կու գայ ծանր զօրօք ի Կեսարիա, ուր ընդ առաջ լինին նմա բազմութիւնք նախարարաց. և գալով ի Հայս կը գտնէ զՕտայ, որ հանդերձ Խոսրովիդխտով, քերբ թագաւորին, ամբացած էր յԱնի յերեսաց Արտաշրի։ Խորենացին յետ գնելոյ համառօտ գովեստ մի զՕտայէ և զԽոսրովիդխտոյ՝ կը պատմէ կարգաւ, թէ ինչպէս Տրդատ վարձատրեց իւր հաւատարիմ նախարարներն, կացուցանելով զՕտայ հազարապետ, զԱրտաւազդ Մանդակունի զօրավարն իւր՝ սպարապետ և զքեռայր նորա Տաճատ՝ իշխան գաւառին Աշոցայ։

Խորենացին Տրդատայ գործոց համար ի Յոյնս՝ ղրկելով զընթերցողս իւր առ Ագաթանգեղոս—«Իսկ որ ինչ ի նորա (Դիոկղետիանոսի) ժամանակսն գործք՝ յայտնէ քեզ Ագաթանգեղոս»՝—կը թուի լաելեայն ընդունել Տրդատայ մենամարտութիւնն ընդ թագաւորին Գթաց, և ի վարձ այն յաղթութեան զառնուլ նորա ի Դէոկղետիանոսէ իւր հարց թագաւորութիւնը, և համէական զօրօք գալով ի Հայս՝ վանելն զՊարսիկս, այլովքն հանդերձ։

Զայս կ'ակնարկէ ԶԲ. գլխոյն սկիզբը. «Քանզի ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան՝ վասնորոյ մանրախուզիւ քննեալ գտաք զթագաւորելն Տրդատայ յերրորդ ամի Դիոկղետիանոսի, և գալ այսր մեծաւ զօրու։... Իսկ քաջին Տրդատայ երագապէս և բազում ճակատս տուեալ, նախ ի Հայս և ապա ի Պարսս՝ իւրով անձամբ առնէր զյաղթութիւնն։ Որ ի միում նուագի առաւել քան զԵղիանանն զայն ի հնումն, կանգնեաց զնիզակն յօգնական համաթիւ վիրաւորաց։ Դարձեալ յերկրորդումն կորովեացն Պարսից զփորձ առեալ զաստուածեան սկային և կուռ վառուածոցն, բազում վիրօք պատեալ զձին՝ սատակեցին նետաձգութեամբ, որոյ զարկուցեալ յերկիր ընկենոյր զարքայն։ Իսկ նորա յարուցեալ և ի հետի յարձակեալ՝ փոխանակ իւր զբազումս ընկենոյր ի թշնամեացն, և զմիոյ ուրումն զձի կալեալ՝ արիաբար աշտանակեալ։ Դարձեալ յերկրորդին միւս անգամ կամաւոր լեալ հետի՝ սուսերաւ զերամակս փղացն պուղէր։ Եւ այսպիսի նահատակութեամբ յամեալ ի Պարսս և յԱսորեստան՝ անդր ևս քան զՏիզբոն յարձակի»։

Գիտենք արտաքին ժամանակակից պատմութենէ, թէ Կարակալլա ի գալն յարեւելս ի վերայ Արտաւանայ, բռնելով զՎաղարշ արքայ Հայոց՝ բանտարկեց (216)։ Կարակալլա սպանաւ (217), և

յաջորդ նորա Մակրինոս զրկեց թագ առ Տրդատ Բ. (ըստ Հայոց՝ Խոսրով), որդի Վաղարշու (218), որ մեռած էր ի բանտի։ Իբր 8 ամօք յետոյ Արտաշիր Սասանեան սպանանելով զԱրտաւան՝ կը տիրէ Պարսից և կ՚սպառնայ Հայոց, բայց միացեալ զօրութենէ Հայոց և Հռոմայեցւոց (Աղեքսանդր Սևերոս) կ՚արգելուի մտնելէ ի Հայաստան։ Այսպէս Հայք կը մնան ազատ։ Շապուհ, յաջորդն Արտաշրի, յարձակեցաւ Հռոմայեցւոց վրայ ի Միջագետս, յաղթուեցաւ Գորդիանոսէ Գ. (241—243)․ բայց Փիլիպպոս Արաբացի (244—249) կը հաշտուի ընդ Շապհոյ, որ կը մնայ տէր Միջագետաց և Հայոց։ Թէ ինչ եղան յայնժամ Հայք՝ յիշուած չէ, սակայն հաւանական է, թէ Տրդատ Բ. կամ Խոսրով կը թագաւորէր խաղաղութեամբ, նաև բարեկամութեամբ ընդ Շապհոյ, բայց թէ մինչև երբ՝ չէ յայտ. հաւանականապէս մինչև 259, քանզի այս թուականին, երբ Վաղերիանոս գալով յարևելս կը բռնուի գերի ի Շապհոյ՝ թագաւորն Հայոց Արտաւազդ, յաջորդ Տրդատայ Բ. (Խոսրովու), է բարեկամ և օգնական Շապհոյ։ Հայք բարեկամ են Պարսից նաև առ Աւրելիանոսիւ (270—275)։ Կարոս (282—283) առ Վռամաւ Բ. (275—292) կը մերժէ զՊարսիկս ի Միջագետաց, և Հայք են դարձեալ դաշնաւոր Հռոմայեցւոց։ Կարոս կ՚սպանուի, ինչպէս նաև երկոքին որդիք զահակիցք նորա, Նումերիանոս և Կարինոս (282—284), և կը թագաւորէ Դիոկղետիանոս (284—305)։ Առ սովաւ Ներսեհ արքայ Պարսից (292—302), նախանձելով փառաց նախնւոյն իւրոյ Շապհոյ՝ կը գրաւէ միւսանգամ զՄիջագետս և զՀայս. բայց Գաղերիոս զօրավար Դիոկղետիանոսու կը զարնէ (297) չարաչար զՆերսեհ, և կը հաստատուի դաշամբ խաղաղութիւնն, որ կը տևէ քառասուն տարի կամ մինչև ի մահն Կոստանդիանոսի։ Այս պատմերագմէն յառաջ կամ իսկ և իսկ յետոյ է, թէպէտ յանուանէ յիշուած չէ յարտաքին ժամանակակից պատմութեան, Տրդատ Գ. մեծ, իբրև յաջորդ Արտաւազդայ, թերևս որդի նախորդին սորա Տրդատայ Բ, կամ Խոսրովու ըստ Հայոց։

Պատմութիւնս, զոր համառօտեցինք ի Տրդատայ Բ. (Խոսրով) մինչև ի Տրդատ Գ. մեծը՝ չթողուր մեզ ընդունել ո՛չ սպանումն թագաւորի, ո՛չ իբր 60-ամեայ անիշխանութիւն, ո՛չ գրաւել Արտաշրի զՀայս, ոչ փախուստ մանկանն Տրդատայ ի կոտորածէ և կալ մնալ իբր 50-ամեայ ժամանակ ի Յոյնս առ Լիկիանու ուրումն, և ի վախճանի մենամարտել ընդ թագաւորին Գթաց և զօրօք գալ նուաճել զՀայս, տալով բազում ճակատս ընդ Պարսից, մինչև երթալ անդր քան զՏիզբոն, այլովքն հանդերձ։

Յառաջին ամս Տրդատայ, այսինքն մինչև 307, եղան գլխա-

ւոր պատմական դէպք դարձին Հայոց, այն է Հալածումն Գրիգորի և մարտիրոսութիւնն Հռիփսիմեայ հանդերձ ընկերօք ումամբք, և այս վերջնոյն պատճառաւ թերևս հիւանդութիւն ինչ, որ եկաւ Տրդատայ, ըստ Թղթոյն Արտաշրի առ Վռամշապուհ ըստ Խորենացւոյն (եթէ վաւերական համարինք թուղթը, Խոր. Գ. ԾԱ.), դէպք՝ որ եղան պատրաստութիւն առ դարձն: Տեսութիւնն Տրդատայ ընդ Կոստանդիանոսի ի Հարսանիսն, և չէ անհաւանական պսակեց դարձը, որ կատարեցաւ գէթ թագաւորին կողմանէ 307—310, և որոյ զհետ եկն պատերազմն ընդ Մաքսիմինոսի:

Ըստ ԶԳ. գլխոյ Խորենացւոյն՝ Տրդատ կ'առնու կին զԱշխէն, դուստր Աշխադարայ ուրումն: Տրդատայ ամուսնութեան դէմ չունիմք ինչ ասել, թէպէտ Խորենացին չըսեր, թէ ո՛վ էր այն Աշխադար, և ոչ՝ թէ ի՛նչ աղբերէ կ'առնու այս պատմութիւնը: Ի սոյն կը յարէ Տրդատայ երթալն ի Հարսանիսն Կոստանդիանոսի: Արդարև Հարսանիք եղան Կոստանդիանոսի 307-ին, բայց ո՛չ, ինչպէս արդէն ըսինք, ընդ Մաքսիմինայ դստեր Դիոկղետիանոսի, այլ ընդ Փաւստայ դստեր Մաքսիմիանոսի: Այս երթն Տրդատայ ի Հարսանիսն և բարեկամանալ նորա ընդ Կոստանդիանոսի, թէպէտ չունի կատարեալ ստուգութիւն ժամանակակից աղբերէ՝ չէ սակայն ըստ մեզ անհաւանական, և այլուստ կը նպաստէ յոյժ լուծելու Հայոց դարձին պատմութեան հանգոյցը:

Յետ պատմութեան Հարսանեաց, Խորենացին ընելով պատմական զարտուղութիւն՝ կը մուծանէ Կոստանդիանոսի դարձին առասպելական պատմութիւնը, որպէս թէ Կոստանդիանոս, «հրապուրեալ ի կնոջէն իւրմէ Մաքսիմինայ, ի դստերէն Դիոկղետիանոսի՝ յարոյց հալածանս եկեղեցւոյ. և զբազումս վկայեալ՝ ինքն եղեփանդական բորոտութեամբ ըստ բոլոր ընկալեալ մարմնոյն ապականեցաւ վասն յանդգնութեանն: Զոր ոչ կարացին բուժել արիողական կախարդքն և մարսիկեան բժիշկքն: *Յաղագս որոյ յղեաց առ Տրդատ առաքել նմա դիւթս ի Պարսից եւ ի Հնդկաց, սակայն եւ այնք ոչ հասին նմա յօգուտ:* (Այս մասը կը թուի յաւելուած ի կողմանէ Խորենացւոյն): Զոր և քուրմք ոմանք ի դիւաց խրատուէ հրամայեցին բազմութիւն տղայոց զենուլ յաւազանս, և ջերմ արեամբ լուանալ և ողջանալ. որոյ լուեալ զլալիւն մանկանցն հանդերձ մարցն կականմամբք՝ գթացեալ մարդասիրեաց, զնոցայն լաւ վարկուցեալ քան զիւրն փրկութիւն: Յաղագս որոյ զփոխարէնն յԱստուծոյ ընդունի, յանրջական տեսութիւն Առաքելոցն առեալ հրաման՝ սրբել լուացմամբ կենսատու աւազանին ի ձեռն Սեղբեստրոսի եպիսկոպոսին Հռոմայ, որ ի նմանէ հալածանացն թագու-

ցեալ էր ի Սոկրատեան լեառնն. յորմէ և աշակերտեալ հաւատաց, զբռնաւորսն ամենայն բառնալով Աստուծոյ յերեսաց նորա»: Ի փախճանի յարելով, «որպէս համառօտ ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»՝ կու տայ կարծել, թէ Ագաթանգեղոս է աղբիւր այն պատմութեան: Արդարև Ագաթանգեղոս, թիւ ՃԻԵ. կը դնէ Կոստանդիանոսի դարձին պատմութիւնը լի առասպելօք, որպէս թէ Կոստանդիանոս թագաւորելով «յերկրին Սպանիացւոց»՝ կը հաւատայ յԱստուած, և կոտելով բազմութիւն զօրաց «առ ափն ովկիանոս ահագին ծովուն՝ ուխտէր ընդ ամենեսին զի առհասարակ ամենայն ոք ճշմարտութեանն հաւատասցէ... և յԱստուած խրախուսեալ... կործանէր զօրութեամբ քրիստոսեան խաչին» ոչ միայն զՄաքսիմիանոս, զՂուկիանոս և զՄաքսենտիոս, այլ և զԴիոկղետիանոս և զՄարտիանոս (ինք կ'ատեղծէ այս վերջինը)։... «Եւ այնպէս յաղթող երևեալ զինքն հաստատէր, մինչև զամենայն աւուրս կենաց իւրոց հրեշտակ ի յերկնից երևեալ, զօրհանապազ նմա սպասաւոր կարգեալ՝ ընդ առաւօտս առաւօտս զքրիստոսեան նշան թագի նորին առեալ ի գլուխն դնէր»: Բայց Ագաթանգեղոսի այս պատմութեան մէջ չկայ ոչ Կոստանդիանոսի իւր կնոջէն ի Մաքսիմինայ, Դիոկղետիանոսի դստերէն, հրապուրեալ յարուցանելն հալածանս, և եղեփանդական բորոտութեամբ ապականեալ՝ ոչ կախարդներէ, ոչ բժիշկներէ և ոչ ի Տրդատայ ղրկուած Պարսից և Հնդկաց դիւթերէ գտնելը բժշկութիւն, և ըստ խրատու քրմաց մանր տղայս զենլով յաւազանս՝ արեամբ նոցա լուանալն, և որ ի կարգին: Այս բաներուն և ոչ նըշմարանքը կայ առ Ագաթանգեղոսի: Խորենացին այն պատմութիւնը կ'առնու (ինչպէս ցուցուց մօտերս Ա. Գարիէր, ուսուցիչ արևելեան լեզուաց և առանձինն հայերէնի ի Բարիզ) «Վարք Սեղբեստրոսի» անուանեալ գրուածէ մը, որ ըստ գիտողութեան Ա. Գարիէրի գըրուած էր լատիներէն, և ապա թարգմանուած յունարէն: Որովհետև, կ'ըսէ, ըստ հետազօտութեան Մ. Տիւշէնի, Սեղբեստրոսի վարուց լատիներէնն կը թուի գրուած դէպ ի վախճան Ե. դարուն և ի սկզբան Զ.-ին թարգմանուած ի յոյն՝ կը հետևի թէ Խորենացւոյն պատմութեան յօրինումն եղած է՝ ոչ, ինչպէս ընդհանրապէս կը կարծուի, մօտ ի վախճան Ե. դարուն (460—480), այլ ի Զ. դարուն. ըստ մեզ՝ աւելի անագան:

Արդարև նայելով Խորենացւոյն պատմութեան լեզուին, որ չէ միակերպ, և գլուխներէն ոմանց, որ են եկամուտ, այսինքն յայլմէ մուծեալ և յետին, որպիսի են հաւանականապէս առաջին եօթն գլուխք, և մանաւանդ Գ. դպրութեան ԿԱ. գլխոյն վերջին հատուածն և ԿԲ. գլուխն ողջոյն՝ կրնանք զյօրինումն այն պատմու-

թեան դնել ոչ ի վեցերորդ, այլ յեօթներորդ դարու իսկ, մանաւանդ որ Մովսէս Խորենացի անուն զոք չենք գտներ յիշուած ի մատենագիրս Ե. դարու, և ոչ Փարպեցին, որ էր ժամանակակից և ծանօթ Սահակայ Բագրատունւոյ, ինչպէս ըսուեցաւ այլուր՝ գիտէ ի խնդրոյ նորա ի Մովսիսէ ումեքէ Խորենացւոյ գրուած պատմութիւն Հայոց, զոր հարկ էր նմա գիտել, քանզի Սահակ էր գործակից Վահանայ, բարեկամին և պաշտպանի Փարպեցւոյն։ Ուստի հաւանականագոյն այս է, թէ պատմութիւն Խորենացւոյն, ըստ արդի վիճակին՝ է գործ Է. դարու. և որպէս զի տարակոյս չմնար թէ գործն է Ե. դարու՝ տրուած է կարծեցեալ հեղինակին Մեկենաս՝ Բագրատունին Սահակ մարզպան, գործակից Վահանայ, բայց այսու մանաւանդ կը խայտառակի խաբէութիւնն։ Այսպիսի խաբէութիւն մը չէ զարմանալի, քանզի ուրիշ առասպելական գրութեան, այն է պատկերին պատմութեան համար ըսուած է, թէ գրեց նոյն Մովսէս Խորենացի ի խնդրոյ այլոյ ուրումն Սահակայ Արծրունւոյ։ Այլուստ, ինչ ինչ առ Խորենացւոյն, մանաւանդ նկարագիր ապականութեան հայ կղերին և արկածից ժամանակին յՈղբսն՝ յայտնի կը ցուցնեն, թէ գրողը կ'ապրէր յԷ. դարուն, ինչպէս արդէն ըսուեցաւ։

Խորենացւոյ ՁԳ. գլխոյն վրայ կան դիտելու արժանի ինչ ինչ, զորս չէ պարտ լռութեամբ անցնել։ Ինչ որ այս գլխոյն մէջ կը պատմէ Խորենացին Կոստանդիանոսի դարձին վրայ՝ ինչպէս ըսինք, առնուած է Սեղբեստրոսի վարուց առասպելական պատմութեան յունարէն թարգմանութենէն, որոյ հայերէն թարգմանութիւնն ևս կայ, գործ Զ. կամ Է. դարուց, զոր Հայկ. բառարանն կը համարի հին թարգմանութիւն ընտիր։ Զարդիս յայտնի է սակայն, թէ այս թարգմանութիւն, ինչպէս լեզուն ևս կը մատնէ՝ չկարէ լինել հնագոյն քան զԷ. դար, կամ քան զվախճան Զ.-ին։ Թէ հեղինակ պատմութեան Խորենացւոյն այս հայերէն թարգմանութենէն կ'առնու տեղեկութիւնները, զոր կու տայ զԿոստանդիանոսէ՝ է առանց հակառակութեան։ Արիողական, ինչպէս կը դիտէ Լանկլուա՝ է լատիներէն բառն hariolus կամ ariolus – դիւթ կամ հմայ, որ բազում էին առ Հռոմայեցիս. իսկ Մարսիկեանն կ'ակնարկէ զՄարսժողովուրդ պատերազմող Իտալիոյ, որ համբաւեալ էին իբրև հմայող և թովիչ։ Ըստ արդի քննչաց՝ չէ ամենևին ճշմարիտ թէ Հեղինէ մայրն Կոստանդիանոսի էր հարճ Կոստանդայ, հօր Կոստանդիանոսի. իսկ թէ Կոստանդիանոս հարաւ բորոտութեամբ ի պատիժ հալածանաց ինչ, զոր յարոյց ընդդէմ քրիստոնէից, և թէ քուրմք ոմանք խրատ տուին նմա մանր տղայոց արեամբ լուանալ, և նա գթալով

ի լալեն մանկանցն և մարց նոցա, իբրև փորձ հրաշիւք ընկալաւ բժշկութիւն մկրտութեամբ ի ձեռն Սեղբեստրոսի՝ է լոկ առասպել։ (Տես Լանկլ. Ժողովածու, հտ. Բ. էջ 123, ի ծանօթութիւնսն)։

Ըստ ԶԴ. գլխոյ Խորենացւոյն՝ Շապուհ Բ. (309—381) համարելով դիպող ժամ գերթն Տրդատայ ի Հռոմ առ Կոստանդիանոս՝ կը գրգռէ հիւսիսային վայրենի ցեղեր յարձակել ի Հայս, և ինքն ևս լինի ժամադիր գալ խուռվքն։ Ընդ Շապհոյ ի բանի է Սղուկ նահապետ ազգին Սղկունեաց։

ԶՍղկունեաց տես Ա. մասն, էջ 212, 242։ Ըստ Խորենացւոյն՝ Սղկունեաց ցեղէն Սղուկ ոմն, իշխան Տարօնոյ, ապստամբելով առ Տրդատաւ՝ կը նեղեր զերկիրն, և Մամգուն, Մամիկոնեանց նախնին, մատոյց ծառայութիւն մեծ Տրդատայ՝ սպաննելով զՍղուկ դաւով։ Ահա պատմութիւն Խորենացւոյն.—«Ընդ հանգչելն Շապհոյ արքայէ Պարսից ի պատերազմացն և ի գնալն Տրդատայ ի Հռոմ առ սուրբն Կոստանդիանոս, պարապ առեալ խորհրդոց Շապհոյ՝ նիւթէ չարիս ի վերայ մերոյ աշխարհիս. Թողեալ զհիւսիսայինսն ամենայն ելանել ի Հայս՝ ժամ դնէ և ինք գալ Արեօք ի միւս կողմանէն։ Ի սորին բանս հրապուրեալ Սղուկ նահապետ ազգին Սլկունեաց՝ զինքեանն սպանանէ զփեսայ, զծերացեալն Օտայ, որ էր ի տոհմէն Ամատունեաց և սնուցօղ Խոսրովիդխտոյ քեռ Թագաւորին։ Եւ այն ինչ ընդ հուպ եկեալ մեծին Տրդատայ յարևմտից, և լուեալ զայս ամենայն, և գիտացեալ թէ ոչ ի ժամադրութիւնն եկն Շապուհ՝ խաղայ ի վերայ հիւսիսականացն։ Իսկ նահապետ ազգին Սլկունեաց ամրացեալ յամրոցին որ անուանեալ կոչի Ողական, ապաւէն առնելով իւրեան զընակիչս Սիմն կոչեցելոյ լերին. և ընդդիմացեալ Թագաւորին՝ աղմկէր զերկիրն և մերձ առ լերամբն ոչ թողացուցանէր այլում պարապել գործոյ։ Ասէ ամենայն նախարարութեանց տանս Հայոց՝ արքայ. «Որ ոք ածէ առ իս զնահապետն Սլկունեաց՝ տաց նմա յաւիտենական իշխանութեամբ զգեւղս և զդաստակերտս և զամենայն իշխանութիւն ազգին Սլկունեաց»։ Զոր յանձն առնոյր ճենազեայն Մամգուն։ Եւ ի խաղալ Թագաւորին զկողմամբք Աղուանից ի վերայ հիւսիսականացն՝ գնաց Մամգուն ամենայն աղխիւն իւրով զկողմամբք Տարօնոյ, որպէս թէ ապստամբեալ ի Թագաւորէն, և ի չու անկեալ՝ առաքէ գաղտագնաց հետևակս, զգացուցանելով նահապետի ազգին Սլկունեաց զգնալն Թագաւորին զկողմամբք Աղուանից. «Վտանգ մեծ է, ասէ, թագաւորին Տրդատայ, վասն որոյ գնաց զկողմամբք Աղուանից պատերազմել ընդ ամենայն լեռնատեայսն. վասն որոյ մեր է ժամանակ ի ճահ խորհել և գործել որ ինչ կամք են. զի խորհեալ եմ դաշնաւոր լինել ընդ քեզ

վասն արհամարհանաց իմոց ի Թագաւորէն»։ Ընդ որ ուրախացեալ նահապետ ազգին Սլկունեաց՝ ընդունի զնա երդմամբ ուխտից, բայց յամուրն ոչ թողու, մինչև տեսանել թէ որպէս պահիցէ զմտերմութիւնն երդմանց և դաշնաւորութեանցն։ Իսկ ստացեալն Մամգուն ամենևին ջանացեալ զմտերմութիւն ցուցանել առ ապստամբն՝ հաւատարմացաւ նմա որպէս արդարև միամիտ գործակից, մինչև հրամայեաց նմա համարձակ մտանել յամուրն և ելանել։ Եւ յետ բազում վստահութեանն, ի միում աւուրց հաւանեցուցանէ զնահապետ ազգին Սլկունեաց ելանել արտաքս յամրոցէն և որսալ երէս. և ի միջամուխ լինել որսոցն՝ դիպեցուցանէ աղեղամբն ընդ մէջ թիկանցն, և կործան յերկիր զարկուցանէ զապստամբն։ Եւ ընթացեալ հեռով արամբքն ի դուռն ամրոցին՝ ունի զբերդն, կապելով զամենայն արսն որ ի ներքս։ Նաև զազգն Սլկունեաց խորհեցաւ բառնալ, և կոտորեաց զամենեսեան. երկուք ոմանք փախստական անկան յաշխարհն Ծոփաց։ Իսկ Մամգուն վաղվաղակի զգացուցանէ Թագաւորին. ընդ որ ուրախացեալ Տրդատայ, գրէ հրովարտակ՝ իշխել նմա ամենայնի. և կարգէ զնա նախարար ի տեղի ապստամբին, անուանելով յանուն իւր Մամգունեան։ Բայց մնացելոցն Սլկունեաց հրամայէ չվնասել» (Խոր. Բ. ՁԴ.)։

Թէ երբէք Սղկունի իշխան մի ապստամբելով նուաճեցաւ Մամիկոնեան իշխանէ՝ ինքնին չէ անհաւանական. այլ թէ այս եղաւ առ Տրդատաւ՝ չթուիր ստոյգ, նայելով պարագաներուն որ կը յիշուին ի Խորենացւոյն այս և յաջորդ գլխոց մէջ, պարագաներ՝ որ չեն ճշմարիտ. զոր օրինակ Տրդատայ գտնուելն ի Հռոմ առ Կոստանդիանոսի, և Շապհոյ այն առթիւ գրգռելն զՍղուկ յապստամբութիւն, երթալն Տրդատայ ի դարձին հիւսիսականաց դէմ և վանդելն, և ապա հռոմայեցի զօրօք տարևոր ժամանակաւ արշաւելն ի Պարսս, և շինելն զՆկրատան։ Գիտենք որ Տրդատ չգնաց երբէք ի Հռոմ առ Կոստանդիանոս. ինչպէս կրնար Շապուհ, առիթ ընելով զայս, գրգռել զՍղուկ յապստամբութիւն։ Եւ ոչ Տրդատայ հիւսիսականաց դէմ արշաւել և վանդելն, և տարևոր ժամանակաւ հռոմայեցի զօրօք արշաւելն ի Պարսս ունին ստուգութիւն. դարձեալ՝ ինչ Նկրատան է այն՝ զոր Խորենացին կու տայ շինել Տրդատայ։

Թէ ուստի՛ կ՚առնու Խորենացին զպատմութիւն այս գլխոյն, ինչպէս նաև յաջորդ գլուխներուն մինչև ի մահն Տրդատայ՝ պիտի յիշենք յետոյ։ Ստոյգ է միայն, թէ բերդն Ողական որ ի Տարօն՝ էր արդէն առ Պապաւ ժառանգութիւն Մամիկոնէից (Բուզ. Ե. Գ.)։

Աղկունիք կային առ Վարդանամբք, յորոց կողմանէ կը յիշուի առ Եղիշէի Այրուկ Աղկունի։

Ի գլուխն ՁԵ. կը պատմէ Խորենացին Տրդատայ նահատակութիւններն յԱղուանս, այսինքն ի պատերազմին ընդդէմ Հիւսիսականաց, և կու տայ յաղթել Տրդատայ, բայց ոչ առանց մեծ կորստեան։ Թէպէտ ինքնին չէ անհաւանական, թէ Տրդատ կրեց այսպիսի յարձակումն ի Հիւսիսականաց՝ սակայն պատմութեան պարագաներն կը ցուցնեն, թէ Խորենացին կը շփոթէ զայս Տրդատ ընդ Տրդատայ կամ Տիրիթայ Տակիտոսի (Արտաշէս Բ. ըստ Խորենացւոյն) առ Ներոնիւ։ Ըստ ժամանակակից պատմութեան՝ այն Տրդատայ ժամանակ եղաւ յարձակումն ի վերայ Հայոց ի Հիւսիսականաց, և Յովսեպոս, մին ի պատմչաց այն յարձակման, իբր 500 ամօք յառաջ քան զԽորենացին ըստ աւանդութեան և ժամանակակից՝ կը պատմէ այն Տրդատայ վրայ «քեմխտապատ պարանին» դիպուածն, ինչպէս տեսանք այլուր։ Յայտնի է թէ Խորենացին, որ գիտէ զՅովսեպոս՝ կու տայ այն Տրդատայ վրայ պատմուածն այս Տրդատայ։ Ուստի կը համաձայնինք ըսել, թէ Հիւսիսականաց այս յարձակումն առ այսու Տրդատայ չունի պատմական հիմն, ինչպէս նաև Տրդատայ յետ պատերազմին արշաւելն ի Պարս. քանզի յետ Գաղերիոսի դաշանց, որոյ զօրութեամբ տևեց քառասնամեայ խաղաղութիւն՝ չէ հաւանական թէ եղաւ երբէք պատերազմ Հայոց ընդ Պարս։ Շապհոյ խլրտելն և նիւթել թշնամութիւն Հայոց դէմ՝ կ'սկսի, ինչպէս ըսուած է այլուր՝ յետ 337-ին, այն է յետ մահուն Կոստանդիանոսի և Տրդատայ, առ Խոսրովու որդւոյ Տրդատայ։ Ահա ՁԵ. գլուխ Խորենացւոյն.—«Իսկ թագաւորն Տրդատ ամենայն Հայաստանեօք իջեալ ի դաշտն Գարգարացւոց՝ պատահէ Հիւսիսականացն ճակատու պատերազմի. և ի խառնել երկոցունց կողմանցն՝ յերկու ճեղքէ զամբոխ թշնամեացն, սկայաբար շահատակելով։ Ոչ կարեմ պատմել զերագութիւն ձեռինն, որպէս անբաւք ի նմանէ յերկիր անկեալ թաւալգլոր խաղային. օրինակ իմն ի գեղեցիկ ցանցորդէ լի ձկամբ յերկիր թափեալ ցանցոյն, կայտառէին յերեսս երկրին։ Զոր տեսեալ թագաւորին Բասլաց՝ մօտ հասանէ յարքայն. և հանեալ յասպազինէն զներդեալ քեմխտապատ պարանն, և կորովութեամբ ձգեալ յետուստ կողմանէ՝ ճարպ դիպեցուցանէ յուս ձախակողմանն և յանութ աջակողմանն. զի էր վերացուցեալ զձեռն՝ ածել ումեք սուսերաւ. և ինքն վառեալ վերտ պահպանակօք, ուր ոչ գծէին նետք։ Եւ քանզի ոչ կարաց շարժել ձեռամբ զհսկայն՝ զլանջիւք առ երիվարին, և ոչ այնչափ ինչ շութափեաց մտրակել զերիվարն՝ քան թէ ահեակ ձեռամբն ի ներդեայն աճապարեալ սկայն, և

սաստկութեամբ ուժոյն զիւրեաւ ցանցեալ՝ ի ճահ դիպեցուցանէր զերկսայրին, և ընդ մէջ կորէր զայրն և ընդ զոյգ պարանոցին ընդ գլուխ երիվարին։

Իսկ զօրացն ամենայնի տեսեալ զթագաւորն իւրեանց և զզօրաւորն միջակտուր յայնպիսի ահաւոր բազկէ լեալ՝ ի փախուստ դառնային. զորս զհետ մտեալ Տրդատ՝ վարէ մինչև յաշխարհն Հոնաց։ Եւ թէպէտ ոչ փոքր հարուածս իւրոց զօրացն եհաս, և բազմաց անկումն մեծամեծաց, յորում մեռաւ և սպարապետն ամենայն Հայոց Արտաւազդ Մանդակունի՝ սակայն Տրդատ անտի ըստ հայրութեան օրինաց պատանդս առեալ դառնայ։ Որով պատճառաւ միաբանեալ զամենայն հիւսիսի, հանեալ զօր բազում, գումարտակ արարեալ՝ խաղայ յաշխարհն Պարսից, դիմեալ ի վերայ Շապհոյ որդւոյ Արտաշրի՝ չորս լիւրոցն առնելով զօրավարս, զՄիհրան առաջնորդ Վրաց, փոստահացեալ վասն ի Քրիստոս հաւատոցն, և զԲագարատ ասպետ, և զՄանաճիհր նահապետ ազգին Ռշտունեաց և զՎահան նահապետ Ամատունեաց։ Բայց յաղագս հաւատոց Միհրանայ և աշխարհին Վրաց ասել կայ մեզ առաջի»։ Խորենացին, զոր խոստացաւ՝ կը կատարէ յաջորդ գլխով։

ՁԵ. գլուխ Խորենացւոյն ունի Վրաց դարձին պատմութիւնն ի ձեռն կնոջ ուրումն Նունեայ, որ որպէս թէ էր յընկերաց Հռիփսիմեանց։ Պատմութիւնն, ինչպէս յայտնի է ի նշանացն, որովք լի է՝ է զրոյց.—«Կին ոմն անուն Նունէ, յընկերաց սրբոց Հռիփսիմեանցն ի ցրուելոյն, փախստեամբ հասեալ յաշխարհն Վրաց ի Մծխիթայ, ի նոցա քաղաքն նախագահ, յոյժ ճգնութեամբ ստացեալ շնորհս բժշկութեան. որով և զբազում ախտաժէտս բժշկեալ՝ և գլխովին զկին Միհրանայ առաջնորդին Վրաց։ Վասնորոյ հարցեալ զնա Միհրանայ, եթէ որո՛վ զօրութեամբ առնես զայս սքանչելիս՝ ուսաւ զքարոզութիւն Աւետարանին Քրիստոսի, և ախորժելով լուեալ՝ պատմեաց իւրոց նախարարացն հանդերձ զովեստիւ։ Եւ իսկոյն եհաս ի նա լուր սքանչելեացն որ եղեն ի Հայս ի թագաւորն և ի նախարարսն, և զընկերացն երանելոյն Նունեայ. ընդ որ հիացեալ՝ զրուցեաց երանելոյն Նունեայ, որով և ստուգագոյն ևս տեղեկացաւ զամենայն իրն»։

Խորենացին ըսելով վասն Նունեայ, թէ «առաքելուհի եղեալ քարոզեաց ի Կղարջաց սկսեալ առ դրամբք Ալանաց և Կասբից մինչև ի սահմանս Մասքթաց»՝ կը յաւելու, «որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»։ Սակայն զարմանալի է, որ Ագաթանգեղոս զքարոզութիւնն ի Կղարջաց մինչև ի սահմանս Մասքթաց, այլովքն հան-

դերձ՝ կու տայ Գրիգորի (Ագաթ. ԾԻ.)։ Նունեայ, իբրև առաքելուհւոյ Վրաց՝ անունն անգամ չկայ առ Ագաթանգեղոսի։

Ըստ ԶԷ. գլխոյ Խորենացւոյն՝ Տրդատ թէպէտ կը յաղթէ ի պատերազմին ընդդէմ հիւսիսականաց, բայց որովհետև կորուստ մեծ ունեցաւ՝ կը փախնայ առանձինն կռուել ընդ Շապհոյ, մինչև կը հասնի զօր Հռոմայեցի, որոց օգնութեամբ Տրդատ կը մտնէ յԱսորեստան, և յետ դարձուցանելոյ զերկիրն յաւեր և յապականութիւն՝ կ'երթայ Պարսից հիւսիսային կողմերն, ուր կու գայ առ նա ազգական նորա Կամսար, Կարնան ցեղէն.—«Բայց Տրդատայ թէպէտև զյաղթութիւն ստացեալ էր, այլ ի հարկանելոյ զօրուն և ի բազում անկելոյ նախարարացն՝ զանգիտեաց ինքեամբ յատուկ մարտնչել ընդ Շապհոյ, մինչև եհաս բազմութիւն զօրուն Հռոմայեցւոց, որք ընդ Ասորեստան յարձակեցան. և ի փախուստ Շապհոյ՝ դարձան և յաւարի առին զամենայն երկիրն։ Քանզի և Տրդատ միահամուռ իւրովքն, և որք ընդ իւրովք էին զօրքն, ընդ հիւսիսային կողմանս իշխանութեանն Պարսից դիմեաց տարեկան չուաւորութեամբ։ Յայնժամ գայ առ նա ազգականն իւր և հարազատ Կամսար»։

Խորենացին շատ բան կը պատմէ զԿամսարականաց, զորս կը դնէ Պահլաւ ցեղէ, ուստի և ազգական Պարթևաց և Արշակունեաց։ Թողլով ինչ որ կը պատմէ Խորենացին, առնլով չենք գիտեր ինչ աղբերէ, թերևս ի Խոռոհբտայ, Կամսարայ նախնիներուն վրայ (Խոր. Բ. ԻԷ, ԻԸ, ՀԳ.), թողլով նաև Կամսար անուան ստուգաբանութիւնն (Խոր. Բ. ԶԷ.)՝ սա միայն յիշենք իբրև ճշմարիտ, թէ Կամսարականք էին արդարև Պահլաւ, ուստի և ազգականք Արշակունեաց։ Ալանայոզան Պահլաւ զօրավար Շապհոյ (Բուզ. Դ. ԼԸ.)՝ զԱրշակ, որ կ'աղաչէր զնա թողուլ փախչել՝ կը յանդիմանէ այսպէս. «Դու ոչ խնայեցեր յազգայինսն մեր Կամսարականս, որ առաւել քան զիս էին քո հարազատագոյնք դենի ձեր մասամբ և աշխարհաւ համաբնակաւ. զիարդ լինէին ակն ունիցիս ի քեզ խնայել, հեռացեալ դենիւ և բնակութեամբ. և որո՞վ օրինակաւ ես ի քոյն յուսալով բարիս, որ անյայտ է թէ առից՝ զգտեալսն յիմմէ թագաւորէն կորուսանիցեմ» (Խոր. Գ. ԼԴ.)։ Թէպէտ Խորենացին է որ կը դնէ այս յանդիմանութիւնն ի բերան Պահլաւ զօրավարին, և Բուզանդ, որ գիտէ զԱլանայոզան Պահլաւ ի տոհմէ Արշակունեաց, չունի այս պարագայն՝ բաւական է սակայն ցուցնելու, թէ Կամսարականք համարուած էին ազգական Արշակունեաց։ Ըստ Բուզանդայ՝ այս ցեղ ոչ թէ առ Տրդատաւ եկաւ ի Հայս, ինչպէս կը պատմէ հոս Խորենացին, այլ կար յառաջագոյն իսկ քան զՏրդատ։ Առ Խոսրովաւ որդւով Տրդատայ Կամսարականք էին ի համարի հին ազգ նախա-

բարութեանց, և է ի նիվաղուց խնամացեալ ընդ աւագ նախարարս, որպիսի էին Սիւնիք և Մամիկոնեանք (Բուզ. Գ. ԺԱ.)։

Այս գլխոյն (ՁԷ.) վերջը կը յաւելու Խորենացին. «Բայց Տրդատայ հաստատեալ իւր զեւթնպարապեանն Եկղատան երկրորդ, և վերակացուս յինքենէ թողեալ՝ դառնայ ի Հայս։ Քանզի Շապուհ, կը յաւելու, աղաչեաց զԿոստանդիանոս զյաղթողն՝ խնդրել զհաշտութիւն, և հաստատել խաղաղութիւն մշտնջենաւոր. զոր արարեալ սրբոյն Կոստանդիանոսի», այլովքն հանդերձ։

Ինչ որ Խորենացին Գ. դպրութեան ՁԳ. գլխէն մինչև ի գլուխն ՁԸ. կը պատմէ Տրդատայ պատերազմներուն վրայ ընդ Շապհոյ՝ են շփոթ և լի պատմական և ժամանակագրական սխալներով, ուստի չունին ամենևին պատմական ստուգութիւն։ Նախ՝ զՇապուհ կը համարի որդի Արտաշրի (Գլ. ՁԶ. և ՁԷ.)։ Շապուհ որդի Արտաշրի, ըստ ժամանակակից պատմութեան՝ է կրկին. մին՝ Շապուհ Ա. որդի Արտաշրի առաջնոյ (240—271), միւսն՝ Շապուհ Գ. որդի Արտաշրի երկրորդի (385—389). երկուքին ևս չեն յամարիր Տրդատայ ժամանակին, որ է 287 կամ 297—337։ Տրդատայ ժամանակակից Շապուհ՝ է Շապուհ Բ. որդի Որմզդի Բ, երկայնակեաց (309—381), որ կը հանդիպի ոչ միայն Կոստանդիանոսի, այլև Կոստանդայ, Յուլիանու, Յովիանու, Վաղեսի և Թէոդոսի մեծի, և մեր թագաւորներէն՝ Տրդատայ մեծի, Խոսրովու Բ, Տիրանայ Բ, Արշակայ, Պապայ և Վարազդատայ, և ունի մեծ դեր ի պատմութեան վերջին ժամանակին Արշակունեաց։ Երկրորդ՝ մշտնջենաւոր խաղաղութիւնն, զոր կը յիշէ Խորենացին՝ եղաւ առ Դիոկղետիանոսիւ յետ յաղթութեանն Գաղերիոսի (297) և տևեց Կոստանդիանոսի և Տրդատայ բոլոր ժամանակը։

Այս ժամանակագրութեան նայելով՝ սխալ է նաև այն որ կ՚ըսէ Խորենացին, թէ յերթալն Տրդատայ առ Կոստանդիանոս՝ Շապուհ գրգռեց զհիւսիսականս յարձակել ի վերայ Հայոց, ևն. քանզի Տրդատայ ճշմարիտ երթն առ Կոստանդիանոս (եթէ երբէք եղաւ)՝ եղած է 307-ին, մինչդեռ չկար Շապուհ. իսկ երկրորդ երթն ի Հռոմ ըստ Ագաթանգեղոսի՝ չէ ճշմարիտ, ինչպէս պիտի տեսնենք յետոյ։ Տեսանք նաև, թէ հիւսիսականաց յարձակումն առ Տրդատաւ՝ շփոթուած է ընդ յարձակմանն հիւսիսականաց, որ եղաւ առ Տրդատաւ Տակիտոսի, այն է առ Արտաշիսիւ Բ. ըստ Խորենացւոյն։ Այս պատմական տեսութենէն կը հետևի, և կրնանք ըսել ստուգութեամբ, թէ պատերազմունք, զորս կը համարի եղած Խորենացին առ Տրդատաւ ընդ Պարսս և յորս կը խառնէ զՀռոմայեցիս, այն է զԿոստանդիանոս՝ չունին ամենևին ստուգութիւն, և հաւանական է թէ

առնուած են ասորի կամ պարսիկ աղբերէ, թերեւս ի Խոռոհբոտայ,
որ էր դպիր Շապհոյ ըստ Խորենացւոյն, և դերկցին նորա Բար-
սումայի պատմութենէն, զորոց վաւերականութիւնը կասկածելի
կ'ընէ ինքն իսկ Խորենացին ասելով, թէ էին առասպելախառն
(Խոր. Բ. Հ.)։

Գալով եօթնպարսպեան Եկբատանայ՝ կ'ըսենք, թէ երկու Եկ-
բատանք կը յիշուին ի պատմութեան, մին ի Մարս, և միւսն ի
Պարսս, երկոքին ևս հարիւրաւոր ամօք յառաջ քան զՏրդատ։ Չէ
ամենևին հաւանական, թէ Տրդատ յետ պատերազմին ընդ Շապ-
հոյ (գնելով այն պատերազմը ճշմարիտ), գնաց «տարեկան չուառո-
րութեամբ», իւր և հռոմայեցի զօրօք — «միահամուռ խրովքն և որք
ընդ խրովք էին զօրքն (Հռոմայեցւոց) ընդ հիւսիսային կողմանս
իշխանութեանն Պարսից», այն է ի կողմանս Բակտրիոյ (Քուշանք
ըստ Հայոց), և շինեց նոր իմն եօթնպարսպեան Եկբատան, զոր
յանձնելով վերակացուաց՝ դարձաւ ի Հայս։ Իբրև գործ Տրդատայ՝
քան զայս ստոյգ է շինուածն ի Գառնի. — «Զայսու ժամանակաւ
կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնոյ, զոր որձաքար և կո-
փածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ. յորում շի-
նեալ և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի դրօշուածովք,
բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ. և գրեալ
ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրով» (Խոր. Գլ. Ղ.)։ Կը մնայ
գիտել, թէ ինչ էր շինուածն Տրդատայ։ Գիտենք թէ Գառնի էր
ամրոց շինեալ ի վաղուց, ուր էին հռոմայեցի պահապան զօրք առ
Տիբերիւ, և ուր ամրացաւ Միհրդատ Վիր (Սանատրուկ) յերեսաց
եղբօրորդւոյն իւրոյ Հռադամիզդայ (Երուանդ), ըստ հռոմէական
պատմութեան։ Ուստի շինուածն Տրդատայ կը թուի լինել իւր քեռ
Խոսրովիդխտոյ համար ամարանոց, և զոր կը յիշեն յետին պատ-
միչք, Կիրակոս և ընդարձակողն Սամուելի, կոչելով թաղտ Տրդա-
տայ։

Խնդիր է, թէ ուստի կ'առնու Խորենացին այս պատմութիւնը,
մանաւանդ ինչ որ կը պատմէ նոյն գլխոյն մէջ զԿամսարայ։ Որով-
հետև Խորենացին ստէպ կը յիշէ զԿամսարականս իբրև զմին ի Պահ-
լաւ ցեղից, յորոց էին Պարթև թագաւորք յԱրտաւանայ Գ.-է և
այր, ինչպէս նաև մերքն ի Տրդատայ Տակիտոսի (Արտաշէս Բ.) մին-
չև ի վախճան հարստութեանն Արշակունեաց՝ — հաւանական կը
թուի, թէ Խորենացին ունէր ի ձեռին Պահլաւ ցեղերուն վրայ գըր-
ուած մը պարսկերէն, զոր կ'ակնարկէ իսկ ի գլուխն ՀԸ. յասելն զՊերո-
զամատէ. «զորմանէ բիւր առասպելս յօդեցին Պարսք». պարսկերէն
աղբիւր կ'ակնարկէ նաև առասպելական պարսիկ անունն Կամսար։

Չէ անհաւանական թէ այս աղբիւր Խորենացւոյն էր Խոռոհբուտայ մատեանն կամ նմին նման գրուած մի կէս վիպաբանական։

ԶԸ. գլուխն է զԼիկինիոսէ (Լիկիանէս), զոր որպէս թէ Կոստանդիանոս կ'ընէ երկրորդ իւր, տալով նմա զքոյր իւր կնութեան։ Բայց Լիկինիոս կը դրժէ իւր խոստման՝ տալոյ ազատութիւն քրիստոնէից, յարուցանելով սաստիկ հալածումն և սպաննել տալով զբազումս, ընդ որս զԳլաֆիւրա կոյս և զԲարսեղ եպիսկոպոս Ամասիոյ, որոյ վկայաբանութենէն առած է Խորենացին զիւր պատմութիւնն զԼիկինիոսէ, ինչպէս կը հաստատէ Ա.. Լա Գարիէր (տես «Հանդէս ամսօրեայ» 1893, մայիս)։ Ըստ Խորենացւոյն՝ Լիկինիոս կը նիւթէ գաղտ նենգութիւն ընդդէմ Կոստանդիանոսի, բայց մատնուելով ի ձեռս նորա՝ կը ղրկուի ի մեռաղս ի Գաղղիա.—«Ի բառնալ Աստուծոյ զբռնաւորսն ամենայն յերեսաց Կոստանդիանոսի՝ մեծարեաց նա զԼիկիանոս մեծութիւն յոյժ, և ետ նմա կնութեան զքոյր իւր ոչ համամայր, ծիրանեօք և պսակաւ զարդարեաց զնա, և յերկրորդականս հասուցեալ պատիւս՝ արքայ ամենայն արևելից կացոյց։ Բայց զոր աստուածային բանն առ Երբայեցւոցն անհնարին համարեալ չարութեանն փոփոխումն՝ նոյն և աստանօր պատահի. ընձու անկարելի է զխայտուցն փոխել և Եթովպացւոյ զթխութիւն, նոյնպէս մարդոյ ամբարշտի զբարսն։ Քանզի նախ առ ի հաւատոն գըտանի դրժող, և երկրորդ՝ առ բարեգործն իւր՝ ապստամբ։ Յարոյց հալածանս եկեղեցւոյ, և նենգութիւն գաղտնի ընդդէմ Կոստանդիանոսի. նաև չարիս բազմազանս ամենեցուն հասոյց որ ընդ իւրով իշխանութեամբն էին, ցանկասէրս այս և գարշելի ալեօք, ներկուածոյ ունելով զհերս. որ և զկին իւր ի մեծ նեղութիւն արգել սակս տրփութեան երանելոյն Գլափիւրայ, վասն որոյ սպան զսուրբն Բասիլիոս Ամասիոյ Պոնտացւոց եպիսկոպոս։ Եւ իբրև յայտնեցաւ դաւն, և գիտաց, թէ նմա լաւ ոչ լինի Կոստանդիանոս՝ ժողովեաց զօրս ընդդիմանալ պատերազմաւ»։ Խորենացւոյն կողմանէ յաւելուած է սա մասը. «Եւ ցրտացեալ ի սիրոյն Տրդատայ մեր թագաւորի՝ ակնածէր որպէս արդարև ի թշնամւոյ, քանզի գիտէր եթէ ատելի է արդարոյ ամենայն ամբարիշտ»։ «Իսկ իբրև եկն յաղթողն Կոստանդիանոս՝ մատնեաց Աստուած ի ձեռս նորա զԼիկիանոս. յոր խնայեալ որպէս ի ծերունի և ի քեռայր՝ ետ տանել ի Գաղղիաս հանդերձ երկաթի կապանօք դնել ի մեռաղս, զի աղօթեսցէ առ Աստուած որում մեղաւն, թերևս երկայնամիտ լիցի առ նա»։

Սակայն գիտենք հռոմայեցւոց պատմութենէն, թէ Լիկինիոս կարգեցաւ կայսր ոչ թէ Կոստանդիանոսէ, այլ Գաղերիոսէ (307)։ Մինչև 314, Սևերոս Մաքսիմիանոս, Գաղերիոս, Մաքսենտիոս,

Մաքսիմինոս, հակառակորդք միմեանց՝ վերջան պատերազմաւ կամ մահուամբ. մնացին Կոստանդիանոս և Լիկինիոս, որք երկիցս գըրգռեցան ի պատերազմ, 314 և 322. յերկրորդումն Լիկինիոս յաղթուելով հրաժարեցաւ յիշխանութենէ, և ըստ խնդրոյ կնոջ նորա Կոստանդեայ, քեռ Կոստանդիանոսի՝ տրուեցաւ նմա բնակութիւն Թեսաղոնիկէ, բայց յետ սակաւուց սպանուեցաւ (324)։

Նոյն ՁԸ. գլխոյն վերջը կը պատմէ Խորենացին հարևանցի իմն Կոստանդնուպոլսի շինութիւնը, որ չունի վերաբերութիւն մեզ։ Ի գլուխն ՁԹ. նոյնպէս համառօտիւ կը յիշէ գժողովն Նիկիոյ, որոյ կարևորագոյն մասն է վասն մեր՝ Արիստակիսի ղրկուելն ի ժողովն։ Ագաթանգեղոս կը պատմէ Արիստակիսի երթն համառօտիւ այսպէս. «Ապա յետ այսորիկ հրաման ետ մեծ կայսրն Օգոստականն Կոստանդիանոս՝ ժողովել ամենայն եպիսկոպոսաց ի քաղաքն Նիկիացւոց։ Յայնժամ մեծ արքայն Տրդատ և սուրբ կաթողիկոսն Գրիգորիոս հանդերձեցին և արձակեցին զԱրիստակէս, որ երթեալ հասանէր ի ժողովն մեծ Նիկիոյ ընդ եպիսկոպոսն ամենայն, ուր ամենայն տիեզերացն կարգեցաւ ընդունելութեան աւանդութեան հաւատք». և խօսքն կը յարէ զդարձն Արիստակիսի ի ժողովոյն—«Իսկ երանելին Արիստակէս գայր հասանէր պայծառ ծագեալ հաւատովքն և հաստատուն աստուածահաճոյ նիկիական կանոնօքն երևեալ ի Հայաստան երկրին. առաջի դնէր թագաւորին և կաթողիկոսին սրբոյ զբերեալ աւանդութիւնսն. որով սրբոյն Գրիգորի ի նոյն լուսաւորական կանոնսն յաւելեալ՝ առեալ զիւր վիճակն զհայաստան երկիրն պայծառացուցանէր» (Ագաթ. ձիէ.)։ Ըստ Խորենացւոյն՝ որպէս թէ Կոստանդիանոս կը հրաւիրէ զՏրդատ երթալ ի ժողովն հանդերձ Գրիգորիւ. բայց երկոքին ևս կը հրաժարին, Տրդատ՝ քաղաքական պատճառաւ, այսինքն առ երկիւղի ի Շապհոյ, իսկ Գրիգոր՝ առ խոնարհութեան, որպէս զի չպատուէր ի ժողովոյն իբրև խոստովանող։ Ուստի կը ղրկուի Արիստակէս, կրտսեր որդին Գրիգորի, իբրև փոխանորդ նոցա, այսինքն Տրդատայ և Գրիգորի. (թէպէտ Արիստակէս կ'ընդունուի ի ժողովոյն իբրև եպիսկոպոս մեծին Հայոց ընդ իրաւասութեամբ մետրապոլտին Կեսարեայ, և ոչ իբրև հրաւիրեալ փոխանորդ)։ Ահա բանք Խորենացւոյն. «Յայնժամ գայ հասանէ հրովարտակ ինքնակալին Կոստանդիանոսի առ մեր արքայն Տրդատ, զի զսուրբն Գրիգոր առեալ ընդ իւր ի ժողովն երթիցէ. զոր ոչ առ յանձն Տրդատ։ Քանզի լուեալ էր զխնամանալն Շապհոյ ընդ Հնդկաց թագաւորին և ընդ արևելեանն Խաքանայ... և ի կասկածի եղեալ, զի մի արդեւք պայմանին ստիցէ ըստ սովորութեան հեթանոսութեանն՝ վասն այնորիկ ոչ եթող առանց իւր գաշխարհս։

Բայց և ոչ սուրբն Գրիգոր հաւանեցաւ երթալ, զի մի զառաւել պատիւն վասն խոստովանողական անուանն ի ժողովոյն կրեցէ, որպէս զի այսպէս փափաքանօք և մեծաւ փութով կոչէին։ Այլ նոքա առաքեն փոխանորդ իւրեանց զԱրիստակէս, հանդերձ ճշմարիտ խոստովանութեամբ երկոցունց՝ գրով»։ Խորենացին որպէս թէ կամելով լնուլ Ագաթանգեղոսի թերին՝ կը յաւելու հրաւէրը, և Տրդատայ և Գրիգորի հրաժարման պատճառներն երթալու ի ժողովն։ Սակայն չէ հաւանական թէ Կոստանդիանոս հրաւիրեց զՏրդատ ի ժողովն Նիկիոյ, որպէս թէ արքայաժողով էր այն. չէր նաև գործ Կոստանդիանոսի հրաւիրել զԳրիգոր. եպիսկոպոսին Հայոց պարտքն էր երթալ անձամբ, և Գրիգորի հրաժարելոյն պատճառը—եթէ ճշմարիտ է հրաժարելն—զոր կը բերէ Խորենացին՝ չէ բանաւոր։ Արդարև զարմանալի է. Գրիգոր, որ ըստ Խորենացւոյն առ երկիւղի պատուելոյ իբրև խոստովանող կը խորշի երթալ ի Նիկիա՝ ըստ նոյն Խորենացւոյն չխորշեցաւ երթալ ընդ Տրդատայ ի Հռոմ առ Կոստանդիանոս և առ Սեղբեստրոս։ Թերևս Գրիգորի չերթալուն պատճառն ի ժողովն այն էր, որ երթալ ճգնելու համար ի լերինս, ինչպէս կամի վկայաբանութիւնն (Ագաթանգեղոսի)՝ արդէն հրաժարած էր նա եպիսկոպոսութենէն, գնելով փոխանակ զիւր որդին Արիստակէս կամ Ռըստակէս, կամ թերևս մեռած իսկ էր (325)։ Այս կէտին պիտի գանք յետոյ։ Խորենացին ի պատմութեան առ երթին Արիստակեայ ի ժողովն կը պատմէ կատարուած երևելի նշան, ինչպէս կ'երևի, ի հանդէս մեծի սրբութեանն Արիստակեայ. —«Որոյ (Արիստակեայ) երթեալ հասանէր մեծին Ղևոնդի (այսինքն Կեսարիոյ եպիսկոպոսին) և հանդիպէր յայնմ ժամու՝ զի մկրտէր զԳրիգոր զհայր Գրիգորի աստուածաբանին. որ իբրև ել ի ջրոյն, շուրջ լոյս փայլատակեալ զնովաւ. զոր ոչ ոք ի բազմութենէն ետես՝ այլ միայն Ղևոնդիոս որ մկրտէրն, և մերն Ռըստակէս, և Եւթաղ Եդեսիոյ, և Յակոբ Մծբնայ, և Յոհան Պարսից եպիսկոպոս, որք նոյն շաւղօք ուղևորէին ի ժողովն» (Խոր. Բ. ՁԹ.)։ Զիարդ և իցէ՝ երթալն Արիստակեայ ի ժողովն է ճշմարիտ այնու մանաւանդ, որ ըստ յոյն և լատին օրինակաց գործոց ժողովոյն՝ յանուանէ յիշուած է Արիստակէս իսկ և իսկ զկնի անուան մետրապոլտին Կեսարիոյ։ (Գաթրճ. Պատ. Տիեզ. Հտ. Բ. էջ 480)։ Բայց կարգ պատմութեանն կը պահանջէ խօսել նախ զճանապարհորդութենէն ի Հռոմ։

Ճանապարհորդութիւնն Տրդատայ ի Հռոմ հանդերձ Գրիգորիւ՝ Ագաթանգեղոսի պատմութեան գլխաւոր կէտերէն մին է։ Ստուգաբան պատմիչն դարձին Հայոց երկայն կը պատմէ այս ճանապարհորդութիւնը։ Տրդատ լսելով Կոստանդիանոսի դարձն ի քրիստո-

նէութիւն՝ իսկոյն կ'առնու զԳրիգոր, զԱրիստակէս, զԱգրիանոս, նաև չորս բդեշխներն և նախարարներէն շատերն իբր եօթանասուն հազար զօրօք, աճապարելով ընդ ծով և ընդ ցամաք՝ կ'երթայ ի Հռոմ և կ'ընդունուի մեծ պատուով Կոստանդիանոսէ և Սեղբեստրոսէ։ Աւելորդ չենք համարիր հոս յուշ առնել ընթերցողաց, թէ այս Տրդատայ ճանապարհորդութիւնն ի Հռոմ առ Կոստանդիանոս՝ անյաջող նմանութիւն է ճանապարհորդութեանն այլոյ ուրուք Տրդատայ ի Հռոմ առ Ներոն իբր երեք հարիւր ամօք յառաջ։ Զիարդ և իցէ՝ Տրդատ իւրովքն կը հասնի ի Հռոմ։ Ըստ Ագաթանգեղոսի՝ երկու թագաւորք կը պատմեն իրարու Աստուծոյ բարերարութիւնն առ նոսա։ Տրդատ կը պատմէ, թէ ինչպէս փոխուեցաւ ի կերպարանս անասնոյ. կը պատմէ նաև Հռիփսիմեանց նահատակութիւնը, և կը ցուցնէ զԳրիգոր, յորոյ ձեռն եղած էին այնչափ սքանչելիք։ Կոստանդիանոս լինալով Գրիգորի առջև՝ կ'օրհնուի ի նմանէ, և կը մեծարէ զնա մեծ պատուով իբրև խոստովանող Քրիստոսի, և սէր մեծ ցուցնելով Տրդատայ իբրև եղբօր և հաւատակցի՝ դաշինս կը կռէ ընդ նմա։ Եւ որովհետև Հռիփսիմեանք, ըստ Ագաթանգեղոսի, էին կայսերական տանէն—զՀռիփսիմեայ ասէ, թէ էր «ի թագակալ տոհմէ» (Ագ. ԺԳ.)՝—Կոստանդիանոս իբրև ծանօթ նոցա՝ կը պատմէ նոցա վարուց ազնուականութիւնը և Աստուծոյ մեծ զօրութիւնը, որ տուաւ նմա յաղթել այնչափ թշնամեաց։ Ի վախճանի Տրդատ բոլոր բազմութեամբ որ ընդ իւր էին՝ մեծամեծ պարգևօք հրաժարելով կայսրէն և մեծամեծներէն՝ ոսկեպատ կառօք, և ի ճանապարհին հանդիպելով քաղաքաց քաղաքաց, և ընդունելով պատիւ մեծ ամենէն՝ կու գայ ի Վաղարշապատ.—«Ընդ ժամանակս ընդ այնոսիկ թագաւորեաց Կոստանդիանոս որդի Կոստանդեայ արքայի... և հաւատաց նա յԱստուած արարիչ երկնի և երկրի։... Իբրև լուաւ զայս ամենայն մեծ արքայն Հայոց՝ խորհուրդ առնոյր վասն ճանապարհացն այնոցիկ. հանդերձեալ կազմէր, առնոյր ընդ իւր զմեծ արքեպիսկոպոսն Գրիգոր և զնորուն որդին զԱրիստակէս, և զեպիսկոպոսն Աղբիանոս. և ի զինուորական կողմանէն՝ զչորեսին զահերէցսն իւրոյ տաճարին որ բդեաշխքն կոչին... և զմեծ իշխանն Անգեղ տան, և զթագադիրն ասպետն, և զսպարապետն մեծ, և զիշխանն Մոկաց, և զիշխանն Սիւնեաց, և զիշխանն Ռշտունեաց, և զիշխանն Մաղխազութեան տանն, և զՇահապն Շահապիվանի, և զիշխանն սպասկապետութեանն, և այլ բազում մեծամեծօք և եւթանասուն հազարաւ ընտիր զօրուն հանդերձ՝ խաղայր գնայր յԱյրարատ գաւառէ ի Վաղարշապատ քաղաքէ՝ անցանել ի սահմանս Յունաց։... Ընդ ցամաք և ընդ ծով փու-

թացեալ աճապարէին... երթային ի թագաւորական քաղաքն Հռոմայեցւոց... զոր իբրև լուաւ աստուածակարգ թագաւորն պատուակալ աթոռոյն Կոստանդիանոս և Հայրապետն մեծ արքեպիսկոպոսն աշխարհամուտ դրանն որում անուն կոչէր Սեղբեստրոս, որք մեծաւ սիրով պատիւ արարեալ ընդ առաջ ելանէին:... Ապա զարմացեալ աստուածասէր կայսրն Կոստանդիանոս՝ հարցանելով զարքայն Տրդատ, թէ զիա՞րդ, որպէս եղեն առ քեզ Աստուծոյ սքանչելիքն: Իսկ նա եկաց պատմեաց առաջի կայսերն զամենայն արարեալսն Աստուծոյ առ նա զբարերարութիւնսն: Եւ զայն ի պատուհասին լինել ի կերպարանս անասնոցն ոչ ամօթ համարեցաւ պատմել նմա, և զհամբերութիւն նահատակեալ վկայիցն քաջութեան... և յանդիման ցուցանէր կայսերն զտարեալն ընդ իւր զԳրիգորն, եթէ Այս այն այր է, ասէ, յորոյ ի ձեռն ծանեաք մեք զմարդասիրութիւնն Աստուծոյ, և զնորուն ժուժկալութիւն նշանագործ զարմանալիութեանցն: Վասնորոյ զարմացեալ կայսրն Կոստանդիանոս՝ խոնարհեցուցեալ զանձն անկանէր առաջի Գրիգորի, զի օրհնեսցի ի նմանէն. և բազում վայելուչ մեծարանօք պատիւ արարեալ նմա իբրև խոստովանողի Քրիստոսի ըստ արժանաւորութեան նորա: Սոյնպէս և արքային Տրդատայ իբրև եղբօր սիրելւոյ սէր ցուցեալ ուրախութեամբ մեծաւ, մանաւանդ վասն աստուածածանօթութեան նորա առաւել՝ դաշինս կռէր ընդ նմա, միջնորդ կալեալ զհաւատսն որ ի Տէր Քրիստոսն էր. զի անշուշտ մինչ ի բուն զհաւատարիմ սէրն ի մէջ թագաւորութեանցն պահեսցեն:... Ապա և կայսրն Կոստանդիանոս սկսաւ պատմել նմա վասն անզուգական վարուցն նոցա (Հռիփսիմեանց) զոր յառաջագոյն գիտէր, մինչդեռ անդ էին յիւրեանց աշխարհին, եթէ որպէս հաճոյ վարուքն էին, կամ որպէս ազնուականք ի մարմնաւոր կողմանէ տոհմայ իւրեանց. և զգործոն զօրութեան յաղթութեանն Աստուծոյ նմա տուելոյ պատմէր, առ ամենայն թշնամիսն ճշմարտութեան յաղթող երևեալ:... Ապա յետ այսորիկ մեծարեալ լինէին զարմանօք, մեծապատիւ շքեղութեամբ կարգօք յարքունեացն և յեկեղեցեացն և ի պատուական իշխանաց քաղաքին, և մեծամեծ պարգևօքն պատուեալ սիրով, հրաժարեալ ի ծիրանափառ օգոստականացն և ի սրբոյ կաթողիկոսէն, ընկալեալ ողջոյն յեկեղեցւոյն և յերևելի իշխանաց քաղաքին, և ամենայն իրօք աջողելովք՝ ելանէին յոսկիապատ կառս արքունատուրս, և մեծաւ շքաւ և բազում վայելչութեամբ ունէին զճանապարհս արքունականս, և ամենայն քաղաքաց պատահելոց պայծառագոյն լինէին, և մեծամեծս ըստ արժանողութեանն արքայութեանն մեծամեծ պատուեալ անդստին, մինչև գային հասանէին յերկիրն Հայ-

ոց յԱյրարատ գաւառ ի Վաղարշապատ քաղաք ի հանգստակայս սրբոցն: Եւ բերէին զպարգեւս բերեալս անդստին, զոսկին եւ զարծաթն եւ զպատուական կարասին, ի նուէրս սպասու Աստուծոյ եկեղեցւոյն եւ ի տունս նուիրաց սրբոց վկայիցն դնէին. նաեւ զտուեալ զոսկի սպասս կայսերն ի նոյն հանգիստ սրբոցն դնէին» (Ագաթ. (ԾԻԵ, ԾԻԶ.):

Պատմութեան պարագաներէն յայտնի է, թէ այս երթն Տըրդատայ եւ Լուսաւորչին ի Հռոմ՝ է լոկ կեղծիք: Գաթըրճեան թէպէտ կը խոստովանի այս պատմութեան պարագաներէն գէթ ոմանց անտեղութիւնը՝ սակայն կը համարի ճանապարհորդութիւնն ըստ էութեան ճշմարիտ, մանաւանդ թէ հարկ իսկ. ի կողմանէ Տրդատայ՝ հաստատելու համար ընդ Կոստանդիանոսի հին ուխտը, որ թուլացեալ էր գէթ ըստ մասին Մաքսիմինոսի հետ եղած պատերազմին պատճառաւ, եւ Գրիգորի կողմանէ՝ ցուցնելու համար զիւր հպատակութիւնն եկեղեցւոյ գլխոյն, Հռոմայ եպիսկոպոսին գլխաւորութեան՝ համեմատութեամբ յետին վարդապետութիւնը տանելով յառաջ մինչեւ ի ժամանակս Լուսաւորչին.—«Հարկ էր, կ'ըսէ, թագաւորին Հայոց դաշնաւորի Հռոմայեցւոցն՝ նորոգել կամ կռել դաշինս ընդ նորոց գլխաւորաց պետութեանն (Կոստանդիանու եւ Լիկիանու), մանաւանդ զի յառաջ իսկ քան զակաւ մի ստիպեալ էր տալ մարտ պատերազմի ընդդէմ հռոմէական զօրուն առաջնորդելոյ ի Մաքսիմինեայ Դայայ... եւ աթոռակալն առաքելոյն Հայոց տայր ընծայութիւն հպատակութեան յաջորդի գլխոյն առաքելոց»: Ընդունինք թէ հարկ էր Տրդատայ հին դաշնակցութիւն մը որ թուլցած էր՝ նորոգել. բայց միթէ հա՞րկ էր այս պատճառաւ 70,000 զօրօք եւ գրեթէ բոլոր նախարարաց բազմութեամբ երթալ մինչեւ ի Հռոմ: Իսկ Գրիգորի համար ո՞ւր գտած է Գաթըրճեան, թէ գնաց ի Հռոմ՝ «տալ ընծայութիւն հպատակութեան յաջորդի գլխոյն առաքելոց»: Կռելն դաշինս Տրդատայ ընդ Կոստանդիանոսի արդարեւ կայ յիշուած առ Ագաթանգեղոսի. բայց չկայ ամենեւին յիշուած, թէ Գրիգոր տուաւ «ընծայութիւն հպատակութեան» Սեղբեստրոսի՝ իբրեւ գլխոյ եկեղեցւոյ, կամ խնդրել ի նմանէ վաւերացունել զեպիսկոպոսութիւն իւր: Գաթըրճեան կը թուի շփոթած զԱգաթանգեղոս ընդ համբաւեալ թղթոյն դաշանց, զորոյ անվաւերութիւնը գիտէ ինքն իսկ Գաթըրճեան (Տիեզ. Պատմ. հտ. Բ. էջ 180, ծան. 1):

Խորենացին եւս (Բ. ՁԴ.) կու տայ Տրդատայ «գնալ ի Հռոմ առ սուրբն Կոստանդիանոս», յետ դարձին նորա ի քրիստոնէութիւն, բայց ոչ բազմութեամբ զօրաց եւ նախարարաց, եւ ոչ ընդ Գրիգորի. իսկ զընծայութենէ հպատակութեան այս վերջնոյն առ Սեղ-

ընտրոս իբրև առ գլուխ եկեղեցւոյ՝ չկայ ամենևին յիշատակութիւն առ Խորենացւոյն։

Գամըրճեան ունի ուրիշ վկայութիւն աղերսի իրիք Հայոց ընդ եպիսկոպոսապետին Հռոմայ անդէն իսկ ի սկզբան դարձին, այն է եպիսկոպոսաց նամակն առ Թէոդոս առ Եղիշէի։ Արդարև Հայք, ըստ Եղիշէի և ըստ Փարպեցւոյն, խնդրեցին օգնութիւն Թէոդոսէ Բ.-է նամակաւ. բայց երկու պատմիչք բազմօք կը տարբերին ի միմեանց։ Ըստ Եղիշէի՝ կը ղրկուի Ատոմ Գնունի հրովարտակաւ. զորոյ պատճէնը կը դնէ Եղիշէ.—«Յայնմ ժամանակի զմի ոմն ի մեծամեծ նախարարացն, ի տոհմէն Գնունեաց Ատոմ, ճեպով առաքեցին յերկիրն արևմտից՝ ցուցանել զայս ամենայն խորհուրդ չարիմաց թագաւորին արևելից, միանգամայն և պատմել զիւրեանց քաջութիւն արութեանցն, զոր գործովք կատարեցին, առ ոտն հարկանելով զհրամանն աշեղ, և մեծապէս սատակումն ի վերայ մոգացն հասուցանելով. խնդրել ի նմանէ օգնականութիւն սատարութեան, և եթէ նա կամեսցի՝ նմա իսկ մտանել ի ծառայութիւն։ Եւ այս է պատճէն հրովարտակին զոր գրեցին առ Թէոդոս կայսր. «Վասակ մարզպան և Ներշապուհ Ռըմբոսեան հանդերձ սպարապետաւս և ամենայն մեծամեծ նախարարօքս՝ առ մեծանունդ Թէոդոս կայսր. բազմասցի ողջոյն մեր առ քեզ և ամենայն զօրաց քոց, որ խաղաղասէր մարդասիրութեամբ ձերով տիրէք ծովու և ցամաքի, և չիք ոք յերկրաւորացս՝ որ ձերում անարգել տէրութեանդ ընդդէմ դառնայցէ։ Որպէս մեք իսկ ունիմք զանսուտ յիշատակարանսն զառաքինի նախնեացն ձերոց. ունելով զԿեսարս՝ անցին և տիրեցին և Ասիացւոց կողմանցն ի սահմանացն Սեւրայ մինչև ի կողմանս Գադերովնի, և ոչ ոք գտաւ ստամբակեալ և ելանել ըստ ձեռն նոցա։ Եւ յայնչափ մեծ իշխանութեան՝ դաստակերտ մեծ և սիրելի զՀայոց աշխարհս անուանէին։ Վասնորոյ և նախնին մեր Տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր, որ ի տղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդախողխող հօրեղբարցն իւրոց ապրեալ սնաւ յերկրին Յունաց, և ի ձէնջ թագաւորեալ տիրէր հայրենի աշխարհին, սոյնպէս և զհաւատսն որ ի Քրիստոս՝ ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռովմայ, որ լուսաւորեաց զխաւարային կողմանս հիւսիսոյ. զոր և այժմ կամին ի մէնջ կորզել հանել խաւարասէր որդիքն արևելից...»։

Ըստ Փարպեցւոյն՝ նախարարք որ ղրկուեցան նամակաւ առ Թէոդոս՝ էին Վահան Ամատունի, Հմայեակ եղբայր Վարդանայ և Մերուժան եղբայր Ազանայ Արծրունւոյ. (յայսմ մասին Փարպեցին է ստոյգ. տես և Փարպ. 216, 219, 220, 246)։ *Ահա Փարպեցւոյն*

պատմութիւնը. «Եւ վաղվաղակի նամականի արարեալ առ կայսրն և առ ամենայն աւագանի դրանն Յունաց և առ այլ իշխանս... կնքէր նախ ինքն իշխանն Սիւնեաց Վասակ իւրով մատանեաւ, և ապա ամենայն տանուտեարքն Հայոց, և պատրաստեալ ճանապարհին Յունաց կազմէին զիշխանն տանն Ամատունեաց Վահան, որպէս զայր մտացի և խորհրդական, և զսուրբ սեպուհն զՀմայեակ, զեղբայր երանելի զօրավարին Հայոց Վարդանայ ի Մամիկոնէից տոհմէն, և զերանելին Մերուժան զեղբայր որբոյն Ազանայ ի տոհմէն Արծրունեաց. յորոց ձեռն տուեալ զնամականին իշխանին Սիւնեաց Վասակայ և ամենայն նախարարաց աշխարհին Հայոց՝ յուղարկէին առ կայսր»: Ինչպէս կը տեսնուի՝ առ Փարպեցւոյն նախարարք որ ղրկուեցան առ Թէոդոս՝ են երեք. Ատոմ յիշուած չէ. առ Փարպեցւոյն չկայ նաև պատճէն նամակի: Դարձեալ ըստ Փարպեցւոյն՝ նամակ գրուեցաւ ոչ առ կայսր միայն, այլև առ Հայ իշխանս, զորօրինակ առ բդեշխն Աղձնեաց և առ իշխանն Անգեղ տան, ի Ծոփս և ի Հաշտեանս և յԵկեղեաց, և առ մեծ սպարապետն Անտիոքայ:

Ըստ Եղիշէի՝ Թէոդոս կամեցաւ օգնել Հայոց, բայց մեռաւ. և յաջորդ նորա Մարկիանոս, ըստ խրատուն Անատոլեայ և Եղփարիսի ասորւոյ մերժեց Հայոց խնդիրը.—«Եւ իբրև յանդիման եղեն —(ընդէր *եղեն*. պարտ էր ասել *եղեւ*, քանզի ըստ Եղիշէի՝ նամակը տանողն է մի ոք, Ատոմ)—մեծի թագաւորին և. ընթերցան գիր պաղատանաց Հայոց աշխարհին և զյիշատակարանսն նախնեացն՝ բազում մատեանք ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոյն ուխտ հաստատութեան ի ներքս գտանէին: Եւ մինչդեռ երանելին Թէոդոս հարցանէր զամենայն սինկլիտոսն և հնարս իրացն կամէր գտանել խաղաղութեամբ, և հոգ տանէր մեծաւ յօժարութեամբ, զի մի եկեղեցիքն արևելից յափշտակեսցին յանօրէն հեթանոսաց՝ ի նմին ժամանակի անդէն վաղվաղակի հասանէր վախճան կատարածի կենաց նորա, և կարի չար խափանումն լինէր գործոյն օգնականութեան: Եւ թագաւորէ փոխանակ նորա Մարկիանոս կայսր, և ի ձեռն վատթար արանց խրատտուացն իւրոց ծառայից, Անատոլեայ որ սպարապետն էր և Եղփարիոս ասորի—երկոքեան անարգք և վատթար արանց, միանգամայն և անաստուածք—ի նոցա բանս եկեալ թագաւորն՝ ոչ կամէր առնել միաբան ուխտին հաւատոց, որ ամենայն ուժովն իւրեանց ընդդէմ կացեալ էին չարութեան հեթանոսաց: Իսկ անարիս այս լաւ համարէր պահել զուխտն հեթանոսաց վասն մարմնական խաղաղութեան, քան պատերազմակից լինել ուխտին քրիստոնէութեան»:

Գրեթէ նոյնպէս կը պատմէ և Փարպեցին, բայց առանց թըշնամանաց ընդդէմ կայսեր և պաշտօնէից նորա, հանդերձ բանաւոր պատճառօք, որոց վասն կայսրը գլացաւ օգնութիւն։ Ահա պատմութիւն Փարպեցւոյն. «Պատգամաւորքն երթեալք յանդիման եղեն թագաւորին Թէոդոսի. որոյ լուեալ զպատճառս նոցա երթիցն՝ սիրով լսէր ի նոցանէ և յանձն առնոյր օգնել նոցա գնդիւ. և մինչդեռ պատրաստէր զիրս խոստմանն՝ հասեալ վախճան սրբոյն վճարէր ի կենցաղոյս։ Եւ թագաւորէ փոխանակ նորա Մարկիանոս, որոյ և տեղեկացեալ զպէտս խնդրոյն իրացն Հայոց՝ հարցանէր զաւագս դըրանն, թէ որպիսի՞ թուի ձեզ պատասխանի առնել արանցդ եկելոց յաշխարհէն Հայոց։ Պատասխանի տուեալ Անատոլեայ, որ ի ժամուն սպարապետ էր Անտիոքայ, և Փլորենտի ուրումն առն աւագի ազգաւ որ էր աւագ դրանն թագաւորին՝ ասեն. Մեզ ոչ թուի հաճոյ արհամարհել զուխտ և զհաստատութիւն, զոր ի բազում ժամանակաց գրեալ և կնքեալ է առաջին թագաւորացն, գրգռել պատերազմաւ իրս մի խաղաղացեալս, և ի բաց հանել զաշխարհ մի ի ծառայութենէ թագաւորին իւրեանց։ Այլ և զելս անյայտ իրացդ պարտ է ածել զմտաւ, զոր ոչ ոք կարէ գիտել, թէ որպէս, դիւրեա՞ւ և կամ սաստիկ պղտորմամբ պատերազմդ եղեալ վճարեսցի։ Եւ զայս այսպէս ասացեալ՝ կասեցուցին զմիտս թագաւորին, և վնասեցաւ ակընկալութիւնն Հայոց որում ուշ եդեալ մնային, և ոչ պատահեցաւ» (Փարպ. ԽԱ.)։

Ըստ Եղիշէի՝ Մարկիանոս ոչ միայն գլացաւ օգնել Հայոց, այլև ղրկելով դեսպան առ Յազկերտ զՆզփարիոս ասորի՝ «եմուտ ընդ նմա յուխտ հաստատութեան, ձեռնթափ լինել ի զօրացն Հայոց (այսինքն հրաժարել յօգնելոյ) զօրու և զինու և ամենայն օգնականութեամբ»։ Նզփարիոս անուամբ ոք առ Մարկիանոսիւ չկայ յիշուած ի պատմութեան, և ոչ իսկ կայ այնպիսի անուամբ ոք. նաև չիք յիշուած թէ Մարկիանոս ղրկեց երբէք դեսպան և մտաւ յուխտ ընդ Յազկերտի վասն Հայոց։ Յետ դաշանցն որ եղան ի մէջ Թէոդոսի Ա. և Պարսից վասն բաժանման աշխարհին Հայոց (384), ո՛չ դաշն և ոչ բանագնացութիւն երբէք եղաւ ի մէջ Յունաց և Պարսից Հայոց համար. այն բաժանմամբ եղաւ մի մասն Հայոց նահանգ Յունաց, և միւսն՝ նահանգ Պարսից. իւրաքանչիւր մասն ունէր զիւր օրինաւոր թագաւոր։ Զայս կը ցուցնեն բանք Անատոլեայ և Փլորենտի առ Փարպեցւոյն, թէ «Մեզ ոչ թուի հաճոյ արհամարհել զուխտ և զհաստատութիւն, որ ի բազում ժամանակաց գրեալ և կնքեալ է առաջին թագաւորաց (Յովիանու, Կոստանդեայ, Վաղեսի և Թէոդոսի)... և ի բաց հանել զաշխարհ մի ի ծառայութենէ թա-

գաւորին իւրեանց»։ Ուստի հաստատութեամբ կրնանք ըսել, թէ դաշինք կամ պատգամաւորութիւն բնաւ եղած չէ ո՛չ Մարկիանոսէ առ Յազկերտ, և ոչ Յազկերտէ առ Մարկիանոս։ Պատմութիւնն այն ողջոյն գիւտ է Եղիշէի։ Եւ ըսելն Եղիշէի, թէ Մարկիանոս դեսպան ղրկելով իմացուց Յազկերտի, թէ չկամէր օգնել Հայոց՝ Մարկիանոս առելի ցուցնելու համար է, ինչպէս կ՚ըսէ իսկ, թէ «Անարիս այս լաւ համարէր պահել զուխտն հեթանոսաց քան պատերազմակից լինել ուխտի քրիստոնէութեան»։ Գաթըրճեան վարանելով Եղիշէի այս պատմութեան վրայ՝ զԵղփարիոսն կը համարի զԱրդաբուրիոս ալան, պատրիկ առ Թէոդոսիւ Բ. և առ Մարկիանոսիւ։ Եւ որովհետև, ինչպէս ըսինք, չի՛ք յիշուած ի պատմութեան, թէ Մարկիանոս հակառակ Հայոց դեսպան ղրկեց առ Յազկերտ և յուխտ մտաւ ընդ նմա չօգնել Հայոց՝ Գաթըրճեան այս դժուարութենէ ազատելու համար՝ ի պատիւ Եղիշէի կը գտնէ սա հնարը։ Եղիշէ կը պատմէ, որպէս թէ յետ բաժանման Վասակայ յուխտէն, երկոքին կողմանք, ուխտապահքն և ուրացեալք, մեծամեծ աւերումներ ըրին, շատ քաղաքներ և գեղեր կործանեցան. Վարդանանք գերի բռնուած պարսիկ մը արձակելով իբրև գուժկան ղրկեցին առ Յազկերտ իմացունել նմա, թէ այն ամենայն աւերմանց պատճառ էր Վասակ։ Յազկերտ զարհուրելով և կարծելով, թէ կայսր օգնական էր ապստամբ մասին՝ մեղմացուց խստութիւնը, բայց գաղտ դեսպան ղրկելով առ Մարկիանոս, երբ ստուգեց թէ Յոյնք ձեռնտու չէին Հայոց՝ միւսանգամ խստացուց հալածումը։ Գաթըրճեան այս պատմութիւններն, որ գիւտ են Եղիշէի — (առ Փարպեցւոյն, առ որում շատ պարզ և ճշմարիտ է պատմութիւնն Վարդանանց՝ չկան ամենևին նշմարանք ո՛չ դեսպանի և ոչ բանագնացութեան երկու տէրութեանց մէջ) — համարելով ճշմարիտ՝ կը փոխէ դիպաց կարգն ըստ հաճոյս. կու տայ նախ Յազկերտի ղրկել դեսպան առ Մարկիանոս ստուգելու համար, թէ արդարև օգնակա՞ն էր նա Հայոց, և ապա Մարկիանոսի կու տայ ղրկել դեսպան զասորին Եղփարիոս, կամ, որպէս կամի Գաթըրճեան՝ զԱրդաբուրիոս ալան։ Եղիշէի պատմութիւնը գնելով ճշմարիտ՝ հարկ էր Գաթըրճեանի դիմել այսպիսի հայթայթանաց, տալու համար անստոյգ պատմութեան մը ստուգութեան կերպարան։ Այս պատմական կէտը հարկաւոր համարեցանք լուսաւորել հոս, զարտուղելով մեր պատմութեան կարգէն։ Գանք դարձեալ Եղիշէի նամակին։

Նախ չէր ուղիղ ըսել. «Նախնին մեր Տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր, ի ողայութեան փախուցեալ ի հայրապան մարդաջին սէրն ձեր, ի ողայութեան փախուցեալ ի հայրասպան մարդաքին»

խանակ ըսելու. «Յիշելով զառաջին սէրն ձեր՝ զնախնին մեր Տրդատիոս փախուցեալ ապրեցուցին», ա. Հ.: Տրդատ որ էր յայնժամ կաթնկեր մանուկ ըստ պատմութեան՝ չէր կրնար յիշել Հռոմայեցւոց առաջին սէրը: Հակառակ է նաև աւանդութեան ազգային պատմչաց Ագաթանգեղոսի և Խորենացւոյն՝ զԱնակ, զսպանողն Խոսրովու կոչել հօրեղբայր Տրդատայ: Ագաթանգեղոս գիտէ զԱնակ ազգական Խոսրովու. իսկ Խորենացին կը համարի զԱնակ Պահլաւաց Սուրենեան տոհմէն, իսկ զԽոսրով հայր Տրդատայ Կարենեան տոհմէն: Նամակին հեղինակներն եթէ չէին գիտեր տակաւին զԽորենացին՝ անշուշտ գիտէին զԱգաթանգեղոս: Նոյն աւելի անտեղի էր ըսել, թէ Տրդատ ընկալաւ զհաւատոն եպիսկոպոսապետէն Հռովմայ: Ո՞ր հայը չէր գիտեր յայնժամ, թէ Տրդատ Լուսաւորչէն ուսաւ քրիստոնէութիւնը, Հռովմայ եպիսկոպոսին հետ չունեցաւ ամենևին գործ: Ուստի յիրաւի կրնանք ըսել, թէ այն նամակն չէ և չկարէ լինել գործ եպիսկոպոսաց և նախարարաց ժողովի, այլ անուս խաբեբայի մը, եթէ ոչ նորին իսկ Եղիշէի, որոյ պատմութիւնը չէ ազատ բարեպաշտ խաբէութիւններէ:

Անտեղի է նաև ասելն Եղիշէի, թէ «Իբրև ընթերցան զգիր պաղատանաց Հայոց աշխարհին առաջի թագաւորին», ստուգելու համար, թէ կա՞ր արդարև ի վաղուց ուխտ կամ դաշն ի մէջ Հայոց և Հռոմայեցւոց՝ «բազում մատեանք ի մէջ եկեալ ընթերցան»: Դաշնակցութիւնն Հայոց ընդ Հռոմայեցւոց էր հին: Եւսեբիոս գիտէ զՀայս ի սկզբանէ, ἐξ ἀρχαίου, *այսինքն Պոմպէի ժամանակէն, բարեկամ, նիզակակից և դաշնաւոր Հռոմայեցւոց. մանաւանդ թէ մասն էին հռոմէական պետութեան Միջագետաց հետ Հայք, որոց պատճառաւ այնչափ պատերազմներ եղած են Հռոմայեցւոց ընդ Պարսից, թէպէտ ուրիշ դաշամբք երիցս թողան Հայք Պարսից, ինչպէս առ Յովիանու, առ Կոստանդաւ և առ Վաղեսիւ, մինչև եղաւ առ մեծաւն Թէոդոսիւ* (379—395) *բաժանումն Հայաստանի, մեծագոյն մասն ինկաւ Պարսից, փոքրագոյն մասը միայն՝ Հռոմայեցւոց: Այս դաշանց առաջինը, որ եղաւ առ Յովիանոսիւ և որով թողան Հայք Պարսից՝ կը յիշէ Բուզանդ.—«Իբրև եղև խաղաղութիւն ի մէջ թագաւորին Յունաց և ի մէջ թագաւորին Հայոց Շապհոյ՝ ուխտից նամակ գրեալ և կնքեալ տայր թագաւորն Յունաց թագաւորին Պարսից: Եւ գրեալ էր յուխտից նամակին այսպէս. Ետու քեզ, ասէ, զՆծբին քաղաք որ է յԱրուեստանի, և զՄիջագետս Ասորոց. և մէջաշխարհին Հայոց ձեռնթափ եմ, ասէ. թէ կարասցես յաղթել նոցա և արկանել ի ծառայութիւն՝ ես ի թիկունս ոչ եկից նոցա: Արդ ի նեղ ուրեմն անկեալ թագաւորն Յունաց, և ի նեղին վշտի զայս ձև օրինակի*

բանիցն կնքէր մուրհակ և տայր թագաւորին Պարսից, և ապա ճողոպրէր ի նմանէ» (Բուզ. Դ. ԻԱ.)։ Բուզանդ գիտէ նաև վերջին բաժանումն առ մեծաւն Թէոդոսիւ.—«Ապա դեսպանք և հրեշտակք երկուց թագաւորացն, Յունացն և Պարսից, միմեանց առ միմեանս երթևեկէին։ Եւ այնուհետև առնեն խորհուրդ միաբանութեան հաւանութեան ընդ միմեանս թագաւորն Յունաց և թագաւորն Պարսից. և լաւ համարեցան զաշխարհն Հայոց ընդ երկու ի մէջ իւրեանց բաժանել» (Բուզ. Զ. Ա.)։ Ի մեծէն Թէոդոսէ մինչև ի Թէոդոս փոքր անցած էր 13 կամ 14 տարի. ուստի ո՛չ Թէոդոս և ոչ պաշտօնեայք նորա կարէին անգիտանալ այսօրիկ և ոչ Հայք, որոց գիրն էր նամակ, ինչպէս կ'ըսէ Փարպեցին, կամ գիր պաղատանաց, ըստ Եղիշէի, և ոչ պահանջելոյ նիզակակցութիւն զօրութեամբ դաշանց։ Ապա աւելորդ էր մատեանները մէջ բերել ստուգելու համար Հայոց դաշնակցութիւնը։ Ուստի անիրաւ է թշնամանելն Եղիշէի զՄարկիանոս իբրև «անարի», և զպաշտօնեայս նորա կոչել «անարգ և վատթար արանց, միանգամայն և անաստուածք»։ Արդարև անհնար էր Մարկիանոսի օգնել Հայոց՝ հակառակ դաշանց, «առանց երկիւղի մեծի և անսպառ պատերազմի», ինչպէս կ'ըսէ Գաթըրճեան, և այս այնպիսի ժամանակ՝ մինչ «արդարև պետութիւնն Հռոմայեցւոց ի մեծի ճգնութեան էր յերեսաց Հոնացն, որ զԱտտեղաւ գումարեալ էին, և ճշդիւ իսկ ի նմին ժամանակի (450 – 451) էր Մարկիանոս ի պատգամաւորութեան ընդ ահագինն Ատտիղայ արքայի նոցա»։

Խորենացին յետ պատմելոյ (Գլ. Ղ.), թէ Արիստակէս դարձաւ ի Նիկիայ «քսան կանոնեալ գլխովք» ժողովոյն, և Գրիգոր «յաւել սուղ ինչ գլուխս յինքենէ»՝ ի փոխճանի նոյն գլխոյն կը յաւելու. «Բայց սրբոյն Գրիգորի դարձեալ ի նոյն լերինն՝ ոչ ումեք յետ այնր յաւելոյր երևել մինչև ցվախճան»։ Թէ ինչ լերինք էին՝ յառաջագոյն յիշուած չէ. յաջորդ ՂԱ. գլխէն կ'ուսանինք, թէ Դարանաղեաց գաւառին «Մանեայ այրք» կոչուած լեռներն էին։ Խորենացին կու տայ պատճառը, թէ ընդէր այն լերինք կոչուեցան Մանեայ այրք։ Ըստ Խորենացւոյն՝ որպէս թէ Մանեայ անուն կին մի, Հռիփսիմեանց ընկերներէն, չկրնալով հետևել ընկերներուն՝ մնաց ի լերինս Դարանաղեաց ի քարանձաւս կամ յայրս, որք յանուն նորա կոչուեցան Մանեայ այրք.—«Այլ ասասցուք թէ էր աղագաւ կոչէր նա Մանեայ այրք։ Քանզի էր կին ոմն Մանեայ անուն յընկերաց սրբոց Հռիփսիմեանցն, որպէս զՆունէ Վրաց վարդապետուհի. որ ոչ շուրթափեաց հետևել նոցա ի գնալն առ մեզ, գիտելով զամենայն տեղիս՝ Աստուծոյ, բնակեցաւ ի լերինս յայսմիկ,

յայրս ինչ քարանց. վասն որոյ կոչեցաւ անուն լերինն Մանեայ այրք. յոր այր յետոյ բնակեցաւ և սուրբն Գրիգոր»։ Բայց ինչպէս ապրեցաւ Գրիգոր այն ամայի լերանց մէջ, և յառաջ քան զնա Մանեայ. թերևս ագռաւներ կ'սպասաւորէին նոցա, որպէս երբեմն Եղիայի։

Գրիգորի, թողլով եպիսկոպոսութիւնը երթալ ճգնելն ի լերինս՝ գիտէ նաև Ագաթանգեղոս, բայց Մանեայ անուն կին Հռիփսիմեանց ընկերներէն՝ չգիտեր ամենևին։ Խորենացւոյն «Մանեայ այրքն» առ Ագաթանգեղոսի է «Մանայարք», իբրև անուն անապատի։ Ըստ Ագաթանգեղոսի՝ ոչ Տրդատ և ոչ այլ ոք գիտէր, թէ Լուսաւորիչ ունէր որդիս։ Երբ Գրիգոր թողլով զեպիսկոպոսութիւնն սկսաւ երթալ բնակել անապատ տեղեր՝ թագաւորը կ'աղաչէր զնա բնակել առ իւր. բայց Գրիգոր չառաւ յանձն։ Յայնժամ ոմանք ի տեղեկաց իմացուցին Տրդատայ, թէ Գրիգոր ունէր երկու որդի։ Իսկոյն Տրդատ մարդ ղրկելով բերել տուաւ զնոսա, և նոքօք հանդերձ ելաւ ի խնդիր Գրիգորի, զոր գտնելով Դարանաղեաց գաւառին Մանայարք կոչուած տեղը՝ տուաւ նմա ձեռնադրել կրտսեր որդին Արիստակէս փոխանորդ իւր։ Ահա Ագաթանգեղոսի պատմութիւնն. «Առեալ Գրիգորի զոմանս յաշակերտացն յիւրաքանչիւր մենաստանաց՝ երթեալ լեռնակեաց, մենակեաց, սորամուտ, ծակախիթ եղեալ, զառօրէականն խոտաբուտ ճարակօքն վճարել։... Իսկ թագաւորն շատ աղաչեաց զԳրիգորն վասն հանապազորդ ընդ նմա կալոյ, զի ընդ ինքեան շրջեցուսցէ. որում ոչ հաւանեալ չառնոյր յանձն, այլ յանապատ տեղիս հաճեալ էր բնակել։... Իսկ իբրև կարի կարօտեալ թագաւորն աշխարհաւն հանդերձ զնմանէ, զի ի մէջ նոցա բնակեսցէ՝ յայնմ ժամանակի լուան յոմանց ի տեղեկաց, որ գիտակ արարին զթագաւորն վասն սրբոյն Գրիգորի, զի յառաջ ի մանկութեան տիոն էր ամուսնացեալ և երկու որդիս ստացեալ, որոց առաջնոյն Վրթանէս... և երկրորդին՝ Ռստակէս...։ Իբրև լուաւ զայս ամենայն Տրդատ՝ վաղվաղակի առաքէր երիս աւագս փառաւորս պատուականս հրովարտակօք հանդերձ, զի զերկուս որդիսն Գրիգորի վաղ առ նա հասուսցեն։ Իբրև եկին հասին նոքա յերկիրն Հայոց... թագաւորն նոքօք հանդերձ ի խնդիր ելանէր սրբոյն Գրիգորի... ապա եկեալ գտանէր զնա ի Դարանաղեաց գաւառին, ի լերինն որ կոչի Մանայարք, յանապատին։ Ապա աղաչեաց թագաւորն Տրդատ զսուրբն Գրիգորիոս, զի փոխանակ այնր զի ոչ հաւանեցաւ նա գալ և շրջել ընդ նմա և սիրեաց զմենաւորութեան կեանս՝ ձեռնադրեսցէ տացէ նմա եպիսկոպոս զորդին իւր զՌստակէս, զոր ձեռնադրեաց յեպիսկոպոսութիւն փոխանակ իւր»։ Բայց

տակաւին, ըստ Ագաթանգեղոսի, Գրիգոր կը շրջէր հանդերձ Ռըստակիսիւ ուսուցանել բանիւ և գրով մինչև ի վախճան իւր.—«Իսկ մեծ արքեպիսկոպոսն Գրիգոր սուրբ որդւովն իւրով Ռստակիսաւն և ամենայն երևելի օգնականօքն զամենայն աշակերտելովքն շրջէր և հաստատէր զնոսա կալ ի պատուիրանին ճշմարտութեան»:

Այլ է պատմութիւն Խորենացւոյն և աւելի բանաւոր. այսինքըն թէ Գրիգոր «սիրեցեալ զլերինս և զմայնութիւն և զհանդարտութեամբ մտաց լինքեան կեալ, որպէս զի խօսեսցի ընդ Աստուծոյ անզբաղապէս, փոխանորդ իւր թողլով զորդի իւր զՌստակէս՝ ինքն եկաց ի գաւառին Դարանաղեաց ի լերինն Մանեայ այրս... սակայն — կը յաւելու — ընդ ժամանակս ժամանակս յայտնեալ շրջէր ընդ աշխարհս, հաստատէր ի հաւատս զաշակերտեալսն: Բայց իբրև եկն Ռստակէս որդի նորին ի ժողովոյն Նիկիոյ՝ այնուհետև ոչ ևս երևեցաւ յայտնեալ ումեք... այլ ի Մանեայ այրն կեցեալ աներևութաբար ամս բազումս՝ փոխի մահուամբ ի կարգս հրեշտակաց. և հովուաց գտեալ զնա վախճանեալ՝ ի նմին տեղւոջ թաղեցին, ոչ գիտելով թէ ո՛ ոք նա իցէ: Վայելէր իսկ նոցա, որք Փրկչին մերոյ ծննդեանն եղեն խորհրդածուք՝ լինել և աշակերտի նորա յղարկմանն սպասաւորք: Եւ ծածկեալ ամս բազումս աստուածային իմն գոգցես տեսչութեամբ, իբրև զՄովսէսն զայն ի հնումն, զի մի ի պաշտօն առցի ի գեռահաւատ բարբարոսացն ազգաց: Իսկ յորժամ սերտեալ հիմնեցան հաւատք կողմանցս այսոցիկ՝ զկնի յետ բազում ժամանակաց յայտնեցան ճգնաւորի ումեմն Գառնիկ անուն կոչեցելոյ, և բերեալ եդան ի գեւղն Թորդան նշխարք սրբոյն Գրիգորի»:

Բուզանդ, որ կ'առնու ինչ ինչ յաւանդութեանց զԳրիգորէ՝ կը թուի ակնարկել զընակել նորա յանձուս, սակայն չգիտէր Մանեայ այրք կամ Մանայարք, այլ կու տայ տեղւոյն Ոսկիք անուն, և կը դնէ զայն ո՛չ ի Դարանաղեաց գաւառին, այլ յանապատի ուրեք մօտ յակունսն Արածանւոյ.—«Գինդս այս ունէր վիճակ բնակութեան զանապատն, ուստի բղխեալ հոսէն ակունք Եփրատայ գետոյն. անդ բնակեալ ընդ ծագս վիմացն ուր յառաջն կայանքն էին մեծին Գրիգորի առաջնոյ»: Բուզանդ, որ աւելի հին է, ուստի և աւելի ազատ հետզհետէ տարածուած վկայաբանութեանց ազդեցութենէն, յետ պատմելոյ համառօտիւ զդարձն Տրդատայ ի ձեռն Գրիգորի (Բուզ. Գ. Բ.)՝ կը յաւելու. «Որոյ (Գրիգորի) ընդ նմին կրսեր որդին Արիստակէս հօրն էր գործակից եպիսկոպոսակից յամենայն ընթացս վարդապետութեանն զամենայն աւուրս կենաց իւրոց մինչև յօրն քրիստոսակոչ հանգստեանն իւրոյ»: Այս պատմութեան ոճէն դիւրին է տեսնել, թէ Բուզանդ զԳրիգոր և զոր-

դիս նորա ի սկզբանէ և միշտ գիտէ ի միասին։ Չիք ի բանս անդ Բուզանդայ ամենևին ակնարկութիւն, թէ որդիքն Գրիգորի մնացած էին անծանօթ ի Կապադովկիա, և յետոյ ուրեմն յանկարծ ի տեղեկաց ծանուցան և կոչուեցան ի Հայս։ Չէ անհաւանական թէ Գրիգոր, ըստ ոգւոյ ժամանակին, համարելով մեծագոյն սրբութիւն լինել լեռնակեաց, մենակեաց՝ կ'առանձնանար երբեմն երբեմն ի մենաստան ուրեք. բայց թէ թողուց ի սպառ իւր հօտը և մեռաւ յանծանօթս, մինչև թաղել ի հովուաց յանդէտս և ապա յայտնել մարմնոյ նորա տեսլեամբ՝ զայս չեն գիտեր ո՛չ Ագաթանգեղոս և ոչ Բուզանդ. մանաւանդ թէ Բուզանդ անդէն իսկ առ կենդանութեամբ Գրիգորի գիտէ զԹորդան կալուած Գրիգորի, ուր կը բնակէր նա, ուր և թաղուեցաւ.—«Իսկ սոցա (Գրիգորի և որդւոյն) տեղիք բնակութեան և շիրիմք հանգստեան—մեծին Գրիգորի՝ ի Դարանաղեաց գաւառին, ի գեւղն որ անուանեալ կոչի Թորդան, և Արիստակեայ որդւոյ նորա՝ յԵկեղեաց գաւառին, ի Թիլն աւանի, ի կալուածս Գրիգորի հօր իւրոյ»։ Ի գլուխն ԺԳ. յայտնապէս կ'ըսէ, թէ ինչպէս Յովհաննու և Առաքելոց մասունքն ի Տարօն՝ նոյնպէս եկեղեցին Թորդանու «վասն գերեզմանացն հայրապետին Գրիգորի՝ կանոնաւ—այսինքն սովորութեամբ, ի վաղուց—ի հայրապետացն և ի թագաւորացն պատուեալք լինէին»։ Ապա Բուզանդ չգիտեր ամենևին, թէ նշխարք Գրիգորի թաղեցան ի հովուաց յանծանօթս, մնացին «ծածկեալ ամս բազումս... և յետ բազում ժամանակայ յայտնեցան» տեսլեամբ, «և բերեալ եդան ի գիւղն Թորդան»։

Խորենացւոյն Ղ.Ա. գլխոյն վերջին մասն ունի Գրիգորի համառօտ ազգաբանութիւնը։ «Սա, կ'ըսէ, որպէս ամենեցուն յայտնի է (իմա ի գրուցաց), աշխարհաւ Պարթև, գաւառաւ Պահլաւ, յազգէ թագաւորեալ, զատուցեալ Արշակունի, ի ցեղէ Սուրենեան, ի հօրէ Անակ կոչեցելոյ (Բուզանդ ևս գիտէ զԳրիգոր որդի Անակայ.—Բուզ. Գ. Բ.), յարևելից կողմանց աշխարհիս մերոյ արևելք ծագեալ մեզ և իմանալի արեգական հոգևոր ճառագայթ, ի խորին չարութենէ կռապաշտութեան ելք, ճշմարիտ բարի և այսահալած, երանութեան և շինութեան հոգևոր առիթ»։ Արդարև Գրիգոր արժանի է ևս մեծամեծ գովեստներու. սակայն պարտ է խոստովանել անաչառութեամբ—թէպէտ չթուի բազմաց հաճոյ—թէ արդի քննադատութիւնն չկարէ ընդունել Գրիգորի այս ազգաբանութիւնն, այսինքն թէ էր նա որդի Անակայ ուրումն Պարթևի, որ հրապուրեալ յԱրտաշրէ կու գայ ի Հայս ընտանեօք իբրև ազգական Խոսրովու, կ'սպանանէ զնա յորսի և ինքն ևս կ'սպանուի հանդերձ ընտանեօք. կ'ազատի միայն մանուկ մի սնդեայ, այն է Գրիգոր, զոր փախըս-

տեամբ կ'ապրեցուննեն ի կողմանս Յունաց. Նոյնպէս յընտանեաց Խոսրովու կը փախցուննեն զՏրդատ մանուկ կաթնկեր ի դուռն կայսեր: Մանկան մը ազատելն ի կոտորածէ յաճախ է ի պատմութեան Խորենացւոյն: Այսպէս Արտաշէս Բ. տղայ կ'ազատի կոտորածէ. կոտորածէ կ'ազատի իբրև տղայ նաև Պերոզամատն, նախնին Կամսարականաց: Եթէ չենք սխալիր՝ երևելի մարդիկ այսպէս ի տղայութեան ազատած դնել կոտորածէ՝ նմանութիւն է Քրիստոսի ազատութեանն Բեթղեհեմի մանկանց կոտորածէն: Հեղինակ Անակայ պատմութեանն, որում ամբողջ գլուխ մի (ՀԳ.) նուիրած է Խորենացին՝ է, ինչպէս ինքն ևս կը խոստովանի՝ Ագաթանգեղոս.—«Յետ մահուն Արտաւանայ սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց... արշաւել ի կողմանս Ասորեստանի, մինչև ի դրունս Տիզբոնի, աւար առեալ զերկիրն ամենայն՝ յապականութիւն դարձուցանէր զշինանիստ քաղաքացն և աւանացն ցանկալեաց, զշէն երկիրն ամենայն թափուր և աւերակ թողոյր. ջնջել, ի միջոյ ի բաց կորուսանել, խլել քակել, հիմն ի վեր ջանայր առնել, համարէր բառնալ զօրէնս տէրութեանն Պարսից:... Ամս տասն ստէպ ստէպ գայր օրինակ աւար առեալ աւերէին զամենայն երկիր սահմանացն որ ընդ Պարսից թագաւորութեամբ և իշխանութեամբ:...

«Իբրև զայն ամենայն չարիս ետես թագաւորն Պարսից... ի խորհուրդ կոչէր զամենայն նախարարս իւրոյ տէրութեանն... աղաչէր զամենեսեան հնարս ինչ մարթել գտանել... թերևս ոք զվրէժ հատուցումն խնդրել մարթասցէ. յերկրորդական գահ իւրոյ տէրութեանն մատուցանել խոստանայր, բայց միայն, ասէ, աթոռովս ես ի վեր եղէց քան զնա:.. Արդ ոմն ի միջոյ խորհրդեանն, գլխաւոր նահապետ Պարթևաց, որոյ անուն Անակ էր, յոտն կացեալ ի մէջ անցեալ՝ յւրմէ ազգէն իբրև ի թշնամւոյ խոստանայր վրէժ խնդրել: Խօսել սկսաւ ընդ նմա թագաւորն և ասէ. Եթէ միայն զայդ նախանձ խնդրեսցես միամտութեամբ՝ զբնակութիւնն պարթևական զձեր սեպհական Պահլաւն ի ձեզ դարձուցից, և քեզ թագ եդեալ փառաւորեցից... և երկրորդ ինձ կոչեցից: Պատասխանի ետ Պարթևն և ասէ. Զմնացորդս ազգի իմոյ կեցուսցես դու, այլ ես և եղբայր իմ հարազատ այսօր հրաժարեսցուք ի քէն: Յայնմ ժամանակի հանդերձեալ կազմեցաւ Պարթևն եղբարբն իւրով, հանդերձ ընտանեօք, կանամբք և որդւովք և ամենայն աղխիւ իւրեանց:... Եկեալ յանդիման եղև Խոսրովու յՈւտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս արքայութեանն Հայոց:... Իբրև ետես թագաւորն զայրն, զի դիմեալ եկեալ էր առ նա ամենայն ընտանեօք հանդերձ՝ միամտութեամբ հաւատաց ի նա... և հանէր նստու-

ցանէր զնա յերկրորդ ամու թագաւորութեանն:... Իբրև եկին հասին աւուրք ջերմա... գումարտակ առնէր թագաւորն (Խոսրով) անդրէն արշաւել ի կողմանս Պարսից: Իբրև զայն լսէր Պարթևն՝ զերդումն ուխտին յիշէր որ ընդ Պարսից արքային ուխտեալ էր. նա և ըզ-խոստմունսն յիշէր զպարգևացն, և ի բուն աշխարհն փախչէր որ Պահլաւն կոչէր, և վատ խորհուրդ ի միտ արկանէր. առնուլ զթա-գաւորն մեկուսի նա և եղբայր իւր հարազատ իբրու ի պատճառս ինչ զրուցանաց, իբրու խորհուրդ ինչ խորհելոյ ընդ նմա. և զսու-սերսն պողովատիկս թերաքամեալս ունէին. յանկարծ յեղակարծումն ժամանակի զէնս վերացուցեալ զթագաւորն դիաթաւալ կացուցեալ յերկիր կործանէին: Անդուստ ուրեմն իրազգած եղեն իրացն որ ե-ղեն. գոյժ աղաղակի ամբոխին թանձրանայր: Մինչ այս մինչ այն՝ նոքա հեծեալ յիւրաքանչիւր երիվարս փախստական լինէին: Իբրև զայն գիտացին նախարարք հայկական զօրացն՝ գունդ գունդ հասա-նէին, զկնի լինէին. ոմանք ընդ ցամաքն աճապարեալ հասանել ի խելս կամրջացն առ դրունս Արտաշատ քաղաքի: Զի գետն Երասխ յարուցեալ գայր դարիւ և դարիւ... Կէսք անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի զոր և կամուրջ Մեծամօրի կոչեն՝ աճա-պարէին հասանել յառաջ մի ի խելս կամրջին Արտաշատու: Ի կիրճս ճանապարհացն արգելին զնոսա. ի մէջ արարեալ զնոսա ի Տափե-րական կամրջացն գետակէժ առնէին զնոսա: Եւ ինքեանք անդրէն դարձեալ վայիւք, ճչովք և ողբովք, և ամենայն երկիրն ժողովեալ զթագաւորն աշխարհին: Եւ մինչդեռ ջերմ ոգիքն ի ծոցոյն չև էին թափեալ և շունչ վախճանին չև էր հասեալ՝ հրաման տայր զազ-գատոհմն (Անակայ) սատակել: Յայնժամ սկսան սատակել և կոտո-րել. և ոչ թողին յերիտասարդաց մինչև յայն որ ընտ զաջ և զձախ ոչ գիտէր. նաև զիգական տոհմն մաշէին ի սուր սուսերի իւրեանց: Բայց միայն երկու մանկունս յորդւոցն Պարթևին պրծեալ ոմն ապրեցուցանէր ի ձեռն դայեկաց ուրումն, և ի կողմանս Յու-նաց առեալ փախչէին:... Իբրև լուաւ զայս թագաւորն Պարսից... զօրաժողով լինէր, խաղայր գնայր, ասպատակ սփռէր զկողմամբք Հայաստան աշխարհին. զխօսուն և զանասուն, զծեր և զտղայ, զե-րիտասարդ և զմանուկ առ հասարակ խաղացուցանէր ի գերու-թիւն: Անդ ոմն պրծեալ ապրեցուցանէր ի հինէ անտի յորդւոցն Խոսրովու թագաւորին Հայոց մանկիկ մի փոքրիկ անուն Տրդատ. առեալ դայեկացն փախուցին ի դուռն կայսեր, ի կողմանս Յունաց:.. Երթեալ սնեալ և ուսեալ Տրդատէս առ կոմսի ուրումն Լիկիանէս անուն կոչեցեալ: Իսկ որդի Պարթևին, որ ի կողմանս Յունաց գաղ-թեաց՝ սնանէր և ուսանէր ի Կեսարիա Կապադովկացւոց քաղաքին.

և մերձաւորեալ գնա անոյց գայեակն երկիւղիւն Քրիստոսի. և ու-
սեալ ևս գքրիստոնէական գոյրութեան հանդամանս, ընտանի եղեալ
գրոց Աստուծոյ և մերձեալ յերկիւղ Տեառն, որոյ անուն ճանաչէր
Գրիգորիոս: Իբրև տեղեկացաւ ի գայեկէն խրմէ հայրենի գործոյն
որ եղեալ էին՝ եւ և գնաց առ Տրդատիոս ըստ հեշտ պաշտաման:
Եւ թագուցանէր զանձն, և զայն ինչ ի վեր ոչ հանէր, թէ ով է,
կամ ուստի, կամ որպէս կամ զիարդ. զանձն ի ծառայութիւն տու-
եալ ի հնազանդութեան պաշտէր առաջի նորա» (Ագաթ. Բ, Գ.):
Ըսինք թէ արդի քննադատութիւնն չկրնար իբրև վաւերական
ընդունել այս պատմութիւնն, և այս վասն այլևայլ պատճառաց:
Նախ՝ ըստ ժամանակագրութեան Խորենացւոյն՝ Խոսրովայ սպանումն
ի ձեռն Անակայ եղած է ի կայսրութեան Վաղերիանոսի (Խոր. Բ.
ՀԶ.), այն է յետ 252-ին, մինչ ըստ ժամանակակից պատմութեան
Արտաշիր մեռած էր 240-ին, աւելի քան 12 ամօք յառաջ քան
զՎաղերիանոս: Երկրորդ՝ Արտաշիր ամենևին չմտաւ ի Հայս, ուր կը
թագաւորէր ըստ արտաքին ժամանակակից պատմութեան Տրդատ
Բ, (ըստ Հայոց՝ Խոսրով հայր Տրդատայ մեծի) անընդհատ. և յա-
ջորդն Արտաշրի Շապուհ սկսաւ գրաւել Հռոմայեցւոց երկիրներէն
յարևելս, յետ ունելոյ զՎաղերիանոս գերի (260), մինչ թագա-
ւորէր ի Հայս Արտաւազդ ոմն, բարեկամ Շապհոյ, մինչև համբ-
ձակել տալ նմա խրատ արձակել զձերբունին Վաղերիանոս: Յետ Ար-
տաւազդայ իբր 287-ին, համաձայն հաշուոյ Խորենացւոյն (Բ. ՁԲ.)՝
կը թագաւորէ Տրդատ Գ. մեծն, ըստ Հայոց՝ որդի Խոսրովու, այն
է Տրդատայ Բ, առ որով (297) եղաւ պատերազմն Դիոկղետիանոսի,
որ ի ձեռն Գաղերեայ առաւ ի Պարսից Հռոմայեցւոց երկիրներն
յարևելս, ընդ որս և զՀայաստան, և Տրդատ հաստատուեցաւ մա-
նուր դաշամբ (Խոր. Բ. ՁԲ.) իբրև թագաւոր Հայոց, նիզակակից
և դաշնաւոր Հռոմայեցւոց: Այսպէս սպանման հօր թագաւորի գա-
ւով յԱրտաշրէ և իբր 50-ամեայ անիշխանութեան ի Հայս՝ չկայ և
ոչ նշմարանք յարտաքին ժամանակակից պատմութեան: Երրորդ՝
ոչ սակաւ կասկած կու տայ նաև Անակ բառին ստուգաբանութիւ-
նը, որ կը նշանակէ յունարէն՝ բռնաւոր կամ սպանող, և կը թուի
լինել մեր անուդ բառն, հրահալելի կակուղ, որ ի հնումն համբա-
ւած էր սպանող (Բանասէր ամն):
Բաց վիպաբանն պատմութեան գարձին Հայոց, որպէս գի
միացունէ թագաւորութիւնն ու քահանայութիւնը՝ կը մուծանէ
զԱնակ Պահլաւ ցեղէն, որմէ էին Արշակունի թագաւորք Հայոց:
Աչինչ ընդհատ ճարտարութեամբ հիւսուած են կապադովկացւոյն
Գրիգորի պատմութեան հանգամանք: Սոփիա (իմաստութիւն) անուն

կապադովկացի կին մը ըստ դիպաց իմն հանդիպելով ծննդեան Լուսաւորչին՝ երբեւ դայեակ կը սնուցանէ զնա քրիստոնէաբար ի Կապադովկիա. ի հասանել մանկանն ի չափ՝ կ'երթայ մտանել ի ծառայութիւն Տրդատայ, որդւոյ սպանելոյն ի հօրէն իւրմէ, և ապա ի դառնալ այս վերջնոյն ի Հայս՝ լինի պատճառ դարձին նորա ի քրիստոնէութիւն, այլովքն հանդերձ. պատմութիւն մը՝ որ բոլոր պարագաներովն է գրոյց:

Խորենացւոյն ՂԲ. գլուխն, որ է վերջին գլուխ Բ. գրքութեան՝ ունի, հանդերձ համառօտ զովեստիւ զՏրդատայ՝ նորա մահուան պատմութիւնն, որ է արդարև զարմանալի: Ըստ Խորենացւոյն՝ որպէս թէ Տրդատ տեսնելով նախարարաց կամակորութիւնը՝ կը թողու թագաւորութիւնը, կ'երթայ ճգնել՝ ուր ճգնած էր Գրիգոր: Նախարարք կը կոչեն զնա, և երբ չանսար նա՝ կու տան նմա դեղ մահու. — «Սա, կ'ըսէ, յետ հաւատոյն որ ի Քրիստոս, ամենայն առաքինութեամբք բացափայլեալ, ևս քան զևս յաճախէր որ ինչ յաղագս Քրիստոսի գործ և բան. սաստելով և հաւանեցուցանելով զմեծամեծ նախարարսն, միանգամայն և զամենայն բազմութիւն ռամկին՝ լինել արդարև Քրիստոսի. որպէս զի վկայեսցեն հաւատոյն՝ ամենեցուն և գործքն: Այլ զխստասրտութիւն կամիմ ասել, թէ և զամբարհաւաճութիւն ազգիս մերոյ յիսկզբանցն և այսր. որպէս անհամբոյր բարուց և ճշմարտութեան անհարազատ, կամ թէ բնութիւն ունելով զբարձրայօնութիւն և զկամակորութիւն՝ ընդդիմանան կամաց թագաւորին յաղագս կրօնիցն քրիստոսականաց, զհետ երթալով կամաց կանանց և հարճից: Որում ոչ կարացեալ ներել թագաւորին, ընկեցեալ զերկրաւոր պսակ՝ զհետ ընթանայր երկնաւորին, արագ հասանելով ի տեղի սուրբ ճգնաւորին Քրիստոսի, ծակամուտ լեռնակեցիկ եղեալ: Սատանօր ամաչեմ ասել զճշմարտութիւնն, մանաւանդ թէ զանօրէնութիւն և զամբարշտութիւն ազգիս մերոյ և զմեծի ողբոց և արտասուաց արժանի սոցա գործս: Քանզի զհետ առաքեալ կոչեն զնա՝ լինել ըստ կամաց նոցա, և ունել զթագաւորութիւնն: Իսկ ի չհաւանել սորայն՝ տան նմա արբումն, որպէս անդ ուրեմն ի Հնսան Աթենացիքն Սոկրատայ զմոլեխինդն, և կամ թէ զմերն իսկ ասել՝ կատաղեալ Երբայեցիքն ըմպելի լեղեաւ խառնեալ Աստուծոյ մերոյ: Եւ զայս արարեալ շիջուցին յինքեանց զբազմափայլ ճառագայթն աստուածպաշտութեան»: Զենք գիտեր ինչ հաւատ կրնայ ընծայուիլ Խորենացւոյն այս պատմութեան, որոյ նշմարանք անգամ չկան ոչ առ Բուզանդայ և ոչ առ Ագաթանգեղոսի: Խորենացին այս պատմութեան վրայ կարդալով զառն ողբ ազգին՝ կը կնքէ իւր Բ. գրքութիւնն այսպէս. «Այլ

աստանօր դադարեսցէ բանս, որպէս աշխատութիւն կրեալ՝ յականջս լինել խօսեցեալ մեռելոց։ Այլ պատմութիւնս յաղագս սրբոյն Տրդատայ ճշմարիտ է. քանզի արբուցեալ նմա դեղ մահու՝ զրկեցան ի լուսոյ շնորհաց ճառագայթից նորա, որ թագաւորեաց ամս յիսուն և վեց»։

Խորենացին տալով թագաւորութեանն Տրդատայ 56 տարի, այն է ըստ իւր հաշուին 287-էն մինչև 343՝ կը խախտէ թագաւորաց տարիներն։ Եթէ ըստ Խորենացւոյն տանք 56 տարի թագաւորութեանն Տրդատայ՝ մահ նորա կը հանդիպի 343-ին. և որովհետև Արշակայ թագաւորութեան տարին յայտնի է, այն է 350, այսինքն Մծբնայ վերջին պաշարման տարին ի Շապհոյ, ընդ որում գործակից էր յայնժամ Արշակ՝ Տրդատայ մահուանէն (եթէ դնենք զայն ըստ Խորենացւոյն 343-ին) մինչև ի թագաւորութիւնն Արշակայ կը մնայ 7 տարի, ուստի և դժուարին լինի զետեղել Խոսրովու Կոտակայ և Տիրանայ թագաւորութիւնն այս 7 տարուան մէջ, մանաւանդ որ ի սկզբան թագաւորութեանն թէ Խոսրովու թէ Տիրանայ անցած են իբր 3 ամք պարապ։ Այս հաւանական տարի մահուանն Տրդատայ է 337, որ կը հանդիպի մահուան Կոստանդիանոսի և վախճանին 40-ամեայ խաղաղութեան. և արդարև, իսկ և իսկ յետ 337-ին կ'սկսին սպառնալիք ի կողմանէ Շապհոյ, և մեծամեծ յուզմունք ի Հայս, մինչև հարկ լինել, ըստ Խորենացւոյն, հռոմէական միջամտութեան զինուք՝ թագաւորեցուցանել զԽոսրով որդին Տրդատայ։

Ի յառաջաբանի ԴԲ. գլխոյն Խորենացին, յետ դնելոյ զՏրդատ հաւասար Գրիգորի, իբրև գործակից և ճգնող՝ նուաճելոյ կողմանէ հաւանութեամբ կամ սաստիւ՝ առաւելութիւնը կու տայ թագաւորին. —«Զսրբոյ և զմեծէ և զերկրորդ նահատակէ և զմերոյ լուսաւորութեանցն լուսաւոր վերակացուէ ճառելով, զ'ի Քրիստոսէ հանուրց եղելոցս ճշմարիտ թագաւորէ՝ հրաշափառագունիւ պարտ էր անցանել բանիւ, որպէս զգործակցէ և զհաւատար ճգնողէ մերոյ նախաշաւղի և լուսաւորութեանց նահապետի:… Այլ զառաւելութիւն ասեմ աստ զթագաւորին. քանզի խորհելն յաղագս Աստուծոյ՝ զոյգ երկոցունց, իսկ նուաճել հաւանեցուցանողականաւ կամ բռնաւորականաւ բանիւ՝ առաւել էր թագաւորին շնորհ»։

Այս համառօտ տողք Խորենացւոյն զվաստակոց Տրդատայ ի գործ դարձին Հայոց՝ տասնապատիկ աւելի կ'արժեն քան Ագաթանգեղոսի երկայն պատմութիւնն զնիւթական գործակցութենէն Տրդատայ, լի անտեղի պարագաներով։ Ըստ Ագաթանգեղոսի՝ յետ ելլելն ի վիրապէն՝ Գրիգորի առաջին գործն եղաւ ամփոփել Հռիփսիմեանց

մարմիններն, որ որպէս թէ անթաղ մնացած էին ի Հնձանին։ Գրիգոր խորհուրդ կու տայ Տրդատայ, որ խոզի կերպարանօք—«ի կերպարանս աղբևայոյց խոզաց»—պատատեալ կը կենար բազմութեան մէջ՝ շինել Հռիփսիմեանց համար վկայարաններ։ Թագաւորը կը բերէ անուշահոտ իւղեր, խունկեր, այնպէս կերպասներ և ուրիշ պատուական նիւթեր. իսկ Տրդատ, որոյ ձեռք և ոտք միայն բժշկուած էին՝ կ'առնու բահ և բրիչ, փորել հանգստարանաց տեղերն. մինչ Աշխէն տիկին և Խոսրովիդուխտ կը կրեն հողն իւրեանց հանդերձներով, որպէս թէ պակաս էին գործաւորք։ Յետոյ կը շինուի նաև կաթողիկէն, որ ցուցուած էր Գրիգորի ի տեսլեան։

Յետ շինութեան վկայարանացն և կաթողիկէին՝ կ'սկսի Գրիգոր Տրդատաւ հանդերձ շրջել գաւառ գաւառ, կործանել ո՛չ միայն կռոց արձաններ, այլև մեծամեծ մեհեաններ, և այն՝ սքանչելեօք։ Այսպէս կը քանդին մեհեանք յԱրտաշատ, ի Թորդան, յԱնի, յԵկեղեաց, ի Դերջան, և յետ դարձին Գրիգորի կաթողիկոսութեամբ՝ Վահևահեան մեհեանն ի Տարօն, ոչ առանց մեծամեծ նշանաց։ Այսպէս ի կործանելն Տիւր դից մեհեանը մօտ յԱրտաշատ՝ բազմութիւնք դիւաց իբրև զօրաց գունդեր կը կռուին ճակատ առ ճակատ.— «Երևեալ դիւացն ի նմանութիւն անհեձից բազմութեան և կազմութեան գնդի, և հետևակազօր մկնդաւորք և սուսերաւորք առաջի ընթացեալք ի կերպարանս մարդկան նմանութեան, նիզակօք և նշանօք, ի զէն և ի զարդ վառեալք, մեծաւ գոչելով զաղաղակ հարեալք՝ փախստեայք յԱնահտական ի մեհեանն անկանէին, ուստի ընդ հասեալսն կռուէին. ներս անդէն և քարավէժս թանձրաթափ ի վերուստ ի շինուածոցն ի խառնարհ զմարդկաւն ցնդէին, սակաւ մի զարհուրեցուցեալ զնորահաւատս մարդկանն։ Իսկ սուրբն Գրիգոր իբրև տեսանէր զայն՝ նշան տէրունական առնէր. և դիմեալ ի դուռն մեհենին՝ ամենայն շինուածք մեհենին ի հիմանց դղրդեալ տապալեցան, և լուցեալ յանկարծօրէն փայտակերան հրդեհեցաւ ի տէրունական խաչէն զօրութենէ, և ծուխն ծառացեալ մինչև յամպս հասանէր։ Եւ ամենայն դևքն ի փախուստ դարձեալ առաջի մարդկանն երևեցան, զօձիս արկեալ և զճակատ հարեալ և զճիչ բարձեալ մեծաձայն գոչելով ասէին, թէ Վա՜յ մեզ, զի յամենայն երկրէ փախստական արար զմեզ Յիսուս որդին Մարիամու դատերն մարդկան. և աստի ևս ի ձեռն մեռելոց և ի ձեռն կապելոց եհաս մեզ փախստական լինել։ Արդ ի յո՞ դիմեալ փախիցուք, զի փառքն նորա լցին զտիեզերս։ Այլ երթամք մեք ի բնակիչս լերինն Կաւկաս ի կողմանս հիւսիսոյ, թերևս հնար լիցի և այրեալք լիցուք. զի առանց հանգստեան զօդս կոծեալ, անջատ զմեզ ի բնա-

կուլթենէ մարդկան, կատարել զցանկութիւն կամաց մերոց նոքօք: Եւ զայս ասացեալ առաջի ամենեցուն. զի մարդիկն որ լուան՝ առաւել ևս ի հաւատս հաստատեցան ամենեքին: Իսկ սեւագունդ գիւացն աներևոյթ եղեալ՝ չքացեալ ի տեղւոյն իբրև զծուխ պակասեցան: Իսկ մարդկան հասելոցն անդէն քանդեալ զհիմունս մնացեալս աւերէին, և զգանձս մթերեալս՝ աղքատաց, տառապելոց և չքաւորաց մասն հանէին: Եւ զգաստակերտն և զսպասաւորսն քըրմովքն հանդերձ և նոյին գետնովքն և սահմանօք ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ՝ սպասաւորութեան» (Ագ. ծԸ.):

Նոյն նշանք կը կրկնուին ի կործանման մեհենին Բարշիմինեայ ի Թորդան—«կերպակերպ նմանութեամբք դիւացն փախստական լինելով անկանէին ի կողմանս Խաղտեաց»: Դարձեալ ի կործանման Անահտական մեհենին յԵրէզն ի գաւառին Եկեղեաց՝ «ի նմանութիւն վահանաւոր զօրու ժողովեալ դիւացն մարտնչէին, և մեծագոչ բարբառով զլերինսն հնչեցուցանէին. փախստական լինէին, և ընդ փախչելն նոցա կործանեալ բարձրաբերձ պարիսպքն հարթեցան»: Աւելի զարմանալին կը պատմէ ստուգապատումն Ագաթանգեղոս ի կործանման Վահեվահեան մեհենին Տարօնոյ: Դեւք կը ծածկեն մեհենին դուռը, բայց հողմ սաստիկ փչելով խաչանիշ փայտէն, զոր ունէր Գրիգոր ի ձեռին՝ ոչ միայն կը տապալէ ահագին շինուածն, այլև բոլոր նիւթ աւերակին—քար, փայտ, ոսկի, արծաթ, նաև սպանուած քուրմերուն ոսկրոտին, անհետ լինին, այնպէս որ նշմարանք անգամ չտեսնուիր.—«Իբրև գայր ի կողմանց Յունաց՝ բարձեալ բերէր նշխարս ինչ յոսկերացն մեծի մարգարէին երանեալ Մկրտչին Յովհաննու, և զսուրբ վկային Քրիստոսի զԱթանագինէսն: Իբրև եկին հասին յանդիման մեհենացն մօտ ի գետն Եփրատ՝ կամէր հանել զնոսա ի բարձրաւանդակ տեղիս մեհենիցն, կործանել զբագինսն և շինել զվկայարանս նոցա:... Հրաման ետ Գրիգոր զօրականին և իշխանացն որ ընդ իւրն էին, զի ելցեն մըրծօք տապալեսցեն զշինուածս բագնացն: Ելեալ շատ ջանացան և ոչ կարացին զդուրս բագնացն գտանել՝ զի ի ներքս մտցեն, զի ծածկեցին դևքն ի նոցանէ. և ի կողմանցն արտաքուստ ջանացան, և ոչ գծեաց երկաթ գործւոյն:... Իսկ Գրիգոր առեալ զնշան տէրունական խաչին՝ ել եկաց ի ձորակէն յանդիման բարձրաբերձ տեղւոյն շինուածոյն և ասէ. Հրեշտակ քո, Տէր, հալածեսցէ զնոսա: Եւ ընդ բանին հողմ ուժգին բղխեաց ի խաչանիշ փայտէն, զոր ունէր ի ձեռին իւրում սուրբ եպիսկոպոսն. և երթայր հողմն լցեալ լերինն հաւասար, և չոգաւ հարթեաց տապալեաց ընկէց զամենայն շինուածն բագնացն, և այնչափ կորոյս, զի յետ այնորիկ ոչինչ

յայնմ տեղւոջ նշմարէր գտանել, ոչ քարի և ոչ փայտի, ոչ ոսկի և ոչ արծաթ. ոչ ընաւ երևէր թէ լեալ ինչ իցէ անդ։ Եւ կոտորեցան մարդիկ պաշտաման քրմութեան որ ի տեղւոջ անդ էին, և ընդ նոսին եղէն ոսկերք նոցա» (Ագ. ԾԺԵ.)։ Թերևս Հալեցան կամ լուծան ի շոգի։

Թողլով վայր մի զԱգաթանգեղոս՝ գանք ուրիշ պատմագրի մը, այն է Բուզանդայ։ Բուզանդ ևս չէ անտեղեակ երևելի երևելի դիպաց դարձին Հայոց։ Թերևս զարմանալի թուի եթէ ըսենք, թէ Բուզանդ, որ բամբասուած է իբրև առասպելախօս՝ պատմական է մանաւանդ քան վկայաբանական։ Որչափ պարզ է և պարզութեամբն ճշմարիտ առ Բուզանդայ պատմութիւն առաջին քրիստոնէական շինութեանց ի Տարօն, լի մանր մանր տեղական Հանգամանօք, ամենևին առանց յաւելուածոյ Հրաշալեաց։ Օրինակ մի միայն բաւական է ցուցնել Բուզանդայ պատմութեան ոճոյն տարբերութիւնն Ագաթանգեղոսի պատմութեան ոճէն։ Բուզանդ խօսելով զԴանիէլէ՝ «Էր սա, ասէ, ազգաւ ասորի, ունէր զաթեճան գլխաւորութեան Տարօնոյ, ի մեծն և առաջին եկեղեցին, ի մայր եկեղեցեացն Հայոց. զի յառաջ նախ անդ շինեալ էր (Գրիգորի) զսուրբ եկեղեցին և ուղղեալ սեղան յանուն Տեառն։ Նոյնպէս և ի ներքոյ քան զնա Մարգարէանոցն Յովհաննու, նոյնպէս մօտ ի տուն Տեառն Հանգիստ առաքելոցն։ Այս տեղիք վասն յառաջակարգութեան, կանոնաւ ի Հայրապետացն և ի թագաւորաց պատուեալք լինէին, որպէս ի Դարանաղեաց գաւառին յեկեղեցին Թորդանու պատուին վասն գերեզմանացն Հայրապետին Գրիգորի։ Սոյնպէս և նախածագին շառավիղ թագաւորին Տրդատայ որ արժանին լեալ էր նախածագիշատակս թագաւորին Տրդատայ որ արժանին լեալ էր նախածանօթ ի Քրիստոսն Հաւատոց, զի սիրելի էր աշխարհին պատուել զյառաջընծայն Քրիստոսի զթագաւորն իւրեանց Տրդատ. նոյնպէս և զյառաջեպիսկոպոսն զնախավաստակն Գրիգորիոս. սոյնպէս և ի գաւառն Այրարատեան զնախավկայսն Քրիստոսի, ուր Գայիանէն և Հռիփսիմէն կային իւրեանց Հանդերձ գործակցօքն. սոյնպէս առաւել և սիմէն կային իւրեանց Հանդերձ գործակցօքն. սոյնպէս առաւել և զնախեկեղեցին (կաթողիկէն)։... Այս տեղիքս սմա (Դանիէլի) էին զնախեկեղեցին (կաթողիկէն)։... Այս տեղիքս սմա (Դանիէլի) էին յանձն Հանդերձ գաւառօքն. և էր սորա ընկալեալ զքորեպիսկոպոսութեան ձեռնադրութիւն ատեաննի ի ձեռաց մեծին Գրիգորի յաւուրս յորում կործանեաց զբագինսն մեհենիցն Հերակլեայ, այսինքն Վահագնի, որում տեղւոյ Աշտիշատն կարդացեալ։ Յորժամ յանապատաց ի շէնս իջանէր՝ ի գլխաւոր տեղիսն եկեղեցեացն լինէր։ Յաճախ յակն աղբերն ի ներքոյ սարաբարձր մեհենատեղւոյն Տաւ-
Հերակլեայ, որ կայ դէմ յանդիման լերինն մեծի, որում Յուլն (Տաւրոս) անուանեալ կարդան, ի բագնին տեղւոջէ ի բացագոյն իբրև

քարընկէց մի ի ներքոյ կուսէ, ի գոյգն ծործորակին, ի սակաւ անտառակին, ի Հացուտ պուրակին, որում տեղւոյն իսկ Հացեաց դրախտն կոչեն։ Այս այն աղբիւրն է, յորում առնէր յայնժամ եւս վաղ մեծն Գրիգոր զմկրտութիւնսն զօրացն բազմաց»։ Արդարև կ'ակնարկէ, բայց ո՛րչափ հարևանցի, թէ «նշանօք ինչ եղելովք կործանեցան բագինք մեհենիցն» (կուռք), բայց չըսեր ամենևին թէ մեհեաններ քանդուեցան, այլ թէ, ինչպէս բնական էր՝ «յանուն աստուածութեանն սրբեցան և եղեն տուն աղօթից և տեղի ուխտից ամենայն ումեք»։ Զայս ամենայն գիտէ Բուզանդ. բայց թէ Գրիգոր և Հռիփսիմեանք տանջեցան այնպէս անհնարին, ինչպէս կը պատմէ Ագաթանգեղոս. թէ ի վախճանի Գրիգոր ընկեցաւ ի վիրապն, ուր մնաց նա հնգետասան ամ, կերակրելով օրը նկանակով մի, զոր կը նետէր նմա կին մի այրի. թէ ի վախճանի այն հնգետասան ամաց Տրդատ փոխուեցաւ ի խոզ և գրեթէ բոլոր բնակիչք քաղաքին այսահարեցան. թէ Գրիգոր հանուեցաւ վիրապէն երկնային տեսլեամբ. թէ ի կործանելն մեհենից գունդք գունդք դիւաց կ'երևէին ի կերպարանս վահանաւոր զօրաց. թէ ի մկրտել Գրիգորի բիւրաւորներ՝ գետին ջուրերը դարձան յետս, ծագեց լոյս սաստիկ, և օծման իւղն սկսաւ ման առնուլ շուրջ զբազմութեամբըն՝—այս և այլ սոցին նման սքանչելեաց նշմարանքն անգամ չկայ առ Բուզանդայ, թէպէտ ինչպէս տեսանք՝ մկրտութեան տեղն անգամ կը յիշէ Բուզանդ։ Արդարև զարմանալի է, որ Բուզանդ, որ չէ ազատ ի պատմելոյ նորանշանս՝ ի դարձին Հայոց Ագաթանգեղոսէ պատմուած հրաշից և ոչ մին կը յիշէ։

Այսչափ բաւական համարելով վասն դարձին Հայոց՝ գանք Լուսաւորչին տեսլեան, զոր կը դնէ Ագաթանգեղոս իբրև մարգարէութիւն, և որ կը ծառայէ մեզ գտնելու Ագաթանգեղոսի գրոց յօրինման թուականը։ Ագաթանգեղոսի մատեանն ոչ թէ, ըստ բանից մատենագրին, գրուած է յունարէն կամ հայերէն ի սկզբան Դ. դարուն Ագաթանգեղոս անուն քարտուղարէ Տրդատայ նորին իսկ Տրդատայ հրամանաւ—«Հրաման հասեալ առ իս ումն Ագաթանգեղոս, որ ի քաղաքէ ի մեծն Հռոմայ... հասեալ ի դուռն Արշակունւոյ, յամս քաջի առաքինւոյ ուժեղ և պատերազմող Տրդատայ»,—այլ վկայաբանութիւններէ կամ զրոյցներէ (légende) հաւաքուած և գրուած հայերէն ձեռամբ միոյ յաշակերտաց թարգմանչաց Ե. դարուն կիսուն, այն է իսկ և իսկ զկնի պատերազմին Վարդանանց, որոյ պատմութիւնն իբր թէ ի տեսլեան ցուցուած է Գրիգորի, դարձեալ ըստ վկայութեան նորին Ագաթանգեղոսի։ Բանիբուն հեղինակն բաւական չհամարելով առնել զԳրիգոր Արշակունի թագա-

ւորաց ազգակից, խոստովանող և ճգնաւոր՝ կ՚ըսէ զնա նաև տեսանող և մարգարէ։ Թողլով Գրիգորի տեսլեան ուրիշ մասերն՝ առնունք այն մասը միայն, որ կ՚ակնարկէ Վարդանանց ժամանակը։

Սև այծերու հօտեր ջուրն անցնելով կը փոխուին սպիտակ ոչխարներու, որք կը ծնանին լուսակիզն գառանց բազմութիւն, որոց մի մասն լինին գայլ և յարձակելով հօտին վրայ՝ կ՚ընեն կոտորած մեծ. բայց սպանուածներուն յանկարծ կը բուսնին թեւք. և վերանալով կը խառնին լուսեղէն զօրաց մէջ, իսկ գայլերը կը տարուին կրակի հեղեղէ։ Ինչպէս յայտնի է՝ սև այծերու հօտն հեթանոս Հայք են, որ ջուրէն անցնելով, այն է մկրտութեամբ՝ եղան սպիտակ ոչխարներ. որոց սերունդէն ոմանք ջուրէն անդին անցնելով, այսինքն ուրանալով ի հաւատոց՝ եղան գայլ, և կոտորեցին միւս մասը, որ մնաց հաստատուն ի հաւատս. բայց նոքա որ ըսպանուեցան գայլերէն, այսինքն ուրացողներէն՝ թռչելով խառնեցան ի գունդս հրեշտակաց։ Ահա բանք Ագաթանգեղոսի. «Եւ տեսի հօտս անթիւս այծեաց ի գոյն սեւութեան, որք անցեալ ընդ ջուրն յոգնս դարձան, և գգոյնս իւրեանց ի կերպարանս սպիտակութեան շրջեցին, և լուսակիզն սուրն փայլէր առ հասարակ, մինչև ճառագայթք հատանէին ի նոցանէն։ Եւ մինչդեռ նայէի ես՝ յանկարծակի ծնան հօտքն և բազմացան. և ծնունդքն լցին զաշխարհ, և ծնեալ գառինքն ամենայն լուսակիզն էին։ Իսկ յանկարծ այլ ծնունդք յաճախեցին բազմացան. և կէսքն անկեալ էին յայնկոյս ջրոյն։ Եւ գառինքն գայլք եղեն թուխք, և յարձակեցան եկին ի մէջ հօտիցն, և սկսան կոտորել, և եղեն արեան ճապաղիք։ Եւ մինչդեռ նայէի՝ և տեսի, և բուսան թեւք հօտիցն և եղեն թեւաւորք, և վերացան խառնեցան ի զօրս լուսեղէնս։ Եւ յարեաւ հեղեղ հրեղէն, և արկեալ տարաւ զգայլսն»։ Ահա և մեկնութիւնն, որ որպէս թէ կը տրուի Գրիգորի ի տեսլեան. «Հօտք բազմութեան այծեացն սեւութեան, որք յիջանել ի ջուրսն յոգնս դարձան սպիտակութեան՝ ուսուցիկ այն աստուածութեան շնորհացն ի ձեռն քահանայապետութեան հասանելոց է, յորոյ ձեռն բղխեսցէ աղբիւրն մկրտութեան, թողութիւն քաւութեան բազում մեղաւորաց։ Եւ լուսակիզն սուր նոցա փայլեալ պայծառացեալ էր, այսինքն՝ մկրտեալք լոյս զգենլոց են և արքայութեանն խոստացելոյ արժանաւոր լինելոց։ Եւ զի ծնան հօտքն և բազմացան և լցին զաշխարհ, և այսինքն է — զբազում ժամանակս աճեցուցանէ քարոզութիւնն, և ծնանին նոր ծնունդք նորոգութեան, և բազմացուցանէ մկրտութիւնն։ Եւ զի կէսքն անցեալ եղեալ էին ընդ ջուրսն ի նոյն կողմն ուստի անցեալ էին՝ այսինքն է — ի յետին ժամանակին անօրինելոյ

են, անկեալք ի ճշմարտութենէն, ընկենլոց են յետս զդրոշմ ուխ-
տին սրբութեան, բազումք թողուն զուխտն սրբութեանն: Եւ ի
գառանցն լինելոց են գայլք, որ կոտորելոց են զսուրբ գառինս.
այսինքն որ գնան ի ճշմարտութենէ անտի և յուխտէ քահանայից՝
լինելոց են գայլք, և հանեն ճաղճախս արեան ի գառանցն, այս-
ինքն ուխտին և քահանայութեանն, և խռովութիւն ժողովրդոցն:
Իսկ որ համբերէ միամտութեամբ ի գառանցն, ի ժողովրդոցն կամ
ի քահանայից՝ թևս առնուցուն և յաղթութիւնն Քրիստոսի վե-
րանան. իսկ որ զմիտս գայլոցն կամ զգործս յափշտակութեան նո-
ցա ունիցին՝ ի հուրն անշէջ մատնեսցին» (Ագաթ. ԾԲ.):

Ո՛վ, անաչառ խորհելով, չտեսներ, թէ անուանեալ քարտուղարն Տրդատայ Լուսաւորչին ընծայուած տեսլեան այս մասամբ կ'ակնարկէ, իբր թէ մարգարէաբար՝ Վարդանանց պատմութեան, ուստի և կը մատնէ իւր գործոյն յօրինման ժամանակն, այսինքն սակաւ ամօք զկնի այն կրօնական պատերազմին, ի ձեռն Կորեան կամ միոյ յաշակերտակցաց նորա, որ ունէր Կորեան ոճը կամ լեզուն:

ՎԵՐՋ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԻՆ:

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

Երրորդ մասին:

ԳԼՈՒԽ Ա. Հայք ընդ Հռոմայեցւովք

Ա. Տրդատ մեծ. քառասնամեայ դաշինք. . եր. 1

Բ. Ի մահուանէն Տրդատայ մինչեւ ցԱրշակ. » 7

Գ. Միջամտութիւն Հռոմայեցւոց: ՅԱրշակայ մինչեւ Պապ . . . . » 42

Դ. Ի Պապայ մինչեւ ի վախճան տէրութեանն Արշակունեաց . . . . . . » 121

ԳԼՈՒԽ Բ. Հայք յետ բաժանման թագաւորութեանն, մինչեւ ի բարձումն տէրութեանն Արշակունեաց. . » 186

ԳԼՈՒԽ Գ. Քննադատութիւն Բ. դպրութեան Խորենացւոյն, ԺԴ. գլխէն մինչեւ ի վախճան պատմութեանն . . . . » 236

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

		Ր.	Կ.
32	Հաւատարիմ Սավիտրին, Վալտների	—	10
33	Լինհարդ և Գերտրուդ, Պեստալոցցի	—	25
34	Յաւելուած ի գիրս պատմութեան Սաողկան	—	20
35	Նաւի փոքրաւորը, Մ. Ռոզենհայնի, թարգմ. Ի. Յ.	—	15
36	Ուռենց Յովսէփ, Ե. Սպիրի, թարգմ. Ի. Յ.	—	15
37	Մեծապատիւ Մուրացկաններ, Յ. Պարոնեանի	—	40
38	Ազգային ջոջեր, Յ. Պարոնեանի	1	—
39	Բը-ա-բա, Է. Օժէշկօյի	—	15
40	Ծնիկ, Կուլիկովայի, թարգմ. օր. Ա. Սահակեան	—	5
41	Շչեդրինի երեք զրոյցներ	—	10
42	Տարասկոնցի Տարտարէնը, Դօդէի, թարգմ. բժ. Թ. Զ.	—	40
43	Օրլէանի կոյսը, Օստրոգորսկու, թարգմ. Յ. Խ.	—	25
44	Յ. Արարատեանի կեանքը, թարգմ. Պ. Պ.	—	75
45	Գաղափարական քահանայ, Պոտապենկօի, թարգմ. Յ. Ս.	—	75
46	Ընտանիքի յոյսը, Աննենսկայա, թ. օր. Վ. Տ.-Յովսէփեանի	—	10
47	Հոսհոսի ձեռատետրը, Յ. Պարոնեանի	1	—
48	Քիմիա Ռօսկօյի, թարգմ. Ա. Մելիք-Ալլահվերդեանի	—	40
49	Շչեդրինի երեք վէպիկ, թարգմ. Մ. Ղազարեանի	—	15
50	Սասմայ ծռեր, Գարեգին սարկաւագ	—	50
51	Ջաւախքի բուրմունք, Ե. Լալայեանցի	—	25
52	Դաստիարակութիւն, թարգմ. Մ. Ղ.	1	—
53	Մըռռան, Ի. Շմիդտ, թարգմ. Ան. Քալանթարի	—	20
54	Խան-Միրան, գրեց Սէյլան	—	20
55	Տարաս-Բուլբա, Ն. Գօգօլի, թարգմ. Մ. Արեզեանի	—	40
56	Փշրանքներ, Գ. սարկ. Յովսէփեանի	—	50
57	Երկու քոյր, Ղ. Աղայեանցի	—	25
58	Դրախտի ընտանիք, գրեց Խրիմեան Հայրիկ	—	50
59	Սիրաք և Սամուէլ, գրեց Խրիմեան Հայրիկ	—	50
60	Փորձանքների բժշկարան, Բրօքերի, թարգմ. Օհանեանի	—	20
61	Մակբեթ, Շէկսպիրի, թարգմ. Ս. Մալխասեանցի	—	50
62	Պաստեօր, Ս. Բալաղեանի և Ա. Քալանթարի	—	20
63	Խօլերա, բժ. Վ. Արծրունու	—	5
64	Խարագի տղայ, Ս. Քամալեանի	—	40
65	Հանրամատչ. բնախօսութիւն, Վ. Լունկեվիչի, թ. Կ. Գիւլն.	1	—
66	Փարաւոնի աղջիկը, Էբէրսի, թարգմ. Գ. Տահրմուգաղեանի	—	80
67	Խուն-խոր, Յ. Ղազարեանցի	—	60
68	Էլգուջա, վէպ, թարգմ. Տ. Փիրումեանի	—	45
69	Չորրորդ մոգ, Վան-Դէյկի	—	5
70	Դրախտի ընտանիք, գրեց Խրիմեան Հայրիկ	—	50

71	Սիրաք և Սամուէլ, գրեց Խրիմեան Հայրիկ . .		
72	Զրոյցներ հողի մասին, Ս. Բալաղեանի		
73	Աստղաբաշխութիւն, Ֆլամմարիոնի, թ. Տ. Յովհաննիսեանի	1	—
74	Մանուկների հոգատարութիւնը, Պօկրօվսկիյ, թ. բժ. Թ. Զ.	—	20
75	Մուկուչի հաւիկը, Պ. Նեգվանովի	—	15
76	Երկու հեքեաթ, Կարմէն Սիլ՚վայի, թարգմ. Ս. Մ. . .	—	10
77	Կովկասի գերին, Լ. Տոլստոյի, թարգմ. Պ. Պ.	—	20
78	Անճոռնի բադիկը, Անդերսէնի	—	5
79	Վէպիկներ, Շիրվանզադէի	—	40
80	Դարվինիզմ, Ս. Բալաղեանի	—	40
81	Պետրոս Դուրեան, Արշակ Չօպանեանի	—	50
82	Շիլլօնի կալանաւորը, Մօրից Հարտմանի, թ. Կ. Գիւլնազ.	—	60
83	Համլէտ, Շէկսպիրի, թ. անգլիեր. Յովհ.-խան Մասեհեանի	—	75
84	Քննական պատմ. Հայոց, Ա. Մ. Գարագաշեանի, մասն Ա.	1	—
85	Նոյն, Մասն Բ.	1	—
86	Նոյն, Մասն Գ.	1	—
87	Նոյն, Մասն Դ. (մամուլի տակ).	—	—
88	Պատմութիւն Հայոց, Պալասանեանի, Բ. տպ. (մամ. տակ)	—	—
89	Ակնայ Հնութիւնք, Յ. Ճանիկեանի (մամուլի տակ). . .	—	—
90	Ուրբինօեցի մանուկը, Ուիդի գրոյցներից	—	10
91	Կօշկակարը երաժիշտ, Տիւտչեվի. թ. օր. Ն. Ղալումեան.	—	5

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0080175

[illegible]
664